Ս. Ե. ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅ
ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

9(47.925)
30253
20л.254
1914
786
942

ՀԱՅԱՍՏԱՆ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

С. Е. Акопян

ИСТОРИЯ АРМЯНСКОГО КРЕСТЬЯНСТВА

(ПЕРИОД РАННЕГО ФЕОДАЛИЗМА)

1

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН • 1957

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍՏԱՑՎԱԾ է 1961 թ.

Ս. Ե. Հակոբյան

ՀԱՅ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(ՎԱՂ ՖԵՈԴԱԼԻԶՄԻ ԴԱՐԱՇՐՋԱՆ)

1

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ

Ա 335788

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ • 1957

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի
խմբագրական-հրատարակչական խորհրդի որոշմամբ:

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Մեր ներկա աշխատությունը բաղկացած է 4 հատորից։ Առաջին և երկրորդ հատորներում քննարկվում են հայ ֆեոդալական հասարակական-տնտեսական ֆորմացիայի անմիջական նյութական բարիքներ արտադրողների՝ գյուղացիության պատմությունը վաղ և զարգացած ֆեոդալիզմի դարաշրջաններում, իսկ երրորդ և չորրորդ հատորներում քննարկվելու են գյուղացիության պատմությունը՝ 14-րդ դարի սկզբներից մինչև մեր օրերը։

Առաջին հատորի «Մինչկապիտալիստական հողային ռենտաները Հին և միջնադարյան Հայաստանում» գլխում քննարկման են ենթարկված հարկային բազմաթիվ տերմինները՝ սկսած հնագույն ժամանակաշրջանից մինչև 14-րդ դարը։ Այս գլխում ստիպված ենք եղել դուրս գալ պատմական ժամանակաշրջանի սահմաններից, հակառակ դեպքում հարկային բազմաթիվ տերմինների իմաստային զարգացման էվոլյուցիան կմնար չպատճառաբանված, եթե այս կամ այն տերմինը քննարկվեր մեկուսացած, առանց զուգորդելու արտադրական ֆեոդալական եղանակի զարգացման ընդհանուր պրոցեսի հետ։ Մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ չնայած հարկային տերմինների մեծ մասը հետագայում ևս պահպանվել է, սակայն արտահայտել է այլ հարաբերություններ, բովանդակության տեսակետից խիստ փոփոխության ենթարկվել՝ ֆեոդալական հասարակարգի զարգացմանը զուգընթաց և այդ հիմքի վրա։

Հարկ ենք համարում նշել, որ մեր սույն աշխատության առաջին և երկրորդ հատորները պատրաստ էին դեռևս 1952 թ. և պաշտպանվել են որպես դոկտորական դիսերտացիա։

ՀԵՂԻՆԱԿ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական կյանքի, հասարակական-քաղաքական հարաբերությունների և հատկապես հասարակության համար նյութական բարիքներ արտադրողների դիտական-մարքսիստական պատմությունը դեռ գրված չէ։ Հայ կղերա-ֆեոդալական պատմագրության ներկայացուցիչները ընդհանրապես չեն զբաղվել և չէին կարող զբաղվել նյութական բարիքներ արտադրողների, աշխատավոր մասսաների, ժողովրդի պատմության պրոբլեմներով։ Նրանք կատարելով շահագործող դասակարգերի սոցիալական և քաղաքական պատվերը, իրենց իսկ դասակարգի աշխարհայացքի տեսանկյունով են մեկնաբանել հայ ժողովրդի պատմական հարուստ անցյալը և գերազանցապես շարադրել են թագավորների, առանձին իշխանական-նախարարական տների, հայ եկեղեցու, հոգևոր դասի, արտաքին արշավանքների և քաղաքացիական պատմության առանձին պրոբլեմները։ Հայ կղերա-ֆեոդալական պատմագրության ներկայացուցիչները դարերով քարոզել են այն հակապատմական, կեղծ «տեսությունը», որ իբր հայ ժողովուրդն անցել է միայն իրեն հատուկ զարգացման «ինքնատիպ» ուղիով։ Այս հակագիտական «տեսության» հիմնադիրը հայ պատմագրության մեջ հանդիսացավ կղերա-ֆեոդալական պատմագրության կարկառուն ներկայացուցիչ Մ. Չամչյանը։

Մ. Չամչյանը իր «Պատմութիւն Հայոց» եռահատոր աշխատության մեջ առաջին անգամ փորձեր կատարեց պերիոդիզացիայի ենթարկել հայ ժողովրդի պատմական անցած ուղին, ստուգաբանեց պատմական աղբյուրներում պահպանված սոցիալական տերմինների լեզվական-տեխնիկական իմաստն ու նշանակությունը, խոսեց թագավորների, իշխանների, ազատների՝ որպես հողատեր դասակարգի ներկայացուցիչների մասին, սակայն հեղինակը հայոց պատմության հիմքում դրեց թագավորական դինաստիաների, իշխանական-նախարարական տների և տիրապետողների պատմությու-

նը։ Նա Հայ ժողովրդի պատմությունը ստորաբաժանեց դինաստիական տիրապետությունների վեց գլխավոր ժամանակաշրջանների միջև և յուրաքանչյուր հատորում ընդգրկեց երկու ընթացաշրջան։

«Առաջինն է այն,— գրել է Մ. Չամչյանը,— յորում տիրեալ պայազատեցին նահապետք Հայկազունք կէս մի ազգային տէրութեամբ, և կէս մի արքայական շքով. և ապա կուսակալք։ Երկրորդն է այն, յորում թագաւորեցին Արշակունիք... Երրորդն է այն, յորում իշխեցին մարզպանք պարսից և ոստիկանք իշխանութեանն հաստատեցուց, ևս և նախարարք ի Հայոց։ Չորրորդն է այն, յորում թագաւորեալ տիրեցին Բագրատունիք։ Հինգերորդն է այն, յորում զօրացան Ռուբինեանք ի Կիլիկիա, մինչև ի բնաջինջ բարձումն տէրութեան Հայոց։ Վեցերորդն է այն, յորում կային և կան ազգ մեր յանիշխանութեան»[1]։

Մ. Չամչյանից հետո, Ղուկ. Ինճիճյանը իր «Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեաց աշխարհի» աշխատության երկրորդ հատորում ավելի համարձակ փորձեր կատարեց հետազոտելու Հին Հայաստանի հասարակական, քաղաքական և սոցիալական կարգերի ու կառուցվածքի, տնտեսական-նախարարական իշխանության և սրանց հետ անմիջականորեն առնչվող այլ պրոբլեմների պատմությունը։ Նա հաջող փորձեր կատարեց ստուգաբանելու Հայ հասարակական հարաբերություններն արտահայտող սոցիալական տերմինների ոչ միայն լեզվական և տեխնիկական իմաստն ու նշանակությունը, այլև նրանց բովանդակությունը։ Հեղինակն իր դրույթները փաստարկելու համար վկայակոչել է սկզբնաղբյուրներում պահպանված բազմաթիվ և բազմազան վկայություններ և շատ հաճախ հանդել է ճիշտ ու ընդունելի եզրակացությունների, որոնց մենք դեռ ստիպված կունենանք անդրադառնալ մեր աշխատության համապատասխան գլուխներում։ Ղուկ. Ինճիճյանը փորձեր է կատարել բացահայտել «տուն», «տէր», «տանուտէր», «նահապետ», «նախարար», «գաղատ», «սեպուհ», «ռամիկ», «շինական» տերմինների ծագումն ու զարգացման պատմությունը, սակայն, ինչպես հարցի դրվածքը, այնպես էլ նրա մեկնությունը տրված է մեզ համար անընդունելի մեթոդոլոգիական սկզբունքների հիման վրա։ Հեղինակի ընդարձակածավալ աշխատության մեջ նույնպես տեղ չեն գտել և չէին կարող գտնել Հայկական ֆեոդալական հասարակական-տնտեսական ֆորմացիայի, այդ ֆորմացիայի նյութական

---

[1] Մ. Չամչյան. Պատմութիւն Հայոց, հ. Ա., Վենետիկ, 1784, էջ 50։

բարիքներ արտադրողների և հատկապես հակամարտ դասակարգերի ու դասակարգային պայքարի դիտական պատմությունը[1]։

Այս ուղիով է ընթացել նաև Վահան Բաստամյանցը։ Մխիթար Գոշի Դատաստանագրքի հրատարակիչ, բանասեր Վահան Բաստամյանցը իր ընդարձակ առաջաբանում ամեն կերպ ճգնում է ապացուցել, որ ինչպես Հին, այնպես էլ միջնադարյան Հայաստանում առկա չեն եղել ոչ ճորտական իրավունք և ոչ էլ ճորտական հարաբերություններ։

Խոսելով հայ գյուղացիների կողմից թագավորներին, իշխաններին և կալվածատերերին վճարվելիք հարկերի մասին, հեղինակը գրել է՝

«... Հայտնի է, որ Հայաստանում երբեմ չկային ճորտեր ոչ բնիկներից և ոչ պատերազմում գերի բռնվածներից այն դրությամբ, որպիսի դրությամբ կային ճորտեր հեթանոսության ժամանակ գրեթե բոլոր երկրներում, իսկ քրիստոնեության ժամանակ շատ երկրներում։ Ռուսաստանի մեջ ճորտությունը վերջացավ միայն 1860 թ., իսկ Հայաստանին դրացի Վրաստանում՝ միայն 1866 թ.։ Բայց որովհետև Հայաստանում դրեթե ամեն տեղ հողը պատկանում էր նախարարներին, իշխաններին կամ մասնավոր կալվածատերերին, գյուղացի ժողովուրդը նստելով նրանց հողերի վրա, պարտավոր էին զանազան ծառայություններ մատուցանել նոցա և հարկեր տալ, ղորդինակ երկրի բերքերից տալ վեցից մեկը, կոր և բեկար հանել և այլն»[2]։

Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի մի շարք պրոբլեմներ շոշափել է նաև Ղ. Ալիշանը իր «Այրարատ. բնաշխարհ Հայաստանեաց» ընդարձակածավալ աշխատության «Դուռն Հայոց արքունեաց» գլխում։ Ալիշանը իր նախորդների համեմատությամբ շրջանառության մեջ է դրել պատմական անհամեմատ բազմաբնակ աղբյուրներ և վկայություններ։ Վկայակոչել է համարյա այն բոլոր տերմինները, որոնք այս կամ այն չափով արտահայտել են հայ հասարակության տարբեր դասերի սոցիալ-քաղաքական դրությունը։ Սակայն հարցերի քննարկման և մեկնաբանման ասպարեզում հեղինակն առաջ չի անցել իր նախորդներից։

Ալիշանը, նախորդների նման, կրկնել է այն հանրահայտ դրությունը, որ իբր իրավական, պետական և նախարարական կարգերը

---

[1] Լուկ. Իսենիյան. Հնախոսութիւն աշխարհագրական Հայաստանեաց աշխարհի, 1835, հատ. 2։

[2] Վահան Բաստամյանց. Մխիթարայ Գոշի Դատաստանագիրք Հայոց. Վաղարշապատ, 1880. էջ 316, ծանոթ. 682 (ընդգծումը մերն է—Ս. Հ.)։

ստեղծել և ձևակերպել է Վաղարշակը, որոնք և անփոփոխ իրենց գոյությունը շարունակել են հետագա դարերի ընթացքում: Հեղինակը վկայակոչելով բազմաթիվ հիշատակարաններ՝ փորձ չի կատարել այդ տեղեկությունները դասակարգել, գտնել սոցիալական տերմինների զարգացման դինամիկան ու օրինաչափությունը, պարզաբանել այս կամ այն տերմինի ոչ միայն լեզվական, այլև սոցիալական իմաստն ու նշանակությունը: Այդ է պատճառը, որ նրա արժեքավոր աշխատությունները հնարավորություն չեն ընձեռում մեկնաբանել Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատմությունը: Հեղինակի արժեքավոր դիտողությունները հաճախակի հանդում են սոսկ դասերի և պետական ու վարչական պաշտոնյաների հաջորդական թվարկության, իսկ հայ հասարակության մեջ գրված նրանց տեղի, դիրքի, տերունական իրավունքների ու պարտականությունների, հողատիրության ձևերի ու հողային հարաբերությունների, տարբեր դասերի սոցիալ-տնտեսական դրության հարցերը մնացել են խիստ թեական[1]:

Այսպիսով, հայ կղերա-ֆեոդալական պատմագրության ներկայացուցիչները Հայաստանը պատկերել են այնպիսի մի երկիր, որտեղ «համերաշխել» են հասարակական բոլոր խավերն ու դասերը: Սրանց կարծիքով թագավորները, իշխանները, տերերը, նախարարները, նահապետները, ազատները իշխել են որպես «երկրի ընիկ» տերեր, իսկ «հայրը» կամ «ժողովուրդը» կառավարվել է ավանդական «արդար» օրենքներով և սովորույթներով, կատարել է իր պարտականությունը տերերի հանդեպ, վճարել է հարկեր, ապրել է «հանգիստ ու բարեկեցիկ կյանքով» և ոչ միայն չի ապստամբել, այլև գրոզոբելու տրիքներ էլ չի ունեցել»:

Հայ կղերա-ֆեոդալական պատմագրության այս «տեսության» հակապատմականությունն այնքան ակնհայտ էր, որ այն չընդունեցին նույնիսկ 19-րդ դարի վերջերի և 20-րդ դարի սկզբների հայ բուրժուական պատմագրության առանձին, առաջավոր ներկայացուցիչները:

Հայ բուրժուական պատմագրության ներկայացուցիչներն ավելի համարձակ փորձեր կատարեցին հետազոտելու հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական կյանքի և սրա հետ առնչվող բազմաթիվ այլ պրոբլեմների պատմությունը: Նրանք աշխատեցին ցույց տալ, որ ինչպես աշխարհի բոլոր երկրներում, այնպես էլ Հայաստանում զո-

---

[1] Ղ. Ալիշան, Այրարատ. բնաշխարհ: Հայաստանեաց, Վենետիկ, 1890 (տե՛ս «Գուսան Հայոց արբունեաց» գլուխը):

յություն է ունեցել հողի և ջրի մասնավոր սեփականություն, հակամարտ դասեր՝ նախարարներ-ֆեոդալներ, շինականներ, ստրուկներ և նույնիսկ ճորտեր, սակայն այդ կատարեցին կողմնակի կերպով. միայն այնքանով, որքանով այն առնչվում էր երկրի քաղաքացիական պատմության հետ:

Այս ասպարեզում առաջին փորձը պատկանում է Սարգիս Բահաթրյանին, որի «Личныя и поземельныя право древней Грузии и Армении» և «Հողային ու անձնական իրավունքը Հին Հայաստանում» ուսումնասիրություններն իր ժամանակին ունեցան մեծ նշանակություն: Սակայն մեզ համար անհասկանալի պատճառով թե՛ պատմական, և թե՛ բանասիրական գրականության մեջ ոչ միայն թերագնահատված, այլև մոռացության են մատնված վերոհիշյալ ուշագրավ աշխատությունները, որոնք առաջին անգամ արծարծում են հայ և վրացի ժողովուրդների իրավունքի պատմության մի շարք հարցեր և այդ առնչությամբ շոշափում Հին Հայաստանի մասնավոր հողատիրության, ստրկության, ճորտության պրոբլեմները:

Հեղինակը պատմական խիստ սահմանափակ վկայությունների հիման վրա աշխատել է ցույց տալ, որ ինչպես աշխարհի բոլոր երկրներում, այնպես էլ Հայաստանում գոյություն են ունեցել և՛ ստրկություն, և՛ ճորտություն: Այս խիզախ եզրակացությունը էր, եթե նկատի ունենանք, որ 19-րդ դարի վերջերին հայ հասարակության սոցիալական կյանքի պատմության հարցերն արհամարհված էին պատմա-բանասիրական գրականության կողմից և այդ շրջանում իդեալոգիայի բնագավառում ընդհանրապես ու պատմական գիտության բնագավառում մասնավորապես, իշխում էր հայ կղերաֆեոդալական պատմական գիտության ռեակցիոն ուղղությունը:

Ս. Բահաթրյանի փորձերն, իհարկե, խիստ թեական են, եզրակացությունները՝ անհամարձակ ու չփաստարկված, աշխատությունը՝ մեթոդապես և մեթոդոլոգիորեն արատավոր, սակայն հարցի դրվածքն ըստ էության հետաքրքրական է:

Ս. Բահաթրյանը վկայակոչելով Մ. Խորենացուն, և մասամբ նաև մյուս պատմիչներին, համարձակ կերպով խոսել է «նախարարների», «տերերի», «ազատների», «սեպուհների», որպես կալվածատերերի, սեփականատերերի դասի մասին: Վկայակոչելով մեր պատմիչներին, նա փորձել է ապացուցել, որ հայ իշխող դասերն ունեցել են սեփական կալվածներ, գյուղեր, որ նրանց «ծառայությունը» հիմնականում տարբերվել է ստրուկների և գյուղացիների «ծառայություններից»: Հեղինակի կարծիքով հայ նախարարները,

իշխանները իրենց կալվածները օտարացնում էին «շեն»-երի հետ միասին, իսկ «շեն» ասելով նա հասկանում է սարուկներ, օտար ցեղերից պատերազմի միջոցով ձեռք բերված՝ դաստակերտներում, ագարակներում բնակություն հաստատած գերիներ: Ս. Բահաթրյանը, իհարկե, սխալվում էր, երբ կարծում էր, որ սարուկ կամ ճորտ էին զանազան միայն օտար ցեղին պատկանող և գերի վերցրած մարդիկ, որ «արիական» ծագում ունեցող հայը միշտ էլ եղել է ազատ: Նրա կարծիքով Հայաստանի հողի տերերը «Նոյից հետո բնակություն են հաստատել Հայաստանում և երկիրը ոչ թե բռնությամբ են նվաճել, այլ հանդիսացել են նրա իրական տերերը»:

Հայաստանը, ըստ Բահաթրյանի, բաժանված էր բազմաթիվ մանր տոհմերի և իշխանությունների մեջ, որոնք առանձին նախարարական տների սեփականություն էին: Հայաստանի բնակիչների մեծ մասը, շարունակում է նա, գյուղացիներ էին, որոնք հավատարիմ էին իրենց իշխաններին և կառավարվում էին հնավանդ սովորույթներով, իսկ իշխաններն այս ամանդությունները չէին խախտում, որովհետև «չկա որևէ տեղեկություն ոչ միայն գյուղացիների որևէ ապստամբության, այլև նույնիսկ զանգատների մասին, թե նախարարները նոցա նեղելիս լինին»[1]:

Ս. Բահաթրյանի այս գրությունը պաշտպանել և զարգացրել է բանասեր Գ. Վարդանյանը: Նա 1895 թ. «Մուրճ» ամսագրում գրախոսելով Ս. Բահաթրյանի «Հողային և անձնական իրավունքը Հին Հայաստանում» աշխատությունը, հեղինակի օրինակով նույնպես արտահայտել է այն միտքը, թե «արիական ծագում ունեցող հայը միշտ էլ եղել է ազատ քաղաքացի», որ «սարուկ կամ ճորտ են դարձել միայն պատերազմների միջոցով ձեռք բերված ազատագրիստարները»[2]:

Այն գրությունը, որ «արիական ծագում ունեցող հայը» պատմական բոլոր էպոխաներում եղել է «ազատ» և «իրավահավասար», հատուկ է ոչ միայն Ս. Բահաթրյանին, Գ. Վարդանյանին, այլև հայ ժողովրդի պատմությունը հետազոտող անցյալի բանասերների մեծ մասին: Նրանք Հայաստանում չեն տեսել կամ թե չեն ցանկացել

---

[1] Ս. Բահաթրյան. Հողային և անձնական իրավունքը Հին Հայաստանում, «Մուրճ», 1894, N 1, էջ 90—91 (տե՛ս նաև «Մուրճ» 1894, NN 2, 3, 4 և 5։ Հմմտ. Его же, Личныя и поземельныя право древней Грузии и Армении. Тифлис, 1896.

[2] Գ. Վարդանյան. Ս. Բահաթրյանի Հողային և անձնական իրավունքը Հին Հայաստանում (տե՛ս «Մուրճ», 1895, N 5, էջ 663—666)։

ունենալ դասակարգեր, նրանց կարծիքով Հայաստանը եղել է հա-մերաշխ երկիր բոլոր դասերի և հասարակական խավերի համար։ Դասակարգերի և դասակարգային պայքարի ժխտումը ու բացառումը հատուկ է բուրժուական պատմական դիտության ներկայացուցիչ-ներին և այդ ընդհանուր հոսանքի մեջ չէին կարող բացառություն կազմել նաև Ս. Բահաթրյանը, Գ. Վարդանյանը և ուրիշները։

Ս. Բահաթրյանի վերոհիշյալ աշխատություններից հետո, 1895 թ. լույս տեսավ Ա. Մ. Գարագաշյանի «Քննական պատմութիւն Հայոց, ըստ նորագոյն պատմական, լեզուաբանական և բանասի-բական տեղեկութեանց» քառահատոր աշխատությունը։

Ինչպես իր նախորդները, այնպես էլ Ա. Մ. Գարագաշյանը փորձեր է կատարել ստորաբաժանելու հայ ժողովրդի պատմական անցած ուղին. «Պատշաճ թուեցաւ մեզ,— գրում է հեղինակը,— Հայոց պատմութիւնը երկու գլխավոր ժամանակ բաժանել. Ա. Նախ-նական և Բ. Պատմական։ Նախնական անուանեմք զմիջոցն, որ է ի սկզբանէ մինչև Տիգրան Մեծ (Արշակունի), կամ մինչև 90 նախ բան զՔրիստոս։ Պատմական անուանեմք զմիջոցն ի Տիգրանայ և այսր...»[1]։ Աշխատության երկրորդ հատորում Ա. Մ. Գարագաշյա-նը միայն մի քանի ընդհանուր նախադասություններ է նվիրել աշ-խարհիկ և հոգևոր ֆեոդալների գույքային և հողային սեփականու-թյան, նախարարների, սեպուհների և թագավորների պայքարին, պարգևական հողատիրության հարցերին։

Ա. Գարագաշյանի համար Հայաստանում նույնպես դասեր, դասակարգեր գոյություն չունեն, նրա մոտ հաճախակի հայ հասա-րակության բոլոր դասերն արտահայտելու համար դործ է ածվում էթնիկական, միասնական և սոցիալական իմաստաղուրկ «հայք» հավաքական տերմինը։ «Թէպէտ չկար Հայոց մէջ,— գրել է հեղի-նակը,— հին ազգերէն ոմանց այն ժողովրդական բաժանումը, զոր Եւրոպացիք սովոր են կոչել ſաստ՝ կար սակայն աղատ և շինական, այսինքն՝ հողատէր և մշակ, որ կը թուի պատասխանել սէրֆ կամ վարձակալ (fermier) կոչված ատիճանին»[2]։ Ա. Մ. Գարագաշյանը ոչ միայն ժխտում է Հայաստանում դասակարգերի— «ֆասդերի» առկա-յությունը, այլև գտնում է, որ Հայաստանը իր պատմական զարգացումով բացառություն է կազմել մարդկային հասարակու-թյան պատմության մեջ, որ Հայաստանում գոյություն են ունեցել

---

[1] Ա. Մ. Գարագաշյան, Քննական պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1895, մասն Ա., էջ 1։

[2] Նույն տեղում, մասն Բ. էջ 10 (ընդգծումը հեղինակինն է.— Ս. Հ.)։

«փառաւոր ազնուականութիւն» և սրան ենթակա «պատուաւոր բազաքացութիւն», որ հասարակական այս երկու խավերի մեջ միշտ էլ եղել է համերաշխություն, որ հայ գյուղացին երբեք հարկատու չի եղել հայ տոհմիկ ազնվականությանը, այլ հարկեր ու տուրքեր է վճարել միայն պետությանը, եկեղեցուն և օտար տերություններին[1]:

Այս ոչ գիտական շրջանակներից դուրս գալու առաջին լուրջ փորձը պատկանում է Ի. Ա. Զավախովին:

Հեղինակը հայկական մատենագրական աղբյուրների, գլխավորապես Փ. Բուզանդի, Եղիշեի և Ղ. Փարպեցու մոտ պահպանված վկայությունների հիման վրա ձգտել է բացահայտել և արժեքավորել Հին Հայաստանի պետական կարգերի գիտական պատմությունը:

Ի. Ա. Զավախովը գիտականորեն իմաստավորել է «տուն», «տէր», «տանուտէր», «նահապետ», «սեպուհ», «ազատ», «նախարար», «ռամիկ», «շինական», «ծառա» տերմինների ոչ միայն լեզվական, այլև սոցիալական բովանդակությունը, նրանց ծագման, զարգացման էվոլյուցիան: Ի. Ա. Զավախովը առաջին հետազոտողն էր, որ հարցի քննարկմանը մոտեցավ սոցիոլոգիական առումով: Նա իր ուշադրության կենտրոնում դրեց միայն տոհմային կապերի և հարաբերությունների, պետական և վարչական կարգերի հետազոտությունը և այդ առումով ու կապակցությամբ շարադրեց Հին Վրաստանի և Հայաստանի պետական կարգերի պրոբլեմները: Հեղինակն ամեն կերպ ձգտել է ապացուցել, որ ինչպես Վրաստանի, այնպես էլ Հայաստանի հասարակական հարաբերությունների հիմքում ընկած են եղել տոհմային կապերն ու հարաբերությունները և պատմական զարգացման պրոցեսում այդ կապերն ու հարաբերությունները աստիճանաբար իրենց տեղը զիջել են պետականության, պետական իշխանության: Հանգամանորեն շարադրելով «տուն», «տոհմ», «ազգ», «ազն», «տէր», «տանուտէր», «նահապետ», «նախարար», «սեպուհ», «ազատ», «ռոստանիկ», «ռամիկ», «շինական», «ծառա» տերմինների ծագման, զարգացման պատմությունը, մեջ հետաքրքրող հարցի առնչությամբ նա նշել է որ «ռամիկները» համարվում էին ազատներ, այդ երևում է նրանից, որ հին վրաց թարգմանիչը հայկական «ռամիկը» թարգմանել է «շիներուլի» բառով, որը նշանակում է «ազատավոր», իսկ ինչ վերաբերվում է «շինականներին», ապա

[1] Ա. Մ. Գարագաշյան, Քննական պատմության Հայոց, մասն Բ. էջ 10:

նրանք «կազմում էին այն ժամանակվա հայկական հասարակության ամենից ցածր սոցիալական աստիճանը»։

Անկասկած է, որ հին վրացական բնագրի թարգմանիչը, որը և վկայակոչում է հարդելի գիտնականը, անընդունելի բացատրություն է տալիս հայկական աղբյուրներում գործածված «ռամիկ» տերմինի իմաստին։ Պատմական աղբյուրներում չեն պահպանվել և ոչ մի վկայություն այն մասին, որ «ռամիկ» նշանակել է «ականավոր»։ «Ռամիկ» տերմինը պատմական բոլոր շրջաններում իր մեջ իմաստավորել է ինչպես գյուղերի, այնպես էլ քաղաքների հայ հասարակության ամենացածր խավերն ու դասերը և համապատասխանում էր իր նշանակությամբ հայկական «ամբոխ», «բազմություն» տերմիններին։ Այնուհետև ակադ. Ի. Ջավախովը ճիշտ կերպով նկատում է, որ «շինականը» հայ հասարակության ամենացածր աստիճանում գտնվող խավն էր, սակայն անընդունելի է հեղինակի նաև այն պնդումը, թե «կարելի է վստահ կերպով ասել, որ «շինականները» եղել են անազատներ և կախված ավագանուց»։

Հեղինակն իր այս դրույթը փաստարկելու համար մեջ է բերում սկզբնաղբյուրներում պահպանված բազմաթիվ վկայություններ այն մասին, որ միշտ էլ «շինականները» հակադրվել են «ազատներին» և կոչվել «անազատ»։[1] Անկասկած է, որ հեղինակին թյուրիմացության մեջ են դցել հաճախակի մատնացույց արված «ազատ» և «անազատ» տերմինները։ Մատենագրական վկայությունների մանրակրկիտ հետազոտությունը ցույց է տալիս, որ պատմական այս շրջանում «շինականները» դեռ իրավապես ազատ էին ու չէին ամրացված հողին, ինչպես այդ թվում է առաջին հայացքից։ Նրանց իրավունքների մասնակի սահմանափակությունը դեռ «անազատության», «ճորտության» ապացույց չէր։

Հայ ֆեոդալական հասարակության պատմության ուսումնասիրությունը սկսվում է պրոֆ. Ն. Ադոնցից։ Նա իր «Армения в эпоху Юстиниана» ծանրակշիռ աշխատության մեջ, ինչպես ազգային, այնպես էլ օտար մատենագրական և պատմական առատ նյութերի հիման վրա, հանդամանորեն շարադրել է հայկական ֆեոդալիզմի ծագման, տեղության, նախարարական-ֆեոդալական դասերի առհմական և ֆեոդալական հիմքերի, նրանց էության ու առանձնահատկությունների, հայ ֆեոդալական եկեղեցու կազմակերպման և ֆեոդալական բնույթի, նախարարարների, հոգևոր

---

[1] И. Джавахов, Государственный строй древней Грузии и древней Армении, СПБ, 1905, стр. 133—135.

դասի քաղաքական իշխանության և սրանց հետ առնչվող բազմաթիվ այլ հարցեր։

Ն. Ադոնցը մեր պատմագրության մեջ առաջին հետազոտողն էր, որ համարձակ կերպով խոսեց ֆեոդալական ինստիտուտների, ֆեոդալական հասարակական կարգերի գոյության մասին ինչպես Հին, այնպես էլ միջնադարյան Հայաստանում։ Զարգացնելով այն ճիշտ գրությունը, որ նախարարական-ֆեոդալական կարգերը, ինչպես հասարակական բոլոր երևույթները, ծագել և զարգացել են տեղի և ժամանակի կոնկրետ պայմաններում, ենթարկվել են լուրջ փոփոխությունների, որ նախարարական կարգերը անցել են պատմական զարգացման տարբեր էտապներ, սակայն նա որպես բուրժուական պատմագրության խոշոր ներկայացուցիչ, ֆեոդալիզմը դիտեց և գնահատեց որպես քաղաքական-իրավական հարաբերությունների մեխանիկական միակցություն, որպես քաղաքական իշխանության բաժանվածություն։ Խիստ ուշագրավ է, որ հեղինակն իր մեծածավալ աշխատության մեջ (493 էջ) հայ աշխատավոր գյուղացիությանը հատկացնում է միայն մի քանի էջ։

«Հայաստանի գյուղական բնակչության, մասնավորապես նրա սոցիալական վիճակի մասին,— գրել է Ն. Ադոնցը,— շատ սակավ վկայություններ կան։ Հիշատակարանները խստորեն տարբերում են գյուղացիությունը՝ հակադրելով նրան ազատներին, իսկ ինչ վերաբերում է նրանց փոխհարաբերություններին և հողատերերից կախված նրանց վիճակին, աղբյուրները համարյա ոչինչ չեն տալիս։ Բոլոր նրանք, ովքեր չեն մտնում ազատների դասի մեջ, հայտնիների և հոգևորականների շարքը, մատենագիրների պատկերացմամբ կազմում են մի մասսա, ստորին բնակիչների խավ, շինականություն sinakanudiun անվան տակ։ Շինականը՝ գյուղացու հասկացությամբ ամենից շատ գործածական բառն է, բայց նրան հաջորդում են ոչ սակավ ռամիկ ramik, գեղջուկ geldzuk և եկեղեցական տերմինով՝ ժողովուրդ zolovurd բառերը»[1]։

Հին և միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական պատմության բազմաթիվ հարցերը շոշափել է նաև Հ. Մուսայելյանը իր «Անդրկովկասի հողային պայմանները» խիստ սխեմատիկ աշխատության մեջ։ Հեղինակն ամեն կերպ ձգտել է ապացուցել, որ իբր Հայաստանում ոչ միայն Արշակունիների, այլև Բագրատունիների

---

[1] Н. Адонц. Армения в эпоху Юстиниана, СПБ, 1908, стр. 479, 410, 155.

օրոք «ֆեոդալիզմը համեմատաբար մեղմ է եղել», որ իբր «Հայաստանում երբեք էլ եվրոպական մտքով ճորտություն գոյություն չի ունեցել...»[1]։

«Շինականները»,—գրել է հեղինակը,—ազատ էին, ունեին իրենց քաղաքական անկախությունը և միաժամանակ չէին ենթարկվում նախարարներին։ Գեղջուկները, ընդհակառակը, ենթարկվում էին թագավորին կամ նախարարներին, բայց նրանց դրությունն այնքան էլ ծանր չէր, նրանք ունեին շարժական և անշարժ սեփականության իրավունք»[2]։

Այնուհետև անդրադառնալով Արշակունիների էպոխայի գյուղացիության սոցիալ-իրավական հարցերին, հեղինակը ենթադրել է, որ այդ շրջանում երեք կատեգորիայի գյուղացիություն գոյություն ուներ՝ ա) պետական-թագավորական, բ) եկեղեցական և գ) նախարարական։

Պետական գյուղացիները միայն հարկատու էին պետությանը և մասամբ եկեղեցուն, սակայն իրավական տեսակետից ազատ էին. եկեղեցական կալվածների վրա աշխատող գյուղացիների դրությունը բավականին թեթև էր. նրանք պետական հարկերից ազատ էին և եկեղեցուն վճարում էին տասանորդ և պտուղ. ընդհանրապես ամենից բարեհաջող պայմաններում էին գտնվում եկեղեցապատկան գյուղացիները։ «Նախարարական գյուղացիների մասին,— շարունակում է հեղինակը,— տեղեկություններ համարյա չկան. նախարարական գյուղացիները համեմատաբար ավելի անբարենպաստ պայմաններում էին գտնվում...։ Արդյոք բացի հարկերից նախարարական գյուղացիները անձնական ծառայություններ է՞լ կատարում էին՝ հայտնի չէ»։ Այս համառոտ ակնարկից հետո, Հ. Մուսայելյանը եզրափակում է՝ «Հայաստանում էլ Արշակունիների ժամանակ կալվածատիրություն և դրա հետ կապված ճորտատիրություն գոյություն չուներ»[3]։

Բագրատունիների էպոխայում, շարունակում է հեղինակը, Հայաստանի սոցիալ-քաղաքական կարգերը խոշոր փոփոխություններ չեն կրել։ Այս էպոխայում, «ամեն ինչ հիմնված էր հնի վրա»։ Սակայն Բագրատունիների ժամանակ «գյուղացիների դրությունը համեմատորեն վատացել էր»։ Ինչպես նախորդ, այնպես էլ այս շրջանում գյուղացիությունը բաժանված էր երեք կատեգորիաների —

---

[1] Հ. Մուսայելյան, Անդրկովկասի հողային պայմանները, Վաղարշապատ, 1910, էջ 15—17, 21—22 և այլուր։

[2] Նույն տեղում, էջ 15։

[3] Նույն տեղում, էջ 17—18։

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

բագավորական, եկեղեցական և նախարարական։ Այս ժամանակաշրջանում էլ եկեղեցական գյուղացիությունը դրությունը «բարվոք եղած պետք է լինի», բայց ծանր էր նախարարական գյուղացիների դրությունը։

«Այժմ,— ամփոփում է իր մտքերը Հ. Մուսայելյանը,— մի հարց է ծագում։ Բագրատունիների ժամանակ ճորտատիրությունը մեր մեջ գոյություն ունեցե՞լ է»։ Վկայակոչելով Մխիթար Գոշի Դատաստանագրքի հայտնի հոդվածները, հեղինակը շարունակում է. «Ինչպես այս, նույնպես և մի քանի ուրիշ տեղեկությունների վրա հիմնված կարելի է ասել, որ եթե ճորտատիրությունը եվրոպական մտքով մեր մեջ գոյություն չի ունեցել, բայց գյուղացիները մի այն տեսակ դրության մեջ են եղել, որ ճորտությունից հեռու չէ։ Այդ երևում է թե հարկերի շատությունից և թե գյուղացիների կատարած մի շարք ծառայություններից»[1]։

Անկասկած է, որ Հ. Մուսայելյանի այս թռուցիկ ակնարկներն ու դիտողությունները խիստ ուշագրավ են. սակայն նրա ելակետը, հարցի ուսումնասիրության մեթոդը, պատմական կոնցեպցիան և հատկապես մեթոդոլոգիան մեզ համար անընդունելի է. նախ մենք և ոչ մի հիմք չունենք պնդելու, որ Արշակունիների էպոխայում բոլոր շինականները ազատ էին, ունեին իրենց քաղաքական անկախությունը և չէին ենթարկվում նախարարներին։ Արտադրության ֆեոդալական եղանակի հաղթանակի պայմաններում գյուղացիության ազատության մասին խոսելն անիմաստ է և ապացուցելն էլ անհնար։ Մենք իր տեղում ցույց կտանք, որ իսկապես շինականների ճնշող մեծամասնությունը Արշակունիների ժամանակ ընդգրկված էին գյուղական համայնքներում և օգտվում էին անձնական իրավունքներից՝ համայնքների շրջանակում։ Սակայն շինականների մի մասը արդեն զրված էր տնտեսական կախման վիճակում, իսկ համայնքների քայքայման հետևանքով նրա շարքերից դուրս եկած նախկին համայնականը կորցնելով իր հողակտորը և արտադրության միջոցները, արդեն գտնվում էր հողատեր-ֆեոդալներից նաև անձնական կախման վիճակում։

Այնուհետև անընդունելի է հեղինակի այն պնդումը, որ իբր ոչ միայն Արշակունիների, այլև Բագրատունիների ժամանակ եկեղեցապատկան գյուղացիության սոցիալական կացությունը ամենից բարեհաջող էր։ Հեղինակը չի նկատել կամ չի ցանկացել նկատել որ պետական, մասնատիրական, վանքապատկան և եկեղեցական

[1] Հ. Մուսայելյան, Անդրկովկասի հողային պայմանները, էջ 19—21։

տիրույթների վրա աշխատող գյուղացիության սոցիալ-տնտեսական դրության մեջ տեղի էր ունեցել կարևոր տեղաշարժեր և փոփոխություններ։ Հոգևոր ֆեոդալական դասը, ֆեոդալական վանքերն ու եկեղեցիները հենվելով պետական ապարատի ու աշխարհիկ ֆեոդալների օգնության և օժանդակության վրա, արդեն 10—13-րդ դդ. սահմանափակում են գյուղացիների ազատ ելքի իրավունքը և ամրացնում հողին։

Հ. Մուսայելյանը ճորտական հարաբերությունները և իրավունքը, գյուղացիության անձնական իրավունքների սահմանափակումը և հողին ամրացման հարցերը քննարկում է մեկուսացած այդ երևույթները ծնող սոցիալ-դասակարգային պայմաններից։ Այս է հիմնական պատճառը, որ նրա հաճախակի ճիշտ ենթադրությունները և եզրակացությունները չեն փաստարկվում, որովհետև հեղինակի մեթոդոլոգիական սխալ ելակետն այն է, որ ոչ միայն Հայաստանում, այլև ամբողջ Արևելքում երբեք «եվրոպական մտքով ճորտություն գոյություն չի ունեցել»։

Սարգիս Բահաթրյանից հետո ավելի համարձակ կերպով ճորտության հարցերին անդրադարձավ հայ լիբերալ պատմագրության աչքի ընկնող ներկայացուցիչ Լեոն։

Լեոն 1905 թ. «Մուրճ» ամսագրում հանդես եկավ իր «Անցյալի հարցերից» խիստ ուշագրավ հոդվածով։ Այս հոդվածում հեղինակը հարցը դրեց կտրուկ — գոյություն ունեցե՞լ է Հայաստանում ճորտություն — և առանց տատանվելու պատասխանեց՝ «այո, եղել է»։

Վկայակոչելով Մ. Գոշի Դատաստանագրքի համապատասխան հոդվածները, նա փորձեր կատարեց ապացուցելու, որ գյուղացին հողատիրոջ լիիրավ իրավունքի տակ էր. նա չէր կարող թողնել տիրոջ հողերը առանց նրա համաձայնության, տերն իրավունք ուներ փախած գյուղացուն վերադարձնել։ Նրա մահից հետո անազատ էին մնում նույն տեղում ծնված երեխաները, իսկ ազատագրվում էին միայն այն զավակները, որոնք ուրիշ տեղ են ծնվել, այսինքն ուրիշ կալվածատիրոջ հողի վրա և հանդիսանում էին նրա «անազատները»։

«Ահա իսկական ճորտություն,— եզրակացրել է Լեոն,— ճորտ էր ոչ միայն գյուղացին, այլև նրա որդիները»։

Լեոն, այնուհետև իրավամբ նշում է, որ «մեղ կարող են առարկել, թե Մ. Գոշի այդ վկայությունները վերաբերում են Հյուսիսային Հայաստանին, որը սահմանակից էր Վրաստանին։ «Դիմենք,— շարունակում է նա,— այլ փաստերի, այլ ավելի կարևոր վկայու-

ֆյունների այդ «տեսությունը» ժխտելու համար»։ Վկայակոչելով Շիրակի վիմական արձանագրություններում պահպանված մի քանի հատվածներ, Լեոն իր հոդվածը եզրափակում է. «Հայաստանի հողն էլ ուրեմն ազատ չի եղել ստրուկ, անասունի պես վաճառվող հողագործի հեծեծանքներից, արյուն-քրտինքից։ Իզուր էինք կարծում, որ մեր պապերը ոչ նոբտ են եղել և ոչ էլ նորտատեր»[1]։

Հայաստանում ճորտատիրությունը, հեղինակի կարծիքով, գոյություն է ունեցել Մ. Գոշի Դատաստանագրքից առաջ, Բագրատունիների ժամանակ, ասա 12-րդ դարում և նրանից հետո։

Անդրադառնալով այդ նույն հարցին Լեոն իր «Խոջայական կապիտալ» աշխատության մեջ գրել է.

«Հայոց հին գրականության մեջ շատ քողարկված և մթացրած է եղել ճորտության գրությունը, և այս առիթ էր տվել գիտնական իրավաբան Վահան վարդապետ Բաստամյանին հայտարարելու, թե Հայաստանում գոյություն չի ունեցել ճորտությունը։ Առաջին անգամ մենք էինք, որ հերքեցինք այդ հայտարարությունը, Շիրակի սրաձանագրություններից մի քանիսի միջոցով ապացուցելով, որ Հայաստանում եղել է ճորտություն»[2]։

Լեոն առանց լուրջ հիմքի իրեն է վերագրում այս «հայտնագործությունը», աչքաթող անելով այն, որ իրենից դեռ 10 տարի առաջ այդ մասին, ճիշտ է խիստ թեական և անհամարձակ կերպով, խոսել է Ս. Բահաթրյանը։

Ճիշտ է, Լեոն դուրս եկավ տրադիցիոն պատմագրության «տեսության» դեմ, որ Հայաստանում իբր թե գոյություն չի ունեցել ճորտություն և ցույց տվեց, որ նրանք սխալվում են, սակայն նա իր հերթին խոսեց ճորտության, որպես սոցիալական մի կատեգորիայի մասին, առանց այն շաղկապելու ֆեոդալիզմի զարգացման պատմության հետ։ Նա, ինչպես և անցյալի հայ պատմագրության մյուս ներկայացուցիչները, նշեց միայն ճորտության ինստիտուտի գոյության փաստը և գյուղացիության ճորտական իրավունքի զարգացման պատմությունը դիտեց ու դնահատեց որպես մեկուսացված երևույթ, որպես տնտեսական կատեգորիա, առանց խորանալու այդ երևույթների ներքին էության, նրա օրինաչափության, նրա զարգացման տարբեր էտապների, նրան ծնող սոցիալ տնտեսական նախադրյալների մեջ։

---

[1] Լեո, Անցյալի հարցերից, (տե՛ս «Մուրճ», 1905, № 10, էջ 91—99, (ընդգծումը մերն է—Ս. Հ.)։

[2] Լեո, Խոջայական կապիտալ, Երևան, 1934, էջ 140—141։

Ինչպես անցյալի բոլոր հետազոտողները, այնպես էլ Լեոն, գյուղացիության պատմությունը մեկուսացրել, առանձնացրել են նրա շարժիչ ուժերից, դասակարգային պայքարի պատմությունից և այդ է պատճառը, որ չնայած նրանց հաճախակի ճիշտ հարցադրմանը և խիզախ եզրակացություններին՝ գյուղացիության պատմությունն իր ամբողջությամբ վերցրած ոչ միայն մնաց չուսումնասիրված, այլև նույնիսկ չդրվեց գիտական հիմքերի վրա։

Հայ գյուղացիության պատմության առանձին վերցրած հարցերը քննարկվել են նաև սովետահայ պատմագրության ներկայացուցիչների աշխատություններում։ Այս ասպարեզում անգնահատելի աշխատանք է կատարել պրոֆ. Խ. Սամուելյանը։ Հեղինակն իր «Մ. Գոշի Դատաստանագիրքը», «Ստրկությունը Հին Հայաստանում», «Հին հայ իրավունքի պատմությունը» աշխատություններում լուրջ փորձեր է կատարել ավելի գիտականորեն շարադրելու հայկական ֆեոդալիզմի ծագման, զարգացման տարբեր էտապների, ստրկատիրական և ճորտատիրական հարաբերությունների, հայ գյուղացիության իրավական-տնտեսական դրությունի, աշխարհիկ և հոգևոր ֆեոդալական հողատիրության և սրանց հետ առընչված բազմաթիվ պրոբլեմների պատմությունը։ Սակայն ելակետ ունենալով այն հակագիտական դրույթը, որ ֆեոդալիզմը ոչ թե արտադրության որոշակի եղանակ է, այլ հասարակական-քաղաքական հարաբերությունների մեխանիկական միակցություն, պրոֆ. Խ. Սամուելյանը «հայկական ֆեոդալիզմը» ստորաբաժանել է «հայկական վաղ ֆեոդալիզմի», «նախարարական ֆեոդալիզմի», «իշխանական-ազնվական ֆեոդալիզմի» ժամանակաշրջանների և նշել, որ հայկական ֆեոդալիզմի այդ երեք ժամանակաշրջաններում նյութական բարիքներ արտադրողները կամ ստրուկներն էին, կամ ստրկացված ճորտերը։

Հայկական վաղ ֆեոդալիզմի ժամանակաշրջանում,— գրել է պրոֆ. Խ. Սամուելյանը,— «կալվածատերը միանգամայն խզելով իր կապերը դյուղական համայնքից, կարող էր սկզբնական շրջանում իր տնտեսությունը առաջ տանել միայն անմիջականորեն՝ իր ձեռքի տակ ունեցած ստրուկների աշխատանքով...»։ Այս առաջին շրջանը, նրա կարծիքով, ընդգրկել է 6-1-ին դդ. ն.մ.թ.։ Երկրորդ շրջանը կամ «նախարարական ֆեոդալիզմը» ընդգրկելով իր մեջ Արշակունիների, մարզպանության և արաբական տիրապետությունների դարաշրջանը, տևել է մինչև մոնղոլների տիրապետությունը։ Այս շրջանում «հայկական ֆեոդալիզմը» իր մեջ «ներծծելով իրանա-պարթևական... բյուզանդական ֆեոդալիզմի բնորոշ գծերն ու

տարրերը... ինքը ներկայացնում է արևելյան տիպի ֆեոդալական պետություն»։ Այս երկրորդ շրջանում «ստրուկները... հետզհետե կորցնում են իրենց նախկին տնտեսական նշանակությունը և նրանցից շատերը դառնում են ճորտեր...»[1]։

Ֆեոդալական Հայաստանում «ներհակ դասակարգը,— շարունակում է պրոֆ. Խ. Սամուելյանը,— շահագործվող սոցիալական մասսան կազմում էին հողին ամրացված գյուղացիները, ճորտերը, որոնք հայ պատմական իրականության մեջ հայտնի էին շինական անունով և ապա ստրուկները»։

Պրոֆ. Խ. Սամուելյանը Հայաստանում ֆեոդալիզմը դիտում և գնահատում է որպես հավերժ, անփոփոխ, մշտնջենական կարգեր։ Նրա մոտ ֆեոդալիզմը Հին Հայաստանում սկիզբ է առնում նախաստրատական շրջանում և ձգվում է մինչև 19-րդ դ. երկրորդ կեսերը։

Այս «հավերժ» ֆեոդալական հասարակարգում էլ անմիջական արտադրողը «հավերժ» ճորտ է։ Պրոֆ. Խ. Սամուելյանը ճորտություն է փնտրում ամենուր. և՛ Ասորեստանում, և՛ Ուրարտուում, և՛ Հին Հայաստանում։ Նույնիսկ անմիջական արտադրողի որոշ չափով անազատությունը, տնտեսական ու իրավական կախումը նա դիտում և գնահատում է որպես իսկական, «ստրկական ճորտություն»։

«Մեր պատմական մատենագրության մեջ,— շարունակում է պրոֆ. Խ. Սամուելյանը,— տիրապետող ֆեոդալ դասակարգին, ազատներին, միշտ հակադրվում է շինականների դասակարգը, որոնք հին հայ իրականության ճորտերն էին»[2]։

Ելակետ ունենալով այն դրույթը, որ ֆեոդալական հասարակական տնտեսական ֆորմացիայի նյութական բարիքներ արտադրողները պետք է անպայման անձնական կախման վիճակում գտնվեն հողատեր-ֆեոդալներից, նա ձգտել է ցույց տալ, որ «հայկական ֆեոդալիզմի» բոլոր երեք շրջաններում էլ շինականը անազատ էր, կախյալ և ճորտ։ Անհայտ է, որ հեղինակը շփոթել է ճորտական հարաբերությունների և իրավունքի երկու հասկացությունները. նա աչքաթող է արել այն կարևոր փաստը, որ ֆեոդա-

---

[1] Պրոֆ. Խ. Սամուելյան. Մ. Դոչի Դատաստանագիրքը, Վիեննա, 1911, էջ 297—299, նույնի, Ստրկությունը Հին Հայաստանում, ՀԽՍՀ Պատմության և գրականության ինստիտուտի «Տեղեկագիր», գիրք 2, 1937, էջ 87—140, նույնի՝ Հին-հայ իրավունքի պատմություն, Երևան, 1939, հատ. 1, էջ 248—249, 257—258։

[2] Պրոֆ. Խ. Սամուելյան. Հին հայ իրավունքի պատմություն, հատ. 1, էջ 253, 255 (ընդգծումը մերն է—Ս. Հ.)։

լական բոլոր երկրներում էլ առկա են եղել դյուղացիության տարբեր կատեգորիաներ, որոնք, անկասկած, դտնվել են տնտեսական, իրավական և սոցիալական տարբեր պայմաններում։

Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի և հասարակական հարաբերությունների պատմության դիտական և մանրախույզ հետազոտությունները, անկասկած, պատկանում են ակադ. Հ. Մանանդյանի դրչին։

Ակադ. Հ. Մանանդյանը մանրակրկիտ և բարեխիղճ կերպով ուսումնասիրելով շինականների մասին մեր հին մատենագիրների կողմից թողած համարյա բոլոր վկայությունները, մի դեպքում շինականներին համարում է ճորտեր, հողին ամրացված դյուղացիներ, մյուս դեպքում՝ կիսազատ ոչ ստրկական բնույթի ճորտեր։

Ակադ. Հ. Մանանդյանը առարկելով Ի. Ա. Ջավախովին, գտնում է, որ «շինական»-ների «անազատ լինելը, այսինքն՝ «ազատ»-ների դասին չպատկանելը՝ դեռևս ապացույց չէ նրանց ճորտական վիճակին։ Հին Ռուսաստանում, օրինակ, «սմերդները» (смерды), որոնք նույնպես իբրև առանձին դաս հակադրվել են ազնվական ավելի բարձր դասերին և եղել են երկրի գլխավոր հարկատու ուժը, իրավական իրենց դրությամբ եղել են ազատ»։ Այնուհետև ակադ. Հ. Մանանդյանը իրավացի կերպով մեղադրելով Ի. Ջավախովին, որ նա մանրամասն չի հետախուզել շինականների իրավական դրության վերաբերյալ մատենագրական բոլոր վկայությունները, գտնում է, որ նա չի լուծել այն հարցը, թե արդյոք «շինականները» եղել են կապված հողին, ինչպես միջնադարյան ճորտերը, և «արդյո՞ք նրանց կախումը կալվածատեր-ազնվական դասից տնտեսական՝ն է եղել միայն, թե նաև անձնական»[1]։

Ակադ. Հ. Մանանդյանը, այնուհետև իր դժգոհությունն է հայտնում, ասելով, թե Ի. Ջավախովի «եզրակացության գլխավոր և միակ հիմքն այն է, որ մատենագրական աղբյուրները «շինական»-ներին հակադրել են «ազատ»-ներին և անվանել «անազատ»։

Այս միակ կռվանը բավական չէ, «ամուր և հաստատուն չէ» շինականների անազատ վիճակը փաստարկելու համար։ Հարկավոր է ու անհրաժեշտ մատենագրական այլ «ամուր և հաստատուն վկայություններ» և ահա այդ վկայությունները, հեղինակի կարծիքով, հանդիսանում են Դվինի ժողովի 9-րդ կանոնը և Աղվանից Վաչե թագավորի 1000 «երդ»-երի մասին Մ. Կաղանկատվացու վկայությունը։

---

[1] Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը Հին Հայաստանում, Երևան, 1934, էջ 161։

Այս և այլ վկայությունների հիման վրա, Ի. Ջավախովի օրինակով, ակադ. Հ. Մանանդյանը նույնպես գտնում է, որ «շինականները «համարվել են կալվածատեր ազնվականության հատուկ դույքը...», որ «նրանք... կապված են եղել իրենց հողի և տերերի հետ», որ «ինչպես ֆեոդալական դրեթե բոլոր երկրներում, այնպես էլ Հայաստանում «շինական»-ները իբրև «անազատ»-ներ, դասվել են ճորտական դրության մեջ», որ Հայաստանում Արշակունիների էպոխայում գոյություն են ունեցել ինչպես «կիսազատ ճորտեր», այնպես էլ «սարկանման ճորտեր»[1]։

Ակնհայտ է, որ ակադ. Հ. Մանանդյանը շինականներին հիմնականում համարում է ամրացված հողին և ճորտացված։ Սակայն մատենագրական նույն վկայությունների վերլուծման հետևանքով ակադ. Հ. Մանանդյանը միաժամանակ գտնում է, որ շինականները չեն եղել «ստրուկ կամ իրավազուրկ»։ Նրանք «անազատ» են անվանվել, իբրև «ազատ»-ներից տարբեր ու «ազատ»-ներին հակադիր մի դաս»։

Իբրև եզրակացություն հեղինակն ամփոփում է. ...«շինական»-ները հնագույն այս շրջանում կարող էին իրենց իրավական դրության հիմնական գծերով համապատասխան լինել Բյուզանդական կոլոններին, Սասանյան Պարսկաստանի գյուղացիության և գերմանական hörig կոչված գյուղացիներին»։

Այս կարգի ճորտական վիճակը, հեղինակը բնորոշում է «իբրև կիսազատ ճորտություն»։ «Ուրեմն,— շարունակում է ակադ. Հ. Մանանդյանը,— Հին Հայաստանի «շինական»-ները համաձայն մեր դիտողությունների, եղել են պատմական հնագույն այս շրջանում կիսազատ ճորտեր (hörig կամ зависимый)»[2]։

Այսպիսով, ակադ. Հ. Մանանդյանը hörigkeit հասկացության տակ իմաստավորել է միայն կախյալ գյուղացիներին կամ «կիսազատ ճորտերին» և աչքաթող է արել այն կարևոր փաստը, որ hörigkeit տերմինն իր մեջ ընդգրկել է ինչպես կախյալ, այնպես էլ հողին ամրացված և ճորտացված գյուղացիության մի մասը։ Այնուհետև անընդունելի է նաև այն դրույթը, որ ճորտական իրավունքը և հարաբերությունները հանդես են եկել պատմական բոլոր էպոխաներում և ունեցել են նույն իմաստն ու նշանակությունը։ Ինչպես հայտնի է պատմական և իրավաբանական դրա-

---

[1] Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը Հին Հայաստանում, էջ 162, 166, 175, 176 (ընդգծումը հեղինակինն է)։

[2] Նույն տեղում, էջ 189 (ընդգծումը հեղինակինն է)։

կանության մեջ ճորտական իրավունք և հարաբերություններ հասկացությունները հանդես են եկել երկու առումով և իմաստով։ Ճորտական իրավունք լայն հասկացությունը ենթադրել է միայն գյուղացու աշխատանքի և ստեղծած արդյունքների յուրացումը, իսկ նեղ առումով՝ նաև գյուղացու անձնական կախումը հողատեր ֆեոդալներից։ Այս առումով էլ Ֆ. Էնգելսը խոսել է մարդկային հասարակության շահագործման երեք մեծ ձևերի մասին, որոնք հատուկ են քաղաքակրթության երեք մեծ դարաշրջաններին։ «Ստրկությունը,— գրել է Ֆ. Էնգելսը,— շահագործման առաջին, անտիկ աշխարհին հատուկ ձևն էր։ Նրան հետևում են ճորտական իրավունքը միջին դարերում, վարձու աշխատանքը՝ նոր դարերում»[1]։

Եթե կարելի է խոսել ճորտական իրավունքի և հարաբերությունների առկայության մասին Հայաստանում Արշակունիների և Մարզպանական շրջաններում, ապա միայն լայն առումով և նշանակությամբ։

Այնուհետև անընդունելի է պնդել, որ պատմական բոլոր շրջաններում բոլոր գյուղացիները կամ ճորտ էին, կամ կախյալ, կամ դեռ իրավասես ազատ քաղաքացիներ։ Չնայած ֆեոդալական հասարակական տնտեսական ֆորմացիան գոյություն է ունեցել մի շարք հարյուրամյակների ընթացքում, սակայն արտադրության պրոցեսում փոփոխության են ենթարկվել ոչ միայն արտադրողական ուժերն ու հարաբերությունները, այլև իրենք իսկ նյութական բարիքներ արտադրողները։ Պատմաբանի, որն իր առաջ խնդիր է դրել ուսումնասիրել անմիջական նյութական բարիքներ արտադրողների պատմությունը, հիմնական խնդիրն է հետևել այդ փոփոխությունների ընթացքին և զարգացմանը, ցույց տալ այն կարևոր տեղաշարժերը, որոնք հանդես են եկել ոչ միայն գյուղացիների, այլև ֆեոդալ-հողատերերի սոցիալ-տնտեսական գոյավիճակում՝ կապված երկրի պատմության զարգացման հետ։ Գյուղացիության անձնական իրավունքների սահմանափակման, հողին ամրացման, ճորտական իրավունքի և հարաբերությունների պատմության հետազոտությունը խնդիր է դնում բացահայտել սոցիալ-դասակարգային այն պայմանները, որոնց հիմքի վրա ծագեցին, ձևավորվեցին և զարգացան հասարակական ու քաղաքական այնպիսի հարաբերություններ, երբ հասարակության մի աննշան և փոքր մասը իր ձեռքում կենտրոնացրեց հողային ընդարձակ տիրույթներ,

---

[1] Ֆ. Էնգելս, Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Երևան, 1948, էջ 233։

հանդես եկավ որպես քաղաքականապես իշխող դասակարգ, այն դեպքում, երբ նույն հասարակության ճնշող մեծամասնությունը, որը մինչև արտադրության ֆեոդալական եղանակի տիրապետությունը, ուներ իր սեփական արտադրության միջոցների վրա հիմնված մասնավոր սեփականություն, ոչ միայն կորցրեց իր հողակտորը և աշխատամիջոցները, այլև դրվեց տնտեսական կախման վիճակում հողատեր-ֆեոդալներից և վերջնականապես ամրացվեց հողին։

Մատենագրական և այլ կարգի ու բնույթի բազմաթիվ վկայությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արտադրության ֆեոդալական եղանակի պայմաններում գյուղական-երկրագործական համայնքները տալիս են լուրջ ճեղքվածքներ, սպրում են նյութական և սոցիալական խորը շերտավորում և երբեմն «միատարր», «միասնական» շինական դասը տրոհվում է երկու մասի՝ դեռ համայնքի իրավահավասար և ազատ անդամի և արդեն հողատերերից կախման վիճակում դրված հասարակական այլ խավերի և դասերի։ Ոչ միայն Արշակունիների, Մարզպանության, այլև Բագրատունիների էպոխայում դեռ գյուղական համայնքների զգալի մասը պահպանում են իրենց գոյությունը և համայնքներում ընդգրկված շինականներն իրավունք ունեին անձամբ անօրինելու իրենց կայքը, գնումների միջոցով լայնացնել իրենց հողակտորները, ընտրվելու գեղջավագներ և նույնիսկ դատավորներ։ Նրանք դեռևս օգտվում էին ազատ ելքի իրավունքներից։

Գյուղացիության պատմության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ոչ մի երկրում, պատմական և ոչ մի ժամանակաշրջանում կալվածատեր-հողատերերի հանդես գալով գյուղացին մի անգամից չի ամրացվել հողին ու ճորտացվել։ Գյուղացիների ճորտացման պրոցեսը արդյունք է ամենից առաջ ֆեոդալական էկոնոմիկայի, քաղաքների, քաղաքային կյանքի, աշխատանքի հասարակական բաժանման և դասակարգային սուր պայքարի զարգացման։

Հայտնի է, որ Ռուսաստանում գյուղացիներին վերջնականապես հողին ամրացնելը, նրանց ազատ ելքի ամբողջապես սահմանափակելն ընդգրկեց շուրջ 7 դար։ Գյուղացիների — ամերդների հիմնական մասը հին ռուսական պետությունում չնայած տնտեսական կախման վիճակում էին դրված, սակայն դեռ անձնապես, իրավապես ազատ էին։ Միայն հետագայում, այն էլ 14-րդ և մասնավորապես 15-րդ դարերում ֆեոդալական հասարակարգի զարգացման հետևանքով ֆեոդալական դասը, հիմնված պետության

ժանդակության և օգնության վրա, աստիճանաբար և համառ կերպով սահմանափակեց գյուղացիների անձնական իրավունքները, արգելակեց ազատ ելքի հնարավորությունները, իսկ 17-րդ դարի կեսերին ամբացվեց հողին։ Հասկանալի ու անառարկելի է, որ սկսած 4-րդ դարից մեկ մոտ էլ ֆեոդալական դասը աստիճանաբար սահմանափակում է գյուղացիների իրավունքները, նրանց դնում է տնտեսական և արտատնտեսական կախման վիճակում. սակայն գյուղացիների ճնշող մեծամասնությունը վերջնականապես ամրացվում է հողին միայն 10-րդ դարից սկսած, որովհետև այս դարաշրջանում է, որ երկրի էկոնոմիկայում և դասային հարաբերություններում տեղի են ունենում արմատական փոփոխություններ և տեղաշարժեր ու հանդես են գալիս գյուղացիների իրավունքների սահմանափակման սոցիալ-տնտեսական նախադրյալները։

Ակադ. Հ. Մանանդյանը շինականների իրավական և տնտեսական դրության հետազոտությունը 7-րդ դարից այս կողմ չի բերել և այդ է հիմնական պատճառը, որ նա գյուղացիների ճորտացման պատմությունը չի դիտել որպես պատմական հսկայական ժամանակաշրջան ընդգրկող պրոցեսի և ֆեոդալական հարաբերությունների հետագա զարգացման ու խորացման անխուսափելի հետևանք։

Հայ շինականների սոցիալ-տնտեսական պատմության մի շարք հարցեր քննարկել է Բ. Մ. Հարությունյանն իր «Социально-экономическое положение крестьян в Армении XII в. по Судебнику Мхитара Гоша» հոդվածում։

Հոդվածի հեղինակը իր առաջ դրել է մի հիմնական հարց՝ ցույց տալ հայ գյուղացիության սոցիալ-տնտեսական դրությունը միայն Գոշի Դատաստանագրքի սահմաններում և այդ է պատճառը, որ նա այլ վկայությունների չի դիմում։

Քննարկվող հարցի առթիվ Բ. Մ. Հարությունյանը զարգացնում է այն դրույթը, որ «իսկապես հին և միջնադարյան հայկական աղբյուրներում, կանոնական որոշումներում հանդիպում են հիշատակություններ շինականների մասին, որոնք հակադրվում են նախարարներին և ազատանիին... բայց այդ հակադրությունները հիմնված են այն բանի վրա, որ շինականները (ինչպես նրանց հավասարեցված քաղաքային ռամիկը) հանդիսանում էին հարկատու, իսկ «ազատանին» ազատների դաս»։

Զարգացնելով իր այս միտքը, Բ. Հարությունյանը գրում է. ...«սոցիալական իրավունքների մի շարք սահմանափակումները

չեն ենթադրում պարտադիր կերպով ճորտության գոյությունը»։ Այնուհետև հեղինակը որպես ընդհանուր եզրակացություն, արձանագրում է. «բոլոր շարադրանքից կարելի է եզրակացնել, որ շինականները, ծայրահեղ դեպքում նրա հիմնական մասը, 12-րդ դ. վերջին և 13-րդ դ. վերջնականապես դեռ չէին ճորտացված»[1]։ Չի կարելի չհամաձայնվել հեղինակի այն դիտողության հետ, որ «սոցիալական իրավունքների մի շարք սահմանափակումները չեն ենթադրում պարտադիր կերպով ճորտական կացություն»։ Սակայն չի կարելի համաձայնվել այն դիտողության հետ, որ շինականները և քաղաքի ռամիկները գտնվում էին միևնույն կացության մեջ. շինական տերմինը իր մեջ իմաստավորել է միայն գյուղի դեռ իրավապես ազատ և կախյալ վիճակում դրված բնակչությանը, իսկ «քաղաքային ռամիկ» տերմինը ունեցել է ավելի լայն իմաստ ու նշանակություն. նա իր մեջ իմաստավորել է քաղաքային բնակչության, և անկասկած նաև գյուղական բնակչության, ստորին խավերին ու դասերին, ասենք գյուղացիներին, արհեստավորներին, մանր և միջին առևտրական դասին և այլն։ Այնուհետև մատենագրական աղբյուրներում պահպանվել են բազմաթիվ վկայություններ, որ ոչ միայն 12—13-րդ դարերում, այլև արդեն 10-րդ դարից սկսած շինական-գյուղացիության զգալի մասն արդեն ամրացված էր հողին և գտնվում էր իսկական ճորտական վիճակում։ Այդ են ապացուցում ոչ միայն Մ. Գոշի Դատաստանագրքի համապատասխան հոդվածները, այլև մատենագրական աղբյուրներում, ձեռագիր հիշատակարաններում, կանոնական որոշումներում, վիմական արձանագրություններում, քարոզներում, մեկնություններում, դեղարվեստական և քաղաքական գրականության մեջ պահպանված բազմաթիվ վկայությունները, որոնք ցավով պետք է նշել, չի օգտագործել Բ. Մ. Հարությունյանը։

Գյուղացիության անձնական իրավունքների սահմանափակման, ազատ ելքի իրավունքի վերացման և հողին ամրացման պրոբլեմներին անդրադարձել է նաև Ս. Տ. Երեմյանը։ Հեղինակի կարծիքով՝ երբ Հայաստանում հողի փաստական տիրակալներ դարձան նախարարները և ազատները, անմիջական արտադրողները — գյուղացի-համայնականները, շինականները վերածվեցին ֆեոդալական կախվածության վիճակում դրված գյուղացիների։

---

[1] Б. М. Арутюнян, Социально-экономическое положение крестьян в Армении XII в. по Судебнику Мхитара Гоша (См. «Вопросы истории», № 8, за 1952 г., стр. 51—58).

Ֆեոդալական ավագանին ձգտում էր ոչ միայն իրեն ամրացնել հողի անսահմանափակ տիրակալության իրավունքը, այլև տարածել այդ իրավունքը գյուղացիների վրա։ Այս պայմաններում ավելի մեծ չափով թուլանում է շինականների կախվածությունը կենտրոնական պետությունից և աճում է նախարարների և ազատների իշխանությունը նրանց նկատմամբ։ Թագավորական և մասնատիրական հողերի վրա ազատ շինականների կողքին հանդես են գալիս կախյալ շինականներ, որոնք հավասարվում են հողի վրա նստած ստրուկ հողագործ-ծառաներին։ Կախյալ և ազատ շինականների սոցիալական կացությունը մոտենում է Հռոմեական կայսրության պոյության վերջին շրջանի ազատ և ամրացված կոլոնների վիճակին։

«Արդեն VII դարում,— շարունակում է հեղինակը,— «շինական» տերմինը նշանակում էր ֆեոդալական կախված գյուղացի։ Հետագայում, ամբողջ միջնադարի ընթացքում, այդ տերմինով էր արտահայտվում երկրագործությամբ զբաղվող գյուղական ամբողջ բնակչությունը»[1]։

Այս դրությը պատմական փաստերով չի ապացուցվում։ Այս շրջանում, այսինքն 7-րդ դարում առկա էին շինականների երկու կատեգորիա՝ տնտեսապես կախյալ և ազատ գյուղացիներ։ Ս. Տ. Երեմյանն աչքաթող է արել պատմական այն իրական փաստը, որ տնտեսական իմաստով գյուղացին հանդիսանում էր արտադրության սեփական միջոցների վրա հիմնված անհատական տնտեսության տեր և արտադրում էր կենսամթերքներ՝ իր սեփական գոյությունը, իր տնտեսության վերարտադրությունը պահպանելու և կալվածատեր-հողատերերին անհրաժեշտ կենսամիջոցներով բավարարելու համար, իսկ իրավական իմաստով գյուղացին կարող էր լինել կամ ազատ հողագործ, կամ այս կամ այն չափով կախված ինչպես աշխարհիկ, այնպես էլ հոգևոր ֆեոդալներից։ Անկասկած է, որ գյուղացիների իրավական դրության ընդհանուր տենդենցը երկրի ֆեոդալիզացիայի պայմաններում տանում էր ազատ կացությունից դեպի կախվածություն, պետությանը և կենտրոնական իշխանությանը հարկեր վճարողներից դեպի ճորտություն։ Այս երևույթը հատուկ էր ոչ թե 7-րդ, այլ 10—13-րդ դարերին։ Անընդունելի է նաև հեղինակի այն դրությը, որ 7-րդ դ. «շինական» տերմինով է արտահայտվել Հայաստանի երկրագոր-

---

1 С. Т. Еремян, Опыт периодизации истории Армении эпохи феодализма («Вопросы истории», № 7, за 1951 г., стр. 54).

ծությամբ զբաղվող ողջ գյուղացիությունը։ Այս շրջանում «շինական» միասնական տերմինը արդեն տարբերակվել էր հասարակական ավելի փոքր խավերի ու շերտերի միջև. շինականի կողքին արդեն տակա էին, ճիշտ է, նույն շինականների շարքերից դուրս եկած, բայց կախման վիճակում գրված այլ դասեր ու խավեր։ Պատմական այս շրջանում երբեք շինական տերմինը իր մեջ չէր իմաստավորել Հայաստանի երկրագործությամբ զբաղվող ողջ բնակչությունը։ Ինչպես նախորդ, այնպես էլ այս և հետագա շրջանում գյուղական ու քաղաքային հասարակության ցածր աստիճանում գրված դասերի համար բնորոշ էր ոչ թե շինական, այլ ռամիկ տերմինը։

Ս. Տ. Երեմյանը ավելի ճիշտ ուղու վրա է կանգնած իր մի այլ աշխատության մեջ։ Այս հոդվածում հեղինակը նշում է, որ «Ֆեոդալական Հայաստանի հիմնական արտադրողները — շինականները միասնաբար չէին...։ Արդեն 9—13-րդ դդ.,— շարունակում է Ս. Տ. Երեմյանը,— ֆեոդալների անտեսությունը հիմնված էր աշխատանքային ռենտայի — կոռի վրա, որի նշանակությունը աճում էր և այդ կապակցությամբ շինականները աստիճանաբար կորցնում էին ազատ ելքի իրավունքը։ Գյուղացին, որպես կանոն, ամրացված էր հողին, փոխադրվել մի տեղից մյուսը նա կարող էր միայն իր տիրոջ թույլտվությամբ»[1]։

Սակայն իր այս հոդվածում Ս. Տ. Երեմյանը աչքաթող է արել այն կարևոր փաստը, որ այս շրջանում էլ բոլոր գյուղացիները «որպես կանոն» ամրացված չէին հողին։ Կախյալ և ճորտ գյուղացիների կողքին իրենց գոյությունը պահպանում էին գյուղական համայնքներում ընդգրկված իրավապես դեռ ազատ «հին հայրենատեր» գյուղացիներ։

10—13-րդ դդ. գյուղացիության անձնական իրավունքները խիստ կերպով սահմանափակված էին, արգելված էր նրա ազատ ելքի իրավունքը ոչ միայն Հայաստանում, այլև Վրաստանում, Ադրբեջանում, Միջին Ասիայում, Մերձավոր Արևելքում։

Անդրկովկասի, Միջին Ասիայի, Մերձավոր Արևելքի գյուղացիության պատմության բազմաթիվ պրոբլեմներ քննարկված են ինչպես անցյալի, այնպես էլ մեր օրերի եղբայրական ռեսպուբ-

---

[1] С. Т. Еремян, Армения в IX — первой четверти XIII в. (См. «Очерки истории СССР», ч. I, 1953, стр. 594, 603).

լիկանների և Սովետական Միության բազմաթիվ պատմաբան-արեւելագետների աշխատություններում։

Վրաստանում ֆեոդալական հարաբերությունների, վրացական գյուղացիության պատմության հետազոտությունն սկսվում է 18-րդ դարից։

Առաջին անգամ 18-րդ դ. վրացագետ Վախուշտի Բագրատիոնը փորձեր կատարեց ցույց տալու, որ վրացական ֆեոդալական հասարակությունը ստորաբաժանվում էր հասարակական տարբեր դասերի և խավերի, որ սոցիալական յուրաքանչյուր խավի տեղն ու դերը ֆեոդալական կարգերում պայմանավորված էր նրա տնտեսական և իրավական գոյավիճակով։

19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբներին վրացական ֆեոդալական հարաբերությունների ուսումնասիրությունը դրվում է համեմատաբար ավելի դիտական հիմքերի վրա։ Վրաց բուրժուական պատմագրության ներկայացուցիչները՝ Ս. Խախանաշվիլին, Ս. Ավալիանը, Ֆ. Ժորդանիան համեմատած իրենց նախորդների հետ՝ ավելի խորը և բազմակողմանի կերպով են ուսումնասիրում վրացական ֆեոդալական հասարակարգի պատմությունը։

1890 թ. Ս. Խախանաշվիլին հրատարակում է իր «Крепостничество в Грузии до присоединения к Россий» մենագրությունը։ Այս աշխատության մեջ հեղինակը պատմական զուգահեռ է անցկացրել վրացական, արևմտա-եվրոպական և ռուսական ֆեոդալական ինստիտուտների միջև և գտել, որ Վրաստանում ֆեոդալական կարգերն անցել են պատմական զարգացման նույն ուղիով, ինչ մյուս երկրներում։ Սակայն Ս. Խախանաշվիլու, ինչպես նրա նախորդ Վ. Բագրատիոնի հետազոտությունները կրում են թուցիկ ակնարկների և նկարագրական բնույթ, և հետազոտողին չեն տալիս անհրաժեշտ փաստեր վրաց գյուղացիության ճորտական վիճակը փաստարկելու համար։

1912 թ. Ս. Ավալիանին հրատարակում է իր «Крестьянский вопрос в Закавказье» քառահատոր ուսումնասիրությունը։ Հեղինակը պատմական խիստ սահմանափակ վկայությունների հիման վրա աշխատել է ցույց տալ, որ Անդրկովկասում և մասնավորապես ֆեոդալական Վրաստանում, ճորտական հարաբերությունները սկիզբ առնելով միջին դարերում ապրում են իրենց զարգացման վերելքն առանձնապես 17—18-րդ դարերում։ Այդ նույն կերպ է վերաբերվել նաև Ֆ. Ժորդանիան։ Նա 1915 թ. հանդես եկավ «Крепостничество в Грузии» խորագիրը կրող Ավալիանիի վերոհիշյալ աշխատությանը նվիրված գրախոսական հոդվածով։ Հեղինակը

զարգացրել է այն դրությունը, թե Վրաստանում գյուղացիների և կալվածատերերի փոխհարաբերությունները հիմնված էին կամավոր սկզբունքների վրա և կրում էին միայն ընտանեկան բնույթ՝ փոխադարձաբար օգտակար երկու կողմերի համար»։ Որ իբր Վրաստանում ֆեոդալական կարգերը զարգացել են բնապատմական ուղիով, առանց դասակարգային սուր հակամարտությունների։ Չնայած վրաց բուրժուական պատմագրության ներկայացուցիչները քննարկել են գյուղացիության սոցիալ-տնտեսական դրության բազմաթիվ հարցեր, սակայն բուրժուական պատմագրության սահմանափակվածությունը և արատավոր մեթոդոլոգիան նրանց նույնպես հնարավորություն չտվեց քննարկվող փաստերից տեսական ընդհանրացումներ և գիտական եզրակացություններ կատարել։

Վրացական գյուղացիության պատմության առանձին պրոբլեմների ուսումնասիրության ասպարեզում շոշափելի աշխատանք է կատարել Ս. Կակաբաձեն, որը իր «Черты феодального строя и крестьянские повинности в Грузии в конце средних веков» (1912 г.), «Крестьянский вопрос и крестьянские движения в Восточной Грузии в XVIII в.» (1930 г.) աշխատություններում և բազմաթիվ այլ հոդվածներում մանրամասն քննարկման է ենթարկել վրացական ֆեոդալիզմի, Վրաստանի սոցիալ-տնտեսական կյանքի և դասակարգային պայքարի բազմաթիվ պրոբլեմներ. սակայն նրա մի շարք դրույթները — վրաց գյուղացիության կատեգորիաները, հարկերն ու տուրքերը, ֆեոդալական պարտավորությունները, ֆեոդալական ավագանու բնութագիրը՝ խիստ թեական են և իրավամբ քննադատության են ենթարկվել սովետական վրացագետ պատմաբանների կողմից։

Վրացական ֆեոդալիզմի պատմության գիտական ուսումնասիրության հիմնադիրը հանդիսացավ Ի. Ա. Ջավախովը. հարգելի գիտնականն առաջինն էր, որ ցույց տվեց ֆեոդալական հարաբերությունների զարգացման տարբեր էտապները, հանգամանորեն խոսեց ֆեոդալական կարգերի ծագման, վրացական ֆեոդալական ինստիտուտի էության և առանձնահատկությունների մասին։ Նա տվեց վրացական ֆեոդալական դասի սոցիալական բնութագիրը, մանրակրկիտ և բարեխղճորեն ուսումնասիրեց վրաց գյուղացիության տարբեր կատեգորիաների՝ «ներիների»-ների, «նասկիդի»-ների, «սիպլոսանի»-ների, «նացկալոբևի»-ների, «դլեխ»-ների պատմությունը և ցույց տվեց նրանց սոցիալական ստորադաս վիճակը։

Վրացական Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ պրոֆ. Ն. Ա. Բերձենիշվիլին իր «Очерк из истории развития феодальных отношений в Грузии (XIII—XVI вв.)», «Эпизоды из борьбы за феодальные родовые вотчины в Грузии XIII в.» *աշխատություններում պատմական հարուստ փաստերի հիման վրա ապացուցեց, որ «12-րդ դ. Վրաստանում ֆեոդալական հարաբերությունները հասնում են իրենց զարդացման բարձր աստիճանին և այդ էպոխայում նորտատիրությունը երկրում հանդիսանում է սոցիալական հարաբերությունների տիրապետող ձևը»*[1]:

Սովետական Վրաստանի պատմաբանները ուսումնասիրելով վրացական գյուղացիության պատմությունը, ցույց են տվել, որ ֆեոդալական հիերարխիայում վրաց գյուղացիությունն արդեն գրտնվում էր հասարակության ստորադաս աստիճանում և 10—13-րդ դդ. նրա հիմնական մասը ամրացված էր հողին: Այդ բազմաթիվ խավերի մեջ սոցիալական ամենացածր աստիճանում դրված են եղել «մկվիդրի» անվան տակ հայտնի գյուղացիները, որոնք սերնդից-սերունդ ամրացված էին տերերի հողին և որոնց վրա էր ծանրացած ֆեոդալական պարտավորությունների գերազանց մասը:

Չնայած վրացական գյուղացիության պատմության բազմաթիվ հարցեր քննարկված են ու լուսաբանված մարքս-լենինյան պատմագրության դիրքերից, սակայն, ինչպես իրավացի կերպով նշում է Դ. Վ. Գվրիտիշվիլին, «վրացական պատմագրության մեջ գյուղացիության պատմությունը դեռ բավարար չափով չի ուսումնասիրված: Դեռ չի ստեղծվել մենագրություն, նվիրված Վրաստանի ամբողջ գյուղացիության պատմությանը: Առանձին հետազոտություններ վերաբերվում են միայն այս կամ այն շրջանի գյուղացիների պատմությանը, այն փաստաթղթերի հիման վրա, որոնք վերաբերվում են այդ նույն շրջանին»[2]:

Մերձավոր Արևելքի, Միջին Ասիայի գյուղացիության անձնական իրավունքների սահմանափակման և ազատ ելքի իրավունքի վերացման փաստերն առաջին անդամ մատնացույց արեց ակադ. Վ. Վ. Բարտոլդը, իր «Իրանի գյուղացիական շարժումների պատմության հարցի շուրջը» հոդվածում: Հիմնվելով Համդալլահ Ղազվինի տեղեկությունների վրա, նա հայտնեց այն միտքը,

---

1 Н. А. Бердзенишвили, Очерк из истории развития феодальных отношений в Грузии (XIII—XVI вв.), Тбилиси, 1938, стр. 1.

2 Д. В. Гвритишвили, Из истории социальных отношений в позднефеодальной Грузии, Тбилиси, 1952, стр. 25.

որ մոնղոլական տիրապետության էպոխայում, հատկապես 13—14-րդ դարերում, արևելյան երկրներում, առանձնապես Իրանում գյուղացիներն ամրացած էին հողին։ Ակադ. Վ. Վ. Բարտոլդն իր դրույթն ապացուցելու համար վկայակոչեց Դավվինի այն տեղեկությունը, որ Իրանում «հողագործները և հողը կապալով վերցնող գյուղացիները փախուստի հնարավորություն չեն ունեցել»[1]։

Ակադ. Վ. Վ. Բարտոլդի կարծիքով մինչև 13-րդ դարը գոյություն է ունեցել միայն գյուղացիների ֆեոդալական կախվածության վիճակ, և ինչպես Արևելյան երկրներում, այնպես էլ մահմեդական աշխարհում ընդհանրապես գյուղացին ամրացած չէր հողին, իրավապես ազատ էր և ուներ ազատ ելքի իրավունք։ 13-րդ դարում գյուղացիների դրությունը ենթարկվում է լուրջ փոփոխության։ 13-րդ դարը, հեղինակի կարծիքով, հանդիսացել է ֆեոդալական շահագործման և ֆեոդալական լծի ծանրացման ժամանակաշրջան, որի պայմաններում խիստ կերպով վատթարացել է գյուղացիության սոցիալ-տնտեսական դրությունը։ Սակայն նա այս խիզախ եզրակացությունը չկարողացավ հանգամանորեն փաստարկել։ Հավանաբար ակնհայտ արևելագետը հիմնականում չէր ընդունում Արևելքում գյուղացիության հողին ամրացման երևույթը։ Այդ է հիմնական պատճառը, որ չնայած նա խոսում է 13-րդ դարում գյուղացիների իրավունքների սահմանափակման, ազատ ելքի իրավունքի արգելակման մասին, սակայն այն նշում է կողմնակի կերպով։ Ավելին. այն ճիշտ դրույթը, որ արևելյան երկրներում գյուղացիների իրավունքները սահմանափակվում են և գանգան արգելքներ են ստեղծվում ազատ ելքի իրավունքի համար, մնում է թեական նրա հետագա աշխատություններում և նա այլևս այդ հարցին չի անդրադառնում։ Վ. Վ. Բարտոլդն իր հետագա բոլոր աշխատություններում մի շարք առիթներով նշել է, որ «մահմեդական աշխարհում չկար ճորտական իրավունք», որ գյուղացիները այստեղ հողին ամրացված չեն եղել և իրավունք են ունեցել ազատ կերպով մի տեղից մյուսը շարժվելու»[2]։

---

[1] **В. В. Бартольд.** К истории крестьянских движений в Персии (см. «Сборник из далекого и близкого прошлого», 1923, стр. 58—60). Его же Персидская надпись на стене анийской мечети Мануче, СПБ, 1911, стр. 16.

[2] **В. В. Бартольд.** К вопросу о феодализме в Иране (см. «Новый Восток», 1930, № 28, стр. 119).

Չնայած Վ. Վ. Բարտոլդը մի դեպքում ընդունում էր «ազատ ելքի» իրավունքի առկայությունը Արևելյան երկրներում, մյուս դեպքում գտնում, որ գյուղացին «ազատ ելքի» իրավունք չի ունեցել, այնուամենայնիվ նրա այն դրույթը, որ գյուղացին Արևելքում նույնպես ամրացված էր հողին և զրկված «ազատ ելքի» իրավունքից, պատմական մեծ հեռանկարներ բաց արեց գյուղացիական հարցը հետազոտող հետագա բոլոր արևելագետների համար։

Վ. Վ. Բարտոլդի աշակերտ՝ Արևելքի և Միջին Ասիայի պատմության մասնագետ պրոֆ. Ա. Յու. Յակուբովսկին, պատմական անառարկելի փաստերի հիման վրա ցույց է տվել, որ ինչպես Միջին, այնպես էլ Առաջավոր Ասիայում գյուղացիները ամրացված էին հողին և ճորտացված։

«Ճիշտ է,— գրել է Ա. Յակուբովսկին,— պատմական աղբյուրներում մենք չենք գտնում համապատասխան վկայություններ այն մասին, թե գյուղացիները ամրացված էին հողին, սակայն գյուղացիների կախումը խոշոր իքթադարներից այնքան մեծ էր, որ չի կարելի տարակուսել նրանց ճորտական կացությունը»[1]։

Այս դրույթն ավելի համարձակ կերպով զարգացրեց Բ. Գ. Գաֆուրովը իր «История таджикского народа» դասընթացի մեջ։ «Սելջուկների օրոք,— գրում է Գաֆուրովը,— ֆեոդալական գյուղացիությունը շահագործվում էր դերազանցապես լենի անմիջական տերերի-իքթադարների և ոչ թե պետական ապարատի կողմից. տեղի էր ունենում փաստորեն գյուղացիության ճորտացում, չնայած ձևականորեն ճորտական իրավունքը բացակայում էր։ Գյուղացուն արգելված էր թողնել իր բնակավայրը։ Իքթադարը իր իշխանությունը հաստատել էր գյուղացու անձի վրա»[2]։

Չնայած պատմական այս անառարկելի վկայություններին, գտնվել են հետազոտողներ, որոնք բացասել են Միջին և Առաջավոր Ասիայում գյուղացիության ճորտացման փաստը։

Սովետական հայտնի թուրքագետ Վ. Ս. Գորդլևսկին իր «Государство сельджукидов Малой Азии» աշխատության մեջ գրտնում է, որ մինչև մոնղոլական արշավանքները Փոքր Ասիայում գյուղացիները անձամբ ազատ էին և իրավունք ունեին մեկ ֆեո-

---

[1] А. Якубовский, Феодальное общество Средней Азии и его торговля с Восточной Европой X—XV вв. См. Материалы по истории Узбекской, Таджикской и Туркменской ССР, М.—Л., стр. 49, *հմմտ.* Очерки истории СССР, часть I, Москва, 1953, стр. 497.

[2] Б. Гафуров, История таджикского народа, т. I, 1949, стр. 249—250.

դալի տիրույթից անցնել մյուսի մոտ։ Բայց «քանի որ գյուղացիների կացությունը ամեն տեղ նույնն էր, այդ իսկ պատճառով նրանք հրաժարվում էին ազատ ելքի իրավունքից և դերադասում էին մնալ նախկին տեղում, նախկին ֆեոդալների մոտ»[1]։

Արդեն 9—10-րդ դարերում Միջին Ասիայում վերջնականապես հաղթանակում է արտադրության ֆեոդալական եղանակը։ Առանձնապես Սամանիդների տիրապետության օրոք, այսինքն 9-րդ դ. վերջին և 10-րդ դ. սկզբներին իշխող ֆեոդալական դասակարգի ավագանին՝ խոշոր դեհկանները՝ իրենց ձեռքում են կենտրոնացնում հողային ընդարձակ տերիտորիաների զգալի մասը։ Միջին Ասիայում հողային սեփականատերեր են դառնում բազմաթիվ էմիրները, արքունական տան անդամներն ու ժառանգները, տեղական դեհկանների առանձին ներկայացուցիչները և մահմեդական հոգևորականության ավագանին։ Հողային տերիտորիաների մի մասը բռնագրավում են արաբական զորահրամանատարները, թյուրքական ավագանին և ռազմա-ֆեոդալական դասի վերնախավը[2]։

Ակադ. Վ. Վ. Բարտոլդի վերոհիշյալ, կողմնակի կերպով արված, բայց շատ կարևոր դիտողությունը, թե «Մերձավոր Արևելքում և հատկապես Իրանում գյուղացիները պետք է որ ամրացած լինեին հողին», ընդունեց և զարգացրեց Ադրբեջանի պատմության մասնագետ Ալի-Զադեն։

Դեռ 1942 թ. իր երկու հոդվածներում Ալի-Զադեն պատմական նոր աղբյուրների ուսումնասիրության հիման վրա հանդեց այն եզրակացության, որ գյուղացիները հողին ամրացված էին դեռ Ղազան խանից շատ առաջ։ Ալի-Զադեն պնդում է, որ մինչև մոնղոլների նվաճումները «Մերձավոր Արևելքի գյուղացիները եղել են հողին ամրացված»[3]։

Եվ իսկապես, պատմական աղբյուրները հաստատում են այս դրույթը։ Ռաշիդ-ադ-դինը վկայում է, որ Ղազան խանը իր 1303 թ. հրամանով սահմանում է ռազմական լեն-իքթաների չափը և խիստ

---

1 В. Гордлевский, Государство сельджуков Малой Азии, Ленинград, 1941, стр. 93—95.

2 Сиасет-Намэ, Низам-ал-Мульк, русский перевод Б. Н. Заходера, М.—Л., 1949, стр. 117.

3 Али-Заде. К вопросу об институте икта (см. «Известия» АзФАН, № 5, за 1942, стр. 24—25). Его же, Виды земельной собственности и налоговая система ильханов в Азербайджане (XIII—XIV вв.). (См. «Известия» АзФАН № 4, за 1942).

կերպով կարգադրվում է, որ «զինվորականներին տրված քանդված և բարվոք վիճակում գտնվող գյուղերի ռայաթները, եթե չի անցել նրանց վախճանից 30 տարուց ավելի և եթե նրանք չեն գրանցված այլ վիլայեթների մատյաններում և հաշվառման գրքույկներում, թող հետ վերադարձվեն, ում մոտ էլ որ նրանք գտնվելիս լինեն։ Եվ եթե (զինվորականների մոտ) հայտնաբերվեն այլ շրջանի ռայաթ գյուղացիներ, թող նրանք նույնպես հետ վերադարձվեն։ Ոչ մի դեպքում իքթայի տերերը չպետք է թողնեն այլ վիլայեթների և տեղերի գյուղացիներին իրենց հողերի վրա, նույնիսկ եթե նրանք լինեն շատ հեռու շրջանի գյուղացիներ, նրանք (զինվորականները) չպետք է նրանց (գյուղացիներին) սեփականացնեն, ոչ մի դեպքում չպետք է նրանք հովանավորեն, չպետք է նրանց թողնեն իրենց տիրույթներում»[1]։

Ռաշիդ-ադ-դինի այս խիստ ուշագրավ և ընդարձակ վկայությունը այլևս ոչ մի կասկած չի թողնում, որ իքթայի տեր ֆեոդալը անձնական իրավունք ուներ նաև ռայաթ-գյուղացու անձի նկատմամբ։ Այնուհետև, այդ վկայությունները հաստատվում են նաև այլ տեղեկություններով։ Այսպես, օրինակ, Ղազան-խանի ծննդյան նվիրված մի բանաստեղծության մեջ ասված է.

«Ես նայեցի քո բախտավոր աստղին (որի տակ դու ծնվել ես) և տեսա, որ քո իքթան կլինի հարյուր հազար մարդ»[2]։

Բնական է, որ բանաստեղծության հեղինակը, այստեղ «իքթա» տերմինի տակ հասկացել է ոչ միայն սեփական տիրույթներ, այլև նրանց վրա նստած մարդիկ — գյուղացիներ։ Ակնհայտ է, որ մինչև Ղազան-խանի ռեֆորմները և նույնիսկ մինչև մոնղոլների արշավանքը, մարդկանց գիտակցության մեջ ամուր կերպով նստած էր այն միտքը, որ անմտություն և անիմաստ է հող իքթա ստանալ առանց գյուղացիների և եթե այդ հողն անցնում էր իքթադարի գերիշխանության տակ, ապա ինքնին հասկանալի էր, որ իքթա հողի վրա նստած գյուղացիներն էլ պետք է անցնեին նոր տիրոջը։ Մինչ մոնղոլները Մերձավոր Արևելքում գյուղացիներն ամրացած էին հողին։ Մոնղոլները նվաճելով հսկայական տերիտորիա և նոր երկրներ, այստեղ հանդիպեցին ճորտության և քանի որ նրանք իրենց տնտեսական և կուլտուրական հետամնացության պատճառով գրաված երկրներում հասարակական նոր հարաբերություններ

---

1 Рашид-ад-дин, Сборник летописей, русский период А. К. Арендса, М.—Л., 1946, т. III, стр. 283—284.

2 Նույն տեղում, էջ 139։

ստեղծել չէին կարող, ապա անխոտոր թողնին նաև ճորտական իրավունքը ու գյուղացիներին հողին ամրացնելու պրակտիկան։

Մոսկվայի Լոմոնոսովի անվան Պետական Համալսարանի պրոֆեսոր Բ. Ն. Զախոդերը նույնպես ցույց է տվել, որ Առաջավոր Ասիայում ինչպես մոնղոլական արշավանքներից առաջ, այնպես էլ նրանց տիրապետության օրոք գյուղացիները ամրացված էին հողին և ճորտացված[1]։

Մերձավոր Արևելքի և հատկապես Ադրբեջանի ֆեոդալական հարաբերությունների մասնագետ Ի. Պ. Պետրուշևսկին իր «К вопросу о прикреплении крестьян к земле в Иране в эпоху монгольского владычества», «Очерки по истории феодальных отношений Азербайджана и Армении в XVI—начале XIX вв.», «Феодальное хозяйство Рашид-ад-дина» աշխատություններում, պարսկական, մոնղոլական, ադրբեջանական, մասամբ հայկական սկզբնաղբյուրների հիման վրա հանգել է այն եզրակացության, որ Իրանում գյուղացիներն ամրացվել են հողին ու ճորտացվել 13-րդ դարից ոչ շատ։

«Հետագայում, ընդհուպ մինչև 13-րդ դ. մինչև մոնղոլական տիրապետության էպոխան,— գրում է պրոֆ. Պետրուշևսկին,— աղբյուրները չեն նշում գյուղացիների ճորտացման և մի տեղից մյուսը ազատ անցնելու իրավունքի սահմանափակման որևէ տեղեկություն. համենայն դեպս, այդպիսի տեղեկություններ մինչև հիմա ոչ ոքի կողմից չի հետազոտված, չի հայտնաբերված և չի հրատարակված»[2]։

Այս գրությը պրոֆ. Ի. Պ. Պետրուշևսկին ավելի մեղմեց իր «Очерки»-ում և հատկապես «Феодальное хозяйство Рашид-ад-дина» հոդվածում։ Այս աշխատություններում նա նշում է, որ արդեն 12-րդ դարում Հայաստանում, համաձայն Մ. Դոշի Դատաստանագրքի վկայություններին, փախած գյուղացիները ենթակա էին

---

[1] Б. Заходер, История восточного средневековья, Москва, 1944, стр. 76, 93.

[2] И. П. Петрушевский. К вопросу о прикреплении крестьян к земле в Иране в эпоху монгольского владычества (см. «Вопросы истории» за 1947 г., № 4, стр. 61). Его же, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI — начале XIX вв., Ленинград, 1949, стр. 250. Его же, Феодальное хозяйство Рашид-ад-дина. См. «Вопросы истории» 1951, № 4, стр. 87—104. (ընդգծումը մերն է — Ս. Հ.)։

որոնման և հետ բերման իրենց երեխաների հետ միասին։ Անհրաժեշտ ենք համարում նշել, որ պրոֆ. Պետրուշևսկին ծանոթ չէ և չի օգտագործել հայկական աղբյուրների այն բազմաթիվ վկայությունները, որոնք խոսում են ոչ միայն գյուղացիների հողին ամրացնելու առանձին դեպքերի, այլև մասսայական երևույթի մասին։

Նույնիսկ արաբական տիրապետության առաջին շրջանում և հատկապես Աբբասյանների (750—862 թթ.) օրոք, արաբ հողատերերը արդեն լուրջ փորձեր են կատարում սահմանափակելու գյուղացիների ազատ ելքի իրավունքը։

Արաբական իրավագետ և աստվածաբան Աբու-Յուսուֆ Յաղուբը իր «Քիտաբ-էլ-խարաջ» (Գիրք հողահարկերի մասին) աշխատության մեջ, մեր պատմիչներ Սեբեոսը, Ասողիկը (Ստ. Տարոնեցին), Թովմա Արծրունին, Ղևոնդը, ասորական պատմիչ կեղծ Դիոնիսիոս-թել Մահրացին վկայում են, որ Խալիֆաթի տարբեր շրջաններում՝ Սիրիայում, Հայաստանում, Միջագետքում, Միջին-Ասիայում արաբները հարկատու գյուղացիներին հարկեր չվճարելու համար ոչ միայն խիստ ու դաժան պատիժների էին ենթարկում, այլև նրանց պարանոցից կախել էին տալիս արճճից հատուկ նշաններ, որի վրա գրված էր այն գավառի, շրջանի ու բնակավայրի անունը, որտեղից էր հարկատուն։ Եթե հարկատուն փորձ էր կատարում լքել իր բնակավայրը, ապա այդ նշաններով նրան որսում էին և հետ բերում նախկին բնակավայրը։ Այս առաջին միջոցառումն էր, որով արաբները սահմանափակում և արգելակում էին «ազատ ելքի» իրավունքը»[1]։

Սելջուկ-թուրքերի հանդես գալով գյուղացիների սոցիալ տընտեսական կացությունը դառնում է ավելի ողբերգական։

Ճիշտ է, սելջուկ-թուրքերի մոտ համեմատաբար ավելի թույլ էին զարգացած ֆեոդալական հարաբերությունները, ճիշտ է,

---

[1] Сборник материалов для описания местностей и племен Кавказа. Сведения арабских писателей о Кавказе, Армении и Азербайджане, перевод Н. А. Караулова, Тифлис, 1908, вып. XXVII, стр. 59—60. *Հմմտ. Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն, Թիֆլիս, 1913, Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, Ղևոնդեայ վարդապետի Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1887, Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց, Ս. Պետերբուրգ, 1887։ Հմմտ. նաև՝* Մելիքսեթ-Բեկ. *Չորրորդ Հայքի 774—775 թթ. գյուղացիական ապստամբության պատմության շուրջը (տե՛ս ԳԱ «Տեղեկագիր», № 2, 1948),* Н. В. Пигулевская Византия и Иран на рубеже VI и VII вв., М.—Л., 1946, стр. 43—49.

նրանց գլխավոր զբաղմունքը քոչվոր անասնապահությունն էր, նրանք ունեին անհամեմատաբար ավելի թույլ զարգացած պետական և վարչական օրգաններ, բայց 11-րդ դ. սկսած, երբ սելջուկ-թուրքերի ռազմա-քաղաքական ավազանին ավելի մոտիկից շփվեց տեղական ֆեոդալական ավազանու հետ, երբ աշխարհավեր արշավանքներն ու ավարը սպառվեցին, երբ սելջուկյան ռազմա-քաղաքական ավազանին անցավ նստակյաց կյանքի և ձեռք բերեց ու ընդարձակեց հողային տիրույթները, նրանց մոտ էլ հանդես եկավ «իքթա» հողատիրության ինստիտուտը, որի պայմաններում անմիջական արտադրողի և՛ տնտեսական, և՛ իրավական դրությունը խիստ վատացավ։ Արդեն 12-րդ դ. սելջուկները Միջին Ասիայում օրինականացրեցին «ռայաթի» անձնական կախումը «իքթա»-ի տերերից[1]։

Այսպիսով, միայն սովետական-մարքսիստական պատմագրության ներկայացուցիչները ապացուցեցին, որ Անդրկովկասում, Առաջավոր և Միջին Ասիայում սահմանափակված էր գյուղացիության ազատ ելքի իրավունքը և ամրացված հողին։ Սովետական արևելագետները միաժամանակ ցույց են տվել, որ չնայած բուրժուական պատմագրության առանձին ներկայացուցիչները փորձեր են կատարել հետազոտել ֆեոդալական հասարակական-տնտեսական ֆորմացիայի նյութական բարիքներ արտադրողների պատմության առանձին-առանձին վերցրած հարցերը, սակայն բուրժուական պատմագրության արատավոր մեթոդոլոգիան նրանց հնարավորություն չի տվել քննարկվող պրոբլեմներից տեսական ընդհանրացումներ և գիտական եզրակացություններ կատարել։ Բուրժուական պատմագրության ներկայացուցիչները ուսումնասիրելով գյուղացիության իրավական, տնտեսական կացությունը, գյուղացիական մասսաներին ներկայացրել են ստեղծագործական եռանդից զուրկ հայրական և պապական հին սովորույթներից և արարիչներից կառչած հասարակության «ամենաստոր» մասը։ Նրանք ոչ միայն գյուղացիներին պատկերել են առաքինությունից զուրկ, զորշ մասսա, այլև նրանց մղած դասակարգային դարավոր պայքարը դիտել են որպես իմաստազուրկ, «անմիտ», «բռի», ոչ մի բանով չարդարացվող պայքար։

Այս հակապատմական, հակագիտական դրույթը արդեն խիստ կերպով քննադատվել և մերժվել է սովետական պատմագրության

---

1 В. В. Бартольд, Туркестан в эпоху монгольского нашествия, СПБ, 1900, часть I, стр. 74—75.

կողմից։ Սովետական պատմագրությունը ապացուցել է, որ ֆեոդալական հասարակական-տնտեսական ֆորմացիայի պայմաններում աշխատավոր գյուղացիությունը հանդիսացել է ստեղծագործող ուժ, նա դարավոր պայքար է ծավալել լավագույն կյանքի համար, ստեղծել է, կուտակել, պահպանել և մեզ է հասցրել կուլտուրապատմական մեծ ժառանգություն, ռևոլյուցիոն պայքարի հսկայական փորձ, առաջ է քաշել և զարգացրել ռևոլյուցիոն տեսության էլեմենտներ։

Սովետական-մարքսիստական պատմագրության ներկայացուցիչները միաժամանակ ցույց են տվել, որ գյուղացիության պատմությունը սոսկ «ագրարային հարաբերությունների» կամ իրավական, տնտեսական առանձին հարցերի և սոցիալական այս կամ այն տերմինների ստուգաբանության պատմություն չէ, այլ ամենից առաջ նյութական բարիքներ արտադրողների և դասակարգային պայքարի պատմություն։

Դեռ իր ժամանակին Մարքսը «Փիլիսոփայության աղքատություն» աշխատության մեջ անդրադառնալով այդ հարցին գրել է. «...որպեսզի ուղիղ դատել ֆեոդալական արտադրության մասին, անհրաժեշտ է նրան դիտել որպես հակամարտությունների վրա հենված արտադրության եղանակ։ Անհրաժեշտ է ցույց տալ, ինչպես այդ հակամարտության հիմքի վրա ստեղծված միջավայրում առաջացավ հարստությունը, ինչպես դասակարգային պայքարի զարգացմանը զուգահեռ զարգանում էին արտադրողական ուժերը, ինչպես այդ դասակարգերից մեկը — իրենից ներկայացնելով հասարակության տգեղ, անպատեհ կողմը — աստիճանաբար աճեց այնքան, մինչև որ հասունացան վերջապես նրա ազատագրման նյութական պայմանները»[1]։

Շահագործող և շահագործվող դասակարգերի, խոշոր հողատերերի և գյուղացիների միջև մղած պայքարով լի է ոչ միայն ֆեոդալական, այլև անտիկ հասարակության ողջ պատմությունը՝ սկսած նրա ծագման և ավարտած նրա անկման ժամանակաշրջանով։

Մարքսը Էնգելսին գրած իր նամակներից մեկում անդրադառնալով գյուղացիության պայքարի հարցերին գրել է. «...Ես նորից ձեռնարկեցի հին հռոմեական պատմության ուսումնասիրությանը՝ մինչև Օգոստոս կայսրի ժամանակաշրջանը։ Ներքին պատմությունը կարելի է ամբողջությամբ հանդեցնել մանր և խոշոր հողատե-

---

1 К. Маркс и Ф. Энгельс, Соч., том V, стр. 374—375.

ների պայքարին, հաշվի առնելով, իհարկե, այն ձևափոխությունները, որոնք պայմանավորում են ստրկության գոյությունը»[1]։

Անդրադառնալով դասակարգային դաժան պայքարին և նրանում գյուղացիների ակտիվ դերին, Մարքսը Էնգելսին գրած մի այլ նամակում նշել է. «Հին պատմաբաններից, որոնք նկարագրել են Հռոմեական ռևոլյուցիայի ներքին պրոցեսը, միայն Ապպիանոսն է, որը մեկ պարզ ու արտահայտիչ ձևով ասում է, թե ինչի համար էր այն վերջին հաշվով մղվում՝ մղվում էր՝ հողային սեփականության համար»[2]։

Նույնիսկ անտիկ, ստրկատիրական Հունաստանում և Հռոմում գյուղացիությունը քիչ դեր չի խաղացել արիստոկրատական կարգերի տապալման և ստրկատիրական դեմոկրատիայի ստեղծման գործում։ Գյուղացիական ռևոլյուցիոն շարժումները հաճախակի միաձուլվելով ստրուկների ռևոլյուցիոն շարժումների հետ, Հատկապես Պելոպոնեսում, 3-րդ դարից «դառնում են հելլենիստական պետությունների քաղաքականությունը որոշող կարևոր գործոնները»[3]։ Հին աշխարհի գյուղացիության պատմության մասնագետները գտնում են, որ ամենայն հավանականությամբ հելլենիստական դարաշրջանի փիլիսոփայական աշխարհայացքի մեջ տեղ գտած սոցիալական հավասարության մի շարք ուսմունքներ, մասամբ, իրենց ակունքները առնում էին գյուղացիների և ստրուկների մղած ռևոլյուցիոն շարժումներից[4]։

Անկասկած է, որ ստրուկների, գյուղացիների շարժումները, ապստամբությունները վերջիվերջո տարել են շահագործման մի ձևի փոխարինմանը շահագործման մի այլ ձևով։ Ճիշտ է, գյուղացիների դասակարգային սուր պայքարը չկործանեց և չէր կարող կործանել շահագործման հին, ֆեոդալական ձևը, շահագործումը դեռ շարունակում էր իր գոյությունը, իշխող դասերը նոր պայմաններում, հասարակական նոր հարաբերությունների առկայության դեպքում մշակում են շահագործման նոր ձևեր, անմիջական արտադրողից խլում են նրա հավելյալ արդյունքի մեծ մասը, այսինքն շահագործման յուրաքանչյուր նոր ձևի հանդես գալով շահագործումն էլ իր հերթին դառնում է ավելի ինտենսիվ։ Սակայն շահագործման այս նոր, ավելի բարձր և ինտենսիվ ձևը շահագործվող

---

[1] К. Маркс и Ф. Энгельс, Соч., том XXII, стр. 89.

[2] К. Маркс и Ф. Энгельс, Избран. произв. в двух томах, том II, 1938, стр. 374.

[3] «Вестник древней истории», № 1, 1947, стр. 5.

[4] Տե՛ս նույն տեղում։

դասին ավելի ու ավելի է մոտեցնում իր ազատագրմանը և արտահայտված Մարքսի բառերով՝ ստեղծվում են նյութական անհրաժեշտ պայմաններ նրա վերջնական ազատագրության համար։

Գյուղացիների դիմադրությունը, ընդվզումները, ապստամբությունները ֆեոդալական հասարակարգում սրվում և խորանում են երկու հիմնական պատճառով՝

ա) ֆեոդալական դասակարգը ավելի ու ավելի մեծ ցանկություն ու նպատակ է հետապնդում՝ տնօրինելու գյուղացու անհատական աշխատանքը, սաստկացնելու կախվածության վիճակը, խլելու նրա արդյունքների մեծ մասը, նրա հողակտորը։

բ) Գյուղացին, որպես մասնավոր սեփականատեր, ցուցաբերում է ավելի մեծ հավակնություն տնօրինելու իր աշխատանքը, իր տնտեսությունն ու սեփականությունը և այն պաշտպանելու ֆեոդալների ոտնձգություններից։ Գյուղացին իր հերթին ձգտում է ընդարձակել իր մասնավոր սեփականությունը, հողակտորը, թեթևացնել ֆեոդալական հարկերն ու պարտավորությունները։

Ֆեոդալական հասարակարգում դասակարգային պայքարը համեմատաբար ավելի կազմակերպված էր, ավելի հետևողական։ Գյուղացիական մասսաների պայքարի հետևանքով ֆեոդալական շահագործումը, համեմատած ստրկատիրական կարգերի շահագործման հետ՝ փոքր ինչ մեղմացած է։ Որքան որ ավելի ինտենսիվ էին դառնում ֆեոդալական շահագործման ձևերը, որքան որ ֆեոդալը ձգտում էր սահմանափակել գյուղացու տնտեսական հնարավորությունները, այնքան ինտենսիվ էր դառնում գյուղացիների դիմադրությունը և պայքարը։ Ֆեոդալական շահագործմանը ենթակա գյուղացին այլևս պասսիվ տարր չէր, նա կուրորեն ու հնազանդ չէր ենթարկվում շահագործող դասի կամքին ու ցանկություններին, այլ ամեն քայլափոխում ընդդիմադրում էր, պայքարում։ Շահագործող դասը նույնպես պասսիվ կերպով չէր հաշտվում այդ պայքարին. նա գյուղացուն հակադրում էր իր ռազմական ուժը, իր վարչական ապարատը, իր քաղաքական իշխանությունը։ Ավելին, ֆեոդալ-հողատերը ոչ միայն դիմում էր վարչական միջոցների, ոչ միայն գործի էր դնում մահակն ու մտրակը, այլև սահմանափակում էր գյուղացու անձնական իրավունքը, նրան ամրացնում էր հողին և ճորտացնում։

Դասակարգային այս դաժան պայքարը հողատեր-ֆեոդալների և գյուղացիների մեջ ավելի է խորանում ֆեոդալական արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների, մասնատիրական հողատիրության, քաղաքների և քաղաքային կյանքի հետագա

զարգացման պայմաններում։ Ֆեոդալական շահագործման դեմ գյուղացիների մղած պայքարը հանդես է գալիս տարբեր ձևերով և եղանակներով։ Մի դեպքում այն կրում է անհատական ընդդիմադրություններ և մասսայական փախուստի, մյուս դեպքում ղեկավարված ապստամբության բնույթ։ Դասակարգային այս պայքարն է, որ հանդիսանում է ֆեոդալական հասարակարգի շարժիչ և մղիչ ուժը։

Այսպիսով մենք չենք կարող հասկանալ, ըմբռնել ֆեոդալիզմի ծագման, զարգացման և անկման պատմությունը, եթե աչքաթող անենք կամ արհամարհենք դասակարգային պայքարի պատմությունը, եթե նկատի չունենանք, որ յուրաքանչյուր դասակարգային հասարակական ֆորմացիայի պատմությունն ամենից առաջ դասակարգային պայքարի պատմություն է, որ յուրաքանչյուր հասարակության պատմություն ոչ այլ ինչ է, եթե ոչ ներքին հակասությունների և հակամարտությունների սրման, խորացման պատմություն և որ ամենից առաջ այդ հակամարտությունները սրվում ու խորանում են երկու հակադիր և հակամարտ դասակարգերի միջև։

Այդ է հիմնական պատճառը, որ այս կամ այն երկրի գյուղական բնակչության պատմությունը սկսվում է պատմական այն շրջանից, երբ գյուղացին բարձրանում է հասարակության պատմության թատերաբեմը, երբ երկրագործական, հողամշակման աշխատանքը դեռևս կրում է կոլեկտիվ աշխատանքի բնույթ։

Բայց գյուղացիությունը, որպես դասակարգային հասարակության դասակարգերից մեկի, պատմությունը սկսվում է պատմական այն էպոխայից, երբ հանդես է գալիս խոշոր հողատիրությունը, երբ գյուղական համայնքը տալիս է առաջին լուրջ ճեղքվածքները, երբ նրա ընդերքում երևան են գալիս քայքայման առաջին սաղմերը, երբ համայնքից դուրս են գալիս և առանձնանում են տնտեսապես հարուստ, քաղաքականապես հզոր մարդիկ, որոնք վեր են բարձրանում համայնքից, տիրապետում են հողային տարածություններ, ձեռք են բերում քաղաքական իշխանություն և կախյալ գյուղացիներ ու սկսում են գյուղացիների շահագործումը։

* * *

Զարգացման այս ուղիով է ընթացել նաև հայ գյուղացու պատմությունը։ Հետևելով հայ գյուղացու՝ շինականի պատմությանը, մենք աշխատել ենք ցույց տալ, որ ֆեոդալական Հայաստանում գյուղացիությունն անցել է զարգացման այն ուղիներով, ինչ մյուս երկրների գյուղացիությունը։ Հասկանալի է, որ գյուղացիության

պատմությունը տարբեր երկրներում, տարբեր ժամանակաշրջաններում, տնտեսական, քաղաքական, սոցիալական, բնական-աշխարհագրական այլև այլ պայմաններում, արտաքին հարաբերությունների առկայության դեպքում ընթացել է ինքնատիպ ուղիով։

Այս կամ այն երկրի տնտեսական, քաղաքական և պատմական զարգացման առանձնահատկությունները անխուսափելիորեն իրենց կնիքն են դրել գյուղացու պատմական ճակատագրի վրա, արագացրել կամ դանդաղեցրել են ճորտացման պրոցեսը, դրական կամ բացասական դեր են խաղացել նրա տնտեսական և իրավական կյանքում, սակայն բոլոր երկրներում էլ, բացի տեղական այս առանձնահատկություններից, զարգացման ընթացքն ունեցել է ընդհանուր, միայն գյուղացիության պատմությանը հատուկ դեր։

Գյուղացիների ճորտացման պրոցեսը, ինչպես բոլոր երկրներում, այնպես էլ մեզ մոտ՝ Հայաստանում, տեղի չի ունեցել հանկարծակի և միանգամից և այն էլ պատմական համեմատաբար կարճ ժամանակամիջոցում։ Գյուղացիների ճորտացումը պատմական հսկայական ընթացաշրջան ընդգրկող պրոցես է։ Գյուղացին իր և իր ընտանիքի գոյությունը պահպանող փոքր հողաբաժնով դեռ շատ վաղուց տնտեսական և արտատնտեսական հարկադրանքի հետևանքով աստիճանաբար ընկնում է տնտեսապես ունևոր և քաղաքականապես ուժեղ մարդկանց գերիշխանության տակ։ Սկզբնական շրջանում կախվածության վիճակն ընդգրկում է գյուղացիների միայն մի մասը, իսկ ավելի մեծ մասը դեռ շարունակում է մնալ գյուղական համայնքի ազատ և իրավահավասար անդամը, բայց տընտեսական կախվածության և քաղաքական իրավունքների սահմանափակումը շուտով վտանգի տակ է դնում նաև այս մնացած մասին։

Աշխարհիկ և հոգևոր խոշոր հողատիրության, և առանձնապես ֆեոդալական տնտեսության հետագա աճը լուրջ սպառնալիքի տակ է դնում ազատ համայնականին. ֆեոդալական տնտեսության, ֆեոդալական ավագանու, նրանց պալատների ու արքունիքների, ֆեոդալական հիերարխիայի հետզհետե աճող պահանջները կարող էր բավարարել միայն գյուղացին և գյուղացու այդ կացությունը որոշեց նրա հետագա ճակատագիրը։

Վաղ ֆեոդալական պետությունը սկսեց գյուղացու աշխատանքի և նրա հողաբաժնի յուրացման պրոցեսը, իսկ զարգացած ֆեոդալական պետությունը ավարտեց այն։

Այս երևույթը մենք նկատում ենք ֆեոդալական Հայաստանում։

Մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայ գյուղացիության պատմությունը կարելի է ստորաբաժանել երկու շրջանի՝

1. Վաղ ֆեոդալիզմի դարաշրջան (1—9-րդ դդ.): Պատմական այս ընթացաշրջանում, չնայած արտաքին արշավանքներին ու ապատակությունների, ֆեոդալական արտադրական հարաբերությունները հաղթանակում են վերջնականապես։ Հայաստանը հանդիսանում է արդեն տիպիկ ֆեոդալական երկիր, իր ֆեոդալական հիերարխիայով։ Արտադրության ֆեոդալական եղանակի հաղթանակը որոշակի փոփոխություններ է մտցնում անմիջական արտադրողի ոչ միայն տնտեսական, այլև իրավական-սոցիալական կյանքում։ Գյուղական համայնքը սկսում է ապրել իսոր քայքայում, երբեմնի «միասնական», «միատարր» գյուղական մասսան առնվում է նյութական և սոցիալական շերտավորման ոլորտի մեջ։ Գյուղական բնակչությունը տարրալուծվում է սոցիալական ավելի փոքր դասակարգերի։ Պատմական աղբյուրներն արդեն նախկին շինականի՝ գյուղացի արտահայտող հավաքական տերմինի փոխարեն վկայություններ են թողել ոչ միայն շինականների, այլև մշակների, ագախինների, ծառաների, վար ու այգի չունեցող գյուղացիների, նվաղուններների, բոկոտների, տնանկների, տառապյալների, կարճատաների և հասարակական մյուս դասերի ու խավերի մասին։ Ոչ միայն գյուղացիական «միասնական» մասսան է տարրալուծվում, արտնվում, այլև նախկին գեղջավագների կամ կոմարխների փոխարեն հանդես են գալիս բդեշխներ, իշխաններ, նախարարներ, նահապետներ, ազատներ, տերեր, սեպուհներ, զորահրամանատարներ, գավառատերեր, աշխարհատերեր, աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների զանազան խավեր, որոնք մեկը մյուսից տարբերվում էին ոչ միայն պետական պաշտոններով, այլև կալվածների և կախյալ գյուղացիների քանակով, հարստությամբ ու դիրքով։

Աշխարհիկ, վանական ու եկեղեցական խոշոր հողատիրության, ֆեոդալական հարաբերությունների զարգացման հիմքի վրա գյուղացիների պայքարը դառնում է ավելի սուր, ավելի դաժան։ Փոխվում են պայքարի ձևերն ու մեթոդները։ Եթե առաջին շրջանում համայնականը, բայց արդեն հարկատու գյուղացին, կարող էր թեքանալ իր պարտավորությունների կատարման մեջ, հիմա սրվում է պայքարը, սկսվում է մասսայական փախուստ ֆեոդալական խիստ ու դաժան շահագործումից և, վերջապես, գյուղացին դիմում է զենքի։

2. Զարգացած ֆեոդալիզմի դարաշրջան (10—13-րդ դդ.): Հայաստանում նոր վերելք են ապրում արտադրողական ուժերը, խո-

բանում է աշխատանքի հասարակական բաժանումը, արհեստները բաժանվում են գյուղատնտեսությունից, զարգանում են քաղաքները, քաղաքային կյանքը, ապրանքափոխանակությունը և դրամական շրջանառությունը։ Էկոնոմիկայում տեղի ունեցած այդ փոփոխությունները նպաստում են հասարակական նոր հարաբերությունների, շահագործման նոր, ավելի ինտենսիվ ու կատարելագործված ձևերի և մեթոդների զարգացմանը։ Աշխատավճար և արդյունավճար ունտաների կողքին դերակշիռ դիրք են ձեռք բերում դրամական հարկերը։

Ֆեոդալական հարաբերությունների զարգացումն ու խորացումը, արհեստային արտադրության աճը, ապրանքափոխանակության և դրամական շրջանառության ընդլայնումը, քաղաքների և քաղաքային կյանքի վերելքը, լուրջ, արմատական ու որակական փոփոխություններ են մտցնում անմիջական արտադրողի թե տնտեսական և թե իրավական կյանքում։ Գյուղացիները մասսայաբար ազատագրվում են հողին և ճորտացվում։ Ֆեոդալական պետական ապարատը օգնում է հողատեր իշխաններին որոնելու և հետ բերելու փախած գյուղացիներին։ Ֆեոդալական դասակարգերի իդեոլոգներն արդեն պատմականորեն հաստատում են տիրոջ սեփականության իրավունքը ոչ միայն հողի, այլև անմիջական արտադրողի անձի նկատմամբ։ Իրավաբանական գիտության ներկայացուցիչները՝ Դավիթ Ալավկա որդին, Մխիթար Գոշը և Սմբատ Գունդստաբլն արդեն իրավաբանորեն ձևակերպում են ճորտական իրավունքը։ Մնում էր մի քայլ, պետականորեն օրինականացնել արդեն իրականություն դարձած ճորտական իրավունքը և այդպիսով բոլորել գյուղացիների պատմական ուղին, սակայն Հայաստանը շատ շուտով զրկվում է իր պետականությունից և այդ իրավական, ձևական ակտը մնում է անավարտ։ Սակայն այս հանգամանքը որևէ չափով չի փոխում գյուղացու ճորտական վիճակը և նա է, որ մնում է ֆեոդալական հասարակարգի անմիջական արտադրողը և հակամարտ դասակարգը։

Ազգային մատենագիրները հաստատում են գյուղացիության պատմության մեր այս պերիոդիզացիան։ Մինչև 10-րդ դարը մեր մատենագիրներին անծանոթ է ճորտ տերմինը։ Նրանք գյուղական բնակչության տարբեր կատեգորիաները արտահայտելիս գործ են ածում տարբեր տերմիններ։ Մատենագրական աղբյուրները հիշատակում են ռամիկ, շինական, գեղջուկ, մշակ, գռեհիկ, կարճաղատ, տառապյալ, բոկոտն, ծառա, աղախին, ստրուկ, վար ու այգի չունեցող, տնանկ, վարձկան, նվազունք տերմինները, որոնք ան-

կասկած ունեն սոցիալական տարբեր բովանդակություն։ Անկասկած է նաև, որ այդ բոլոր տերմինները արտահայտում են շահագործվող դասի սոցիալական կացությունը, ցույց են տալիս, որ այդ դասը միասնական, միատարր չէր և նրա սոցիալ-իրավական կացության փոփոխությունները իրենց արտահայտությունն են գտնում նաև տերմինոլոգիայի մեջ։ Այս տերմինների տարբերությունները, նրանց գործածությունը կոնկրետ պատմական պայմաններում, ցույց են տալիս նույնպես նրանց զարգացման էտապները։ Գյուղացիական բնակչության տարբեր խավերի սոցիալ-քաղաքական կացությունն արտահայտող այդ տերմինների բացահայտումն ու արժեքավորումը հայ ժողովրդի պատմության ամենակենսական հարցերից մեկն է, որը և դրվել է մեր ուսումնասիրության և ուշադրության կենտրոնում։

Այսպիսով, մեր ներկա աշխատության հիմքում դրված է ֆեոդալական հասարակական-տնտեսական ֆորմացիայի նյութական բարիքներ արտադրողների՝ գյուղացիության պատմությունը։ Այդ իսկ պատճառով ներկա աշխատությունը իր կառուցվածքով, ուսումնասիրության եղանակով տարբերվում է մինչև օրս եղած առանձին ուսումնասիրություններից։ Աշխատության մեջ գյուղացիության պատմությունը շարադրված է նրա զբաղմունքի, արտադրողական ուժերի, արտադրական հարաբերությունների, աշխարհիկ և հոգևոր խոշոր հողատիրության, ֆեոդալական էկոնոմիկայի, արհեստային արտադրության, քաղաքների, քաղաքային կյանքի, աշխատանքի հասարակական բաժանման, դասակարգային պայքարի, շահագործման ձևերի ու մեթոդների պատմության զուգընթաց։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԶԲԱՂՄՈՒՆՔԸ. ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՅԹ, ԱՆԱԼՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ: ՆՐԱՆՑ ԴԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ

Հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական կյանքի և հատկապես գյուղացիության պատմության գիտական-մարքսիստական շարադրանքն ամենից առաջ պահանջում է, գոնե ամենաընդհանուր և համառոտ գծերով, հետազոտել անմիջական նյութական բարիքներ արտադրողների զբաղմունքի, աշխատամիջոցների զարգացման տարբեր էտապների, արտադրողական ուժերի և սրանցով պայմանավորված հասարակական և քաղաքական հարաբերությունների պատմությունը:

Սովետական-մարքսիստական պատմագրության ներկայացուցիչները և առանձնապես գյուղացիության պատմությունը հետազոտող գիտնականները անվերադարձ կերպով ապացուցել են, որ չկան, պատմությանը հայտնի չեն ցեղեր, ժողովուրդներ առանց անմիջական նախնիների պատմության և հետևաբար չկա և չի կարող լինել գիտական պատմություն, առանց այդ նախնիների կողմից ստեղծած ժառանգության ուսումնասիրության:

Ինչպես աշխարհի բոլոր ժողովուրդները, այնպես էլ հայ ժողովուրդն ունեցել է իր անմիջական նախնիները, որոնք պատմական անհիշելի ժամանակներից սկսած բնակություն են հաստատել Հայկական բարձրավանդակում:

Հայ ժողովուրդն իր աշխատանքային ունակություններով, կուլտուրական, լեզվական հատկանիշներով, անկասկած է, որ կազմավորվել է երկարատև, պատմական, կուլտուրական և էթնիկական զարգացման հետևանքով և հանդիսացել է այդ զարգացման արդյունքը:

Պատմականորեն ձևավորվող հայ ժողովրդի պատմության շատ ու շատ կողմեր մեզ անհայտ են, սակայն մի բան պարզ է, որ հայ ժողովուրդը պատմության ասպարեզ է իջնում հնագույն շրջանից սկսած որպես նստակյաց, երկրագործ և անասնապահ ժողովուրդ։ Երկրագործությունը, այգեգործությունը և անասնապահությունը հանդիսանում են նրա գլխավոր և հիմնական զբաղմունքը։

Մեր հայրենիքի հնագիտական պեղումները հայտնագործել են ուրարտական ժամանակաշրջանի նյութական կուլտուրայի հուշարձաններ, հատկապես այն տերիտորիայում, որը Ուրարտական պետության անկումից հետո դառնում է հայ ժողովրդի պատմության, կուլտուրայի, հասարակական ու քաղաքական կյանքի կենտրոնը։ Այս կարևոր մոմենտը մենք աչքաթող անել չենք կարող։ Մենք չենք կարող չարձանագրել նույնպես, որ հայերը գենետիկ կապ են ունեցել մեր հայրենիքի տերիտորիայում ապրած բազմաթիվ ցեղերի հետ։ Այդ կապը եղել է ոչ միայն ցեղական, այլև տնտեսական, քաղաքական, կուլտուրական։

Այս սերտ կապերն առկա են եղել դեռ անհիշելի ժամանակներից սկսած։ Անկասկած է, որ հայերը տեղական՝ բնիկ ցեղերից ժառանգել են ոչ միայն նուլազարդությունը, մետաղագործությունը, այլև կուլտուրական կյանքի շատ կողմերը։ Երկրագործական, բուսական և կենդանական աշխարհի, հողի մշակման ու շինարարական տերմինների, երկրագործական գործիքների և մետաղների անունները համարյա համատարած կերպով անցել են հայերին և արտահայտվել են տեղական ծագում ունեցող բառերով։

Պատմական և Սովետական Հայաստանի տերիտորիաների հնագիտական պեղումները հայտնագործել են երկրագործության և դյուղատնտեսության հետ կապված աշխատանքի գործիքներ, հացաբույսերի և կուլտուրական բույսերի շատ ու շատ մնացորդներ, որոնք խոսում են այն մասին, որ պատմական Հայաստանի բնակիչների հիմնական զբաղմունքը եղել է երկրագործությունը, այգեգործությունը և անասնապահությունը։

Հնագետ հետախույզները բնության ընդերքից լույս աշխարհ են դուրս բերել ցորեն, դարի, տարեկան, կորեկ, խաղողի, ձմերուկի, դեղձի կորիզների, յուղատու բույսերի՝ քունջութի, կտավհատի, կանեփի զանազան տեսակների մնացորդներ։

Հայկական բարձրավանդակի այն մասերում, որտեղ կային նպաստավոր պայմաններ երկրագործության զարգացման համար

«Երկրագործությունն իր սկիզբն է առնում Նեոլիթի էպոխայից», գրում է պրոֆ. Բ. Բ. Պիոտրովսկին[1]։

Հավանական ենթադրություն է, որ Հայկական բարձրավանդակում նախնական, պրիմիտիվ հողամշակությունը սկսված պետք է լինի բարձրավանդակի այն մասերում, որտեղ բնական ջրի հարուստ պաշարներ կային, որտեղ հնարավոր է եղել օգտագործելու լեռնային արագահոս գետակներն ու ջրվեժները։

Պատմական համեմատաբար ավելի ուշ շրջանում երկրագործությունը լեռնային շրջաններից փոխադրվել է մեծ գետերի հովիտները, դաշտավայրերը, որտեղ անց են կացվել արհեստական ջրանցքներ, որոնք իրենց հերթին խթանել են երկրագործության զարգացմանը, հողամշակության արվեստը դարձել է ավելի ինտենսիվ, ավելի կատարելագործված։ Այս դրույթը հաստատվում է ոչ միայն հնագիտական նյութերով, այլև հայկական հացաբույսերի և բուսական աշխարհի պատմությամբ։

Հայկական լեռնաշխարհը հռչակված էր իր հացաբույսերի բազմազանությամբ։ Նա համարվել է հաճարի հայրենիքը։

Հայաստանում, դեռ մինչև մեր օրերը, պահպանվել են վայրի հացաբույսերի շատ տեսակներ։ Ակադեմիկոս Մ. Գ. Ռումանյանը, ուսումնասիրելով վայրի հացաբույսերի տեսակները, հանգել է այն ճիշտ եզրակացությանը, որ Հայկական լեռնաշխարհի վաղաբնիկները վայրի հացաբույսերի օգտագործման և մշակման ճանապարհով անցել են կուլտուրական բույսերի ու հացաբույսերի մշակության արվեստին։

Հայկական բարձրավանդակի բնակիչների հնագույն, նախահայկական շրջանի զարգացած երկրագործության մասին խիստ ուշագրավ վկայություններ են պահպանել ասորա-ուրարտական սեպագրությունները։

Ասորեստանի երբեմնի հզոր և բռնակալ տիրակալները, նկարագրելով իրենց արշավանքների պատմությունը դեպի Հայկական բարձրավանդակը, դեպի «Նաիրյան երկիրը», հիշատակում են, որ նրանք հավաքել և բռնագրավել են «երկրի հունձը, բերքը»։ Ահա մի երկու վկայություն։

«Ասսուրական թագավորները,— գրում է ակադ. Գ. Ղափանցյանը,— Տիգրիսի վերին հոսանքի մոտերքը (Տուսխա, Դամդամուսա քաղաքներում) շինել էին հատուկ ամբարներ ցորենի և հարդի հա-

---

1 Б. Пиотровский, История и культура Урарту, Ереван, 1944, стр. 191—192, его же, Археология Закавказья, Ленинград, 1949, стр. 70.

մար, որը գրավում էին կամ հարկի տեղ բերում էին Նաիրյան երկրներից»[1]։

«Մի տեղ,— շարունակում է Գ. Ղափանցյանը,— գործ է ածվում «ցորեն» (հաց) գաղափարանիշը... որի համար որպես շափ գործ է ածվում kapise բառը, որը մնացել է հայոց մեջ»[2]։

Ասորական թագավոր Ասուրնազիրպալը (885—860 թթ. մ. թ. ա.) իր թողած արձանագրություններում հիշատակում է, որ ինքն արշավել է իր ախոյան Նաիրյան երկիրը, ոչնչացրել է նրա «թագավորներին», ավերել ու ասպատակել է նրանց ծաղկած գյուղերն ու քաղաքները։ «Նաիրյան երկրներուն մեջ 250 քաղաք (կարդամրոց, բերդ) իրենց զորավոր պարիսպներով ավերեցի... Անոնց երկրին հունձքը հնձեցի, ցորեն ու հարդը (գարին) Տուսխայի մեջ համբարեցի։ ...Նաիրիի հունձքը իմ երկրիս օգտին համար անոնք Տուսխայի, Դամդամուսայի, Սինարուի մեջ համբարեցի... Նիբբուի երկրին ընդեղեններն ու հարդը հոն դիզեցի...»[3]։

Հացաբույսերով առատ այդպիսի մառաններն ասորական տիրակալները հայտնաբերել, բռնագրավել ու թալանել են Ուրմիա լճի հյուսիս-արևելյան շրջաններում և այլ վայրերում[4]։

Հացաբույսերի կուլտուրան տարածված է եղել Հայկական բարձրավանդակի համարյա թե բոլոր շրջաններում։ Այդ են ապացուցում Վանի, նրա շրջակայքի, Արարատյան դաշտի, Ն. Բայազետի և այլ վայրերի հնագիտական հայտնագործությունները։

Այս առումով խիստ շոշափելի արդյունք են տվել Վանի շրջանի բնակավայրերի և առանձնապես Կարմիր-բլուրի պեղումները։

Վանի և նրա շրջակայքի բնակավայրերի պեղումները հայտնաբերել են տասնյակներով զանազան մեծության կարասներ, կարասներից մոտ 20-ը ունեցել են 500—600 լիտր տարողություն, և ինչպես ճիշտ կերպով ենթադրվում է, այդ կարասներից մի քանիսում պահպանվել են հացաբույսերից ստացած ոգելից խմիչքների հետքեր։ Հացաբույսերն այս վայրերում այնքան տարածված են

---

[1] Գ. Ղափանցյան, *Ուրարտուի պատմությունը*, էջ 57—58 (տե՛ս Երևանի Պետհամալսարանի գիտական աշխատություններ, հատոր XIV, Երևան, 1940)։

[2] Նույն տեղում, էջ 59։

[3] Պրոֆ. Խաչատրյան, *Հայաստանի սեպագրական շրջանի քննական պատմություն*, Երևան, 1933, էջ 22—23։ Հմմտ. Պրոֆ. Պիոտրովսկի, История и культура Урарту, էջ 192, Գ. Ղափանցյան, *Ուրարտուի պատմությունը*, էջ 58—59, Հովսեփ վ. Սանտալճյան, *Ասորեստանեան և պարսիկ սեպագիր արձանագրութիւնք*, Վիեննա, 1901, էջ 124։

[4] Հովսեփ վ. Սանտալճյան, *Ասորեստանեան և պարսիկ սեպագիր արձանագրութիւնք*, էջ 171—181։

եղել, բերքն այնքան առատ, որ նույնիսկ օջախներին կից, առանձին կառուցումներում, քարայրներում, իսկ որ ավելի հաճախ է պատահում, մեծամեծ կարասներում պահպանվել են հացահատիկի շատ ու շատ մնացորդներ[1]:

Կարմիր-բլուրը հանդիսացել է ուրարտական կառավարիչների պալատ-ամրոցը՝ Հյուսիսային Հայաստանում: Սա ընդգրկել է մոտ 40 հեկտար տարածություն, միայն նրա միջնաբերդը դրավել է 4 հեկտար:

Կարմիր-բլուրում և նրա շրջակայքում հացաբույսերն այնքան առատ են եղել, որ հանդիսացել են փոխանակության միջոց: Այսպես, օրինակ, հիշատակվում է, որ ցորենը փոխարինվել է 1 ձիու, իսկ մի այլ դեպքում 16 եզան հետ[2]:

Վանի ուրարտական պետության կենտրոնական մասերում երկրագործությունը, այգեգործությունը, կուլտուրական բույսերի մշակույթի արվեստը զարգացման այնպիսի աստիճանի էր հասել, որ ուրարտական լեզվում պահպանվել է «արտ», «անդաստան», «ադարակ» տերմինները:

«Ուրարտերենում,— գրում է ակադ. Գ. Ղափանցյանը,— կա մի բառ (laragi), *որը մեր կարծիքով պիտի նշանակի «արտ», «անդաստան»: Բացի արտ, անդաստան տերմինից, ուրարտական լեզվում պահպանվել է ադարակ տերմինը, որը սումերական ծագում ունի, սումերական* ager-*ը, որը հողի մասնավոր սեփականության հետ է կապված, անցնում է շատ երկրներ... հայոց և վրաց* agarak, *լատ. հուն.* ager, *գերմ.* acker, acra *և այլն*[3]:

Ուրարտացիները ոչ միայն մշակել են հացաբույսեր՝ իրենց բաղմազան տեսակներով, այլև պատրաստել են ձավար, ալյուր: «1948 թ.,— գրում է Բ. Բ. Պիոտրովսկին,— Կարմիր-բլուրի պալատի շենքերից մեկի պեղման ժամանակ ...կենսամթերքների մեծ պաշարի հետ միասին գտնվեց հացի մնացորդ, որը պատրաստվել է կորեկի ալյուրից...»[4]:

Հայտնաբերվել են ցորենի շիլա, լավաշ, յուղատու բույսեր, ծոթորի տերևներ—դաշտային ուրց (thymas), *քունջութ, որից պատ-*

---

1 Б. Пиотровский, История и культура Урарту, стр. 151, 174, 192.

2 *Նույն տեղում, էջ 178:*

3 Գ. Ղափանցյան, *Ուրարտուի պատմությունը, էջ 58: Հմմտ. պրոֆ. Խ. Սամուելյան, Մտրկությունը Հին Հայաստանում, էջ 110, ակադ. Հ. Մանանդյան,* Проблема общественного строя доаршакидской Армении (см. «Исторические записки» № 15, за 1941, стр. 3).

4 Б. Пиотровский, Кармир-Блур, I, стр. 28.

բատակ են յուր։ «Այսպիսով,— ամփոփում է պրոֆ. Բ. Բ. Պիոտրովսկին,— մենք տեսնում ենք, որ Կարմիր բլուրի պեղումները տալիս են հարուստ և որոշակի նյութեր հին երկրագործության առկայությունը փաստարկելու համար։ Մեզ քաջ ծանոթ է, որ ուրարտացիները ոչ միայն զաժանորեն շահագործում էին Անդրկովկասի բնակչությանը, այլև այնտեղ ստեղծել էին իրենց վարչական կենտրոնը, բարելավել և լայնացրել էին ոռոգման սիստեմը, որը հանդիսանում է անհրաժեշտ պայման բերքատվության բարձրացման համար»[1]։

Երկրագործությունն առանձնապես զարգացած է եղել Տիգրիս-Արածանիի հովիտներում։ Այստեղ, ինչպես Նաիրյան երկրում, Վանի-Ուրարտուի թագավորության տիրապետության էպոխայում, երկրագործությունը ոչ միայն եղել է բնակչության գլխավոր զբաղմունքներից մեկը, այլև գերիշխել է անասնապահությանը։ Այս վայրերում հայտնաբերվել են խոշոր և մանր եղջյուրավոր անասունների ոսկորների շատ քիչ, իսկ հացաբուսների, կուլտուրական մշակույթների, ընդեղենների շատ ու շատ մնացորդներ։

Վանի-Ուրարտական թագավորության էպոխայի երկրագործության արվեստի այդ բարձր զարգացումը ցույց է տալիս, որ մենք գործ ունենք ոչ թե նոր սկիզբ առնող հողագործական արվեստի հետ, այլ այն եղել է Հայկական բարձրավանդակի ավելի հին, նախաուրարտական շրջանի բնակիչների զբաղմունքի գլխավոր ճյուղը, որը և ժառանգել են ուրարտացիները, իսկ հետագայում արմեն-հայերը և այն հասցրել հետագա զարգացման անհամեմատ ավելի բարձր աստիճանի։

Տնտեսական այս հիմքի վրա է, որ ավելի ուշ շրջանում զարգանում է հայ ժողովրդի հասարակական և քաղաքական կյանքը։

Հետագայում, Արտաշեսյան և հատկապես Արշակունիների օրոք երկրագործությունը, հողագործությունը, տեխնիկական կուլտուրաների մշակույթը, անասնապահությունը, թռչնաբուծությունը, ձկնորսությունը ապրում են անհամեմատ զարգացման ավելի բարձր վերելք։

Հայկական մատենագրական աղբյուրները, ձեռագիր հիշատակարանները պահպանել են ուշագրավ վկայություններ հայ ժողովրդի կրոնական մասին։ Արդեն արտադրության ֆեոդալական եղանակի տիրապետության պայմաններում ավելի է կատարելագործվում ոչ միայն երկրագործական տեխնիկան, այլև հանդես են

---

[1] Б. Пиотровский, Кармир-Блур, I, стр. 29—30.

դալիս հողամշակման ավելի ինտենսիվ ձևեր ու մեթոդներ։ Հողագործության մեջ տիրապետող ձևը դառնում է եռադաշտյան սիստեմը։ Հողերը պարարտացվում են, մաքրվում են մոլախոտերից։ Դաշտ են փոխադրում մոխիր, գոմաղբ, մշակում են տավուտ, հացաբույսեր, յուղատու և թելատու բույսեր, քնջութ, կտավհատ, կանեփ, բամբակ, խաղող, ծիրան, դեղձ, խնձոր, սալոր, թուզ, ձիթապտուղ։ Արդեն ավելի կատարելագործված եղանակով մշակում են երկրագործական և այգեգործական մթերքներ, պատրաստում են գինի, օղի, շամիչ և այլ մթերքներ։

V դարի պատմիչ Ագաթանգեղոսը թողել է ուշագրավ վկայություններ այն մասին, որ իր շրջանում հայ հողագործ-երկրագործները «Վարս վարեալս ցելեալս կակղեալս հերձեալս, ակօսածիդ պատառեալ վերկիրն սեակոշտեալ, պարարտացուցեալ՝ նախ քրտնաբեր աշխատութեամբ հատանիցեն զընդվայր արմատսն մոլեբոյսս,... և ապա սերմանել զսերմանիս զօգտակարն ցանից»[1]։

Այս շրջանում մշակվում էին ոչ միայն «ամենայն ծառատունկք», այլև «զգոյնս գոյնս ծաղկանցն, համոցն և հոտոցն և տերևոցն»։ Երկրագործ մշակները ստանում էին «Նոյնպէս և թուզն զտեսիլ իւրոյ տերևոյն և զարար կեղևոյն և զտարր մրգոյն ի նմանէ որիշ... Զի կարմրախնձորն զիւր օրինակն, և կարմրատանձն զիւրն, և կարմրաղեղձն զիւրն... Սոյնպէս կիտորնն և ապաբաղսամոնն (բալասան) և դափնին և ձիթենին գեղեցիկ և սերկևիլն և մուրտն և ընկոյզն և նուշն և քնարուկն (ղկեռ) և հաճարուկն և թութն և նուռնն և հոյնն։ Եւ ամենայն ծառք մրգաբերք և ծաղկաբերք...»[2]։ Այգեգործության արդյունքներից ստանում էին ձեթ, գինի, օղի, շամիչ։ Արտադրում էին նաև ցորեն, գարի, տարեկան, կտավհատ, հաճար, բրինձ, լոբի և այլ մթերքներ[3]։

Ագաթանգեղոսի այս արժեքավոր վկայությունները հաստատում են Փ. Բուզանդը, Եղիշեն, Ղ. Փարպեցին, Մ. Խորենացին, Հովհան Մանդակունին և ուրիշներ։ Փ. Բուզանդը, Ղազար Փարպեցին խոսելով Արարատյան դաշտի մասին, վկայում են, որ այնտեղ մշակվում էին «ազգի ազգի արմատք բուսոց ի պէտս օգտակարութեան դեղոց...» նաև «որդունս 'ի զարդ կարմրատեսիլ զունոց», որ նա «ընծայէ օգտասիրացն շահս և շքեղութիւնս...»[4]։

---

1 Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1914, էջ 259։

2 Նույն տեղում, էջ 324—325։

3 Նույն տեղում, էջ 88, 262, 264, 269—270 և այլն։

4 Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց և թուղթ առ Վահան Մամիկոնեան, Տփղիս, 1904, էջ 9—10։ Հմմտ. Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883, էջ 174։

Արարատյան «զհոյակապն և զհռչակաւորն» դաշտը Հայաստանի «զամենաբոյսն, զամենաբուղխն, զամենալին, զամենագիտ» գավառներից էր[1]: Նա պատած էր պարարտաբույսերով և «պարարտ արտօք»: Հայկական «գեղեցկանիստ և պարարտարօտ» լեռներում, արոտավայրերում արածում էին «կճղակաբաժնիք և որոճայնովքն» բազմաթիվ հոտեր[2]:

Հովհան Մանդակունին իր «Բան կանոնական» աշխատության մեջ արգելակում է հոգևոր դասերի ներկայացուցիչներին և քրիստոնյա հավատացյալներին պաս օրերին գործածել յուղ, պանիր, և այլ մթերքներ[3]: Արշակունիների և Մարզպանության շրջաններում հողերը պարարտացվում էին: Երկրագործությունն ու այգեգործությունը այս շրջանում դառնում էր ավելի կատարելագործված, ավելի ինտենսիվ, քան նախորդ շրջանում:

Արշակունիների և հատկապես Արշակ Բագավորի օրոք Արարատյան դաշտն «ի վերուստ կարօտ» ոռոգման, դառնում է «անկարօտ ոռոգման»: Արհեստական ջրանցքները անուցանում են «երկիրն ջրովք արուեստիւք և զառաւելութիւն հաւուցն յուրախութիւն և ի սթափումն որսատենչ ազատացն»: Նոր անցկացված ջրանցքները ոչ միայն առատ ջուր են մատակարարում դաշտերին, այլև ոստաններին: Մշակվում է հաց, խաղող և «զանուշահոտ զմեղրահամ քաղցրութիւն բանջարացն և զղանազանումն իւղաբուղխ սերմանցըն»[4]:

Մ. Խորենացին պատմում է, որ Արտավազդը ումն պարսիկ Դրուսպի նվիրում է Տատենք ավանը «հանդերձ ագարակօքն, և զայլին մեծ, յոր մտանէր առուն դեռ, հանեալ ի ծովէն Գայլատուայ»[5]:

Արարատյան դաշտից հետ չէին մնում «ամբարք Հայոց» Շիրակը, Տարոնը, Բագրևանդը (Ալաշկերտի հովիտը), Մուշի դաշտը,

---

[1] Ղ. Փարպեցի, էջ 9—10։

[2] Նույն տեղում, էջ 9—10։ Հմմտ. նաև Եղիշեի Պատմութիւն Վարդանանց, Թիֆլիս, 1913, էջ 32, 261—262, Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց, աշխատությամբ Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, Տփղիս, 1913, էջ 188, 194 և այլն։

[3] Յովհաննու Մանդակունւոյ Հայոց կաթողիկոսի և թարգմանչի, աշակերտ Եղեալ սրբոյն Սահակայ մեծի Հայրապետին Հայոց կաթողիկոսի՝ Բան Կանոնական (տես Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ հանդերձ կանոնագրութեամբ ի պէտս ժառանգաւորաց)։ Աշխատասիրեց Արել արքեպիսկոպոս Մխիթարեանց, Վաղարշապատ, 1874, էջ 74—75։

[4] Ղ. Փարպեցի, էջ 9—10։

[5] Մ. Խորենացի, էջ 194։

որտեղ մշակվում էին բամբակ, խաղող, պտղատու և ձիթատու բույսեր։ Այս վայրերում կային բազմաթիվ մրգաստաններ, այգիներ, թթենիներ, «արմատինք», մինչև իսկ «շաքարեղեգ»։

Խաղողի, բամբակի, կուլտուրական այլ բույսերի մասին վկայություններ են պահպանել Ղ. Փարպեցին, Մ. Խորենացին, Ա. Շիրակացին, Մ. Կաղանկատվացին։

Ղ. Փարպեցին և Մ. Խորենացին նկարագրելով Արարատյան դաշտը, նշում են, որ այնտեղ մշակվում էր «բամբակ անբաս»։

7-րդ դ. նշանավոր մատենագիր Անանիա Շիրակացին հիշատակում է, որ Փայտակարան նահանգում, Արաքս գետի ստորին հովտում մշակում էին բամբակ[1]։ Նույն դարի մի այլ մատենագիր՝ Մ. Կաղանկատվացին, թողել է ուշագրավ վկայություն, ըստ որի Հայաստանի դաշտերը տալիս էին «հաց, գինի... բամբակ և անբաւ ձիթենի»[2]։ Բամբակի և բամբակյա գործվածքների մասին մի շարք վկայություններ կան Մ. Գոշի մոտ։ Երկրագործներ, ասում է Դատաստանագրքի և Առակների հեղինակը «առոգանէին... զբամբակենիսն, և միմեանց պատուիրէին զգուշանալ, զի մի զծառս կոխեսցեն զբամբակենիս...»[3]։

Վիմական արձանագրություններում և մյուս պատմիչների մոտ կան վկայություններ, որ ֆեոդալ-հողատերերը գյուղերն ու դաշտերը ազատում են բամբակի հարկերից[4]։ Անիի մզկիթի արձանագրություններից մեկում պահպանվել է հիշատակություն այն մասին, որ ոմն Քեյսուլթան, հրամայում է, թե այսուհետև բամբակի և քաթանի առևտուրը պետք է կատարվի միայն կամ «մզկիթի մոտ կամ խանութներում»[5]։

Բամբակի մշակույթը միջնադարյան Հայաստանում այնքան լայն ծավալ էր ստացել, որ կային հատուկ «բումպուկածուխ» առևտրականներ։ 1225 թ. գրված երաշխահաններից մեկում ասվում է՝ «բումպուկածուխ» մարդիկ գյուղացիներից և արհեստավորներից գնելով բամբակն ու բամբակեղեն ապրանքներ դուրս էին բերում շուկա վաճառելու[6]։

Մարկո Պոլոն և Ջ. Բարբարոն իրենց ճանապարհորդական

---

1 Ա. Շիրակացի, Մատենագրութիւն, Երևան, 1944, էջ 350։

2 Մ. Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1912, էջ 51։

3 Մ. Գոշ, Առակներ, հրատ. Էմ. Պիվազյան, Երևան, 1951, էջ 54—55։

4 Կ. Կոստանեանց, Վիմական տարեգիր, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 129։

5 Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 60։

6 Մատենադարան, ձեռագիր № 695, էջ 220 ա, 220 բ։

հիշողություններում մատնացույց են արել, որ Արևմտյան Հայաստանում, հատկապես Մուշ և Մերդին քաղաքների շրջակայքում արտադրում էին մեծ քանակությամբ բամբակ, բնակիչները շինում են մեծամեծ մասամբ բեհեզ և մետաքսյա և բամբակյա կտորեղեններ[1]:

Հայաստանի զարգացած երկրագործության և այգեգործության մասին բազմաթիվ վկայություններ կան նաև այլ կարգի ու բնույթի աղբյուրներում[2]:

Միջնադարյան Հայաստանում տեխնիկական կուլտուրաների մշակույթն այնքան տարածված էր, որ նրանց շատ տեսակները հանդես են եկել պատկերաքանդակների մեջ: Այսպես, օրինակ, Զվարթնոցի և հատկապես Աղթամարի վանքերի վրա փորագրված են խաղողի ողկույզներ, պտղատու ծառեր:

Հայաստանի արոտավայրերով և այլյան մարգագետիններով հարուստ լեռնային շրջաններում, առանձնապես Բյուրակնի, Կեշտաի, Գեղարքունի գավառներում անասնապահությունն ժողովրդական տնտեսության կարևոր ճյուղերից մեկն էր: Պատմական աղբյուրներում պահպանվել են խիստ ուշագրավ վկայություններ, որ դեռ շատ հին ժամանակներից սկսած հայկական ձիերը և անասունները դուրս էին բերվում Խորասանի, Իրաքի, Ասորեստանի քաղաքներում վաճառքի համար: Օտար տիրապետողներին վճարվելիք հարկերի մեջ հիշատակվում են նաև ձիեր, եզներ, ոչխարներ, այծեր և այլն:

Իբն-ալ-Ֆակիհը վկայում է, որ Ահմեդ-իբն-Վաղիհ Իսպահանցին իրեն պատմել է, որ նա եղել է շատ երկրներ, բայց չի տեսել անասուններով ավելի հարուստ երկիր, քան Հայաստանը»:

Երկրի էկոնոմիկայում ոչ պակաս նշանակություն ունեին նաև որսորդությունը, մեղվաբուծությունը, թռչնաբուծությունը և ձկնորսությունը: Արդեն վերը նշեցինք, որ հայերը Արշակունիների և

---

[1] Ուղեգրություններ, հատ. Ա, Երևան, 1932, էջ 50—58, 181:

[2] Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, Երևան, 1941, էջ 310· Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 106, 131, 199, 260, Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն Տանն Արծրունեաց, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 253, 291—292, 294—295. Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 139, Մխիթարայ Գօշի, Դատաստանագիրք Հայոց, Վաղարշապատ, 1880, էջ 429, նույնի, Առակներ, էջ 50, 74—77, 128, Պատմութիւն Հայոց, արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ. Թիֆլիս, 1910, էջ 38, Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ Սանփանոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1911, էջ 21—25, 33, 160 և այլն։

Մարզպանության շրջանում սահանում էին մեղր, կաթ, միս, ձուկ և գյուղատնտեսական այլ մթերքներ։ Ղազար Փարպեցին մատնացույց է արել, որ Արարատյան դաշտում կային «ջոկք թռչնոցն», սագեր, հավեր, բազեր[1]։

Գետերի, լճերի ափերին ապրող բնակիչների հիմնական զբաղմունքն էր ձկնորսությունը։ Հայ ձկնորսները որսում էին «ձկունս... և բազմազան վայրենի հաւուց ձագս... ի կղզեաց գետոյն բերեալ մատուցանեն ընծայս իշխանացն»[2]։ Պատմական Հայաստանում կային նույնիսկ արքունական ձկնորսարաններ։

Փ. Բուզանդը նկարագրելով Խոսրով Թագավորի օրոք ֆեոդալական դաժան երկպառակությունները, նշում է, որ մեծամեծ իշխանները «դիպեցան միմեանց առ ափն ծովուն Բզնունեաց, յԱռնստն աւանի, ի ձկնատեսանսն արքունի ի վերայ գետակին»[3]։

Ձկներով առատ էին Վանի, Ուրմիո, Արճակ, Գալյատու լճերը։ Այս լճերի մի մասի ձկնորսության մենաշնորհը պատկանում էր արքունիքին, մյուսը՝ ֆեոդալ-հողատերերին։

Ձկնորսության խոշոր կենտրոններ էին Առնստոր՝ Վանա լճի, Շողագան և Կոթը՝ Սևանա լճի ափերին։ Բովմա Արծրունին նկարագրելով Գագիկ Արծրունու շինարարական ձեռնարկումները, պատմում է, որ նրա օրոք «նաև ի գլխոյ լերինն հասեալ իջանեն գետք սահանակարկաջք յորդահոսք, որով ոռոգանի երկիրն առհասարակ, որք և ի ծով անկանելով՝ բղխեն ձկունս մանունս առ ի պէտս վայելչութեան բնակչաց աշխարհին...»[4]։

Նվաճելով Հայաստանը, արաբները հայկական ձկնորսարանները հռչակում են պետության մենաշնորհը։ Բալաձորին վկայում է, որ Հաբիբը և Մուհամեդ-իբն-Մրվանը պետական մենաշնորհ են հռչակում Հայաստանի հարուստ ձկնորսարանները։ Իբն-ալ-Աթիրը թողել է վկայություն այն մասին, որ Աբուամելիքի եղբայր Մուհամեդը, նշանակվելով Հայաստանի կառավարիչ, արգելում է ձկնորսությունը և կարգադրում է որսալ ու վաճառել ձկներ, որպես պետական սեփականություն[5]։

Արաբական տիրապետությունից հետո Հայաստանի ձկնորսարանների տիրակալները դառնում են Բագրատունիները և առանձին ֆեոդալ-հողատերերը։

---

1 Ղ. Փարպեցի, էջ 10։

2 Նույն տեղում, էջ 11։

3 Փ. Բուզանդ, էջ 17։

4 Թ. Ասծրունի, էջ 291—292։

5 Բ. Խալաթեանց, Արարական գրողները հայերի մասին, տե՛ս, «Հանդէս Ամսօրեայ», 1904, էջ 179։

Վիմական արձանագրություններում պահպանվել են բազմաթիվ հիշատակություններ այն մասին, որ ձկնորսարանները դառնում են առքի և վաճառքի օբյեկտ։ Շողագա վանքի արձանագրություններից մեկում հիշատակված է, որ Սյունիքի տիկնանց տիկին Մարիամը վճարելով 60,000 դրամ, գնում է Շողագան և նվիրում վանքին[1]։ Անկասկած, Շողագայի այս բարձր գինը բացատրվում է նրանով, որ նա հանդիսանում էր միաժամանակ խոշոր ձկնորսարան։ 901 թ. Մաքենացոց վանքի մի արձանագրությունից երևում է, որ ձկնորսարաններ ունեին Բողաշեն, Դեղձանագետ, Կոթ և Անմեռ գյուղերը։ 903 թ. Շապուհ Բագրատունին իր կողմից կառուցած Վահևանի եկեղեցու արձանագրության մեջ հիշատակում է, որ նա վանքին է նվիրում ոչ միայն գյուղեր, այլև յոթ ձկնորսարաններ[2]։

Հայաստանը, ինչպես վկայում է Իբն-Խալդունը, արաբական խալիֆային վճարում էր տարեկան «10.000 ռաթլ ադամ ձուկ»[3]։

Երկրագործությունը, այգեգործությունը ավելի օգտավետ դարձնելու համար անցկացվում են բազմաթիվ արհեստական ջրանցքներ, առուներ, օգտագործվում են գետերը, լճերը, ջրի պաշարները։ Հայտնի է, որ ջրանցքաշինարարությունը, արհեստական ոռոգման սիստեմը դեռ պատմական անհիշելի ժամանակներից ծանոթ էր Հայկական բարձրավանդակի բնակիչներին։ Ոռոգման սիստեմը զարգացած էր մանավանդ երկրագործական շրջաններում։ Արհեստական ջրանցքներ են դուրս բերվել Հրազդան գետից։ Վանի թագավորության տերիտորիայում, հատկապես Արարատյան դաշտում կառուցել են արհեստական լճեր։ Արմեն-հայերը և նրանց նախնիները օգտագործել են Արաքս, Հրազդան, Եփրատ, Տիգրիս, Արածանի գետերն իրենց վտակներով և ստորերկրյա աղբյուրներով՝ երկիրը ոռոգելու համար։ Վանի—Ուրարտուի տիրակալները՝ հարկադիր և ստրկական աշխատանքի շահագործման միջոցով արհեստական ջրանցքներ են անցկացրել Արարատյան դաշտում, Արաքսի հովիտներում, Վասպուրականում և այլ վայրերում[4]։

Արդեն մենք վերը վկայակոչեցինք Ղ. Փարպեցու, Մ. Խորենացու և մյուս պատմիչների տեղեկությունները Արշակունիների և

---

[1] Ստ. Օրբելյան, էջ 174։

[2] Վիմական տարեգիր, էջ 5, 6։

[3] Իբն-Խալդուն, Գիրք 1-ին, էջ 155։

[4] Տես Lehman Haupt, Armenien einst und jetzt, էջ 95, հմմտ. Ս. Տեր-Ավետիսյան, Ուրարտական թագավոր Մենուա 1-ին կառուցած Շամիրամի ջրանցքը (տե՛ս ՀՍԽՀ Պատմության և գրականության ինստիտուտի «Տեղեկագիր», № 3—4 (8—9), 1941)։

Մարզպանության շրջաններում արհեստական ոռոգման սիստեմի մասին։

Հետագայում ջրանցքաշինարարությունն ավելի է ընդարձակվում։

Վասպուրականի դաշտերը, այգիները ոռոգելու համար Գագիկ Արծրունու հրամանով անցկացվում են արհեստական ջրանցքներ։ Հայաստանի լեռներից, հարում է Թ. Արծրունին, «հոսեալ իջանեն գետք սահանակարկաչք յորդահոսք, որով ոռոգանի երկիրն առ հասարակ...»[1]։ Արհեստական ջրանցքներ են անցկացվում նաև Վանում։ Այս ջրանցքները «ոռոգեալ արբուցանեն... և բուրաստանս և պարտէզս... հովիտս.... և ծառատունկ բաղում»[2]։ Հայաստանի տնտեսական վերելքը պատկերավոր կերպով նկարագրել են Բագրատունիների էպոխայի պատմիչներ՝ Հովհ. Դրասխանակերտցին և Ստ. Տարոնեցին (Ասողիկը)։ Նրանք վկայում են, որ Բագրատունիների օրոք «տնկեցին այգիս և արմատացուցին բուրաստանս ձիթենեաց և պարտիզաց. հերկեցին հերկս արտաքոյ փշոց և կթեցին պտուղս հարիւրատրս...»[3]։

Երկրագործության, այգեգործության, կուլտուրական-տեխնիկական բույսերի մշակույթի զարգացումը հրամայաբար պահանջ էր առաջադրում կատարելագործել նաև երկրագործական տեխնիկան։

1 Թ. Արծրունի, էջ 291—292։

2 Նույն տեղում, էջ 294—295։

3 Հովհ. Դրասխանակերտցի, էջ 199, տե՛ս նաև Ստեփաննոսի Տարօնեցոյ Պատմութիւն, էջ 161։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԱՇԽԱՏԱՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ: ՆՐԱՆՑ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՏԱՐԲԵՐ ԷՏԱՊՆԵՐԸ ՀԻՆ ՈՒ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մարքսիզմ-լենինիզմի կլասիկները ուսուցանում են, որ այս կամ այն հասարակական-տնտեսական ֆորմացիան մեկը մյուսից տարբերվում է ոչ թե նրանով թե ի՞նչ է արտադրվում, այլ ի՞նչպես, արտադրության ինչ միջոցներով է արտադրվում:

Այդ է պատճառը, որ մենք չենք կարող պատկերել հասարակության պատմությունը առանց ուսումնասիրելու պատմական պրոցեսի հիմքը կազմող աշխատանքի միջոցների զարգացման պատմությունը: Անդրադառնալով այդ հարցին, Կ. Մարքսը գրել է.

«Ինչպիսի կարևորություն որ ունի ոսկրե մնացորդների կառուցվածքը կենդանիների չքացած տեսակների կազմվածքի ուսումնասիրության համար, նույնպիսի կարևորություն ունեն աշխատանքի միջոցների մնացորդները չքացած հասարակական-տնտեսական ֆորմացիաների ուսումնասիրության համար: Տնտեսական դարաշրջաններն իրարից տարբերվում են ո՛չ թե նրանով, թե ի՞նչ է արտադրվում, այլ նրանով, թե ինչպե՞ս, աշխատանքի ի՞նչ միջոցներով է արտադրվում: Աշխատանքի միջոցները ոչ միայն մարդկային աշխատուժի զարգացման չափանիշ են, այլև հասարակական այն հարաբերությունների ցուցանիշը, որոնցում կատարվում է աշխատանքը»[1]:

Երկրագործության զարգացման հետ զուգընթացաբար զարգացել և կատարելագործվել է երկրագործական տեխնիկան:

Պատմական Հայաստանի տերիտորիայի հնագիտական հետախուզությունները մեզ հնարավորություն են տալիս, գոնե մոտա-

---

1 Կ. Մարքս, Կապիտալ, հատ. I, Երևան, 1954, էջ 191։

վոր չափով, հետևելու երկրագործական տեխնիկայի զարգացման էտապներին։

Հողագործության և երկրագործության հետ կապված աշխատանքի գործիքներ հայտնաբերվել են Հայաստանի համարյա բոլոր շրջաններում։

Ակադեմիկոսներ Ն. Մառը, Հ. Օրբելին, Գ. Ղափանցյանը, պրոֆ. Բ. Բ. Պիոտրովսկին, հնագետներ Ե. Լալայանը, Կ. Դաֆդարյանը և ուրիշները, թե իրենց գիտական աշխատություններում և թե հնագիտական պեղումներով ցույց են տվել, որ երկրագործական քարե, պրիմիտիվ գործիքներին եկել են փոխարինելու ավելի կատարելագործված աշխատանքի գործիքներ։ Պատմական Հայաստանի բազմաթիվ բնակավայրերում հայտնաբերվել են նախնադարյան համայնական կարգերի բնակելի կացարաններ։ Այսպես, օրինակ, Երևանի մոտ (Շենգավիթ), Էջմիածնի մոտ (Բյուլ-Թափա, Շրեշ-Բլուր), Կիրովականի մոտ (Թաղավորանիստ) և այլ վայրերում հայտնաբերվել են քարե աղորիքներ, սանդեր, բրիչներ, զանազան ձևերի ու տեսակի ուրագներ, եղաններ, մանգաղներ, կացիններ, հեսաններ, կամեր և այլն[1]։

Կարմիր բլուրի պեղումների ժամանակ հայտնաբերվել են «երկաթյա խոփիկներ, երկաթյա խոփեր ունեցող գութաններ, բրիչներ, մանգաղներ, եղաններ»[2]։

Հայտնի է, որ երկաթյա խոփով գութանը Առաջավոր Ասիայի բնակիչներին հայտնի է եղել Վանի թագավորությունից շատ առաջ. Հ-րդ հազարամյակում (մ.թ.ա.) արդեն հանդես են գալիս մետաղյա խոփեր ունեցող գութաններ։ Միջագետքում հայտնի էին խոփերի երկու տեսակներ՝ ծանր և թեթև։ Դատելով երկաթյա ծանր խոփերի մասսիվությունից, կարելի է վստահ կերպով ասել, որ

---

1 Տե՛ս И. А. Орбели, Каталог Аннийского музея древностей, 1910. Նույնի, Անի ավերակները, Վաղարշապատ, 1911, Н. Марр, Ани Ереван, 1939. Б. Б. Пиотровский. История и культура Урарту, Ереван, 1944 Նույնի՝ Археология Закавказья, Ленинград, 1949, Նույնի՝ Кармир Блур, Ереван, 1950, Ե. Լալայան, Դամբանների պեղումները Խորհրդային Հայաստանում, Երևան, 1931, Գ. Ղափանցյան, Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940 Կ. Դաֆդարյան, Հնագիտական աշխատանքը Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո, Երևան, 1943, Ե. Բայբուրդյան, Աշխատանքի գործիքները Հին Հայաստանում (Տես «Տեղեկագիր» Պատմության և գրականության ինստիտուտի, 1938, № 1)։

2 Б. Пиотровский, История и культура Урарту, стр. 197.

ուրարտական էպոխայի խոփերը պատկանելիս են եղել ծանր տեսակին և քաշվել են 2 զույգ եզների միջոցով[1]։

Պրոֆ. Գ. Ղափանցյանը իր «Ուրարտուի պատմությունը» աշխատության մեջ ցույց է տվել, որ «ուրարտական երկրագործությունից մեզ մնացել են այլևայլ իրեր, երկաթե խոփ, եզաններ»[2]։

Լենինականի Մսի կոմբինատի մոտ հայտնաբերված մետաղաձուլական արհեստանոցը, Կարմիր-բլուրում, Մուխանաթ-թափայում հայտնաբերված մետաղաձուլական կաղապարները խոսում են արդեն զարգացած մետաղաձուլության մասին, որն ուներ տեղական ծագում։ Ենթադրվում է, որ մետաղաձուլական արհեստանոցներում ոչ միայն կաղապարով ձուլում էին զենքեր, այլև կյուղատնտեսական գործիքներ։ Եվ, վերջապես երկաթյա բազմաթիվ իրեր են հայտնաբերվել Դիլիջանի շրջանի Խիտանոցի ձորում Գոլովինո գյուղի մոտ։ Այդ երկաթյա իրերը վերաբերվում են 7—6-րդ դդ. (Ն. մ. թ.), այսինքն այն էպոխային, երբ պատմությունը արդեն խոսում է արմեն-հայերի մասին։

Հանրահայտ փաստ է, թե Ֆ. Էնգելսը ինչպիսի մեծ և հեղաշրջիչ դեր է վերագրել երկաթի գյուտին։

«...Հետևյալ քայլը,— գրել է Էնգելսը,— տանում է մեզ դեպի բարբարոսության բարձրագույն աստիճանը, այն շրջանը, որի ժամանակ բոլոր կուլտուրական ժողովուրդները անց են կացնում իրենց հերոսական դարաշրջանը, այն է՝ երկաթե սրի, բայց դրա հետ միասին նաև երկաթե խոփի և կացնի դարաշրջանը։ Մարդուն սկսեց ծառայել երկաթը՝ վերջինը և ամենակարևորը բոլոր տեսակի հում նյութերից, որոնք պատմության մեջ ռևոլյուցիոն դեր են կատարել, վերջինը ընդհուպ մինչև կարտոֆիլի երևան գալը։ Երկաթը հնարավոր դարձրեց դաշտաբուծությունը խոշոր տարածությունների վրա, հնարավոր դարձրեց լայնածավալ անտառամասերի մաքրումն ու վերածումը մշակելի տարածությունների. նա արհեստավորին այնպիսի ամուր և սուր գործիք տվեց, որին չէր կարող դիմանալ ո՛չ մի քար, ո՛չ մի այլ մինչև այդ ծանոթ մետաղ։

Բայց այդ ամենը՝ ոչ միանգամից. առաջին երկաթը հաճախ ավելի փափուկ էր, քան թե բրոնզը։ Այդ պատճառով էլ քարե զենքը միայն կամաց-կամաց անհետացավ»[3]։

---

1 Б. Пиотровский, История и культура Урарту, стр. 182, 198.

2 Գ. Ղափանցյան, *Ուրարտուի պատմությունը*, էջ 60։

3 Ֆ. Էնգելս, *Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը*, Հայպետհրատ, Երևան, 1948, էջ 214—215։

Վանի թագավորության էպոխայում, Ուրարտական պետության տերիտորիայի ցեղերի տնտեսական կյանքում, աշխատանքի նոր գործիքների հանդես գալու հետ միասին տեղի էին ունենում նկատելի փոփոխություններ և տեղաշարժեր։

Առանձնապես այդ փոփոխությունները նկատելի էին Վանի թագավորության կենտրոնական մասում՝ Բիայնայում։

Աշխատանքի նոր գործիքների, հատկապես երկաթյա գործիքների հանդես գալը նշանակում էր նաև որոշակի փոփոխություններ անասնապահության բնագավառում։ Ձիերն ու եղները օգտագործվում են որպես քաշող ուժ։

Ե. Լալայանը իր պեղումներից մեկի ժամանակ հայտնաբերել է ձիու կմախք՝ ձիասարքով և հանգել է հետևյալ եզրակացության։ «Մեծ դամբանների մեջ, մարդկանց կմախքի մոտ, բացվում էր նաև ձիու ամբողջ կմախք, ամբողջ ձիասարքով։ Այս երևույթն ապացուցում է, որ ձին ընտանեցված էր այս կողմերում դեռ բրոնզե դարում, գուցե և առաջ, և նրան ոչ միայն հեծնում էին, այլև լծում՝ ինչպես երևում է այս կողմերում գտնված բրոնզե գոտու վրայի պատկերից»[1]։

Նոր Բայազետի շրջանում «Մրթպի-ձոր» կոչված վայրում հայտնաբերվել է պաշտվող եզի մի դամբան. պաշտվող եզի պոչի մոտ դրված է եղել «կավե ձագարաձև երեք խողովակ և մի խեցի, որ շատ նման էր այժմյան մեր գյուղերում և քաղաքներում գործածվող խնկանոցին... թույլ եմ տալիս ինձ ենթադրելու,— շարունակում է Ե. Լալայանը,— որ Կովկասյան այս Ապիսի պոչի մոտ դրված 3 խողովակը, որ հիշեցնում են ստորուշանները՝ դրվել են կրակի վրա նրան ավելի բորբոքելու նպատակով և սրա մեջ ածել են խունկ, որ դրված է եղել այն կավե արկղիկի մեջ»[2]։

Քաշող ուժի այն օգտագործումը երկրագործության մեջ իր հերթին նպաստում էր անհատական, մասնավոր սեփականատիրական տնտեսության հետագա զարգացմանը։

Մեզ հայտնի են ոչ միայն երկրագործական, այլև հացահատիկ հնձելու, փոխադրելու, կալսելու ու մշակելու բազմաթիվ և բամբասն միջոցներ ու գործիքներ։ Հայտնի է, որ հացաբույսերը հնձել են, ինչպես բրոնզյա, այնպես էլ երկաթյա մանգաղներով,

---

1 Ե. Լալայան, Դամբանների պեղումներ Խորհրդային Հայաստանում, էջ 189։

2 Նույն տեղում, էջ 79—80։

որոնք տարածված են եղել Հայկական լեռնաշխարհի համարյա բոլոր վայրերում։ Հավաքված հացաբույսերը դաշտից կալերն են փոխադրվել գյուղական սայլերի միջոցով։

Ե. Լալայանը Ն. Բայազետի շրջանում № 17 դամբարանում հայտնաբերել է խիստ հետաքրքրական մի սայլ։

«Ադիաման գյուղի Դեմիր (անջրդի) մասում, տասնչորրորդ դամբարանում,— գրել է Ե. Լալայանը,— գտնված իշխանական սայլը շատ նման է այժմյան սայլին, որը գործադրվում է Անդրկովկասի շատ տեղերում։ Նա բաղկացած է երկու քառանկյունի թիերից, որ հանգչում են երկու միապաղաղ անիվների վրա։ Սա տարբերվում է այժմյան սայլերից, ըստ իս նրանով, որ փոխանակ այժմյան սայլերի առաջամասում գտնված նեցուկի, ունի երրորդ անիվը, որը հետիններից մի քիչ փոքր է...։ Լուծը միանգամայն նման էր հայկական այժմյան սայլի լծին. նա մի քառանկյունի փայտ էր, որի ծայրին անց էին կացված փայտե սամեր»[1]։

Լալայանը այդ սայլը համարում է նման սկյութական էպոխայի սայլին[2]։

Հայաստանում գյուղատնտեսության մեջ օգտագործել են սայլերի մի քանի տեսակներ — միանիվ, երկանիվ, եռանիվ և այլն։

Հասկանալի է, որ դաշտից կալ, կամ տուն հացահատիկը չէր փոխադրվում միայն սայլով։ Կային փոխադրական այլ միջոցներ՝ ձիեր, ջորիներ, էշեր նույնիսկ փոխադրման համար կարող էին օգտագործել սարուկներին, ռազմագերիներին. սակայն սայլի առկայությունը խոսում է արդեն ոչ միայն զարգացած, այլև բարձր մակարդակի հասած երկրագործության օրին։

Ստացած բերքը ոչ միայն հնձում և փոխադրում էին, այլև վերամշակում, ծեծում, աղում, ձավար և հաց պատրաստում։

Հացաբույսերի մշակման ամենամասսայական գործիքը եղել են աղորիքները (երկանիները), սանդերը։

«Հայաստանում,— գրում է Բայբուրդյանը,— աղորիքները պատահում են շատ բազմազան ձևի և մեծության։ Սրանց մեջ կարելի է առանձնացնել հինգ տեսակներ՝ սկավառականման, նավականման, քառանկյուն և անկանոն ձևերի։ Հայտնաբերվել են նաև սանդեր (որտեղ հացահատիկ են ծեծել, ձավար պատրաստել)։

---

[1] Ե. Լալայան, Դամբարանների պեղումներ Խորհրդային Հայաստանում, էջ 194, 197։

[2] Նույն տեղում, էջ 199։

Աղորիքներ և քարե սանդեր կարելի է գտնել Հայաստանի ամեն մի ամրոցում»[1]:

Քարե սանդեր, աղորիքներ, մուրճեր է հայտնաբերել Ե. Լալայանը ինչպես Ալավերդու, այնպես էլ Ն. Բայազետի շրջաններում[2]:

Գ. Ղափանցյանը, Բ. Պիոտրովսկին նույնպես ցույց են տվել, որ ուրարտական շրջանից և նրանից հետո մեզ հասել է «քարե աղորիք (երկանք), որը լիսեռի (ось) վրա էր ամրացված և պտտվում»[3]:

Բացի քարե սանդերից և աղորիքներից հայտնաբերվել են մեծաքանակ քամահարներ և հացաբույսերի ու կուլտուրական մշակույթների վերամշակման ու պահպանման գործիքներ, կարասներ, թասեր, ամաններ, հացաբույսերի ու ոգելից խմիչքների պահպանման մառաններ, հատուկ կառուցվածքներ:

Երկրագործական՝ գյուղատնտեսական գործիքների զարգացման մասին են վկայում հայտնաբերված իսկական կամերը:

Ախթալայի № 47 դամբանի պեղումների ժամանակ հայտնաբերվում է... «կավե մի քրեղան (plat)...»: Դամբանում եղած կմախքի «երկու ոտքը, զարդարված բրոնզե հաստ ապարանջաններով, հանդստանում էին մի կամի (tribulum) կալսելու գործիքի վրա: Այս կամի վրայի մի մասը մնացել էր, սակայն ամբողջ դերեզմանը լի էր կամի մի երեսը բռնող բազալտի կայծքարերով: Կամի մնացած մասը գտնվում էր կմախքի տակ, այնպես որ, ըստ երևույթին, դիակը դրված է եղել այս կամի վրա և հենց այսպես թաղված»[4]:

Տափանի, արորի, փայտյա և երկաթյա խոփերով գութանների հանդես գալով և անասունների ուժը, որպես քաշող ուժի, օգտագործումը, արդեն նշանակում էր կոլեկտիվ հողամշակության վախճանը: Կոլեկտիվ հողամշակությունն իր տեղն արդեն զիջում է ավելի կատարելագործված հողամշակությանը:

Պատմական այս էպոխայում արմեն-հայերն ապրում էին արդեն այն ժամանակաշրջանը, երբ, ինչպես նշել է Էնգելսը, «Երկրագործությունը հացահատիկի, փոճոկավոր ընդեղենների և

---

1 Ե. Բայբուրդյան, Աշխատանքի գործիքները Հին Հայաստանում, էջ 198։

2 Ե. Լալայան. Դամբանների պեղումներ Խորհրդային Հայաստանում, էջ 42, 44, 48։

3 Գ. Ղափանցյան, Ուրարտուի պատմությունը, էջ 60։

4 Ե. Լալայան, Դամբանների պեղումներ Խորհրդային Հայաստանում, էջ 17—18։

պտուղների հետ միասին այժմ տալիս էր նաև ձեթ ու գինի, որոնց պատրաստումը մարդիկ արդեն սովորել էին։ Միևնույն անհատն այդպիսի բազմազան գործունեություն այլևս չէր կարող ծավալել»[1]։

Երկրագործության աշխատամիջոցների զարգացումն ու կատարելագործությունը, երկրագործին մեծ միջոցներ և հնարավորություններ են տրամադրել ավելի ինտենսիվ կերպով զբաղվելու հողագործությամբ։ Աշխատանքի նոր և համեմատաբար ավելի կատարյալ գործիքների հանդես գալը նշանակում էր, որ բնակչությունը մասսայաբար անցնում էր վարելահողային՝ հողի տակ խորը ցանելու և առատ բերք ստանալու ժամանակաշրջան։

Երկրագործական աշխատամիջոցները հասնելով զարգացման նոր, ավելի բարձր աստիճանի, միաժամանակ հիմք էր դնում հողային նոր հարաբերությունների հանդես գալուն և ի վերջո նախադրյալներ էր ստեղծում հասարակական հարաբերությունների վերակառուցման, վերափոխման համար։

Երկրագործական աշխատանքի միջոցները ավելի առաջադիմական թռյլեր են կատարում հետագա դարերի և առանձնապես մարզպանական-ֆեոդալական Հայաստանում։ Այդ էպոխայի պատմիչներ՝ Ագաթանգեղոսը, Ղ. Փարպեցին, 5-րդ դարի կանոնները արդեն խոսում են երկաթյա խոփերով դութանների, գերանդիների, մանգաղների, ազորիքների, ջրաղացների, հացաբույսերի և այգեգործության մշակույթի տեխնիկական միջոցների, հողերի պարարտացման և ոռոգման մասին։

Ագաթանգեղոսը և Փարպեցին վկայում են, որ Հայաստանում արտերն ու բերքը հնձելու հիմնական գործիքը հանդիսանում էր մանգաղը և գերանդին։ «Հասեալ էր,— գրել է պատմիչը,— յանդս նոցա... վասն այնորիկ ի գործ անկաւ մանգաղ նորա, հնձեաց եկէզ զնոսա ի հրդեհի իւրում»[2]։ Այս վկայությունը հաստատում է Ղազար Փարպեցին։ Պատմիչը նկարագրելով երկրագործական աշխատանքները, պատմում է, որ Հայաստանի ժիր մշակները «առեր մանգաղաւ և գերանդեաւ զիսոտ հարկանիցեն...»[3]։

Հետագայում, առանձնապես 7—10-րդ դարերում երկրագործական աշխատամիջոցները ավելի ու ավելի են կատարելագործ-

---

[1] Ֆ. Էնգելս. Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, էջ 215։

[2] Ագաթանգեղոս, էջ 269—270։

[3] Ղ. Փարպեցի, էջ 159։

վում։ Լայն չափերով օգտագործում են արորը, գերանդին, երկաթյա խոփերով ծանր և հատուկ ձևիչներ ունեցող գութաններ, աղորիքներ, զանազան տեսակի և ձևերի բահեր, մանգաղներ և այլն։

10-րդ դ. արաբ մատենագիր Ալ-Մուհադասին վկայում է, որ երկրագործները հողը վարում էին չորս լուծ եզներով քաշվող երկաթյա խոփով գութաններով[1]։ Այս վկայությունը ապացուցում է նաև Դվինի պեղումներով հայտնաբերված բազմաթիվ արորներն ու գութանները։ Դվինում հայտնաբերվել է փայտյա արորի մեծ խոփ, որը, ինչպես ենթադրել է Կ. Ղաֆադարյանը, պետք է պատկանի ամենաուշը 9-րդ դարին[2]։ Դվինի խոփի նման երկաթյա խոփ գտնվել է նաև Զվարթնոցում և այլ վայրերում։

Դվինում հայտնաբերվել են նաև կացիններ, բահեր, մանգաղներ, ձեռնուրագ, ոտնուրագ։ Այս առարկաների և իրերի մեծ մասը պատրաստել են հայ արհեստավորները երկաթամշակման արհեստանոցներում։

Երկաթյա խոփեր ունեցող գութանների և գյուղատնտեսական այլ գործիքների մասին պահպանվել են բազմաթիվ վկայություններ մատենագիրների մոտ։

Պատմական Հայաստանը հարուստ է ոսկու, արծաթի, կապարի, անագի, սնդիկի, աղի, պղնձի և երկաթի հանքերով ու հանածոներով։ Հայտնի է, որ դեռ Վանի թագավորության շրջանում Հայկական լեռնաշխարհից երկաթն արտահանում էին Ասորեստան, Սկյութական երկրները։ Ալավերդու, Աղթամարի (Պղնձահանքի), Միսխանայի պղնձահանքերն օգտագործվել են դեռ շատ հին ժամանակներից սկսած։ Ստրաբոնը վկայում է, որ Հայաստանում կային «երկաթահատաց և կապարահատաց» հանքեր։ Այստեղ, շարունակում է Ստրաբոնը, կան նաև այլ մետաղահանքեր և նրանցից մեկը, այսպես կոչված կարմրադեղին է, որը կոչվում է հայկական ներկ և նման է ծիրանագույնին[3]։ Երկաթահանքերով հարուստ էին Ռշտունիքի լեռները։ Փ. Բուզանդը նկարագրելով Հակոբ Մծբինցու ճանապարհորդությունը, նշել է, որ նա «Գայր հասանէր ի լեռան երկաթահատացն և կապարահատացն, և որ ընդ նմայն

---

1 Н. Караулов. Сборник материалов для описания местностей и племен Кавказа, выпуск XXXVIII, стр. 16, 29.

2 Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 156։

3 Հ. Անանյան, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Երևան, 1940, էջ 61։

էին, ընդ Բոլշաունիս»[1]: Հանքալեռներով հարուստ Հայաստանի այս շրջանները նա կոչում է՝ «Դարբնաց-քար»: Հայաստանում մշակում և օգտագործում էին Սպերի ոսկու, Սասունի, Ռշտունիքի երկաթի և կապարի, Երզնկայի և Գուգարքի Տաշիր գավառի, Վայոց ձորի, Բաղքի, Ջորքի, Մխխանայի, Արևմտյան Տիգրիսի ակունքներում գտնվող Արզանա-Մադանի (Ջորրորդ Հայքում) պղնձահանքերը: Ղազար Փարպեցին ասում է. Արարատյան դաշտում կային ոսկու, պղնձի, երկաթի հարուստ պաշարներ:

Արարատյան դաշտը ասվում էր «զոսկի և զպղինձ և զերկաթ և զպատուական քարինս, զոր ընկալեալ արուեստող ձեռաց՝ զարդարին զթագաւորս մեծատեսիլ զարդեօքն յօրինուածովքն...»[2]:

Երկաթի, կապարի հանքերով հարուստ էին Աղձնիք և Տուրուբերան նահանգները: Առանձնապես նշանավոր էին Աղձնիք և Վասպուրական նահանգների սահմանների վրա, Վանա լճի հարավային ափերին, գտնվող «Երկաթապատ» կամ «Երկաթահանք» կոչված վայրերը: Այս վայրերում արդյունահանվում էր նաև կապար, որի հետևանքով էլ այդ հանքավայրերը հաճախ կոչվում էին նաև «Կապարահատք»:

Հայաստանի հմուտ արհեստավորներն օգտագործում էին երկրի բնական հարստությունները ոչ միայն զենքեր, այլև զուտանաբնական գործիքներ, երկաթապատ, երկաթագուռ պալատ-դղյակներ, վանքեր և եկեղեցիներ կառուցելու համար:

Արդեն միջնադարյան Հայաստանում ավելի մեծ չափերի է հասնում երկաթի, պղնձի, ոսկու, արծաթի, կապարի, արճճի, մագնեզիումի, անդիկի, բորակի, մկնդեղի, ծծումբի, պղպեղի, կաչեփարի արտադրությունը: Իբն-ալ-Ֆակիհը վկայում է, որ երկրում արտադրվում էին պղնձաջուսով, պղինձ, արծաթ, կապար: Այս վկայությունը հաստատում է Յակուտը. Հայաստանում, ասում է նա, մշակվում և արտահանվում էին Տուրուբերանի, Վարաժնունիքի, Սպահունիքի, Դիարբեքիրի և առանձնապես Անիի երկաթյա իրերը: Այս վայրերում, շարունակում է նա, կային նաև «պղնձահանքեր», «աղահանքեր» և այլն[3]:

Պահպանվել են բազմաթիվ վկայություններ երկաթահանքերի լայն օգտագործման մասին: Հայ հմուտ «երկաթագործ», «փայտագործ» վարպետները պատրաստում էին երկրագործական գործիքներ՝

---

[1] Փ. Բուզանդ. էջ 21, հմմտ. նաև էջ 35, 74, 107, 113։

[2] Ղ. Փարպեցի. էջ 10, հմմտ. նաև էջ 91—92, 117։

[3] Յակուտ. գիրք 1-ին, էջ 455։

դուքանների խոփեր, երկաթյա մասներով եղաններ, բահեր, մանդաղներ, դռներ և այլն և այլն։

Երկրագործական նոր, ավելի կատարելագործված գործիքները հողագործին հնարավորություն էին տալիս «հերկս հերկելու», հողը ավելի խոր ակոսելու և առատ բերք ստանալու համար։ Հայ ֆեոդալները երկրագործության մեջ արդեն օգտագործում են երկաթյա ծանր և մասիվ խոփեր ունեցող դուքաններ։

Հովհ. կաթողիկոսը վկայում է, որ իր ժամանակ արդեն ծանր խոփերով երկաթյա դուքանները քաշում էին 10 զույգ եղներ։ «Տասն լուծք եղանց գործեցաք, և սափոր մի մեզ տուաս»[1]։ Հողերը պարարտացվում են, մաքրվում են «արտաքոյ փշոց», տնկում են նոր այգիներ, բուրաստաններ՝ «ձիթենեաց և պարտիզաց»։

Անիի 1057—1063 թթ. արձանագրություններից մեկում հիշատակվում է, որ ծանր դուքանները քաշում էին «վեցկէ» եղներով, որոնք կարող էին կրկնապատկվել և եռապատկվել[2]։

Ակադ. Հ. Օրբելին Անիի պեղումների ժամանակ գյուղատնտեսական այլ գործիքների հետ միասին հայտնաբերել է երկաթյա ծանր, հատուկ ձևիշ ունեցող խոփեր։

«1904 թ.,— գրում է ակադ. Հ. Օրբելին,— երկաթյա մեծ դուքանի խոփ հայտնաբերվեց իշխան Բարսեղի արձանի հրապարակում՝ Առաքելոց եկեղեցուց դեպի արևմուտք։ Մեծ, նույնպիսի երկաթե դուքանի խոփ՝ հատուկ ձևիշով հայտնաբերվեց 1906 թ.։ Հայտնաբերվել է երկաթյա խոփի մի այլ կտոր՝ նույնպես ձևիշով...»[3]։

Հայտնաբերվել է գլանակ ծեծող կամ։ Հ. Օրբելին ոչ միայն հայտնաբերել է երկաթյա խոփեր, այլև ապացուցել է, որ այս խոփերը պատրաստվել են տեղում, Անիի արհեստանոցներում։

Այս ձևիշներով և առանց ձևիշների խոփերը պատրաստվել են տեղական դարբնոցներում։ Մատենագիրները և վիմական արձանագրությունները վկայում են, որ Հայաստանի քաղաքներում կային երկաթի մշակման արհեստանոցներ, դարբնոցներ։ Այս կարգի գործատներ եղել են նաև խոշոր վանքերին կից։ Այդ է պատճառը, որ Մ. Գոշը իր առակներում երկաթագործությունը համարում էր

---

1 Հովհ. Դրասխանակերտցի, էջ 260։

2 Վիմական տարեգիր, էջ 27, հմմտ. Մ. Ուռհայեցի, էջ 103։

3 А. И. Орбели. Каталог Анийского музея древностей, СПБ, 1910, стр. 115.

«հասարակաց» պիտանի և «պատուական» գործը[1]։ Մ. Գոշն իր Դատաստանագրքում ամենից բարձր գնահատում է երկաթագործին և փայտագործին, որոնք օգտակար են հողագործության զարգացման համար։ Երկաթամշակման տեխնիկայի զարգացումը կապված էր ոչ միայն գինագործության, այլև գյուղատնտեսական երկաթյա գործիքների պատրաստման արհեստների զարգացման հետ։ Գյուղատնտեսության, այգեգործության, կուլտուրական բույսերի մշակույթի արվեստը պահանջում էր և հրատապ խնդիր առաջադրում՝ կատարելագործել գյուղատնտեսության գործիքները, իսկ գյուղատնտեսական նոր գործիքների հանդես գալն իր հերթին խթանում էր բերքատվության բարձրացմանը, նպաստում էր հողերի ավելի ինտենսիվ մշակույթին։

Գյուղատնտեսական գործիքների զարգացումը իր հերթին նպաստում է ֆեոդալական տիրույթի աճին։ Ֆեոդալական կալվածքները ավելի ու ավելի ընդարձակվում են գյուղացիական հողերի հաշվին, ֆեոդալական տնտեսությունը համակերպվում է ներքին շուկայական պահանջներին և ձգտում է ավելի շատ արտադրել, արդյունքների մի մասը շուկա դուրս բերելու համար։

Այսպիսով, ֆեոդալական Հայաստանում արտադրության միջոցները նույնպես անցում են զարգացման տարբեր աստիճաններ և պայմանավորում հասարակական-տնտեսական հարաբերությունները։

Հայ հասարակական և քաղաքական կյանքի զարգացման այս տարբեր էտապները ճիշտ պատկերելու և ըմբռնելու համար սկսենք գյուղական համայնքների պատմությունից։

---

[1] Մ. Գոշ, Առակներ, Երևան, 1951, էջ 122։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ

Հայտնի է, որ հայ ժողովրդի, հայ հասարակության սոցիալ-տնտեսական կյանքի, հասարակական և քաղաքական հարաբերությունների պատմության հնագույն շրջանի մասին մենք ազգային մատենագրական սկզբնաղբյուրներ և վկայություններ չունենք։ Հայկական, իսկ մեծամասամբ օտար ծագում ունեցող պատմական սկզբնաղբյուրները հետազոտողին հնարավորություն չեն տալիս Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի պատմության ոչ միայն գիտական շարադրանքի, այլև մոտավոր և ընդհանուր եզրակացությունների համար։ Խիստ ուշագրավ է, որ ոչ միայն նախնական, այլև հետագա, հատկապես ֆեոդալական հարաբերությունների սաղմնավորման և զարգացման շրջանի, պատմական սկզբնաղբյուրներում չեն պահպանվել «համայնք», «համայնքային հողատիրություն» արտահայտող և ոչ մի տերմին։ Այդ է պատճառը, որ հետազոտողի առաջ ստեղծվում են անասելի դժվարություններ հին հայկական գյուղական համայնքի ծագման, զարգացման և քայքայման պատմությունը շարադրելու, հայկական համայնքների առանձնահատկություններն ու զարգացման օրինաչափությունները բացահայտելու համար։

Սկզբնաղբյուրներում պահպանված կողմնակի ցուցումների, լակոնական ասույթների, հնագիտական պեղումների միջոցով հայտնաբերված նյութական կուլտուրայի մնացորդների ուսումնասիրությունը և բաղդատումը ցույց է տալիս, որ Հայկական բարձրավանդակում մեր թվարկությունից առաջ՝ 6—5-րդ դարերում արդեն արմենական-հայկական հասարակությունը ընդգրկվել էր նյութական և սոցիալական ընդգծված շերտավորման ոլորտի մեջ, որի հետևանքով արմենա-հայկական հասարակությունը տրոհված էր մի կողմից հարուստ, ազդեցիկ ավագանու, մյուս կողմից

սարդաս, հարստահարված և շահագործվող խավերի և դասերի մեջ։

Ինչպես աշխատել ենք ցույց տալ վերևում, այս արդեն պատմական այն շրջանն էր, երբ մի կողմից երկրագործության, անասնապահության, այգեգործության, ոռոգման սիստեմի, արհեստագործական արտադրության և պարզ ապրանքափոխանակության զարգացումը, մյուս կողմից աշխատանքի գործիքների և աշխատամիջոցների կատարելագործումը իրենց հերթին խորացնում են նյութական և սոցիալական շերտավորումը և ստեղծում անհետական նախադրյալներ նախնադարյան համայնական կարգերի և տոհմային հարաբերությունների քայքայման համար։ Բայց արտադրողական նոր, համեմատաբար առաջադիմական ուժերի զարգացմանը խիստ կերպով արգելակում էին նախնադարյան համայնական կարգերի կենսունակ արտադրական հարաբերությունները։ Սրանք հանդիսանում էին ուժեղ կապանքներ և արգելակում էին մարդկանց մեջ ծավալվող անհետական գործունեությունն այդ հարաբերություններից դուրս, նրանցից անկախ։ Սակայն նոր, ավելի առաջադիմական արտադրողական ուժերը սիստեմատիկաբար պատռում էին տոհմային կապերն ու հարաբերությունները և նախադրյալներ ստեղծում առանձին անձնավորությունների և առանձին ընտանիքների անհետական գործունեության համար։ Երկրագործության, այգեգործության, անասնապահության և տնային արհեստագործության հետագա զարգացման հիմքի վրա սկզբնական շրջանում տոհմերը արոհվում են առանձին նահապետական մեծ ընտանիքների, իսկ ավելի ուշ շրջանում նահապետական ընտանիքներից անջատվում են անհետական ավելի ու ավելի փոքր բջիջներ, որոնք սեփականություն են դարձնում ոչ միայն արտադրության արդյունքների մի մասը, այլև աշխատամիջոցները։

Արտադրության միջոցների և ապրանքների մասնավոր սեփականությունը առաջ է գալիս որպես այդ միջոցների և առարկաների նկատմամբ առանձին ընտանիքների սեփականություն։ Այս առանձին ընտանիքների ամբողջությունը, նրանց կոլեկտիվ կազմակերպությունը կազմում է գյուղական այն համայնքը, որի հիմքում ընկած են ոչ թե արյունակցական-ազգակցական, այլ տերիտորիալ-անհետական հատկանիշները։

Մարկա-համայնքը ընդգրկում էր բավական զգալի տերիտորիա՝ կազմված «մայր» և «դուստր» գյուղերից[1]։

---

[1] Ф. Энгельс. К истории древних германцев, Партиздат ЦК ВКП(б), 1938, стр. 114.

Կ. Մարքսը Վերա Զասուլիչին գրած իր նամակներից մեկում խիստ տարբերություն է նկատում գյուղական տերիտորիալ և նահապետական համայնքների միջև։

«Ամենից առաջ,— գրել է Մարքսը,— բոլոր, ավելի վաղ նախնադարյան համայնքները հանդչում էին իրենց անդամների արյունակցական կապերի վրա։ Խզելով այդ ուժեղ, բայց նեղ կապը, գյուղական համայնքը ավելի ընդունակ է ընդլայնվելու և դիմանալու օտարների հետ ունեցած շփմանը։

Այնուհետև, գյուղական համայնքում տունը, նրա հարմարանքները (придаток), ծուխը և բակը արդեն հանդիսանում են հողագործի մասնավոր սեփականությունը, մինչդեռ հողագործությունից դեռ շատ առաջ ընդհանուր տունը համայնքի նախնական ձևի նյութական հիմքերից մեկն էր։

Վերջապես, թեև վարելահողը մնում էր համայնական սեփականություն, բայց նա պարբերաբար վերաբաժանվում էր գյուղական համայնքի անդամների մեջ այնպես, որ ամեն մի հողագործ իր հաշվին, իր աշխատանքի միջոցներով մշակում էր իր համար նշանակված դաշտերը և անձամբ յուրացնում էր այդ մշակման պտուղները, մինչդեռ ավելի հին համայնքներում տնտեսությունը վարում էր համատեղ և բաշխվում էին միայն մթերքները»[1]։

Գյուղական համայնքը իր կառուցվածքով, բնույթով, դասային և սոցիալական հարաբերություններով երկակի է։ Մի կողմից դեռ համայնքում պահպանվում էին հանրային, հնավանդ սեփականության թարմ մնացորդները, առանձնապես համատեղ-կոլեկտիվ կերպով օգտագործվում են արոտավայրերը, անտառները, գետերը, լճերը, հողօգտագործման և բաշխման եղանակը հանդիսանում էր համայնքի ընդհանուր սեփականությունը, մյուս կողմից վարելահողը սիստեմատիկաբար վերաբաժանվում էր համայնքի անդամների մեջ այնպես, որ համայնքի յուրաքանչյուր անդամ վարում է արտադրության միջոցների մասնավոր սեփականության հիմքի վրա հիմնված իր անհատական տնտեսությունը։ Ճիշտ է, վարելահողը դեռ չէր հանդիսանում համայնքի առանձին անդամների մասնավոր սեփականությունը, նա տրվում էր ժամանակավորապես օգտագործման համար, և սիստեմատիկաբար վերաբաժանվում էր, սակայն արտադրության միջոցների մասնավոր սեփա-

---

1 Կ. Маркс и Ф. Энгельс, Соч., том XXVII, стр. 680—681, 694—695. К. Маркс, Формы предшествующие капиталистическому производству, 1940, стр. 12.

կանության առկայությունը համայնքի ներսում, արդեն հնարավոր էր դարձել վարելահողից ստացած արդյունքների ոչ թե հանրային, այլ մասնավոր յուրացումը։

Այս երկակիությունը, այսինքն հանրային սեփականության զուգորդումը անհատական արտադրության և հետևհետև աճող մասնավոր սեփականության հետ ի վերջո տանում է համայնքի քայքայմանը։ Մասնավոր սեփականության հանդես գալով սկսվում է գույքային և սոցիալական շերտավորումը իր իսկ համայնքի ներսում։

Այդ է պատճառը, որ Մարքսը երկրագործական համայնքը ամենուր համարում է «արխայիկ հասարակական ֆորմացիայի նոր տիպը...»[1]։

Երկրագործական կամ գյուղական համայնքի քայքայման հետևանքով և այդ հիմքի վրա համայնքից անջատվում են և նրան են հակադրվում տնտեսապես հարուստ և քաղաքականապես ազդեցիկ առանձին ընտանիքներ, առանձին անձնավորություններ, որոնք ստիպանարար ձգտում են ընդարձակելու մասնավոր սեփականությունը, մասնավոր սեփականության վերածել նաև վարելահողը, արոտավայրերը, դաշտերը, գետերն ու լճերը, այն, ինչը համայնական էր, ինչը կազմում էր երկրագործական համայնքի տնտեսական հիմքը։ Այս հիմքի վրա սրվում է դասակարգային պայքարը գյուղական համայնքի և նրա սեփականության նկատմամբ հավակնություն ցուցաբերող առանձին ընտանիքների, առանձին անձնավորությունների միջև։

Տնտեսապես ավելի հզոր և քաղաքականապես իշխող առանձին ընտանիքների և անձնավորությունների հանդես գալը միաժամանակ նշանակում էր, որ գյուղական համայնքների շարքային անդամները զրկվում էին ոչ միայն տնտեսական, այլև մասամբ անձնական կախման վիճակում։ Արտադրողական նոր ուժերի, այս հիմքի վրա մասնավոր սեփականության հետագա զարգացումը, հրամայաբար պահանջ էր առաջադրում տնտեսության մեջ մեծ չափերով օգտագործել օժանդակ բանվորական ձեռքեր, շահագործել ուրիշի աշխատանքը։ Այս բանվորական նոր ուժերը մատակարարում էին ռազմական արշավանքները և անընդհատ կրկնվող պատերազմները։ Տնտեսության մեջ գործադրվող ստրուկների աշխատանքն իր հերթին խորացնում էր նյութական և սոցիալական շերտավորումը իր իսկ համայնքի ներսում, որովհետև ռազմագերի

---

[1] К. Маркс и Ф. Энгельс, Соч., том XXVII, стр. 681.

ատրուկների աշխատանքի շահագործման հետևանքով ավելի հզոր անհատներն ու ընտանիքները կուտակում էին համեմատաբար ավելի մեծ չափերի հասած հարստություն։ Առանձին հարուստ և հզոր ընտանիքները այս պայմաններում տնտեսական և քաղաքական կախման վիճակում են դնում նաև գյուղական համայնքների այն անդամներին, որոնք արդեն կորցրել էին իրենց արտադրության միջոցները և հողակտորները։ Նյութական և սոցիալական այս անհավասարությունն ստեղծեց տնտեսական նախադրյալներ՝ հասարակությունը դասակարգերի բաժանելու համար և հանդես եկան երկու հակամարտ դասակարգեր։

Պատմական հար և նման երևույթ մենք նկատում ենք նաև Հին Հայաստանում։

Հայերի, նրանց զբաղմունքի, հասարակական և քաղաքական կարգերի ու հարաբերությունների, հայկական բարձրավանդակի երկրագործական-տերիտորիալ և տնտեսական կապերի վրա հիմնված գյուղական համայնքների բավականին ընդարձակ նկարագիրը մեզ թողել է Քսենոֆոնը իր՝ «Կիրոպեդիա» և «Անաբասիս» աշխատությունների մեջ։ Համաձայն այդ վկայությունների, արմենհայերը ապրում էին խալդայներից կամ խալուբներից հարավ, Հալիս և Գայլ գետերի ակունքների շրջաններում։

Դարեհ 1-ինն իր Բեհիստունի արձանագրության մեջ (520—519 թթ.— ն. մ. թ.) արձանագրել է, որ Արմինա երկիրը ընդգրկում էր Վանա լճի ավազանը և Տիգրիս գետի վերին հոսանքները, այսինքն Վանի, կամ Ուրարտական պետության հիմնական տերիտորիան։ Այդ մասին վկայում է նաև Հերոդոտը։ Ըստ Հերոդոտի այդ տերիտորիան, ներառյալ նաև Հալիս գետի վերին հոսանքները և Եփրատի հոսանքների մի մասը, կազմում էր Աքեմենյան Պարսկաստանի 13-րդ սատրապությունը, այսինքն պատմական Հայաստանը։

Հայերը, հավանական է, հանդիսացել են այն բազմաթիվ ցեղախմբերից, ցեղային միությունների մեկը, որը Վանի թագավորության հզորության ու վերելքի շրջանում մտել են այդ ռազմաքաղաքական կապերի վրա հիմնված բազմաթիվ ցեղերի բոնի կեցությամբ միավորված, թագավորության կազմի մեջ։

Ուրարտական ցեղային միության կազմում արմեն-հայերը ոչ միայն չեն ձուլվում ուրարտացիների մեջ, ոչ միայն չեն կորցնում իրենց ցեղային առանձնահատկությունները, այլև այնքան են հզորանում, որ Ուրարտուի անկման ժամանակաշրջանում փոխարինում են ուրարտական ցեղային միությանը և վճռական ու ղեկավար դեր

են խաղում ցեղային նոր միավորումների կազմավորման ու ձևավորման գործում։

Վանի-Ուրարտուի թագավորությունը 7—6-րդ դդ. մի կողմից ներքին սոցիալական հակասություններ, մյուս կողմից բազմաթիվ ցեղերի և այդ թվում արմեն-հայերի հաճախակի կրկնվող ապըստամբությունների և օտար պետությունների, ցեղերի ու ժողովուրդների հաճախակի կրկնվող արշավանքների հետևանքով, կործանվեց անվերադարձ կերպով։

Ուրարտուի անկումից հետո, նրա պատմական տերիտորիայում գլխավոր դերը արդեն պատկանում է արմեն-հայերին։ Վանի-Ուրարտուի թագավորության անկումից հետո, արմեն-հայերը ոչ միայն ժառանգում են, այլև կատարելագործում երկրագործական տեխնիկան, հողամշակությունը, կառուցման արվեստը, կուլտուրան։ Արմեն-հայերը պատմության թատերաբեմ են բարձրանում որպես նստակյաց, երկրագործ ցեղեր։

Վանի թագավորության կազմի մեջ մտած երկրները ունեին իրենց կառավարող ամբողջ դինաստիաներ, որոնցից շատերի անունները պահպանվել են հայկական միջնադարյան տոպոնիմիկայում, հատկապես այն մարդերի անուններում, որոնք չափից դուրս կարևոր նշանակություն են ունեցել Հայաստանի քաղաքական կյանքում հայկական պետականության կազմավորման ընթացքում։

Քսենոֆոնը «Կիրոպեդիա»-ում նկարագրում է, որ Կիաքսարի և Կյուրոս Մեծի ժամանակ Արմենիան արդեն առանձին թագավորություն էր և մեդացիներին ու պարսիկներին դաշնակից։ Արմենների թագավորը ապստամբում է Կիաքսարի հայր Աժդահակի դեմ, բայց անհաջողության է մատնվում, հանձն է առնում բանակ չպահել, իր երկրում ամրոցներ չկառուցել, պատերազմի դեպքում զինված ուժերով օգնել Աժդահակին ու հարկեր վճարել նրան։

Բայց երբ մեդացիներն ու բաբելոնացիները երկարատև ու դաժան պայքար են ծավալում Առաջավոր Ասիայում քաղաքական գերիշխանություն ձեռք բերելու համար, արմենների թագավորը օգտվելով այդ բարենպաստ պայմաններից, իրեն անկախ է հայտարարում, հրաժարվում է հարկեր վճարելուց, ամրոցներ է կառուցում, բանակ է պահում։ Պարսկական Կյուրոս թագավորը, դաշնակցած Աժդահակի որդի Կիաքսարի հետ, մտնում է Արմենիա, ստիպում արմենների թագավորին կատարելու Աժդահակի հետ կնքած պայմանագիրը և ահա այս դեպքերի կապակցությամբ Քսենոֆոնը նկարագրում է Արմենիան, արմենների նիստ ու կացը, կենցաղը,

զբաղմունքները, ընտանեկան հարաբերությունները, հասարակական կառուցվածքը, երկրի ներքին կյանքը, զինված ուժերը և այլն։

Քսենոֆոնը ոչ միայն «Կիրոպեդիա»-ում, այլև «Անաբասիս»-ում Արմենիան կոչում է ընդարձակ և բարեկեցիկ երկիր։ Կորդուխների երկիրն անցնելուց հետո, վկայում է նա, հելլենները «կգան Արմենիա, որը մեծ է ու բարեկեցիկ և գտնվում է Օրոնտասի իշխանության տակ»[1]։

«Մեծ ու բարեկեցիկ» Արմենիայի ցեղերը նստակյաց էին ու նրանց մոտ երկրագործությունը գտնվում էր զարգացման համեմատաբար ավելի բարձր աստիճանում, քան նախահայերի մոտ։ Երկրագործությամբ զբաղվում էին ոչ միայն արմենները, այլև Հայկական բարձրավանդակի բնիկ մյուս ցեղերը ևս, առանձնապես արմենների հարևաններ՝ կորդուխները և նույնիսկ խաշնարած խալդայների մի մասը։ Հելլենները անցնելով կորդուխների երկրով հանդիպում են ոչ միայն գյուղերի ու ավանների, այլև «գեղեցիկ տների», որտեղ առատ էին ամեն տեսակի պաշարները, հացահատիկները, պտուղները։

Արմենների և խալդայների մեջ, ըստ Քսենոֆոնի, կար անհաշտ թշնամություն հողի և արոտավայրերի պատճառով։ Խալդայները զրավելով Հայկական բարձրավանդակի արոտներով հարուստ լեռնային մասերը, զրկել էին արմենիներին այդ արոտավայրերի օգտագործման հնարավորությունից, իսկ արմենները զրավելով արդավանդ դաշտերը, խալդայներին քշել էին լեռները և նրանց «հույժ աղքատության» մեջ դրել։

Քսենոֆոնի հաղորդած տեղեկությունները արմենների նստակյաց կյանքի և երկրագործության մասին այնքան ուշագրավ են ու խիստ հետաքրքրական, որ մենք ավելորդ չենք համարում վկայակոչել այն՝ հատվածաբար։

«Իսկ խալդայները եկան և խնդրեցին Կյուրոսին, որ իրենց հետ հաշտություն կնքե։ Եվ Կյուրոսը հարցրեց նրանց. «Արդյոք ճիշտ չէ՞, ո՞վ խալդայներ, որ դուք այժմ նրա համար եք խաղաղություն ցանկանում, որովհետև կարծում եք, որ ավելի անվտանգ կարելի է ապրել խաղաղության դեպքում, քան պատերազմի, քանի որ մեր ձեռքն են գտնվում բարձունքները։ Խալդայները դրական պատասխան տվին։ Եվ նա ասաց՝ «Ի՞նչ կասեք, եթե խաղաղության պատ-

---

1 Քսենոֆոն. Անաբասիս, հատ. 1, գիրք 3, գլ. 5, 16—17 (տե՛ս Հ. Մանանդյան, Քննական տեսություն, հատ. I, էջ 381)։

Ճառով դուք սատանաք և այլ բարիքներ»։ «Ավելի ևս,— ասացին,— կուրախանանք»։ «Արդ Ճիշտ չէ՞,— ասաց Կյուրոսը, որ դուք այժմ աղքատ եք, ինչպես ինքներդ գիտեք, լավ հողերի կարիք ունենալու պատճառով»։ Նրանք հաստատեցին և այդ։ «Արդյոք չէի՞ք ցանկանալ,— ասաց Կյուրոսը,— որ դուք ևս վճարեիք նույնը, ինչ որ մյուս Արմենները, և թույլատրություն սատանայիք մշակելու Արմենիայի հողերը, որքան որ կամենայիք»։ «Եթե մենք հավատացած լինեինք,— ասացին խալդայները,— որ նրանք մեզ չեն նեղացնելու»։ «Իսկ դու, ո՞վ Արմենների թագավոր,— ասաց Կյուրոսը,— չէի՞ր ցանկա. ր որ քո այժմյան անմշակ հողերը դառնային պտղաբեր, եթե մշակողները համաձայնեին վճարել քեզ մոտ ընդունված տուրքերը»։ «Այդ,— ասաց Արմենների թագավորը,— շատ մեծ արժեք կունենար, որովհետև խիստ կավելանար եկամուտը»։

«Իսկ դուք,— ո՞վ խալդայներ,— որ լավ սարեր ունեք, արդյոք չէիք թույլ տա, որ Արմեններն օգտվեն նրանցից իրրև արոտատեղերից, եթե արածացնողները ձեզ համաձայնեն վճարել արդար տուրք»։ «Մեծ օգուտ կստանայինք,— ասացին խալդայները,— առանց աշխատելու»։ «Իսկ դու,— ասաց Կյուրոսը,— ո՞վ Արմենների թագավոր, արդյոք չէի՞ր ցանկա օգտվել այս արոտներից, եթե խալդայներին մի փոքր օգուտ տալով՝ ինքդ ավելի մեծ օգուտ ստանայիր»։ «Իհարկե կցանկայի,— ասաց Արմենների թագավորը,— եթե գիտենայի, որ կարելի է անվտանգ կերպով արոտներից օգտվել»[1]։

Այս ընդարձակ հատվածը ցույց է տալիս, որ հողը և արոտավայրերը հանդիսանում էին Հայկական բարձրավանդակի բնակիչների ապրուստի գլխավոր աղբյուրը և հողագործ ու անասնապահ ցեղերի պայքարի հիմնական օբյեկտը։

Խալդայների աղքատությունն պատճառը լավ, արգավանդ հողերի բացակայությունն էր, այն հողերի, որոնք զտնվում էին երկրագործ ու նստակյաց արմենների ձեռքում։ Հողը և արոտավայրը օգտագործողը պարտավոր էր հարկեր և տուրքեր վճարել և այն էլ որոշված քանակով։

Քսենոֆոնի վկայությամբ Արմենիայում արդեն առկա էր արտադրության միջոցների և սպառման առարկաների մասնավոր սեփականություն, կամ ավելի Ճիշտ, հանդես էր եկել այդ առարկա-

---

[1] Քսենոֆոն, *Կիրոպեդիա*, հատված 7, գիրք 3, գլուխ 18, 19, 20 (տե՛ս Հ. Մանանդյան, *Քննական տեսություն...*, հատ. 1, էջ 409—410։ (Հետագա համապատասխան մեջբերումները կատարում ենք սույն աշխատությունից)։

ների ու աշխատանքի միջոցների նկատմամբ առանձին ընտանիքների սեփականությունը։ Այդ առանձին ընտանիքների ամբողջությունը, նրանց կոլեկտիվ կազմակերպությունը կազմում էր գյուղական այն համայնքը, որի հիմքում ընկած էին արդեն տերիտորիալ հատկանիշները։

Բսենոֆոնը վկայում է, որ Արևելյան Արմենիայի տները «զետնափոր էին, մուտքը ջրհորի բերանի նման, իսկ ներքևն ընդարձակ... տների մեջ կային այծեր, ոչխարներ, եզներ, հավեր... Բոլոր կենդանիները կերակրվում էին ներսում խոտով»[1]։

Ուրեմն, ոչ միայն տներն էին մասնավոր սեփականություն, այլև անասունները, գյուղատնտեսական մթերքները։ Առանձին ընտանիքներ ունեին ցորեն, գարի, ընդեղեններ, կարասներում գարուց պատրաստված ոգելից խմիչքներ, զանազան տեսակի գինիներ, արմենները մշակում էին ձիթայուղ, խոզի ճարպ, կնճիթ, դառն նշի, բեվեկնի, անուշահոտ յուղեր, չամիչ և ամեն տեսակի ուտելիք։ Ընդեղեններ, ձեթ, գինի, չամիչ պատրաստելուն Ֆ. Էնգելսը տալիս է շատ մեծ նշանակություն։

«Հարստությունը,— գրում է Ֆ. Էնգելսը,— աճում էր արագությամբ բայց իբրև անհատների հարստություն, ոստայնանկությունը, մետաղամշակությունը, և հետզհետե միմյանցից առանձնացող մյուս արհեստներն ավելի ու ավելի բազմատեսակություն ու ճարտարություն էին ծավալում շինվածքների արտադրության մեջ...։ Միևնույն անհատն այդպիսի բազմազան գործունեություն այլևս չէր կարող ծավալել, կատարվեց աշխատանքի երկրորդ խոշոր բաժանումը. արհեստը բաժանվեց երկրագործությունից»[2]։

Ինչպես նկատելի է, արմենները միայն երկրագործներ չէին։ Երկրագործության հետ միաժամանակ Արմենիայում զարգացած էր այգեգործությունը, տեխնիկական կուլտուրաների մշակույթը։ Այգեգործությունից և երկրագործությունից ստացած բերքը մշակվում էր, և, ինչպես քիչ հետո կտեսնենք, նրանց մի զգալի մասը փոխանակվում։ Արմենները օգտագործում էին երկաթյա խոփերով դութաններ, կամեր, աղորիքներ, գյուղատնտեսական գործիքներ։

Երկրագործության, տեխնիկական կուլտուրաների ու այգեգործության հետ միասին արմենների զբաղմունքի գլխավոր ճյուղն էր նաև անասնապահությունը։ Նահանջող հելլենները արմենական գյուղերում բռնագրավում են ոչխարներ, խոզեր, կովեր, այծեր,

---

1 Հ. Մանանդյան, Քննական տեսություն..., հատ. 1, էջ 390։

2 Ֆ. Էնգելս, Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, էջ 215 (ընդգծումը մերն է—Ս. Հ.)։

ձիեր, հորթեր, ընտանի թռչուններ։ Անասնապահության բնագավառում խոշոր տեղ էին գրավում եզները ու ձիերը, որոնց օգտագործում էին որպես քաշող ուժ։ Անասունները ոչ միայն տալիս էին կաթ, միս, այլև կաշի, որից պատրաստում էին «գեղջկական ոտնամաններ»[1]։

Աշխատանքի հասարակական առաջին կամ պարզ բաժանման հետևանքով, ինչպես նշում է Ֆ. Էնգելսը, «հովվական ցեղերը բաժանվեցին բարբարոսական ցեղերի մնացած մասից»։ Սակայն մասնավոր սեփականության և անհատական հարստության զարգացման հետևանքով, կատարվում է աշխատանքի հասարակական երկրորդ բաժանումը։

Աշխատանքի հասարակական երկրորդ բաժանման սաղմերը մենք նկատում ենք Արմենիայում։

Կյուրոսը գրավելով խալդայների լեռները, որոշում է ամրոցներ կառուցել և հրամայում է արմենների թագավորի որդի Տիգրանին, «մարդ ուղարկել հոր մոտ և հայտնել, որ նա գա ու բերի իր հետ ճյուսներ ու քարագործներ, որոնք կլինեն»[2]։

Արմենների թագավորը ստանալով այդ հրամանը, հավաքում է բոլորին՝ «ճյուսներին և ուրիշներին, որոնք կարծում էր, որ պետք կլինեն և եկավ անհապաղ Կյուրոսի մոտ»[3]։

Արհեստների, արհեստավորական դասի մասին կողմնակի վկայություններ են պահպանվել Քսենոֆոնի «Անաբասիս»-ի մեջ և Ստրաբոնի մոտ։

Հելլենները գրավելով Տրեբիզոնի վրանը, բռնագրավում են «նրա մեջ արծաթի ոսկերով զարդարված գոտիները և ըմպանակները, բռնվեցին նույնպես հացագործներն ու մատուռակները...»[4]։

Ստրաբոնը կորդուխներին անվանում է «նշանավոր ճարտարապետներ, կառուցող վարպետներ, ռազմական և ճարտար քաղաքների ու բերդերի պաշարման աշխատանքներում»[5]։

Արհեստներից հատկապես զարգացած էր քարակոփությունը, որմնադրությունը, գինեգործությունը, կաշեգործությունը։ Պատմական աղբյուրները պահպանել են բազմաթիվ վկայություններ արմենների զենքերի բազմաթիվ տեսակների, տնային կահ-կարասիների մասին։ Արմենական շրջանից հայտնաբերված նյութական

---

[1] Հ. Մանանդյան, Քննական տեսություն..., հատ. 1, էջ 388—389։

[2] Նույն տեղում, էջ 408 (ընդգծումները մերն են—Ս. Հ.)։

[3] Նույն տեղում։

[4] Նույն տեղում, էջ 386։

[5] Ստրաբոն, գիրք 16, գլ. 1, 24։

կուլտուրայի շատ հուշարձաններ նույնպես խոսում են այն մասին, որ այդ բոլորը պետք է որ պատրաստվեին հմուտ արհեստավորների ձեռքով։ Անկասկած է, որ արհեստային արտադրությունը, քննարկված էպոխայում, կլոում էր դեռ պրիմիտիվ բնույթ, արտադրում էր ոչ թե շուկայի, այլ սպառողական կարիքների համար, սակայն վերոհիշյալ փաստերը արդեն խոսում են այն մասին, որ՝ արհեստային արտադրությունը, ճիշտ է, շատ աննշան կերպով, բայց արդեն սահմանադծվում էր երկրագործությունից իսկ այդ փաստն ինքնին խոսում է այն մասին, որ արդեն սկսվել էր նյութական և դասային թույլ շերտավորում։

Մասնավոր սեփականության, անասնապահության և թույլ կերպով արհեստային արտադրության աճը նպաստում էր նաև ներքին և արտաքին առևտրի զարգացմանը։

Արմենները ծանոթ էին նաև արտաքին առևտրական ուղիներին։ Քսենոֆոնի վկայությամբ, «հետևյալ օրը Կյուրոսը ուղարկեց դեսպան (Հնդկաստանի թագավորի մոտ)... Արմենների թագավորը և խալդայները դեսպանի հետ ուղարկեցին նաև իրենց մարդկանց...»[1]։

Աղբյուրներում կան մի շարք ցուցումներ նաև ներքին առևտրի մասին։ Կյուրոսը մոտենալով Արմենիայի սահմաններին, լրտեսական մի ջոկատ, առևտրականների ծածկանվան տակ, ուղարկում է երկրի խորքերը, հրամայելով. «ոչ ոքի հետ անարդար չվարվեն. և եթե Արմեններից որևէ մեկը հանդիպի՝ հայտնեն, որ անհանգիստ չլինեն, և ասեն, որ ցանկացողները ծախու ապրանքները բերեն ուր որ իրենք են գտնվելու, եթե նրանք կամենում են ծախել կամ ուտելիք և կամ խմիչք»[2]։

Այս վկայությունն այլևս կասկած չի հարուցում, որ արմենների մոտ առկա էր ինչպես ապրանքափոխանակությունը, այնպես էլ պարզ առևտուրը։

Քննարկված այս ժամանակաշրջանում մենք վկայություններ ունենք փողի, փողային շրջանառության մասին, այն մասին, որ արմեն ռազմա-հողատեր ավագանին, թագավորը, նրա կինն ու որդիները ունեին դրամական հսկայական հարստություն։

---

[1] Քսենոֆոն, Կիրոպեդիա, հատված 8, գիրք 3, գլ. 2։ Ինչպես համոզեցուցիչ կերպով ցույց է տվել ակադ. Հ. Մանանդյանը Քսենոֆոնի մոտ հիշատակված «հնդիկների երկիրը» իրապես Սինդերի երկիրն էր, որը գտնվում էր այժմյան Անապայի շրջանում (տե՛ս Հին Հայաստանի և Անդրկովկասի պատմության մի քանի պրոբլեմների մասին, Երևան, 1944, էջ 26—29)։

[2] Նույն տեղում, հատ. 3, գիրք 2, գլ. 32։

Երբ Կյուրոսը խալդայների լեռներից իջնում է արմենների հարթավայրը, նրան ընդառաջ է ելնում արմենների թագավորի կինը, Կյուրոսին «նվեր» մատուցելու համար։ Այդ նվերների թվում կային թանկագին իրեր և դրամ, Կյուրոսը հրաժարվելով «նվերներից», ասում է. «...տիկին, առ այդ փողը, որ բերում ես, և դնա, ու այլևս մի տար Արմենների թագավորին, որ նա այդ գետնի մեջ թաղե։ Դու ուղարկիր որդուդ զորքի մեջ ու նրանցով (դրամով) ամենագեղեցիկ կերպով նրան զարդարիր, իսկ մնացածով քեզ, ամուսնուդ, դուստրերիդ և որդիներիդ համար գնիր այնպիսի բաներ, ինչ որ ձեզ բերելով և ինչով որ զարդարվելով՝ ձեր կյանքը կանցկացնեք ավելի գեղեցիկ ու ավելի ուրախ կերպով»[1]։

Արմենների թագավորն ուներ դրամական հսկայական հարստություն։ «Եվ այս իմացիր, ով Կյուրոս,— ասում է արմենների թագավորը,— որ ես որպեսզի կարողանայի գնել խալդայներին այս գագաթներից, շատ ավելի փող եմ տվել, քան դու ստացել ես այժմ ինձանից»[2]։

Արմենների թագավորն, ըստ տակդ. Հ. Մանանդյանի հաշվումների, ուներ հսկայական կարողություն և դրամ։

«Իմ կարողությունը,— ասում է արմենների թագավորը,— այն հարստությունների հետ միասին, որ թողել է իմ հայրը, հաշվելով արծաթ դրամով, ավելի է, քան երեք հազար տաղանդ»[3]։

«Ընդունելով,— մեկնաբանում է այս վկայությունը Հ. Մանանդյանը,— բաբելոնական—պարսկական տաղանդի արծաթի կշիռը մոտ 32 կգ. 640 գ արմենների թագավորի հարստությունը իր կշռով հավասար կլինի 3000×32,640=97,920 կգ. արծաթ դրամի։ Իսկ եթե արծաթի և ոսկու հարաբերությունը ենթադրենք այդ ժամանակ 1:10, որ հավանական է, այդ հարստության դրամական արժեքը համապատասխան կլինի մոտ 12 միլիոն. ոսկի ռուբլու»[4]։

Արհեստների, ներքին և արտաքին առևտրի զարգացումը, բնականաբար, պետք է որ տաներ քաղաքների և քաղաքային կյանքի զարգացմանը։

Դժբախտաբար, Քսենոֆոնի վկայությունները վերաբերվում են միայն Արևելյան Արմենիային, որտեղ նա ոչ մի քաղաք, ինչպես ինքն է վկայում, չի տեսել։ Սակայն նրա մի անուղղակի վկայու-

---

[1] Քսենոֆոն, Կիրոպեդիա, հատ. 8, գիրք 3, գլ. 3։

[2] Նույն տեղում, հատ. 7, գիրք 3, գլ. 17։

[3] Նույն տեղում, հատ. 5, գիրք 3, գլ. 33։

[4] Հ. Մանանդյան, Քննական տեսություն..., հատ. I, էջ 38—39, (ծանոթ. 1)։

թյունը խոսում է այն մասին, որ արմենները անծանոթ չէին նաև քաղաքային կյանքին։ Քսենոֆոնը վկայում է, որ կար «մեծ, հարուստ և բազմամարդ Գյումնիաս»[1] քաղաքը։

Ակադեմիկոս Մանանդյանը Գյումնիաս քաղաքը տեղադրում է ժամանակակից Գյումրի (Լենինական) քաղաքի տեղը։ Եթե նույնիսկ Գյումնիաս քաղաքի տեղադրությունը չհամընկնի ներկա Լենինականի տեղի հետ, մի բան պարզ է, որ Արմենիայում գոյություն է ունեցել մեծ, հարուստ և բազմամարդ քաղաք։ Հասկանալի է, որ քաղաքները, քաղաքային կյանքը, ներքին և արտաքին առևտուրը, արհեստները և արհեստային արտադրությունը պատմական այս էպոխայում Արմենիայի տնտեսական կյանքում վճռական ու գերիշխող դեր չէին խաղում։ Քննարկված էպոխայում քաղաք-ամրոցը հանդիսանում էր իշխող դասերի պետական և վարչական կենտրոնը։ Քաղաքային տնտեսությունը նատուրալ էր, բնակչության գլխավոր զբաղմունքը ոչ թե առևտուրն ու արհեստային արտադրությունն էր, այլ երկրագործությունն ու անասնապահությունը։

Քաղաքային արտադրությունը դեռ մնում էր գոյության միջոցների անմիջական արտադրության ասպարեզում և այդ էր գլխավոր պատճառը, որ այն չկարողացավ ճեղքվածքներ առաջացնել արտադրության հին եղանակի մեջ։

Ինչպես նկատելի է, նատուրալ տնտեսությունը պատմական այս ժամանակաշրջանում տվել էր ճեղքվածքներ, ենթարկվել էր փոփոխությունների։ Տնտեսական այդ հիմքի վրա էլ Արմենիայում նկատվում է դասային ընդգծված շերտավորում։

Քսենոֆոնը «Անաբասիս»-ում և «Կիրոպեդիա»-ում խոսում է գյուղացիների, ծառաների, ջրկիրների, փայտակիրների, ստրուկների, գյուղապետների, գեղջավագների, երևելի կամ պատվավոր արմենների, իշխանների, զորապետների, հասարակ զինվորների, թագավորի, սրա որդիների ու կանանց, նյութական և սոցիալական տարբերությունների ու անհավասարության մասին։

Արմենիայում պետության գլուխ կանգնած էր թագավորը, որը միասնական կառավարիչն էր, երկրի ամենահարուստը և ազդեցիկ անձը։ Թագավորի հարստությունը ժառանգական էր։ Ինչպես նա էր ժառանգել իր հոր հարստությունը, այնպես էլ նրա որդի Տիգրանը պետք է ժառանգեր հոր կարողությունը։

Բացի թագավորից, հիշատակվում է նաև առանձին իշխանների մասին, որոնք կառավարում էին երկրի տարբեր մասերը և ենթակա էին թագավորի գերիշխանությանը։

---

[1] Հ. Մանանդյան, Քննական տեսություն..., հատ. I, էջ 61։

Դիմելով արմենների թագավորին, Կյուրոսը հարցնում է. «Եթե մի իշխանավոր ունենաս և նա հանցանք գործե՝ արդյո՞ք թույլ կտաս, որ նա իշխե, թե նրա փոխարեն կնշանակես մեկ ուրիշին»։ «Կնշանակեմ մեկ ուրիշին»։ «Արդ՝ ինչպե՞ս կվարվես, եթե նա շատ դրամ ունենա, թույլ կտա՞ս որ հարստանա՞, թե նրան չքավոր կդարձնես»։ «Եթե դրամ ունենա... կառնեմ»[1]։

Այս վկայությունները ցույց են տալիս, որ արմենների թագավորը ոչ միայն նշանակում և հեռացնում էր «իշխաններին», այլև տնօրինում էր նրանց կյանքն ու հարստությունը։

Պատմական այս շրջանում համայնական սեփականության կողքին նկատելի չափով աճում էր մասնավոր սեփականությունը։ Ինչպես ցույց տրվեց վերևում, հսկայական հարստություն ունեին իշխող դասերը, թագավորը, նրա ընտանիքը։ Սակայն Քսենոֆոնը պահպանել է նաև կողմնակի վկայություններ արմենների մասնավոր սեփականության մասին։

Կյուրոսի Հայաստանի սահմաններին մոտենալու լուրն առնելուն պես Արմենիայի թագավորն իր կրտսեր որդի Սաբարիսին ուղարկում է լեռները, նրա հետ միասին ուղարկում է «զարդեր և ամենաարժեքավոր կահկարասիք»։ Երբ «արմենները տեսան, որ նա այդպես է անում, նրանք ևս բոլորը փախան իրենց տները և ուղեցին հեռու տեղ տանել և իրենց գույքը»[2]։ Մի այլ կապակցությամբ Քսենոֆոնը վկայում է, որ «երբ Կյուրոսը իջավ մարդաբնակ շրջանը՝ Արմենների ոչ ոք չմնաց տանը... այլ բոլորը, տուրախ լինելով խաղաղության վրա՝ դիմավորեցին նրան, իրենց հետ բերելով այն, ինչ որ ամեն մեկն ուներ ու համարում էր թանկարժեք»[3]։

Այս ուշագրավ վկայությունները ցույց են տալիս, որ արմենների մոտ նյութական և սոցիալական շերտավորումը հասարակական կյանքի նորմալ երևույթ էր։ Այստեղ մենք գործ ունենք մասնավոր սեփականության, անհատական կայքի և գույքի հետ, որը անցնում էր ժառանգաբար։ Արդեն հարստությունը կուտակվում էր առանձին ընտանիքների, առանձին անհատների մոտ։ Գույքային այդ անհավասարությունը «հակադարձ ազդեցություն էր անում հասարակական կառուցվածքի վրա՝ ժառանգական ազնվականության

---

[1] Քսենոֆոն. Կիրոպեդիա, հատ. 4, գիրք 3, գլ. 12։

[2] Նույն տեղում, հատ. 4, գիրք 3, գլ. 3։

[3] Նույն տեղում, հատ. 8, գիրք 3, գլ. 2։

ու թագավորական իշխանության առաջին սկզբնավորությունների դրսևորման միջոցով»[1]։

Արմենների թագավորի, իշխանների, «երևելի» և «պատվավոր» արմենների հարստության և եկամտի աղբյուրները ոչ միայն հանդիսանում էին պատերազմը և ավարառությունը, այլև հպատակներից և դյուղական համայնքներից հավաքած հարկերը։ Արմենները հարկեր էին վճարում ոչ միայն սելիական իշխող դասերին, այլև Մարաստանին և Պարսկաստանին։ Քսենոֆոնը վկայում է, որ Կիաքսարին դաշնակից և հպատակ արմենների թագավորը նկատելով, որ նրա վրա հարձակվել են թշնամիները, ոչ զորք է ուղարկում և ոչ էլ «ոnուrք վճարում»։ Արմենիան Մարաստանին տարեկան վճարել է 200—400 հազար ոսկե ռուբլու արժողությամբ հարկ։

Հերոդոտը Պարսկաստանի հարկատուների թվում հիշատակում է Արմենիան։

«Պակտյուիկեից, արմեններից և նրանց հարևաններից մինչև Եվքսինյան ծովը,— վկայում է Հերոդոտը,— [Պարսկաստանը հարկ էր ստանում] 400 տաղանդ, 13-րդ շրջանն էր այս»[2]։

Մատնանշված այս հարկը, ընդունելով պարսկական տաղանդի արծաթի կշիռը մոտ 32 կիլ. 640 գր. այժմյան կշռով հավասար կլինի մոտ 13,056 կիլոգրամ արծաթ դրամի...։ Ուրեմն 400 տաղանդ հարկը հավասար կլինի մոտ 2.419.200 ոսկի մարկի, կամ 1.209.600 ոսկի ռուբլու[3]։

Բացի դրամական հարկից, Արմենիան Պարսկաստանին տարեկան հարկ էր ուղարկում 20.000 ձի։

Առանձնապես ուշագրավ են անտիկ հեղինակների վկայություններն արմենների զինված ուժերի, թագավորական դրուժինայի, բանակի շերտավորման և զենքերի ու նրանց տեսակների մասին։

Արմենիան, ըստ Քսենոֆոնի, ուներ ութ հազար հեծելազոր և քառասուն հազար հետևակ։ Հայկական բանակի այդ քանակն, անշան փոփոխություններով, մնում է նաև հետագա դարերում, նույնիսկ Արշակունիների օրոք։ Ագաթանգեղոսը վկայում է, որ Տրդատ թագավորն ուներ 70 հազարանոց բանակ, այդքան զորք ուներ նրա որդի Խոսրովը։ Տրդատը, գրում է Ագաթանգեղոսը, «բազում մեծամեծօք, և եօթանասուն հազարաւ ընտիր զօրու հանդերձ՝ խաղայր

---

[1] Ֆ. Էնգելս, Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, էջ 142։

[2] Հերոդոտ, գիրք 3, գլ. 93։

[3] Հ. Մանանդյան, Քննական տեսություն..., հատ. 1, էջ 55։

դնայր Այլարարատ գաւառէ ի Վաղարշապատ քաղաքէ՝ անցանել ի սահմանս Յունաց»[1]։

Փավստոսը նույնպես վկայում է, որ Վասակ Մամիկոնյանը ուներ «ընդ ձեռամբն... արք գործոց իրրև վաթսուն հազար, ընտիրք և պատերազմողք»[2]։

Եղիշեն և Ղ. Փարպեցին նույնպես տալիս են Վարդան և Վահան Մամիկոնյանների բանակի քանակը՝ 60—70 հազար[3]։

Արմենները, ըստ Բսենոֆոնի, զինված էին տեգերով, աղեղներով, կացիններով, գործ էին ածում նետեր, նիզակներ, կրում էին վահաններ, առանձնապես բանակում աչքի էին ընկնում համարձակ նետաձիգները, կային նաև ծանրաղեն մարտիկներ։ Բանակը կազմված էր ա) վարձու զինվորներից, բ) թագավորական գրուժինայից և գ) աշխարհազորից։

Արմենական բանակում ծառայում էին խալդայները։ «Խալդայները,— վկայում է Քսենոֆոնը,— կամ թալանով էին զբաղվում կամ ծառայում էին վարձով»։

Բանակում կային դամակազինվորներ։ «Ես,— ասում է Տիգրանը, դիմելով Կյուրոսին,— քեզանից չեմ բաժանվի եթե անգամ ծառայեմ բանակում որպես դամակազինվոր»։ Բանակի զինվորները ոչ միայն տարբերվում էին իրենց սոցիալական կացությամբ, այլև արտաքին տեսքով։ Կյուրոսը դիմելով արմենների թագավորի ինոջը՝ ասում է «առ այս փողերը և նրանցով գնիր ու ամենագեղեցիկ կերպով զարդարիր որդուդ և նրան զորքի մեջ ուղարկիր»։

Զորքի այս մեծ թիվը, նրա զինվածության աստիճանը և դասային շերտավորումը մեզ մեկ ավելորդ անգամ կռվաններ են տալիս եզրակացնել, որ այդ բանակը չէր կարող տոհմային կարգերի բանակ լինել. նա ավելին էր, քան մենք կարծել ենք։

Պատմական այս ժամանակաշրջանում աշխատանքի հասարակական բաժանման խորացման հետևանքով, երկրի էկոնոմիկայում տեղի էին ունենում կարևոր փոփոխություններ և տեղաշարժեր։ Արդեն արհեստային արտադրությունը նշաններ էր ցուցաբերում գյուղատնտեսությունից սահմանագծվելու, ճիշտ է աննկատելի, բայց արդեն սկսել էին հանդես գալ քաղաքներ, քաղաքային կյանքը, ներքին և արտաքին առևտուրը. տնտեսական այս հիմքի

---

[1] Ագաթանգեղոս, էջ 441։

[2] Փ. Բուզանդ, էջ 121։

[3] Եղիշե, էջ 123, 130։

վրա խորանում էր նյութական և սոցիալական ընդգծված շերտավորումը։

Անկասկած է, որ հայ հասարակության տնտեսական և քաղաքական կյանքում տեղի ունեցած այս լուրջ տեղաշարժերը և փոփոխությունները հանդես եկան ոչ միայն երկրի էկոնոմիկայում, այլև անմիջական արտադրողի՝ գյուղացու սոցիալական կյանքում։

Կ. Մարքսը անդրադառնալով այս կարևոր պրոբլեմին, գրել է.

«Վերարտադրության իր իսկ ակտում փոխվում են ոչ միայն օբյեկտիվ պայմանները, այնպես որ, օրինակ, գյուղը դառնում է քաղաք, անտառներից մաքրված թավուտը՝ դաշտ և այլն, այլև իրենք արտադրողներն էլ փոփոխվում, իրենց մեջ մշակում են նոր որակ, արտադրության շնորհիվ աճում, վերափոխվում են, ստեղծում են նոր ուժեր և նոր պատկերացումներ, շփման նոր ձևեր, նոր կարիքներ և լեզու»[1]։

Հայկական բարձրավանդակում արդեն քայքայման պրոցես էին ապրում տոհմային կարգն ու տոհմատիրական հարաբերությունները։ Նախնադարյան համայնական և տոհմային կարգերի ու հարաբերությունների քայքայման հիմքի վրա տարրալուծվում էին նախկին ցեղային միությունները ու խմբակցությունները, արոհվում էին ազգակցական-արյունակցական կապերը և հանդես էին գալիս տերիտորիալ-տնտեսական կապերի վրա խարսխված նոր միություններ և միավորումներ։ Արյունակցական-ազգակցական կապերին փոխարինելու էին գալիս տերիտորիալ-տնտեսական կապերն ու հարաբերությունները, հավասարության փոխարեն՝ նյութական և սոցիալական անհավասարությունը, հանրային սեփականության փոխարեն՝ մասնավոր սեփականությունը։ Ստեղծվում էին սոցիալ-տնտեսական այն նախադրյալները, որոնց հիմքի վրա հետագա դարերի ընթացքում բարձրացան քաղաքական և պետական իշխանության նոր ձևեր ու հաստատություններ։

Նյութական և սոցիալական շերտավորման պայմաններում էլ տոհմային կարգերն ու հարաբերություններն արտահայտող սոցիալական մի շարք տերմինները իրենց գոյությունը պահպանեցին հետագա դարերի ընթացքում, սակայն հասարակական նոր հարաբերությունների պայմաններում նրանք ստացան այլ իմաստ և բովանդակություն։

Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունները արտահայտող «աղխ», «տոհմ», «տուն», «ազգ», «աղն» և տոհմային

---

1 К. Маркс, Формы предшествующие капиталистическому производству, стр. 28.

կարգերից եկած մի շարք այլ տերմինների սոցիալական իմաստի բացահայտման լուրջ փորձեր կատարեց Ի. Ա. Ջավախովը։ Հեղինակը հայկական և վրացական պատմական աղբյուրներում պահպանված վկայությունների ուսումնասիրության և բաղդատման հիման վրա ոչ միայն ստուգաբանեց հին վրացական և հայկական տնտեսական, սոցիալական և դասային հարաբերություններ արտահայտող տերմինների իմաստն ու նշանակությունը, այլև բնութագրեց այդ երկու ժողովուրդների հասարակական-քաղաքական կարգերը։

Այս իմաստով Ի. Ա. Ջավախովն իրավամբ հանդիսացավ առաջին հետազոտողը, որը հարցերի քննարկմանը մոտեցավ սոցիոլոգիական տեսանկյունով։ Ջարգացնելով այն ճիշտ դրույթը, որ տոհմային կարգերի և հարաբերությունների քայքայման հետևանքով հանդես են գալիս առաջին դասային շերտավորումները և պետական-քաղաքական միավորումները, ակադ. Ի. Ջավախովն, իհարկե սխալվում էր, երբ ամեն կերպ աշխատում էր ապացուցել, որ նոր ձևավորվող պետական ու քաղաքական միավորումները ոչ այլ ինչ են, եթե «բաղմաթիվ տոհմերի» մեխանիկական միակցություն։ Ակադ. Ի. Ջավախովն իր ուշադրության կենտրոնում դրեց միայն տոհմային հարաբերություններից պետականությանն անցնելու պրոբլեմի ուսումնասիրությունը։ Հեղինակի կարծիքով տոհմային-արյունակցական կապերն ու հարաբերությունները ոչ միայն հանդիսացել են Հին Վրաստանի ու Հայաստանի թագավորական իշխանության, այլև այդ երկու երկրների տնտեսական ու սոցիալական կարգերի հիմքերը։

Վկայակոչելով Ստրաբոնի հայտնի տեղեկությունները Հին Վրաստանի դասերի մասին, հեղինակը գրել է. «Ստրաբոնի նկարագրությունից պարզ կերպով երևում է, որ մեր էրայի առաջին դարի սկզբներին Վրաստանում մասնավոր սեփականություն դեռ գոյություն չուներ, կարողությունները հանդիսանում էին ընդհանուր համայնական սեփականություն... Այսպիսով տոհմը իրենից ներկայացնում է այն ժամանակվա վրացական հասարակության սոցիալական կարգերի հիմքը»[1]։

Ոչ միայն տոհմը հանդիսացել է վրացական հասարակության սոցիալական կյանքի հիմքը, այլև «Վրաստանում թագավորական իշխանությունը կազմված էր յուրաքանչյուր առանձին տոհմի ավա-

---

1 И. Джавахов, Государственный строй древней Грузии и древней Армении, стр. 9 (ընդգծումը հեղինակինն է.—Ս. Հ.)։

գության իշխանության նմանությամբ»։ Տոհմը, շարունակում է հեղինակը, «հանդիսանում էր սոցիալական բաժանվածության ամենից հիմնական միավորը, կարողությունները հանդիսանում էին ընդհանուր և կառավարվում էին ամբողջ տոհմի ամենից ավագ անդամի կողմից և տոհմն ապրում էր որպես մեկ ընտանիք... սոցիալական կյանքի ընդհանրությամբ, հետևաբար, ընտանիք, տուն... պետք է հասկանալ տոհմ, տոհմային ընտանիք, տոհմային տուն»[1]։ Այնուհետև զարգացնելով իր այս դրույթը, Ի. Ջավախովը եզրակացնում է, որ տոհմային կարգը հանդիսանում էր ոչ միայն Վրաստանի սոցիալական, այլև պետական կարգի հիմքը[2]։

Այսպիսով, հեղինակը Վրաստանի հասարակական և սոցիալական ու պետական կարգերի սկզբնական ելակետը համարել է տոհմը, տոհմային կապերն ու հարաբերությունները։ Այդ տոհմային կապերն իրենց հետագա զարգացման պրոցեսում մեխանիկորեն միավորվում և ձևավորվում են որպես պետականություն։

Իր այս դրույթն ապացուցելու համար Ի. Ջավախովը վկայակոչում է ինչպես վրացական, հունական, այնպես էլ հայկական մի շարք սկզբնաղբյուրներ։

Վկայակոչելով Ստրաբոնի հաղորդած տեղեկությունները Վրաստանի դասերի մասին, այն բաղդատելով վրացական «սախլի» — տուն, «սախլիս կացնի» — տան մարդիկ, տան, տոհմի որդիք, «զվարի», «նաթեսավի»—տոհմ, հայկական աղբյուրներում պահպանված «տուն», «տոհմ», «ազն», «ազգ», «զարմ» տերմինների հետ, հեղինակը աշխատել է ապացուցել, որ այդ տերմիններն իրը արտահայտել են սոսկ տոհմային հարաբերություններ, որ իբրև տոհմային կարգը հանդիսացել է ոչ միայն Հին Վրաստանի, այլև Հայաստանի սոցիալական և պետական կարգերի հաստատուն հենարանը ոչ միայն հնագույն, այլև Արշակունիների շրջանում[3]։

Ակնհայտ է, որ հարգելի գիտնականը սխալվում է։ Տոհմային կարգերն ու հարաբերությունները, ինչպես ցույց տվեցինք վերևում, Հայկական լեռնաշխարհում քայքայվել էին ավելի վաղ շրջանում, քան նա է կարծել։

Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի պատմության ուսումնասիրությանը, ինչպես նշել ենք վերևում, անդրադարձել է նաև Ն. Ադոնցը իր «Армения в эпоху Юстиниана» աշխատու-

---

1 И. Джавахов, Госстрой... стр. 12.

2 Նույն տեղում, էջ 16, 50։

3 Նույն տեղում, էջ 50—51, 96։

թյան մեջ։ Ն. Ադոնցը ոչ միայն շարադրեց, այլև պատմա-վերլուծական մեթոդի օգնությամբ քննարկման ենթարկեց մեր ժողովրդի պատմության հնագույն շրջանի բազմաթիվ պրոբլեմները և փորձեր կատարեց մշակելու հարցի քննարկման իր մեթոդը։ Ինչպես Ի. Ջավախովն, այնպես էլ պրոֆ. Ն. Ադոնցը հայ հասարակական կյանքի հիմքում դրեց տոհմային կապերը, տոհմային և արյունակցական հարաբերությունների սկզբունքը։ Տոհմական կապերն ու արյունակցական իրավունքը, հեղինակի կարծիքով, պատմության զարգացման պրոցեսում ենթարկվում են լուրջ փոփոխությունների, տալիս են ճեղքվածքներ, տոհմում առաջանում են նյութական և սոցիալական անհավասարություններ և արյունակցական-ազգակցական կապերի վրա հիմնված, տոհմը բռնում է քայքայման ուղին։

Ն. Ադոնցը տոհմային կարգերի տրոհման և կազմալուծման ժամանակաշրջանը համարում է Արտաշեսի և Զարեհի էպոխան, իսկ նրա սկիզբը՝ նախաարտաշեսյան ժամանակաշրջանը։

«Արիական ժողովուրդների պատմության և իրավունքի ելակետը,— գրում է Ն. Ադոնցը,— ընդունվում է ոչ թե ընտանիքը, այլ տոհմը gens։ Նա (տոհմը, gens-ը) հանդիսացել է մարդկային կեցության առաջնահերթ ձևը և նրանից է ձևավորվել նաև նահապետական ընտանիքը՝ տոհմի ավելի փոքր խմբերի տրոհման հետևանքով»[1]։

Մի այլ կապակցությամբ բանավեճի մեջ մտնելով ակադ. Հ. Մանանդյանի հետ, Ն. Ադոնցը գտնում է, որ ոչ միայն Հայաստանի, այլև Իրանական Արևելքի և Բյուզանդական Արևմուտքի երկրներին անծանոթ է եղել համայնական հողատիրությունը և տիրապետող ձևն է հանդիսացել «տոհմային» հողատիրությունը։

Հայաստանի երկու խոշոր հարևան պետությունները՝ Իրանը և Բյուզանդիան, որոնց ազդեցության տակ, ըստ Ն. Ադոնցի, կերտվել է հայ հասարակական կյանքը, չգիտեին երբեք էլ համայնական հողատիրություն։ «Արևելյան ֆեոդալականությունը գիտե տոհմային հողատիրություն և ոչ համայնական...։ Այդպիսի պայմաններում համայնական կարգերը որոնել նշանակում է առնվազն արկածավոր գյուտ անել»[2]։

Վկայակոչելով Քսենոֆոնին, Ն. Ադոնցը գտնում է, որ Քսենոֆոնի շրջանում Հայկական բարձրավանդակում իշխում էին բացառապես տոհմային սկզբունքը, տոհմային հարաբերությունները։

---

1 Н. Адонц. Армения в эпоху Юстиниана, стр. 378.

2 Ն. Ադոնց. *Հին հայ շինականությունը, գլ. 1։*

«Հայաստանը,— գրում է Ադոնցը,— բաղկացած էր բացառապես գյուղերից, որոնց գլուխ կանգնած էր պետը, κωμαρχης կամ αρχων της κωμης: Հունական պատմիչի նկարագրած գյուղի նահապետական պատկերից դժվար չէ կռահել, որ կոմարխները տոհմերի պետեր էին, որոնք ապրում էին գյուղերում, գյուղերը իրենց բնորոշ պատնեշներով, նահապետական տնտեսության դետնափոր տներով, որտեղ մարդկանց հետ միասին տեղավորված էին անասունները՝ ոչխարները, այծերը, կովերը և ընդհանրապես ընտանի կենդանիները — այս բոլորը պատկանում էր ոչ այլ, եթե տոհմային կացութաձևին»[1]:

Ն. Ադոնցը այս սխալ եզրակացությանը հանգեց ոչ թե պատմական փաստերի և վկայությունների բացակայության, այլ բուրժուական պատմագրության սահմանափակության հետևանքով: Այդ գիտության խիստ արատավոր մեթոդն ու մեթոդոլոգիան նրան հնարավորություն չտվեցին պատմական փաստերից տեսական ընդհանրացումներ և գիտական եզրակացություններ հանել, և Ն. Ադոնցը մինչև իր կյանքի վերջը մնաց կառչած բուրժուական պատմագրության տխրահռչակ «տոհմային կարգերի» տեսությանը:

Այս տեսությունը նորություն չէր պատմական գրականության մեջ և այն Ն. Ադոնցին չէր պատկանում:

Ռուսական պատմական գրականության մեջ ռուս բուրժուական պատմագրության կարկառուն ներկայացուցիչ Ս. Մ. Սոլովևը զարգացրեց և խորացրեց Էվերս-Կավելինի այն գրույթը, որի համաձայն իբր Կիևյան պետությունը «բազմաթիվ մեծ տոհմերի միակցություն էր», որ «տոհմային սկզբունքը հանդիսանում էր սլավոնական ցեղերի պատմության ելակետը»: Ս. Մ. Սոլովևը տոհմային կապերի և հարաբերությունների և նրանց աստիճանական անցումը պետականության համարեց «սլավոնական ցեղերի հասարակական և տնտեսական կյանքի գլխավոր և կարևոր երևույթը»[2]:

Էվերս-Սոլովևի «տոհմային տեսության» դեմ խիստ քննադատությամբ հանդես եկան Կ. Ս. Ակսակովը, Ի. Դ. Բելյաևը, Վ. Լ. Լեշկովը, Ֆ. Ի. Լեոնտովիչը և ուրիշները: Սրանք իրավամբ նախատում էին «տոհմային տեսության» ներկայացուցիչներին, որ նրանք չկարողացան գիտականորեն որոշել «տոհմի» էությունը, ցույց տալ նրա դերն ու նշանակությունը:

---

1 Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, стр. 390—391.

2 С. М. Соловьев, История России, т. 1, 1851, стр. 271—272.

«Այս առթիվ բազմաթիվ հոդվածներ և ամբողջական աշխատություններ են գրված,— նշում է Կ. Ս. Ակսակովը,— բայց կարելի է ընդունել, որ ոչ մեկը այդ նոր գիտնականներից (նկատի ունի Սոլովևին և Կավելինին—Ս. Հ.) իրապես չկարողացան որոշել ի՞նչ է նշանակում տոհմային կենցաղ...»: «...Հին Ռուսիայում,— շարունակում է Ակսակովը,— գոյություն ուներ ոչ թե տոհմային, այլ համայնական կազմվածք — համայնական կենցաղ... Ռուսական երկիրը ի սկզբանե անտառ հանդիսանում էր ավելի քիչ նահապետական, ավելի շատ հասարակական (համայնական) երկիր»: Համայնքը, հեղինակի կարծիքով, ժողովուրդների պատմության նախադուռն է, որը և «ներծծված է Ռուսաստանի ողջ պատմության մեջ»[1]:

«Տոհմային», «համայնական» և «պետականության» տեսությունների ներկայացուցիչների բախումը մաքուր ակադեմիական վեճեր չէին, այլ ունեին քաղաքական խորը դրդապատճառներ: Համայնական տեսության կողմնակիցները խիստ կերպով քննադատելով իրենց նախորդներին, ամեն կերպ ձգտում էին ապացուցել, որ համայնքների առկայությունը, նրանց կենսունակությունը այն կարևոր գործոնն է, որը երկիրը փրկելու է կապիտալիզմի և պրոլետարիատի «խոցից»: Այս էր գլխավոր պատճառը, որ ինչպես «տոհմային», այնպես էլ «համայնական» կարգերի կողմնակիցները ոչ միայն ժխտում էին կապիտալիստական, այլև ֆեոդալական հարաբերությունների, ֆեոդալիզմի առկայությունը իրենց հայրենիքում:

Այս ընդհանուր հոսանքում բացառություն կազմեց ռուսական լիբերալ բուրժուական պատմագրության ներկայացուցիչ Պավլով-Սիլվանսկին: Հեղինակը իր «Феодализм в древней Руси» և «Феодализм в удельной Руси» աշխատություններում լուրջ փորձեր կատարեց ցույց տալու, որ ինչպես միջնադարյան Եվրոպայում, այնպես էլ հին Ռուսիայում առկա էին նույն ֆեոդալական հարաբերությունները:

Սակայն հեղինակը հետևելով ֆրանսիական պատմաբաններ Գիզոյի, Ֆյուստել-դե-Կուլանժի և ռուսական պատմաբան Պ. Գ.

---

[1] К. С. Аксаков, Полн. собр. соч., т. I, Москва, 1889, стр. 65. И. Д. Беляев. Лекции по истории русского законодательства, Москва, 1888, стр 189. В. Л. Лешков. Русский народ и государство, Москва, 1858, стр. 99. Ф. И. Леонтович, Задружно-общинный характер быта древней России (см. ЖМНП, 1874, июль, стр. 138). Его же, О значении верви по Русской Правде и Полоцкому статуту (см. ЖМНП, 1867, стр. 18).

Վինոգրադովի օրինակին, ֆեոդալիզմը դիտեց և գնահատեց որպես իրավաբանական կատեգորիա, որպես իրավական-վերնաշենքային հարաբերությունների սոսկ մեխանիկական միակցություն։

«Ֆեոդալիզմի գլխավոր և առաջին հատկանիշը պետք է ընդունել,— գրում է Պավլով-Սիլվանսկին,— գերագույն իշխանության բաժանվածությունը կամ գերագույն իշխանության միաձուլումը հողատիրության հետ»[1]։

Ինչպես նկատելի է, ֆեոդալիզմը որպես իրավաբանական կատեգորիա, որպես «քաղաքական իշխանության բաժանվածություն» բուրժուական պատմական գրականության մեջ տիրապետող կարծիք էր՝ այն ժամանակաշրջանում, երբ Ն. Ադոնցը գրում էր իր «Армения в эпоху Юстиниана» աշխատությունը, և այդ «տեսությունը» Ն. Ադոնցը օգտագործեց հայ հասարակական կարգերի էությունը գնահատելու համար։

Հեղինակի կարծիքով, տոհմային կարգերի և արյունակցական իրավունքի քայքայման, կազմալուծման հետևանքով ձևավորվում ու զարգանում են ֆեոդալական հարաբերությունները, ֆեոդալական հասարակարգը, ֆեոդալիզմը կամ պետականությունը։

«Միասեռ մասսայի տրոհման հետևանքով, նշանակում է տոհմային կյանքի հիմքի քայքայում և այդ ուղեկցվում է ֆեոդալականացման պրոցեսի սաղմնավորմանը։ ...Այսպես են հանդես գալիս ֆեոդալիզմի գլխավոր էլեմենտները՝ հողատիրությունը և նրա հետ զուգակցված քաղաքական իշխանությունը...։ Ֆեոդալական կարգերի ամենից բնորոշ հատկանիշը գիտնականները համարում են գերագույն քաղաքական իշխանության մասնատվածությունը, կամ ցրվածությունը...»[2]։

Ակնհայտ է, որ պրոֆ. Ն. Ադոնցը հայ ժողովրդի հնագույն շրջանի պատմության հիմքում գնում է սոցիալական կարգի երկու գործոն՝ տոհմային կարգերը և այդ կարգերի տրոհման, կազմալուծման հետևանքով, նրա փլատակների վրա բարձրացող ֆեոդալական հարաբերությունները, ֆեոդալիզմը կամ պետականությունը։

Այս նույն «տեսությունը» որոշ վերապահությամբ պաշտպանել է նաև ակադ. Հ. Մանանդյանը։ Նա հանգամանորեն ուսումնասիրելով Հին Հայաստանի և առանձնապես արմեն-հայերի տնտեսական և հասարակական կյանքի պատմությունը, վիճելով Ն. Ադոնցի հետ, գտնում է, որ «արմենների հասարակարգի հիմքը Աքեմենյան տի-

---

1 Н. П. Сильванский, Феодализм в древней Руси, стр. 69.

2 Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, стр. 382—383, 410, 455.

բապետության ժամանակ կազմում էր տոհմական կենցաղը, որի մեջ սկսվել էր արդեն որոշ բեկում... որ հին արմենները, ինչպես 6—7-րդ դդ. (մ. թ. հ.) հին սլավոնները դոնվել են «ռազմական դեմոկրատիայի» այն ընթացաշրջանում, որը հիշատակված է Էնգելսի մոտ»[1]:

Ակադ. Հ. Մանանդյանը քննադատելով Ն. Ադոնցին, տոհմական կարգերի քայքայման սկիզբը տարավ մի քանի դար առաջ: Հետևյալի կարծիքով «...տոհմական ձևերի բեկումը և դասերի ու ֆեոդալիզմի ծագումը Հին Հայաստանում պետք է դնել, ոչ թե Արտաշեսի, Զարեհի և Տիգրան Մեծի ժամանակ, ինչպես այդ ենթադրել է Ադոնցը, այլ նախորդ, ավելի հնագույն շրջանում... Նախաարտաշեսյան շրջանում»: «...Հավանական է,— շարունակում է ակադ. Հ. Մանանդյանը,—ենթադրել ցեղապետների ու տոհմապետների իշխանության որոշ ընդարձակում և ազնվականության ու ֆեոդալականացման աստիճանական զարգացում ոչ միայն նախաարմենական ցեղային զանգվածներում, այլև արմենական տոհմային խմբավորումներում: Հավանական է, նույնպես, որ Արտաշեսի և Զարեհի անկախ թագավորությունները... ունեցել են արդեն ֆեոդալական կազմություն և նախաարարականության հիմքեր»[2]:

Ինչպես նկատելի է, ակադ. Հ. Մանանդյանը հիմնականում ընդունում է Ն. Ադոնցի տեսակետը ու նրա եզրակացությունները, միայն այն տարբերությամբ, որ եթե Ն. Ադոնցը տոհմական կարգերի բեկման պրոցեսը դնում է Արտաշեսի ու Զարեհի ժամանակաշրջանում, իսկ ֆեոդալական հարաբերությունների սաղմնավորումն ու դասակարգության առաջացումը Տիգրան II-ի շրջանում, ապա ակադ. Հ. Մանանդյանը տոհմական կարգերի բեկման և քայքայման սկիզբը համարում է նախաարտաշեսյան շրջանը, իսկ Արտաշեսի և Զարեհի էպոխան համարում է «ֆեոդալական կազմության և նախաարարականության հիմքերի» առաջացման շրջան[3]:

Անհերքելի է, որ այստեղ հայացքների տարբերությունը միայն ժամանակագրական և ոչ թե հասարակական-քաղաքական կարգերի գնահատման տարբերության մեջ է:

---

[1] Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. I, էջ 84: Հմմտ. նույնի՝ Ֆեոդալիզմը Հին Հայաստանում, էջ 245—251, նույնի՝ Проблема общественного строя доаршакидской Армении (см. «Исторические записки», 1948, № 15, стр. 3—28).

[2] Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը Հին Հայաստանում, էջ 251:

[3] Նույն տեղում:

Հայ ժողովրդի պատմական անցյալը այս նույն մեթոդոլոգիական սխալ դիրքերից է դնահատել նաև պրոֆ. Խ. Սամուելյանը։ Հեղինակի կարծիքով վաղադույն ֆեոդալիզմը Հայաստանում իր սկիզբն է առնում Աքեմենյան տիրապետության էպոխայում և տևում է մինչև արաբական տիրապետությունը։ Սակայն մեզ հետաքրքրող հարցի առնչությամբ խիստ ուշագրավ է նրա հետևյալ դրույթը. «Այդ շրջանի սահմաններում (այսինքն աքեմենյան և արաբական շրջանների—Ս. Հ.) նշմարում ենք զանազան, իրար հաջորդող հետզհետե զարգացող էտապներ։ Սկզբնական էտապը վաղադույն ֆեոդալիզմն է, երբ տոհմա-ցեղային հասարակության քայքայումից հետո սկսվում է նախարարությունների կազմավորման պրոցեսը, որը զարգանում է Արտաշեսյան հարստության օրոք, մանավանդ Տիգրան Մեծի թագավորության ժամանակ»[1]։

Հայ լիբերալ պատմագրության ներկայացուցիչ Լեոն ոչ միայն նախաարտաշեսյան, այլև Արտաշեսյան ժամանակաշրջանը բնութագրել է որպես «նահապետական — տոհմական ձևերի» տիրապետության ժամանակաշրջան։ Վկայակոչելով Քսենոֆոնի «Անաբասիսի» ցուցումները արմեն-հայերի մասին, Լեոն եզրակացնում է՝

«... Հայկական բարձրավանդակի վրա տարածված այս տեսարանը ցույց է տալիս, որ այդ ժամանակները հայ ժողովուրդը դեռ չէր պուրս եկել այն նախնական դրությունից, որ մարդկային հանրակեցությունն ուներ տոհմի, ազգի (род, gens) ձևը...։ «Տուն» անունը միայն ընտանիք չէր ներկայացնում։ Տուն էր և տոհմին պատկանող ամբողջ դավառը, նահանգը և կամ նույնիսկ ամբողջ պետությունը, և տանուտեր կոչվում էր ոչ միայն տան հայրը, այլև տոհմապետը, տոհմային իշխանավորը, և մինչև իսկ թագավորը։ Եվ ինչ որ էր տանուտեր հայրը ընտանիքի մեջ, նույնն էր տանուտեր-տոհմապետը դավառի կամ նահանգի մեջ, ինչպես և տանուտեր-թագավորը պետության մեջ»[2]։

Լեոն, ինչպես նրա նախորդները, ոչ միայն նախաարտաշեսյան, այլև հայկական թագավորության կազմավորման ժամանակաշրջանը բնութագրել է որպես «տոհմական սկզբունքի», «տոհմային կարգերի» տիրապետության ժամանակաշրջան։

Այսպիսով, անցյալի հետազոտողների մեծ մասը աչքաթող անելով Հին Հայաստանի տնտեսական կյանքի զարգացումը, արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների պատմու-

---

1 Խ. Սամուելյան, Հին հայ իրավունքի պատմությունը, հ. 1, էջ 102, նույնի, Ստրկությունը Հին Հայաստանում, էջ 93։

2 Լեո, Հայոց պատմություն, հ. Ա, Թիֆլիս, 1917, էջ 342, 345։

թյունը, տոհմային կարգերի քայքայման հիմնական պատճառը համարում էին կամ «պատերազմական ժամանակաշրջանի տագնապը» կամ արտաքին արշավանքները։

Պատերազմներով, առանձին ցեղերի պայքարով, կամ «պատերազմական ժամանակաշրջանի տագնապով», այս կամ այն ժողովրդի, հասարակական-անտեսական ֆորմացիայի, հասարակական կարգերի առաջացման ու անկման սնանկ և հակապատմական տեսությունը խիստ կերպով քննադատել է Ֆ. Էնգելսը, իր «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը» ու «Անտի-Դյուրինգ» աշխատություններում։

Պատերազմները, երկարատև կռիվները առանձին տոհմերի, ցեղերի և ժողովուրդների մեջ մղվել են մարդկային հասարակության պատմության ողջ ընթացքում և չեն հանդիսացել ու չէին կարող հանդիսանալ տոհմային կարգերի քայքայման հիմնական ու գլխավոր պատճառը։

Տոհմի մեջ տեղի ունեցած նյութական և դասային շերտավորումը բացատրելու համար անհրաժեշտ է առաջին հերթին ցույց տալ երկրի արտադրողական ուժերի զարգացման, մասնավոր սեփականության հանդես գալու և այդ հիմքի վրա տոհմական հարաբերությունների քայքայման պրոցեսի պատմությունը։

Նախնադարյան համայնական կամ տոհմական հարաբերությունները, ինչպես հայտնի է, հիմնված էին արտադրության միջոցների հանրային սեփականության վրա։ Այստեղ աշխատանքի գործիքներն այնքան կոպիտ ու պրիմիտիվ էին, որ արտադրության միջոցների մասնավոր սեփականության վրա հիմնված անհատական արտադրության պայմաններում նրանք չէին կարող ապահովել մարդու ֆիզիկական գոյությունը, կերակրել տոհմին։ Արտադրողական ուժերը նախնադարյան համայնական հասարակարգում նույնպես գտնվում էին զարգացման և աճի պրոցեսում, նրանք զարգանում էին նաև արտադրական հարաբերությունների ակտիվ ներգործության տակ և որոշ ֆազայում առաջ էին բերում արտադրության միջոցների մասնավոր սեփականություն։ Այս պրոցեսում վճռական դերը պատկանում է աշխատանքի գործիքների կատարելագործմանը։

Աշխատանքի գործիքների զարգացման հիմքի վրա, արդեն հնարավոր էր դարձել առանձին ընտանիքների մասնավոր, անհատական արտադրությունը։ Հենց այս է արտադրության միջոցների մասնավոր սեփականության հաստատվելու հիմնական պատճառը։

Արտադրողական ուժերի աճը արդեն պահանջում էր վերացնել տոհմային կառուցվածքը՝ նոր արտադրողական ուժերի զար-

դացման այդ կապանքը, որը խանդարում էր մարդկանց միջև տնտեսական կապերի ընդլայնմանը։

Նախնադարյան հասարակության էկոնոմիկայում առաջացած խորը փոփոխություններն ու տեղաշարժերը առաջ բերեցին համապատասխան փոփոխություններ տոհմային հասարակարգում։ Սկզբնական շրջանում արտադրության միջոցների ու սպառման առարկաների մասնավոր սեփականություն հանդես եկավ, որպես այդ միջոցների և առարկաների նկատմամբ առանձին ընտանիքների սեփականություն։ Տոհմից առանձնացած առանձին ընտանիքները ընդգրկվեցին դյուղական այն համայնքներում, որոնց հիմքում ընկած էին ոչ թե ազգակցական-արյունակցական, այլ տերիտորիալ-տնտեսական հատկանիշները։

Վերը մենք խոսեցինք այն մասին, որ հայ ժողովրդի նախնական շրջանի պատմության հետազոտողների մեծ մասը հայ ժողովրդի հասարակական կարգերի հիմքը նախապատշևական շրջանում համարել են «տոհմը», տոհմային հարաբերությունները։ Այս եզրակացությանը նրանք հանդել են Մ. Խորենացու՝ Հայկի «նահապետական» տոհմի և Քսենոֆոնի՝ արմենների մասին թողած վերոհիշյալ վկայությունների հիման վրա։

Հայոց պատմագրության նախահայր Մ. Խորենացին, օգտագործելով իր էպոխայում, տակավին թարմ կերպով պահպանված, նախնադարյան համայնական կարգերի դեռ շատ կենսունակ մնացորդները և ժողովրդական ավանդությունները Հայկի նահապետական ընտանիքի մասին, վկայում է, որ Հայկը խրոխտանալով Բելի դեմ, այլևս չցանկանալով ենթարկվել նրա բռնակալության «...Յետ ծնանելոյ զորդի իւր զԱրամանեակ ի Բաբելոնի՝ չու արարեալ դնայ յերկիրն Արարադայ, որ է ի կողմանս հիւսիսոյ, հանդերձ որդովք իւրովք և դստերօք և որդւոց որդովք, արամբք զօրաւորօք, բուռ իւրև երեքհարիւր, և այլովք ընդոծնօք և եկօք յարեցեալովք ի նա և բոլոր աղխիւ... Հայկ՝ շինէ անդ տուն բնակութեան կալուածոց և տայ ի ժառանգութիւն Կադմեայ որդւոյ Արամանեկայ...»[1]։

«Եւ ինքն խաղայ, ասէ, այլով աղխիւն ընդ արևմուտս հիւսիսոյ դայ բնակէ ի բարձրաւանդակ դաշտի միում...։ Շինէ և գիւղ մի, և անուանէ յիւր անուն Հայկաշէն»[2]։

Նահապետական այս մեծ ընտանիքում ընտանի կենդանիների հսկայական հոտերը և պրիմիտիվ հողամշակությունն ու երկրագործ-

---

[1] Մ. Խորենացի, էջ 33 (ընդգծումը մերն է—Ս. Հ.)։

[2] Նույն տեղում։

ծությունը հանդիսանում են մինչ այդ չտեսնված հարստության աղբյուրը։ Տնտեսական այդ հիմքի վրա էլ «ընտանեկան համայնքում» հանդես են գալիս հասարակական նոր, մինչ այդ անհայտ, հարաբերություններ։ Եթե նահապետական տոհմի անդամների անհատական սեփականությունը հանդիսանում էին անձնական պաշտպանության գործիքները, եթե այնտեղ արտադրությունը և բաշխումը համայնական էր, ապա անասնապահության և պրիմիտիվ երկրագործության հանդես գալով մարդը ստանում է կաթ, միս, հագուստեղեն և սնունդ ստանալու բոլոր նախնական ձևերն ու մեթոդները հետին պլանի են մղվում։ Նահապետական ընտանիքը (բայց ոչ տոհմը) իր մեջ էր ընդգրկում «...որոշ թվով ազատ և անազատ մարդկանց մի ընտանիքի մեջ կազմակերպվելը՝ ընտանիքի գլխի հայրական իշխանության ներքո»[1]։

Նահապետական տոհմից անջատված, ընտանիքում հարստության և գույքային անհավասարության էլեմենտները «...տղամարդուն ավելի ազդեցիկ դիրք էր տալիս ընտանիքի մեջ, քան թե կնոջը, իսկ մյուս կողմից՝ նրա մեջ ձգտում էր առաջ բերում օգտագործելու այս ավելի կայունացած դիրքը, որպեսզի ժառանգության նախնավանդ կարգը փոխվի հօգուտ երեխաների»[2]։

Նահապետական ընտանիքը կազմված էր «որոշ թվով ազատ և անազատ մարդկանցից» և մյուս կողմից այստեղ «ժառանգության նախնավանդ կարգը փոխվում է հօգուտ երեխաների»։ Էնգելսի այդ դրույթն ամբողջապես վերաբերվում է Հայկի նահապետական «տոհմին»։ Եվ իսկապես, ի՞նչ են ասացուցում Մ. Խորենացու վկայությունները. նախ Հայկի «տոհմը» սոցիալապես միասնական և միատարր չէ, նրա կազմում բացի Հայկի որդիներից և որդոց-որդիներից հիշատակվում են «ընդոծիններ», որոնք ոչ այլ ոք էին, եթե ոչ կամ օտար ցեղերից պատերազմի միջոցով ձեռք բերված ռազմագերիներ, կամ թե ստրուկից ծնված երեխաներ։ «Ընդոծինների» առկայությունն արդեն խոսում է Հայկի «տոհմի» սոցիալական շերտավորման մասին։ Որ սոցիալական և դասային շերտավորումը Հայկի «տոհմի» բնորոշ հատկանիշն էր, այդ է ասացուցում Խորենացու վկայության այն մասը, որտեղ հիշատակվում է, որ Հայկը գաղթում է «բոլոր աղխիս», իսկ «աղխը» շատ լայն իմաստ ու նշանակություն ուներ, քան ազգակցական կապերի վրա հիմնված

---

[1] Ֆ. Էնգելս, Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, էջ 75—76 (ընդգծումը մերն է—Ս. Հ.)։

[2] Նույն տեղում, էջ 74։

տոհմը։ «Աղխ» ասելով հասկացվում էր ոչ միայն ամբողջ տուն ու տեղը, այլև ընտանիքի գույքը, մթերքները, անասունները, ծառաները։ «Աղխ» հիշատակումը նույնպես ուշագրավ փաստ է Հայկի «տոհմի» սոցիալական կազմը հասկանալու համար։

Ժառանգական իրավունքը էնգելսը կոչում է «ընտանիքի առաջին ձևը, որը հիմնված էր ոչ թե բնական, այլ տնտեսական պայմանների վրա, այն է՝ մասնավոր սեփականության հաղթության վրա նախնադարյան բնածին, համայնական սեփականության նկատմամբ։ Տղամարդի իշխանությունը ընտանիքում և այնպիսի երեխաների սերումը, որոնք միայն նրան կարող են լինել, և որոնք պետք է ժառանգեն նրա գույքը»[1]։

Մ. Խորենացու վկայությունները Հայկի «տոհմի» մասին ուշագրավ են նաև այն իմաստով, որ նախահոր մահից հետո նրա «զբովանդակ աղնն» ժառանգաբար անցնում է «Արամանեկայ որդւոյ իւրում»[2]։ Հայկը բնակություն էր հաստատել Տուրուբերան գավառում, իսկ նրա որդի Արամանեակը ժառանգելով հոր կարողությունը, բնակություն է հաստատում Արարատյան նահանգում և Արագածի ստորոտում։

Արամանեակի երկու եղբայրները՝ Խորը և Մանավազը իրենց «աղխ»-ով հաստատվում են «Ի Հարք և ի Խոռխոռունիս», իսկ Բազը բնակություն է հաստատում «Ի Բզնունիս»։ Խորենացին մանրամասն պատմում է, որ Հայկի ժառանգները բնակություն են հաստատում ոչ միայն Տուրուբերանում, Այրարատում, այլև Սյունիքում, իսկ Գ. Ինճիճյանը գտնում է, որ Հայկի ժառանգների մի մասը բնակություն է հաստատել նաև Մեծ Հայքի այլ գավառներում ևս[3]։ Արամանեակի Արամայիս տղան հոր մահից հետո ժառանգում է նրա կարողությունը, շինում է «իւր տուն բնակութեան ի վերայ ոստոյ միոյ առ եզերբ գետոյն և անուանէ զնա յիւր անուն Արմաւիր»։ Արամայիսի Շարա որդին իր «աղխիս» բնակություն է հաստատում Շիրակում։ Արամայիսի թոռ Գեղամը Արմավիրը կտակում է Հարմային, իսկ ինքը «հանդերձ որդւովք» մեկնում է «զմիւս լերամբն արևելեան հիւսիսոյ, յեզր ծովակի միոյ»։ Այստեղ նա շինում է բնակավայր «զեզր ծովակին և թողու անդ բնակիչս»։ Իր անունով

---

[1] Ֆ. Էնգելս, *Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը*, էջ 85—86։

[2] Մ. Խորենացի, էջ 38։

[3] Գուկ. Ինճիճյան, *Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի*, Վենետիկ, 1835, հատ. Ա, էջ 374։

այդ լեռը կոչում է Գեղ, իսկ շենը՝ Գեղարքունի, որի անունով էլ կոչված է ծովակը։ Այստեղ ծնվում է նրա որդի Սիսակը։ Գեղամը սրան տալիս է «զմեծ մասն ընչից իւրոց... և ծառայս անձինս բազումս՝ սահմանս հատանել նմա ժառանգութեան ի ծովէն ընդ արեւելս մինչև ցդաշտ մի...»։ Այստեղ «բնակեալ Սիսակ՝ լնու շինութեամբ զսահմանս բնակութեան իւրոյ. և զաշխարհն կոչէ իւրով անուամբն Սիւնիք»[1]։

Որ «աղխ»-ը չէր նշանակում և նյութապես և սոցիալապես մի ամբողջություն, այդ մասին մի ուշագրավ վկայություն է պահպանել Մ. Խորենացին իր երկրորդ գրքի ՁԱ գլխում, որտեղ խոսում է Մամիկոնյան տոհմի ծագման մասին։

Խորենացու վկայությամբ, Սասանի որդի՝ պարսիկ թագավոր Արտաշիրի մահից հետո, նրան հաջորդում է տղան՝ Շապուհը (247—279 թթ.), որի ժամանակ իբր Չինաստանից Հայաստան են գալիս Մամիկոնյանները իրենց «աղխիս»։

«Յամս կատարման կենացն Արտաշրի, Արբոկ ոմն Ճեն-Բակուր, որպէս ասի ի նոցա լեզուն պատիւ թագաւորութեան...։ Եւ շարախօսեալ Բղդոխայն զՄամգոնայն՝ հրամայեաց թագաւորն Ճենաց Արբոկ սպանանել զՄամգոնն։ Զոր իմացեալ Մամգոնայն՝ ոչ դայ ի կոչն արքայի, այլ փախուցեալ աղխիս իւրով՝ անկանի առ Արտաշիր թագաւորն Պարսից»[2]։

Շապուհը Մամգոնին, «ամենայն աղխիւն իւրով» ուղարկում է Հայաստան։ Մամգոնը հանդիպում է հայոց Տրդատ թագավորին «ամենայն աղխիւն իւրոյ» և վերջապես Տրդատը Մամգոնին «...ետ տեղի աղխի նորա և ոռնիկ ի կերակուր, փոփոխելով տեղի ի տեղւոջէ զբովանդակ ամս»[3]։

«Աղխն» Արշակունիների, Մարզպանության և ավելի ուշ շրջաններում իր մեջ արդեն չէր իմաստավորում միայն աղգակցական և արյունակցական կապերով կապված մեծ գերդաստաններ, ինչպես մինչև օրս կարծվել է, այլ ստանում է ավելի լայն իմաստ ու նշանակություն։

Այս իմաստով «աղխ» տերմինը գործածական է Փ. Բուզանդի, Ղ. Փարպեցու, Հին կտակարանի հայերեն թարգմանության տեքստում և հետագա պատմիչների մոտ։ Ահա մի երկու վկայություն ևս։ Փ. Բուզանդը տալով պարսից արքա Ներսեհի արշավանքները,

---

[1] Մ. Խորենացի, էջ 40—41։ Հմմտ. Սեբեոս, էջ 3—8։

[2] Նույն տեղում, էջ 222։

[3] Նույն տեղում, էջ 222—223։

գրում է, որ նա «առեալ զամենայն զօրս իւր բնիւ աղխիւ և ամենայն մեծաւ կարաւանաւ... եկն եհաս ի սահմանս Հայոց»[1]։ «Աղխն» այս առումով գործածական է նաև Հին կտակարանի հայերեն թարգմանության բնագրում[2]։ Մ. Խորենացին ունի բազմաթիվ այլ վկայություններ, «աղխի», որպես սոցիալապես ոչ միատարր և միասնական միավորման մասին[3]։ Ինչպես տոհմային կարգերից եկած բոլոր, այնպես էլ «աղխ» տերմինը հետագա դարերում ապրում է նոր էվոլյուցիա։ «Աղխն» արդեն ընտանիք չէ։ Այդ մասին արժեքավոր վկայություն է պահպանել Սեբեոսը. Վարազտիրոցը, գրում է պատմիչը «չուէ գնայ ընտանեօք և աղխիւ առ կայսրն Հերակլ»[4]։ Ղևոնդը «աղխին» տալիս է ավելի լայն իմաստ։ Արաբական Սուլիման զորավարը հրամայում է «... թողեալ զաղխս բանակին անդէն՝ զհարճս և զծառայս և զաղախնեայս և զայլ խառնիճաղանճն՝ ճանապարհ կալեալ ընդ լեռան Կովկաս...»[5]։

«Աղխն» արդեն նոր իմաստ ու նշանակություն է ստանում զարգացած ֆեոդալական հարաբերությունների պայմաններում։ Այդ են ապացուցում Հովհ. Դրասխանակերտցու, Թ. Արծրունու, Ս. Աննեցու, Կ. Գանձակեցու, Վ. Բարձրբերդցու մոտ պահպանված վկայությունները։ Այս շրջանում արդեն «աղխն» իր մեջ իմաստավորում էր ոչ միայն կահ-կարասին, այլև ծառաները, աղախինները, ֆեոդալական կախման վիճակում գրված «խառնիճաղանճ» բաղմությունը[6]։

Այսպիսով, մատենագրական ընդարձակ վկայությունների քննարկումը ցույց է տալիս, որ եթե նախաֆեոդալական ժամանակաշրջանում «աղխն» իր մեջ իմաստավորում էր միայն մեծ դերդաստանները և արյունակցական-ազգակցական կապերի վրա հիմնված նահապետական ընտանիքներ, ապա արտադրության ֆեո-

---

1 Փ. Բուզանդ, էջ 47։

2 Գիրք Աստուածաշունչք մատեան հին և նոր կտակարանաց, Վենետիկ, 1860, Ելք Ժ. 24, ԺԲ, 37, ԻԶ, 6, Խ, 34, Թիւք Ժ, 12, ԺԶ, 2, 7, ԼԱ, 9, 17, 18, ԼԲ, 16, 24, 30, Բ. օրէնք, Ա. 12, Ի. 14, Յովր. ԻԶ, 13, ԼԸ, 6, Յովհան. Բ, 7 և ուր.։

3 Մ. Խորենացի, էջ 33, 38, 40, 222, 223, 228 և ուր.։

4 Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն, էջ 311։

5 Ղևոնդեայ վարդապետի Պատմութիւն, 1887, էջ 41—42, տե՛ս նաև էջ 104—105, 119, 129։

6 Յովհ. Դրասխանակերտցի, Պատմութիւն հայոց, էջ 80, հմմտ. Թ. Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, էջ 222, Կ. Գանձակեցի, Պատմութիւն հայոց, էջ 191—192, 229, 253, 266, Մեծին Վարդանայ Բարձրբերդեցւոյ Պատմութիւն տիեզերական, ի լոյս ընծայեաց Մկրտիչ էմին, Մոսկվա, 1861, էջ 106։

դալական եղանակի հաղթանակի պայմաններում «աղխն» ստանում է այլ իմաստ։ Այս շրջանում «աղխն» իմաստավորում է ոչ միայն առանձին ընտանիքների կայքն ու գույքը, այլև հասարակության ստորադաս աստիճանում դրված ծառաներ, աղախիններ, ռազմադերիներ և այլն։ «Աղխը» որպես սեփականություն անցնում է ժառանգաբար՝ հորից որդուն։

Պատմական զարգացման նույն էվոլյուցիան են ապրում տոհմային կարգերից եկած «տոհմ», «տուն», «աղն», «ազգ», «զարմ» տերմինները։

Եթե նախորդ նախաֆեոդալական շրջանում այդ տերմինների տակ մեր մատենագիրները հասկանում էին արյունակցական-ազգակցական կապերի վրա խարսխված քաղաքական առանձին, փոքր միավորներ և միություններ, ապա արտադրության ֆեոդալական հարաբերությունների հաղթանակը արմատական և որակական փոփոխություններ է առաջացնում տոհմային կապերի և հարաբերությունների մեջ և նախորդ շրջանից սկիզբ առած տերմինները ստանում են բոլորովին այլ նշանակություն։ Այս շրջանում «տոհմ», «տուն», «ազգ», «աղն», «զարմ» տերմինները արդեն արտահայտում են առանձին նախարարական-ֆեոդալական տների և տոհմերի ժառանգական տիրույթները, նրանց կալվածները, գավառները, Թագավորական ոստանները և նույնիսկ ամբողջ երկիրը։

Վաչե Մամիկոնյանը, պատմում է Փ. Բուզանդը, դաժանորեն ճնշում է ֆեոդալական երկպառակությունները, ընդվզումները և խոսրով Թագավորի կարգադրությամբ ոչնչացնում է դավաճան Դատաբենի և սրան օգնող այլ նախարարական տները, ասպատակում է Ռշտունյաց գավառում գտնված Դատաբենի կալվածները, ոչնչացնում է նրա և նրան հարող այլ նախարարների տոհմի անդամներին և «զտուն նոցա յարքունիս կալան»[1]։

Որ «տունը» արդեն ստացել էր ֆեոդալական տիրույթի իմաստ ու նշանակություն, այդ է ապացուցում նույն պատմիչի մի այլ վկայությունը։

Հայրենիքի դավաճան Մերուժան Արծրունին դիմելով պարսկական Շապուհ Թագավորին, ասում է. եթե «ինձ դարձ լիցի յիմ աշխարհն և յիմ տունն, նախ ես... շինեցից ատրուշան յիմում տանն սեպհականին...»[2]։

---

[1] Փ. Բուզանդ, էջ 17—18։

[2] Նույն տեղում, էջ 119։ (Բոլոր դեպքերում ընդգծումները մերն են—Ս. Հ.)։

«Տունը» որպես ֆեոդալական ժառանգական և օտարելի տիրույթ անցնում էր հորից որդուն։ Ֆեոդալական կալվածքի ժառանգը չէր կորցնում իր ժառանգական իրավունքը նույնիսկ այն դեպքում, եթե նրա հայրը դավաճանել էր հայրենիքին և անցել թշնամիների կողմը։ Հայ Արշակունի թագավորները զորական ուժով ոչնչացնելով կենտրոնախույս նախարարական-ֆեոդալական տների սեփականատերերին, նրանց տները «յարքունիս» գրավելով չէին կարողանում ոչնչացնել ժառանգական-հողատիրական իրավունքները։

Խոսրով թագավորի դեմ, ինչպես վկայում է Փ. Բուզանդը, ապստամբվում է «մի ի ծառայից նորա մեծ իշխանն Աղձնեաց» Բակուր բդեշխը։ Թագավորի հավատարիմ նախարարական այլ տներ ոչնչացնում են Բակուրի «տոհմն» «եղբայրք և որդովք» հանդերձ, բայց թագավորի հետապնդումից պատահական դիպվածով ազատվում են Բակուրի նորածին դուստրը և Խեշան աղան։ Գահին մատուցած ծառայության համար Խոսրովը որոշում է Բակուրի «տունը» նվիրել Սյունյաց իշխան Վաղինակին։ Բայց Վաղինակը Բակուրի կալվածները ժառանգել չէր կարող, որովհետև նա օրինական և Բակուրի հետ աղգակցական-արյունակցական կապերով կապված ժառանգ չէր, այդ իսկ պատճառով թագավորը որպեսզի օրինականացներ Վաղինակի ժառանգական իրավունքները, Բակուրի նորածին աղջկան ամուսնացնում է Վաղինակի հետ։ Միայն այս դեպքում է, որ թագավորը իրավունք է համարում Վաղինակին նվիրել «զտունն Աղձնեաց»։ Բայց այս անօրինական ակտով դեռ չէր հաստատվում ժառանգական իրավունքը։

Բակուրի պատանի Խեշան որդին ապաստան գտնելով Վաչե Մամիկոնյանի մոտ, այնտեղ «ապրեցաւ թագուցեալ ի տան նորա»։

Այս պատանի Խեշանը, ասում է պատմիչը, որպես Բակուր բդեշխի օրինական ժառանգ «յայլում ժամանակի դարձաւ կալաւ զտունն իւր»[1]։ Արդեն պատմականորեն հաստատված և օրինականացված հողատիրության ժառանգական իրավունքը ոչ ոք, նույնիսկ թագավորները խախտել և ոչնչացնել չէին կարող։ Արշակ թագավորը նույն դաժանությամբ ոչնչացնում է «բաղումս ի նախարարացն... զբաղումս աղքատս արարեալ... և զբաղմաց տունս հատանէր յարքունիս»։ Սակայն Կամսարական տոհմի ժառանգ Սպանդարդը, որը նույնպես ազատվել էր ու ապաստան գտել Վասակ Մամիկոնյանի մոտ, մեծանալով «լինէր ժառանգ աշխարհին»[2]։

---

1 Փ. Բուզանդ, էջ 18—19։

2 Նույն տեղում, էջ 109—110։

Խիստ ուշագրավ է, որ նույն պատմիչը նույն հարցի մասին խոսելիս մի դեպքում Կամսարականների տիրույթները կոչում է «տուն», մյուս դեպքում «աշխարհ»։ «Տուն» կալվածքը կարող էին նվիրել նույնպես պարսիկ թագավորները։ Շապուհը խոստանում է Արշակին նվիրել «տուն մեծ», եթե նա ցանկանա ամուսնանալ իր աղջկա հետ։ Այս «տունն» իր մեջ ընդգրկում էր լայն տերիտորիա, նա սկսվում էր «ի Հայոց մինչև ի Տիզբոն»[1]։

«Տան», «տոհմի» տերերը, տանուտերերը, նախարարները արդեն ոչ թե սոսկ «տան» կամ «տոհմի» առաջնորդներ էին, այլ գավառատեր, հողատեր ֆեոդալ-իշխաններ։ Փ. Բուզանդը խոսելով Կամսարականների նախարարական-ֆեոդալական «տան», «տոհմի» մասին, վկայում է, որ «զտոհմս Կամսարականացն... էին գաւառաց տէրք, Շիրակայ և Արշարունեաց»[2]։

«Տունը» հաճախակի գործ է ածվել գավառի, աշխարհի առումով։ Անդովիկը, ասում է Բուզանդը, նահապետ էր «Սիւնեաց գաւառին»[3]։ Անգեղը և գավառ էր և «տուն»։ Մինչդեռ, վկայում է Բուզանդը «Արշակ ի կողմանսն ստորին գաւառացն յԱնգեղ տան էր յուտեստ. զմիջնաշխարհն քանդեալ բրեալ զօրքն Պարսից ապականէին»[4]։ Նույն պատմիչը նկարագրելով Արշակ թագավորի օրոք ֆեոդալական երկպառակությունները, ֆեոդալական-նախարարական տների ներկայացուցիչներին մի դեպքում կոչում է «մեծամեծ աւագանի», մյուս դեպքում «նախարար», «տէր գաւառին», «տէր աշխարհին»։ Աղնձյաց նախարարական տոհմի տիրույթները կոչում է «տունն տոհմին Աղնձեաց»[5], իսկ Գնելին՝ «տէր գաւառին Անձևացեաց»[6], Բարիկին՝ «տէր գաւառին Սիւնեաց»[7]։

Ղազար Փարպեցին Արծրունիներին մի դեպքում կոչում է «ազգ Արծրունեաց», մի փոքր ցած՝ «տոհմ Արծրունեաց», Խորխորունիներին՝ «ազգ» և «տոհմ Խորխորունեաց»[8]։ Նույն պատմիչը Ներսեսին կոչում է «տէր Շիրակայ»[9]։

---

[1] Փ. Բուզանդ, էջ 112, 113։
[2] Նույն տեղում, էջ 109։
[3] Նույն տեղում, էջ 113։
[4] Նույն տեղում, էջ 119, 120, 178։
[5] Նույն տեղում, էջ 135։
[6] Նույն տեղում, էջ 171։
[7] Նույն տեղում, էջ 214։
[8] Ղ. Փարպեցի, էջ 47, 52, 126։
[9] Նույն տեղում, էջ 122։

«Գավառատերեր», «աշխարհատերեր» և բերդերի տեր նահապետները, տանուտերերը ֆեոդալական Հայաստանում իրենց ապահովում են տանուտերական-նահապետական արտոնություններով, ձեռք են բերում քաղաքական իշխանություն և թշնամական դիրք են բռնում կենտրոնացած իշխանության նկատմամբ։ Նրանք համառ և դաժան պայքար են ծավալում ինչպես իրենց հողային տիրույթները ընդարձակելու այնպես էլ քաղաքական իշխանությունը նվաճելու համար։

Այս երևույթն ամենից բացորոշ կերպով արտահայտել է Փ. Բուզանդը։ Արշակ թագավորի դեմ ապստամբության դրոշ են բարձրացնում «մեծամեծ ազատանին»։ Սրանց օրինակին հետևում են Աղձնյաց, Նոշիրական բդեշխները և «Մահակեր տանն, և Նիհորականն, և Դասսընտրէին, և ամենայն նախարարութիւն Աղձնեաց. և զօրն և տունն տոհմին Աղձնեաց... և յետ սորա Գուդարաց բդեաշխն. և յետ սորա Ջորայ գաւառին տէրն, և Կողբայ գաւառին տէրն. և ընդ նոսա Գարդմանաձորոյ տէրն... Ապստամբեցին յԱրշակայ արքայէն Հայոց ամուր գաւառն Արձախայ, և ամուր գաւառն Տմորեաց և ամուր աշխարհն Կորդրեաց, ապա և տէր գաւառին Կորդուաց...»[1]։

«Տուն» էր կոչվում նաև արքունի ոստանը։ Խոսրով թագավորի օրոք բորբոքվում է նախարարական-իշխանական երկպառակությունները։ Հայաստանի «գաւառակալք», «աշխարհակալք» մեծամեծ նախարարները, մեծ ոխակալությամբ կռվում են ոչ միայն միմյանց հետ, այլև թագավորական իշխանության դեմ։ Նրանք, ասում է պատմիչը, առաջացրին «խռովութիւն մեծ յաշխարհին Հայոց... և տային ընդ միմեանս մարտ պատերազմի առանց իրաւանց։ Եւ պղտորէին զմեծ աշխարհն Հայոց իշխանն Մանաւազեան տոհմին, և միւս ևս նահապետն Որդունեաց տոհմին»[2]։ Խոսրովի և Վրթանես եպիսկոպոսի միջամտությունը ոչ մի շոշափելի արդյունք չեն տալիս։ Մեծամեծ նախարարները ոչ միայն հետ են ուղարկում Վրթաննեսին, այլև «առնուին և աւերէին զտունն արքունի»[3]։

Տրդատ թագավորը, պատմում է Ագաթանգեղոսը, հրամայում է գավառապետներին, նախարարներին, զորապետներին, շինականներին, որ նրանք ապաստան չպետք է տան աղանդավորներին, իսկ եթե նրանցից որևէ մեկը հանդուրժի ապաստան տալ կամ

---

1 Փ. Բուզանդ, էջ 135։

2 Նույն տեղում, էջ 8—9։

3 Նույն տեղում։

թաքցնի նրանց «ընդ մահապարտս համարեալ լիցի, և ի հրապարակ արքունի եկեալ մեռցի, և տուն նորա յարքունիս երթիցէ»[1]։

Եղիշեն թվարկելով 451 թ. ժողովրդա-ազատագրական պայքարի դավաճան նախարարների անունները, հիշատակում է Վասակ Սյունեցու կողմնակիցներին և այդ թվում «բազում և այլ ազատ մարդիկ, որ ոստանիկան անուանեն՝ յարքունի տանէ»[2]։

Փ. Բուզանդը վկայում է, որ Մուշեղը գրավում է «զտուն թագաւորին Հայոց»-ի այն տիրույթը, որը գտնվում էր Ատրպատականում[3]։ Մուշեղ Մամիկոնյանը, պատմում է Բուզանդը, «Հարկանէր և յԱնգեղ տունն», որը արքունի «ոստան» էր, այսինքն կալվածք[4]։

Ղազար Փարպեցին պատմում է, որ 5-րդ դ. ազատագրական ապստամբությանը դավաճանում է «մի ոմն յՈստանեայ տանէն... Ջանդազան...»։ Նույն պատմիչը թվարկելով հայ նախարարական տներին, մի դեպքում ասում է նրանք սերվել են այս կամ այն «տոհմէն», մյուս դեպքում՝ «ազգէն» կամ «տանէն»։

Ավարայրի դաշտում, ասում է Եղիշեն, հերոսաբար ընկան ոչ միայն երկու հարյուր ութսուն և յոթ «նահատակք», ինն մեծամեծ նախարարաներ, այլև այլ նահատակներ. «Եվ յարքունի տանէն և ի տանէն Արծրունեաց և յուրաքանչիւր նախարարաց տանէն»[5]։ Հաճախակի «տուն» և «ազգ» տերմինները գործածվում են նույն իմաստով և նշանակությամբ։ Փ. Բուզանդը դարը վշտով է նկարագրում Հայաստանի ծանր կացությունը, ֆեոդալական երկպառակությունները և պատերազմները, որի հետևանքով «շրջէին յաշխարհի կամակոր ազգ տանն Հայոց երկրին»[6]։

Տուն էր կոչվում նաև հոգևոր ֆեոդալական դասի տիրույթները։ Պարսկական Վռամ թագավորը Սուրեն զորավարի միջոցով հայտնում է Սահակ կաթողիկոսին, որ եթե նա հնազանդվի «կամաց նորա (Վռամի)... մեծարեալ բազում պատուովք»...։ «Շքեղութիւն մեծ և օգուտ դասանել ի թագաւորէն»... «ապա եթէ այլազգաբոյն ինչ խորհիս յամառեալ և զքո կաթողիկոսական տունն կորուսանես...»։ Սահակը մերժում է, Վռամը «հրաման տայր... ի բաց

---

[1] Ագաթանգեղոս, էջ 76—77։
[2] Եղիշե, էջ 119։
[3] Փ. Բուզանդ, էջ 175։
[4] Նույն տեղում, էջ 178։
[5] Եղիշե, էջ 156։
[6] Փ. Բուզանդ, էջ 28։

առնուլ զթագաւորութիւնն յԱրտաշէսէ. ընդ նմին և զտունն կաթողիկոսական... յարքունիս ունել...»[1]։

Այս նույն առումով «տուն», «տոհմ» բառերը մատնացույց են արված նաև վրացական աղբյուրներում։

Ակադ. Ի. Ջավախովը իր ժամանակին ցույց է տվել, որ «պատմական հիշատակարաններում այս կամ այն տեղ թափանցել են տեղեկություններ, որոնցից կարելի է եզրակացնել, որ «սախլի» տուն բառը գործածվել է նույնպես այլ, մեծ տերիտորիալ միավորներ նշելու համար[2]։ Տուն է կոչվել նաև աշխարհագրական այս կամ այն տեղը, շրջանը։

«Քարթլիս Ցխովրեբայի» նախնական տեքստում,— շարունակում է հեղինակը,— կա վկայություն, որտեղ «սախլի» (տուն) նշանակել է նաև ամբողջ պետություն։ Այսպես օրինակ, Լեոնտի Մրովելին, վրացական տարեգրության այդ մասի հեղինակը, գրել է. «Երբ Սպրիդոնը իր բոլոր հողերը բաժանեց իր երեք տղաների մեջ, նրան, որին նա տվեց Պարսկաստանը, որպես տուն, նրան էլ տրվեց որպես բաժնեկալվածք և Քարթալինիան»[3]։

Ուխտանես եպիսկոպոսը հաստատում է, որ Վրաստանը կոչվել է տուն։ «Կալաւ Կիւրին զաթոռն կաթողիկոսութեան տանն Վրաց»[4]։

Այսպիսով, մատենագրական սկզբնաղբյուրների քննարկումը մեզ հնարավորություն է տալիս ապացուցել, որ պատմական և սոցիալական այս կամ այն տերմինը բոլոր էպոխաներում չի ունեցել նույն իմաստն ու նշանակությունը։ Նախ «տունը» նշանակել է «տոհմ», ընտանիք, ապա կարողություն, տիրույթ, կալվածք, շրջան, դավառ, «աշխարհ», վերջապես՝ երկիր։

---

[1] Ղ. Փարպեցի, էջ 24։

[2] И. Джавахов, Госстрой..., стр. 31.

[3] Նույն տեղում, էջ 32։

[4] Ուխտանէսի եպիսկոպոսի Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց, հ. բ., Վաղարշապատ, 1871, էջ 6։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՂՄՆԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ֆեոդալիզմը որպես հասարակական-տնտեսական ֆորմացիա ծագել է պատմական տարբեր ժամանակաշրջաններում, տարբեր պայմաններում: Մի դեպքում, ինչպես Հին Հռոմեական կայսրությունում ֆեոդալական արտադրական հարաբերությունները սաղմնավորվել են ստրկատիրական հասարակական ֆորմացիայի ընդերքում, իսկ զարգացել և ձևավորվել են նրա փլատակների վրա, մյուս դեպքում հին գերմանացիների, արևելյան սլավոնների, ասիական մի շարք ժողովուրդների մոտ—տոհմական և համայնական կարգերի քայքայման հիմքի վրա: Ֆեոդալական հասարակարգի ծագման, նրա պատմության հարցերը շոշափել են ինչպես արևմտա-եվրոպական, ռուսական այնպես էլ հայ բուրժուական պատմագրության ներկայացուցիչները:

Արևմտյան Եվրոպայի պատմաբանների շրջանում ինչպես անցյալում, այնպես էլ մեր օրերում, ֆեոդալիզմի դեմնեզիսի հարցում իշխել և իշխում է երկու ուղղություն:

Գերմանական «դպրոցի» կամ ուղղության ներկայացուցիչները՝ գերմանական պատմաբաններ Սավինին, Էնխհորնը, Գիրկեն, Բրունները և ֆրանսիական պատմաբաններ Բուլենվիլեն, Գիզոն, Թիեռը և ուրիշները գտնում էին, որ Արևմտյան Եվրոպայում ֆեոդալական կարգերը ստեղծվել են գերմանական ցեղերի կողմից Հռոմեական կայսրությունը նվաճելու հետևանքով:

Այս «տեսությունը» հակապատմական է: Արտաքին արշավանքները, պատերազմները, բարբարոսական ցեղերի նվաճումները՝ ինքնըստինքյան չեն կարող ստեղծել արտադրության նոր եղանակ, եթե դրա համար դեռ չեն ստեղծվել համապատասխան

պայմաններ, եթե դրա համար անհրաժեշտ նախադրյալներ չեն հասունացել նյութական միջոցների և ամենից առաջ արտադրության ուժերի բնագավառում։

Այս «տեսությունը» դեռ իր ժամանակին մերժեցին Մարքսը և Էնգելսը։ Անդրադառնալով ֆեոդալիզմի ծագման պրոբլեմին Մարքսը և Էնգելսը գրել են՝

«Ֆեոդալիզմը ամենևին էլ չի փոխադրված պատրաստի ձևով Գերմանիայից։ Նրա ծագումը պետք է որոնել բուն նվաճման ժամանակ բարբարոսական զորքի ռազմական կազմակերպության մեջ, որը նվաճումից հետո միայն, շնորհիվ նվաճված երկրներում գտնված արտադրողական ուժերի ազդեցությանը, զարգացել ու դարձել է իսկական ֆեոդալիզմ»[1]։

Երկրորդ ուղղության ներկայացուցիչները՝ ռոմանիստներ Դյուբոն, Շամպոնները և ուրիշները ձգտում էին ապացուցել, որ ֆեոդալական սիստեմը ոչ այլ ինչ է, եթե պետական այն պատրաստի կարգերն ու սովորույթները, որոնք ստեղծվել էին Հռոմեական կայսրությունում նրա անկման նախօրեին և նրանք, իբր պատրաստի ձևով, անցնում են Հռոմը նվաճող բարբարոսներին, որոնք և յուրացնում են ֆեոդալիզմի այդ պատրաստի ձևերն ու սովորույթները։

Ինչպես գերմանական, այնպես էլ ռոմանական դպրոցների ներկայացուցիչները չհասկացան, չըմբռնեցին ֆեոդալիզմի էությունն ու առանձնահատկությունը և ուշադրությունը կենտրոնացնելով ֆեոդալական հասարակարգի քաղաքական և իրավական հատկանիշների, լավագույն դեպքում տնտեսական առանձին-առանձին հարցերի վրա, իրենց տեսադաշտից դուրս թողեցին ֆեոդալական հասարակարգի տնտեսական հիմքի և դասակարգային պայքարի պատմության հարցերը։

Սակայն մեզ համար մեծ վտանգ է ներկայացնում բուրժուական պատմական գիտության մի այլ, ավելի ռեակցիոն դրույթը։ Այս «տեսության» ներկայացուցիչները գտնում են, որ իբր Հին Արևելյան երկրները հանդիսացել են «հավերժ ֆեոդալիզմի երկիր» իրենց «արևելյան դանդաղաշարժությամբ», «անփոփոխությամբ», որ իբր Հին Արևելքում «հասարակության զարգացման և ոչ մի օրինաչափություն գոյություն չի ունեցել»։

Այս «հավերժ» ֆեոդալիզմի տեսության հիմքն այն է, որ բուրժուական պատմական գիտության ներկայացուցիչները, մարդկա-

---

[1] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. IV, стр. 64. (Ընդգծումը մերն է։)

յին հասարակության պատմությունը չեն դիտել որպես արտադրական հարաբերությունների մի ամբողջական սիստեմ, այդ հարաբերությունների հանրագումարը։ Բուրժուական պատմագրության ներկայացուցիչները ոչ միայն բացասել են հասարակության զարգացման օրինաչափությունը, այլև հասարակության զարգացման մեջ չեն տեսել կամ չեն ցանկացել տեսնել զարգացման պատմական պրոցեսի առաջատար դերը, չեն հետազոտել հասարակական հարաբերությունների զարգացումը իր կոնկրետ պատմական միջավայրում։

Ուսումնասիրելով գերազանցապես մարդկային հասարակության պատմության արտաքին երևույթները, արտաքին հատկանիշները, չխորանալով, չթափանցելով հասարակական զարգացման սոցիալ-տնտեսական հիմքի մեջ, նրանք Հին Արևելքի պատմական զարգացման ողջ ընթացքը համարել են որպես ֆեոդալիզմի դարաշրջան, իսկ անտիկ ստրկատիրական աշխարհը՝ որպես տիպիկ կապիտալիստական հասարակարգ։ Այսպես, օրինակ՝ բուրժուական սոցիոլոգիական դպրոցի ներկայացուցիչներից մեկը՝ Մաքս Վեբերը, Հին Աշխարհում տեսնում էր հասարակությունների և պետությունների մի շարք տիպեր, կամ ստադիաներ, որոնցում; ըստ նրա, քմահաճ կերպով համերաշխվում էին հողային սեփականության տարբեր ձևեր, պետական իշխանության տարբեր եղանակներ։ Նրա կարծիքով Հին Աշխարհում իրար կողքի գոյություն են ունեցել նախնադարյան համայնական կարգեր, ֆեոդալիզմ, ստրկատիրություն և կապիտալիզմ։

Այս բազմաթիվ ձևերն ու տիպերը ըստ Մաքս Վեբերի հավերժական անփոփոխ «իդեական-տիպական հասկացություններ էին»[1]։

Ռուսական պատմական գրականության մեջ հասարակական հարաբերությունների և կատեգորիաների հավերժական անփոփոխության «տեսությունը» զարգացրել և պաշտպանել է Մ. Ռոստովցևը։ Նա իր «Կոլոնատ» հայտնի հոդվածում խոսելով պտղեմեոսյան Եգիպտոսի մասին նշում է, որ այնտեղ կային «թագավորական հողագործներ», որոնք «շատ մոտ էին կանգնած ճորտին», իսկ թագավորական մոնոպոլիաներում եղած հարկատուներին նա անվանում է «իսկական ճորտեր»։

---

1 М. Вебер. Аграрная история древнего мира, Москва, 1923, стр. 393.

Ֆեոդալական հարաբերությունների անփոփոխության և ճորտական իրավունքի առկայության մասին Մ. Ռոստովցևն անդրադառնում է հելլենիստական Փոքր Ասիայի պատմությանը նվիրված իր ծանրակշիռ «Studien zur Geschichten des römanischen Kolonats» *աշխատության մեջ։*

Մ. Ռոստովցևի կարծիքով Փոքր Ասիայում ի սկզբանե անտի «բնակչությունը ոչ միայն հարկատու և ենթակա էր թագավորներին, այլև ճորտ էր, որոնք աշխատում էին ոչ թե իրենց, այլ թագավորական հողերի վրա»[1]։

Մեր պատմագրության մեջ այս տեսակետը պաշտպանեցին և զարգացրեցին Ն. Ադոնցը, մասամբ ակադ. Հ. Մանանդյանը և առանձնապես պրոֆ. Խ. Սամուելյանը։

«*Հայոց պատմության դուռը,— գրել է պրոֆ. Խ. Սամուելյանը,— Հայաստանում բացվում է ֆեոդալական հասարակական կազմով։ Շատ սուղ պատմական տեղեկություններ են մեզ հասել այդ հինավուրց դարերից, որպեսզի հնարավոր լիներ քիչ թե շատ որոշակի ներկայացնել այդտեղ տիրող արտադրական հարաբերությունների և սրա վրա խարսխված ֆեոդալիզմի սոցիալական պատկերը և ըստ այնմ բնորոշել ստրկության էությունը։ Սոցիալ-տնտեսական շերտավորումը Հայկական լեռնաշխարհում սկսվել էր տակավին նախահայկական շրջանում և ապա իր դասակարգային ներհակության արտահայտությունը գտել էր այն ֆեոդալ հասարակության մեջ, որը ներկայացնում է խալդական (ուրարտական) պետությունը։ Ուստի հայ էթնիկ տարրն իր կազմավորման պրոցեսում Հայկական լեռնաշխարհի սոցիալ-տնտեսական իրականության մեջ, դուրս գալով քայքայվող տոհմային հասարակարգի շրջանակներից,* խմորվում էր արդեն վաղուց տեղում գոյություն ստացած ֆեոդալական հարաբերություններում։ Այսպիսով, խալդական ֆեոդալիզմին հաջորդել էր հայկական ֆեոդալիզմը։

Հայկական ֆեոդալիզմը երկար ու ձիգ դարերի զարգացման պատմություն ունի։ Իսկապես Հայաստանի, կամ հայոց ամբողջ պատմությունը մինչև 18-րդ դարը ոչ այլ ինչ է, բայց եթե հայկական ֆեոդալիզմի պատմություն»[2]։

---

1 Rostowtzew, Studien zur Geschichten des römanischen Kolonats, *1910, էջ 308։*

2 Խ. Սամուելյան, *Ստրկությունը Հին Հայաստանում, տե՛ս ՀԽՍՀ Պատմության և գրականության ինստիտուտի «Տեղեկագիր», գիրք 2, Երևան, 1937, էջ 92, հմմտ. նույնի, Հին հայ իրավունքի պատմությունը, հատ. I, էջ 102 (ընդգծումները մերն են—Ս. Հ.)։*

Ինչպես նկատելի է պրոֆ. Խ. Սամուելյանը ոչ միայն հետագա, այլև նախապատմենական շրջանը համարում է ֆեոդալիզմի տիրապետության շրջան։

Ն. Ադոնցը մեր պատմագրության մեջ նույնպես զարգացրեց այն գրությունը, որ ֆեոդալիզմը, կամ պետականությունը ոչ այլ ինչ է, եթե առանձին տոհմերի մեխանիկական միակցություն, իրավաբանական կատեգորիա, քաղաքական իշխանության բաժանվածություն։

«Այս տեսքով,— գրում է Ն. Ադոնցը,— արդեն Աքեմենյան պետությունը ներկայացնում է թույլ կերպով զարգացած ֆեոդալական օրգանիզմ»[1]։

Անդրադառնալով ֆեոդալիզմի գենեզիսի պրոբլեմին Հին Հայաստանում, Ն. Ադոնցը գրել է. «Տոհմային հարաբերությունների ժամանակաշրջանը մարում է քաղաքական խմբումներով, որը տեղի ունեցավ Հայաստանում Զարեհի և Արտաշեսի օրոք։ Այդ ժամանակին է վերաբերում տոհմային կարգի փլուզումը և նոր սոցիալական հարաբերությունների (կարգա ֆեոդալիզմի—Ս.Հ.) ծագումը։ Հեղաշրջման էությունը արտահայտվում է սոցիալական դասվածի շերտավորումով և դասայնության հիմքերի առաջացումով. տոհմերի դեկավարը կամ պետը աստիճանաբար վեր է ածվում մենծանուն մարդու, իշխողի, այդպիսով հիմք դնելով ապագա տոհմային իշխանության»[2]։

Շարունակելով զարգացնել իր միտքը, հեղինակը նշում է. «Տոհմային հարաբերությունների կազմալուծումը, որին ուղեկցում էր դասայնության առաջացումը ի դեմս իշխանավորների, հետագա տիրող իշխանների, ավարտվում է Տիգրան Մեծի փոթորկալից ժամանակաշրջանում»[3]։ Այս սոցիալական «հեղաշրջումը», հեղինակի կարծիքով, արդյունք էր «պատերազմական ժամանակաշրջանի տագնապի», որն իբր «ստեղծում է բարենպաստ պայմաններ» տոհմային հարաբերությունները՝ դասային հարաբերություններով փոխարինելու համար»[4]։ Ակնհայտ է, որ Ն. Ադոնցը, տոհմային հարաբերությունների տիրապետության շրջանը համարում է մինչ Արտաշեսյան դինաստիայի տիրապետության էպոխան, իսկ Արտաշեսյան դինաստիայի հանդես գալը ենթադրում է

---

[1] Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, стр. 439.

[2] Նույն տեղում, էջ 406։

[3] Նույն տեղում, էջ 410։

[4] Նույն տեղում։

որպես տոհմային կարգի ու կենցաղի կործանման և դասայնության ու ֆեոդալական հարաբերությունների զարգացման շրջան։

Ն. Ադոնցը ոչ միայն որոշում է նախարարական-ֆեոդալական կարգերի ծագման և սաղմնավորման, այլև նրա անկման և վերացման ժամանակաշրջանը։ Հեղինակի կարծիքով «նախարարական կազմակերպությունները Հայաստանում գոյություն են ունեցել հին ժամանակներից մինչև մոնղոլական արշավանքները»[1]։

Ակադ. Հ. Մանանդյանը Հին Հայաստանում տոհմային հարաբերությունների և նախարարական-ֆեոդալական հարաբերությունների ու դասայնության զարգացումը տանում է մի քանի դար առաջ, քան Ն. Ադոնցը։

Հեղինակի կարծիքով տոհմային կազմակերպության քայքայումը և նախարարականացման ժամանակագրական ստորաբաժանումները, որ սահմանել է Ն. Ադոնցը, «հակասում են այն փաստական աղոտ տեղեկություններին, որ հայտնի են մեզ պատմական աղբյուրներից»։ Այնուհետև նա մեղադրում է Ադոնցին, որ նա «աչքաթող է արել սեպագիր արձանագրությունների կարևոր տվյալները»։ Ապա վկայակոչելով սեպագիր արձանագրություններում պահպանված մի շարք վկայություններ. ակադ. Հ. Մանանդյանը գտնում է, որ «սոցիալական որոշ շերտավորում տոհմա-ցեղային խմբակցությունների մեջ, ինչպես և ֆեոդալականության որոշ սաղմեր, կարող էին առանձնահատուկ լինել հենց խալդական մեծ պետության»[2]։ Ինչպես Ն. Ադոնցը, այնպես էլ նրա օրինակով ակադ. Հ. Մանանդյանը, սոցիալական այդ նոր երևույթների հիմնական գործոնը համարել են «պատերազմական ժամանակի տագնապը» և այդ գործոնով են բացատրել հայկական լեռնաշխարհում նոր երևույթների առաջացումը։ Ադոնցը,— ասում է ակադ. Հ. Մանանդյանը,— աչքաթող է արել այն կարևոր հանգամանքը. «որ համառ և երկարատև կռիվներ տեղի էին ունենում ոչ միայն Արտաշեսի և Տիգրան Մեծի ժամանակ, այլև դրանից առաջ արմենների առաջշարժումների ու հաստատման ժամանակ նորանվաճ երկրում»[3]։ Ապա վկայակոչելով Քսենոֆոնի համապատասխան հատվածները, շարունակում է. «տնտեսական անհավասարությունը, որ ստեղծվում էր հաղթված ժողովուրդների ստորադրմամբ նվաճողներին, հավանորեն, արմենների տիրապետության հնագույն իսկ

---

1 Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, стр. 236.

2 Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը..., էջ 248—249։

3 Նույն տեղում, էջ 249։

«այս շրջանում վերածվում էր քաղաքական ու իրավական անհավասարության և նպաստում, ըստ երևույթին, դասերի կազմակերպմանն»[1]։

Սակայն ակադ. Հ. Մանանդյանը միաժամանակ մատնացույց է արել, որ չպետք է դիրադնահատել «պատերազմական ժամանակաշրջանի ազդեցությունը» և նվաճումների նշանակությունը, անհրաժեշտ է դրա հետ միասին նկատի ունենալ «երկրի տնտեսական դրությունը և տնտեսական այն հեղաշրջումը (?) որ տեղի ունեցավ Սելևկյանների ժամանակ»։ Տնտեսական այդ «հեղաշրջումը» հեղինակի կարծիքով, պայմանավորված էր նաև հելլենիստական տիպի բաղաքների, առևտրի, դրամական շրջանառության զարգացմամբ։ Այս նոր երևույթները, անկասկած, պետք է ազդեին «սոցիալական հարաբերությունների վրա և արագացնեին տոհմային հասարակության քայքայումը»։ Ուրեմն, եզրափակում է իր դիտողությունները ակադ. Հ. Մանանդյանը, «տոհմային ձևերի բեկումը և դասերի ու ֆեոդալիզմի ծագումը Հին Հայաստանում պետք է դնել ոչ թե Արտաշեսի, Զարեհի և Տիգրան Մեծի ժամանակ, ինչպես այդ ենթադրել է Ադոնցը, այլ նախորդ, ավելի հնագույն շրջանում»[2]։ Սակայն այս էլ դեռ բավարար չէ։

«Հավանական է ենթադրել,— շարունակում է հեղինակը,— ցեղապետների և տոհմապետների իշխանության որոշ ընդարձակում և ազնվականության ու ֆեոդալականացման ասիճանական զարգացում ոչ միայն նախաարմենական ցեղային զանգվածներում, այլև արմենական տոհմային խմբավորումներում»[3]։

Արդեն Արտաշեսի և Զարեհի անկախ թագավորությունները, ըստ հեղինակի, «ունեցել են արդեն ֆեոդալական կազմություն և նախարարականության հիմքեր», որոնք անխախտ կերպով իրենց գոյությունը պահպանել են նաև Արշակունիների ժամանակ[4]։

Այնուհետև ակադ. Հ. Մանանդյանը ոչ միայն որոշում է ֆեոդալիզմի դեմեղիսի ժամանակաշրջանը, այլև նրա վախճանը։ Նա չի ընդունում Ն. Ադոնցի այն կարծիքը, որ 7-րդ դարից սկսած հիմք է դրվում «արշակունյան ձևի նախարարության քայքայմանը», որ «արարների խիստ ու սկզբներում թշնամական քաղաքականությունը նախարարների նկատմամբ նպաստում էր այդ քայքայ-

---

[1] Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը..., էջ 250։

[2] Նույն տեղում, էջ 250—251։

[3] Նույն տեղում, էջ 251։

[4] Նույն տեղում, էջ 251։

մանը»։ Ակադ. Հ. Մանանդյանն առանց լուրջ հիմքի մեղադրում է ն. Ադոնցին և զարգացնում է այն միտքը, որ իբր մինչև 7-րդ դարի վերջը «արաբների քաղաքականությունը նախարարների հանդեպ... եղել է միանգամայն մեղմ ու նախարարությունների զորեղացման համար ավելի քան նպաստավոր», որ «կարելի է հաստատապես պնդել, որ արաբների նվաճած երկրներից և ոչ մեկը չի ունեցել այն բացառիկ ինքնավար իրավունքները, որ տրված են եղել նախարարական Հայաստանին»[1]։

Այս դրույթը նույնպես պատմականորեն չի հաստատվում։ Անկասկած է, որ արաբների աշխարհավեր արշավանքները և ասպատակությունները չեն բերել և չէին կարող բերել բարենպաստ պայմաններ երկրի արտադրողական ուժերի զարգացման համար։ Հայտնի է, որ արաբական արշավանքների ժամանակաշրջանի պատմիչները դառը և ողբերգական գույներով են նկարագրել հայ ժողովրդի թշվառ, ստրկական վիճակը, երկրի ամայացումը, ծաղկած քաղաքների, գյուղերի, ավանների անկումն ու քայքայումը։

Մենք ոչ մի վկայություն չունենք, ինչպես կարծում է ակադ. Հ. Մանանդյանը, որ «Հայաստանի ֆեոդալական իշխանությունները հենց իրենք հոժարաբար անձնատուր լինեին նվաճողներին»։ Արաբների դեմ Հայաստանում բռնված ժողովրդա-ազատագրական շարժումները ապացուցում են հակառակը, իսկ այդ շարժումներին ակտիվորեն մասնակցում և ղեկավարում էին հայ իշխանական-նախարարական շատ ու շատ տներ։ Ակադ. Հ. Մանանդյանը ոչ միայն որոշում է նախարարական-ֆեոդալական հարաբերությունների ծագման, այլև տեղության ժամանակաշրջանները։ Մոնղոլները, հեղինակի կարծիքով, սկիզբ դրեցին Հայաստանի ֆեոդալական կարգերի անկմանը։ Այդ անկումը ավելի խորացավ 14-րդ դարի կեսերից սկսած, երբ Հայաստանը դարձավ Ջելայիրյանների, Ջոպանյանների, Լանկթամուրի, Կարա-Ղոյունլու և Ակ-Ղոյունլու Թուրքմենների ասպատակությունների և արշավանքների թատերաբեմ։

Պատմական ահա այս շրջանում է, որ «հայկական ֆեոդալիզմը ապրում էր արդեն իր ծանր հոգևարքը», իսկ հետագայում պարսից և օսմանյան տիրապետության ժամանակաշրջանում «նախկին ֆեոդալիզմից մնացել էին... միայն մի քանի բեկորներ»։ «Հայկական ֆեոդալիզմի քայքայմամբ,— շարունակում է հեղինա-

---

1 Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը..., էջ 252—253։

կը,— ֆեոդալիզմը Հայաստանում ոչ թե վերանում էր, այլ փոխարինվում պարսկական և օսմանյան յուրահատուկ ֆեոդալիզմով»[1]:

Այսպիսով, Հայաստանում ֆեոդալական հասարակարգի ծագման, նրա պատմության հարցերը խիստ մշուշապատ են և մեծամասամբ հավանական կռահումների, ենթադրությունների, կարելիների, դուշակությունների արդյունք: Հետազոտողների մի մասը մի դեպքում ֆեոդալական հասարակարգի ծագումը համարել են «շատ հին ժամանակների» արդյունք և նրա վախճանը լծորդել են արաբական արշավանքների ժամանակաշրջանի հետ (Ն. Ադոնց), մյուս դեպքում ֆեոդալական հասարակարգի «որոշ սաղմերը» համարել են հատուկ, նույնիսկ «Ուրարտական մեծ պետությանը» և նրա քայքայումը հասցրել են մինչև 14-րդ դարի կեսերը (Հ. Մանանդյան), երրորդ դեպքում ֆեոդալական հասարակարգի սաղմնավորումը սկսել են պատմական անհիշելի ժամանակներից և հասցրել 18-րդ դարը (Խ. Սամուելյան):

Անկասկած է, որ պրոֆեսորներ Ն. Ադոնցի, Խ. Սամուելյանի և ակադ. Հ. Մանանդյանի հետազոտություններն առաջին լուրջ փորձերն էին, որոնց հիմնական նպատակն էր բացահայտել և արժևորավորել Հայաստանում ֆեոդալիզմի, ֆեոդալական հարաբերությունների, ֆեոդալական-նախարարական կարգի ու կենցաղի, ֆեոդալական հասարակական տնտեսական ֆորմացիայի ներքին առանձնահատկությունների, հողի մասնավոր և պետական սեփականության և դրանց հետ առնչվող սոցիալ-տնտեսական կյանքի այլ սաղմերի պրոբլեմները: Նրանք առաջին հետազոտողներն էին, որ շրջանառության մեջ դրեցին ինչպես հայկական, այնպես էլ օտար ծագում ունեցող պատմական աղբյուրներ, փաստեր, վկայություններ, որոնք մեծամասամբ անհայտ էին նախորդ հետազոտողներին: Նրանց աշխատությունների պատմագիտական արժանիքները հանդիսանում են և այն, որ այդ աշխատությունները լրացված են բազմաթիվ և բազմազան մեկնություններով, ծանոթագրություններով: Սակայն հարցի դրվածքը, քննարկման մեթոդը և հատկապես մեթոդոլոգիան մեզ համար անընդունելի են: Հեղինակների կարծիքով ֆեոդալական հարաբերությունների սաղմնավորումը և զարգացումը, հողօգտագործման և հողային մասնավոր սեփականության առաջացումը պայմանավորված էր կամ «պատերազմական ժամանակի տագնապով», կամ «արմեն-հայերի դաղթի հետևանքով»: Իբր այս գործոնների հիման վրա է, որ սկսում է տոհմային հարաբերություն-

---

[1] Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը..., էջ 255—256։

ների, տոհմային կյանքի և կենցաղի բեկումն ու քայքայումը և դասայնության ու ֆեոդալիզմի զարգացումը։ Այդ քայքայումը իբր պայմանավորված էր «արյունակցական-ազգակցական» կապերի վրա խարսխված «տոհմային առանձին միությունների և միավորումների» մեջ առանձին, իշխող և հզոր անձնավորությունների հանդես գալով, անձնավորություններ, որոնք բռնի կերպով դրավում են «տոհմին» պատկանող հողային տերիտորիաները և այն յուրացնում են որպես մասնավոր սեփականություն։

Այս յուրահատուկ «սխեմայի» համաձայն, պատմական զարգացման որոշակի աստիճանում, առանձին տոհմերն ու միությունները իրենց տեղը զիջում են նախարարական-ֆեոդալական տներին և այս վերջիններս ոչ այլ ինչ են, եթե նախկին տոհմերի սոսկ մեխանիկական միակցություններ։ Այս դրույթը Ն. Ադոնցը ավելի ընդարձակ կերպով զարգացրել է իր վերջերս լույս տեսած «Հին հայ շինականությունը» հոդվածում։ Սկզբնական շրջանում, գրել է հեղինակը, «իշխանական տները կազմում էին մի միություն տանուտերների իրավասության ներքո, իսկ հետո միությունները քայքայվում են սեպուհների կենտրոնախույս ձգտումների հետևանքով»։ Սեպուհները ձգտում են դուրս թռչել «տոհմային շաղկապից» և ստանում են իրենց հաղարաժինը սեպուհականը կամ սեփականը»։ Սեպուհների անջատումը տոհմերից որպես «ազնվական առանձին դաս» արդեն նշան էր «նախարարական ավանդների քայքայմանը»[1]։

Ուրեմն տոհմերի քայքայման հետևանքով հանդես են գալիս նախարար-ֆեոդալները, իսկ սեպուհների հանդես գալը պայմաններ է ստեղծում նախարարական կարգերի քայքայման համար։ Չնայած այս «տեսության» ամբողջ օրիգինալությանը, նա այսօր մեզ այլևս բավարարել չի կարող։ Այս «սխեմայում» ոչ միայն չեն լուծված, այլև չեն բարձրացված այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են՝ թե երբ և ի՞նչ պայմաններում, սոցիալ-տնտեսական ինչպիսի նախադրյալների հիմքի վրա ծագեց և զարգացավ հողի մասնավոր սեփականությունը, իշխող դասերի ո՞ր ներկայացուցիչները ո՞ւմ հողերը բռնագրավեցին և սեփականացրին։ Ո՞ւմ էր պատկանում հողօգտագործման և սեփականատիրական իրավունքը այդ «հնագույն շրջանում»։

* *

Հռոմի և Պարսկաստանի դեմ հայ ժողովրդի երկարատև և դաժան պայքարի հետևանքով, մեր թվականության առաջին դարում

[1] Ն. Ադոնց, Հին հայ շինականությունը, գլ. I։

վերականգնվեց հայկական պետականությունն՝ իր բնական սահմաններով։ Հայաստանում հաստատվեց Արշակունիների դինաստիան։ Սկսած մեր թվականության 65 թվից մինչև 2-րդ դարի հիսունական թվականները Արևելքում և այդ թվում Հայաստանում, հաստատվեց երկարատև խաղաղ մի ժամանակաշրջան, որի պայմաններում հայ ռազմաստրկատեր ավագանին աստիճանաբար ոչ միայն ընդարձակեց իր հողային տիրությունները, այլև հանդես եկավ որպես քաղաքական խոշոր ուժ։

Ձևավորվող և զարգացման վերելք ապրող ֆեոդալական արտադրական հարաբերությունները արմատական և որակական փոփոխություններ առաջացրին նախկին ռազմա-ստրկատիրական ավագանու և սոցիալական, և քաղաքական կյանքում։ Հայկական նախարարական-ֆեոդալական դասը կազմավորվեց և ձևավորվեց նախաֆեոդալական շրջանի «երևելի և պատվելի» տոհմապետներից, ռազմա-հողատեր արմենական ավագանուց, քրմապետներից, սակայն այդ սոսկ մեխանիկական փոփոխություն չէր։

Հին Հայաստանում Արշակունի թագավորները, բդեշխները, մեծամեծ, ավագ, կրտսեր նախարարները, գավառների, «աշխարհների», շրջանների տեր-տանուտերերը, բազմաբանակ սեպուհները, մանր և միջին հողատեր ազնվական—ազատները, արքունի տան անդամները, ասատանիները և «ազատանիի» մեջ մտած այլ դասերն ու խավերը, քրիստոնեության մուտքից հետո բազմաթիվ եկեղեցիներն ու վանքերը, հայ հողևոր դասի ավագանին համառ, հետևողական պայքար են մղում երկրի հողային ֆոնդերի մեծ մասը իրենց ձեռքում կենտրոնացնելու համար։ Պատմական աղբյուրների հետազոտությունը հնարավորություն է ընձեռում որոշելու հողատիրության և հողօգտագործման հիմնական ձևերը Հին Հայաստանում, կամ, ինչպես ընդունված է ասել, վաղ ֆեոդալիզմի շրջանում։

1. Արքունական-թագավորական հողատիրություն։ Արքունական-թագավորական հողատիրությունն իր սկիզբն է առնում դեռևս նախաարշակունյան շրջանում։

Մովսես Խորենացին վկայում է, որ երբ Տիգրանից հետո գահ է բարձրանում նրա Արտավազդ որդին, «ժառանգեցուցանէ զեղբարսն իւր և զքոյս ի գաւառս Աղուոյ ովսի և Առբերանոյ, թողուլ ի նոսա զմասն արքունի որ ի շէնսն այնց գաւառաց, հանդերձ առանձինն մտից և ոռճկաց...»[1]։

---

[1] Մ. Խորենացի, էջ 137։

Արտաշես թագավորը իր Սմբատ զորավարին, պետությանը մատուցած ծառայության դիմաց նվիրում է «զմասն արքունի, որ ի շէնս Դողթան, և զՍլատու ակունսն, և առ այսոքիւք՝ և զաւարն ամենայն նմա թողու»[1]։ Մ. Խորենացին Այրարատը կոչում է «կալուածս արքայի»[2]։ Աշտիշատը Տարոն գավառի այն գյուղերից էր, որ պատկանում էր արքունիքին, որպես «սեպհական գիւղ»[3]։

Վաղարշակ-Տրդատը «Արեղեաք և Դարեղեաք» նախարարական տներին արքունի ոստանից նվիրում է «շէնս...»։[4] Վաղարշակ-Տրդատը «կարգէ ի թիւ նախարարութեան ազգաց... և զունդս և պահապանս դրան արքունի կարգէ զշորս... որք բուն ոստանն անուանեալ, որք ընդ ժամանակս-ժամանակս ժառանգութիւն ի հարանցն ընկալեալ գիւղս և դաստակերտս»[5]։ Արտաշեսի Արտավազդ տղան ուշնշայնում է Արզամին, որի համար «առնուլ ի բաց ի նոցանէ զերկրորդութեանն պատիւ՝ յաւելու ևս հանել և զնախճաւան, և ըստ հիւսիսոյ Երասխայ զամենայն գիւղս, յորում և ապարանս և բերդս ի նոցանէ շինէ իւր ի ժառանգութիւն»[6]։

Մ. Խորենացին հայ Արշակունի առաջին թագավորների ժամանակաշրջանի հետ է լծորդում երկրի ֆեոդալականացման, թագավորական, նախարարական-ֆեոդալական դասերի հողային տիրույթների, ժառանգական իրավունքների և քաղաքական իշխանության կոնսոլիդացիայի պատմությունը։

Արշակունի Վաղարշակ-Տրդատ թագավորը,— գրել է պատմիչը,— «ընդարձակ տիրեաց ի վերայ սահմանաց իւրոց, և կարգս կենցաղականս, որչափ մարթէր, սահմանեաց աշխարհիս. և նախարարութիւնս և նոցին նախարարութեանցն նահապետութիւնս հաստատեաց զարս պիտանիս...»[7]։ Հետագայում, առանձնապես II—V դարերում արտադրության ֆեոդալական հարաբերություններն ամրանում են ընդարձակվում ու խորանում։ Սոցիալ-տնտեսական

---

[1] Մ. Խորենացի, էջ 183։

[2] Նույն տեղում, էջ 191։

[3] Նույն տեղում, էջ 122։

[4] Նույն տեղում, էջ 110։

[5] Նույն տեղում, էջ 111—112։

[6] Նույն տեղում, էջ 180—181։

[7] Նույն տեղում, էջ 104։ Այստեղ հիշատակված Վաղարշակն իսկապես հայ Արշակունի առաջին թագավոր Տրդատ առաջինն է։ Մ. Խորենացին հետևելով ժողովրդական ավանդություններին, Հայաստանում Արշակունիների դինաստիայի հիմնադիրը համարում է Վաղարշակին, որը իրականում Տրդատի ավագ եղբայրն էր և Պարթևների թագավորը։

այս նախադրյալների հիման վրա ձևավորվում ու կազմավորվում է վաղ ֆեոդալական հայկական պետությունը։

Արքունական հողերի համար դաժան, հաճախակի զինված ընդհարումներ են տեղի ունենում Արշակունի թագավորների, արքունական տան անդամների և խոշոր նախարար-հողատեր ֆեոդալների միջև։

Տիրիթը և Վարդան Մամիկոնյանը համոզում են Արշակին, թե Գնելը խորհել է սպանել թագավորին, որպես անտարակույս փաստ նրանք մատնացույց են անում և ասում, որ «Ահա տես, արքայ, զնշան իրին, զի բնակեցաւ Գնել յԱյրարատ, ի կալուածս ձեր թագաւորաց...»։ Արշակը զիմելով Գնելին, ասում է. «ընդէ՞ր բնակեցար յԱրարատ և լուծեր զկարգ հայրենեաց»[1]։

Արշակունի թագավորները «հայրենաց» ժառանգության իրավունքը խախտողներին խիստ ու դաժան պատժի էին ենթարկում։ Այս կերպ են վարվում նաև Գնելի հետ։ Չնայած նա թողնում է Այրարատը և բնակություն հաստատում Աղիովիտ և Առբերանի գավառներում, սակայն նրան թագավորը սպանել է տալիս՝ գահը և Այրարատը նրա հավիշտակությունից ազատվելու համար։

Հայ արշակունի թագավորները, գահաժառանգները, թագավորական տան անդամները ունեին հողային ընդարձակ կալվածներ Հայաստանի համարյա բոլոր գավառներում։ Այս հողային տիրույթները նրանք ընդարձակում էին՝ ա) ռազմական արշավանքների և պատերազմների միջոցով գրաված նոր տերիտորիաների, բ) առանձին, անկախ, գահի նկատմամբ կենտրոնախույս և ազատամբ նախարարների հողերի և դ) դյուղական համայնքներին պատկանող հողերի բռնագրավման ճանապարհով։

Հայ Արշակունի «զլուխ երկրին Հայոց», «բնակ ամբ երկրին» կամ «բնատէր երկրին Հայոց» թագավորների ժառանգական սեփական կալվածները հայտնի էին խիստ բնորոշ «արքունի ոստան» կամ «սեպհականութիւն տանն թագաւորաց» անունների տակ։

Մատենագրական աղբյուրները պահպանել են բազմաթիվ տեղեկություններ արքունական կամ թագավորական տիրույթների մասին։ Մովսես Խորենացին վկայում է, որ Վաղարշակ-Տրդատ թագավորը «արքունի ոստանից» գահին մատուցած ծառայության դիմաց կալվածներ է նվիրում Շարայից սերված Գուշար իշխանին։

Գուշարը որպես ժառանգական տիրույթ ստանում է Ջավախքի կես մասը, Կողբը, Ծոփքը, Ջորը մինչև Հնարակերտ բերդը։ Նույն

[1] Մ. Խորենացի, էջ 282։

թագավորը Սարասարի տոհմից սերված Շարաշին պարգևում է «զգաւառս...զԱրձն և որ շուրջ զնովաւ, և զլեառնն Տաւրոս, որ և Սիմ, և զԿղեսուրն ամենայն»։ Վաղարշակ-Տրդատը «Մարացւոցն» տերերին նվիրում է «զամենայն շէնս, որք ի գերութիւնէն Մարաց», նա Հայաստանի արևելյան գավառների կառավարիչ է նշանակում Կողմեա իշխանին, որին նվիրում է «... մեծ և անուանի և բազմաբիւր... զԱռան... որ հատանէ զդաշտն մեծ, որ անուանի Կուր... զդաշտն Աղուանից և զլեռակողմն նորին դաշտի, ի գետոյն Երասխայ մինչև ցամուրն որ Հնարակերտս»։ Վաղարշակ-Տրդատն «ի զարմից թագաւորացն» տան անդամներին լայն իրավունքներ և արտոնություններ է տալիս «արքունի բունն ոստանից» ժառանգելու «...գիւղս և դաստակերտս»[1]։

Ապարանի շրջանում գտնված և ակադ. Մ. Ռոստովցևի կողմից վերծանված հունարեն մի արձանագրության մեջ հիշատակված է, որ Տրդատ թագավորը Գնթունիների տոհմին կալված է նվիրում Նիգ գավառում[2]։

Մ. Խորենացին վկայում է, որ Տրդատ թագավորը Կամսար իշխանին որպես «...ազգականի իւրում և մտերիմ հարազատի...» տալիս է «...ժառանգութիւն զմեծ դաստակերտն Արտաշիսի, որ այժմ ասի Դրասխանակերտ, և զգաւառն Շիրակ...»[3], իսկ Կամսարի մահից հետո նրա որդի Արշավիրը ստանում է «... զքաղաքն Երուանդայ և զնորին գաւառն մինչև ցկատար ձորոյն մեծի...»[4]։

Արքունիքի անդամները և դահաժառանգները հողային ընդարձակ տերիտորիաներ ունեին Հաշտյանք գավառում։ Սակայն, ինչպես վկայում է Մ. Խորենացին, նրանք Տիրան թագավորից պահանջում են, ասելով, «ընդարձակեա մեզ զժառանգութիւնս, զի նեղ է»։ Տիրանը «իւրոյ ազգին Արշակունեաց» տան ժառանգներին հողային նոր տիրույթներ է նվիրում Աղիովիտ և Առերանի գավառներում։ Նույն թագավորը «արքունի ոստանից» հողեր է նվիրում Երախնավուն, իսկ սրա դաստիարակ Գրուասպին տալիս է Դիադինի շրջանում գտնված «...զաւանն Տատեօնս հանդերձ ագարակօքն և զայլին մեծ...»[5]։

---

[1] Մ. Խորենացի, էջ 110—116, 187, 193—194։

[2] М. Ростовцев, Апаранская греческая надпись царя Тиридата. (см. Аннийская серия, № 6, СПБ, 1911).

[3] Մ. Խորենացի, էջ 241։

[4] Նույն տեղում։

[5] Նույն տեղում, էջ 193—194։

Տիրան թագավորը իր թոռ Գնելին նվիրում է «զամենայն ինչս իւր, և զկալուածս դիւղից և դաստակերտաց. և ի նմին աւանի Կոտաշ հրամայէ ընակել»։ Գնելը ոչ միայն ժառանգում է իր հոր և պապի կալվածները, այլև Շահապիվանը, որը «ի մայրենի հաւոյ իւրոյ Գնելոյ Գնունւոյ հասեալ էր ցնա»[1]։

Արշակունի Արտաշես թագավորն Ամատունիների նախարարական տան անդամներին շնորհում է բազմաթիվ նվերներ, այդ թվում «գեղիւք և դաստակերտք»[2]։ Խոսրով թագավորը Վաչե Մամիկոնյանին նվիրում է «... զկանս Ջանջանակին և զՋրարաշխս և զՅլու գլուխ, ամենայն դաւառակօքն հանդերձ...»[3]։ Արշակ թագավորը ողբում է, որ Հայաստանը բաժանելուց հետո, ինքը ստիպված թողնելու է «...զանձկալի և զամենատենչ վայրս երկրիս Այրարատոյ, զբնիկ և զսեպհական տեղիս նախնեաց... զբնիկ ժառանգութիւն նախնեաց իւրոց...»[4]։ Ոչ միայն առանձին գյուղեր, այլև քաղաքներ հանդիսանում էին Արշակունիների սեփականությունը։ Ղազար Փարպեցին Վաղարշապատը համարում է «զբնիկ սեպհական կալուածն աղգին Արշակունեաց...»[5]։

Աղբյուրները պահպանել են վկայություններ նաև արքունի տան անդամների սեփական, օտարելի և ժառանգական կալվածների մասին։ Փավստոս Բուզանդը վկայում է, որ Արշակ թագավորի կին Փառանձեմը Մրջյունիկ երեցին նվիրում է «զգեղն... ի նահանդէն Տարօն դաւառէն, որում անուն Գոմկունք կոչին»[6]։ Արշակունի թագավորները բռնագրավում էին նաև եկեղեցապատկան հողերի մի մասը[7]։

Արշակունի թագավորների հողասեփականատիրական իրավունքը ոչ միայն տարածվում էր «արքունի ոստանի», «բնիկ» և «սեպհական» տիրույթների, այլև երկրի ընդերքների, թանկագին և ազնիվ մետաղների և ջրային ռեսուրսների վրա։ Արքունիքն ուներ իր ժառանգական ձկնորսարանները, աղահանքերը, ոսկու, արծաթի, կապարի, երկաթի հանքերը, որոնց եկամուտների մեծ մասը գնում էր արքունիքի ռազմական և վարչական ապարատի պահպանության համար։

---

[1] Մ. Խորենացի, էջ 281—284։
[2] Նույն տեղում, էջ 187։
[3] Փ. Բուզանդ, էջ 16։
[4] Ղ. Փարպեցի, էջ 9։
[5] Նույն տեղում, էջ 11։
[6] Փ. Բուզանդ, էջ 105։
[7] Նույն տեղում, էջ 194։

Բյուզանդական պատմիչ Պրոկոպիոս Կեսարացին վկայում է, որ Արշակունիների և Մարզպանության շրջանում Ճորոխ գետի վերին հոսանքներում գտնվող հայկական Սպեր-Սպիրիտիդն շրջանի ոսկու հանքերը սկզբնական շրջանում պատկանում էին Արշակունի թագավորներին, իսկ Արշակունիների դինաստիայի անկումից հետո այդ հանքերը հռչակվում են սասանյանների սեփականություն[1]:

Այսպիսով, Արշակունյաց Հայաստանում թագավորի և արքունիքի հողատիրության իրավունքը տարածվում է «արքունի ոստանի» և թագավորական տան ժառանգական տիրույթների վրա: Արդեն 4-րդ դարի վերջերին և առանձնապես 5-րդ դարի 30-ական թվականներին, երբ բյուզանդական կայսրությունը և պարսկական արքունիքը ոչ միայն բաժանում են պատմական Հայաստանը, այլև լիկվիդացնում Արշակունիների քաղաքական տիրապետությունը, երկրի էկոնոմիկայում և քաղաքական կարգերում գերակայությունը Արշակունիներից անցնում է խոշոր նախարարական-ֆեոդալական տների և եկեղեցու ձեռքը:

2. Բդեշխները որպես խոշոր հողատիրության ներկայացուցիչներ: Արշակունի թագավորներից հետո ֆեոդալական հիերարխիայում երկրորդ տեղը գրավում էին շորս «դահերէց», «դահակալք», «սահմանապահք», «սահմանակալք», «կողմնակալք», կամ «կողմնապահք» բդեշխները:

Ագաթանգեղոսը, Փավստոս Բուզանդը, Մ. Խորենացին վկայում են, որ Հայաստանի հարավ-արևելյան սահմաններում իշխում էր «Նոշիրական բդեշխ»-ը, հարավում՝ «Արուաստան կողմանէն»՝ «Աղձնեաց բդեշխ»-ը, Հայաստանի հարավ-արևմտյան սահմաններում, «Ասորեստանեաց կողմանէն» «Ծոփաց բդեշխ»-ը, իսկ հյուսիսում «ի Մասքթաց կողմանէն» «Գուգարաց բդեշխ»-ը[2]:

«Բդեշխ» կամ «բդեշխ» տերմինի ստուգաբանությունը տվել են Ն. Ադոնցը, ակադ. Հ. Մանանդյանը և Գ. Ղափանցյանը: Ն. Ադոնցի կարծիքով բդեշխները ծայրամասի իշխաններ էին և անկախ հայ Արշակունի թագավորներից[3]:

Ակադ. Հ. Մանանդյանը բդեշխներին համարում է ամենարարձր կարգի իշխանները, որոնք «համապատասխանում են անշուշտ, Սա-

---

[1] Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, стр. 25.

[2] Ագաթանգեղոս, էջ 440—441, Փ. Բուզանդ, էջ 18—19, 135, Մ. Խորենացի, էջ 71, 114, 116:

[3] Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, стр. 450—451.

ական Պարսկաստանի sathradhar-ներին (=աշխարհակալ), որոնք նույնպես իշխանական ամենաբարձր խավն էին Պարսկաստանում»[1]։

Վերջերս ակադ. Գ. Ղափանցյանը իր խիստ արժեքավոր մի հոդվածում առաջարկում է բդեշխ տերմինի նոր ստուգաբանություն։ Եթե անցյալում պատմաբան-բանասերները բդեշխը համարել են իրանական ծագում ունեցող տերմին, ապա ակադ. Գ. Ղափանցյանը հանդել է այն եզրակացության, որ բդեշխը ոչ թե իրանական, այլ փոքր ասիական հեթիթական-տեղական ծագում ունի։

«Ինձ մոտ կասկած չկա,—ամփոփում է իր հոդվածը ակադ. Գ. Ղափանցյանը.— որ pitiaxs կամ bitiaxs (bidiaxs) բառը և նրա կարևոր սոցիալ-քաղաքական նշանակությունը հին փոքր-ասիական ծագում ունի։ Իրանական աշխարհը կարող էր նրան փոխառնել, այդ դարպի օրինակներ հանդիպում են այլ դեպքերում»[2]։

Մատենագրական աղբյուրները միաձայն վկայում են, որ բդեշխները չէին ենթարկվում թագավորական և ոչ մի գործակալի կամ գործակալության, ազատ էին ամեն տեսակի հարկերից և պարտավորություններից, արքունիքում չունեին հատուկ տեղ, ոչ բարձ և ոչ էլ պատիվ. նրանք իրենց դիրքով բարձր էին կանգնած նախարարական տների բոլոր ավագ և կրտսեր իշխաններից։

Գտնվելով նախապատվության շրջանակներից դուրս և արտոնյալ վիճակում, այնուամենայնիվ բդեշխները ենթակա էին Արշակունի թագավորներին և հանդիսանում էին նրանց «ծառաները», «գործակալները» կամ վասալները։ Որ բդեշխները Արշակունի թագավորների «ծառաներ», «գործակալ-վասալներն» էին, այդ առթիվ կան մի շարք ուղղակի վկայություններ։

Խոսրով թագավորի դեմ, ասում է Փ. Բուզանդը, «ապստամբեաց... մի ի ծառայից նորա մեծ իշխանն Աղձնեաց, որ անուանեալ կոչէր բդեաշխն, որ էր մի շորից, դահիրեց, բարձէրեց տաճարին արքունի»[3]։ Պարսից Շապուհ թագավորն ապստամբում է Հայաստան, նրա հորդաները «առին աւերեցին զմեծ քաղաքն Տիգրանակերտ, որ էր ի դաւառին Աղձնեաց յիշխանութեան բդեաշխին...»[4]։ Արշակ թագավորի դեմ ապստամբվում են «նախ բդեաշխն Աղձնեաց, և Նոշիրական բդեաշխն... և յետ սորա Գուգարաց բդեաշխն...»,

---

[1] Հ. Մանանդյան. Ֆեոդալիզմը..., էջ 37։

[2] Г. А. Капанцян, О двух социально-политических терминах древнего Ближнего Востока (см. ВДИ, 1949, № 3, стр. 13).

[3] Փ. Բուզանդ, էջ 18—19։

[4] Նույն տեղում, էջ 120։

որոնց պատմիչը կոչում է արքունի գործակալներ[1]։ Ղազար Փարպեցին և Մ. Խորենացին բդեշխներին կոչում են «աւագս կողմանցն», «զբդեշխութիւն կողմանցն»[2]։

Ստ. Օրբելյանը խոսելով Գրիգոր Լուսավորիչի և Տրդատ Թագավորի ձեռնարկումների մասին, սրանց է վերագրում նաև բդեշխությունների հաստատման կարգը։ Ըստ պատմիչի «Սոքա էին զահագլուխք ամենայն իշխանացն Հայոց։ Իսկ զօրացն և աշխարհին չորս միայն կացուցանէ, ուրոյ թագաւորութեանն երկրորդ հրամանատարս ի վերայ ամենայնին։ Արևելեան կողմանն՝ իշխանն Սիւնեաց 21 իշխանօք. հիւսիսային կողմանն՝ բդեաշխն Դուգարացւոց 22 իշխանօք. արևմտեան կողմանն՝ Կորդուացին 21 իշխանօք. հարաւային կողմանն՝ իշխանն Անգեղտանն 22 իշխանօք...»[3]։

Այսպիսով, Հայոց չորս բդեշխներն ունեին իրենց գերիշխանության տակ 86 վասալ իշխաններ, որոնք, հավանական է, իրենց հերթին ունեին ավելի մանր վասալներ։

Հանդիսանալով թագավորների վասսալներ, այս 4 բդեշխներն էլ հավասար չէին. նրանք, մեկը մյուսից տարբերվում էին իրենց դավառի, աշխարհի, տնտեսական և ռազմա-քաղաքական նշանակությամբ։ Աղբյուրները խոսելով բդեշխների մասին, առաջին հերթին հիշատակում են Անգեղտան, ապա մյուս բդեշխներին։

Արշակունիների օրոք, բդեշխներն արդեն հանդես են գալիս որպես խոշոր հողատեր, զահերեց իշխաններ։ Նրանք ունեին իրենց կալվածները և կախյալ գյուղացիներ։ Անկասկած է, որ բդեշխությունը իր ակունքները առնում էր պատմական ավելի հին ժամանակներից, սակայն նա, որպես ֆեոդալական ինստիտուտի բնորոշ երևույթներից մեկը, ձևավորվում է հայ Արշակունիների օրոք և իր գոյությունը շարունակում է մինչև 5-րդ դարը։

5-րդ դ. Սասանյան Պարսկաստանը Հայաստանի քաղաքական անկախության լիկվիդացիայի հետ միաժամանակ վերջ է տալիս բդեշխություններին, որպես քաղաքական ինքնուրույն իշխանության ներկայացուցչության։

3. Նախարարները, որպես խոշոր հողատեր ֆեոդալներ։ Նախարարական-ֆեոդալական հասարակական-տնտեսական ֆորմացիան, որպես հայ ժողովրդի պատմական կյանքի ամենաբնորոշ երևույթներից մեկը, ձևավորվում է ու կազմավորվում Արշակունինե-

---

1 Փ. Բուզանդ, էջ 135։

2 Մ. Խորենացի, էջ 71։

3 Ստ. Օրբելեան, էջ 24—25։

րի օրոք։ Նախարարական կարգերը հանդես են գալիս Արևելյան կամ պարսկական Հայաստանում, որն իր աշխարհագրական պայմաններով, հայ ժողովրդի պատմության մեջ իր գրաված դիրքով տարբերվում էր Արևմտյան կամ բյուզանդական Հայաստանից։ Արևելյան Հայաստանում առաջացած նախարարական-ֆեոդալական կարգերը, չնայած պատմական բարդ իրադրություններին և մի շարք դաժան փորձություններին, իրենց գոյությունը պահպանեցին և արաբա-բյուզանդական և սրանցից հետո ընկած ժամանակաշրջաններում։ Անկասկած է, որ Արշակունիների օրոք սաղմնավորված ֆեոդալական հարաբերությունները հետագա շրջաններում կանգնած չմնացին զարգացման միևնույն մակարդակի վրա։ Արդեն 4—5-րդ դարերում. արտադրության ֆեոդալական եղանակը հիմնականում հանդիսանում էր գերիշխող եղանակ, չնայած նրա կողքին, չբացառելով նրան, դեռ շատ երկար ժամանակ իրենց գոյությունը պահպանում էին ոչ միայն համայնական, այլև տոհմային կարգերի շատ ու շատ մնացորդներ։

Արշակունիների օրոք ձևավորված նախարարական-ֆեոդալական կարգը իր գոյությունը պահպանեց Արշակունիների անկումից հետո էլ, բայց միայն Արևելյան Հայաստանում, այն դեպքում, երբ Հուստինիանոսի կտրուկ միջոցառումները ծանր հարվածներ հասցրեցին նախարարական սիստեմին՝ Արևմտյան Հայաստանում։ Հայկական պատմական աղբյուրներում նախարարությունների մասին պահպանված վկայությունները բացառապես վերաբերում են միայն Արևելյան Հայաստանին և այդ է պատճառը, որ նախարարական կարգի հետազոտությունը և ուսումնասիրությունը սկսվում է սովորաբար միայն Արևելյան Հայաստանից։

Արշակունիների և Մարզպանության շրջանում հայ ռազմա-հողատեր ավագանու տեսական, ժառանգական տիրույթները կոչվում էին «տունք նախարարացն», իսկ նրանց քաղաքական իշխանությանը ենթակա տերիտորիաները՝ «նախարարութիւնք»։ Արշակունյաց և Մարզպանական ֆեոդալական Հայաստանում խոշոր նախարարական-ֆեոդալական տների թիվը հասնում էր մի քանի տասնյակի։

Սակայն իրավական տեսակետից առաջին հայացքից հավասար թվացող շուրջ 50 նախարարական տները իրականում տարբերվում էին հողային տիրույթների չափով և քաղաքական դիրքով։ Հայաստանի ֆեոդալական-նախարարական հիերարխիայի գլուխ կանգնած էր Արշակունի թագավորը, թագավորից հետո անհամեմատ ավելի բարձր դիրք էին գրավում և օգտվում էին ինքնուրույն իրավունքներից բդեշխները, ապա Սյունյաց, Մոկքի, Տայքի, Ծոփքի նախա-

բարական տները։ Նախարարական-ֆեոդալական 50 խոշոր տներից իրենց գրաված դիրքով աչքի էին ընկնում Մամիկոնյանները, Բագրատունիները, Մարդպետունիները, Արծրունիները, Խորխոռունիները, Կամսարականները և ուրիշները։ Ֆեոդալական այդ սանդուխքում, խոշոր իշխանատներից հետո, առաջնակարգ տեղ էր գրավում հայ ֆեոդալական եկեղեցին, ապա հաջորդաբար հիշատակվում են սպարապետները, ազատները, ոստանիկները և այլն։

Պատմական Հայաստանի էկոնոմիկայում, հասարակական և քաղաքական կյանքում Արշակունի թագավորներից և բդեշխներից հետո ֆեոդալական հիերարխիայի երրորդ աստիճանը գրավում էին «ազատք», «տէրք», «պաւառատէրք», «աշխարհատէրք», «նախարարունք» նախարարական-ֆեոդալական տները։

«Տէր», «տանուտէր» և ամենից շատ ու հաճախակի գործածվող «նախարար» տերմինների ոչ միայն սոցիալական էությունն ու բովանդակությունը, այլև նրանց լեզվական ստուգաբանությունը դեռ լուծված համարել չի կարելի։

Հայկազյան նոր բառագիրքը, Դուկ. Ինճիճյանը, Մ. Էմինը, Ն. Ադոնցը, պրոֆ. Meillet-ն, ակադեմիկոսներ՝ Ն. Մառը, Ստ. Մալխասյանցը, Հ. Աճառյանը և ուրիշներ, «նախարար» բառին տվել են տարբեր մեկնություններ։

«Նախարար» տերմինը սրանց կարծիքով նշանակել է սատրապ, նահապետ, ավագ, իշխան, թագավորի խորհրդական, մեծամեծ, ավագանի, կուսակալ, բդեշխ, դուքս, շահապ, արքայիկ, մեծ իշխան, երկրի տեր[1], նախակարգյալ իշխան[2], պետական բարձրաստիճան գործակալ, առաջին պատվաստիճանավոր[3], շրջանի կառավարիչ,[4] տեր, գլխավոր, նահապետ,[5] ժողովրդի, ցեղի պետ,[6] դավա-

---

[1] Նոր բառագիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836—37։ Հմմտ. Առաձեռն բառարան հայկազեան լեզուի, Վենետիկ, 1865, էջ 608։

[2] Դուկ. Ինճիճյան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հատ. 2, Վենետիկ, 1835, էջ 83։

[3] История Армении М. Хоренского, новый перевод Н. Эмина. Москва, 1893, стр. 219—220, 298—299, 302.

[4] Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, стр. 450—451.

[5] Н. Я. Марр, Этимология двух терминов армянского феодального строя (см. ЗВОИРАО, 1898, т. XI, стр. 170—173).

[6] Meillet A., De quelques mots Parthes en Arménien, Revue des études armén, T. II, fas I, Paris, 1922, p. 1—3.

1131—9

ոի կամ նահանգի կառավարիչ, ավագ անձ ժողովրդի մեջ, ազնվական[1], իշխան, ավագ, ավագանի[2]։

Ակադ. Հ. Մանանդյանը տալով «նախարար» տերմինի ստուգաբանությունը, անվերապահորեն ընդունում է Meillet-ի մեկնությունը։ Meillet-ն սողդերեն լեզվի օգնությամբ, որտեղ պահպանվել է nāfəār բառը «ժողովրդի կամ ցեղի պետի» նշանակությամբ, նույն բառի պարթևական ձևը նա ենթադրում է. «nāfaəāra nāfa», պորա, «ցեղ» և əāra«պետ, ղեկավար»։ Պարթևական nāfaəāra հայերենում դառել է, նրա կարծիքով, նահարար, սակայն ժողովրդական ստուգաբանությամբ նահ-ը վերածվել է նախ-ի և ստացվել նախարար ձևը[3]։

Անտարակուսելի է, որ այս արտաքուստ և՛ խիստ ուշագրավ և՛ հետաքրքիր մեկնությունները ոչ այլ ինչ են, եթե «նախարար» տերմինի լեզվական իմաստի բացահայտումը։ «Նախարար» բառը ոչ միայն սոսկ լեզվական-տեխնիկական, այլև սոցիալական տերմին է։ Անկասկած է, որ «նախարար» նշանակել է նահանգի կառավարիչ, նահանգապետ, սակայն պատմական բոլոր շրջաններում նա չի ունեցել սոսկ այդ իմաստն ու նշանակությունը։ «Նախարար» բառը հետագա շրջանում ստացել է այլ բովանդակություն և հանդես է եկել որպես մի տերմին, որը իր մեջ է իմաստավորել հողատեր ֆեոդալական դասակարգի, կամ այլ կերպ ասած հայ հասարակության «ազատանի» բոլոր խավերին և դասերին։ «Նախարար» են կոչվել ոչ միայն «աւագ», «մեծամեծ» իշխանները, այլև տանուտերերը, նահապետները, սեպուհները, ազատները։

Աղբյուրներում «նախարարների», «նախարարությունների» մասին պահպանված վկայությունները հնարավորություն են տալիս ենթադրել, որ «նախարար» բառը ֆեոդալական Հայաստանում գործածվել է իր լայն առումով և նշանակությամբ և այդ անունով են կոչվել տոհմիկ ազնվականության բարձր խավերն ու դասերը։

Ղազար Փարպեցին Առանձարին մի դեպքում կոչում է «սեպուհ մի յազգէն Ամատունեաց»[4], իսկ մյուս դեպքում «նախարար»[5]։ Խոսելով Անձևացյաց նախարարական տան մասին, նույն պատմիչը

---

[1] Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հատ. 3, Երևան, 1944, էջ 435։

[2] Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Երևան, 1931, հատ. V, էջ 18։

[3] Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը..., էջ 33։

[4] Ղ. Փարպեցի, էջ 69։

[5] Նույն տեղում, էջ 86։

Հովհաննին կոչում է «ոմն յԱնձաւացեաց նախարարացն սեպուհ»[1]։ Մուշեղ Մամիկոնյանը մի տեղ անվանված է «զսեպուհն Մամիկոնէից», մի այլ տեղ՝ «նախարար»[2]։ Քիչ չեն նաև այն դեպքերը, երբ նախարար են կոչվել իշխանները։ Վահան Ամատունին և «իշխանն» էր «տանն Ամատունեաց», և «նախարար»[3]։ Այս անուններով է կոչում պատմիչը նաև Շմավոն Անձևացուն, Արշավիր Կամսարականին և ուրիշներին[4]։ Նախարար են կոչվել նաև տանուտերերը։ Ատոմ Գնունին Ղ. Փարպեցու մոտ և տանուտեր է և նախարար[5]։

«Նախարարները» ոչ միայն ունեցել են ընդարձակ տիրույթներ, այլև վճռական ու ղեկավար դեր են խաղացել ինչպես հայ ֆեոդալական հասարակության ներքին կյանքի բոլոր բնագավառներում, այնպես էլ երկրի արտաքին հարաբերություններում։

Նախարարական դասի մեջ ծանրակշիռ դեր էին խաղում «աւագը», «աշխարհակալը», «դաւառատէրը», «դաւառակալը», «մեծամեծը», «բիւրաւորը», «ընտիրը», «կուսակալը», «կողմնակալը» նախարարները[6]։

Ագաթանգեղոսը, Փ. Բուզանդը, Մ. Խորենացին միշտ էլ պահպանում են ֆեոդալական հիերարխիայում մտած նախարարական դասի տարբեր խավերի հետևյալ հաջորդականությունը՝ «Այս իշխանք են ընտիրք, կուսակալը, կողմնակալը, հազարաւորք, բիւրաւորք ի մէջ Հայաստան աշխարհի տանն Թորգոմայ...»[7], «մեծ նախարարք և իշխանք... դաւառակալք, աշխարհատեարք... բիւրաւորք, հազարաւորք, կուսակալք, ընտիրք»[8]։

Ինչպես «մեծամեծ», «աւագը», «աշխարհակալը», «աշխարհատէրը», «դաւառատէրը», «դաւառակալը», այնպես էլ «ազատը», «կրտսեր», «սեպուհը» և «ոստանիկը» նախարարական դասի ներկայացուցիչները հանդիսանում էին հողատեր-ֆեոդալներ։ Մովսես Խորենացու վկայությամբ նախարարական ֆեոդալական դասի քաղաքական արտոնություններն ու իրավունքները, նրանց ժառանգական հողատիրությունը ձևա-

---

1 Ղ. Փարպեցի, էջ 127։

2 Նույն տեղում, էջ 86, 122, 143։

3 Նույն տեղում, էջ 75, 86։

4 Նույն տեղում, էջ 45, 75, 86։

5 Նույն տեղում, էջ 45, 86, 122։

6 Ագաթանգեղոս, էջ 404, Փ. Բուզանդ, էջ 16, 18, 90, Կանոնագիրք Հայոց, էջ 59 և ուր.։

7 Ագաթանգեղոս, էջ 404։

8 Փ. Բուզանդ, էջ 8—9, 21, 27, 33, 38, 45, 56, 57, 61, 67, 90, 91, 114, 115 և ուր.։

վորվում է Վաղարշակ-Տրդատ թագավորի օրոք։ Վաղարշակ-Տրդատը, վկայում է պատմիչը, սահմանում է «... կարգս կենցաղականս, որչափ մարթէր...»։ Նա հաստատում է «նախարարութիւնս և նոցին նախարարութեանցն նահապետութիւնս... որք ի զուտակաց նախնւոյն մերոյ Հայկայ և յայլոց»[1]։

Նախարարական-ֆեոդալական դասի հողային կալվածները՝ գյուղերը, ագարակները, ավանները, շենները, դաստակերտները, դավառները և «աշխարհները» արդեն հանդիսանում էին օտարելի, ժառանգական տիրույթներ։ Նախարարական դասի «բնիկ» կամ «բնակ», «սեպհական» հայրենիքների մասին աղբյուրներում պահպանվել են բազմաթիվ վկայություններ[2]։

Մովսես Խորենացին վկայակոչելով «Թուղթ Շապհոյ առ նախարարսն». հրամանագիրը, ասում է, որ երբ Հայաստանը բաժանվում է բյուզանդական կայսրության և պարսկական արքունիքի մեջ, հայ նախարարական խոշոր տների ներկայացուցիչները խուսափելով պարսկական արքունիքի հալածանքներից, Արշակ թագավորի հետ անցնում են բյուզանդական Հայաստան։

Շապուհը հատուկ նամակով դիմում է հայ նախարարներին, հավաստիացնելով, որ նա ոչ միայն ներում է շնորհում նրանց, որոնց «... կալուած իշխանութեան յիմ բաժնին հատան», այլև խոստանում է, որ եթե նրանք վերադառնան Պարսկահայք, կարող են ետ ստանալ «...յազգէ բնիկ ձերոյ տէրութեանդ», իսկ եթե նրանք թերանան կամ չցանկանան կատարել իր այս հրամանը, ապա «...զտունս նոցա հանդերձ գիւղօք և դաստակերտօք հրամայեցաք ունել յարքունիս»[3]։

Շապուհի այս հրամանից հետո հայրենիք են վերադառնում Բակրատունի իշխան Սահակ ասպետը և այն բոլոր նախարարները, որոնք «...ունէին զիշխանութիւն ի դաւառս բաժնին Պարսից» և ետ են ստանում իրենց «բնիկ ու սեպհական» կալվածները։ Մ. Խորե-

---

[1] Մ. Խորենացի, էջ 104։

[2] Ագաթանգեղոս, էջ 386—387, 407, Փ. Բուզանդ, էջ 9, 16, 19, 56, 90, 114։ Մ. Խորենացի, էջ 110—116, 187, 193, Ղ. Փարպեցի, էջ 37, 48, 54—55, 61 և ուր. հմմտ, նաև Ղ. Ինճիճյան, Հնախօսութիւն... հ. 2, Ա. Գարագաշյան, Քննական պատմութիւն, հ. 2, Կ. Կոստանյանց, Հիւսվածք, գիրք 3, Վենետիկ, 1887։ История Армении М. Хоренского, стр. 298. Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, стр. 459. Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը..., էջ 31—36 և ուրիշներ։

[3] Մ. Խորենացի, էջ 311, հմմտ. Ղ. Փարպեցի, էջ 8—9։

նացին պահպանել է ավելի ուշագրավ վկայություններ այն մասին, որ նախարարական կալվածները անցնում էին ժառանգաբար և համարվում օտարելի հայրենիք։ Պարսկական Շապուհ թագավորը,— շարունակում է պատմիչը,— կարգադրել էր բռնագրավել «հանցապարտ» հայ նախարարների տիրույթները և «...ոչ եթող զկալուածս որդւոյ ի հայր, և ոչ զեղբօր՝ յեղբայր»[1]։

Ոչ միայն պարսիկ, այլև հայ Արշակունի թագավորները, կարող էին բռնագրավել և «յարքունիս հատանել» ապստամբ ու կենտրոնախույս նախարարների կալվածները։ Փ. Բուզանդը նկարագրելով Խոսրով թագավորի և հայ նախարարական խոշոր տների երկարատև, դաժան պայքարը, վկայում է, որ Խոսրով թագավորի հանձնարարությամբ հայոց զինված ուժերի սպարապետ Վաչե Մամիկոնյանը սանձահարում է կենտրոնախույս նախարարական տների դիմադրությունը, ոչնչացնում է նրանց ռազմական ուժերը և բռնագրավում նրանց երկրներն ու «աշխարհները»[2]։

Խոսրովի դեմ ապստամբում են Ռշտունյաց երկրի տերերը։ Թագավորը ճնշելով այս ապստամբությունը կարգադրում է բռնագրավել նրանց կալվածները՝ «զտուն նոցա յարքունիս կալան»[3]։

Վարդան Մամիկոնյանը՝ սպարապետ Վասակ Մամիկոնյանի եղբայրը, ապստամբում է Արշակ թագավորի դեմ և հալածանքից խուսափելով, թաքնվում է Տայքի գավառի իր սեփական ամրոց Էրախանում։ Այստեղ նրան հետապնդում է իր եղբայր Վասակ սպարապետը և պատմիչի վկայությամբ «...երբեալ գտանէին զնա յիւրում գաւառին ի Տայս, յիւր ամուր բերդին՝ որում անուն Էրախանի կոչի»[4]։

Արշակի զորավար Վասակ Մամիկոնյանը ոչնչացնում է կենտրոնախույս նախարարական տները և նրանց դույքն ու կալվածները «զբազմաց տունս հատանէր յարքունիս»[5]։

Ոչ միայն խոշոր նախարարական տները, այլև արքունի գործակալներն ունեին իրենց սեփական դյուղերն ու կալվածները։ Փ. Բուզանդի վկայությամբ «...այր չար և ժանտաբարոյիւք անօրէն և անիրաւ քան զառաջին Հայր անուն Մարդպետսն... եւանէր սա

---

1 Մ. Խորենացի, էջ 312, հմմտ. Ղ. Փարպեցի, էջ 8—9։

2 Փ. Բուզանդ, էջ 9։

3 Նույն տեղում, էջ 18։

4 Նույն տեղում, էջ 109։

5 Նույն տեղում։

շրջէր ընդ մարդպետութիւնն իւր, ապա եկն էջ Հայր մարդպետ ի գաւառն Տարօնոյ ընդ իւր գնդսն տեսանել»[1]:

Սյունյաց երկրի Վասակ և Շապուհ իշխանները 5-րդ դարում կատաղի պայքար են ծավալում ժառանգական կալվածների համար: «Էարկ սատանայ աղմուկ և նախանձ մեծ ի մէջ նոցա,— գրում է Ստ. Օրբելյանը,— վասն բաժնի ժառանգութեան հայրենեաց իւրեանց. և կռուէին ի վերայ գեղեցիկ գեղջն Որդուստայ»[2]:

Մանավազյան նախարարական-ֆեոդալական տունը ուներ սեփական ժառանգական գյուղեր, ավաններ և գավառներ: Փ. Բուզանդը նկարագրելով Մանավազյան տան և Խոսրով Թագավորի դաժան պայքարը, մատնացույց է անում, որ Խոսրովի օրոք «յարեաւ խռովութիւն մեծ յաշխարհին Հայոց»: Գավառական-աշխարհատեր իշխաններն ու մեծամեծ նախարարները,— շարունակում է պատմիչը,— «անկանէին ընդ միմեանս, մեծաս ոխութեամբ», նրանք հարուցեցին դաժան «կռիւ և տային ընդ միմեանս մարտ պատերազմի»: Իշխանական-ֆեոդալական կռիվները մղվում էին հողային տիրույթները ընդարձակելու, աշխատավոր ձեռքեր գրավելու համար: Այդ պայքարին ակտիվորեն մասնակցում էին նաև Մանավազյան իշխանը և «միւս ևս նահապետն Որդունեաց տոհմին»: Նրանք ոչ միայն դառնում են «բազում մարդկան» կոտորածի պատճառ, այլև «առնուին աւերէին զտունն արքունի»: Այս ֆեոդալական դաժան երկպառակությունները զսպում է Մամիկոնյան Արտավազդի որդի Վաչեն: Սա «սատակել կորուսանել զազգն երկոսեան»:

Նախարարական ապստամբությունները ճնշելուց հետո, Խոսրով Թագավորը Աղբիանոս episkoposին դահին մատուցած ծառայության դիմաց «... ետ զաւանն և զբուն զանոյից գեղն նահապետին Մանաւազենից... զՄանաւազակերտ ամենայն սահմանօքն և դաւառակաւն հանդերձ՝ որ շուրջ զնոքօք էր, որ կայ ի կողմանս դեռոյն Եփրատայ»[3]:

Որդունյաց նախարարական-ֆեոդալական սեփական գյուղերը պատմիչը կոչում է «զբուն գեղն Որդունեաց, որոյ անուն էր Որդուրու...»[4]: Տայքը համարվում էր Մամիկոնյանների սեփական ժառանգական տիրույթը:

Եթե սկզբնական շրջանում Աղձնյաց բդեշխն այդ գավառի տոհմ իշխող-կառավարիչն էր, ապա 4-րդ դարում նա հանդես է գալիս որ-

---

[1] Փ. Բուզանդ, էջ 96—97:

[2] Ստ. Օրբելեան, էջ 79—80: (Բոլոր տեղերում ընդգծումները մերն են— Ս. Հ.):

[3] Փ. Բուզանդ, էջ 8—9:

[4] Նույն տեղում, էջ 9:

պես գավառի հողատեր-իշխանը։ Այս երևույթն արդեն համընդհանուր էր Հայաստանի տերիտորիայի մեծ մասի համար։ Ֆեոդալական հարաբերությունների զարգացման հետևանքով հանդես են գալիս «Շիրակայ», «Արշարունեաց», «Սիւնեաց դաւառին», «Զորայ դաւառին», «Կողբայ դաւառին», «Գարդմանաձորոյ», «Գորդուայց դաւառին», «Վանանդայ դաւառին», «Հաշտենոյ դաւառին», «աւագ աւագ աւանաց, գեղից և գանձուց... և այլապէս դաստակերտացն»[1] բազմաթիվ տեր-նախարարներ։

Տրդատ թագավորի օրոք Սյունյաց իշխանը հայտնի էր որպես երկրի գործակալ-կառավարիչ, իսկ հետո նա նույնպես կոչվում է «տէր Սիւնեաց»։

Արշակ թագավորը, ինչպես մատնացույց է անում Փ. Բուզանդը «բաղումս ի նախարարացն կոտորեաց... բազմաց տունս հատանէր յարքունիս»։ Պապը Շիրակն ու Արշարունիքը վերադարձնում է Կամսարականների դիպվածով ազատված ժառանգներին, որպես նրանց ժառանգական կալվածները։

Այսպիսով, Արշակունիների օրոք նախարարական-ֆեոդալական դասն արդեն կազմավորվել էր որպես խոշոր հողատերերի դաս և իրեն ապահովել բոլոր արտոնություններով և հողատիրական իրավունքներով։

Նախարարական-ֆեոդալական դասի մեջ ոչ պակաս ակտիվ դեր էին կատարում կրտսեր նախարարները։

4. **Կրտսեր նախարարներ**։ Մատենագրական աղբյուրները «մեծամեծ», «աւագ», «աշխարհատէր», «դաւառատէր», «կողմնակալ», «կողմնապահ», «գահէրէց», նախարարների և իշխանների կողքին, նրանցից հետո հիշատակում են «կրտսեր», նախարարական դասի մեջ մտած սոցիալական այս խավին։

Հին Հայաստանում կրտսեր նախարարները մեծամեծ և ավագ նախարարներից հետո գրավում էին ֆեոդալական հիերարխիայի հաջորդ աստիճանը. նրանք իրենց հասարակական և քաղաքական դիրքով, հարստությամբ, ռազմական ուժով հասարակական ավելի ցածր սանդուխքի վրա էին կանգնած, քան ավագ ու մեծամեծ նախարարները։

«Կրտսեր նախարար» դարձվածքի վրա առաջին անգամ ուշադրություն է դարձրել Ղուկ. Ինճիճյանը և ճիշտ մեկնաբանել նրա նշանակությունը։

---

[1] Փ. Բուզանդ, էջ 135—137։

«Աւագ թուին կոչեցեալ նոքա՝ որոց մեծ էր կամ գործ կառավարութեան և կամ երկիր. իսկ կրտսեր նոքա՝ որոց փոքր էր պաշտօն և կամ երկիր»[1]։

Ն. Ադոնցը կրտսեր նախարարներ համարում է նրանց, որոնք տնտեսական կարողությամբ և քաղաքական իշխանությամբ ավելի ցածր էին կանգնած ավագներից։

«Պատմիչները,— գրում է Ն. Ադոնցը,— հաճախ խոսում են մեծ սենիորների, մեծամեծ ավագանու մասին և տարբերում են ավագ տանուտերներին կամ թե նախարարներին՝ «կրտսեր»-ներից ակնհայտ, նրանց հզորության համեմատ»[2]։

Կ. Կոստանյանցը, Մ. Էմինը փորձեր են կատարում տալու այլ մեկնաբանություն։ Կ. Կոստանյանցի կարծիքով «Երկու կարգի նախարարներ կային՝ ավագ և կրտսեր. առաջին կարգից էին այն նախարարները, որոնք Հայոց ամենահին ազնվական կամ նահապետական ցեղերից էին առաջացել, իսկ երկրորդ կարգից էին նոքա, որոնց նախահայրերը հասարակ մարդիկ են եղել, առանց ազնվական ծագումի և նախարարություն ստացել են թագավորներից իրենց մի նշանավոր ծառայության կամ հավատարմության համար»[3]։ Մ. Էմինի կարծիքով «նախարարները նույնպես բաժանված էին ավագի և կրտսերների։ Առաջինները սերվում էին հայերի առաջին նահապետի կամ թագավորի՝ Հայկի տոհմից կամ հին հայկական զանազան ցեղերի ցեղապետներից։ Երկրորդ կարգում թվարկվում են (այսինքն կրտսեր—Ս. Հ.) նրանք, որոնց նախահայրերը սկզբնական շրջանում եղել են անհայտ, սակայն անհատական ծառայության կամ ունակության շնորհիվ հայկական թագավորների կողմից բարձրացվել են նախարարների աստիճանը և արձանագրվել են արքունի դիվանում»[4]։

Ակադ. Հ. Մանանդյանը պաշտպանում է Ղուկ. Ինճիճյանի և Ն. Ադոնցի կարծիքը և վիճում է Կոստանյանցի ու Մ. Էմինի դեմ, ասելով. «վերոհիշյալ ենթադրություններից անհիմն է և անհավանական Կոստանյանցի և Էմինի այն կռահումը, որ իբր «կրտսեր» նախարարների կարգին պատկանել են «հասարակ մարդիկ առանց ազնվական ծագումի», որոնք նախարարություն էին ստացել թագավոր-

---

[1] Ղուկ. Ինճիճյան, *Հնախօսութիւն...*, հատ. II, էջ 90։

[2] H. Адонц. Армения в эпоху Юстиниана, стр. 453.

[3] *Հիւսուածք, բանից նախնի պատմագրաց Հայոց*, գիրք երրորդ, Վիեննա, 1887, էջ 28—29, 36։

[4] История Армении М. Хоренского, Москва, 1893, стр. 298—299.

ներից իրենց ծառայության կամ հավատարմության համար։ Այդ մասին աղբյուրների մեջ ոչ վկայություններ կան, ոչ էլ որևէ ակնարկ»[1]։

Մեզ թվում է, որ ինչպես ճիշտ են Ղուկ. Ինճիճյանը և Ն. Ադոնցը, այնպես էլ Կոստանյանցը և Մ. Էմինը։ Ֆեոդալական երկրների պատմությանն անծանոթ չէ, երբ պետական և զինվորական բազմավաստակ ծառայության դիմաց, կենտրոնախույս ֆեոդալների դեմ ակտիվ պայքարի համար, կարող էին «հասարակ» մարդիկ, առանց ազնվական ծագումի, բարձրանալ մինչև ֆեոդալների կարգը. իհարկե այդ երևույթը մասսայական լինել չէր կարող, սակայն չէր բացասվում և ժխտվում նաև այս ուղիով ազնվականների շարքը բարձրանալու հնարավորությունը։ Այս մասին Մ. Խորենացին և Ղ. Փարպեցին պահպանել են խիստ ուշագրավ վկայություններ։

Արշակունի վերջին թագավոր Տիգրանը, պատմում է Մ. Խորենացին, «կարդէ ընդ այլ նախարարութիւնս, զի մի անուանեսցին Արշակունիք»։ Նախարարների և նահապետների հետ Տիգրանը հաստատում է «... և այլ... ինչ կրտսերագոյն աղգք... որ միանգամ անազգիք էին ի վաշտս և անձամբ երևելիք...»[2]։

Պետական և զինվորական ճանապարհով նախարարական դասի շարքը բարձրացած մարդկանց պատմիչը կոչում է «արք պատուականք», առանց տալու նրանց տիտղոսը։ Փ. Բուզանդը այս առթիվ գրում է. «Մեծ զօրավարն Հայոց՝ որում անուն էր Վասակ, ի Մամիկոնեան տոհմէն, և Մեհենդակ Ռըշտունի, և Անդովկ Սիւնի, և Արշաւիր Կամսարական, մեծք և գլխաւորք նահապետք. և տասն այր այլ, արք պատուականք...»[3]։

Խորենացին պատմում է, որ Կամսարականների և Ամատունիների նախարարական տոհմերն ապստամբվել էին պարսիկ Արտաշիր թագավորի դեմ։ Արտաշիրը դաժան դատաստան է տեսնում այդ տոհմերի աչքի ընկնող հասակավոր անդամների հետ, ֆիզիկապես ոչնչացնում է նրանց, և այդ պատժից ազատվում են միայն անչափահաս երեխաներ, որոնք և թագնվում են «յանյայտ տեղիս»։ Այս դեպքերից հետո, հայոց կաթողիկոս Սահակը մեկնում է Պարսկաստան և Արտաշիր թագավորին խնդրում, որ նա արդեն վախճանված Սահակ սպարապետի փոխարեն նշանակի Համազասպ Մա-

---

[1] Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը..., էջ 42։

[2] Մ. Խորենացի, էջ 197։

[3] Փ. Բուզանդ, էջ 38։

միկոնյանին և իմիջիայլոց խնդրում է դիալ Կամսարականների ու Սմբատունիների ժառանգներին, նրանց վերադարձնել իրենց տոհմական տիտղոսները և ժառանգական կալվածները։ Արտաշիրն ընդառաջ է գնում հայոց կաթողիկոսին, կարգադրում է վերադարձնել կենդանի ժառանգներին այն կայքը, որ արքունի էր գրաված, սակայն նրանց չի հաստատում իրենց հայրենական դահում և պատվում, այլ կարգադրում է անցկացնել ոչ թե ավագ, այլ կրտսեր նախարարների շարքը։

«Որոց մնացելոցն,— վկայում է Խորենացին,— պարգևեալ զկեալն՝ հրամայեաց զտունս երկրաքանչիւրոցն զկալեալսն յարքունիս՝ դարձուցանել ի նոսա. բայց միայն ի դահ հայրենի ոչ հաստատել, այլ ի խոնարհ քան զբազումս մատուցեալ նախարարս, ի կարգ կրտսերագունից պատրաստել։ Իսկ զաղգն Համազասպայ, որ է տոհմ Մամիկոնեան, ի վեր մատուցանել, զի կարգեսցին ունել զհինգերորդ դահ նախարարացն Հայոց, և ի դիւանի իւրում գրել»[1]։

Եղիշեն նկարագրելով 5-րդ դ. ժողովրդա-ազատագրական պայքարի պատմությունը, հիշատակում է, որ Ավարայրի ճակատամարտից հետո Պարսկաստան են տարվում, որպես դերի, «երեսուն և հինգ արք, են որ յաւագ նախարարացն, և են որ ի կրտսերագունից, սակայն ամենեքեան ըստ մարմնոյ են նախարարազունք...»[2]։ Նույն պատմիչը դառը վշտով է նկարագրում Հայաստանի ողբերգական վիճակը։ Ժողովրդա-ազատագրական ապստամբությունը ճնշելուց հետո «աւագագոյնք» և «մանկագոյնք» նախարարները, որանց փափկասուն տիկնայք ապրում էին ոչ «ըստ ազատաց կարգի», այլ «ի շինական սովորութեանցն», ոչ որ չկար, ասում է պատմիչը, որ նրանց ձեռքին ջուր լցներ և ոչ «կրտսերմ աւագաց դասուռասկս մատուցանէին»[3]։

Պարսկական գերության մեջ տառապող նախարարների և Հայաստանում գտնվող նրանց կանանց մասին խոսելիս, Եղիշեն ասում է, որ «երանելի առաքինեացն և կալելոցն և անկելոցն ի պատերազմի» բոլոր կանանց նա չի ճանաչում և թվել չի կարող, սակայն «հինգհարիւրով չափ յականէ յանուանէ ճանաչեմ. ոչ միայն որ աւագագոյնքն էին, այլ զրազումս ի կրտսերագունաց անուն»[4]։

---

[1] Մ. Խորենացի, էջ 323։
[2] Եղիշե, էջ 251։
[3] Նույն տեղում, էջ 259—260։
[4] Նույն տեղում, էջ 259։

Կրտսեր նախարարներն ավագ և մեծամեծ նախարարներից տարբերվում էին ոչ միայն հարստությամբ, զինվորական ուժով, հողային տիրույթներով, այլև գահ ու պատվով։ Սրանք ֆեոդալական հիերարխիայում «պատուով և գահակցությամբ... կրտսերագոյն» էին[1]։

Վարդան Մամիկոնյանը դիմելով պարսկական Հազկերտ երկրորդ թագավորին ասում է. «բազումք են յայս երից աշխարհաց յազատորեցոյ, որք են աւագ քան զիս և գահու և աւուրբք և շատ են որ ի խոնարհ են»[2]։

Վահան Մամիկոնյանը Նվարսակի պայմանագրի կնքման առթիվ դիմում է Նիխորին ասելով. «Քանզի ոչ իմ բանքս, զոր խօսիմս ես ընդ ձեզ այժմս, այլ նոցա ամենեցուն, աւագի և կրտսերոյ, որ այժմ ձեր առաջի են»[3]։

Ղազար Փարպեցին իր «Պատմում» վկայում է Վահան Մամիկոնյանին, որ ինքը հալածվում է, որ իր տերը պետք է «քաղցրութեամբ» ների իրեն, որովհետև նրա օրոք «ամենայն մարդ ի Հայս, յաւագ և ի կրտսեր, հասեալ է մեծապէս օգտակարութիւն և գահ և փառք...»[4]։

Ոչ միայն Փարպեցին, Խորենացին, այլև Եղիշեն խիստ տարբերություններ են նկատել ավագ և կրտսեր նախարարների միջև։ Հազկերտ երկրորդը, ասում է պատմիչը, «մերթ ջանթէր դալարէր իբրև ղօձ թունաւոր, մերթ պարզէր գոչէր իբրև զառիւծ զայրացեալ... սկսաւ այնուհետև յառաջ կոչել զկրտսերս յաւագաց...»[5] Դենշապուհը հրամայում է «զմի ոմն ի կրտսերագունիցն յառաջ մատուցանել...»[6]։

5. Սեպուհներ, որպես ազնվական հողատերեր։ Արտադրության ֆեոդալական եղանակի հաղթանակից հետո, հայկական ֆեոդալական հիերարխիայում հանդես է գալիս հասարակական մի նոր խավ՝ «սեպուհ» անվան տակ։ Սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «սեպուհները» Արշակունիների օրոք ավագ, մեծամեծ նախարարներից և տանուտերերից հետո ֆեոդալական հիերարխիայում դրավում էին հաջորդ աստիճանը։ «Մեծ, աւագ, սեպուհ» տերմինը առանց բացառության հիշատակվում է

---

[1] Ղ. Փարպեցի, էջ 8։
[2] Նույն տեղում, էջ 49։
[3] Նույն տեղում, էջ 161։
[4] Նույն տեղում, էջ 203։
[5] Եղիշե, էջ 24։
[6] Նույն տեղում, էջ 218։

միշտ էլ նախարարներից և տանուտերերից հետո, «ազատներից» ու «ռամիկներից» առաջ։

«Սեպուհ» տերմինը նույնպես իր վրա է բևեռել հայոց պատմության հետազոտողների ուշադրությունը։

Ղուկ. Ինճիճյանը նշել է, որ «սեպուհներն» սերվել են «յաղնուական տոհմէ», որ այդ անունով են կոչվել «յուրաքանչյուր անձինք ամենայն նախարարութեանց...», սակայն սրանք տոհմի, երկրի տանուտերեր — գլխավորներ չէին, այլ տանուտերերի, գլխավորների որդիներ[1]։

Ակադ. Ն. Մառը ուսումնասիրելով հայկական, իրանական և վրացական աղբյուրները, հայկական «սեպուհ» տերմինը համեմատելով վրացական sazepuro և հին ղենդերեն visaputhra բառերի հետ, հայկական «սեպուհը» վերծանել է որպես տոհմի, ցեղի առաջնորդի, նահապետի, նախարարի որդի, տղա։ Ն. Մառը մատնացույց է արել, որ ինչպես նախարարական տոհմի առաջնորդն ու ղեկավարը կոչվել է «նահապետ»—nâfapati, այնպես էլ «սեպուհ»—visaputhra նշանակել է տոհմի, ցեղի որդի[2]։

«Սեպուհ» տերմինի լեզվական-տեխնիկական և մասամբ սոցիալական էության և իմաստի ստուգաբանության լուրջ փորձեր է կատարել Ն. Ադոնցը։ «Նախարարական կենցաղի ոչ քիչ կարևոր տերմին se-puh սե-պուհ նշանակությունը,— գրել է Ն. Ադոնցը,— արդեն դուշակված է Ն. Մառի կողմից։ Հեղինակը հիմնականում ընդունելով ակադ. Ն. Մառի՝ «սեպուհ» տերմինին տված մեկնությունը, իր կողմից ավելացնում է, որ լրիվ ձևը սեպուհը է, պարթև. visopuhr, որի առաջին մասը նույնն է, ինչ լատին. vicus «գյուղ», հույն՝ oikos, «տուն», իսկ երկրորդը նշանակում է որդի, ուրեմն «սեպուհ», նշանակել է բառացի տան, տոհմի որդի»[3]։

«Հետագայում,— շարունակում է Ն. Ադոնցը,— փոփոխության են ենթարկվել տոհմային կարգերից եկած տերմինները, այդ թվում նաև «սեպուհը»։ «Սեպուհը» հիմա յուրացվում է բացառապես իշխանական դերդաստանների կողմից։ Արդեն ter, sepuh, tun տոհմային կարգեր արտահայտող հասկացությունների հետ միասին հանդես են գալիս naxarar, azat, nahang վարչական կարգի հասկացություններ։ Տոհմային տարդիցիաներն այնքան ուժեղ էին,

---

[1] Ղուկ. Ինճիճյան, Հնախօսութիւն..., հ. 2, էջ 80։

[2] Н. Марр, Этимология двух терминов армянского феодального строя (см. ЗВОИРАО, т. XI, стр. 165—169).

[3] Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, стр. 400—401, 451. Նույնի՝ Հին հայ շինականությունը, գլ. I։

որ ինչպիսի նոր հարաբերություններ էլ հանդես գային, նրանք պետք է տեղավորվեին այդ շրջանակներում։ Այդ իսկ պատճառով հիշատակարաններում հաղորդում են տեր և նախարար, սեպուհ և ազատ, տուն և նահապետ, որպես համազոր հասկացություններ»[1]։ Եթե սկզբնական շրջանում,— շարունակում է զարգացնել իր միտքը հեղինակը,— իշխանական տները կազմում էին մի մի միություն տանուտերի իշխանության ներքո. ապա միությունները սկսվում են քայքայվել «սեպուհների» կենտրոնախույս ձգտումների հետևանքով։ «Սեպուհները» հիմա ձգտում են դուրս գալ տոհմային շաղկապից, ստանալով իրենց հասանելիք բաժինը։ «Սեպուհի» բաժինը կոչվում է սեպուհական-սեփական։ Հետագայում այս բառը ստանում է այժմյան նշանակությունը։

Բացի տանուտիրոջից կամ տոհմի ղեկավարից, տոհմի բոլոր մնացած անդամները համարվում էին սեպուհներ։ Հիշատակություններում այդպես են անվանված տանուտերի եղբայրը, տղան, ազգակիցը և ընդհանրապես տոհմակիցը։ Քանի դեռ գործում էր միաժառանգության սիստեմը, տանուտերի իշխանությունը նրա մահից հետո անցնում էր մեծ կամ ավագ «սեպուհին»։ Ժամանակի ընթացքում խախտվում է իշխանական հողատիրության սկզբունքը, հանդես է գալիս հողի բաժանված տիրակալության նոր կարգ, որի հետևանքով հողը ենթարկվում է բաժանման «սեպուհ» ժառանգների միջև։ Այդպիսով ծագում է հողատիրության և ավագանու նոր աստիճան։ Հողային այն բաժնեկալվածները, որոնք անցնում են սեպուհներին, կոչվում են սեպուհական-սեփական, իսկ սեպուհների կարգը, որպես ազատ մարդիկ-սեպհական ազատություն[2]։ Սեպուհական ազատությունն ապրում է իր զարգացումը 5—6-րդ դարերում։ Այս շրջանում սեպուհությունը ձեռք է բերում որոշակի ինքնուրույնություն։ Ամենուրեք սեպուհները հանդես են գալիս տանուտերերի հետ որպես անկախ իշխողներ։ Հայերի ապստամբության ժամանակ նրանք հրավիրվում են տանուտերերի հետ պարսկական արքունիքում բանակցություններին մասնակցելու համար, դիվանագիտական ակտեր են կնքվում ոչ միայն տանուտերերի, այլև սեպուհների իրենց կնիքներով և ընդհանրապես բոլոր կարևոր դեպքերի ժամանակ սեպուհները հանդես են գալիս տանուտերերից անբաժանելի։

Ակնհայտ է, որ Ն. Ադոնցը «սեպուհների» ինստիտուտի, սեպուհական-սեփական հողատիրության, «սեպուհական» ազատու-

[1] Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, стр. 451—452.

[2] Նույն տեղում, էջ 472—473։

թյան հանդես գալը, նախարարական-իշխանական տների կամ ինչպես ինքն է արտահայտվել «միությունների» քայքայման պրոցեսը լծորդել է «սեպուհների» կենտրոնախույս ձգտումների հետ։ Եթե չլինեին այդ ձգտումները, եթե միաժառանգության իրավունքը չքայքայվեր, ապա Ն. Ադոնցի կարծիքով հանդես չէր գա հողատիրության և հողային հարաբերությունների նոր ինստիտուտ։ Հեղինակը փորձեր չի կատարել բացահայտել սոցիալ-տնտեսական այն նախադրյալները, որոնց հիմքի վրա հանդես եկավ իշխանական-ազնվական հողատերերի հասարակական մի նոր խավ, մի նոր դաս, որը իրեն ապահովեց տերունական իրավունքներով և արտոնություններով։

Ի. Ա. Ջավախովը հիմնականում ընդունելով «սեպուհ» տերմինին տված ակադ. Ն. Մառի բացատրությունը, մատնացույց է արել, որ Վրաստանում տոհմի առանձին անդամները կոչվել են «սախալիս-շվիլի», «սախալիս-կացի» այսինքն «տան» տղա, մարդ. բայց հին վրացական դրականության մեջ կա մի այլ տերմին, որը վերաբերվում է նույն հարցին—այդ «սէպէ» կամ «սէպէթցուլի» տերմինն է։ «Սէպէ» բառը,—շարունակում է հեղինակը,— ինչպես հաստատել է Ն. Մառը, փոխ է առնված հայկական «սեպուհ» բառից։ Ապա իր այս դրույթը հաստատելու համար նա վկայակոչում է մի շարք հիշատակություններ։ «Սէպէ» և «սէպէթցուլի» տերմինը հանդիպում է մի քանի աշխատություններում։ Եվստաֆիա Մցխետացու նահատակության մեջ ասված է, որ Պարսկաստան մեկնող Վրաստանի մարզպանին հրաժեշտ տալու առթիվ հավաքվել էին «Քարթլիի կառավարիչները, և Քարթլիի կաթողիկոս Սամուելը և Քարթլիի մամասախլիս Գրիգորին և Քարթլիի Աշուշա բդեշխը և այլ սեպուհներ»։ «Այլ սեպուհներ» արտահայտությունը հիմք է տալիս ենթադրել,— ասում է Ի. Ջավախովը,— որ Վրաստանի կառավարիչները, մամասախլիսները և բդեշխը նույնպես համարվել են սեպուհներ...»[1]։ Այդպիսով, շարունակում է նա, այս հատվածում «սէպէթցուլի» նշանակել է ականավոր տոհմի անդամ, որը իր ձեռքում ունեցել է քաղաքական իշխանություն, միաժամանակ «սեպուհականությունը» չի կազմել առանձին պաշտոն... Այսպիսով, մեզ հետաքրքրող տերմինը իր նշանակությամբ հավասար էր սասանյան «տների մարդիկ» տերմինին, որոնց Տաբարին կոչել է

---

1 И. Джавахов, Госстрой... стр. 53—54.

սասանյան պետության ամենից ակնառոր ընտանիքի տան անդամներ[1]։

«Սէպէհ», «սէպէհթյուլի» տերմինը այդ նույն առումով գործածվել է Շուշանիկի վարքագրության մեջ։ «Եկան,— ասված է այնտեղ,— մեծ ազնվականները, կին սեպուհները, տիկնայք, վրացական երկրի ազնվազարմները և ոչ ազնվազարմները»։ Ակնհայտ է, որ այս հոդվածում, նշում է Ի. Ջավախովը, «սէպէհթյուլի կին սեպուհներ միայն կարող էին նշանակվել ակնառոր տոհմերի իգական սեռի անդամներ»։ «Այսպիսով,— ամփոփում է հեղինակը,— «սէպէհ» նշանակում է տոհմի անդամ, տոհմի որդի կամ աղջիկ և իր նշանակությամբ հավասար է վրացական «սախալիս-շվիլի» (տան տղա), «սախալիս-կացի» (տան մարդ) և «գվարիս-շվիլի» (տոհմի տղա) տերմիններին»[2]։ Այնուհետև վկայակոչելով հայկական սկզբնաղբյուրները, ակադ. Ի. Ջավախովը հանդել է հետևյալ եզրակացության.

«Սեպուհ չի նշանակել անպայման տան ավագ ժառանգը. սեպուհ Հայաստանում կոչվել են նախարարական հայտնի տների ամեն մի անդամ և նա իր նշանակությամբ համապատասխան է վրացական գվարիս-շվիլիուն և սախլիս-կացիին»[3]։

Ակադ. Հ. Մանանդյանը իր «Դիտողություններ Հին Հայաստանի շինականների դրության մասին մարդպանության շրջանում» և «Ֆեոդալիզմը Հին Հայաստանում» աշխատություններում հանդել է այն եզրակացության, որ «սեպուհ» են կոչվել ոչ միայն նախարարական տոհմերի անդամները, այլև Արշակունյաց թագավորական տոհմի անդամները»[4]։

Ակնհայտ է, որ ինչպես ֆեոդալական կարգերի սոցիալ-տնտեսական հարաբերությունները արտահայտող մյուս, այնպես էլ «սեպուհ» տերմինը դրավել է հետազոտողների ուշադրությունը միայն իր լեզվական-տեխնիկական առումով։ Նրանք վիճել են այն մասին, թե արդյոք «սեպուհ» նշանակել է միայն նախարարական, թե նաև «արքունական տան անդամները, արդյոք «աւագ», «մեծ», «սեպուհները», «սեպուհներից» տարբերվել են իրենց տնտեսական հզորությամբ, քաղաքական իշխանության մեջ գրաված տեղով ու

---

[1] Th. Nöldeke. Geschichte der Perser und Araber zur Zeit der Sasaniden, aus der arabischen Chronik des Tabari, Leyden, 1879, s. 71, 437.

[2] И. Джавахов, Госстрой.., стр. 54.

[3] Նույն տեղում, էջ 126։

[4] Հ. Մանանդյան, Դիտողություններ Հին Հայաստանի շինականների դրության մասին մարդպանության շրջանում, Երևան, 1925, էջ 12, նույնի, Ֆեոդալիզմը Հին Հայաստանում, էջ 50—51։

դիրքով, թե տարիքով։ Աներկբայելի է, որ պատմական այս մոտեցումը հնարավորություն չի տվել անցյալի հետաղոտողների մեծ մասին ֆեոդալական հասարակարգի արտադրական հարաբերություններն արտահայտող սոցիալական այս կամ այն տերմինի մեջ տեսնել զարգացում, ցույց տալ, որ այդ նույն տերմինը պատմության բոլոր շրջաններում և նույնիսկ նույն շրջանի տարբեր էտապներում չի ունեցել և չէր կարող ունենալ նույն իմաստն ու նշանակությունը։

«Սեպուհ» տերմինը նույնպես ապրել է իր պատմական զարգացումը։ Վաղ ֆեոդալիզմի շրջանում «սեպուհ» տերմինը ստանում է երկու իմաստ և նշանակություն։ Նախ՝ «սեպուհ» նշանակում էր «ազատանի», «ազատ», ազնվական և մտնելով նույն նախարարական դասի մեջ, նրա հետ հանդես է եկել որպես հայ հասարակության իշխող և շահագործող խավ։ «Սեպուհ», միաժամանակ, նշանակում էր հողատեր-ազնվական։ Խիստ ուշագրավ է, որ միայն 4—5-րդ դարերում հանդես եկած «սեպուհների» հողային տիրույթները հայտնի էին «սեպհական» ժառանգական հայրենիքի անվան տակ։ Հողային այն տիրույթները, որոնք տրվում էին «սեպուհներին» ժամանակավորապես կամ ժառանգաբար տիրակալության իրավունքով, կոչվում էին «սեպհական», իսկ նրանց սոցիալական գոյավիճակն ու քաղաքական արտոնություններն ու ազատությունն արտահայտելու համար գործածական էր «սեպհական ազատություն» բնորոշ տերմինը։

Հայկական «ազատանիի» դասին պատկանող «սեպուհները» հիմնված կենտրոնական իշխանության և խոշոր հողատեր-ֆեոդալ-նախարարների և նահապետների ակտիվ օգնության և օժանդակության վրա, իրենց ոչ միայն ապահովում են սեփականատիրական իրավունքներով, այլև հանդես են գալիս որպես կենտրոնական իշխանության սոցիալական հենարան։ Նրանք արդեն ծառայում են բանակներում, կազմում են ազատների հետ միասին բանակի հիմնական կորիզը, ակտիվ կերպով մասնակցում են երկրի քաղաքական կյանքին, հանդես են գալիս որպես քաղաքական գործիչներ, դիվանագետներ։

«Սեպուհ» տերմինը գործածված է միայն Փ. Բուզանդի, Եղիշեի, Գ. Փարպեցու, Սեբեոսի, Թ. Արծրունու, Ար. Լաստիվերտցու և Ստ. Օրբելյանի մոտ։

Սկզբնական շրջանում «սեպուհ» են կոչվել տանուտերերի եղբայրները, որդիները, տոհմակից-ազգակիցները, նույնիսկ Արշակունյաց թագավորական տան անդամները։ Փ. Բուզանդն Արշակ

Թագավորի եղբոր որդուն կոչում է «մեծ սեպուհն Արշակունի»[1]։ Խիստ ուշագրավ է, որ Փ. Բուզանդը, որն այնքան շատ է սիրում ամեն առիթով թվարկել ֆեոդալական-նախարարական դասերի բոլոր ներկայացուցիչներին, սկսած մեծամեծ, ավագ, կրտսեր նախարար-տանուտերերից մինչև ռամիկն ու շինականը, իր աշխատության մեջ միայն երկու անգամ է գործածում «սեպուհ» տերմինը։ Առաջին անգամ նա խոսում է Գնելի եղերնական սպանության մասին և նրան կոչում է «մեծ սեպուհ», իսկ մյուս դեպքում Համազասպ Մամիկոնյանին կոչում է «սեպուհ ի Մամիկոնեան տոհմէն»[2]։

«Սեպուհ» տերմինը երկու անգամ մատնացույց է արված Եղիշեի մոտ։

Եղիշեն նկարագրելով 451 թ. ժողովրդա-ազատագրական պայքարի պատմությունը, վկայում է, որ Վարդան Մամիկոնյանի դրոշի տակ են մտնում «զայլ բազում զօրս յարքունի տանէն... և զսեպուհս ոմանս յայլմէ տոհմէ»[3]։ Երբ պարսկական բանակը մոտենում էր Հայաստանի սահմաններին, այդ լուրն լսելով «զօրքն Հայոց, սեպուհ մի յազգէն Ամատունեաց Առանձար անուն ընտրեցին յամենայն զօրականէն՝ լի իմաստութեամբ և քաջութեամբ»[4]։

«Սեպուհ» տերմինը իր բազմազան նշանակությամբ մատնացույց է արված Ղ. Փարպեցու մոտ։ Պատմիչը թվարկելով ֆեոդալական հասարակարգի դասերին պահպանում է հետևյալ հաջորդականությունը՝ «մեծամեծ տանուտերքն Հայոց և աւագ սեպուհքն»[5], կամ «Եւ լուեալ զայս ամենայն խօսս բազմութեան աւագացն Հայոց, տանուտերացն և սեպհացն...»[6]։ Հազկերտ 2-րդը հրամայում է «զուղեկեալսն ի Հայոց, ի Վրաց և յԱղուանից զառաջեալ ածել։ Եւ նախագոյն հարցեալ զՀայոց տանուտերսն և զսեպուհսն...»[7]։

Ղ. Փարպեցին բոլոր դեպքերում նախարարներից և տանուտերերից հետո հիշատակում է «սեպուհներին»։ Ահա մի երկու վկայություն ևս։ «Որոց ածեալ զայս ամենայն զմտաւ նախարարացն ամենեցուն և սեպհացն, որք էին ի դրանն ժողովեալք՝ միաբան ելին առ տէրն Մամիկոնէից և Հայոց զօրավարն Վարդան...»։ Վար-

---

1 Փ. Բուզանդ, էջ 102։
2 Նույն տեղում, էջ 204։
3 Եղիշե, էջ 95։
4 Նույն տեղում, էջ 137։
5 Ղ. Փարպեցի, էջ 26։
6 Նույն տեղում, էջ 37։
7 Նույն տեղում, էջ 48։

դան Մամիկոնյանը հայրենասիրական ճառով դիմում է երեք աշխարհների ներկայացուցիչներին, ասելով. «Այլ դուք, որ այժմ յերեցունց աշխարհաց եկեալդ էք տանուտերք և սեպուհք... լի էք ամենայն զօրութեամբ և լաւութեամբ»[1]։

Որ «սեպուհները» ֆեոդալական դասի մեջ մտած հողատերազնվականության հասարակական մի խավն էր, այդ մասին ամենից պարզ կերպով մատնացույց է արված պատմիչի մի այլ վկայության մեջ։

Թվարկելով Վարդան Մամիկոնյանի կողմնակիցներին՝ խորէն խորխոռունուն, Արշավիր Կամսարականին, Թաթուլ և Հմայակ Դիմաքսյաններին, Արտակ Պալունուն, Գյուտ Վահևունուն, նշում է, որ սրանց հետ էին «այլ տանուտերք և սեպուհք, և բազումք ի զօրացն Հայոց...»[2]։

Անկասկած է, որ «սեպուհներն» իրենց սոցիալական կացությամբ ցած էին կանգնած մեծամեծ իշխաններից և բարձր էին բանակի մեջ մտած հասարակական մյուս խավերից։ Պատմիչը խիստ զանազանություն է դնում երևելագույն տանուտերերի, սեպուհների և ռամիկ բազմության միջև։

Վասակ Սյունին, պատմում է Ղ. Փարպեցին, դավաճանելով ժողովրդա-ազատագրական մեծ գործին «Ի տանուտերացն Հայոց և ի սեպհացն, որք էին երևելագոյնք, և յայլ ռամիկ բազմութենէն՝ զայնս արգելեալ առ իւր պահէր»[3]։

Սակայն «սեպուհները» սոցիալապես միատարր, միասնական չէին. նրանք նույնպես բաժանված էին «մեծ», «ավագ» սեպուհների, կային նաև առանց որևէ կոչման այլ «սեպուհներ»։ Ավագ սեպուհները սերվում էին Արշակունիներից կամ մեծամեծ նախարարներից։ Նրանք ավագ կամ մեծ էին կոչվում ոչ միայն իրենց տարիքի, այլ հասարակական դիրքի, գրաված պաշտոնների և տնտեսական հզորության պատճառով։ Ղազար Փարպեցին միշտ ավագ տանուտերերի կողքին հիշատակում է ավագ և մեծ սեպուհներին։ «Տաղտկացեալ մեծամեծ տանուտերքն Հայոց և աւագ սեպուհքն», «ապա ժողովեալ աւագ սեպուհեացն և բովանդակ բազմութեան ուխտին եկիղեցւոյ...»[4]։

Վրաց Աշուշա բդեշխը «ունէր կին յազգէն Արծրունեաց, զբենի

---

[1] Ղ. Փարպեցի, էջ 50—55, 61։

[2] Նույն տեղում, էջ 64։

[3] Նույն տեղում։

[4] Նույն տեղում, էջ 26, 58։

մեծի սեպհին Մամիկոնէից, եղբօրն Վարդանայ...»[1]։ Պատմիչը ամեն դեպքում, երբ ցանկանում է մատնացույց անել սեպուհների տարբեր խավերի սոցիալական տարբերությունը, միշտ էլ գործածում է «ապագ կամ մեծ» տիտղոսը[2]։

Ինչպես ավագ, մեծամեծ նախարարները, տանուտերերը, այնպես էլ մեծ ու ավագ սեպուհները, մեկը մյուսից տարբերվում էին հողային տիրույթների չափով, արքունիքում գրված դիրքով։ Ղազար Փարպեցին նկարագրելով Հայաստանի, Վրաստանի և Աղվանից աշխարհների ներկայացուցիչների առերևույթ կրոնափոխության պատմությունը, վկայում է, որ Հաղկերտը, պարսկական ռազմա-ֆեոդալական ավազանին, մոգերը ոգևորված, որ այդքան շուտ կարողացան հայերին, վրացիներին, աղվաններին կրոնափոխ դարձնել, «զտանուտերսն և զսեպուհսն ներեցունց աշխարհացն, զՀայոց, զՎրաց և զԱղուանից, ի հանդերձս թագաւորականս զարդարէին. այլ և բազում և այլ ազգի ազգի պարգևօք և պատուօք, գիտոք և ագարակաք, ըստ իւրաքանչիւր ուրուք պիտոյից, լցուցանէին զամենեսեան»[3]։ Ակնհայտ է, որ գյուղեր և ագարակներ ունեին ոչ միայն նախարարները, այլև սեպուհները։ Ահա այս ժառանգական իրավունքն է, որ հայկական պատմական աղբյուրներում ստացավ «սեպհական» անունը։ Ինչպես նշվեց վերևում, սակայն, բոլոր «սեպուհները» մեծ ու ավագ չէին։ Հաճախակի են դեպքերը, երբ աղբյուրներում թվարկում են «սեպուհ» տերմինը առանց մակդիրների։ Նկարագրելով Վասակ Սյունեցու չարագործությունները Ղ. Փարպեցին խիստ դժգոհություն է հայտնում, որ այդ բոլորը դեռ վաղուց դիտեր ոմն «Սիւնեաց սեպհին անօրինի»[4] կամ «ընդ որս կալան (պարսիկները) և սեպուհ մի Սիւնի, որում անուն էր Յազդ»[5]։

«Սեպուհների» մասին որպես հողատեր դասի, ուշագրավ վկայություն է թողել նաև Ստ. Օրբելյանը։ Պատմիչը վկայում է, որ երբ Վարդան Մամիկոնյանը գտնվում էր Աղվանքում, Վասակ Սյունին և այլ դավաճան իշխանները «այլովք բազում... սեպհօք տանց և տոհմից... և զամենայն բերդս և ամրոցս Հայոց ընդ իւրեանց ձեռամբ արարին»[6]։

---

[1] Ղ. Փարպեցի, էջ 52։
[2] Նույն տեղում, էջ 45, 48, 58, 60—62, 65, 81 և ուրիշներ։
[3] Նույն տեղում, էջ 54։
[4] Նույն տեղում, էջ 41։
[5] Նույն տեղում, էջ 135, 139, 140։
[6] Ստ. Օրբելեան, էջ 62։

Վերջապես «սեպուհ» տերմինը մեկ անգամ էլ գործածված է Սեբեոսի մոտ։ Սեբեոսը վկայում է, որ «Ապատամբէին դարձեալ ի կողմանց յունաց սեպուհքն Վահևունիք՝ Սամուէլն... և Սարգիս և Վարազ-Ներսէհ»[1]։

Այսպիսով, մատենագրական այս աղբյուրների քննությունը ցույց է տալիս, որ «սեպուհները» հայկական ֆեոդալական հասարակության հողատեր-ազնվականների այն խավն էր, որը ցածր էր կանգնած նախարար-տանուտերերից և բարձր՝ նույնիսկ բազմաթանակ մանր և միջին հողատեր «ազատներից»։ «Սեպուհների» ծառայությունը նույնպես հիմնված էր վասալական սկզբունքի վրա։

«Սեպուհ» տերմինը հետագա դարերի ընթացքում ապրում է զարգացման նոր էտապ։ Արդեն Թ. Արծրունու օրոք «սեպուհը» պետական և զինվորական պաշտոն, և ոչ թե սոցիալական հարաբերություններ արտահայտող տերմին էր։

9—10-րդ դդ. «սեպուհ» տերմինը կորցնում է իր նախնական իմաստն ու նշանակությունը։ Եթե նախորդ շրջանում այդ տերմինը իր մեջ իմաստավորում էր հողատեր-ազնվականների մի ստվար խավ, որն ուներ «սեպհական», օտարելի և ժառանգական տիրություններ, ապա զարգացած ֆեոդալական հարաբերությունների պայմաններում «սեպուհ» տերմինն արտահայտում է սոսկ վասալական հարաբերություններ։

Զարգացած ֆեոդալիզմի շրջանում ոչ մեծ հողային տիրությունների ժառանգական տեր սեպուհն իր հողակտորը չկորցնելու համար որոնում է հովանավոր տեր, մտնում է նրա մոտ պետական և զինվորական ծառայության, վարում է նաև այլ պաշտոններ։

Թ. Արծրունին վկայում է, որ 9-րդ դ. Աշոտ իշխանին ծառայում էին «ոմանք յազատաց իւրոց, Մուշեղ Վահևունի, որ զտանուտերական պատիւն ունէր, և Վահրամ սեպուհ թիկնապահ իշխանին, և Վահրամ Տրունի և Հասան և այլք ի սեպուհ պաշտօնէից...»[2]։ Ակնհայտ է, որ այս վկայության մեջ «սեպուհը» կամ պաշտոնյա է, կամ իշխանի թիկնապահ-վասալը։ Այս նույն իմաստով սեպուհ տերմինը պատմիչը մատնացույց է արել մի այլ վկայության մեջ։ Աշոտ իշխանի մոտ են հավաքվում նրա Գուրգեն և Գրիգոր եղբայրները՝ իրենց բանակներով, Արծրունյաց տոհմի շատ իշխաններ՝ դարձյալ իրենց բանակներով, Վասպուրականի նախարարները

---

[1] Սեբեոս, էջ 79։

[2] Թ. Արծրունի, էջ 131։

և իշխանները և «այլ բազումք յազատ տանէ» ու սրանց հետ «սեպուհն Դաւիթ»[1]։

«Սեպուհներից» կազմված ռազմական միավորները, Ար. Լաստիվերտցին կոչում է «սեպուհ գունդ ազատաց»[2]։ Միանգամայն պարզ է և հասկանալի, որ «սեպուհները» զարգացած ֆեոդալական հարաբերությունների պայմաններում կրել են միայն ռազմական պարտավորություններ, հանդիսացել են իշխանական-ֆեոդալական խոշոր տների վասալ-թիկնապահներ, կամ մանր ծառա-սպասավորներ՝ առանց տիտղոսի, կոչման և դահ ու պատվի։

Եթե Արշակունիների և Մարզպանության շրջանում «ավագ», «մեծ» սեպուհները հանդիսանում էին նախարարական-ֆեոդալական դասի մեջ մտած մանր հողատեր ազնվականներ, ապա հետագա դարերի ընթացքում նրանք հանդես են գալիս որպես խոշոր ֆեոդալ-իշխանների սոսկ թիկնապահներ և զլխավորապես վարում էին զինվորական ծառայություն։

6. Ազատները որպես հողատեր-ազնվականներ։ «Ազատ» տերմինի սոցիալական իմաստի բացատրության առաջին փորձերը կատարել է Ղուկ. Ինճիճյանը։ Հեղինակի կարծիքով «ազատ» կոչվել են նախարարներն ու նախարարությունները։

«Եւ սակս այսոցիկ իշխանութեանց համարիմ ազատ կոչեցեալ զնախարարս,— գրել է Ինճիճյանը,— զի թագաւորն չունէր ի վերայ նոցա զայն իշխանութիւն՝ զոր ունէր ի վերայ ժողովրդեան...»[3]։

«Ազատ» տերմինի բացատրությունը տվել է նաև Ն. Ադոնցը։ Հեղինակի կարծիքով «հավանական է, որ ազատ azat բառը նշանակել է նախարարի որդի»[4]։

Շարունակելով զարգացնել իր այս միտքը, Ն. Ադոնցը գրում է. «Այդպիսով ter, sepuh, tun հետ միասին... հանդես են գալիս naxarar, azat, nahang... Այդ իսկ պատճառով հիշատակարաններում հաջորդում են տեր, նախարար, սեպուհ և ազատ, տուն և նահանգ, որպես հավասարազոր հասկացություններ»[5]։

Մ. Էմինը բողոքում է, որ «ազատ բառը չի կարելի թարգմանել «свободный» բառով, ինչպես մինչև օրս կատարվել է։ «Ազատ» նշանակել է «человек с родом, с племенем» հետևաբար «ազատ» հասկացվել է «ազնվազարմ, մեծատոհմիկ, ազնվական»։ Ազատ-

---

[1] Թ. Արծրունի, էջ 109։

[2] Ա. Լաստիվերտցի, էջ 58։

[3] Ղուկ. Ինճիճյան, Հնախօսութիւն... հ. II, էջ 77, 88։

[4] Н. Адонц, Армения в эпоху Юстиниана. стр. 451.

[5] Նույն տեղում, стр. 452.

ները,— շարունակում է հեղինակը,— որոշ չափով կախված էին նախարարներից, նրանք կազմում էին առանձին դասային խումբ, կամ «կազմում էին նախարարների և ռամիկների մեջ առանձին խումբ»[1]։

Ի. Ջավախովը ազատներին համարում է Հին Հայաստանի առանձին դաս, որը գտնվում էր նախարարներից ցածր աստիճանում[2]։

Ակադ. Հ. Մանանդյանը մատենագրական աղբյուրների հետազոտության և բաղդատման հիման վրա ցույց է տվել, որ «վերոհիշյալ բացատրությունները... խիստ հակասական են և իրար հետ անհաշտելի»։

Հեղինակի կարծիքով ճիշտ չէ «Ինճիճյանի լուսաբանությունը, որ իբր թե նախարարները «ազատ» են անվանվել, որովհետև թագավորը չի ունեցել իշխանություն նրանց երկրների և բնակչության վրա։ Անընդունելի է նույնպես և Ադոնցի կռահումը, թե «ազատ» և «սեպուհ» հոմանիշ տերմիններ են և իբր «ազատ» են կոչվել նախարարների որդիները։ Ակադ. Հ. Մանանդյանը ճիշտ է համարում Մ. Էմինի, Կարստի, Ջավախովի ենթադրությունները, թե «ազատները» Հայաստանի ստորին ազնվականներն էին, որոնք աղբյուրների մեջ հիշատակվում են գրեթե միշտ նախարարներից հետո և ռամիկներից առաջ։ Հայտնի է արդեն, որ Սասանյան Պարսկաստանում ևս azat անվանել են, ինչպես մատնացույց է արել Christensen-ը իր L'empire des Sassanides աշխատության մեջ... մանր ազնվականները, որոնք բավական մեծ թիվ էին կազմում և ցրված էին ամբողջ երկրում[3]։ Այսպիսով, ակադ. Հ. Մանանդյանի կարծիքով «ազատները» մանր ազնվականներ էին։ Եվ իսկապես, հայկական նախարարական-ֆեոդալական հիերարխիայում «ազատները» ավագ, մեծամեծ, կրտսեր նախարարներից և սեպուհներից հետո, գրավում էին ֆեոդալական հիերարխիայի հաջորդ աստիճանը։ Մատենագրական աղբյուրներում «ազատ» տերմինը հիշատակված է երկու առումով և նշանակությամբ։ Լայն իմաստով «ազատ», «ազատանիի, ազատութիւն», «ազատորեար», «յազատ ազգանուն Հայոց» տերմինները իրենց մեջ իմաստավորում էին աշխարհիկ և հոգևոր ֆեոդալական դասերի և խավերի ավագանուն։ Նեղ իմաստով «ազատ» տերմինի տակ հասկացվում էր մանր և միջին հողա-

---

[1] История Армении М. Хоренского, новый перевод Н. А. Эмина, Москва, 1893, стр. 303—304.

[2] И. Джавахов, Госстрой..., стр. 134, 138, 139.

[3] Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը..., էջ 90—92։

տեր-ազնվական և ռազմա-ծառայողական դասերի բազմաքանակ խավերը։

Արտադրության ֆեոդալական եղանակի հաղթանակը 4—5-րդ դարերում երբեմնի «միասնական», «միատարր» նախարարական-ֆեոդալական դասի մեջ առաջացրել էր լուրջ ճեղքվածքներ։ Արդեն նախարարական-ֆեոդալական դասակարգը տրոհվել էր տարբեր խավերի ու դասերի միջև։ Ագաթանգեղոսը, Փ. Բուզանդը, Ղ. Փարպեցին, Մ. Խորենացին, այդ շրջանի կրոնական-կանոնական որոշումները պահպանել են խիստ ուշագրավ վկայություններ ոչ միայն մեծ, խոշոր, ավագ, կրտսեր նախարարների, այլև բազմաքանակ «ազատների» մասին։

Մատենագրական աղբյուրները թվելով իրենց ընթացաշրջանի հայ հասարակության տարբեր դասերի առկայությունը, միշտ էլ պահպանել են հետևյալ հաջորդականությունը.

Ագաթանգեղոսը վկայում է, որ հայոց Տրդատ թագավորը ողջույն է հղում «Առ մեծամեծս և առ իշխանս և առ նախարարս և առ գործակալս և առ այլ մարդիկդ, որ ընդ իմով իշխանութեամբ էք, յաւանս, ի շէնս, ի դեղս, յազարակս, առ ազատս և առ շինականս, միանգամայն իսկ առ ամենեսեան...»[1]։ Տրդատը պահանջում է, որ բոլոր «նախարարք մեծամեծք և ազատք և գործակալք... և շինականք, բնակք և ձեռաւունիք և ձեռասունք մեր Արշակունեաց...»[2] պետք է ենթարկվեն թագավորին, մտածեն Հայոց աշխարհի շինության մասին։ Պատմիչը նկարագրելով Տրդատ թագավորի միջոցառումները, նրա դաժան պայքարը արտաքին թշնամիների դեմ, վկայում է, որ նա հրաման է տալիս իր վասալ նախարարներին, ազատներին շտապ կերպով մեկնել Վաղարշապատ։ Ստանալով այդ հրամանը Վաղարշապատ են շտապում «Առ հասարակ զօրքն ամենայն, և մեծամեծք և կուսակալք, գաւառակալք, պատուաւորք, պատուականք, զօրավարք, պետք և իշխանք, նախարարք և ազատք, դատաւորք և զօրագլուխք...»[3]։

Այս նույն հաջորդականությունը պահպանել է Փ. Բուզանդը։ Պատմիչը մեծամեծ նախարարներին կոչել է «ճոխ իշխանք», «մեծք և գլխաւորք նահապետք». նկարագրելով հայ ժողովրդի դաժան, մահացու և երկարամյա պայքարը պարսկական բռնակալության դեմ, Բուզանդը վկայում է, որ Տիրանի հրամանով «ժողովեցան ի

---

[1] Ագաթանգեղոս, էջ 73։

[2] Նույն տեղում, էջ 75։

[3] Նույն տեղում, էջ 402։ (Բոլոր ընդգծումները մերն են—Ս. Հ.)։

մի ժողով միաբանութեանն մարդիկ աշխարհին Հայաստան երկրին-նախարարք մեծամեծք, աւագք, կուսակալք, աշխարհակալք, ազատք, զօրագլուխք, դատաւորք, պետք, իշխանք, բայց ի զորավարացն, այլ և ի շինականաց անգամ ռամիկ մարդկանն»[1]:

Խիստ ուշագրավ է, որ Եղիշեն ազատներին, ազատորդիներին համարում է սերված «յարքունի տանէ»[2]: Ազատներից, ազատորդիներից էր կազմված «արքունի գունդն»: Մատնացույց անելով «ազատների» զինվորական ծառայությունը, Եղիշեն գրել է. «Այսպիսի պատուական զինուորութիւն հասեալ էր ի չարաշուք անարգութիւն, և հայրենի ազատութիւնն չարաչար կայր ի ծառայութեան մարդախոշոշ բռնաւորին...»[3]: Պատմիչը սահմանադիծ է անցկացրել ազատների և շինականների միջև: «Ազատները» իրենց սոցիալական կացությամբ «փափկացեալ» էին, իսկ գեղջուկները «վշտացեալ»[4]: Ոչ միայն արքունական գնդերի կամ «ամենայն ազատազունդի աշխարհիս Հայոց», այլև նախարարական զորագնդերի կորիզը կազմում էին «ազատները», սրանց որդիները: Արշակ Թագավորի օրոք, վկայում է Ղ. Փարպեցին, «ելեալ ի յորս գունդք նախարարացն որդւովքն ազատացն»[5]:

«Ազատները» հաճախակի հիշատակվում են նաև քահանաներից, հոգևոր դասի ավագանուց հետո: Սահակ կաթողիկոսի դին «բազմութեամբ քահանայից և ազատաց, տարան ի դաւառն Տարօնոյ, ի բնիկ գիւղն իւր սեպհական, յանուանեալն Աշտիշատ»[6]:

Պատմիչները հաճախակի տարբերություն են դնում «ազատների» և «անազատների» միջև, նշում են առաջինների արտոնյալ, ազատ և վերջինների ստորադաս դոյավիճակը: Ղ. Փարպեցին նկարագրելով 5-րդ դարի ժողովրդա-ազատագրական պայքարը պարսկական բռնակալության դեմ, վկայում է, որ հավաքվում են «ամենայն տանուտէրքն Հայոց և սեպուհք... և երդուեալ ամենայն բաղմութիւն զօրացն ազատաց և անազատաց...»[7]:

Վահան Մամիկոնյանի բանակը կազմված էր նախարարներից, ազատներից և ռամիկներից: Պարսիկների դեմ պայքարելու համար Վահան Մամիկոնյանի հետ մասնակցում էին «զնախարարսն և

---

1 Փ. Բուզանդ, էջ 46, 56—57։
2 Եղիշ., 16, 119, 251։
3 Նույն տեղում, էջ 30։
4 Նույն տեղում, էջ 86։
5 Ղ. Փարպեցի, էջ 10։
6 Նույն տեղում, էջ 37—38։
7 Նույն տեղում, էջ 61։

պաղատս և պայլ ամենայն ռամիկն, որք կամաւոր խնդութեամբ երթային ի գործ պատերազմին...»[1]։

Աղատները ոչ միայն իրենց սոցիալական կացութեամբ, տընտեսական հզորութեամբ, այլև արտարինով և հանդերձներով տարբերվում էին շինական-ռամիկներից։ Ասպետ Սահակը և Մամիկոնյան Վասակ սպարապետը հալածվելով պարսիկներից ապաստան են գտնում Վրաստանում։ Սրանց խնամող հոգևորականներից մեկը դիմելով նրանց ասում է, «թէ ուստի՞ էք և կամ յորմէ դաւառէ, քանզի ձեզ ձեր և կերպարան ազատս կարծեցուցանէ զձեզ»[2]։

«Աղատների» բազմաքանակ դասը ոչ միայն վարում էր զինվորական ծառայություն, այլև նշանակվում արքունի գործակալներ, շրջանների կառավարիչ—հարկահավաքներ, դատավորներ։ Շահապիվանի ժողովում մշակված կանոնները պախարակում են այն «աղատներին», որոնք առանց «գաւառի եպիսկոպոսի» համաձայնության դրավում են դատական պաշտոններ[3]։

Աղատների բազմաքանակ դասը ուներ «երդեր», մարդիկ. նրանց և հոգևոր ֆեոդալների մեջ կատաղի պայքար էր մղվում եկեղեցապատական հողերի համար։ Դվինի ժողովում մշակված կանոնները դատապարտում են այն «աղատներին», որոնք ցանկանում են «զժառանգաւորս եկեղեցւոյ... ի ծառայութիւն և ի ստրկութիւն արկանել»[4]։

«Աղատները» հանդիսանալով Արշակունի թագավորների և ավագ ու մեծամեծ նախարարների վասալները, իրենց հավատարիմ ծառայության դիմաց ստանում էին հողեր, կալվածներ։ Ներսես կաթողիկոսը և Ներշապուհ Մամիկոնյանը իրենց կանոններում խստիվ կերպով արգելում են հոգևոր դասի այն ներկայացուցիչներին, որոնք «վասն ուխտաղանցութեան թողնում են եկեղեցիները և մտնում են զինվորական ծառայության մեջ։ «Զի անիրաւ է,— ասված է նրանում,— վասն անուսումնութեանն ընդ զինուորս կացցեն և զՀայրենի հող և զուր կալցեն»[5]։

Աներկբայելի է, որ ոչ միայն զինվորական ծառայության դրված հոգևորականները, այլև «աղատները», որոնք, ինչպես մատնացույց ենք արել վերևում, հիմնականում կրում էին զինվորական պարտականություններ, այդ ծառայության դիմաց ստա-

---

[1] Ղ. Փարպեցի, էջ 128, 160։

[2] Նույն տեղում, էջ 141—142։

[3] Կանոնգիրք հայոց. էջ 76։

[4] Նույն տեղում, էջ 126։

[5] Նույն տեղում, էջ 108—109։

նում էին հող և ջուր։ Ազատների վասալական կախումը ավագ, մեծամեծ նախարարներից և իշխաններից ամենից բնորոշ կերպով ցույց է տվել Կեղծ Շապուհ Բագրատունին։

Դերենիկ Արծրունին դիմելով իր վասալ ազատներին, ասում է. «Ո՞վ ազատք իմ անուցեալք, այս ապր եմ պահել ձեզ»[1]։

«Ազատները» ոչ միայն հողատեր էին, այլև ունեին կախյալ գյուղացիներ։ Այս մասին արժեքավոր վկայություն է պահպանվել Դվինի ժողովի կանոններից մեկում։ Այդ ժողովի Բ կանոնում ուղղակի ասված է, որ «ազատներ», «զիւրեանց դերդ և զմարդ բաժանեն»[2]։ Անկասկած է, որ «դերդ» և «մարդ» ասելով հասկացվել են ոչ թե ճորտ ու հողին ամրացված գյուղացիներ, ինչպես ենթադրել է ակադ. Հ. Մանանդյանը, այլ «ազատներին» ենթակա հարկատու գյուղացիները։

«Ազատները» ինչպես Հայաստանում, այնպես էլ Պարսկաստանում հանդիսանում էին կենտրոնական իշխանության սոցիալական հաստատուն հենարանը, ազատ էին մարմնական պատիժներից։ Հանցապարտ «ազատները» վճարում էին միայն դրամական տուգանքներ։ Շահապիվանի ժողովում մշակված խիստ ու դաժան կանոնները հարկադիր աշխատանքի են դատապարտում «հանցապարտ» շինականներին, իսկ ազատների համար սահմանում են միայն դրամական տուգանքներ և այն էլ 2:1 հարաբերությամբ[3]։

Հայկական մատենագրական աղբյուրներում, կանոնական որոշումներում կան բազմաթիվ վկայություններ, որ «ազատների», նախարարական-ֆեոդալական խոշոր տների և հողևոր ֆեոդալների միջև կատաղի պայքար էր մղվում հողային տիրույթներ, աշխատավոր ձեռքեր և պետական ու զինվորական բարձրաստիճան պաշտոններ գրավելու համար։

«Ազատների» մանր հողատեր-ազնվական այդ դասի պահանջները շատ մեծ էին։ Նրանք հանդիսանալով թագավորական իշխանության սոցիալական հենարանը և բանակի հիմնական կորիզը, իրենց հավատարիմ ծառայության համար շահել էին հայ թագավորների վստահությունը. և թագավորները, ինչպես աշխարհիկ, այնպես էլ հոգևոր ֆեոդալների դեմ մղվող դաժան պայքարում միշտ էլ հենվում էին հող, գյուղացիներ և պետական-վարչական

---

[1] Պատմութիւն Շապհոյ Բագրատունւոյ Ի լոյս ածին Գ. Տ. Մկրտչեան և Մեսրոպ եպիսկոպոս, Էջմիածին, 1921, էջ 70։

[2] Կանոնագիրք հայոց, էջ 126։

[3] Կանոնագիրք հայոց, էջ 64—82, տես նաև Н. Пигулевская, Византия и Иран на рубеже VI и VII вв, стр. 213.

պաշտոններ ձեռք բերելու մեծ տենչանք ունեցող հասարակական այս խավի վրա։

«Ազատների» մի մասը քայքայված, իրենց տնտեսական հզորությունը և քաղաքական իշխանությունը կորցրած նախարարների, տերերի, տանուտերերի որդիներն ու ժառանգներն էին։ Չի բացառվում նաև այն հանգամանքը, որ ազատանիի շարք կարող էին բարձրանալ նաև առանձին մարդիկ՝ աչքի ընկնող ռազմական ու պետական ծառայության շնորհիվ։

«Ազատները» նախարարական-ֆեոդալական դասի ամենաստվար և բազմաքանակ մասն էին, սակայն իրենց տնտեսական հզորությամբ և քաղաքական իշխանությամբ ավելի ցածր էին կանգնած, քան ավագ և կրտսեր նախարարները։

Եթե խոշոր նախարար-ֆեոդալները, տոհմիկ ազնվականները, արքունիքում գահ ու պատիվ ունեցող տերերը, նախարարները, նահապետները իրենց կալվածներում անկախ իշխողներ էին և ժառանգական կալվածատերեր, եթե նրանք հաճախ կենտրոնախույս դիրք էին գրավում կենտրոնական իշխանության նկատմամբ, ապա մանր և միջին ազնվականները, պարգևական հողատերերը, պետական և զինվորական ծառայողները կատաղի թշնամի էին նախարարներին և պայքարելով սրանց դեմ ցանկանում էին լայնացնել իրենց կալվածները, ձեռք բերել ավելի մեծ թվով կախյալ գյուղացիներ, գրավել պետական և վարչական ու ռազմական բարձր պաշտոններ։ Այդ էր պատճառը, որ ինչպես թագավորն էր հենվում այս խավերի վրա, այնպես էլ հասարակական այս դասերը ձգտում էին թագավորի ու մեծ իշխանների պաշտները, մտնում էին նրանց հովանավորության տակ և այդ հովանավորությունը օգտագործում էին թագավորական իշխանությունը կենտրոնացնելու և նախարարների, ինչպես նաև հոգևոր ֆեոդալների իրավունքներն ու արտոնությունները եթե ոչ վերացնելու, գոնե սահմանափակելու համար։

7. Ոստանիկները, որպես պարգևական հողատերեր։ Ինչպես «նախարար», «տէր», «տանուտէր», «սեպուհ», «ազատ» այնպես էլ «ոստանիկ» տերմինը գրավել է պատմաբան-բանասերների ուշադրությունը։ Ղուկ. Ինճիճյանը վկայակոչելով Մ. Խորենացու աշխատության այն հատվածը, որտեղ պատմիչը խոսում է «ոստանիկների» տոհմաբանական ծագման մասին, գտել է, որ «ոստանիկները» սերվել են «...ի հին զարմից թագաւորացն, որ ի Հայկայ» և «ի զարմից Տիգրանուհւոյն», որ «ոստանիկներ» կոչվել են նաև «այլ թագաւորազունք Արշակունեաց, սերեալք յարքայորդւոց»։

Արքունական զարմից սերված «ոստանիկները»,— շարունակում է Ինճիճյանը,— բնակություն են հաստատել Հայաստանի Հաշտյանք, Աղիովիտ և Առբերանի գավառներում»[1]:

Մ. Էմինը՝ Մ. Խորենացու հայոց պատմության իր ռուսերեն թարգմանության ծանոթագրությունների մեջ «ոստան», «ոստանիկ» տերմինները մեկնել է «արքունական», «թագավորական», իսկ «զարմ ոստանիկ», «թագավորական ծագում ունեցող ցեղ»: Իր այս երկրորդ նշանակությամբ նա ընդունում է ազնվաբարո, ազնվական իմաստ: Գունդ ոստանիկ՝ նշանակել է «ազնվական գունդ»:

Այնուհետև, ոստան նշանակել է «մայրաքաղաք»: Օրինակ, Վաղարշապատը կոչվել է ոստան: Վերջապես կա մի արտահայտություն «բարբառ ոստանիկի», այսինքն «գրանիկ, մայրաքաղաքային բարբառ»: Մովսես Խորենացին ասում է, որ Իբերիայում այդ «արքունական գնդերը կոչվել են «сеп-тцул», ավելի ճիշտ գլիններ,— շարունակում է Հեղինակը,— նրանց կոչել сепетцули— սեպ-արքունիկ-թագավոր, թծուլի — ազգ, որն իրականում նշանակել է «գնդեր», որոնք կազմված էին ազնվատոհմ, իշխանական կամ թագավորական ծագում ունեցող մարդկանցից[2]:

Ակադ. Ի. Ջավախովը «ոստանիկ» տերմինին մի փոքր այլ բացատրություն է տվել: Հեղինակի կարծիքով «ոստանիկ» են կոչվել այն բնակիչները, որոնք ծագել են անձամբ հայոց թագավորին պատկանող արքունական տնից: Ի՞նչ իրավական կացության մեջ են եղել ոստանիկները, արդյո՞ք նրանք ազատ էին, թե կախյալ, այդ մասին վկայություն է պահպանել Եղիշեն: Ազատ վկայակոչելով պատմիչի համապատասխան հատվածը, այն մասին, որ, «բազում և այլ ազատ մարդիկ, որ Ոստանիկոն անուանեն՝ յարքունի տանէ», Ի. Ջավախովը եզրակացնում է. «Հետևաբար՝ ոստանիկները ազատ էին...»[3]:

«Ոստանիկ», «ոստան» տերմինների ստուգաբանության լուրջ փորձեր կատարել է Ն. Ադոնցը: «Պատմիչների մոտ,— գրել է Հեղինակը,— մատնացույց է տրվում ազատ մարդկանց առանձին մի կատեգորիա՝ այդ այսպես կոչված ոստանի մարդիկ են կամ ոստանիկներ»[4]:

---

[1] Դուկ. Ինճիճեան, *Հնախօսութիւն*, հ. Բ, էջ 132—133, 160—162։

[2] Н. Эмин, История Армении М. Хоренского, стр. 233—234.

[3] И. Джавахов, Госстрой..., стр. 133—134.

[4] Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, стр. 476.

Այնուհետև, մատենագրական աղբյուրների վերլուծության հիման վրա, Ն. Ադոնցը եզրակացնում է. «Իշխանական տիրույթներից տարբերվելու համար, նրանք (թագավորների արքունի կալվածները) կոչվում էին թագավորական, «արքունի տուն, արքունի ոստան»[1]: Հետևաբար «ոստան» նշանակել է արքունիք, «ոստանիկ» արքունի մարդիկ, ազնվականներ: «Ոստանիկ», «ոստանիկ ազատություն» բառերը, իրենց նշանակությամբ համապատասխանում են ռուսական ազնվական, ազնվականություն բառերին: «Ոստան» է կոչվել,— շարունակում է Ադոնցը,— իշխանական տունն մի տուն, սակայն նա գերազանցապես դրած է ածվել թագավորական արքունիք արտահայտելու համար»: «Ինձ թվում է,— ասում է Ն. Ադոնցը,— որ ոստանիկներն այնպես են վերաբերվում թագավորական ընտանիքին, ինչպես սեպուհները նախարարներին»[2]:

«Ոստանիկների» ծագման, նրանց ազատության մասին առաջին վկայությունը մենք գտնում ենք Մ. Խորենացու մոտ: Մ. Խորենացին ցույց է տվել, որ «ոստանիկները» ծագել են այն չորս գնդերից, որոնք իբր կազմավորվել են Վաղարշակ թագավորի օրոք: Նրանք սերվել են, վկայում է Խորենացին, Հայկի և մյուս նախահայրերի տոհմից՝ արքունիքը պաշտպանելու համար: Հետագայում նպարսիկները նույնպես կազմել են զինվորական գնդեր և նրանց կոչել են «ոստան»:

Խորենացու վկայությունները հաստատում են Ղ. Փարպեցին և Եղիշեն: Սրանց մոտ «ոստանը» հաջորդում է արքունի բառին:

Մ. Խորենացու բացատրության մեջ իրականն այն է, որ «ոստանիկները» թագավորական տոհմից սերված մարդիկ էին, բայց ոչ հին զարմերից, այլ Արշակունիներից: Սրանք Արշակունի սեպուհներ էին, և ճիշտ է պատմիչը, որ նրանց համարում է համապատասխան հին վրացական «սէպէթծուլ»-ների հետ: Խորենացու օրոք «ոստանիկների» կազմը մնացել էր նույնը, ինչ առաջ: «Ոստանիկների» կազմում մտնում էին ոչ միայն Արշակունիների սերունդները, այլև նրանք, որոնք ունեին այլ ծագում և իրենց մի բանով ցույց էին տվել: Սրանց թվում պետք է դասել այն մանր իշխանական տոհմի անդամներին, որոնց մենք տեսնում ենք Արշակունիների ոստան Այրարատում:

---

1 Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, стр. 463.

2 Նույն տեղում, էջ 476—477։

Նախարարների ծագումը բացատրելիս Մ. Խորենացին վկայում է, որ քիչ չէին դեպքերը, երբ մարդիկ բարձրանում էին ազատների կարգը թագավորներին մատուցած իրենց հատուկ ծառայության համար։ Այդ երևույթները հատկապես մասսայական բնույթ է կրել Արշակունիների անկումից հետո։ Այդ է պատճառը, որ Խորենացին «ոստանիկների» կազմում առաջացած փոփոխությունները վերագրում է Սասանյանների էպոխային։ Պատմիչը վկայում է, որ «յառաջագիմութենէ ազատացեալք» մարդիկ բարձրանում էին ոչ միայն ոստանիկների, սեպուհների, ազատների, այլև նախարարների շարքը։ Արքունիքում ծառայող հսկայական քանակի մարդիկ բաղկացած էին գերազանցապես «ազատների» դասին պատկանող մարդկանցից։ Արշակունիների անկումից հետո, նրանք անկասկած է, մտնում էին ոստանիկների շարքը։

Այսպիսով, «ոստանիկ» տերմինն իր մեջ իմաստավորում էր երեք կարգի մարդիկ՝ արշակունիների սերունդների այն մարդիկ, որոնք ունեին սեփական տիրույթներ Այրարատում, նրանք, որոնք ստանում էին պարգևական հողեր, իսկ արշակունիների անկումից հետո՝ արքունիքում ծառայող մարդիկ։

Ակադ. Հ. Մանանդյանը «ոստան», «ոստանիկ» բառերին նոր բացատրություն չի տալիս. նա հիմնականում ընդունում է Հյուբշմանի այն մեկնությունը, որ Արշակունիների ժամանակ «ոստան» է համարվել այն երկիրը միայն և այն քաղաքը, որը գտնվել է Արշակունյաց իշխանության ներքո։ «Ոստան» է նշանակվել ուրեմն տարքունի կոչված, երկիրը կամ քաղաքը»։ «Ոստան» են կոչվել Արտաշատը, Վաղարշապատը, հետագայում նաև Դվինը։ «Աղբյուրների վկայություններից դժվար չէ հետևցնել, զարգացնելով Հյուբշմանի կարծիքը, շարունակում է ակադ. Հ. Մանանդյանը, որ ոչ թե հին շրջանում, այլ միմիայն հետագա դարերում, «ոստան»-ը գործ է ածվել նաև նախարարական ուրիշ կենտրոնների համար... Ոստան են համարվել նաև նախարարական իշխանությունների նշանավոր կենտրոնները, օրինակ Նախճաւանը, Հաղամակերտը և Դարոյնքը»[1]։

Ակադ. Հ. Մանանդյանը մատնացույց է արել, որ «ոստան», «ոստանիկ» բառերի նշանակությունը... սխալ է հասկացվել, թե մատենագրական հին աղբյուրներում և թե բանասիրական ու պատմական նորագույն երկերում[2]։ Հեղինակը մերժելով Դուկ. Ինճիճյանի, Ն. Ադոնցի մեկնությունները, գտնում է, որ ուղիղ և համոզե-

---

[1] Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը..., էջ 56։

[2] Նույն տեղում, էջ 95։

ցույցիչ է Հյուրշմանի ստուգաբանությունը։ Ապա վկայակոչելով Մ. Խորենացու, Եղիշեի, Ղ. Փարպեցու մոտ պահպանված հատվածները, հեղինակը շարունակում է «Այս վկայությունների մեջ ամենից կարևորը երկրորդն է, որի մեջ պարզ ասված է, որ «ոստանիկ» են անվանվել «աղատ մարդիկ յարքունի տանէ»։ Ուշադրավ է և այն, որ «ոստանիկների», «յարքունի տանէ» զորագունդը հակադրվում է... մյուս զորքին, որն անվանված է «գունդ ի Հայոց Մեծաց աղատ և աղատորդի». կամ «զօրք նախարարացն իւրաքանչիւր տանէ»[1]։

«Արքունի տունը», ասում է հեղինակը, չի նշանակել արքունի ընտանիք, այլ դործ է ածվել արքունի երկրի համար։ «Ոստանիկները» հակադրվել են «սեպուհներին», որոնք ծագել էին «նախարարական տոհմերից»։ Այնուհետև ակադ. Հ. Մանանդյանը վկայակոչում է Մ. Խորենացուն, ցույց է տալիս, որ ճիշտ է Խորենացին, երբ գրում է, որ «ոստանիկների» դասը չի ծագել նախարարական տոհմերից, որ նրանք եղել են «աղատ մարդիկ» և բնակություն են հաստատել ոչ թե նախարարական շրջաններում, այլ արքունի երկրում և նրանցից է կազմվել այն հատուկ զորագունդը, որ կոչվել է «արքունի» կամ «յարքունի տանէ»[2]։

Եզրափակելով «ոստանիկի» մասին իր դիտողությունները՝ ակադ. Հ. Մանանդյանը գրել է. «Ինչպես տեսնում ենք «ոստանիկների» թագավորական զարմ լինելը, հին թագավորների կամ Արշակունիների, այնքան էլ հաստատ չէ, ինչպես մինչև այժմ կարծել են։ Իրապես «ոստանիկ են անվանվել Արշակունյաց բուն երկրի «ոստանի» «աղատները», որոնցից կազմած գունդը անվանվել է «արքունի» կամ «յարքունի տանէ»[3]։

Պատմական սկզբնաղբյուրների վկայությունների հետազոտությունը այլ բան է ապացուցում։ Արդեն 6—7-րդ դդ. «ոստանիկ», «ոստան» տերմինները անհայտացել էին պատմության թատերաբեմից։ Սակայն Մ. Խորենացին առաջինն է, որ լուրջ փորձեր է կատարել բացատրել «ոստանիկ», «ոստանիկ աղատութիւն» բառերի ոչ միայն լեզվական, այլև սոցիալական իմաստն ու նշանակությունը։ Պատմահայրը վկայում է, որ Հայաստանում քաղաքական և հասարակական կարգերը սահմանում է Արշակունյաց թագավորության հիմնադիր Վաղարշակը։ Վաղարշակն է, որ իբր կարդել է արքունի դուռն չորս պահապան գունդ և կոչել «ոստան»։ Վաղարշակը, վկա-

---

[1] Հ. Մանանդյան. Ֆեոդալիզմը..., էջ 97—99։

[2] Նույն տեղում, էջ 99։

[3] Նույն տեղում, էջ 100—101։

յում է պատմիչը. «և զունդս և պահապանս գրան արքունի կարգէ զչորս, զմի մի իւրաքանչիւր բիւրովք վառելովք ի նոյն ի Հին ի զարմից Թագաւորացն՝ որք ի մեծոյ նախնւոյն ի Հայկայ, որք բուն ոստանն անուանեալ...»[1]: Այս ոստանիկ գնդերում ոստանիկները իրենց գինվորական և պետական ծառայության դիմաց, որպես ժառանգություն ստանում են «գիւղս և դաստակերտս»[2]: Ակնհայտ է, որ ինչպես հայ «ազատանիի» դասի մեջ մտած հասարակական մյուս խավերը, այնպես էլ «ոստանիկները» ժառանգական հողատերեր էին և իրենց հողային տիրությունը ժառանգում էին «ի հարանցն»: Եթե պատմական Հայաստանում արքունի պահապան գնդերը կազմված էին «ազատաներից» և «ոստանիկներից», եթե սրանք սերվում էին «ի Հին զարմից Թագաւորացն», ապա պարսկական տիրապետության էպոխայում հայկական «ոստանիկ» գնդերը արդեն ոչնչացված էին և նրանց փոխարեն կազմված էին նոր գնդեր «արքունի» անվան տակ:

Մ. Խորենացին վկայում է, որ «ոստանիկները» ազատ մարդիկ էին, ընակություն էին հաստատել ոչ միայն արքունիքում, արքունիքին պատկանող կալվածներում, այլև «արքունի երկրում»: Արքունի երկրում ստեղծված հատուկ զորագնդերը կոչվել են «արքունի» կամ «յարքունի տանէ»: Այս նույն սիստեմով էր կազմված նաև պարսկական արքունի գնդերը: Խորենացին այնուհետև փորձեր է կատարում լուսաբանելու պարսկական «ոստան» կոչված գնդերի առաջացման պատմությունը: Նա խոստովանվում է, որ «ոչ գիտեմ թէ վասն ապառելոյ ազգին առաջնոյ, թէ վասն ընդդիմութեան իրիք արդեօք շկապեալ և ի բաց ընկեցեալ զազգն՝ զայլս ի տեղի նոցա յարուցին գունդս՝ անուամբ արքունի»[3]: Ուշագրավ է, որ պարսիկները ոչնչացրել էին հին հայկական «ոստանիկ» կոչված գնդերը և նրանց տեղ Հայաստանում կազմել էին նոր՝ արքունի անվան գնդեր: Պատմահայրը ոչ միայն տալիս է հայկական, պարսկական, այլև վրացական արքունի գնդերի առաջացման սոցիալական դրդապատճառները: Մի այլ առիթով նշում է, որ իր օրոք Տիգրանակերտի շրջանում պահպանվել է ոստան կոչված ազատություն, որն իր սկիզբն է առնում Տիգրանուհու սերնդից: Տիգրանը շինում է յուր անվամբ մի ավան և կոչում Տիգրանակերտ: Տիգրանը իր Տիգրանուհի քրոջը նվիրում է Տիգրանակերտը և «զպատուական զյնոսիկ ի ծառայութիւն նմա (Տիգրանուհուն — Ս. Հ.) հրամայէ: Եւ զոստանն

[1] Մ. Խորենացի, էջ 111։
[2] Նույն տեղում, էջ 112։
[3] Նույն տեղում։

անուանեալ կողմանցն այնոցիկ ազատութիւն՝ ի զարմից սորա ասէ լեալս, իբր թագաւորական զարմս»[1]։ «Ոստան», արքունի դնդերը սերվել էին թագավորական սերնդից նաև Վրաստանում։ «Այլ առաջինն, շարունակում է Մ. Խորենացին, հաստատ ի զարմից թագաւորացն առաջնոց. որպէս և այժմ ի Վրաց աշխարհին, որ Սէպիէ-ծուլն կոչի»[2]։

Ակնհայտ է, որ Խորենացին «ոստանիկների» դասը համարում է սերված թագավորական զարմից։

«Ոստան» է կոչվել նաև արքունի դուռը — այսինքն արքունիքը։ Հ. Շահխաթունյանցի կողմից հայտնաբերված և հրապարակված «Զինվորական հրովարտակում» պահպանվել է խիստ արժեքավոր վկայություն «ոստանի» մասին։ «Եւ լինի թիւ մարտիկ արանց, որ ընդ ազգաւք ՁԴ-ից հազարաց, թող զսպասաւորս դրանն արքունի. որ է ոստանդ, որք պատերազմ ելանէին ընդ արքայի...»[3]։

Այսպիսով, մատենագրական վկայությունների քննարկումը հնարավորություն է տալիս ենթադրել, որ «ոստան» հավաքական տերմինը իր մեջ է իմաստավորել ինչպես արքունական դուռը, այնպես էլ իշխանական-նախարարական խոշոր տների վարչական-քաղաքական աշքի ընկնող կենտրոնները, բերդ-ամրոցները։ «Ոստան» են կոչվել նաև Հայաստանի մայրաքաղաքները և առևտրի ու արհեստային արտադրության խոշոր քաղաք-ամրոցները։

Հայկական արքունի ոստաններից, արքունի տան անդամներից, ֆեոդալական-նախարարական խոշոր տներից ու տոհմերից սերված մարդիկ, սպասավորները հայտնի էին «ոստանիկ» անվան տակ։

Եղիշեի և Ղ. Փարպեցու մոտ պահպանված վկայությունները ցույց են տալիս, որ «ոստանիկները» համարվել են «ազատանիի» դասի մեջ մտած ամենաստորադաս խավը։ Պատմիչները միշտ էլ «ոստանիկներին» հիշատակում են նախարարներից, սեպուհներից, ազատներից և նույնիսկ ազատորդիներից հետո և ռամիկներից ու շինականներից առաջ։

Եղիշեն միայն երկու անգամ է հիշատակում «ոստանիկ» բառը։ Պարսկական Հազկերտ 2-րդ թագավորը, ասում է պատմիչը, «գունդ դաղմէր ի Հայոց մեծաց զազատ և զազատորդի, և յարքունի տանէ զոստանիկ մարդիկ»[4]։ Այս թվարկելով հայ ժողովրդի դավաճան

---

[1] Մ. Խորենացի, էջ 83։

[2] Նույն տեղում, էջ 112։

[3] Հ. Շահխաթունեանց, Ստորագրութիւն..., էջ 58—59, Կ. Կոստանեանց, Հիւսուած..., գիրք 3, էջ 33։

[4] Եղիշե, էջ 16։

Վասակ Սյունեցու կողմնակիցների անունները, վկայում է, որ սրանց հետ էին նաև «բաղում և այլ ազատ մարդիկ, որ Ոստանիկան անուանեն՝ յարքունի տանէ»[1]։ Եթե Եղիշեի մոտ «ոստանիկները» ազատ մարդիկ են և ընակություն են հաստատել արքունի տանը, այսինքն արքունիքին պատկանող կալվածներում, ապա Ղ. Փարպեցու մոտ «ոստանիկները» համարվում են սերված նախարարական «յիւրաքանչիւր տոհմէ» կամ «տանէ»։ Պատմիչը թվարկելով Վասակ Սյունեցու կուսակիցներ Տիրոց Բագրատունու, Գագիշո Խորխոռունյաց, Մանեհ Ապահունյաց, դյուտ Վահևանյաց, Վարազշապուհ Պալունյաց, Արտեն Արեղենից, Ուրծի Ներսեհ իշխանների անունները, հիշատակում է, որ սրանց հետ էին նաև «այլք յոստանկաց և սեղուհք ոմանք յիւրաքանչիւր տոհմէ»[2]։

Նկարագրելով 451 թ. ժողովրդա-ազատագրական պայքարի պատմությունը, պատմիչը անարգանքի սյունին է գամում «ժանդ, որդի անօրէնութեան» «մի ոմն յՈստանեայ տանէն» սերված Զանդազանին[3]։

Ուրեմն «ոստանիկ-ազատները» իրենց սոցիալական դրությամբ համարվում էին «ազատանիի» դասի մեջ մտած, բայց ֆեոդալական հիերարխիայի ամենաստորադաս աստիճանում գրված հատարական այն խավը, որը վարում էր զինվորական ծառայություն և այդ ծառայության դիմաց, ինչպես Արշակունի թագավորներից, այնպես էլ խոշոր հողատեր-նախարարներից ստանում էր հողակտոր։ «Ոստանիկները» ոչ այլ ոք էին, եթե ոչ պայմանական հողատեր — մանր և միջին ազնվականներ։

Այսպիսով, արդեն 4 և 5-րդ դարերում աշխարհիկ ֆեոդալների թիվն այնքան էր աճել, որ արքունական հողերի տարածությունն այլևս չէր կարող նրանց պահանջները բավարարել։ 4—5-րդ դդ. Հայաստանի քաղաքական պատմության ամենադաժան ու ծանր դարերն էին. Հայաստանը բաժանված էր պարսկական և բյուզանդական բռնակալությունների մեջ, վերացվում էր հայ Արշակունիների փաստական անկախությունը։ Հայ Արշակունի թագավորները այլևս չէին կարողանում նոր տերիտորիաներ գրավելով բավարարել աճող նախարարական-ֆեոդալական դասի պահանջները, նույնիսկ վտանգ կար կորցնելու եղած հողային տարածությունները։

Աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների հողային աճող պահանջը բավարարելու համար կար երկու ուղի. ա) արտաքին գրավումները,

---

[1] Եղիշե, էջ 119։

[2] Ղ. Փարպեցի, էջ 67։

[3] Նույն տեղում, էջ 61։

որոնք այս էպոխայում այլևս հնարավոր չէին և բ) հողային նեղած տերիտորիաների նոր բաժանումն ու վերաբաժանումը։

Նոր բարձրացող ֆեոդալական դասին հողով բավարարելու համար կային ներքին երեք ուղիներ. ա) Արշակունի թագավորները բռնագրավում էին ապստամբ նախարարների հողերն ու կալվածները և բաժանում նոր բարձրացող ռազմա-ծառայողական դասի մեջ. բ) Արշակունիները բռնագրավում ու բաժանում էին եկեղեցական կալվածները և գ) ֆեոդալների հողային տիրույթները լայնացվում էին գյուղացիության հողերի հաշվին։ Ինչպես նկատեցինք, Տիրան, Արշակ, Պապ թագավորները դիմեցին ներքին հողերի բռնագրավմանը և այն բաժանեցին նախարարական ընտանիքների և դահին հավատարիմ ծառայող ազնվական դասերի մեջ։

Հին Հայաստանի տերերը, նախարարները, գավառատերերը, աշխարհատերերը, ավագ ու կրտսեր նախարարները, իշխանները, պետերը, արքունի գործակալները, սեպուհները, ոստանիկները ոչ միայն հողային տիրույթներ ունեին, այլև հանդիսանում էին պետության, նրա արքունիքի գավառային և շրջանային իշխանությունների պաշտոնյաներ-գործակալներ։

Նախարարական-ֆեոդալական հայկական ավատատիրությունն աճում էր արագ թափով։ Աճում էին նաև գահի ժառանգները, թագավորական ընտանիքի անդամները։ Արդեն Մ. Խորենացին պատմում է, որ Վաղարշակ-Տրդատի օրոք արքունիքում սկսվել էր կատաղի պայքար հողային տերիտորիաներ ձեռք բերելու համար, և այդ իսկ պատճառով Վաղարշակը կարգ է սահմանում, որ արքունիքում ապրելու իրավունք ունի միայն անդրանիկ որդին, իսկ մյուսները պարտադիր կերպով պետք է բնակություն հաստատեն Հաշտենից գավառում։ Այդ կարգը պահպանում է, ըստ պատմիչի, նաև Արտավազդը։ Նա արքունիքում պահում է իր ավագ որդուն, իսկ մյուսներին, բնակության համար, ուղարկում է Աղիովիտ և Առբերանի գավառները։

Հայոց թագավոր Տիրանի օրոք, ինչպես վկայում է Մ. Խորենացին, Հաշտյանք գավառում բնակություն հաստատած թագավորական տան անդամները դիմում են թագավորին, ասելով, որ իրենք, այսինքն արքունիքի ժառանգները, խիստ բազմացել են, որ այդ պատճառով ապրելու տեղը շատ նեղ է, որ հողային կալվածները նրանց աճող պահանջները չեն բավարարում և խնդրում են թագավորին «ընդարձակեա մեզ զժառանգութիւնս զի նեղ է. քանզի բազմացաք յոյժ»։ Տիրանը հաշվի առնելով այդ ցանկությունն ու պահանջը, կարգադրում է դահաժառանգներին, որ նրանց մի մասը կա-

ղող են փոխադրվել Աղիովիտի, իսկ մյուս մասը՝ Առբերան գավառներն իրենց ազգականների մոտ։ Սակայն Հաշտյանքում ապրող ժառանգները բողոքում են, առարկելով, թե «առաւելագոյն նեղ է մեզ», այսինքն հողային տարածությունը շատ քիչ է և նրանք այնտեղ էլ իրենց ազատ չեն զգալու։ Այն ժամանակ, ինչպես վկայում է Խորենացին, «... ոչ ինչ ունկնդիր լինի Տիրան. այլ հաստատեալ վճիռ՝ ոչ այլ ժառանգութիւն տալ նոցա, բայց զոր ունէինն՝ հաւասար տրոհել յինքեանս։ Զոր բաժանեալ ըստ մարդաթուի՝ զտաւ պակաս ժառանգութիւն բնակողացն Հաշտենից. վասն որոյ բազումք ի նոցանէ եկին ի գաւառն Աղիովտի և Առբերանոյ»[1]։

Վկայակոչելով Մ. Խորենացու այս ուշագրավ ցուցումը, ակադ. Հ. Մանանդյանը գտնում է, որ այդ ոչ այլ ինչ էր, եթե ոչ համայնական հողատիրության սիստեմ։

«Որ համայնական հողատիրությունը գոյություն ունեցած պիտի լիներ նաև Հին Հայաստանում, այդ նրա անցյալ կյանքի համայնական-տոհմային հնագույն շրջանի համար անժխտելի է... Հայոց պատմության մատենագրական աղբյուրներում... կան... միջանկյալ ակնարկներ, որոնք, ըստ իս, ուշագրավ որոշ նշաններ են, որ համայնական հողատիրության վերապրումներ գոյություն ունեցած պիտի լիներին Հին Հայաստանում թե Արշակունյաց թագավորության ժամանակ և թե նրա անկումից հետո»[2]։

Անկասկած է, որ համայնական կարգերի առկայության դեպքում պետք է որ համայնքային հողատիրություն գոյություն ունեցած լիներ, անկասկած է նաև այն, որ Խորենացին ուղղակի գործածում է «հավասար», «ըստ մարդաթուի» բառերը, իսկ ինչպես հայտնի է «հավասար» և «ըստ մարդաթուի» հաղաբաժանումը համայնքային հողատիրության առկայության անժխտելի ապացույց է։

Սակայն մեզ թվում է, որ Խորենացու վերոհիշյալ վկայությունը չի վերաբերվում համայնքային հողերին։ Այդ դեպքում ոչ միայն անհասկանալի, այլև անիմաստ է դառնում պատմիչի վկայության այն մասը, որ հողերը «հավասար» և «ըստ մարդաթուի» բաժանում է Հայոց Տիրան թագավորը։ Նախ համայնքային հողերը բաժանում էր ինքը համայնքը և ոչ թե թագավորը։

Երկրորդ՝ Տիրանի ժամանակ, այսինքն IV դարում, երբ Հայաստանում հաղթանակել էին ֆեոդալական հարաբերությունները, երբ նախարարական ֆեոդալական դասը ուներ հսկայական կալ-

---

[1] Մ. Խորենացի, էջ 193։

[2] Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը..., էջ 190—191։

վածներ, հողային ընդարձակ տերիտորիաներ, անհավանական է որ նախարարական-ֆեոդալական հողաբաշխման նկատմամբ համայնքային հողատիրության բաժանման սիստեմը կիրառվեր։

Պատմական այս էպոխայում հողը ոչ միայն համայնքի, այլև աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների սեփականությունն էր։ Տիրանը բաժանում է ոչ թե համայնքային, այլ արքունական հողերը և բաժանում է ոչ թե համայնքի, այլ արքունական տան անդամների մեջ։ Հայտնի է, որ համայնական կարգերում, համայնքային հողատիրության տիրապետության էպոխայում՝ հողը դյուղական համայնքի և ոչ թե արքունիքի սեփականություն էր։ Այսպիսով, Խորենացու վկայությունը ոչ թե 4—5-րդ դդ. համայնքային հողատիրությանն է վերաբերվում, այլ արքունական, աշխարհիկ ֆեոդալներին պատկանող ժառանգական-սեփական հողերին։

Սակայն, որն էր այն տերմինը, որը արտահայտում էր ֆեոդալական հասարակարգում համայնքային հողատիրությունը։ Այդ տերմինը, մեր կարծիքով, «հող երդոյն» է։ Ագաթանգեղոսի հունարեն թարգմանության մեջ հայերեն «հող երդոյն» թարգմանված է «aroura», որը նշանակում է վարելահողի և հողի տարածության որոշ չափ[1]։

Ագաթանգեղոսը վկայում է, որ Տրդատ թագավորը և Գր. Լուսավորիչը եկեղեցական դասերին տնտեսապես ապահովելու համար դյուղական ավաններից, ագարակներից բռնագրավել են հողամասեր և նվիրել նրանց։

«Յետ այսորիկ,— գրում է պատմիչը,— հասեալ նմա (Գրիգոր Լուսավորիչը) բովանդակ ի վերայ ամենայն երկրին սահմանացն Հայոց Մեծաց աշխարհին, շինելով եկեղեցիս յամենայն աշխարհս, ի գաւառս, ի կողմանս, ի քաղաքս, յաւանս, ի շէնս, ի դեղս և յագարակս»[2]։

Եկեղեցուն, հոգևոր դասերին հողային կալվածներով ապահովելու համար, Տրդատ թագավորը «յամենայն իշխանութեան իւրում առ հասարակ՝ գրեաց չորս չորս հող երդոյ յամենայն ագարակ տեղիս, իսկ յաւանսն եօթն եօթն հող երդոյ՝ ի ծառայութիւն սպասաւորութեան քահանայութեանն, նուէր պտղոյ Տեառն մատուցանէր»[3]։

---

[1] Տե՛ս Agathangelus und die Akten Gregors von Armenien, hrsgg. von Paul de Lagarde, Goettingen, 1887, էջ 76։ Հմմտ. Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը Հին Հայաստանում, էջ 17։

[2] Ագաթանգեղոս, էջ 422—423։

[3] Նույն տեղում, էջ 423։

«Երդերի», որպես դյուղական համայնքներում ընդգրկված առանձին ընտանիքների, մասին ուշագրավ վկայություններ են պահպանել նաև մյուս պատմիչները։ Փ. Բուզանդը վկայում է, որ Շապուհն ասպատակում է ոչ միայն Տիգրանակերտը, այլև դաղթեցնում «քառասուն հազար երդ»[1]։ Եղիշեն պատմում է, որ Աղվանից Վաչե թագավորը խնդրում է իրեն վերադարձնել իր «զմանկութեան սեպհականն, զոր հօր իւրոյ շնորհեալ էր նմա ի աղայութեանն հազար երդ»[2]։

Այս նույն վկայությունը պահպանվել է նաև Մ. Կաղանկատվացու մոտ։ Աղվանից Վաչե թագավորը,— ասում է պատմիչը,— «հաճեցաւ միայն զսեպհականն առնուլ բաժին իւր, զոր ի հօրէն էր առեալ հազար երդ, առ զայն ի թագաւորէն և նստաւ ի նմա միայնակեցօք հանդերձ»[3]։

Ֆեոդալական եկեղեցուն տնտեսապես թուլացնելու համար Պապ թագավորը բռնապրավում է «զհող եկեղեցւոյն, զոր առեալ էր թագաւորին Տրդատայ առ մեծան Գրիգորիւ քահանայապետաւ ի սպաս պաշտաման եկեղեցւոյն ընդ ամենայն երկիրն Հայոց»։ Պապի հրամանով «յեւթն հողոյն զհինգն հատանէր յարքունիս, և զերկուսն միայն թողոյր երկուս հողս։ Եւ ըստ հողոյն թողոյր երկուս երկուս առ դեղ մի երէց և սարկաւագ, և զայն ի սպասու կացուցանէր յիւր ի ծառայութեան զեղբարս և զորդիս երիցանցն և սարկաւագացն»[4]։

Խիստ ուշագրավ է, որ Տրդատ թագավորը եկեղեցիներին հողեր է հատկացնում ոչ թե «արքունի տանից», արքունական կալվածներից, այլ գյուղական վայրերից։ «Երդերում» ապրող գյուղական համայնքների անդամները հայտնի են բնորոշ «երդաւոր» անվան տակ։

Բյուզանդական Փոկաս կայսրը, ասում է Սեբեոսը, սպառնում է, որ նա Հայաստան է ուղարկելու «երեսուն հազար հեծեալ», որոնք նրա հրամանով «զՌ երդաւոր ժողովեսցին... և նստուսցին ի Թրակացւոց աշխարհին»[5]։

Այս իմաստով «երդ», «երդաւոր» բառերը գործածական են Հովհան Մամիկոնյանի, Ղևոնդի, Կ. Դանձակեցու մոտ։ Հովհան Մամիկոնյանը թվարկելով Աշտիշատի հեթանոսական տաճարին ենթակա «բազումք և մեծամեծք» ավանների հարկատու բնակիչնե-

---

[1] Փ. Բուզանդ, էջ 120 (ընդգծումները մերն են—Ս. Հ.)։

[2] Եղիշե, էջ 258։

[3] Մ. Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1913, էջ 24։

[4] Փ. Բուզանդ, էջ 194։

[5] Սեբեոս, էջ 112։

ից և յուրաքանչյուր գյուղից ու ավանից դուրս բերված զինվորական ուժերի թիվը վկայում է, որ «Կուառ ունի երդահամարս ԳՌ և ԺԲ-ան» և կարող էր դուրս բերել 1030 հեծյալ, 2200 հետևակ զինվորներ[1]: Ղևոնդը նկարագրելով արաբական խալիֆաթի վարած հարկային քաղաքականությունը, մատնացույց է անում, որ արաբները խիստ ծանրաբեռնում են հարկապահանջությունը և հարկերը պահանջում են ոչ թե տոհանձին երդերից, այլ ըստ «գլխոյ» կամ «ըստ գլխոյ արանց»[2]:

Ղևոնդի այս վկայությունը հաստատում է Ստ. Տարոնեցին (Ասողիկը): Արզայ խալիֆի և Եղիտ հրամանատարի օրոք, ասում է պատմիչը, «ծանրացաւ անուր լծոյ հարկապահանջութեան երկրիս Հայոց. զի ոչ ըստ երդ պահանջումն, այլ ըստ գլուխս արանցն»[3]: Ղևոնդի, Ասողիկի մոտ գործածական «երդը» նույնն է, ինչ Կ. Գանձակեցու մոտ գործածված «տունը»: Պատմելով արաբական մարզարե Մուհամեդի և հայերի վաղեմի հարաբերությունների մասին՝ Գանձակեցին գրում է՝ «Մահմետ... անմոռաց երդմամբ կնքեաց մուրհակ Հայոց աշխարհիս համարձակութեամբ ունել զքրիստոնէութիւն... յամենայն տանէ առեալ չորս դրամ և երեք մոթ խորբալ՝ որ է ցորեան, և ձիոյ տօպրակ մի և պարան մի մաղէ և ձեթնարար մի»[4]:

Այս բոլոր վկայությունների մեջ «երդ» նշանակում է տուն, օջախ, ծուխ, դերդաստան՝ իր ընակիչներով, կամ «երդաւորներով»:

Այս առանձին «երդերի» կոլեկտիվ կազմակերպությունը հանդիսանում էր գյուղական-երկրագործական այն համայնքը, որի հիմքում արդեն ընկած էր տերիտորիալ-տնտեսական կապերն ու հարաբերությունները: Հայկական գյուղական համայնքը ընդգրկում էր բավականին զգալի տերիտորիա, որը և կազմված էր առանձին «երդերից»:

Համայնքի ընդգրկած տերիտորիայի մի մասը գտնվում էր ընդհանուր օգտագործման մեջ: Համայնքը կոլեկտիվ կերպով օգտագործում էր նախ մարգագետինները, արոտավայրերը, ձկնորսարանները, ջրային ռեսուրսները: Անհատական տնտեսությունների զարգացման հետևանքով համայնքի անդամների մեջ ամենից առաջ բաժանվեցին վարելահողերը և մարգագետինները: Առանձին «երդե-

---

[1] Յովհ. Սամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, Երևան, 1941, էջ 111:
[2] Ղևոնդ, էջ 127, 135:
[3] Ստեփաննոսի Տարօնեցւոյ Պատմութիւն, էջ 133:
[4] Կ. Գանձակեցի, էջ 57—58:

ին» հատկացված «հող երդոյն» արդեն մշակվում էին անհատական աշխատամիջոցներ ունեցող մասնավոր, մանր սեփականատերերի կողմից և ստացած բերքը յուրացնում էին որպես մասնավոր սեփականություն։ Եթե առաջին շրջանում գյուղական համայնքները իրենց տրամադրության տակ ունեին առանձին գյուղեր, շեներ, ավաններ, ապա բնակչության արագ բազմացման հետևանքով հիմնվում են «դուստր գյուղեր», որոնք «մայր գյուղի» հետ միասին հավասար կամ մի փոքր պակաս իրավունքներով, կազմում են արդեն միասնական մեկ համայնք։

Գյուղերում, շեներում, ավաններում, ագարակներում, դաստակերտներում ապրում էին գյուղական բնակիչները՝ շինականները։ Այս գյուղական վայրերում բնակչության հիմնական զբաղմունքն էր երկրագործությունը, այգեգործությունը, անասնապահությունը։ Յուրաքանչյուր գյուղ ուներ իր «երդերը» և «երդավորները»։ Յուրաքանչյուր երդ ստանում էր գյուղական համայնքների կողմից բաժանված «հող երդոյ», այսինքն համայնքի տրամադրության տակ եղած վարելահողը բաժանվում էր ըստ երդավորների, հավասար և «ըստ մարդաթվի»։ Արշակունիների օրոք և Մարզպանության շրջանում նախարարական-ֆեոդալական, «ազատների» և «ոստանիկների» հողային տիրույթները ընդարձակվում էին հենց այս «երդերի» հողաբաժինների բռնի կերպով հափշտակման հաշվին։ Եթե նախարարական-ֆեոդալական մասնավոր հողատիրությունը հայտնի էր «հայրենիք», «պարդևական», ապա համայնքային հողերը՝ «հող երդոյ» անունների տակ։

Կողմնակի աղբյուրներում պահպանված մի շարք վկայությունների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս որոշել «հող երդոյ»-ի մոտավոր չափը։ Ագաթանգեղոսի աշխատության հունարեն տեքստում «հող երդոյ»-ն արտահայտված է aroura բառով, որը նշանակում է հողաբաժին, հողամաս հավասար մոտավորապես մեկ քառորդ դեսյատին հողի։ Այս վկայությունը պահպանել են Հերոդոտը և Պլինիոսը։ Խոսելով եգիպտական «արուրա»-ի մասին, Հերոդոտը վկայում է, որ նա հավասար էր հարյուր անգամ հարյուր քառակուսի կանգուն հողային տարածության, որը նույնպես հավասար էր մեկ քառորդ հեկտար հողի։ Պլինիոսի տեղեկության համաձայն լատինական jugerum-ն նույնպես հավասար էր մոտավորապես քառորդ դեսյատինի։ «Հող երդոյ»-ի չափն որոշելու համար ուշադրավ վկայություն է պահպանվել Բարսեղ Կեսարացու մոտ։ Հայտնի է, որ նա հատուկ նամակով դիմել է ոմն Մոդեստին և բողոքել, որ եկեղեցիների սպասավորները՝ «երեցները

և սարկավագները ըստ հին համարագրի արձակված էին հարկերից. այժմ նրանց ցուցակ են անցկացնում»:

Այս նամակում հայրապետը բողոքում է, որ հարկի են ենթարկվում ոչ բոլոր հոգևորականները, որ կան ապահարկ հոգևորականներ, որոնք վայելում են որոշակի արտոնություններ և այդ արտոնությունները անցնում են նրանց որդիներին: Նա միաժամանակ մատնացույց է անում, որ այդ անարդար է, որ հաճախակի ժառանգավոր որդիներն անարժան են ժառանգելու հայրերին տված այդ արտոնությունները: Այնուհետև պահանջում է իրեն հանձնել այդ առանձնաշնորհումների բաշխման գործը, որպեսզի նա տնօրինի եկեղեցականների կայքը և գույքը: Հայտնի է նաև այն, որ դեռ Դիոկլետիանոսի օրոք Հռոմեական կայսրությունում կար հարկահանության հետևյալ սովորությունը. կայսրության հարկահանները հարկի էին ենթարկում «jugum»-ը կամ «լուծը»: «Jugum»-ը կամ «լուծը» բառացի նշանակում էր հողի այն քանակը, որը հատկացված էր ամեն մի «երդի» յուրաքանչյուր անդամին, իր ֆիզիկական գոյությունը պահպանելու համար: Նախքան ամեն մի «jugum» հարկի ենթարկելը, անց էր կացվում հաշվառում, գրանցվում էր հատուկ մատյաններում թե որ հարկատուն որքան «jugum» կամ «լուծ» հող ուներ և յուրաքանչյուր «լուծ» հողի համար հավաքվում էր որոշակի քանակի հարկ: Ամենայն հավանականությամբ Բարսեղ Կեսարացու օրոք ոչ թե ապահարկ էին հայտարարված հոգևոր բոլոր դասերը, այլ նրանց մի մասը ունենալով մի քանի «jugum»-լուծ հող, հարկեր էին վճարում այդ հողերի միայն մի մասից:

Բարսեղ Կեսարացու նամակից հետևում է, որ կային եկեղեցիների պաշտոնյաներ, որոնք զանազան ճանապարհներով ձեռք էին բերել որոշ արտոնություններ, շատ հող ունենալով քիչ հարկ էին վճարում կամ բոլորովին ապահարկ էին: Հայրապետը խիստ բողոքում է ոչ միայն առանձնաշնորհումներ ստացած հայրերի, այլ սրանց անարժան զավակների ժառանգական իրավունքների դեմ: Նա միաժամանակ մատնացույց է անում, որ Կոստանդին Մեծը աղատ էր հայտարարել եկեղեցական հողերը հարկերից, եկեղեցական դասերին անց էր կացրել «ապահարկ-աղատների» շարքը: Սակայն Կոստանդին Մեծի հաջորդների օրոք հոգևոր դասերը արդեն կորցնում են իրենց արտոնությունները և հարկի ենթարկվում: Նա պահանջում է հարկի ենթարկել ոչ միայն հոգևոր դասի մի մասին, այլև բոլորին, հատկապես սրանց անարժան որդիներին: Ամենայն հավանականությամբ, Հռոմեական կայսրության հողային և հարկային այս քաղաքականությունը կիրառում էր նաև Պապ Թագավորը:

Փ. Բուզանդը խոսելով Պապի հայ եկեղեցու նկատմամբ վարած քաղաքականության մասին, պատմում է, որ Պապը ոչ միայն «Եօթն հող երդոյ»-ի հինգը արքունիք է դրավում, այլև «զեղբարս և զորդիս երիցանցն և սարկաւագացն... ի սպասու կացուցանէր յիւր ի ծառայութեան»[1]: Այս «սպասու ծառայությունն» կարելի է հասկանալ երկու իմաստով. կամ նա գյուղական երեցների և սարկավագների որդիներին վերցնում էր զինվորական և պետական ծառայության, կամ, որն ավելի հավանական էր, հարկատու էր դարձնում: Այսպիսով, Բարսեղ Կեսարացու նամակում մատնացույց արած «jugum»-ը նույնպես հողաչափ էր, հողաբաժին: Ասորահոմեական դատաստանագրքում նույնպես «jugum»-ը մատնացույց է արված որպես հողաչափ, նայած հողի հատկությանը: «Jugum»-ն իր մեջ իմաստավորում էր 20,40 և 60 «jugerum», կամ 5.8 և 12 հեկտար: Այսպիսով, Տրդատը յոթ «jugum» կամ «հող երդոյ» էր հատկացրել հողհորդականներին, իսկ Պապի հողային ռեֆորմից հետո երեցների և սարկավագների տրամադրության տակ մնում էր երկու «հող երդոյ» այսինքն մոտ 60 «jugera» հող: Փոքր Հայքում, Պոնտոսում, հետևաբար Հայաստանում մի «jugum»-ն իր մեջ իմաստավորում էր 30 «jugera» հողային տարածություն: Այսպիսով, Հռոմեական կայսրության «jugum»-ը ոչ այլ ինչ է, եթե հայկական «հող երդոյն»[2]:

Բարսեղ Կեսարացու, Ագաթանգեղոսի, Փ. Բուզանդի, Մ. Խորենացու հաղորդած տեղեկությունները «հող երդոյ»-ի «հաւասար, ըստ մարդաթուի» հողաբաժանման սիստեմի մասին մեզ հնարավորություն է տալիս ենթադրել, որ Հայաստանում, պատմական այս շրջանում աշխարհիկ և հոգևոր ֆեոդալները, հենված կենտրոնացած պետության օգնության և օժանդակության վրա, ընդարձակել էին համայնքներում ընդգրկված «երդերի» հողերի մի մասը և իրենց ապահովել էին հայկական «տղատանիին» տրված հավասար արտոնություններով:

Արշակունյաց դինաստիայի անկումից հետո էլ հայ նախարարական-ֆեոդալական դասը չլիկվիդացվեց, չկորցրեց իր հողային տիրույթները և հողատիրական իրավունքները, նույնիսկ պարսկական «դատն և բանտարդ» ծառայության ներքո, ծառայություն, որը ստորացուցիչ բնույթ ուներ: Այս շրջանում հայ նախարարների մի մասը, առանձնապես պարսկական օրիենտացիային հարող նախա-

---

[1] Փ. Բուզանդ. էջ 194:

[2] Տես և հմմտ. Ն. Ադոնց, Հին հայ շինականությունը, գլուխ III:

թարները, ոչ միայն պահպանեցին, այլև ընդարձակեցին իրենց տիրական իրավունքները և հողային կալվածները։

Մեր պատմիչները միաբերան վկայում են, որ պարսկական թագավորները հայ նախարար-ֆեոդալներին նվիրում են ոչ միայն շարժական, այլև անշարժ կայք, հողեր, գյուղեր, քաղաքներ։ Պարսկական արքունիքը վերականգնում էր Պարսկաստանի հնազանդությունն ընդունած հայ նախարարական տների հողատիրական, ժառանգական իրավունքները։

Հաղկերտ 2-րդ թագավորը առերևույթ դավանափոխ եղած հայոց, վրաց, ալվանից տանուտերերին, սեպուհներին և մյուս իշխաններին ոչ միայն առատ նվերներ է տալիս, այլև գյուղեր և ագարակներ։

«Եւ ագուցեալ,— գրում է Ղ. Փարպեցին,— զտանուտեարսն և զսեպուհսն զերեցունց աշխարհացն, զՀայոց, զՎրաց և զԱղուանից, ի հանդերձս թագաւորականս զարդարէին. այլև բազում և այլ ազգի ազգի պարգևօք և պատուօք, գիւղօք և ագարակօք ըստ իւրաքանչիւր ուրուք պիտոյից, լցուցանէին զամենեսեան»[1]։

Եղիշեն նույնպես վկայում է, որ Հաղկերտ 2-րդը հայ նախարարներին «... անբաւ առատութեամբ ագարակս և աւանս միում միում նոցա յարմունուստ շնորհէր...»[2]։

Պարսկական արքունիքը հրամարտակով դիմում է հայ նախարարներին, որ «ի ծառայութենէ մերմէ մի ելանէք», որի համար նա խոստանում է «Եթէ ինչք ուրուք յափշտակեալ իցեն, դարձցին անդրէն։ Այնպէս և երկիրք, եթէ հայրենիք, եթէ պարգևականք և եթէ խակազիմք, և ամենայ ուրուք իցէ, հրամայեցաք զի դարձցին»[3]։

Մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Արշակունյաց և Մարզպանական Հայաստանում գոյություն ունեին մասնավոր հողատիրության հետևյալ հիմնական ձևերը՝

ա) Արքունական կամ թագավորական։ *Արքունական կամ թագավորական հողատիրական իրավունքը տարածվում էր արքունի «ոստանի» կամ թագավորական տան սեփական տիրույթների վրա։ Արշակունի թագավորները հանդիսանում էին նաև ամբողջ երկրի կամ «տանն աշխարհին Հայոց» հողերի իրավական-գերագույն սեփականատերը։*

Ինչպես Հին Արևելքի բոլոր երկրներում, այնպես էլ Հին Հայաստանում, հողային բոլոր կատեգորիաների գլուխ, որպես միա-

---

[1] Ղ. Փարպեցի, էջ 54։

[2] Եղիշե, էջ 65։

[3] Նույն տեղում, էջ 109։

վորող անձ կանգնած էր թագավորը։ Սակայն թագավորի գերագույն իշխանությունը կրում էր միայն իրավական բնույթ։

բ) Նախարարական–ֆեոդալական՝ օտարելի, ժառանգական «նայրենիք», գ) «պարգևականք», որը տրվում էր աչքի ընկնող պետական և զինվորական ծառայության դիմաց, ժամանակավորապես կամ ցմահ օգտագործելու համար։ դ) «քսակազինք», որը ձեռք էր բերվում գնումների և վաճառքի միջոցով։ Սակայն «քսակազինքը» հողատիրությունը պատմական այս շրջանում գերիշխող ձև չէր, այլ նոր էր սաղմնավորվում։ Մատնավոր հողատիրության այս ձևերը պայմանավորում էին ֆեոդալական հիերարխիան և ֆեոդալական-վասալական ծառայությունը։

Ինչպես ֆեոդալական մյուս երկրներում, այնպես էլ Արշակունյաց և Մարզպանական Հայաստանում ֆեոդալական հիերարխիան հիմնված էր վասալական սիստեմի վրա։ Ֆեոդալական-վասալական ծառայությունները կապված էին որոշակի պարտավորությունների կատարման հետ և հայտնի էին «ծառայություն» կամ «գործակալություն» անունների տակ։ Մատենագիրները «ծառայություն» կամ «գործակալություն» տերմինները գործ են ածում տարբեր իմաստով ու նշանակությամբ, սակայն բոլոր դեպքերում ավելի ստորադաս դասերի կապն ու կախումը, տնտեսական և քաղաքական կախվածությունը ավելի բարձր դասերի նկատմամբ արտահայտելու իմաստով։ Նախարարական-ֆեոդալական դասակարգի մեջ մտած տարբեր դասերն ու խավերը «ծառա» կամ «գործակալ» էին ավելի բարձր դասերի հանդեպ։ Այսպես, օրինակ, բդեշխները, նախարարները հանդիսանում էին թագավորների, աղատները՝ նախարարների «ծառաները»։ Այս կարգի «ծառայությունն» հայտնի էր խիստ բնորոշ «ի սպասս» կամ «ի գործակալություն» անունների տակ։

Փավստոս Բուզանդը վկայում է, որ Խոսրով թագավորի դեմ ապստամբության դրոշ է պարզում «...մի ի ծառայից նորա մեծ իշխանն Աղձնեաց, որ անուանեալ կոչէր բդեաշխն...»[1]։ Աղձնյաց բդեշխին պատժելու համար թագավորը նրա դեմ է ուղարկում «...զբարեկիր գծառայս իւր, զիշխանն Կորդուաց զՋոնն, և զիշխանն մեծի Ծուփայ զՄար, և զիշխանն Ծուփայ Շահէի Ներսեհ, և զիշխանն Սիւնեաց զՎաղինակ, և զիշխանն Հաշտենից զԴատ, և զիշխանն Բասենոյ զՄանակ, հանդերձ բազում զօրօք»[2]։ Հայ թագավորների «ծառաներն» էին նույնիսկ աշխարհատեր-գավառատեր մեծ իշխան-

[1] Փ. Բուզանդ, էջ 18։
[2] Նույն տեղում, էջ 19։

ները։ Նույն պատմիչը վկայում է, որ Հակոբ եպիսկոպոսը «խաղաց գնաց առ մեծ իշխանն աշխարհատէրն մեծ ծառայն արքային Հայոց առ Մանանիրն Ռշտունի...»[1]։

Հայ խոշոր նախարար-իշխանները իրենց կոչում էին հայ թագավորների, իսկ սրանց անկումից հետո, պարսկական թագավորների «ծառաներ»։ 481—484 թթ. ժողովրդա-աղատագրական պատերազմից հետո, Վահան Մամիկոնյանը դիմելով պարսկական դեսպան Նիխորին ասում է. դուք «...մեր բնիկ տեարք էք», իսկ «...մեք ձեր բնիկ ծառայք եմք»[2]։

Վահան Մամիկոնյանը Նվարսակի պայմանագիրը կնքելու ժամանակ, ինչպես հայտնի է, առաջադրում է երեք պահանջներ։ Եթե, ասում է նա, «...Պարսիկք թողացուցանել մեզ զայս երիս իրս՝ ծառայեսցուք նոցա որպէս զբնիկ և զհաւատարիմ ծառայս»[3]։

Պարսկական Հազկերտ թագավորը հայ, վրացի և աղվան նախարար-իշխաններին կոչում է իր ծառաները։ Նա դիմելով պարսկական ավագանուն և մոդերին ասում է «Զեզ զիա՞րդ թուի, ծառայից այդպիսի աներկիւղ համարձակութեամբ դրել առ իւրեանց տէրն»[4]։

Նախարար-իշխանները հանդիսանալով թագավորի վասսալները, կամ «արքունի գործակալներ», պարտավոր էին հարկեր վճարել իրենց տեր-սյուզերենին, ռազմական արշավանքների և պատերազմների ժամանակ ներկայանալ թագավորին իրենց բանակով և ռազմական ուժերով, պաշտպանել երկիրը, թագավորի արքունիքը, նրա բերդերն ու ամրոցները, իսկ պահանջի դեպքում թագավորի տրամադրության տակ դնել իրենց բերդերն ու ամրոցները։

Բացի այս պարտականություններից, նախարարները վարում էին «թագադիր» կամ «թագակալ սպասաւորութեան», «մարդպետութեան», «մախաղութեան», «սպարապետութեան», «հազարապետութեան», գործակալությունները։

Աղբյուրները բացի այս հիմնական պաշտոններից հիշատակում են նաև արքունիքում վարած հետևյալ պարտավորությունները՝ «սենեկապետ արքային», «շահախոռապետ», «որսապետ», «տակառապետ», «ալինակիր», «կարապետ արքային»։ Հանդիսանալով թագավորների, վասալ-գործակալները, իշխանական-նախարարական

---

1 Փ. Բուզանդ, էջ 21։
2 Ղ. Փարպեցի, էջ 168—169։
3 Նույն տեղում, էջ 161։
4 Նույն տեղում, էջ 46։

տները համարյա անկախ էին իրենց «աշխարհներում», «երկրներում» և գավառներում։ Նրանք իրավունք ունեին դատելու իրենց հպատակներին, հարկեր և տուրքեր հավաքելու, պահելու զինական ուժեր. ունեին իրենց մաքսային սահմանները, դրոշակները և այլն։ Նախարար-ֆեոդալները իրենց «տանուտիրական» երկրում վայելում էին լիակատար անկախություն և օժտված էին նույն գերագույն իրավունքներով ու արտոնություններով, ինչ Արշակունի թագավորները արքունի «սատանում»։

Արքունական, մեծամեծ և ավագ նախարարական- ֆեոդալական այն բանակները, որոնք բացառապես կազմված էին մանր, միջին ազնվական դասերի «ազատներից» և «սատանիկներից» հայտնի էին «արքունի գունդ», «գունդ յարքունի տանէ», «ազատազունդ աշխարհին Հայոց», «ազատազօրք», «ազատագունդ», «ազատախումբ», «ազատագունդ բանակ», «ազատախումբ բանակ», «զօրք նախարարացն յիւրաքանչիւր տանէ», «զազատախումբ բանակ նախարարակոյտ զօրաց», «ամենայն բազմութիւն զօրացն ազատաց» անունների տակ։

Արշակունի թագավորներին վասալ՝ «բիւրաւորք», «հազարաւորք», «հարիւրաւորք» նախարարա-ֆեոդալական տները պարտավորված էին թագավորների տրամադրության տակ դնել համապատասխան քանակի զինված ուժեր։

Ագաթանգեղոսը վկայում է, որ Տրդատ թագավորը և Դ. Լուսավորիչը. «...հանդերձ մեծամեծ աւագանովն և ամենայն ազատագունդ բանակաւն» խորհրդակում են հեթանոսական մեհյանների ռազմական ուժերը և նրանց շարժական ու անշարժ գույքը նվիրում են լուսավորչական եկեղեցիներին[1]։

Երբ Մեսրոպ Մաշտոցը վերադառնում է Հայաստան, նրան դիմավորելու համար Վաղարշապատից դուրս է գալիս թագավորը «նախարարագունդ աւագանովն» հետ միասին։ Մեսրոպ Մաշտոցը և նրա աշակերտները, ասում է Կորյունը, կրթում և դաստիարակում էին ոչ միայն աշակերտներ, այլև «... ամենայն ազատագունդ բանակին՝ ասատուածեղէն իմաստութեամբն վարդապետեալ»[2]։

«Ազատագունդ» բանակները գտնվում էին հայկական ռազմական ուժերի գլխավոր հրամանատար սպարապետի զեկավարության ներքո։ Փ. Բուզանդը վկայում է, որ սպարապետ Վասակ Մամիկոնյանը «ժողովէր... զազատախումբ բանակ նախարարակոյտ զօրա-

---

[1] Ագաթանգեղոս, էջ 396—402։

[2] Կորյուն, էջ 20։

ցրն»[1]։ Առանձին «ազատազօրք» ունեին ոչ միայն Արշակունի թագավորները, այլև ավագ և մեծամեծ նախարարները։ «Յայնմ ժամանակի,— ասում է պատմիչը,— ազատազօրքն նախարարացն Հայոց առեալք զիւրաքանչիւր ընտանիս, լինէին փախստականք ի կողմանս Տունաց անդանէին»[2]։ Եթե Հայաստանի ռազմական ուժերի ընդհանուր թիվը Արշակունիների օրոք տատանվում էր 60—70 հազար մարդու մեջ, ապա «ազատագունդ» բանակի թիվը չէր անցնում 10—12 հազար մարդուց։ Փ. Բուզանդը պահպանել է ուշագրավ վկայություն այն մասին, որ Արշակ թագավորի բանտարկությունից հետո նրա Փառանձեմ կինը իր հետ է վերցնում «մետասան հազար ազատս ընտիրս սպառազէնս՝ պատերազմողս»[3] և պարսիկներից հալածված ամրանում է Արտագերս բերդում։

Սպարապետ Վասակ Մամիկոնյանի Մուշեղ որդին իր ռազմական ուժերը համալրում է «ազատագունդ մարդկանն մնացելոյն»[4], բանակի թիվը հասցնում է 40 հազար զինվորի և նրանց տալիս է ձի, թոշակ ու զենքեր[5]։ Բուզանդը միշտ էլ նախարարական և իշխանական ազատախումբը բանակները տարբերում է արքունի բանակներից։ Նկարագրելով Ներսես կաթողիկոսի թաղման ծիսակատարությունը, պատմիչը ասում է, որ նրա մարմինը տանում էին Եկեղեցու պաշտոնյաները, Մուշեղ սպարապետը, հայր Մարդպետը և «ամենայն ազատագունդ բանակն արքունի»[6], կամ «տայր հրաման թագաւորն Արշակ ազատագունդ բանակին զհետ լինել Տիրիթայն»[7]։ Արքունական «ազատագունդ» բանակի հիմնական կայանը հանդիսանում էր Շահապիվանը։ «Եւ էր բանակ թագաւորին ի Շահապիվանի՝ ի բուն բանակի տեղւոյն Արշակունեացն...»[8]։

Որ արքունական բանակի հիմնական կորիզը կազմում էին «ազատներն» ու «ոստանիկները», այդ մասին ուղղակի վկայություններ ունի Եղիշեն։ Հազկերտ 2-րդ պարսկական թագավորը, գրում է Եղիշեն, «Գունդ կազմէր ի Հայոց մեծաց զազատ և զպատորդի, և յարքունի տանէ զոստանիկ մարդիկ»[9]։ Արքունական

---

1 Փ. Բուզանդ, էջ 23։ Հմմտ. Ղ. Փարպեցի. էջ 20։
2 Նույն տեղում, էջ 47։
3 Նույն տեղում, էջ 144։
4 Նույն տեղում, էջ 155։
5 Նույն տեղում, էջ 158։
6 Նույն տեղում, էջ 183—184։
7 Նույն տեղում, էջ 104։
8 Նույն տեղում, էջ 99։
9 Եղիշե, էջ 16։

տան ռազմական ուժերի մասին խոսելիս նույն պատմիչը վկայում է, որ Վասակ Սյունեցին ոչ միայն իր կողմն է գրավում Բագրատունի, Խորխոռունի, Ապահունյաց, Վահևունյաց, Պահլունյաց, Գաբեղյաց, Ուրծաց իշխաններին և սրանց զորքերին, այլև «զայլ բազում զօրս յարքունի տանէն...»[1]։

Ֆեոդալական Հայաստանի ավագ, մեծամեծ նախարարները, իշխանները, նահապետները, աշխարհատեր-դավառատերերը ունեին ոչ միայն ընդարձակ կալվածներ, իրենց ապահովել էին ոչ միայն քաղաքական, վարչական և դատական իրավունքներով ու արտոնություններով, այլև ունեին սեփական բանակ, զրոշ, կնիք։

Փ. Բուզանդը վկայում է, որ Արշակ թագավորի հրամանով «...Ի մի ժողով կուտեցան... մեծամեծք նահապետք ազգաց-ազգաց, տոհմաց-տոհմաց, գնդից և զրօշուց տեարք...»[2]։ Այս վկայությունը հաստատում է Եղիշեն։ Տալով 451 թ. ժողովրդա-ազատագրական պայքարի նկարագիրը, պատմիչը գրում է. «...համագունդ ամենայն նախարարքն զօրօքն իւրեանց յիւրաքանչիւր տանէ ի մի վայր գային, հասանէին վաղվաղակի...»[3]։

Նախարարական-ֆեոդալական առանձին տների ռազմական ուժերի, գնդերի և զրոշների մասին ուղղակի ցուցումներ կան Սեբեոսի մոտ։

«Եւ զղալոս աշխարհին Հայոց ընդունէին՝ գումարել, որք ի ծամուն առ ձեռն գտեալ՝ և անցեալք ի Հանդիսի, իբրև հաղարք հնգետասանք, իւրաքանչիւր գունդք նախարարաց՝ ըստ հարիւրաւորաց՝ ըստ հազարաւորաց՝ ըստ գնդից՝ ըստ դրաւշուց իւրեանց»[4]։

Ոչ միայն մեծամեծ նախարարները, այլև արքունի գործակալները ունեին իրենց սեփական ռազմական ուժերը։ Եղիշեն հիշատակում է, որ 451 թ. ազատագրական պատերազմին մասնակցելու համար հավաքվում են «...ամենայն գործակալք արքունի իւրաքանչիւր զօրօքն հանդերձ»։

Հայ խոշոր նախարար-ֆեոդալների և սրանց վասալների ռազմական ուժերի քանակի մասին պահպանվել է խիստ ուշագրավ մի փաստաթուղթ «Գահնամակ» անվան տակ։ Այս փաստաթուղթը առաջին անգամ հրատարակել է Հ. Շահխաթունյանցը իր «Ստորագրութիւն կաթուղիկէ Էջմիածնի և հինգ դաւառացն Արարատեան» աշխատության երկրորդ մասում։ Այս փաստաթուղթը մի ընդարձակ

---

[1] Եղիշե, էջ 95։
[2] Փ. Բուզանդ, էջ 57։
[3] Եղիշե, էջ 94։
[4] Սեբեոս, էջ 57։

ցուցակ է, որտեղ մատնացույց է արված նախարարների և նրանց ամեն մեկի հեծելազորի թիվը։ Ցուցակում նախարարական ամբողջ ռազմական ուժերը բաժանված են չորս թևի՝ դռան։

Համաձայն այս ցուցակի, որին Ն. Ադոնցը իրավամբ կոչում է «ռազմական հրովարտակ», հազար և ավելի զինվոր կարող էին դուրս բերել 23 խոշոր իշխաններ, հինգհարյուր և ավելի՝ 10, և հիսունից մինչև երեքհարյուր՝ 53 մանր իշխաններ. կամ «ընդ ամենայն Թիւ զօրացն Հայոց որ է հարիւր և քսան հազարաց»[1]։ Ամենայն հավանականությամբ այս թիվը չափազանցվում է, որովհետև այդ շրջանի պատմիչների տեղեկությունների համաձայն հայկական ամբողջ բանակը, հետևակը, հեծելազորը, «աղատագունդ» զորամասերը կազմում էին 60—70 հազար զինվոր։

Արքունական, ֆեոդալական-նախարարական «աղատագունդ», «աղատախումբ» հեծյալ բանակներից բացի կային նաև «ամենայն բազմութիւն զօրացն... անաղատաց», «գունդ զօրաց բազմաց», «ռամիկ զօրացն բազմութիւն», «այլ ռամիկ այրուձիոյ», «խատնաղանջ խորանապահ... ռամիկսպաս զօրօքն»,« հայկոյտ զօրացն» ռազմական միավորներ, որոնք, անկասկած է, կազմված էին ռամիկներից, շինականներից և քաղաքի արհեստավորական դասերից[2]։

Աղատներից, ոստանիկներից, ռամիկներից և շինականներից կազմված բանակի, ինչպես հետևակ, այնպես էլ հեծյալ զինվորների ընդհանուր քանակի մասին կան բազմաթիվ վկայություններ։ Տրդատ Թագավորը, ասում է Ագաթանգեղոսը. «...այլ բազում մեծամեծօք և եօթանասուն հազարաւ ընտիր զօրու հանդերձ՝ խաղայր գնայր յԱյրարատ դաւառէ ի Վաղարշապատ քաղաքէ՝ անցանել ի սահմանս Յունաց»[3]։ Փ. Բուզանդը մատնացույց է անում, որ Խոսրով Թագավորի օրոք բանակը կազմված էր 30.000 մարդուց։ «Եւ յետ այսորիկ աճապարէր, կուտէր զօրսն առ ինքն իբրև երեսուն հազար, հանդերձ զօրավարաւն Վաչէիա»[4]։

Արշակ Թագավորի օրոք բանակի թիվը համարյա կրկնապատկվում է, որովհետև հայերը այս շրջանում ստիպված էին երկար

---

1 Լ. Շանխարունեանց, Ստորագրութիւն Կաթողիկէ էջմիածնի և հինգ դաւառացն Արարատայ, էջմիածին, 1842, մաս 2, էջ 58—59։ Կ. Կոստանեանց, Հիւսուած բանից նախնի պատմագրաց Հայոց, մաս 3, Վենետիկ, 1877, էջ 32—33. Ալիշան, Արարատ, էջ 424, Н. Адонц. Армения в эпоху Юстиниана, стр. 251—252, Լ. Մանանդյան. Ֆեոդալիզմը Հին Հայաստանում, էջ 54—55։

2 Ագաթանգեղոս, էջ 28, Փ. Բուզանդ, էջ 45, Ղ. Փարպեցի, էջ 61, 62, 144, 172 և ուր։

3 Ագաթանգեղոս, էջ 441։

4 Փ. Բուզանդ. էջ 17։

տարիներ մահու և կենաց պայքար մղել պարսկական բռնակալության դեմ։ «Ընդ ձեռամբն զօրավարին Վասակայ» կար «արք գործոց իբրև վաթսուն հազար, ընտիրք և պատերազմողք...»[1]։

Երբ Շապուհ պարսկական թագավորը Հայաստան է ուղարկում Դեհկան զորավարին, հսկայական բանակով, նրա դեմ է դուրս գալիս «զօրավարն Վասակ... եւթանասուն հազարաւ...»[2]։

Մուշեղ Մամիկոնյանի հրամանատարության ներքո կար «աւելի ևս քան զընտուն հազար»[3]։ Եղիշեն վկայում է, որ Վարդան Մամիկոնյանը Ավարայրի ճակատամարտում դուրս է բերում «վաթսուն և վեց հազար այր ընդ հեծեալ և ընդ հետևակ»[4]։ Բանակի այս թիվը համարյա անփոփոխ է մնում Բագրատունիների օրոք։ Հովհ. Կաթողիկոսը վկայում է, որ Սմբատ Բագրատունի թագավորը ուներ «զօրս... իբրև վաթսուն հազար»[5]։

Հայաստանի քաղաքական անբարենպաստ պայմանները ստիպում էին զենքի տակ պահել հսկայական ռազմական ուժեր, կատարելագործել ռազմական տեխնիկան, մշակել ռազմական տակտիկա և ստրատեգիա, ստեղծել զինանյութերի և զենքերի արտադրություն, պատրաստել և գործադրել դյուրավառ նյութեր, ամրոցներ քանդող և քար նետող մեքենաներ, երկաթապատ զրահներ, վահաններ, նետեր։

Մ. Խորենացին վկայում է, որ Տիգրան Բ-րդի օրոք արմատական փոփոխություններ են տեղի ունենում հայկական ռազմական ուժերի կազմում։ «Հետևակամարտքն ի վերայ ոտոց ձիոց բերեալք,— գրում է պատմիչը,— և պարսաւորքն առ հասարակ դիպաղեղունք, և շերտաւորքն ի սուսեր և ի տէգ նիզակի վառեալք. մերկքն վահանօք և զգեստուք երկաթեօք պարածածկեալք։ Որոց ի մի վայր հասելոց բաւական էր տեսիլն միայն, և որ ի նոցայն պահպանակաց և զինուց փայլմունք և շողիւնք՝ զթշնամիսն արտահալածել»[6]։

Հետագա դարերում, հատկապես Արշակունիների օրոք, ավելի է կատարելագործվում ռազմական տեխնիկան։ Բանակը զինված էր «ճակատամուղ» նիզակներով, բանակի շարքում կային «սուսերաւորք, նիզակաւորք, վաղրաւորք, սակրաւորք, սունաւորք և սպարակիրք հետևակք...»[7]։

---

1 Փ. Բուզանդ, էջ 89, 121։
2 Նույն տեղում, էջ 127։
3 Նույն տեղում, էջ 161, 168։
4 Եղիշե, էջ 123, 130։
5 Հովհ. Դրասխանակերտցի, էջ 174։
6 Մ. Խորենացի, էջ 72։
7 Փ. Բուզանդ, էջ 100, 111, 168—170։

Հետևակ և հեծյալ բանակներում ազատ դասի ներկայացուցիչները կրում էին սաղավարտներ, իրանը թշնամու հարվածներից պաշտպանելու համար՝ վահաններ։ «Երևեցան,— գրում է Եղիշեն,— ամենեքեան զինեալք և սաղաւարտեալք, սուր ընդ մէջ և վահան ի ձեռին՝ ոչ միայն արանց քաջաց, այլև կանանց առնականանց»[1]։ Հեծյալ բանակը, որը կազմված էր դերազանցապես ազատ դասերի մարդկանցից, ավելի լավ էր զինված, նրանք «զրահաւորք, պատենազէնք» և «զդեստիւք երկաթանօք պարածածկեալք» էին։ Ազատները կրում էին «զդեստ երկաթապատ»։ Եթե «ազատագունդ», «ազատախումբ» բանակները զինված էին թանկագին, ոսկեպատ, արծաթապատ զենքերով, ունեին «երկաթապատ» զգեստներ, ապա հետևակը, որը բացառապես կազմված էր շինականներից և մասամբ ռամիկներից, զինված էր տեգերով, նետ ու աղեղներով, որոնք, ինչպես նշում է Եղիշեն, «մերկ, առանց զինու աղեղնաւորք իցեն», կային նաև միայն «վահանաւոր» հետևակներ[3]։

Բանակին սպայական կադրեր պատրաստելու համար Արշակունի Հայաստանում կային ռազմական վարժարաններ և զորանոցներ։

Դժբախտաբար այդ մասին կան միայն հատ ու կենտ և կողմնակի վկայություններ։ Այսպես, օրինակ, Փ. Բուզանդը ասում է, որ Ներսեսը մինչև կաթողիկոս ընտրվելը «Այր էր... մեծ և բարձր ցանկալի հասակաւ, և վայելուչ դեղով... և նախանձելի արութեանն ի զինուորական կրթութեանն»[4]։

Զինվորականները մյուս քաղաքացիներից տարբերվում էին իրենց հագուստով և զինվորական նշաններով ու ձևերով։ Զինվորական ծառայության մեջ մտած ազնվականները ստանում էին ոչ միայն հող, այլև ռոճիկ։ Հայոց սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը ուներ «... ձիով և թոշակաւ և զինու... ընտիրս... ազատս ազգայինս քառասուն հազար»[5] զինվոր։

Պարսիկները, ասում է Եղիշեն, «...Գունդս-գունդս դարձեալ գումարէին ի նոցանէ յերկիր հեռաստան...։ Եւ զամենեցունց զկարգեալ թոշակսն նուազեցուցանէին»[6]։

---

1 Եղիշե, էջ 74, 152—154։
2 Մ. Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 12։
3 Եղիշե, էջ 123—124։
4 Փ. Բուզանդ, էջ 58։
5 Նույն տեղում, էջ 158։
6 Եղիշե, էջ 29։

Ռազմական ուժերի համարյա նույն կառուցվածքը գոյություն ուներ Պարսկաստանում։ Պարսկական բանակների կորիզը կազմված էր «ազատ-հողատերերից» և գյուղացիներից։ Հետևակը զինված էր նետ ու աղեղով և բաղկացած էր գլխավորապես կախյալ գյուղացիներից ու հողատակ երկրների բնակիչներից։ Հետևակ բանակների կազմում կային օժանդակ ուժեր, որոնք կատարում էին «սև» աշխատանք, այսինքն՝ անցկացնում էին ճանապարհներ, կառուցում էին խրամատներ, կամուրջներ, ծառայում էին դումակներում և կատարում էին ռազմական բնույթի այլ աշխատանքներ։

Պարսիկները, պատմում է Սեբեոսը, սպառնում են հայերին, որ նրանք միացել են հույների հետ և ձգտում են ապստամբել իրենց դեմ։ Եթե դուք, դիմելով Մուշեղ Մամիկոնյանին և «առ այլ նախարարս Հայոց», ասում են պարսիկները, չեք ցանկանա «ի բաց կալ ի դոցանէ», ապա Հայաստան ենք ուղարկելու «փիղս վառս... զաւրս սպառազինեալս քաջաց, որ տեղասցեն ի վերայ ձեր նետս երկաթեղէնս ձեռագործութեամբ, և շառաւունս մուխս պողովատիկս՝ ալաքաւք ի հաստատիպ աղեղանց... տապարս և սուսերս...»[1]։ Հավանական է, որ ռազմական այս կարգի զենքերով զինված էին նաև հայկական գնդերը։

«Սասանյան պետության գլխավոր հենարանը,— գրում է Ն. Վ. Պիգուլևսկայան,— հանդիսանում էին բազմաքանակ հողատեր ազատները... Ազատները, որպես «ազնվազարմներ» կազմում էին նաև իրանական բանակի կորիզը, նրա անհաղթ հեծելազորը... ստանում էին զրամական հատուցումներ ռազմական զինվածության համար, նրանց համար պահպանված էր տոհմային իրավունքները»[2]։ Խրիստենսենը ուսումնասիրելով Տաբարիի վկայությունը, հանդել է այն ճիշտ եզրակացության, որ Սասանյան Պարսկաստանում «ազատների» դասը կազմում էր պարսկական հեծյալ ուժերի կորիզը։ Սրանք խաղաղ պայմաններում ապրում էին իրենց կալվածներում, պարապում էին երկրագործությամբ, շահագործում էին կախյալ գյուղացիների աշխատանքը, իսկ ռազմական արշավանքների ժամանակ ծառայում էին բանակում, որպես հեծյալ զինվորներ և փոքր զորամասերի ռազմական առաջնորդներ[3]։

---

[1] Սեբեոս, էջ 58—60, 119։

[2] Н. В. Пигулевская, Византия и Иран на рубеже VI и VII вв., Москва, 1946 г., стр. 213, 233.

[3] Christensen Arthur, L'empire des Sassanides,— le peuple, l'état, la cour. Kobenhavn, 1907, էջ 44, 96—97, 101—104։

Ռազմական տեխնիկան, բանակների կառուցվածքը, զենքի տեսակները կատարելագործվում են հետագա դարերի ընթացքում։

Արաբական Մուսե զորավարը հսկայական բանակով մտնում է Հայաստան. հայ խոշոր նախարարական-ֆեոդալական տները Վասպուրականի իշխան Աշոտի ղեկավարությամբ հավաքվում են արաբների դեմ ռազմական գործողություն սկսելու համար։

Աշոտի մոտ են գալիս նրա Գուրգեն և Գրիգոր եղբայրները, «զօրօք իւրեանց», Արծրունի՝ Վահան, Վասակ, Մուշեղ, Ասպուսելէ, Գուրգեն, Համազասպ, Գրիգորի որդի Վասակ իշխանները «իւրեանց զօրօք», Թոռնիկ Բագրատունու որդին իր բանակով... «և այլ բազմամբ յաղատ տանէ, իւրաքանչիւր զօրօք...», «զբազմութիւն աղատադունդ զօրաց ըստ տոհմս ազգաց իւրաքանչիւր զօրօք»[1]։

Պատերազմական գործողությունների նախօրեին Բուզան արաբական լրտեսներին հանձնարարում է իմանալ, թե Հայաստանը ռազմական ինչպիսի ուժեր ունի, և որոնք են որ «սպառազէնք են, և կամ քանի այնոքիկ, որք վահանաւորք հետևակաց են, և կամ քանի նիզակաւորք և կամ որչափ թիւք աղեղնաւորացն են, և կամ քանի պարագլուխք իցեն զօրուն, և կամ քանի սաղարք միայնամարտիկք ախոյեանք իցեն, և կամ քանի ըմբշամարտիկք...։ Խնդրէ և տեղեկութիւն թէ քանի դրօշք են և կամ քանի նշանք...»[2]։

Ստանալով այս ռազմական անհրաժեշտ տեղեկությունները Բուզան նոր միայն սկսում է պատերազմական գործողություններ։ Ակնհայտ է, որ հայկական նախարարական-ֆեոդալական «աղատադունդ» բանակը պահպանել էր իր դոյությունը նաև այդ շրջանում։ Արաբների դեմ մաքառող հայ զինվորները զինված էին վահաններով, երկաթածայր նետերով, սուսերով, սրերով, երկար նիզակներով, տեգերով և այլ տեսակի զենքերով։ Այս մասին արժեքավոր տեղեկություն է հաղորդում Թ. Արծրունին։

«Եւ զայլս ազգի ազգի զինուորք ունէին վաղերք և վակուրք, սուսերք և սուինք, տապարք և վիրդահանք, մեքենայք և ռմբաքարք, վահանք և նիզակք։ Այլ հուր և ծծումբ նաւթիւ բարձեալ ի գործ պատերազմին, և զլոյծ բնութիւնս յանօթս ապակեղէնս եդեալ, և մանր զծծումբն ընդ նմին խառնեալ, եդեալ ի պարսատիկ մեքենայից, և զհուրն առ ընթեր նմին, հնարաւորեալ արկանել զամրոցսն»[3]։ «Ռումբի» մասին վկայություն ունի նաև Մ. Ուռհայեցին։ «Եւ յոր-

---

1 Թ. Արծրունի, էջ 109, 112, 122։

2 Նույն տեղում, էջ 125։

3 Նույն տեղում, էջ 131—132։

ժամ դնաց մօտ ի բերդն, մի ոմն ի թաքստեան կայր յայլազգեացն, հարեալ զԲոռնիկ ոմբով ի սիրտն գաղտաբար, և անդէն մեռանէր քաջն Բոռնիկ»[1]։

Արքունական-թագավորական աղատագունդ բանակներ ունեին Բագրատունիները։ Բագրատունիների ռազմական բանակներին «աղատագունդ» են կոչել ժամանակակից պատմիչները։

Ար. Լաստիվերտցին նկարագրելով Բյուզանդական կայսրության ռազմական արշավանքները, վկայում է, որ «զօրքն Հոռոմոց» շորս անգամ իրար հետևից ասպատակում են Հայաստանը, «մարդաթափ արարին զերկիրն ամենայն սրով և հրով և գերութեամբ»։ Բյուզանդական կայսրության այդ դաժան հալածանքների և ավերումների հետևանքով հայկական հեծելազորը «անտէրունչ շրջեալ ոմն ի Պարս, և ոմն ի Յոյնս, և ոմն ի Վիրս». իսկ «Սեպուհ գունդն ազատաց ելեալ ի Հայրենեաց, անկեալ ի Ճոխութենէ, մոնչեն ուր և են իբրև զկորիւն առիւծուցն ի խշտիս իւրեանց»[2]։

Արաբական Բշր զորապետի հալածանքներից խուսափելու համար Աշոտ 2-րդ թագավորը ապաստան է գտնում Սևան կղզում։ Երբ արաբները մոտենում են կղզուն, Աշոտ 2-րդը «պատրաստէ նաւս մեծասան, և ամբառնայ ի նաւս անդր իբրև արս հօթանասուն ազատս և զծառայս իւր լայնալիճ աղեղամբք՝ արս քաջակորովս և հմուտս ի ձգումն նետաձգութեանց, որ գրեթէ ի մազոյ ոչ վրիպէին»[3]։ Երբ արաբական Յուսուֆ զորապետն արշավում է Սյունիք, Սյունյաց գահերից Սմբատ իշխանը հավաքում է «զեղբայրս, զազգայինս իւր և զազատագունդ զօրս ամենայն իւրոյ իշխանութեանն՝ ել ընդ յառաջ Իսմայելականացն»[4]։

Աղատագունդ բանակների մասին բազմաթիվ վկայություններ է պահպանել Մ. Ուռհայեցին։ Վասպուրականում սկսվել էին սովորական նախարարական-ֆեոդալական երկպառակությունները։ Վասպուրական է մեկնում Պետրոս Գետադարձ կաթողիկոսը այդ խռովություններին վերջ տալու համար, սակայն «թագաւորն և ամենայն նախարարք և ազատագունդք զօրքն Հայոց ոչ լինէին ունկնդիր աստուածային պատուիրանացն»[5]։

---

[1] Մ. Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն*, էջ 209։

[2] Ա. Լաստիվերտցի, էջ 55—58։ *Հմմտ. ՀՍՍՌ Պետական մատենադարան, ձեռագիր N 3079*, էջ 255։

[3] Հովհ. Դրասխանակերտցի, էջ 356։

[4] Ստ. Օրբելեան, էջ 185։

[5] Մ. Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն*, էջ 75։

Հայկական բանակների ռազմական տեխնիկայի մասին արժեքավոր հիշատակություններ կան Ուռհայեցու, Ստ. Օրբելյանի մոտ[1]։

Ինչպես նախորդ, այնպես էլ այս շրջանում հայկական ռազմական ուժերը կազմված էին՝ ա) թագավորական բանակներից, բ) իշխանական-ֆեոդալական ռազմական ուժերից, գ) աշխարհազորականներից և դ) վարձկան զինվորներից։

Զինվորները իրենց զինվորական ծառայության դիմաց ստանում էին ռոճիկ և այլ հատուցումներ։ Ահա մի երկու վկայություն։

Ն. Շնորհալին իր «Թուղթ ընդհանրականում» դիմելով իշխող դասի ներկայացուցիչներին, ասում է. «Նաև զզինուորաց ձերոց և զամենեցուն որք ծառայենն ձեզ, զսահմանեալ հռոդոն (ռոճիկ) մի պակասեցուցանէք, զի զրկանք մեծ է այն և անիրաւութիւն, քանզի որպէս նոքա պարտական են վասն պարգևացն՝ որ ի ձէնջ, զարիւնս իւրեանց հեղուլ վասն ձեր, նոյնպէս և դուք պարտիք զխոստացեալ թոշակսն նոցին հատուցանել անթերի»[2]։

Աշոտ Բագրատունին բյուզանդական Հովհաննես Զմշկիկ կայսրի տրամադրության տակ է դնում «այր պատերազմողն իբրև տասն հազար» և խնդրում է նրանից «կերակուրս, ռոճիկս»[3]։

* *
*

Հետագայում, առանձնապես 6—9-րդ դարերում, մի կողմից Բյուզանդական կայսրության և Պարսկաստանի, ապա Արաբական խալիֆաթի և դարձյալ Բյուզանդական կայսրության և հետո սելջուկ Թուրքերի հաճախակի կրկնվող աշխարհավեր արշավանքների և սիստեմատիկ ասպատակությունների հետևանքով քայքայման խորը պրոցես ապրեցին նախկին նախարարական-ֆեոդալական հողատիրության սիստեմը և նախարարական-ֆեոդալական քաղաքական կարգերը։

Նախարարական-ֆեոդալական սիստեմի քայքայման հետևանքով հայ պատմական աղբյուրների էջերից չքացան այդ կարգերի հետ կապված սոցիալական այնպիսի բնորոշ տերմիններ, ինչպիսիք են «բդեշխ», «նախարար», «տոհմապետ», «նահապետ»,

---

[1] Մ. Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն*, էջ 12, 119—120, 209, հմմտ. Ստ. Օրբելեան, էջ 374—375 և ուր.։

[2] *Թուղթ ընդհանրական արարեալ երիցս երանելի սուրբ Հայրապետին մերոյ տեառն Ներսիսի Շնորհալւոյ, Էջմիածին, 1865, էջ 100։*

[3] Մ. Ուռհայեցի, *Ժամանակագրութիւն*, էջ 18։

«տոհմ», «տուն» և սրանց փոխարինելու եկան դասային և սոցիալական նոր հարաբերություններ արտահայտող «իշխանաց-իշխան», «տէր», «պարոն», «գահերէց», «գահագլուխ» տերմինները։

Սակայն պարսկա-բյուզանդական, արաբական և սելջուկյան արշավանքները այլևս անկարող էին լիկվիդացնելու ֆեոդալական հարաբերությունները, ֆեոդալական կարգերը միջնադարյան Հայաստանում։

Չնայած Արաբական խալիֆաթը, Բյուզանդական կայսրությունը և սելջուկ Թուրքերը հայ տեղական ֆեոդալական-իշխանական տների նկատմամբ վարում էին խիստ ու դաժան քաղաքականություն, սակայն խոշոր հողատիրական սիստեմը, ֆեոդալական հարաբերությունները դրեթե անխախտ ու անփոփոխ մնացին նաև պատմական այս էպոխայում։ Անկասկած է, որ արաբա-բյուզանդական խիստ ու դաժան քաղաքականությունը կասեցնում էր երկրի արտադրողական ուժերի, քաղաքների, քաղաքային կյանքի, ապրանքափոխանակության, դրամական շրջանառության և ընդհանրապես հայ հասարակական կյանքի զարգացման նորմալ ու բնական ընթացքը, սակայն ֆեոդալական հասարակական-տնտեսական ֆորմացիայի մեջ էական, արմատական, որակական փոփոխություն տեղի չունեցավ և չէր կարող ունենալ։

Անկասկած է, որ արաբները յուրաքանչյուր պատեհ առիթ օգտագործում էին լիկվիդացնելու և սահմանափակելու հայ նախարարական-ֆեոդալական տների քաղաքական և տնտեսական իրավունքներն ու արտոնությունները։ Մեր մատենագիրները խիստ ողբերգական կերպով են նկարագրում այդ դաժան և ծանր լուծը։ Այսպես, օրինակ, Ղևոնդ վարդապետը, Սեբեոսը, Հովհ. Դրասխանակերտցին, Կ. Գանձակեցին, Ստ. Օրբելյանը և ուրիշները վկայում են, որ արաբական տիրապետության տակ հայոց մեծ ու փարթամ աշխարհը դարձավ «թափուր» և «այսպէս աշխարհս մեր ծովացաւ արտասուօք և լցաւ բաղում ողբովք»[1]։ Այս նույն վկայությունը մենք գտնում ենք արաբական պատմիչներ-աշխարհագրեր Ահմեդ-ալ-Յակուբի, Իբն-ալ-Ֆակիհի և մյուսների մոտ։

Ալ-Յակուբը վկայում է, որ արաբական արշավանքներից հետո Հայաստանի ծաղկած քաղաքների և փարթամ գյուղերի մեծ մասը ամայացավ, դատարկվեց իր հիմնական բնակիչներից։

---

[1] Հ. Դրասխանակերտցի, էջ 97—98, Ղևոնդ, էջ 32—35, 133—135, 137—139, 158, Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն, էջ 241—243, 247, Կ. Գանձակեցի, էջ 62, Ստ. Օրբելեան, էջ 183—185 և ուր.։

[2] Карауло в, СМОМПК, вып. XXVI, XXIX, XXXI, XXXVIII.

Այս տեղեկությունը հաստատում է Իբն-ալ-Ֆակիհը «և հիմա այդ երկիրը համեմատած անցյալի նրա խիտ բնակչության և մասսայական ապրանքների ու բազմաքանակ ու ձեռներեց առևտրականների հետ, իրենից ներկայացնում է անապատ»[1]: Արաբական արշավանքների ահավոր հետևանքները Ղևոնդը արտահայտել է միայն երկու բառով: Հայոց մեծ ու հարուստ աշխարհը նրա կարծիքով «թափուր եղեալ»: Ջժխտելով, չբացասելով արաբական արշավանքների խիստ բացասական հետևանքները հայ հասարակական կյանքի բոլոր բնագավառների վրա, մենք չենք կարող համաձայնել այն հետազոտողների հետ, որոնք պնդում են, որ արաբական արշավանքները իրենց հետ մաքրեցին ու ոչնչացրին ֆեոդալական կարգերը և նախարարական-իշխանական հողատիրությունը:

Նույնիսկ 7-րդ դարի առաջին կեսում, երբ Մարզպանական Հայաստանի մեծագույն մասը անցել էր Արաբական խալիֆաթի գերիշխանության տակ, ֆեոդալական կարգերը պահպանեցին իրենց գոյությունը: Արաբական արշավանքներից անմիջապես հետո, այսինքն 652 թ., ինչպես վկայում է Սեբեոսը, հայ իշխանները Թեոդորոս Ռշտունու ղեկավարությամբ զենքով նվաճեցին խալիֆ Մուավիյայից այն դաշինքը, որով Հայաստանը փաստորեն դարձավ ինքնավար և ստացավ լայն իրավունքներ և արտոնություններ[2]:

Սկսած 7-րդ դարի վերջերից և 8-րդ դարի սկզբներից, պատմական Հայաստանի շատ վայրերում, քաղաքներում, ինչպես օրինակ Դվինում, Նախիջևանում, Ամյուկում, Բերկրիում, Բաղեշում, Կարինում, Մանազկերտում, նույնիսկ Սյունիքում ստեղծվել էին արաբական բնակավայրեր, արաբները գրավել էին նախարարների հողերի մեծ մասը, ստիպում էին գյուղացիներին կատարելու հարկադիր աշխատանք, ծանրացել էին հարկերը, սակայն աշխարհիկ և մասնավորապես հոգևոր ֆեոդալների մեծ մասը պահպանել էին իրենց տերունական կալվածները, կախման վիճակում գտնվող գյուղացիները: Արաբական նվաճումը չէր բերում և չէր կարող բերել արտադրության նոր եղանակ, նույն ֆեոդալիզմը իր բոլոր ատրիբուտներով մնաց նաև արաբական տիրապետության ամբողջ ժամանակաշրջանում: Արաբական տիրապետության էպոխայում, նախարարական բազմաթիվ տներից ոչ միայն իրենց գոյությունը

---

1 Караулов, СМОМПК, вып. XXXVIII, стр. 83.

2 Սեբեոս, էջ 224—225, հմմտ. Ղևոնդ, էջ 11—13, 23, Հովհ. Դրասխանակերտցի, էջ 87—88:

պահպանեցին, այլև տնտեսական և քաղաքական հզորության հասան Բագրատունյաց, Արծրունյաց, Սյունյաց, Կամսարականների և այլ իշխանական-ֆեոդալական տները։ Այս ֆեոդալական տները արաբների դեմ իրենց մղած պայքարում, այնքան կարևոր դեր էին խաղում Հայաստանի քաղաքական կյանքում, որ արաբները նրանց հաշվի չառնել չէին կարող։

Հայտնի է, որ արաբները 705 թ. հայ նախարարների և ազատների մի մասին փակեցին Նախիջևանի եկեղեցում և այրեցին։ Ղևոնդ վարդապետը վկայում է, որ արաբների այդ դաժան քաղաքականությունը ունեցավ կորստաբեր հետևանքներ իրենց՝ արաբների համար։ Երբ Մուհամեդ-իբն-Մրվանը կատարեց «ղայս ամենայն չարիս,— գրում է Ղևոնդը,— բարձրացեալ բողոք աշխարհիս հասանէր յականջս իշխանին Իսմայելի, որում անուն էր Վլիթ»։

Վլիթը պաշտոնազուրկ է անում Մրվանին և նրա փոխարեն Հայաստան է ուղարկում «զԱբդլ-Ազիզ ոմն», սա «զդէր հրովարտակ առ նախարարս Հայոց, և հաւանեցուցանէր զնոսա դառնալ յիւրեանցական աշխարհս, և տայր նոցա զիր երդմամբ չափ ըստ սովորութեանն իւրեանց»[1]։

Ակնհայտ է, որ «թափուր եղեալ» Հայոց աշխարհում ֆեոդալական դասի մի մասը ոչ միայն շարունակեց իր ֆիզիկական գոյությունը, այլև տեր դարձավ իր ժառանգական կալվածներին և միացավ արաբական ավագանու հետ, աշխատավոր դասերին շահագործելու համար։ Հայտնի է, որ Օմար 2-րդ խալիֆի օրոք, հայ աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների քաղաքական պատվերը կատարելու համար, առատ նվերներով, 719 թ. Հովհան Օձնեցու ղեկավարությամբ դեսպանություն է ուղարկվում Դամասկոս և վերականգնվում է հայ աղնվականության և եկեղեցու արտոնությունները և ժառանգական իրավունքները[2]։

Օմարի՝ Հայաստանի նկատմամբ վարած քաղաքականության մասին Ղևոնդը գրում է՝ «արձակեաց զբովանդակ գերեալսն յիւրաքանչիւր տեղիս և խաղաղացոյց զաշխարհս, որ ընդ իւրով իշխանութեամբ»[3]։

Անկասկած է, որ Արաբական խալիֆաթի կողմից հալածված հայ նախարար-ֆեոդալները կրկին տեր են դառնում իրենց «աշխարհներին», այսինքն կալվածներին։ Արաբական Խուզիմա ոստիկանը ոչ միայն բռնությամբ, այլև արծաթով չի կարողանում

---

[1] Ղևոնդ, էջ 35—36։

[2] Հովհ. Դրասխանակերտցի, էջ 102—104։

[3] Ղևոնդ. էջ 42, հմմտ. Կ. Գանձակեցի, էջ 63—64։

գրավել Կաթողիկոսական տան պատկանող Արտաշատ և Կավակերտ դաստակերտները «հանդերձ նոցունց ագարակօք»։ Խուզիման քանտարկում է Հովսեփ կաթողիկոսին և պահանջում է իրեն վաճառել դաստակերտները։ Սակայն կաթողիկոսը մերժում է։ Բանտից ազատվելուց հետո նրան հաջողվում է հետ վերադարձնել կաթողիկոսարանին պատկանող սեփական Կավակերտ դաստակերտը և Հոռոմոց մարդը[1]։ Բուղա զորավարը խոստանում է դավանափոխ իշխաններին և հոգևորականներին տալ ոչ միայն «բազում պարգևս», այլև «գանձս ոսկւոյ և արծաթոյ», «այլև գիւղս և գերդաստանս»[2]։

Բուղայի կողմից դերված հայ իշխան-նախարարները զրկվում են գերությունից, վերադառնում են Հայաստան և «չուէին յաշխարհ տէրութեան իւրեանց և ի սեպհականութիւնս և ի տունս... բնակեցան իւրաքանչիւրօք ի ժառանգութեան իւրեանց»[3]։ Կամ «չուէ դայ հասանէ... Սմբատ որդի արքային ի սեպհական կալուած Երազգաւորից Շիրակավան բազում վշտահար հեծութեամբ»[4]։

Սմբատ Բագրատունին, միաբանելով հայ նախարարների հետ, դրավում է Տարոնը, Աղձնյաց նահանգը կամ իր ընիկ տերությունը[5]։ Այսպիսով, արաբական տիրապետության ամենադաժան պայմաններում էլ հայ իշխանական-ֆեոդալական դասի և հոգևորականության ավագանու շատ ներկայացուցիչները ոչ միայն չեն կորցնում իրենց հողային տիրույթները, այլև ընդարձակում են այն։

Ոչ միայն հայ, այլև արաբ մատենագիրները պահպանել են բազմաթիվ վկայություններ այն մասին, որ հայ ֆեոդալական տների մի մասը, նույնիսկ արաբական տիրապետության առաջին շրջանում, պահպանել էին իրենց հողային տիրույթները և տերունական իրավունքները։

Արաբական մատենագիր Աբու-Աբբաս-Ահմեդ-ալ Բալաձորին (9-րդ դար) իր «Երկրների նվաճման գիրք» աշխատության մեջ վկայում է, որ «Հայաստանի իշխանները նստած էին իրենց երկրներում և նրանցից ամեն մեկը կպաշտպաներ իր գավառը, երբ այնտեղ էր գալիս ամիրապետի ոստիկանը, նոքա կդնային նրա սերը գրավել, և եթե նա նոցա (իշխանների) հետ աղնիվ, բայց

---

[1] Հովհ. Դրասխանակերտցի, էջ 111—113։

[2] Նույն տեղում, էջ 123։

[3] Նույն տեղում, էջ 131, 134—35։

[4] Նույն տեղում, էջ 144։

[5] Նույն տեղում, էջ 173։

խիստ կվարվեր, նոքա նորան հարկ կվճարեին, հակառակ դեպքում նորան հրապարակավ կհայհոյեին և կարհամարհեին նորա հրամանը»[1]։ Ահա այդ կարգի մի այլ վկայություն։ Այդ նույն պատմիչը հաղորդում է, որ Հաբիբ-իբն-Մասլամը հատուկ հրովարտակով դիմում է Դվին քաղաքի բնակիչներին, ասելով՝ «Դուինի քրիստոնյա, կրակապաշտ և հրեա բնակիչներ, որոնք ներկա են կամ բացակա, ես երաշխավորում եմ ձեր կյանքը, գույքը, եկեղեցիները, առևտուրը, քաղաքի պարիսպները, եղեք ազատով, միայն վճարեցեք գլխահարկ և տուրք»[2]։ Այս կարգի հրովարտակներ արաբները տալիս են Նախիջևանի, Վասպուրականի, Սյունիքի, Ատրպատականի, Վրաստանի, Աղվանից աշխարհի բնակիչներին[3]։

Այսպիսով, հայ ֆեոդալական-նախարարական դասի մի զգալի մասը շատ կարճ ժամանակամիջոցում վերականգնեց իր տերունական իրավունքներն ու քաղաքական արտոնությունները, թեև օտար՝ արաբական բռնակալական տիրապետության պայմաններում։

Սակայն արաբա-բյուզանդական, թշնամական վերաբերմունքը այլևս անկարող էր կասեցնելու պատմական զարգացման ընթացքը։ Սկսած 9-րդ դ. հայ ժողովուրդը մտնում է իր պատմության շրջադարձային դարը։ Հայ ժողովուրդը արդեն մոտ 400 տարի էր ինչ համառ, հետևողական և մահացու պայքար էր ծավալում իր երկրի քաղաքական միավորման, իր անկախության համար։

Հայ ժողովուրդը պայքարելով պարսկա-բյուզանդական, արաբա-բյուզանդական բռնակալության դեմ ստեղծել էր սոցիալ-տնտեսական այն նախադրյալները, որոնց հիմքի վրա բարձրացավ Բագրատունիների թագավորությունը։

Արաբական Մուսթային խալիֆը (862—864 թթ.) ստիպված ճանաչեց Աշոտ Բագրատունուն Հայաստանի «իշխանաց իշխան»։

Սկսած Աշոտ Բագրատունուց, Բագրատունիները հայ առանձին իշխանների մի մասին ղենքի ուժով, մյուսներին դնումների միջոցով, երրորդներին կամովին իրենց ենթարկեցին և այս ճանապարհով հզորացրին նորաստեղծ կենտրոնական իշխանությունը։ Այս գործում Բագրատունիներին օգնում և օժանդակում էր հայ ֆեոդալական, տնտեսական մեծ հզորության հասած եկեղեցին։

---

[1] Ֆ. Խալաթյանց, *Արաբական մատենագիրները Հայաստանի մասին*, Վիեննա, 1919, էջ 63։

[2] Նույն տեղում, էջ 44։

[3] Նույն տեղում, էջ 44—47, 48—49։

Աշոտ Բագրատունին հիմնվելով կենտրոնաձիգ նախարարական-ֆեոդալական տների և հայ եկեղեցու ակտիվ օգնության և օժանդակության վրա, 884 թ. արաբական վերջին ոստիկան Ահմեդ-իբն-Խալիդին իր բանակով դուրս է քշում Հայաստանից։ Պատմական այս էպոխայում արաբական կենտրոնական խալիֆաթն այնքան էր թուլացել ու տրոհվել, որ ստիպված ճանաչում է Աշոտ Բագրատունուն Հայաստանի թագավոր և նրան թագ է ուղարկում։ Ոչ միայն արաբները, այլև բյուզանդական Վասիլ 1-ին կայսրը նույնպես ճանաչում է Աշոտ Բագրատունուն որպես Հայաստանի թագավոր։

Ճիշտ է, Բագրատունիների տիրակալության օրոք հայ ժողովուրդը տակավին միացած ու միավորված չէր մեկ միասնական կենտրոնացած պետական սիստեմում, դեռ Բագրատունիների թագավորությունը չուներ կենտրոնացած պետականության մի շարք հատկանիշները՝ միասնական-ամբողջական տերիտորիա, չկար պետական կենտրոնացած բյուրոկրատիա, պետական զորք ամբողջ Հայաստանի համար, պետական ու վարչական միասնական օրդաններ, օրենսգրքեր, պետական միասնական դրամ, սակայն Բագրատունիները զսպեցին ֆեոդալական ներքին երկպառակությունները, Հայաստանի տերիտորիայի մեծ մասը ենթարկեցին կենտրոնացած իշխանության դերիշխանությանը և ստեղծեցին բարենպաստ պայմաններ արտադրողական ուժերի, արհեստային արտադրության, միջերկրյա և շուկայական ներքին կապերի ու հարաբերությունների, ապրանքափոխանակության, դրամական շրջանառության, արտաքին և ներքին առևտրի զարգացման համար։ Բագրատունիների տիրապետության օրոք աշխատանքի հասարակական բաժանումը մտավ իր լիարժեք իրավունքների մեջ և տնտեսական այս նախադրյալների հիմքի վրա զարգացան քաղաքներն ու քաղաքային կյանքը։ Բագրատունիների օրոք դարձնվեցին սոցիալ-քաղաքական այնպիսի նախադրյալներ, որոնց պայմաններում նոր վերելք ապրեցին ոչ միայն երկրագործությունը, անասնապահությունը, այլև աշխարհիկ կյանքն ու կենցաղը, ոճն ու ճաշակը։ Վերջապես, Բագրատունիների քաղաքականության պրոգրեսիվ կողմը մեզ համար դառնում է ավելի շեշտակի, ավելի առաջադիմական, եթե նկատի ունենանք, որ նրանց համառ պայքարը՝ երկիրը քաղաքականապես միավորելու գործում, ընթանում էր օտար նվաճողների և ներքին կենտրոնախույս իշխանությունների դեմ մղվող պայքարին համընթաց, նրա հետ միասին։ Բագրատունիների պետությունը, ինչպես և ամեն մի այլ պետություն, ծա-

դեց ու զարգացավ միաժամանակ դասակարգային պայքարի ու դասակարգերի ընդհարումների մեջ, այդ իսկ պատճառով նա նույնպես ամենից առաջ տնտեսապես տիրապետող դասակարգի պետությունն էր, և տնտեսապես տիրապետող դասակարգը իր իսկ պետության օգնությամբ, նրա ակտիվ պաշտպանության պայմաններում դարձավ նաև քաղաքականապես իշխող դասակարգ և ստացավ այնպիսի հզոր միջոց, ինչպիսին էր պետական ապարատը՝ շահագործվող դասակարգերի դեմ պայքարելու համար։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՀՈԳԵՎՈՐ-ՖԵՈԴԱԼԱԿԱՆ, ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՎ ՎԱՆԱԿԱՆ ՀՈՂԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայ ֆեոդալական եկեղեցին ծագեց և ձևավորվեց պատմական այնպիսի էպոխայում, երբ հայ Արշակունի պետությունն ապրում էր ֆեոդալական հարաբերությունների զարգացման ժամանակաշրջան։

Հայկական ֆեոդալական իրականության մեջ ծագած և զարգացած հայ եկեղեցին իր կառուցվածքով, հողային ընդարձակ կալվածներով, իրավական, քաղաքական-վարչական իշխանությամբ ու դատական գործունեությամբ տիպիկ ֆեոդալական կազմակերպություն էր և ֆեոդալական հիերարխիայում գրավում էր առաջնակարգ տեղերից մեկը։

Ֆեոդալական եկեղեցին ինչպես բոլոր երկրներում, այնպես էլ Հայաստանում շատ շուտով իրեն զգացնել տվեց, որ նա «գոյություն ունեցող ֆեոդալական հասարակարգի ամենից ընդհանուր բինթեզն ու սանկցիան էր հանդիսանում»։

Ֆեոդալական եկեղեցին, ինչպես նշել է Էնգելսը, «ֆեոդալական հասարակարգը շրջապատեց աստվածային շնորհքի սրբազան փայլով։ Նա իր սեփական նվիրապետությունը հաստատեց ֆեոդալական օրինակի համաձայն, և վերջի վերջո նա ամենախոշոր ֆեոդալական սեփականատերն էր...»[1]։

Հայ Արշակունիների ֆեոդալական պետությունը—երկրի «ընիկ» տեր ինքնակալ-թագավորի գլխավորությամբ, քրիստոնեության մուտքից հետո, ստացավ մի նոր և հզոր միջոց շահագործվող դասերի դեմ իր մղած պայքարում։ Սկսած 4-րդ դարի սկզբներից

---

[1] Էնգելս, *Սոցիալիզմի զարգացումը ուտոպիայից դեպի գիտություն, Երևան, 1933, էջ 18։*

Հայ Արշակունի թագավորները, աշխարհիկ և հոգևոր ֆեոդալները ոչ միայն եկեղեցիներին ապահովեցին հողային ընդարձակ կալվածներով, այլև ձեռնարկեցին եկեղեցիների, իսկ 6-րդ դարից նաև վանքերի շինարարական լայն աշխատանք։ Հայկական պատմական աղբյուրները, ձեռագիր հիշատակարանները, կրոնական-իրանական բնույթի աղբյուրները, կալվածագրերը, վիմական արձանագրությունները, դատաստանագրքերը պահպանել են բազմաթիվ վկայություններ «մեծ», «աշխարհահռչակ», «տիեզերահռչակ», «մեծապատիս», «մեծափառ», «բազմապատիս» եկեղեցիների, վանքերի և սրանց ընդարձակ տիրույթների, կախյալ գյուղացիների մասին։

Քրիստոնեության մուտքից անմիջապես հետո Տրդատ 3-րդ թագավորը և Գրիգոր Լուսավորիչը եկեղեցիներ են կառուցել տարբեր Հայաստանի քաղաքներում, մեծ գյուղերում և նույնիսկ առանձին դաստակերտներում։ Նորակառույց եկեղեցիներին և հոգևոր դասի ներկայացուցիչներին տնտեսապես ապահովելու համար նրանք ոչ միայն նվիրաբերում են գյուղեր, ագարակներ, ավաններ, այլև զորական ուժով խորտակում են հեթանոսական տաճարները և սրանց շարժական ու անշարժ կայքը հանձնում են եկեղեցիներին, որպես սեփական տիրույթներ։

Հայաստանում, մինչև քրիստոնեության մուտքը, հեթանոսական մեհյանները իրենց տրամադրության տակ ունեին հողային հսկայական կալվածներ, շարժական և անշարժ կայք։ Ագաթանգեղոսը նկարագրելով հեթանոսական մեհյանների հսկայական հարստությունները, վկայում է, որ երբ Տրդատ թագավորը պարսիկների դեմ տարած փառավոր հաղթանակից հետո «բազում աւարաւ» վերադառնում է Վաղարշապատ, այցելում է «յեօթն բագինս մեհեանին», նրանց է նվիրում պատերազմական ավարի մեծ մասը, սպիտակ ցուլեր, ձիեր, ջորիներ, «ոսկեղէն և արծաթեղէն», գոհարներ, «յանօթս յանկալիս ակամբք պատուականօք»։ Բացի այս հսկայական նվերներից Տրդատը միաժամանակ քրմերին «հինգերորդ ևս հանէր յամենայն մեծամեծ աւարացն... և մեծամեծ պարգևս քրմացն շնորհէր»[1]։

Հեթանոսական մեհյանների այս հսկայական հարստությունը բռնագրավելու, նրանց տնտեսապես թուլացնելու, նոր բարձրացող հոգևոր դասերին տնտեսապես ապահովելու համար Տրդատ թագավորը և Գր. Լուսավորիչը երկարատև, դաժան և զինված

---

[1] Ագաթանգեղոս, էջ 24։

պայքարի միջոցով խորտակում են մեհյանները և նրանց կայրը նվիրում եկեղեցիներին։ Տրդատ թագավորը, և Գր. Լուսավորիչը, ասում է Ագաթանգեղոսը, «ընդ իշխանսն, նախարարօքն և զօրօքն հանդերձ» սկսեցին «քակել, կործանել... աւերել» Արտաշատ քաղաքում գտնված «զբագինսն Անահտական դիցն, և որ յԵրազամոյն տեղիսն անուանեալ կայր»։ Հալածում են այստեղ բնակվող քրմերին և «զդաստակերտսն և զսպասաւորսն քրմօքն հանդերձ և նոցին դեւտովքն և սահմանօքն ի ծառայութիւն նուիրեցին եկեղեցւոյ սպասաւորութեան»։ Այս վկայությունն ուշագրավ է նաև մի այլ իմաստով։ Տրդատ թագավորը ոչ միայն եկեղեցիներին է նվիրում Անահիտի դաստակերտ-տիրույթները, այլև այդ կալվածները սպասարկող և մշակող սպասավորներին։ Ուրեմն նոր բարձրացող եկեղեցիների տիրույթները ապահովվում են նաև բանվորական ձեռքերով։

Անահիտի մեհյանը խորտակելուց հետո, թագավորը նույն զորական ուժով խորտակում է Դարանաղյաց գավառի Թորդան գյուղի մեհյանը և «սպիտակափառ դիցն Բարշամինայ»։ Նրանք բռնագրավում են այս մեհյանի «զդանձսն ամենայն, զոսկւոյն և զարծաթոյն», իսկ մեհյանի սեփական «զգեօղն ամենայն դաստակերտօքն հանդերձ և սահմանօքն յանուն եկեղեցւոյն նուիրէին»։ Այս կերպ են վարվում նաև Խաղտյաց գավառի մեհյանների, Անի ամուր ամրոցի, Ձևսի բագինի հետ։ Խորտակելով այս մեհյանների հզորությունը, նրանք այս մեհյանների «զաւանն ամրակատնան հանդերձ ի ծառայութիւն եկեղեցւոյն նուիրէին»։ Այստեղից նրանք արշավում են Եկեղյաց գավառի Երիզա ավանի Անահիտի անվան մեհյանի վրա, փշրում են Անահիտի ոսկուց շինած արձանը և «ամենեքին զտեղին քանդեալ վատնէին, և զոսկին և զարծաթն ուար առեալ»։ Երիզ ավանից նրանք շարժվում են Թիլ։ Խորտակում են Թիլ ավանի Արամազդի գուստր Նանեի մեհյանը և «զդանձս երկուցուն մեհեանացն ուարեալ ժողովեալ՝ ի նուէր սպասուց սուրբ եկեղեցւոյ Աստուծոյ թողուին տեղւոյն հանդերձ»։

Այսպես են վարվում Դերջանի, Բագայատիճի և մյուս մեհյանների հետ, բռնագրավում են սրանց գյուղերը, ոսկին, արծաթը, թանկագին զարդերը և նվիրում են եկեղեցուն «ի սպասաւորութիւնէն և ի հնազանդութիւն ծառայութեան»[1]։

Արդեն 5—7-րդ դարերում հայ եկեղեցիները, հոգևոր ֆեոդալների դասը տնտեսական այնպիսի հզորության էին հասել, որ ձեռ-

[1] Ագաթանգեղոս, էջ 395, 398—400, նմմ. Փ. Բուզանդ, էջ 7։

նարկում են վանական-եկեղեցական լայն շինարարություն։ Այս շրջանում կառուցվում են Վաղարշապատի, Դվինի, Եղվարդի, Զվարթնոցի «հոյակապ», «հռչակավոր» վանքերն ու եկեղեցիները։

Ֆեոդալական հայ եկեղեցական կառուցվածքը նույնպես խիստ հիերարխիկ ու կենտրոնացված էր։ «Միջին դարերում,— գրել է Ֆ. Էնգելսը,— հենց այն չափով, ինչ չափով ֆեոդալիզմն էր զարգանում, քրիստոնեությունն ընդունում էր նրան համապատասխան կրոնի կերպարանք՝ համապատասխան ֆեոդալական հիերարխիայով...»[1]։ Եկեղեցու գլուխ կանգնած էր հայոց կաթողիկոսը, որը համարվում էր եկեղեցու տերն ու տնօրինողը և մեծ ազդեցություն ուներ արքունիքում, աշխարհիկ գործերում։ Առանց կաթողիկոսի մասնակցության չէր լուծվում ներքին և արտաքին քաղաքականության քիչ թե շատ աչքի ընկնող որևէ հարց։ Կաթողիկոսը հաճախակի հանդես էր գալիս որպես դիվանագետ։ Նրա իշխանությանը ենթակա էին ինչպես արքունի ոստանի, այնպես էլ նախարարական շրջանների եպիսկոպոսները, վանքերն ու եկեղեցիները։

«Կաթողիկոսական աթոռը,— գրել է Եղիշը,— աղքատ չէր թագավորական արքունիքից։ Ինչպես թագավորի, այնպես էլ կաթողիկոսի արքունիքները կորած էին զեխության և փարթամության մեջ և զարդարված էին թանկագին քարերով»[2]։

Փ. Բուզանդը արժանահավատ վկայություններ է թողել հոգևորական թեմերի, եկեղեցիների, հոգևոր ֆեոդալների ընդարձակ կալվածների, գյուղերի, այգիների, մարգագետինների, խոտահարքների և նույնիսկ առանձին «գավառ»-ների և «աշխարհ»-ների մասին[3]։

Պատմիչը վկայում է, որ Ներսեսի ժամանակ կաթողիկոսարանն ուներ սեփական գյուղեր, կալվածներ Հայաստանի 15 գավառներում։

«Զայնու ժամանակաւ,— գրում է պատմիչը,— սուրբն Ներսէս շրջէր ընդ իւր ձեռական իշխանութիւնսն. զի հնգետասան գաւառ զայն ձեռական իշխանութեան ունէին իբրև սեպհական ի բնէ...։ Եւ յայն գաւառ գլխաւոր գաւառք այս էին՝ Այրարատ, Դարանաղէ, Եկեղեաց, Տարօն, Բզնունիք, Ծոփք, և որ ընդ մեջ նոցա և որ շուրջ զնոքօք»[4]։

Հովհան Մամիկոնյանը իր «Պատմութիւն Տարօնոյ» աշխատու-

---

[1] Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր, հ. 5, Երևան, 1941, էջ 519։

[2] Г. А. Езов. Внутренний быт древней Армении, СПБ, 1853, стр. 89.

[3] Փ. Բուզանդ, էջ 6, 9, 25, 31—32, 97, 105, 225, 228, և ուր.։

[4] Նույն տեղում, էջ 97։

թյան մեջ, հիշա է, խիստ չափազանցված, վկայում է, որ Տրդատ 3-րդ թագավորը և Գրիգոր Լուսավորիչը զորական ուժով խորտակում են Աշտիշատի հեթանոսական տաճարի 12 «մեծ», «ընդարձակ» ավանների դիմադրությունը և նրան ենթակա շուրջ 150.000 հարկատու և կախյալ բնակիչներին հարկատու դարձնում եկեղեցիներին[1]։

Գր. Լուսավորչի օրոք հիմնադրված սբ. Կարապետի եկեղեցին իր գերիշխանության տակ նույնպես ուներ 12 մեծ և հարուստ գյուղեր։

Եկեղեցական այս գյուղերը ոչ միայն վճարում էին «հաս», «պտուղ» և «տասանորդ» կոչված հարկերը, այլև պարտավոր էին եկեղեցու պահանջի դեպքում նրա տրամադրության տակ դնել համապատասխան քանակի զորական ուժեր։ Եկեղեցական գյուղերից մեկը, որն ուներ 3200 ծուխ, դուրս էր բերում 1040 հեծյալ, 840 աղեղնավոր, 680 տեգավոր, 280 պարսավոր զինվոր[2]։ Այս եկեղեցին իր հողային կալվածները և գույքային հարստությունն ավելի է ընդարձակում Մամիկոնյան և Կամսարական իշխանական-ֆեոդալական տների կողմից գյուղերի, այգիների, հողերի նվիրաբերման ճանապարհով։

5-րդ դարում Գյուտ կաթողիկոսը կառուցել է տալիս Գյուտի վանքը։ Գյուտ վանքի սահմանները շատ կարճ ժամանակամիջոցում հասնում են «...մինչև ի շրջանս գետոյն Աղամուոյ...»։ Գյուտ վանքը հանդիսանում էր ֆեոդալական-տնտեսական միավոր։ Նա ուներ ոչ միայն վարելահողեր, սեփական գյուղեր, այլև այգիներ, մանր և խոշոր եղջերավոր անասունների բազմաքանակ հոտեր։ Վանքի տնտեսությունը մշակում էին 1000 «արջառ», վանքն ուներ 12.000 ոչխար, 700 ուղտ, 600 ձի, 400 էշ, իսկ այգիները և պտղատու ծառերը մշակում էին «այգեդործս կատապանս 170»[3]։ Սակայն Գյուտ վանքը չմնաց Ստ. Օրբելյանի մատնացույց արած սահմանների շրջանակներում։ Վանքի շինարարությունը ավարտելուց հետո Սյունյաց դահերեց իշխանի կարգադրությամբ այնտեղ են մեկնում Աբլ-Աբաս և Վաչագան իշխանները, որոնք ոչ միայն որոշում, կամ ինչպես պատմիչն է նշում, «հատին» նրա սահմանները, այլև նվիրարերում են «դեօղք հինգս»[4]։

---

[1] Հովհ. Մամիկոնյան, էջ 109—112, Փ. Բուզանդ, էջ 7 և ուր.։

[2] Կ. Կոստանյանց, Հայոց վանքերը, էջ 24։

[3] Ստ. Օրբելեան, էջ 85—86։

[4] Նույն տեղում, էջ 86։

Մամիկոնյան Աշոտ իշխանը, «Բագրևանդեայ և Արշարունեաց» տերը, Գյուտ վանքին «հաստատ գրով» «ի սփյուռ վարդապետանց» նվիրաբերում է Արշարունիքում գտնվող՝ Ծնավակոս և Ծոփքում գտնվող՝ Ոսկոյն գյուղերը.

Հովհաննես Գաբեղյանը այս նույն վանքին նվիրում է իր «արծաթագին» Տղմակ գյուղը։ Դավիթ Սահառունի իշխանը 7-րդ դարում «հաստատ գրով» վանքին նվիրում է Հեղ գյուղը և «հարիւր կայթ հաց և հազար փաս գինի»[1]։ Սակայն Գյուտ վանքը եղակի չէր։ Վանանդ գավառում գտնվող Խաչի վանքի ընդարձակ տիրույթները կոռի և հարկադիր աշխատանքի միջոցով սպասարկում էին շրջակա «գեղաւր և ապարակաւր երկոտասանք»։ 7-րդ դարի հիշատակարաններից մեկում պահպանվել է խիստ ուշագրավ վկայություն այն մասին, որ արաբական արշավանքների նախօրեին հայոց եկեղեցիներն ու վանքերը «պայծառացեալ», իսկ «զդաս պաշտաւնէից և կրօնաւորաց բազմացեալ» էին։ Այս շրջանում վանքերն ու եկեղեցիները զարդարված էին «բազում ոսկովք և ակամբ պատուականաւք և արծաթեղէն սպասուք և մեծագին հանդերձիւք»։ Այս վանքից ետ չէին մնում, եթե չէին գերազանցում, Վաղարշապատի սբ. Կաթողիկեն, Եղվարդի սբ. Գրիգոր, «զվանքն Վահանայ և զվանքն Շապհոյ և զբազում ուրուս եկեղեցեաց»[2]։

Հայ հոգևոր դասի ավագանին, եկեղեցիները գնումների, գրավումների և նախարարական-ֆեոդալական դասի ներկայացուցիչների կողմից «հոգու փրկության» համար նվիրաբերությունների ճանապարհով ընդարձակում էին իրենց կալվածները, հողային տիրույթները, անասունների հոտերը։

Պետական Մատենադարանում պահպանված № 659 ձեռագրում Սահակ կաթողիկոսին վերագրած մի կանոնում ասված է. «Եւ իւրաքանչիւր ոք փութայ սրտիւ յօժարութեամբ զուրուս և զպատարագս և զընծայս իւր մատուցանել, իշխանք զգեղս և զդաստակերտս և զգանձս ոսկւոյ և արծաթոյ, այլ յանդաստանաց և ի պանարաց և ի հանդերձից պատուականաց. ոմանք վասն անձանց փրկութեան, կէսք յաղագս սիրելեաց և ծնողաց և զվախճանելոն հատուցանել հատուցումս զարդ և պայծառութիւն կազմելոց մարմնոց»[3]։

---

[1] Ալիշան, Այրարատ, էջ 41, 55, 111, Հայապատում, էջ 190, հմմտ. Գ. Հովսեփյան, Հիշատակարանք ձեռագրաց, էջ 7—8։

[2] Գ. Հովսեփյան, Հիշատակարանք ձեռագրաց, էջ 14—15։

[3] ՀՍՍՌ Պետական Մատենադարան, ձեռագիր № 659, էջ 222ա, հմմտ. նաև ձեռագիր № 6409, էջ 75ա։

Փ. Բուզանդը նկարագրելով Խոսրով Թագավորի, սրա Վաչե դպրավորի երկարատև ու համառ պայքարը կենտրոնախույս, խոշոր նախարարական-ֆեոդալական տների դեմ, վկայում է, որ Վաչե սպարապետը՝ «հարկանէր վանէր զազգն երկոսեան... զառնայր առ արքայն Խոսրով Թագաւորն Հայոց, և առ եպիսկոպոսապետն Վրթանէս»։ Խոսրով Թագավորը գահին մատուցած ծառայության դիմաց «...Նա զաւանն և զբուն զահոյից գեղն նահապետին Մանաւազենից եպիսկոպոսին Աղբիանոսի յեկեղեցի. զՄանաւազակերտ ամենայն սահմանօքն և զաւառական հանդերձ՝ որ շուրջ զնոքօք էր, որ կայ ի կողմանս գեղոյն Եփրատայ. Եւ եառն զբուն գեղն Որդունեաց որոյ անուն էր Որդորու. ուստի եպիսկոպոս Բասենու ամենայն սահմանօքն հանդերձ, որ ինքն իսկ է յերկրին Բասենու»[1]։

Թիլ գյուղը Բուզանդը կոչում է «գեղն եկեղեցւոյն»[2]։ Հայ եկեղեցու հողատիրությունը չտեսնված չափերի է հասնում Ներսես կաթողիկոսի օրոք։ Կաթողիկոսական կալվածները ընկած էին Հայաստանի տարբեր վայրերում։ Հայ եկեղեցու ֆեոդալական հողատիրությունն ահռելի չափերի էր հասել, եկեղեցին իր տրամադրության տակ ուներ տնտեսական խոշոր ռեսուրսներ և հիմնված այդ հզորության վրա, պայքարում էր քաղաքական իշխանության համար։ Հայտնի է, որ այդ պայքարը բորբոքվում է Պապի և Ներսեսի օրոք և պայքարից հաղթանակով է դուրս գալիս թագավորական իշխանությունը։ Առանձին գյուղեր ունեին նաև պալատական երեցները։

Արշակի Փառանձեմ կինը Մրջունիք երեցին նվիրում է «զգեղն՝ ուստի իսկ ինքն էր ի նահանգէն Տարօն գաւառէն, որում անուն Դոմկունք կոչին»[3]։ Հայ հոգևոր դասի սեփական, ժառանգական գյուղերի մասին կան նաև այլ կարգի վկայություններ։ Փ. Բուզանդը նկարագրելով Արիստակես եպիսկոպոսի թաղման ծիսակատարությունը գրում է, որ նրա մարմինը «տարան... ի Ծոփաց գաւառէ, և եդին զնա յեկեղեաց գաւառի ի Թիլն ասանի, ի կալուածս Գրիգորի հօրն իւրոյ»[4]։ Ակնհայտ է, որ հոգևոր դասի հողային տիրույթները անցնում են ժառանգաբար՝ հորից որդուն։

Վրթանեսին թաղում են «ի գեղն Թորդան ի Դարանաղեաց գաւառն»[5]։ Թորդան գյուղը հանդիսանում էր Գ. Լուսավորչի տան

---

1 Փ. Բուզանդ. էջ 9։

2 Նույն տեղում, էջ 33։

3 Նույն տեղում, էջ 105։

4 Նույն տեղում, էջ 6։ Հմմտ. Մ. Խորենացի. էջ 244։

5 Նույն տեղում, էջ 25. հմմտ. Մ. Խորենացի. էջ 269, Վ. Բարձրբերդցի. էջ 61, 64։

ժառանգական սեփական գյուղը։ Այստեղ են թաղում նաև Հուսիկին[1]։ Ներսես կաթողիկոսի մարմինը խախ գյուղից, որտեղ նա մահանում է, տանում են «ի Թիլն յաւանն յիւր գեղն»[2]։

Փ. Բուզանդը վկայում է, որ երբ մահանում է Փավստոս եպիսկոպոսի եղբայրը, սրա մարմինը թաղում են «ի բուն ի գեղն հայրապետին Ներսէսի, որում անուն Ամօքն կոչի»[3]։ Նույն պատմիչը ասում է, որ դահին մատուցած ծառայության դիմաց հայոց Արշակունի թագավորները «զմուրհակս գիւղաց կամ զագարակաց գրեալ և կնքեալ դնէին ի վերայ ողջինն Յոհաննու փոխանակ ընդ մեղաց իւրեանց»[4]։

Կաթողիկոսների, եպիսկոպոսների և հոգևոր ֆեոդալական դասի ավագանու սեփական, օտարելի, ժառանգական գյուղերի, ավանների մասին ուշագրավ վկայություններ է պահպանել Ղ. Փարպեցին։ Սահակ կաթողիկոսը իր շարժական և անշարժ կայքը ժառանգում է իր փեսա՝ Համազասպ Մամիկոնյանին։

Սահակը, ասում է Փարպեցին, չուներ արու որդի, բայց ուներ դուստր մի»։ Այս դուստրը ամուսնանում է Համազասպ Մամիկոնյանի հետ, որից ծնվում են երեք որդի՝ Վարդան, Հմայակ և Համազասպ Մամիկոնյանները։ Կաթողիկոսը իր մահից առաջ «ետ և կնքեաց սուրբ այրն... Սահակ զստացուածս գեօղից իւրոց և ագարակաց, և որ ինչ միանգամ էր իւր՝ ետ նոցա ի ժառանգութիւն և զաւակի նոցա մինչև ցյաւիտեան»[5]։ Ուրեմն, հոգևոր ֆեոդալների ժառանգական տիրույթները անցնում էին ոչ միայն արու, այլև իգական ժառանգներին և այն էլ «ցյաւիտեան»։ Երբ մահանում է Սահակը, նրա մարմինը տանում են «յուր ի գեօղն, որ անուանեալ կոչի Օշական»[6]։

Սահակ կաթողիկոսի հսկայական չափերի հասնող հողային տիրույթների, սեփական ժառանգական գյուղերի մասին խիստ ուշագրավ վկայություններ է պահպանել Մ. Խորենացին։ Սահակը, ասում է Խորենացին, ամրաստանվում է պարսկական արքունիքի առաջ, ցանկանում է դուրս գալ պարսկական ծառայությունից. պարսիկները ոչ միայն պաշտոնաթող են անում հայրապետին, ոչ միայն նրա փոխարեն նշանակում են ոմն Շամուելի, այլև բռնա-

---

1 Փ. Բուզանդ, էջ 28։

2 Նույն տեղում, էջ 184, հմմտ. Վ. Բարձրբերդցի, էջ 68, 97։

3 Նույն տեղում, էջ 225։

4 Նույն տեղում, էջ 228։

5 Ղ. Փարպեցի, էջ 37։

6 Նույն տեղում, էջ 38։

դրավում են նրան պատկանող գյուղերի մեծ մասը և նրան թողնում են միայն «գեղջս սակաւս ի նորին տանէ»[1]։ Պատմիչը Սահակ կաթողիկոսի ժառանգական տիրույթն է համարում նաև Տարոն գավառի Աշտիշատ գյուղը[2]։

Սեփական գյուղեր և դաստակերտներ ուներ նաև Մեսրոպ Մաշտոցը։ Կորյունը տալով Սահակ կաթողիկոսի և Մեսրոպ Մաշտոցի գործունեության նկարագիրը, վկայում է, որ Մաշտոցն «երբեմն իջանէր առ ուստս տանն Գողթան՝ յառաջին դաստակերտն իւր»[3]։

7-րդ դարի մատենագիր Սեբեոսը վառ գույներով նկարագրել է Եղր կաթողիկոսի սեփական տիրույթները, աղահանքերը, նրանցից ստացած հսկայական եկամուտները։ Այս ստոր դավաճանը բյուզանդական կայսրությանը մատուցած ծառայության դիմաց ստանում է «զԱղցք, և զերրորդ մասն Կողբայ գին հաւատոյն»[4], Կողբի աղի հանքերի շահագործման համար Եղր կաթողիկոսը տարեկան ստանում էր 12.000 դահեկան մաքուր եկամուտ։

7-րդ դարի մի այլ մատենագիր՝ Հովհան Մամիկոնյանը, թողել է արժանահիշատակ վկայություններ եկեղեցիների, վանքերի մեծամեծ գյուղերի և ավանների մասին։ Քրիստոնեության մուտքից հետո, վկայում է պատմիչը, յուրաքանչյուրը ձգտում է կառուցել «զտէրունական» տաճարներ, նվիրում է նրանց «գեղս և աւանս մեծամեծս, որպեսզի պէտք վանացն...»[5] Հայաստանի վեց հարյուր քսան գավառներում կային քորեպիսկոպոսներ, քահանաների հոծ բազմություն, բազմաթիվ վանքեր և եկեղեցիներ իրենց ընդարձակ կալվածներով։ Գր. Լուսավորիչն, ասում է պատմիչը, պատվիրում է հոգևոր դասի ներկայացուցիչներին, թե «զամենայն երկիրդ Եկեղեաց և Հարքայ ձեզ առաջի առնեմք. յոր վիճակ (այստեղ կարողության իմաստով է—Ս. Հ.) և բնակիջիք ձեզ եղիցի. և որք զկնի ձեր, որչափ կենդանի էք դուք և մեք»[6]։

Վահան Մամիկոնյանը Գլակա Վանքի սուրբ Կարապետի եկեղեցու 12 գյուղերը աղատում է հարկերից։ «Յետ վախճանելոյ Մուշեղայ նստաւ Վահան իշխան Մամիկոնէից տանն... և երկոտասան

---

[1] Մ. Խորենացի, էջ 350։ Հմմտ. Ղ. Փարպեցի. էջ 24։

[2] Նույն տեղում, էջ 356։

[3] Կորիւն, Պատմութիւն վարուց և մահուան սրբոյ Մեսրոպայ վարդապետի մերոյ թարգմանչի, էջ 21։

[4] Սեբեոս. Պատմութիւն ի Հերակլն, էջ 296, հմմտ. Ալիշան. Այրարատ, էջ 121։

[5] Հովհան Մամիկոնյան, էջ 42—43։

[6] Նույն տեղում, էջ 47—49։

դեղ ապատեաց եկեղեցւոյն՝ ջնջելով զանուանս նոցա յարքունական դիւանէն»[1]։

Հովհ. կաթողիկոսը վկայում է, որ Հովսեփ Փարպեցի կաթողիկոսի (795—806 թթ.) օրոք Դվինի թեմն ուներ «մեծամեծ գաստակերտիցն տան կաթողիկոսարանին՝ զԱրատաշատն և զԿատակերտն և զՀոռոմոց Մարդ՝ հանդերձ նոցունց ագարակօք...»[2]։

Հողևոր ֆեոդալների, եկեղեցիների սեփական, ժառանգական տիրույթները օրինականացվել են կրոնա-կանոնական որոշումներով, կանոնագրքերում տեղ գտած առանձին հոդվածներով։ Հայ ֆեոդալական եկեղեցին դարավոր պայքար է ծավալել իր ժառանգական իրավունքների անձեռնմխելիության, անկախության համար և շատ դեպքերում հասել է այն բանին, որ աշխարհիկ ֆեոդալները, մեծամեծ իշխանները և թագավորները ոչ միայն ճանաչել, այլև օրինականացրել են եկեղեցական ժողովների կողմից մշակված ու հաստատված կանոնները։

Սահակ կաթողիկոսի կողմից մշակված կանոնները, որոնք ունեն ուշադրավ ենթավերնագրեր՝ «թէ որպէս պարտի զկարգն հաստատուն պահել եկեղեցիս». կամ «նորին կարգ բահանայից ու ժողովրդականն և նոցին ժողովրդականաց հնազանդութիւն և կարգ ուղղութեան առ բահանայս», կամ «թէ որպէս սահմանեցաւ կարգ ուխտի և որոշումն վանաց», սրբագործում են եկեղեցու տիրույթները, նրա շարժական և անշարժ կայքը։ Եկեղեցու գույքի նկատմամբ ամեն մի ոտնձգության համար սահմանված է պատժի դաժան միջոցներ։ «Եթէ որ ուտէ եկեղեցւոյ իրս՝ տացի ընդ միոյն չորս...»[3]։

Սահակ կաթողիկոսը կոչ է անում հավատացյալներին իրենց հոգու փրկության համար եկեղեցիներին նվիրել «գեղս և գաստակերտս», բարոյում է չմոռանալ ասածս այն պատվիրանը, որտեղ ասված է, որ «անսայթաք» նվիրները ընդունելի են իր մոտ։ Դուք, դիմում է հայրապետը իր հպատակներին, ձեր գանձերը հանձնեք եկեղեցու հովանավորությանը, որտեղ այդ հարստությունները «ոչ ցեց և ուտիճ ապականեն և ոչ գողք տիան հատանեն և գողանան»[4]։

Հոգևոր ֆեոդալների սեփականությունը ժառանգական էր, անխախտ կերպով անցնում էր հորից որդուն։ Ժառանգական այս սիս-

---

[1] Հով. Մամիկոնյան, էջ 203։

[2] Հովհ. Դրասխանակերտցի, էջ 112։

[3] Կանոնք սրբ. Ժողովոյ եկեղեցւոյ, խմբագրեց Ա. Դավթեան, Թիֆլիս, 1904, էջ 106։

[4] Կանոնագիրք Հայոց, էջ 45—46։

ամեն, ինչպես երևում է Դվինի ժողովի որոշումներից, խախտված էր, կային հոգևորականներ, որոնք ապօրինի կերպով յուրացնում էին ուրիշի ժառանգությունը։

Ժողովը խիստ կերպով պատվիրում է հետևել հայ եկեղեցու հիմնադիր Գրիգոր Լուսավորչի կողմից մշակված այն պատվերին, որի համաձայն «որոյ շատ է ժառանգութիւնն, զշատն կերիցէ, որոյ սակաւ՝ զսակաւն կալցի...։ Արդ իւրաքանչիւր ոք զհարանց ժառանգութիւնն կալցի. և սրբոյ եկեղեցւոյ պաշտաման հպատակ կացցէ և վարդապետին ի հնազանդութեան՝ ամենայն յօժարութեամբ»[1]։ Այս նույն ժողովը իրավունք է տալիս հոգևոր ֆեոդալներին իրենց «զհող և զջուր» և «զամենայն շնորհս եկեղեցւոյն» ժառանգել նույնիսկ մերձավոր բարեկամներին, որդեգրված զավակներին, եթե նրանք արական ժառանգ չունեն։ Հոգևոր ֆեոդալների տիրույթները կոչվում էին «ժառանգութիւն» և ապատ էին «ի հարկէ և ի բեկարէ»[2]։

Ֆեոդալական հարաբերությունների հաղթանակի, արտադրության ֆեոդալական եղանակի տիրապետության պայմաններում աշխարհիկ ֆեոդալները, ազատները զանազան միջոցներով ձգտում էին տիրապետել եկեղեցիների կալվածները։

Դվինի ժողովում մշակված կանոնները դատապարտում են այն ազատներին, որոնք «զժառանգաւորս եկեղեցւոյ ջանան ի ծառայութիւն և ի ստրկութիւն արկանել», «ոմանք յազատաց ի վերայ վանաց իշխանութիւնս առնեն և զվանականս... կամին հանեն և հարկանին, զոր չէ արժան և օրէն»[3]։

Նիկիայի եկեղեցական առաջին ժողովը դատապարտում է այն երեցներին, որոնք «եկեղեցւոյ զինչ և իցէ, թէ գեղք կամ մարգք և կամ այլ ինչ։.. վաճառեցէք»։ Ժողովը իրավունք է տալիս հոգևորականներին եկեղեցու դույքը, հողը և ջուրը վաճառող երեցներին խիստ պատժի ենթարկել կամ «առնուլ զին» և հետ վերադարձնել ապօրինի վաճառված գյուղերն ու մարգերը, որոնք ի սկզբանե անտի եկեղեցու «բնիկ սեպհական» տիրույթներ էին։

Առաքելական երկրորդ կանոնում ասված է, որ պետք է պարզ կերպով որոշել, թե որն է եկեղեցու և եպիսկոպոսի աձնական սեփականությունը, որպեսզի եպիսկոպոսի մահից հետո որոշվի՝ թե

---

[1] Կանոնագիրք Հայոց, էջ 123։

[2] Նույն տեղում, էջ 125։

[3] Նույն տեղում, էջ 126—128։

[4] Ձեռագիր № 6409, էջ 35ա, հմմտ. ձեռագիր № 3706, էջ 60բ, 70ա. Ա. Դավթեան, Կանոնք սբ. ժողովոյ եկեղեցւոյ, պրակ Ա., էջ 104—105։

ո՞վ նրա սեփական ժառանգությունը ժառանգելու իրավունք ունի։ Այս կանոնը խստիվ կերպով արգելում է ստնձգություններ կատարել եկեղեցու «սեպհական ժառանգության» դեմ[1]։

Հոգևոր դասի ներկայացուցիչները պատմական աղբյուրներում ստանում են խիստ բնորոշ «ժառանգաւորք եկեղեցւոյ», «տոհմք քահանայից», «ժառանգութիւն քահանայական» անունները։

Արշակ Թագավորի մոտ, ասում է Բուզանդը, հավաքվում են մեծամեծ նահապետները, ազատները, նախարարները, պետերը, իշխանները, զորավարները, սահմանապահ նախարարները և պահանջում են «զի մնացորդաց տանն Գրիգորի» հանձնել հայրապետի ժառանգներին։ «Զի ամենեքեան ասէին ցարքայն. վասն զի նորոգեաց ասուած զթագաւորութիւն ձեր, այնպէս պարտ է զի յայնմ զաւակէ նորոգել զհոգեւոր նահապետութիւնն»։ Այս աշխարհաժողովի պահանջով Ներսեսը ընտրվում է կաթողիկոս և «վասն այսորիկ... արժանի եղև... աթոռոյն հայրապետաց և տեղւոյ հարցն իւրոց առաջնոյ»[2]։

Ասպուրակես եպիսկոպոսի մահից հետո նրա իշխանությունը ժառանգում է «...զՍահակ որդի մեծին Ներսիսի, որդւոյ Աթանագենի, որդւոյ Յուսիկան, որդւոյ Վրթանէսի, որդւոյ սրբոյն Գրիգորի»[3]։ Ակնհայտ է, որ Գրիգոր Լուսավորչի իշխանությունը և հայրապետական աթոռը ժառանգելու իրավունք ունեին միայն նրա տոհմից սերված ժառանգները։ Այս ժառանգական իրավունքն անխախտ է մնում նաև հետագայում։ Հայ նախարարները, պատմում է Խորենացին, թախանձում են Սահակ կաթողիկոսին դրավել կաթողիկոսի աթոռը և խոստանում են «զի պարսից արքայէն հաստատել զնա, մուրհակ ամենայնոյն կնքեալ՝ ազգաւ տալ թոռանց նորա զնոյն իշխանութիւն»[4]։ Հոգևոր ֆեոդալական դասի այս ժառանգությունն անձեռնմխելի էր. եկեղեցական կրոնա-կանոնական որոշումներով հայ եկեղեցին երկաթապատել էր իր ժառանգական իրավունքները և մշակել խիստ կանոններ այդ իրավունքը խախտողների դեմ։

Ներսես կաթողիկոսի և Ներշապուհ Մամիկոնյանի կանոնները կարգալույծ են անում այն բոլոր քահանաներին, որոնք խախտում են ժառանգական իրավունքը։ Նրանք պատվիրում են, որ եթե որևէ քահանա խախտի որոշված կարգը, ապա «զի բաց որոշեալ լիցի

---

1 Մելիք-Թանգյան. Եկեղեցական իրավունքը, Շուշի, 1905, հ. 1, էջ 101, 216,

2 Փ. Բուզանդ. էջ 57, 60։

3 Մ. Խորենացի. էջ 320։

4 Նույն տեղում, էջ 354։

ամենայն տամբ իւրով ի քահանայական ժառանգութենէն ամենեւին»[1]։ Դվինի ժողովի կանոնները արգելում են անզավակ ժառանգավորներին իրենց մերձավորներին կտակել եկեղեցու հողը, ջուրը և «զամենայն շնորհս եկեղեցւոյն»[2]։

Հայ ֆեոդալական եկեղեցու, վանքերի տիրույթները ազատ էին ամեն տեսակի հարկերից և ֆեոդալական պարտականություններից, իսկ հոգևոր դասերը իրենց քաղաքական իրավունքով դասված էին «ազատաց տոհմի» կարգը։ Եղիշեն դիմելով Հազկերտ 2-րդ թագավորին ասում է. «Նա և ի սուրբ եկեղեցւոյն, որ էր ազատ ի Քրիստոս ըստ կարգի նախնեացն մերոց ի սկզբանէ, և դու ընդ հարկաւ եդիր»[3]։ Հազկերտ 2-րդի կարգադրությամբ Հայաստան է գալիս Դենշապուհը, որը անցկացնելով աշխարհագիր, առաջին հերթին «զազատութիւն եկեղեցւոյ արկանէր ի ծառայութիւն»[4]։

Սահակ կաթողիկոսի կանոններում արդեն բողոքի ձայն է բարձրացվում այն մասին, որ եկեղեցու ազատությունը խախտվում է, ժառանգությունը խափանվում։

«Վասն այսորիկ ազատ յամենայն հարկապահանջ իշխանաց տահմանս ընկալաւ և անդս, և երիցագոյն պատիւ ժառանգեաց յուխտի սրբութեան եկեղեցւոյ»[5]։

Դվինի ժողովի կանոններում ասված է, թե «Երանելոյն Գրիգորի և սրբոյն Տրդատայ» հրամանով եկեղեցին «մանկունս ընդ ազատաց տոհմին են կարգեալ, և ազատ էին սրբոյ եկեղեցւոյ հող և ջուր»[6]։

Հայ ֆեոդալական եկեղեցին դարավոր պայքար է ծավալել ինչպես հայ թագավորների, այնպես էլ պարսկական և օտարերկրյա այլ բռնակալների դեմ՝ իր ժառանգական իրավունքի և ազատության համար։

Կան մի շարք այլ վկայություններ այն մասին, որ հոգևոր ֆեոդալների ֆեոդալական տնտեսությունները մշակվում էին կախյալ շինականների աշխատանքի շահագործման ճանապարհով։ Նրանց այգիները մշակում էին «այգեգործ կատարողները»։ Խոշոր եկե-

---

[1] Կանոնգիրք Հայոց, էջ 110։
[2] Նույն տեղում, էջ 125։
[3] Եղիշե, էջ 58։
[4] Նույն տեղում, էջ 31։
[5] Կանոնգիրք, էջ 35։
[6] Նույն տեղում, էջ 126։

գեղիները ունեին հարյուրավոր եղներ, կովերի, ոչխարների, այծերի հոտեր. ձիերի երամակներ։

Փ. Բուզանդը պահպանել է ուշագրավ վկայություն խաղ եպիսկոպոսի եղների մասին։ «Բայց ի ժամանակեան միոջ եկին գողք,— գրել է պատմիչը,— և գողացան զեղինս եկեղեցւոյն սրբոյ Խաղայ եպիսկոպոսին, առին և գնացին։ Իսկ ի միում աւուր աչք կուրացեալ եղեն գողացն, և ինքեանք յանիմաստս առ խարիսիս եկին ածին ի դուրս սրբոյն Խաղայ զամենայն եղինսն»[1]։ Անհերքելի է, որ այս բաղմաթիվ եղները պահվում էին եկեղեցու և Խաղի սեփական կալվածները մշակելու համար։ Ֆեոդալական եկեղեցիները և վանքերը ունեին գյուղատնտեսական մթերքների պահեստ—շտեմարաններ, որտեղ կուտակվում էին տնտեսություններից ստացած հացահատիկը, յուղը, մեղրը, պանիրը, ձկները և այլն։

Նույնիսկ Արշակունիների դինաստիայի անկումից հետո էլ, ֆեոդալական հայ եկեղեցին անվնաս դուրս եկավ քաղաքական մրցակցության բարդ իրադրություններից և պահպանեց իր ազատությունը, անկախությունը, հողատեփականատիրական անձեռնմխելի իրավունքները։ Արշակունիների անկումից հետո ֆեոդալական եկեղեցին հանդիսացավ այն միակ ուժը, որի շուրջը կենտրոնացան Արշակունիների ջախջախված տան մնացորդները, նախարարական-ֆեոդալական դասերի ներկայացուցիչները և հենվելով սրանց վրա եկեղեցին իր մենաշնորհը դարձրեց նաև երկրի արտաքին քաղաքականությունը։ Հայ եկեղեցին էր, որ դիվանագիտական հարաբերությունների մեջ էր մտնում և՛ Սասանյան Պարսկաստանի և՛ Բյուզանդական կայսրության հետ։ Ֆեոդալական եկեղեցին ոչ միայն իր ձեռքում էր կենտրոնացրել եկեղեցական, երկրի կուլտուր-լուսավորչական գործունեությունը, այլև իր դերիշխանությանն էր ենթարկել նախարարական-ֆեոդալական տների ներքին կյանքը, նրանց փոխհարաբերությունները և հանդիսանում էր երկրի իրավա-վարչական մենաշնորհ տերն ու տնօրենը՝ ամբողջ Հայաստանի նկատմամբ։

Հայ եկեղեցու գերիշխանությանն էր ենթարկվում Հայաստանի տերիտորիայում գտնված իրավաբանական և օրենսդրական ամբողջ սիստեմը։

Արշակունիների անկումից հետո Հայ կղերա-ֆեոդալական դասի ձեռքում ամենահզոր և ազդեցիկ գործոնը հանդիսանում էին եկեղեցական կամ «աղդային» ժողովները։ Եկեղեցու կողմից հրավիր-

---

[1] Փ. Բուզանդ, էջ 92։

ված ժողովներում անխտիր կերպով մասնակցում էին նաև աշխարհիկ ֆեոդալների ներկայացուցիչները՝ մեծամեծ ավագանին, ազատները, նախարարները։

Եկեղեցական կամ աշխարհիկ ժողովների գործունեությունը ընդգրկում էր հսկայական և տարբեր բնագավառներ։ Նրանք քննարկում էին ոչ միայն Եկեղեցուն վերաբերող հարցեր, այլև աշխարհիկ բնույթ կրող բազմաթիվ պրոբլեմներ, կարգավորում էին հողատիրության, հարկային սիստեմի բարդ ու կնճռոտ պրոբլեմները։

Այս բազմաթիվ ժողովներից առանձնապես պետք է հիշատակել Բագրևանդ գավառի Շահապիվան գյուղի V դարի և Դվինի 554—555 թթ. և 648 թ. հրավիրված ժողովները։ Այստեղ մշակվում են պատժիչ բազմաթիվ կանոններ, որոնք քաղաքացիական իրավունքի և պարտավորության ուժ են ստանում։ Մ. Թանդյանը խոսելով Շահապիվանի ժողովում մշակած դաժան և բիրտ կանոնների մասին գրել է. «Այս ժողովում եկեղեցական կանոնները ստանում են քաղաքացիական օրենքների պարտավորական ուժ, պատժի և տուգանքի տակ ձգելով օրինազանցներին։ Այստեղ սահմանվում են մարմնական պատիժներ ամենախիստ աստիճանի, որը բոլորովին համապատասխան չէ ավետարանի ոգուն և այդ պատիժները չեն երևում նույն ժամանակվա օտարերկրյա ժողովների կանոններում»[1]։

Շահապիվանի ժողովում մշակված կանոնների էությունն ու իմաստն ամենից ընորոշ կերպով հասկացել և գնահատել են Ստ. Տարոնեցին (Ասողիկը) և Վարդան Բարձրբերդցին։

«Եւ յետ մահուանն Սուրմակայ,—գրում է Ասողիկը.—ժողովեալ հայրապետացն Հայոց խնդրեալ զտին...ոմն Յովսէփ...։ Եւ հրամանաւ Վարդանայ նստուցին յաթոռ կաթողիկոսութեան, ամս Բ։ Մատարար ժողով ի Շահապիվանի, ուր զտուզանօք կանոնսն կարգեցին»[2]։ Այս վկայությունը պահպանվել է նաև Բարձրբերդցու մոտ։ «Եւ զտուրրն Յովսէփ ձեռնադրին կաթողիկոս, որ արար զժողովն ի Շապահիվանս ուր զտուզանաց կանոնն կարգեցին»[3]։

Այս ժողովին ներկա էին Հովսեփ կաթողիկոսը, քսան եպիսկոպոս, բազմաթիվ երեցներ, հոգևորականներ, ինչպես նաև մեծամեծ իշխաններ, գավառատերեր, գավառակալներ, տերեր, բոնա-

---

1 Մկիր-Թանգյան. Հայ եկեղեցական իրավունքը, հ. I, էջ 321, տմմ. Հ. Տաշյան. Վարդապետութիւն Առաքելոց, Վիեննա, 1896, էջ 183։

2 Ստ. Տարոնացի, էջ 78։

3 Վ. Բարձրբերդցի. էջ 75 (ընդգծումները մերն են— Ա. Հ.)։

վորներ, զորապլուխներ, նախարարներ, ազատներ, զորապետներ և այլ անձնավորություններ։

Բացի եկեղեցական կամ «ազգային» ժողովներից օրենսդրական և դատական օրգանների ֆունկցիաներ էին կատարում նաև կաթողիկոսներն ու ազգեցիկ եպիսկոպոսները։ Սրանց իրավունք էր վերապահված իրենց անուններով հրատարակել հատուկ կանոններ, որոշումներ։ Այսպես, օրինակ, Ներսես կաթողիկոսի, Ներշապուհ Մամիկոնյան եպիսկոպոսի, հայոց հայրապետներ Ներսեսի, Սահակի կողմից մշակված կանոններում կան բազմաթիվ հոդվածներ, որոնք կարգավորում են քաղաքացիական իրավունքի զանազան պրոբլեմներ։ Այս «աշխարհաժողովներում» մշակված խիստ, դաժան ու բիրտ օրենքներն ու կանոնները ունեն քաղաքական և սոցիալական մեծ նշանակություն Հայաստանի ինչպես տնտեսական կյանքի, այնպես էլ սոցիալ-դասակարգային հարաբերությունների պարզաբանման ու լուսաբանման համար։ Այդ ժողովներում մշակված կանոնները դուրս են մղել ֆեոդալական եկեղեցու շահերը շոշափելու շրջանակներից և ստացել են քաղաքացիական պարտավորության ուժ, տուժի, տուգանքի և հարկադիր աշխատանքների տակ դնելով ոչ միայն հանցապարտ հոգևորականներին, այլև ազատներին, նախարարներին, հատկապես շինականներին։ Այդ ժողովներում մշակվել, սահմանվել և հաստատվել են ամենախիստ ու դաժան այնպիսի պատիժներ, որոնք իրենց էությամբ ու բովանդակությամբ միանգամայն հակադիր են սուրբ եկեղեցու սրբազան ու ժողովրդական սկզբունքներին։

Ֆ. Էնգելսը նկատի ունենալով միջնադարյան Եվրոպայում հոգևոր դասի և օրենսդրական, և դատական գործունեությունը, գրել է. «Քաղաքականությունն ու իրավագիտությունը, ինչպես և մնացած բոլոր գիտությունները, հոգևորականների ձեռքում աստվածաբանության հասարակ ճյուղեր դարձան և նրանց հիմքում դրվեցին նույն սկզբունքները, որոնք տիրում էին աստվածաբանության մեջ։ Եկեղեցու դոգմաները միաժամանակ և քաղաքական աքսիոմաներ էին, իսկ աստվածաշնչի խոսքերն ամեն մի դատաբանում օրենքի ուժ ունեին։ Նույնիսկ այն ժամանակ, երբ արդեն կազմվել էր իրավաբանների առանձին դասը, իրավագիտությունը դեռ երկար ժամանակ մնում էր աստվածաբանության խնամակալության տակ։ Մտավոր գործունեության բոլոր բնագավառների վրա տարածվող աստվածաբանության գերիշխանությունը միաժամանակ այն հանգամանքի անհրաժեշտ հետևանքն էր, որ եկեղեցին դո-

թյուն ունեցող ֆեոդալական հասարակարգի ամենից ընդհանուր սինթեզն ու սանկցիան էր հանդիսանում»[1]։

Մեր աղբյուրները վկայում են, որ սկսած Գր. Լուսավորչի ժամանակաշրջանից, եկեղեցու ձեռքում էր գտնվում «գործակալութեան մեծի դատաւորութիւնն»[2]։

Ն. Ադոնցը հիմնվելով եկեղեցու «գործակալութեանն մեծի դատավորութեան» Փավստոսի վկայության վրա, ճիշտ կերպով նշում է, որ ընդհանրապես դատական իշխանությունը գտնվել է հոգևոր դասի ձեռքը դեռ քրիստոնեության մուտքից շատ առաջ։ «Դատական իշխանությունը, կամ արդարադատությունը,— նշում է Ն. Ադոնցը,— գտնվում էր մոգերի և ընդհանրապես հոգևորականության ձեռքում։ Քրիստոնեությունն ընդունելու հետ միասին, անցյալ եկեղեցուն և յուրաքանչյուր շրջանում նա կախված էր համապատասխան եպիսկոպոսից... Հայաստանում և Պարսկաստանում հոգևորականության միջամտությունը քաղաքական գործերին և նրա մեծ ազդեցությունը բացատրվում է մասամբ նրանով, որ նա ծառայում էր որպես արդարադատության օրգան»[3]։

Հասնելով տնտեսական և քաղաքական այդպիսի հզորության, ֆեոդալական եկեղեցիներն ու վանքերը ապատ էին զգում Հայաստանի տնտեսական և քաղաքական կյանքի բոլոր բնագավառներում։ Վանքերի, եկեղեցիների, կաթողիկոսների, եպիսկոպոսների և առանձին հոգևորականների մեծ մասը զբաղվում էր առևտրով, վաշխառությամբ, փոխտվությամբ, իսկ հոգևոր դասի «սրբազան հայրերը» վարում էին ցոփ ու այլասերված կյանք։ Այս երևույթն ինչպես Հին, այնպես էլ միջնադարյան Հայաստանում այնքան տարածված ու մասսայական է եղել, որ եկեղեցին ստիպված մշակել է խիստ կանոններ արծաթասիրության, աշխարհիկ ցոփ կյանքի, վաշխառության ու փոխտվության դեմ։

Այս կարգի վկայություններով խիստ հարուստ են մեր մատենագիրները, կանոնգրքերը, դատաստանագրքերը։ Սակայն մենք մեջ կբերենք միայն մի քանի վկայություններ։

«Կանոնք սրբոյն Գրիգորի առաքելոյն հայոց» Գ հոդվածն արգելում է քահանաներին արծաթը վարձով տալ. «Քահանայ, որ զարծաթ իւր ի վարձու տայ, մերժեսցի յեկեղեցւոյ»[4]։

---

[1] Էնգելս. Գյուղացիական պատերազմը Գերմանիայում, Երևան, 1940, էջ 45—46։

[2] Փ. Բուզանդ, էջ 31, հմմտ. նաև Մ. Խորենացի, էջ 350, Եղիշե, էջ 32։

[3] Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, стр. 447.

[4] Կանոնգիրք հայոց, էջ 9։

Հայոց հայրապետ ս. Սահակն իր կանոններում խիստ կերպով դատապարտում է այն հոգևորականներին, որոնք ոչ միայն «զհարկըս... պահանջել...», այլև «ապահովեմամբ գոսկոյ և գարծաթոյ մթերս փափագիցէ մթերել...»[1]։

Հովհան Մանդակունին իր կանոններում սպառնում է կարգալույծ անել այն բոլոր հոգևորականներին, որոնք «... ի գնել կամ ի վաճառել կրթեսցին», կամ «իշխանութեամբ իշխանաց վարձեսցին՝ հարկապահանջս լինելով և յոստիկանս կարգել աշխարհական զերծոց... այնպիսիք մի լիցին քահանայք, այլ աստուածախարք... ասունք նոցա որպէս մեհեանք դիւաց»[2]։

Մ. Խորենացին իր «Ողբ»-ում պախարակելով Հայաստանի բոլոր դասերին և առանձնապես հոգևորականներին, նշում է, որ «վարդապետք տխմարք և ինքնահաճք... արծաթով ընտրեալք և ոչ Հոգւով ոսկեսէրք, նախանձոտք, թողեալ զհեզութիւն... և զայլք նզեալ զիրեանց հօտս զիշատելով։

Կրօնաւորք կեղծաւորք, անձնացոյցք, մնափառք, պատուասէրք, քան թէ աստուածասէրք»[3]։

Ղազար Փարպեցին մեղադրելով հոգևոր դասին նշում է, որ նրանք «փառաց աշխարհիս ձգտին ի պատիւն յանգղնութեամբ, որք են արծաթասէրք առաւել, քան աստուածասէրք»[4]։

Եկեղեցական ժողովներում մշակված կանոնները ալլասերված, արծաթասեր, քան աստվածասեր, կաշառակեր և վաշխառու հոգևորականներին դատապարտելուց հետո խորհուրդ են տալիս, որ նրանք օրինակ վերցնեն այն հոգևորականներից «որոց մաքուր են միտք յարծաթասիրութեան սիտէ, և ձեռք իւրեանց ի կաշառոյ...»։

Արծաթասիրությունն այնքան հարգի էր «սրբազան հայրերի» աշխարհում ու շրջապատում; որ նրանց վրա ոչ մի խիստ օրենք ու պատիժ ազդեցություն չէր թողնում։ Նրանք իրենց արծաթը տոկոսով են տալիս և «տոկոսեօք պահանջիցեն» և մոռանում են «զբարբառ աստուածնղեն դրոց, որ ասէ, թէ զարծաթ իւր ի վարձու նա ոչ տայէ...»[6]։

Հովհան Ոսկեբերանը դատապարտելով իր էպոխայի «գող և աւազակ զայլ և ապականիչ» հոգևորականներին, նրանց կոչում է

---

[1] Կանոնգիրք հայոց, էջ 19։

[2] Նույն տեղում, էջ 90, հմմտ. Ձեռագիր, N 2677, էջ 232ա։

[3] Մ. Խորենացի. էջ 363—364։

[4] Ղ. Փարպեցի. էջ 34։

[5] Կանոնգիրք հայոց, էջ 15—16, 19։

[6] Ձեռագիր, N 6409, էջ 46ա, 48բ, 53ա, 54բ, 63բ։

«գայլք հօտապետք»։ Դուք, դիմում է նա հոգևոր դասին, մոռացել եք աստծու և Քրիստոսի պատվերները, մտածում եք, թե ինչ էանապարհով կարելի է ընդարձակել ոսկին ու արծաթը, բազմացնել «...երիվարաց և ջորւոց և արօրաձիգ եղնաց և հօտից և խաշնաց...» թիվը։ «Արծաթ ձեր բազմացաւ,— շարունակում է նա,— և բանն նուազեցաւ։ Դոյք ձեր աճեցին և համարձակութիւնն լռեաց։ Անբանիցն հոյլք բազմացան և բանաւոր ձեր հօտքն դիշատեցան»[1]։

Հայ ֆեոդալական եկեղեցու, վանքերի և հոգևոր դասի ընչաքաղցությունը, արծաթասիրությունը և ոսկիներ կուտակելու տենչանքը, առևտրա-վաշխառուական գործարքները, խարդախությունները, փոխտվությունները, դրամական նշանների կեղծումներն ու այլասերված բարքերը առանձնապես հատուկ են միջնադարյան հոգևոր դասին, այսինքն պատմական այն էպոխային, երբ արագ թափով աճում էին քաղաքները, քաղաքային ճոխ կյանքը, առևտուրը, ապրանքափոխանակությունն ու դրամական շրջանառությունը։ Ֆեոդալական հայ եկեղեցին և հոգևոր հայրերը ոչ միայն հետ չէին մնում այդ գործարքներից, այլ շատ բաներով գերազանցում էին աշխարհիկ ֆեոդալներին և նոր բարձրացող առևտրական դասերին։

Այսպիսով, աշխարհիկ ֆեոդալական «հայրենիք» կոչված մասնատիրական հողերի կողքին բարձրանում են հոգևոր ֆեոդալական տիրույթները։ Այս տիրույթները որոշ խախտումներով պահպանվում են արաբական և բյուզանդական գերիշխանությունների ժամանակ, իսկ երբ Հայաստանում ստեղծվում են սոցիալ-տնտեսական նախադրյալներ, երկրի քաղաքական միավորման համար, հայկական բազմաթիվ վանքերն ու եկեղեցիները ավելի մեծ չափերի են հասցնում իրենց տիրույթները՝ հատկապես Բագրատունիների և մասնավորապես Զաքարյանների շրջանում, որոնց և կանդրադառնանք մեր աշխատության երկրորդ հատորում։

---

1 Կ. Կոստանյանց, *Հայոց վանքերը*, էջ 20—21։

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՇԱՀԱԳՈՐԾՎՈՂ ԴԱՍԵՐԸ. ՆՐԱՆՑ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՂ-ՖԵՈԴԱԼԻԶՄԻ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

1. ՍՏՐՈՒԿՆԵՐ

Ստրկատիրական հասարակական-տնտեսական ֆորմացիայի, վերջինիս մեջ ստրուկների դերի ու նշանակության հետազոտության գիտական-մարքսիստական պատմությունը մշակեցին միայն մարքս-լենինյան մեթոդոլոգիայով զինված սովետական պատմագրության ներկայացուցիչները։

Սովետական արևելագետները առաջին անգամ ուսումնասիրեցին և հրատարակեցին բազմաթիվ աշխատություններ նվիրված Հին Արևելքի երկրների էկոնոմիկայի, հողի համայնքային և մասնավոր սեփականության, ոռոգման սիստեմի, արտադրողական ուժերի, արտադրական հարաբերությունների, արևելյան ստրկատիրության և սրանց հետ առնչվող բազմաթիվ սոցիալական ու տնտեսական պրոբլեմների պատմությանը։ Այս բնագավառում անգնահատելի ծառայություն է մատուցել սովետական խոշոր արևելագետ ակադ. Վ. Վ. Ստրուվեն, որը բազմաքանակ և բազմատեսակ աղբյուրների ուսումնասիրության հիման վրա մշակեց արևելյան ժողովուրդների պատմության ընդարձակ դասընթաց։ Նա իր բազմաթիվ և հատկապես «Проблема зарождения, развития и разложения рабовладельческих обществ древнего Востока» *և* «История древнего Востока» *աշխատություններում ցույց տվեց, որ Հին Արևելքում հասարակությունը բաժանված է եղել երկու հակամարտ դասակարգերի՝ ստրուկների և ստրկատերերի, որ հին արևելյան երկրները նույնպես անցել են հատուկ կամ արևելյան տիպի ստրկատի-*

բական հասարակական ֆորմացիայով[1]։ Այս նույն տեսակետը պաշտպանում է նաև պրոֆ. Վ. Ի. Ավդիևը իր «История древнего Востока» աշխատության մեջ։

Հեղինակը ելակետ ունենալով մարքսիզմ-լենինիզմի կլասիկների այն դրույթը, որ նախնադարյան համայնական կարգերի համեմատ ստրկատիրական հասարակարգը հանդիսանում է ավելի առաջադիմական և օրինաչափ երևույթ, որ այդ հասարակության բնորոշ գծերն են «հարուստներ և չքավորներ, շահագործողներ և շահագործվողներ, լիիրավներ և իրավազուրկներ, դասակարգային դաժան պայքար նրանց մեջ», ցույց տվեց, որ Հին Արևելքի ժողովուրդները անցել են արևելյան տիպի ստրկատիրական ֆորմացիայի ժամանակաշրջանը[2]։

Պրոֆ. Պ. Յա. Լյաշչենկոն իր «История народного хозяйства СССР» աշխատության առաջին հատորում զարգացրել է այն դրույթը, որ ինչպես Հին Արևելքի բոլոր երկրները, այնպես էլ Հայաստանը, Սելևկյան դինաստիայի տիրապետության էպոխայում, հանդիսանում էր «...տիպիկ ստրկատիրական պետություն։ Թագավորը հանդիսանում է «թագավորական ստրուկների» ձեռքով մշակված խոշոր լատիֆունդիաների ամենամեծ տերը։ Ստրուկների աշխատանքով վարվում էին թագավորական տնտեսության բոլոր ճյուղերը։ Նախկին ցեղական և տոհմային ավագանին հանդես էր եկել որպես հողատեր-ստրկատերերի դասակարգ՝ իր ձեռքում կենտրոնացնելով խոշոր լատիֆունդիաներ և մեծաքանակ ստրուկներ»[3]։

Այս նույն տեսակետը պաշտպանում են նաև «ՍՍՌՄ պատմություն» ԲՈՒՀ-ական դասագրքի հեղինակները[4]։

Հայ ժողովրդի պատմության մասնագետները ստրկատիրական հասարակական-տնտեսական ֆորմացիայի նկատմամբ պաշտպանել են երկու իրարամերժ կարծիքներ։ Հայ կղերա-ֆեոդալական պատմագրության բոլոր ներկայացուցիչները, առանց բացառության, ժխտել են ստրկատիրական կացութաձևի առկայությունը Հին Հայաստանում։ Բուրժուական և լիբերալ բուրժուական պատմագրու-

---

1 В. В. Струве, Проблема зарождения, развития и разложения рабовладельческих обществ древнего Востока, М.—Л., 1934. Его же, История древнего Востока, Москва, 1941.

2 В. И. Авдиев, История древнего Востока, Огиз, 1948, стр. 4.

3 П. Я. Лященко, История народного хозяйства СССР, т. I, 1939, стр. 44.

4 История СССР, т. I, 1949, стр. 28.

թյան ներկայացուցիչներ Ս. Բահաթրյանը, Ա. Գարագաշյանը, Հ. Մուսայելյանը, Ն. Ադոնցը, Լևոն չնայած ընդունել են ստրուկների առկայությունը Հին և նույնիսկ միջնադարյան Հայաստանում, սակայն նույնպես ժխտել են ստրկատիրական հարաբերությունների առկայությունը Հայաստանում։

Սովետահայ պատմագրության ներկայացուցիչները իրենց հերթին բաժանվում են երկու մասի, այսպես, օրինակ, պրոֆ. Խ. Սամուելյանը, ակադ. Հ. Մանանդյանը ընդունելով ստրկության լայն տարածումը Հին Հայաստանում, միաժամանակ բացատրել են այն որպես առանձին ֆորմացիա։ «Ի հարկէ,—գրել է ակադ. Հ. Մանանդյանը,—խոսք անգամ չի կարող լինել, որ իբր թե Հին Հայաստանում գոյություն չեն ունեցել ստրուկներ և որ Հայաստանն այդ տեսակետից բացառիկ մի երկիր է եղել Մերձավոր Արևելքում։ Ստրկությունը համատարած ընդհանուր մի երևույթ էր հին աշխարհում, ուստի և ինքնըստինքյան հասկանալի է, որ բացառություն չէր կարող կազմել նաև Հին Հայաստանը... Ստրկությունը Հին Հայաստանում չի կարող, անշուշտ, համեմատվել իր ծավալով և իր տնտեսական նշանակությամբ Հին Հունաստանի կամ Հռոմի ստրկության հետ, ուր ստրուկները կազմում էին բնակչության ստվար մեծամասնությունը և գլխավոր արտադրող ուժերն էին ոչ միայն արդյունագործության մեջ, այլ նաև գյուղատնտեսության»[1]։

Ակադ. Հ. Մանանդյանը ստրկության, ստրուկների աշխատանքների բնույթի, նրա գրաված տեղի և դերի մասին անդրադառնում է նաև իր հետագա աշխատություններում։ Նա մերժում է այն հետազոտողների կարծիքը, որոնք «մատնացույց են անում», որ Հայաստանում Տիգրան 2-րդի օրոք «տնտեսությունը խարբսխված է եղել, գլխավորապես, ստրկական աշխատանքի շահագործման վրա»։ Նոր կոնցեպցիայի կողմնակիցները, շարունակում է հեղինակը, աշխատում են իրենց դրույթները ապացուցելու համար մատնացույց անել, որ «այս ժամանակաշրջանում Հայաստանում գոյություն են ունեցել բազմաթիվ ագարակ-լատիֆունդիաներ, ստրկատիրական դաստակերտ կոչված կալվածներ, ստրկատիրական տաճարական տնտեսություններ և հելլենիստական տիպի ստրկատիրական քաղաքներ»[2]։

---

[1] Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը Հին Հայաստանում, էջ 233, 239—240։

[2] Я. А. Манандян. Проблема общественного строя доаршакидской Армении. (См. «Исторические записки», т. 15, за 1945 г., стр. 3).

Այս պնդումները, հեղինակի կարծիքով, «հիմնված են ոչ թե սկզբնաղբյուրների հաստատուն տեղեկությունների, այլ «ագարակ», դաստակերտ» և «հիերոդուլ» (ἱεροδούλος) տերմինների սխալ մեկնությունների վրա, կամ ընդհանուր, չհիմնավորված նկատառումների վրա, որոնք չեն կարող համարվել համոզիչ ու ընդունելի»։

Ակադ. Հ. Մանանդյանը նույնպես գտնում է, որ «Արտաշեսյան շրջանի հայ թագավորները, ինչպես և խոշոր հայ կալվածատերերը, պետք է ունեցած լինեին և ագարակներ և դաստակերտ-կալվածներ», բայց այս տնտեսությունները «դեռևս չէին ներգրավված լայն առևտրի մեջ», նրանք գերազանցապես արտադրում էին սպառողական կարիքների համար։ Այս տնտեսությունները, ինչպես ստրկական աշխատանքի վրա հիմնված լատիֆունդիական տիպի տնտեսությունները, ունեին գյուղատնտեսական բնույթի խոշոր ձեռնարկություններ և չէին կապված լայն շուկաների հետ։

Հեղինակի կարծիքով, «Հայաստանում, ինչպես և ընդհանրապես Արևելքում՝ զարգացած է եղել գլխավորապես տնային ստրկությունը», իսկ արտադրության մեջ գերիշխող դեր է խաղացել ոչ թե լատիֆունդիական խոշոր կալվածատիրությունը և մասսայական ստրկությունը, այլ գլխավորապես համայնքային հողատիրությունը և գյուղացիությունը։ Ամփոփելով իր համառոտ տեղեկությունները ստրուկների, լատիֆունդիաների, ագարակների և դաստակերտների մասին, հեղինակը եզրակացնում է. «Աղբյուրների ուշադիր քննությունից, ինձ թվում է, դժվար չէ հետևցնել, որ Մոնոֆոնյան շրջանի տոհմային հասարակությունից զարգացել էր Հայաստանում, ինչպես միանգամայն ճիշտ եզրակացրել է Ադոնցը, ոչ թե ստրկատիրական, այլ ֆեոդալական կամ ճորտական հասարակարգը»[1]։ Հեղինակը այս շրջանը գնահատել է որպես «նախնական ֆեոդալիզմի շրջան»։ Անկասկած է, որ հեղինակի մի շարք դրույթները, այսինքն, որ Արևելքում ստրկատիրական հարաբերությունները չաճեցին մինչև անտիկ ստրկության աստիճանը, որ ագարակ-դաստակերտները միայն ստրուկների աշխատանքի վրա հիմնված և լայն շուկաների հետ կապված խոշոր տնտեսություններ չէին, այլ արտադրում էին գերազանցապես սպառողական պահանջներ բավարարելու համար, մեզ համար ընդունելի են։ Սակայն նրա այն դրույթը, որ Արտաշեսյան շրջանում կային «խոշոր կալվածաներեր», որ «գյուղացիությունը որոշ չափով կարող էր

---

[1] Հ. Մանանդյան. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա. Երևան, 1945, էջ 160—162, հմմտ. նույնի՝ Տիգրան Բ-րդը և Հռոմը, 1940, էջ 5[illegible]

Հորատացված լինել», որ «Քսենոֆոնի շրջանից» սկսած Հայաստանում գարգացել էր ոչ թե «ստրկական, այլ ճորտական կամ ֆեոդալական հասարակարգը», միանգամայն անընդունելի է և պատմական փաստերով չհաստատված ու չպատճառաբանված։

Այս տեսակետն ավելի բացորոշ պաշտպանել է պրոֆ. Խ. Սամուելյանը։ Պրոֆ. Խ. Սամուելյանն իր «Ստրկությունը Հին Հայաստանում» ընդարձակածավալ հոդվածում և «Հին հայ իրավունքի պատմությունը» աշխատության մեջ առաջինն էր, որ պատմական հարուստ նյութերի վրա ցույց տվեց ոչ միայն ստրուկների առկայությունը Հին Հայաստանում, նրա աղբյուրները, այլև ստրուկների տեղն ու դերը երկրի տնտեսական կյանքում։

Սակայն հավաքելով, մշակելով և շրջանառության մեջ դնելով ստրուկների վերաբերյալ ինչպես աղբյուրային, այնպես էլ օտար ծագում ունեցող պատմական կարևոր փաստեր և նյութեր, պրոֆ. Խ. Սամուելյանը աշխատեց հաշտեցման եղը սահմանել մի կողմից Հին Հայաստանում ստրուկների առկայությունը ապացուցող փաստական նյութերի և մյուս կողմից բուրժուական պատմագրության այն դրույթի միջև, որ Հին Արևելքում ֆեոդալիզմը անընդհատ էր, հավերժ ու անփոփոխ[1]։

Պրոֆ. Ա. Աբրահամյանն իր «Հայ ժողովրդի պատմության պերիոդիզացիայի հարցի շուրջը» հոդվածում նույնպես անդրադարձել է ստրկության պրոբլեմին, ստրուկների աղբյուրների և սրանց տեղին ու դերին Հին Հայաստանի տնտեսական և հասարակական կյանքում և հանգել է այն եզրակացության, որ Հայաստանում ստրկությունը կազմել է արևելյան տիպի հասարակական ֆորմացիա[2]։

Եվ վերջապես, պատմական գիտությունների դոկտոր Ս. Տ. Երեմյանը՝ իր «О рабстве и рабовладении в древней Армении» և «Опыт периодизации истории Армении эпохи феодализма» հոդվածներում ոչ միայն Արտաշեսյան, այլև Արշակունիների էպոխան բնութագրել է որպես ստրկատիրական կարգերի տիրապետության ժամանակաշրջան[3]։

---

[1] Պրոֆ. Խ. Սամուելյան, Ստրկությունը Հին Հայաստանում (տե՛ս ՀՍԽՀ Պատմության և Գրականության Ինստիտուտի «Տեղեկագիր», գիրք 2, 1937, էջ 87—140), հմմտ. նաև Հայ հին իրավունքի պատմություն, հ. Ա, էջ 273—274։

[2] Պրոֆ. Ա. Աբրահամյան, Հայ ժողովրդի պատմության պերիոդիզացիայի հարցի շուրջը, տե՛ս ԴԱ «Տեղեկագիր», № 2, 1947, էջ 36—38։

[3] С. Т. Еремян, О рабстве и рабовладении в древней Армении (см. ВДИ, 1950 г., № 1) Его же, Опыт периодизации Истории Армении эпохи феодализма («Вопросы истории», 1951 г., № 7).

Իր այս հոդվածներում և վերջերս պաշտպանած դոկտորական դիսերտացիայում, Ս. Տ. Երեմյանը ձգտում է ապացուցել, որ Հայաստանն ապրել է ստրկատիրական հասարակական-տնտեսական ֆորմացիայի ժամանակաշրջանը, որ «ազգարակ-դաստակերտները» ոչ այլ ինչ են, եթե «մասնատիրական տնտեսություններ», հիմնված տարբեր կատեգորիաների ստրուկների աշխատանքի շահագործման վրա։ Ս. Տ. Երեմյանը դտնում է, որ հայերենում կային տասից ավելի տերմիններ, որոնք իմաստավորում էին «ստրուկ» հասկացողությունը և արտահայտում էին ստրկատիրական հարաբերությունները։

Սակայն պատմական անառարկելի փաստերի ճնշման տակ հեղինակը ստիպված խոստովանվում է, որ ստրկությունը Հայաստանում կացութաձև էր, որ ստրկական կացութաձևին զուգընթաց գյուղերում գոյություն ուներ իր դարն ապրած նախնադարյան-համայնական կացութաձևը ի դեմս գյուղական համայնքների, որոնք իրենց պահպանողականության և անփոփոխականության ուժով դանդաղեցնում էին անցումն անտիկ ստրկատիրական հարաբերություններին, որ այստեղ առկա էին արևելյան տիպի ստրկատիրական հարաբերություններ, որ «Հայաստանում անցումը դեպի հունա-հռոմեական տիպի զարգացած ստրկությունը չավարտվեց ավելի պրոդրեսիվ ֆեոդալական կացութաձևի ուժեղացման հետևանքով»[1]։

Այս նույն տեսակետը պաշտպանված է «Հայ ժողովրդի պատմության» առաջին հատորում։ Խոսելով Արտաշեսյան դինաստիայի հայկական պետության բնույթի մասին, հեղինակները գրում են. «Այս շրջանի հայկական հասարակությունը հանդիսանում էր ստրկատիրական հասարակություն։ Սակայն Հայաստանում ստրկատիրական հարաբերությունները Հունաստանի և Հռոմի կլասիկ ստրկատիրության ձևով չարտահայտվեցին։ Հայաստանի հասարակական կյանքը, հողատիրությունը և հողամշակումը հետագա դարերում (կարդա Արտաշեսյան դինաստիայից հետո — Ս. Հ.) ընթացան ոչ թե ստրկատիրական հարաբերությունների խորացման, այլ ֆեոդալական հարաբերությունների առաջացման ուղղությամբ»[2]։ Այսպիսով, հետազոտողների ճնշող մեծամասնությունը ընդունելով ստրկատիրական հարաբերությունների, ստրկության կացութաձևի առկայությունը Հին Հայաստանում, միշտ էլ շեշտը դնում է արևել-

---

[1] С. Т. Еремян, О рабстве и рабовладении в древней Армении, стр. 25—26. Его же, Опыт периодизации истории Армении эпохи феодализма, стр. 52—53.

[2] Հայ ժողովրդի պատմություն, առաջին մաս, Երևան, 1951, էջ 51։

յան տիպի ստրկատիրական հարաբերությունների վրա։ Հետազոտողների մի մասը գտնում է, որ Հայաստանում ֆեոդալական հարաբերությունները ձևավորվել են տոհմային կարգերի, իսկ մյուս մասը՝ արևելյան ստրկատիրական հարաբերությունների քայքայման հիմքի վրա։

Անցյալի, և յավով պետք է նշել, նաև մեր օրերի շատ հետազոտողներ ուսումնասիրելով ֆեոդալական հասարակական տնտեսական ֆորմացիայի գենեզիսը, ֆեոդալական արտադրական հարաբերությունների ձևավորումն ու զարգացումը, հաճախակի աչքաթող են անում այն փաստը, որ չնայած աշխարհի ժողովուրդների մեծ մասը անցել է ստրկատիրական ֆորմացիայով, սակայն զարգացած ստրկատիրական հարաբերությունների հասան միայն խիստ սահմանափակ երկրներ։ Աշխարհի շատ երկրներում առկա էին ոչ զարգացած կամ խիստ սահմանափակ զարգացած ստրկատիրություն, միայն իրեն հատուկ ընտանեկան, նահապետական գծերով։ Արևելյան երկրներում և հատկապես Հին Արևելքում, Միջին Ասիայում, ստրկությունը, մնաց տնային, գերազանցապես սպասողական պահանջները բավարարող արտադրության ստադիայում։ Այս երկրներում ֆեոդալիզմը ծագեց և զարգացավ ոչ թե ստրկատիրական հասարակարգի արտադրության եղանակի հեղաշրջման և քայքայման պայմաններում և այդ հիմքի վրա, այլ անզարգացած, պրիմիտիվ ստրկատիրական հարաբերությունների և նույնիսկ նախնադարյան-համայնական և դյուղական համայնքների քայքայման հիմքի վրա։ Մարդկային հասարակությանը հայտնի հասարակական տնտեսական հինգ հիմնական ֆորմացիաներից միայն ստրկատիրական և ֆեոդալական ֆորմացիաներն են, որ չնայած իրենց տարբերությանը, միաժամանակ ունեն մի շարք ընդհանուր և համանման գծեր։

• Այդ ընդհանուր և համանման գծերն են մանր, խիստ սահմանափակ, արտադրության մասնատված եղանակ, արտադրության ըստ էության կոնսերվատիվ տեխնիկական բազա։ Ստրկատիրական և ֆեոդալական հասարակարգերին հատուկ է բնափակ տնտեսություն, շուկայական աննշան կապեր, թույլ զարգացած ներքին շուկա, խիստ պրիմիտիվ և սահմանափակ տարանքային արտադրություն և անզարգացած առևտուր։ Ստրկատիրական ու ֆեոդալական կարգերի իշխող դասերը՝ և՛ ստրկատերերը և՛ հողատեր ֆեոդալները յուրացնում են անմիջական նյութական բարիքներ արտադրողների ստեղծած ամբողջ կամ համարյա ամբողջ հավելյալ արդյունքները, արդիլակում են լայնացած վերարտադրության հնարավորություն-

ները։ Այս կարգերում պարզ վերարտադրությունն ուներ միայն մասնակի բնույթ, իսկ տնտեսության վերարտադրության հնարավորությունների զարգացման պրոցեսը ընթանում էր խիստ դանդաղ և բավարարում էր մեծամասամբ միայն հասարակության սպառողական պահանջները։

Այս ընդհանուր, շատ դծերով համանման պայմանների առկայությունը հնարավորություններ ստեղծեց ստրկության պրիմիտիվ սիստեմից կամ նույնիսկ նախնադարյան համայնական կարգերից, գյուղական համայնքների միջոցով, շրջանցելով զարգացած ստրկատիրական հարաբերությունները, անցնել ֆեոդալական հարաբերությունների ընթացքը։

Մարքսիզմ-լենինիզմի կլասիկները բազմաթիվ առիթներով նշել են, որ անտիկ «աշխատանքային» և արևելյան «տնային» ստրուկների իրավական, սոցիալ-տնտեսական կացության մեջ կան խիստ ընդգծված տարբերություններ։

«Ամենից առաջ,— գրել է Էնգելսը,— որպեսզի ստրկությունը դառնա հնարավոր, անհրաժեշտ է... արտադրության հայտնի աստիճան և մի շարք անհավասարություններ բաշխման գործում։ Այն բանի համար, որպեսզի ստրկության աշխատանքը դառնա ամբողջ հասարակության համար արտադրության իշխող եղանակ. հասարակությունը պետք է հասնի արտադրության զարգացման և առևտրի ու հարստության կուտակման ավելի բարձր աստիճանի»։

«Նախնադարյան համայնական կարգերում, համայնքային հողատիրության պայմաններում ստրկությունը բոլորովին գոյություն չուներ կամ թե խաղում էր օժանդակ երկրորդական դեր։ Այսպես էր հին գյուղական քաղաք Հռոմում։ Երբ, ընդհակառակը, Հռոմը հանդես եկավ որպես «համաշխարհային քաղաք», երբ հողատիրական իրավունքը կենտրոնացավ ավելի ու ավելի հարուստ սենատորների ձեռքը, նրա գյուղական բնակիչները դուրս քշվեցին ստրուկ բնակիչների կողմից»[1]։

Էնգելսը մի այլ առիթով գրել է. «Աթենքը կործանման դուռը հասցրեց ոչ թե դեմոկրատիան, ինչպես այն պնդում են միապետների առաջ քծնող եվրոպական դպրոցական պեդանտները, այլ ստրկությունը, որը ազատ քաղաքացու աշխատանքը անարգ բան դարձրեց»[2]։

---

1 Ֆ. Энгельс, Анти-Дюринг, 1932, стр. 130, 142.

2 Ֆ. Էնգելս, Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Երևան, 1948, էջ 158։ (Ընդգծումները մերն են—Ս. Հ.)։

Անտիկ ստրկատիրական հասարակությունում ստրուկի աշխատանքը ոչ միայն հանդիսանում էր ամբողջ հասարակության արտադրության հիմքը, այլև ստրկությունն այնտեղ կազմում էր բնակչության ճնշող մեծամասնությունը։ Էնգելսը՝ խոսելով աթենական ստրկատիրական հասարակության մասին, գրել է.

«Աթենքի ամենածաղկած շրջանում ազատ քաղաքացիների ընդհանուր քանակությունը, կանանց և երեխաներն էլ մեջը հաշվելով, բաղկացած էր մոտավորապես 90 հազար հոգուց, որոնց կողքին կային 365.000 երկսեռ ստրուկներ և 45 հազար ոչ-լիիրավ բնակիչներ—օտարականներ և ազատ արձակվածներ։ Յուրաքանչյուր հասունացած տղամարդ քաղաքացուն, այսպիսով, ընկնում էր առնվազն 18 ստրուկ և ավելի քան երկու ոչ լիիրավ մարդ»[1]։

Անտիկ ստրկատիրական պետություններում ստրկատերերը ձգտում էին ավելի և ավելի մեծ թվով ստրուկներ ձեռք բերել և նրանց օգտագործել որպես բանվորական ուժ, որպես «խոսող գործիքներ»։ Չնայած Հին Հունաստանում, Հռոմում ստրկությունը զարգանում էր արտակարգ արագ թափով, սակայն ստրկությունը Հին Հունաստանում ուներ այլ նշանակություն, քան ասենք Աթենքում կամ Հռոմում։ Նույնիսկ անտիկ ստրկատիրական հասարակություններում տարբեր կատեգորիայի ստրուկների համար գործ էին ածում բոլորովին տարբեր և սոցիալական այլ նշանակություն ունեցող մոտ 15 տերմին[2]։ Ավելին. անտիկ Հունաստանում սոցիալական բոլորովին տարբեր կացության մեջ էին գտնվում, քաղաքական տարբեր իրավունքներ ունեին և արտադրության մեջ այլ դեր էին խաղում պետական ստրուկները՝ հիերոդուլները, քան մասնավոր ստրկատերերին պատկանող ստրուկները։ Հին Հունաստանում կային նաև հելոտներ, պենեստներ, կլարոտներ, կոլոններ և այլ, կարգի հասարակական խավեր, որոնք ամրացված էին հողին ու կատարում էին դյուղացու աշխատանք։

Անտիկ ստրկատիրական այնպիսի զարգացած պետություններում, ինչպիսիք էին Հունաստանը և Հռոմը, ստրկությունը ներկայացնում էր արտադրության իշխող ձևը և՛ հողագործության, և՛ մանուֆակտուրայի, և՛ նավագնացության մեջ։ «Այլ բան է,— ասում է Էնգելսը,— արևելյան տնային ստրկատիրությունը. այստեղ ստրկությունն ուղղակի արտադրության հիմքը չի կազմում, այլ

---

[1] Ֆ. Էնգելս, Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, էջ 158—159։

[2] Я. А. Ленцман. О древнегреческих терминах, обозначающие рабов, (ВДИ, 1951, № 2, стр. 47—70).

անուղղակի որպես ընտանիքի բաղկացուցիչ մաս...»[1]։ Իսկ Մարքսը տարևելյան ստրկության տարբերիչ հատկանիշը համարում է անմիջական կենսական միջոցների արտադրությունը։

Վ. Ի. Լենինը իր «Լեկցիաներ պետության մասին» աշխատության մեջ խիստ սահմանադիծ է դնում անտիկ և ստրկության նահապետական ձևերի մեջ։

Ակադեմիկոս Բ. Դ. Գրեկովը առաջնորդվելով մարքսիզմի կլասիկների դրույթներով, իր «Крестьяне на Руси» աշխատության մեջ, անդրադառնալով ստրկատիրության արևելյան ձևերին, գրում է. «Հսկայական է տարբերությունը ստրուկների դրության մեջ Հռոմեական կայսրությունում և ստրուկների կացության մեջ այսպես կոչված «բարբարոսների» մոտ։ Ստրուկը Հռոմում արտադրության հիմքն էր. գերմանացիների, սլավոնների, հայերի, իբերների մոտ ստրուկը երբեք չնաղաց և չէր կարող խաղալ այն դերը, որովհետև այդ հասարակությունները գտնվեցան այլ պայմաններում, այնպիսի պայմաններում, որտեղ արտադրության մեջ սկզբում գլխավոր դերը պատկանում էր ազատ գյուղացու համայնականի աշխատանքին, իսկ հետագայում այդ նույն գյուղացուն՝ բայց արդեն ճորտացված։ Անտիկ ընթացաշրջանի հետ համեմատած այդ անկասկած մարդկային հասարակության պատմության մեջ առաջադիմական մեծ քայլ էր»[3]։

«Բոլոր «բարբարոսների» մոտ էլ,— շարունակում է Բ. Դ. Գրեկովը,— առկա էին միևնույն գծերը. նույն տոհմական կարգերը, տոհմական կարգերի նույն վախճանը, նույն գյուղական համայնքները, նույն կախվածությունը, ֆեոդալական հարաբերությունների աճման նույն պրոցեսը, նույն ճորտական իրավունքը, որին մենք հանդիպում ենք սլավոնների, հայերի, իբերների և Միջին Ասիական ժողովուրդների մոտ»[4]։

Այս նույն տեսակետը պաշտպանում և զարգացնում է պրոֆ. Վ. Ի. Ավդիևը իր վերոհիշյալ աշխատության մեջ։ Հին Արևելքում, հեղինակի կարծիքով, ժողովրդական տնտեսությունը ուներ գերազանցապես նատուրալ բնույթ, այստեղ դեռ շատ ուժեղ և կենսունակ էին համայնական կարգերի վերապրուկները։

---

[1] Ֆ. Էնգելս, *Բնության դիալեկտիկա, 1936, էջ 78։*

[2] Նույն, *Երկեր, հատ. 29, էջ 583։*

[3] Б. Д. Греков, Крестьяне на Руси, стр. 151.

[4] Б. Д. Греков, Борьба Руси за создание своего государства, М.—Л., 1942, стр. 14.

Համայնական կացութաձևի մնացորդները, գյուղական կենսունակ համայնքները անխոով կերպով շարունակում էին իրենց գոյությունը ոչ միայն Չինաստանում, այլև Հին Արևելքի այլ երկրներում։ Անդրադառնալով Հին Արևելքի ստրկության պրոբլեմին, պրոֆ. Վ. Ի. Ավդիևը գրում է՝ «...Ստրկությունը Հին Արևելքում զարգանում էր ծայրահեղ դանդաղորեն և այն դուրս չեկավ հնավանդ, պրիմիտիվ և մեծամասամբ տնային ստրկության շրջանակներից»[1]։

Արևելյան ստրկատիրական կարգերի այս առանձնահատկությունները նրան տարբերում էին անտիկ կլասիկ ստրկությունից, որտեղ ստրկությունն աճում ու զարգանում էր խիստ արագացած տեմպերով։ Արևելյան պետություններում արտադրողական աշխատանքը, ոչ այնքան մեծ չափերով, հիմնված էր ծայրահեղորեն դանդաղ զարգացող ստրուկների, որքան գյուղական համայնքների ազատ անդամների աշխատանքի շահագործման վրա։

Կ. Մարքսն անդրադառնալով այդ պրոբլեմին ուսուցանում է, որ Արևելքում գյուղական համայնքների առկայությունը արդելակեց ստրկության արագ զարգացմանը և հնարավորություն չտվեց, որպեսզի ստրկական աշխատանքը հանդես գար որպես արտադրության միակ և տիրապետող եղանակը։

«Ինչպես մանր գյուղացիական տնտեսությունը,— գրել է Մարքսը,—այնպես էլ անկախ արհեստային արտադրությունը, մասամբ արտադրության ֆեոդալական եղանակի բազիսն են կազմում, իսկ մասամբ էլ, նրա քայքայումից հետո, երևան են գալիս կապիտալիստական արտադրության կողքին։ Միաժամանակ նրանք կազմում են կլասիկ հասարակության տնտեսական հիմքը նրա գոյության ամենածաղկած շրջանում, երբ նախասկզբնական արևելյան համայնական սեփականությունը քայքայվել էր արդեն, իսկ ստրկությունը դեռ չէր կարողացել բիչ թե շատ զգալի չափերով տիրանալ արտադրությանը»[2]։

Զարգացման այս ուղիով է ընթացել նաև հայկական հասարակական կյանքը։ Այստեղ ևս, ինչպես արևելյան երկրներում, առկա էր միայն պրիմիտիվ, տնային, նահապետական ստրկությունը։ Այս առաջին եզրակացությունն է, որ մենք հանդում ենք պատմական սկզբնաղբյուրների հետազոտության հիման վրա։

Հայաստանում 5—2-րդ դարերում, նախքան մեր թվականությունը, արդեն քայքայվել էին նախնադարյան համայնական կար-

---

1 В. И. Авдиев, История древнего Востока, стр. 4, 6.

2 Կ. Մարքս, Կապիտալ, հատ. 1-ին, էջ 352, ծանոթություն 24։

գերը, այդ կարգերի քայքայման հիման վրա մի կողմից հանդես էին եկել գյուղական-երկրագործական, սեփականատիրական-տնտեսական կապերի վրա հիմնված համայնքները, մյուս կողմից ընտանեկան-պրիմիտիվ ստրկությունը։ Գյուղական համայնքների աճը կայությունը Հին Հայաստանում ոչ միայն ստրկելակում էր ստրկության աճն ու ընդարձակումը, այլև մասնավոր հողատիրության-ֆեոդալական հարաբերությունների զարգացումը։ Ինչպես Հին Արևելքի բոլոր երկրներում, այնպես էլ Հայաստանում բնակչության ճնշող մեծամասնությունը և անմիջական նյութական բարիքներ արտադրողները հանդիսանում էին ազատ համայնական գյուղացիները։

Պատմական աղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հին Հայաստանում ստրկությունը տարածված և ընդհանուր երևույթ էր, սակայն նա երբեք չհասավ և չէր կարող հասնել անտիպ, զարգացած ստրկատիրական հարաբերություններին, այլ մնաց արևելյան ընտանեկան նահապետական, անմիջական սպառման բարիքների արտադրության ստադիայում կամ «սքողված» վիճակում։ Ինչպես աշխարհի բոլոր երկրներում, այնպես էլ Հայաստանում ստրկության աղբյուրներն էին՝ ա) Պատերազմը և գերեվարությունը։ Պատերազմի միջոցով ռազմագերիներ ձեռք բերման և ստրկացման այդ եղանակը այնքան բնական և օրինական է համարվել, որ այն կարգավորվել է ոչ միայն իրավական, այլև եկեղեցական հատուկ կանոններով։ Հին կտակարանի հայերեն թարգմանության բնագրում մենք գտնում ենք բազմաթիվ վկայություններ ոչ միայն ռազմական ավարի, այլև պատերազմական գերիների բաշխման կարգի մասին։ Հրեաների և հայերի հին սովորության համաձայն, և ռազմական ավարից, և գերիներից բաժին էր տրվում թագավորներին, իշխաններին, տաճարներին, իսկ հետագայում քրիստոնեական եկեղեցիներին։ Պատերազմական ավարի և գերիների այս մասնահանումը կոչվում էր «հաս»։ Ահա այդ կարգի մի երկու վկայություն.

«Եւ առջիք հաս Տեառն յամենայն արանց պատերազմողաց յերթելոց ի պատերազմ ոգի մի ի հինգ հարիւրոց՝ ի մարդոյ և յանասնոյ և յարջառոյ և ոչխարէ և յայծեաց»[1]։

Այստեղ մասնահանումը մարդկանց և անասունների նկատմամբ ունի նույն հարաբերությունները՝ հինգ հարյուրից մեկը։

---

[1] Թիւք, ԼԱ 28 (բոլոր ընդգծումները մերն են—Ս. Հ.)։

«Եւ եղև կէս ասարին երթևլոցն ի պատերազմ՝ ի թուոյ ոչխարացն երեք հարիւր և երեսուն հազար և հօթն հազար և հինգհարիւր։ Եւ եղև հասն Տեառն յոչխարէ՝ վեց հարիւր և հօթանասուն և հինգ։ Եւ արջառ երեսուն և վեց հազար, և հասն Տեառն՝ հօթանասուն և երկու։ Եւ էշք՝ երեսուն հազար և հինգ հարիւր, և հասն Տեառն՝ վաթսուն և մի։ Եւ ոգիք մարդկան՝ վեշտասան հազար, և հաս ի նոցանէ Տեառն՝ երեսուն և երկու ոգիք»[1]։

Պատերազմի միջոցով ձեռք բերված գերիների մասին ընդարձակ վկայություններ կան մեր մատենագիրների մոտ։ Մ. Խորենացին վկայում է, որ երբ Ասորեստանի թագավորի որդի Պակարոսը հոր մահից հետո կատաղի պայքար է ծավալում գահի թշնամիների դեմ, գալիս է «... առ Բարզափրան նահապետ Ռըշտունեաց և սպարապետ Հայոց և Պարսից՝ խոստանայ հինգ հարիւր կին գեղեցիկ և հազար քանքար ոսկւոյ, զի օգնեսցէ նոցա՝ ընկենլով ի թագաւորութենէ Հրէից զՀիւրկանոս, և թագաւորեցուցանել զԱնտիոքոս»[2]։

Արտաշես թագավորի հրամանով, ասում է Խորենացին, Սմբատ սպարապետն «ամենայն զօրօքն Հայոց... երթեալ հնազանդէ զամենեսեան. բայց զերկիրն Կասրից աւերեալ՝ առաւել քան զԱրտաշեան գերի ածէ ի Հայս»[3]։

Նույն պատմիչը վկայում է, որ Արտաշեսի զորավար Սմբատը արշավում է Երվանդի քաղաքի վրա, բռնագրավում է հսկայական տվար՝ Երվանդի եղբոր՝ Երուազի դանձերը «...և ծառայս անձինս հինգ հարիւր, նա և զբնտիր բնտիր զանձուցն մեհենից՝ բերէ Արտաշիսի»[4]։

Մ. Խորենացին Հայկի նահապետական տոհմի բնիկ ազգաների կողքին հիշատակում է այլ տոհմերից պատերազմի միջոցով ձեռք բերված գերիների մասին։ Այդ կարգի գերիներին նա կոչում է «ընդոծիններ»[5]։

Պատերազմի միջոցով հսկայական չափերի հասնող ռազմագերիներ է ձեռք բերում նաև Տիգրան 2-րդը։

Ապպիանոսը նրա գերիների թիվը հաշվում է մոտ 300,000 մարդ[6]։ Ապպիանոսի այդ վկայությունը հաստատում է Մ. Խորե-

---

[1] Թիւր, ԼԱ. 36—40։
[2] Մ. Խորենացի, էջ 133։
[3] Նույն տեղում, էջ 182—183։
[4] Նույն տեղում, էջ 175։
[5] Նույն տեղում, էջ 33։
[6] Appianos, Mithrid., 67.

նային[1]: Պատերազմի միջոցով գերիների ձեռք բերման բազմաթիվ փաստեր մենք գտնում ենք Փ. Բուզանդի[2], Փարպեցու[3], Եղիշեի[4] և այլ պատմիչների մոտ: Ոչ միայն մեր հին մատենագիրները, այլև 7-րդ և նույնիսկ 12-րդ դդ. պատմիչներն ու օրենսդրքերը բազմաթիվ հիշատակություններ են թողել պատերազմական գերիների, նրանց թվի և բաշխման կանոնների մասին: Ա. Շիրակացին վկայում է, որ «ներսեհ Կամսարական որդի Արշաւրի, անուանակից և նախնի այսմ Ներսեհի, ի յաղթել պատերազմաւ ԲահլՃացն առնու գերի սաստիկ յոյժ. և հասեալ ի դուռն արքունի ընծայեցուցանէ թագաւորին Պարսից զհասարակ գերւոյն. և բուեալ զհասարակն՝ ևս ընծայէ որդւոյ արքայի զեաւրներորդ մասն. և հրաժարեալ ի նոցանէ, դառնայ յաշխարհն իւր և եկեալ ի տուն Դարիկպետի՝ յոյժ մեծարի ի նմանէ, ոչ որպէս զնախարար, այլ որպէս մի զմի ոք ի թագաւորաց. և սա տայ նմա զուրերորդ մասն գերւոյն. և եկեալ առ սպայապետն... տայ նմա զչորեքտասաներորդ մասն գերւոյն. և ևս յառաջ եկեալ՝ հասանէ յաշխարհ իւր, և ընդառաջ լինի նմա եղբայր իւր կրտսեր Հրահատ, և տայ նմա զերեքտասաներորդ մասն գերւոյն և ևս յառաջ եկեալ՝ ընդառաջ լինին նմա աղատք հայոց և տայ նոցա զիններորդ մասն գերւոյն. և եկեալ ի Վաղարշապատ՝ տայ ի սուրբ եկեղեցիսն զվեշտասաներորդ մասն գերւոյն. և եկեալ Սահակ աւագ եղբայր իւր՝ տայ նմա զքսաներորդ մասն գերւոյն. և իւր մնաց հինգ հարեւ և եաթանասուն անձն»[5]:

Մ. Դոշը իր «Դատաստանագրքում» վկայում է, որ գերիները թալանված և հափշտակված կայքի հետ բաժին էին հանվում ոչ միայն թագավորներին ու հոգևոր դասերին, այլև զորապետներին և զորքին: Եթե թագավորը անձամբ մասնակցում էր պատերազմին, ստանում էր գերիների կեսը, եթե ոչ՝ մեկ տասներորդ մասը: Պատերազմի միջոցով ձեռք բերված գերիների $^1/_{10}$—$^1/_{50}$ մասը մասհանվում էր եկեղեցուն, իսկ մնացած մասը բաժանվում էր զորապետներին և զորքին: «Բայց ասելի է,— գրում է Դոշը,— զօրինակ բաժանման գերւոյն և աւարին: Եթե պատահիցի երթալ յաւար թագաւորի ամենայն զօրօք... և աւար առեալ դարձցի, ոսկի գտեալ յաւարին թագաւորի լիցի...: Եւ գերւոյն և աւարին կէսն թագաւորի լի-

---

1 Մ. Խորենացի, էջ 130, 135, 175, 199, 200, 300 և ուր.:

2 Փ. Բուզանդ, էջ 120—144:

3 Ղ. Փարպեցի, էջ 50—51:

4 Եղիշե, էջ 127 և ուր.:

5 Ա. Արբանուշյան. Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 230:

ցի և տասնորդ իցէ յեկեղեցիս և ի կիսոյն զօրացն...: Իսկ երկ, չիցէ բազաւոր ընդ զօրս... և ի գերւոյն և յաւարէն տասանորդ բազաւորի. իսկ յեկեղեցիս յիսներորդիցեն»[1]:

բ) Սարկաւագության երկրորդ, ոչ պակաս կարևոր, ազգությունը հանդիսանում էր «ստրուկի պատուղը», ստրուկից ծնված երեխաները: Եթե նույնիսկ ստրուկը ամուսնանում էր ազատ քաղաքացու հետ, նրանից ծնված երեխաները համարվում էին ժառանգաբար ստրուկներ:

Այս երևույթը օրինականացված է Ասողիկան, Մ. Գոշի և Ս. Գունդստաբլի դատաստանագրքերում: Մ. Գոշի Դատաստանագրքում ստրուկից ծնվածի ստրկական վիճակը ձևակերպվել է հետևյալ կերպ. «...Ապա թէ տէր իւր տացէ նմա կին և ծնանիցի նմա որդիս և դստեր, կինն և որդիքն տեառնն նորա եղիցին...»[2]: Այդ նույն իմաստն ունի Սմբատ Գունդստաբլի Դատաստանագրքի ՃԻ հոդվածը: Այս մասին հատուկ կանոններ է պահպանել նաև Ասորական Դատաստանագիրքը:

«Եթէ ծառայ ազատի, և մնայ ընդ իշխանութեամբ տեառն իւրոյ անձնիշխան, և առնու կին յաղախնեաց տեառն զկնի ազատութեանն, և ծնանին ի նմանէ որդիս. ոչ ժառանգին զնա որդիք աղախնոյն, այլ ժառանգ լիցի նմա, որ ազատեցն զնա»[3]:

Փրկավճարով կարող էր ազատագրվել միայն ինքը՝ ստրուկը, իսկ նրա երեխաները մնում էին տիրոջ մոտ՝ որպես նրա սեփականություն: Մ. Գոշի «Դատաստանագիրքը» իրավունք է տալիս ստրուկին՝ «միայն ելցէ» ստրկությունից:

գ) Սարկաւագության կարևոր աղբյուրներից մեկն էլ «ստորին» դասին պատկանող ծառաների, աղախինների, վարձկանների ան ու վաճառքն էր:

Սարկաւագության էին վաճառում արտադրության միջոցները և հողակտորները կորցրած, սեփականազուրկ տնանկներին: Այս երևույթը այնքան տարածված էր Հին Արևելքում, որ Հին կտակարանը այն դատապարտում է որպես հասարակական չարիք: Հին կտակարանը պախարակում է չար, «անիրաւ» այն տերերին, որոնք այդ ճանապարհով ձեռք են բերում վարձկաններ, ստրուկներ: Կտակարանը պահանջում է տերերից, իշխաններից հրաժարվել այդ եղա-

---

[1] Մ. Գոշ, *Դատաստանագիրք*, էջ 311—312:

[2] Նույն տեղում, էջ 335:

[3] *Ասորական դատաստանագիրք: Ձեռագրերի համեմատությամբ լույս ընծայեց Ա. Ղլտճյան, Էջմիածին, 1917, Կանոն ԼԵ, էջ 17:*

նակով «եղբայրներին» ստրկացնելու մեթոդներից։ «Եթէ,— ասված է Հին կտակարանի հատվածներից մեկում,— տնանկնոցի ղեղբայր քո առ քեզ, և վաճառեսցի քեզ, մի ծառայեսցի քեզ զծառայութիւն ստրկի իբրև զվարձկան...։ Մի վաճառեսցի ի վաճառս ստրկի՝ և մի տառապեցուցիս զնա ընդ աշխատութեան»[1]։

Ղազար Փարպեցին Վահան Մամիկոնյանին գրած իր հայտնի «Թղթում» բողոքում է, որ տգետ և անուս հոգևորականները իրեն հայածում են այն եղանակով, ինչ մեթոդներով Եսավն ամբաստանում էր Հակոբին։

«Ի ձեռն նախանձու,— ասում է պատմիչը,— դրդռեալ Եսաւ ի վերայ Յակովբայ՝ մահ խորհէր։ Ի ձեռն նախանձու զանմեղն Յովսէփ մոլեգնութեամբ եղբայրքն ի ստրկութիւն վաճառեսցին»[2]։

Շահապիվանի ժողովում մշակված կանոններում ասված է. «Եթէ ոք կին յառնէ ելանիցէ, կալցեն և անդրէն յայր իւր տացեն, և մանաւանդ, որ վարձկանօք իցէ վարձեալ և ոչ բողոքաբար, թէպէտև վաճառեսցի և յաղախնութիւն կալցի»[3]։

Ներսես կաթողիկոսի և Ներշապուհ Մամիկոնյանի մշակած կանոններում կարդում ենք.

«Եդին ոմանք և զվաշխս զահեկանաց իւրեանց, կէսք վաճառեցին ընկերաց իւրեանց, որպէս ծառայս, և այլքն ետուն վարձանս կանանց իւրեանց ամբարշտեալք ի բռնութեան, անարժանութեամբ անձանց իւրեանց մեղան»[4]։

Հովհան Մանդակունու «Վասն փոխոց և վաշխից» ճառում կա հետևյալ դարձվածքը. «...Ի ժամ փոխոցն տալոյ զուարթերես կեղծաւորի. և յորժամ ժամադրութիւն վաշխիցն հասանիցէ, տեսանելով զչքաւորութիւն և զտարակուսութիւն պարտապանին՝ ոչ ողորմի. և ոչ երդմանն հաւատալ մաղթողին, ոչ խոնարհի յաղաչանս վարանեցելոյն. այլ դժոխեալ անխոնարհելի և անհաշտ, և իւր ծառայ պիտիխառուն նամարի փոխատուն»[5]։ Մ. Գոշը վկայում է, որ պարտապանները ստիպված մասնայարաբար վաճառում էին իրենց դուստրերին։ «Իսկ երէ պատանի ումեմ վաճառել զդուստր իւր ըստ որում և իցէ պատնաւոր յաղախնութիւն առնն հաւատացելոյ, մի՛ իբրև զա-

---

1 Ղևտ, ԻԵ, 34։

2 Ղ. Փարպեցի. էջ 188։

3 Կանոնգիրք հայոց, էջ 65, 108, 115 և ուր.։

4 Նույն տեղում, էջ 108։

5 Յովհաննու Մանդակունւոյ հայոց հայրապետի «Ճառք», Վենետիկ, 1860, էջ 65—66։

1131—15

դախին վնաս վանաւիցէ, զի թէ ոչ իցէ յաչս տեսան իւրոյ հաճոյ որում հաստատեցան, փրկեսցէ զնա հայր իւր»[1]։

դ) Սարկութեան աղբյուրներից է նաև հարկադրաբար սարկացումը։ Այս եղանակով սարուկներ ձեռք բերելու իրավունքը օրինականացված էր Շահապիվանի 447 և Դվինի 649 թթ. ժողովներում մշակված կանոններում։ Շահապիվանի ժողովում մշակված կանոնները իրավունք են տալիս ազատներին բռնի կերպով սարկացնելու ծառաներին, աղախիններին՝ նրանց ուղարկելով հարկադիր աշխատանքների «ուրկանոց»-ներում և «դոդեաց»-ներում[2]։

ե) Սարկության աղբյուրներից էին նաև նվիրատվությունները։ Սարուկը, ինչպես բոլոր երկրներում, այնպես էլ Հայաստանում տիրոջ լիակատար սեփականությունն էր։ Տերը կարող էր ոչ միայն նրան վաճառել, նվիրել, ծեծել, խեղանդամ դարձնել, այլև սպանել։ Մ. Խորենացին վկայում է, որ նույնիսկ Հայկի նահապետական տոհմում նահապետն իրավունք ուներ ընդդծիններին նվիրելու։ Հայկը նվիրում է «Կադմեայ Թուին իւրում բաղում ինչս յանկածէ պատերազմին պարդևէ, և յիւրոց ընդոծնացն առս անուանիս...»[3]։

Սարուկների մի կատեգորիան Հին Հայաստանում կոչվում էր արքունի, կային նաև տնային սարուկներ[4]։

Երբ հայ ժողովրդի քաղաքական շահերի դավաճան Վասակ Սյունին ամբաստանվում է Հազկերտ 2-րդի առաջ, պարսկական վորահրամանատար Մուշկան Նիսալավուրոն այլ մեղադրանքների հետ միասին կշտամբում է Վասակին, որ նա ապստամբների մի մասին «...որպէս սուտ երդմամբք խաբէր և իջուցանէր յամրոցաց անտի. էր զոր կոտորէր, և էր զոր գերի տանէր զծառայս և զաղախնայս արքունի»[5]։ Շահապիվանի ժողովի կանոններում կա վկայություն տնային սարուկների մասին։ «Եթէ կին ոք արար և ամուլ պատուհեաց, և այրն հանցէ զնա վասն ամլութեան, որ ինչ կնոջն կարասի բերեալ է ի տուն, թէ աղախին, թէ անասուն, թէ հանդերձ, թէ արծաթ, առնուլ իշխան է և դնալ»[6]։

Բազմաքանակ ծառա-սպասավորներ ունեին թագավորները։ «Եւ ամենայն ընտանիք թագաւորին, ծառայք և սպասաւորք,—

---

1 Մ. Գոշ, Դատաստանագիրք, էջ 336։
2 Կանոնգիրք Հայոց, էջ 64, 65, 70 և այլ։
3 Մ. Խորենացի, էջ 37։
4 Փ. Բուզանդ, էջ 105։
5 Եղիշե, էջ 173։
6 Կանոնգիրք Հայոց, էջ 64։

ասում է Ագաթանգեղոսը,— առ հասարակ, հարուածովք հարեալք լինէին...»[1]։

Այսպիսով, ազգային և օտար աղբյուրների ուսումնասիրությունը մեզ հնարավորություն է տալիս Հին Հայաստանում գոյություն ունեցող բազմաթիվ ստրուկներին ստորաբաժանել հետևյալ հիմնական կատեգորիայի՝ ա) Արքունական կամ թագավորական ստրուկներ, որոնք մեծամասամբ ձեռք են բերվում ռազմական արշավանքների և պատերազմների միջոցով։ Այս կարգի ստրուկները հայտնի էին «արքունի», կամ «օտարածին» անվան տակ։ «Արքունի» կամ «օտարածին» ստրուկները աշխատում էին թագավորական կամ արքունական տիրույթներում «թագավորական տան» սպառողական կարիքները բավարարելու համար։ «Արքունի» կամ «օտարածին» ստրուկների մի մասն էլ աշխատում էր արքունիքում, որպես աղախին-ծառաներ, նաժիշտներ, գումակավորներ, ջրկիրներ, փայտակիրներ, մառանապետներ, դռնապաններ, ախոռապահներ և այլն։ բ) «Ընդոծիններ». ընդոծին ստրուկների առաջացման համար կար երկու հիմնական աղբյուր՝ պատերազմն ու գերեվարությունը և ստրուկներից սերված սերունդը։ գ) «Արծաթագին». սրանք ձեռք էին բերվում գնման և վաճառքի միջոցով։ դ) Ստրկության մի այլ խավը հայտնի էր «պարտային ստրկություն» անվան տակ։ Աղբյուրները ստրկության այս կատեգորիայի մասին պահպանել են հետևյալ ուշագրավ վկայությունները՝ «ծառայ փոխառուն համարի փոխատուն»։ Հին Հայաստանում, մինչև ֆեոդալական հարաբերությունների զարգացումը, ստրուկի իմաստով ու նշանակությամբ գործածական էր նաև «ծառա» տերմինը։ Պատմական այս հնագույն շրջանում «ծառա» տերմինը բառացիորեն նշանակում էր ստրուկ-ռազմագերի։ «Ծառա-ստրուկ» տերմինը ուներ ավելի լայն իմաստ ու նշանակություն, քան մինչ այդ հայտնի ստրուկ արտահայտող բոլոր տերմինները։ Հաճախակի են դեպքերը, երբ «ծառա» տերմինի տակ իմաստավորվում են ստրկության վերոհիշյալ բոլոր կատեգորիաները։

Արդ, ընդունելով «ընդոծին», «օտարածին», «արծաթագին» «պարտային» ստրուկների լայն տարածումը Հին և միջնադարյան Հայաստանում, այդ երբեք մեզ իրավունք չի տալիս հավասարության նշան դնել արևելյան «տնային» և անտիկ ստրկատիրական պետությունների «աշխատանքային» ստրուկների մեջ։

---

1 Ագաթանգեղոս, էջ 113։

Անտիկ հեղինակները և աղբյուրային մատենագիրները բազմաթիվ վկայություններ են թողել այն մասին, որ պատերազմական դերի սարքերի մեծ մասը փոխադրվում էին ագարակները, դաստակերտները, ձեռակերտները, և ամրացվում էին հողին։ Դերի ըստ բուկների զգալի մասը փոխադրվում էր հասարակական և պետական նշանակություն ունեցող արտադրական ձեռնարկությունները՝ հանքերը, ձկնորսարանները, արհեստանոցները, քաղաքային շինարարության, ռազմական և տնտեսական նշանակություն ունեցող ճանապարհների, ջրանցքների և այլ բնույթի շինարարական աշխատանքներում։

Մ. Խորենացին վկայում է, որ երբ Արտաշեսը իր զորավար Սմբատին նվիրում է հինգհարյուր դերիներ, Սմբատը «...գծառայսն Երուազայ, զոր գերեացն ի Բազարանէ, տարեալ բնակեցուցանէ ի գիկանց Մասեաց, ի նոյն անուն Բազարան կոչելով զձեռակերտրն»[1]։ Խորենացին խոսելով Տիգրան 2-րդի պատերազմի միջոցով ձեռք բերած դերիների մասին, հիշատակում է, որ ռազմագերիները փոխադրվում էին ավանները, ագարակները, ձեռակերտները, դաստակերտները, շենները։ «...Թագաւորն Հայոց Տիգրան զգերուրիանն Հրէից նստուցեալ յԱրմաւիր և յատանին Վարդգէսի, որ ի վերայ Քասաղ գետոյ»[2]։

Նույն պատմիչի վկայությամբ հայոց Սմբատ զորավարը «Հրամանաւ Արտաշիսի բնակէ ի Տմորիս, որ այժմ կոչի Կորդրիք, ի յԱրկի նստուցեալ զրազմուրիան գերեալն»[3]։

Մ. Խորենացին պատմում է, որ «Մարաց ազգն ոչ միայն սահանում է «շէնս», այլև Մարաց երկրի ռազմագերիներին[4]։ Աժդահակի առաջին կին «զԱնոյշ,— շարունակում է պատմիչը,— ...հանդերձ պատանեկօք և բազմութեամբ գերեացն, որչափ թէ աւելի քան զրիւր մի, բնակեցուցանէ յարևելեայ ուսոյ մեծի լերինն մինչև ի սահմանս Գողթան, որ են Տամբատ, Ոսկիոզայ, Դաժդոյնք և որ այլք առ եզերբ գետոյն դաստակերտք, յորոց մինն է Վրանջունիք, մինչև հանդէպ ամրոցին Նախճաւանու և զերիս աւանսն, զԽրամ և զՋուղայ և զԽորշակունիս, իսկ ի միս կողմանէ գետոյն. զրոլոր գաշտն... մինչև ցնոյն ինքն ամուրն Նախճաւանու»[5]։

---

[1] Մ. Խորենացի, էջ 175։
[2] Նույն տեղում, էջ 130։
[3] Նույն տեղում, էջ 183։
[4] Նույն տեղում, էջ 112։
[5] Նույն տեղում, էջ 83 (բոլոր ընդգծումները մերն են—Ս. Հ.)։

Ռազմագերի ստրուկների մի մասն էլ փոխադրվում էր Հայաստանի քաղաքները։ Սրանց ստիպում էին աշխատել քաղաքային շինարարության, պալատ-դղյակների, ամրոցների, հանապարհների և այլ կարգի աշխատանքների վրա։ Տիգրան 2-րդը,— ասում է Խորենացին,— «հրաման տայ Բարզափրանայ նստուցանել զդերին Հրէից որ ի Մարիսացւոյ՝ ի քաղաքն Շամիրամայ»[1]։

Այս բազմաթիվ ագարակներն ու դաստակերտները հանդիսանում էին ոչ միայն ստրուկների, այլ գերազանցապես համայնական գյուղացու աշխատանքի շահագործման վրա հիմնված գյուղական վայրեր։

«Ագարակ» բառի ստուգաբանությունը տվել է պրոֆ. Սամուելյանը. «Ագարակ բառը,— գրում է նա,— հին սեմերական ծագում ունի, որից գոյացել է նաև հին հունական agros և լատիկանական ager, որը նշանակում է դաշտ, արտ, ընդհանրապես գյուղատնտեսական մշակման հող»[2]։ Ակադեմիկոս Հ. Մանանդյանը ընդունելով պրոֆ. Խ. Սամուելյանի այս մեկնաբանությունը, իր կողմից ավելացնում է նաև «դաշտ», «մշակելի հող», «ավան», գյուղակ։ Աստվածաշնչի հին թարգմանության մեջ հունական ἀγρός (դաշտ) կամ ἔπαυλος (усадьба) բառերը թարգմանված են «ագարակ» տերմինով»[3]։

Մեր բոլոր մատենագիրները վկայում են, որ ագարակներ ունեին Արշակունի թագավորները, հողատերերը, և նույնիսկ հոգևոր ֆեոդալները։ Փ. Բուզանդը վկայում է, որ Փառնեի որդի Հովհան եպիսկոպոսը, զբաղվելով խեղկատակություններով, իր այդ «ծառայության» դիմաց հայոց թագավորներից ստանում էր «զմուրհակս գիւղաց կամ զագարակաց»[4]։

Հայկազյան բառագիրք կազմողները նույնպես միշտ են հասկացել ագարակ տերմինի իմաստն ու նշանակությունը և այն ստուգաբանել են՝ «արտ», «ունեցվածք», «գետին», «գյուղակ», «գյուղ»[5]։

Այս նույն մեկնությունն է տալիս ագարակին Ստ. Մալխասյանցը։ Ագարակը. Մալխասյանցի կարծիքով, նշանակում էր մշակ-

---

1 Մ. Խորենացի, էջ 135։

2 Խ. Սամուելյան, Սարկությունը Հին Հայաստանում, էջ 110։

3 Я. А. Манандян, Проблема общественного строя доаршакидско Армении см. «Исторические записки», № 15, 1945, стр. 3.

4 Փ. Բուզանդ, էջ 228։

5 Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, էջ 2։

լված կամ մշակելի հող, հանդ, առհասարակ հողային կալված, կալվածատիրոջ տրամադրության տակ գտնված հողամաս[1]։

Հ. Աճառյանն իր «Արմատական բառարան»-ում ագարակը ստուգաբանել է անդաստան, արտ, հող, դյուղ։ Հունական αγρος, լտ. ager, սանսկրիտերեն agra, գոթերեն akrs, գերմաներեն acker, «որոնց բնիկ հայերեն համապատասխանն է ածր, տեղափոխությամբ արծ, որը պահուած է արտ ձևով...։ Վրաց ագարակի արտ, մարդ, դյուղ։ Ագարակ նշանակում է նաև «դյուղական տուն»... «Ն. Նախիջևանի դյուղական հայ բարբառով կա եգէրէի՝ ամառ ժամանակ եղների պտուկած տեղը դաշտի մեջ»[2]։

Այս նույն իմաստով ագարակ տերմինը գործածել են մեր մատենագիրները գրավոր հին աղբյուրներում։ Հին կտակարանում ագարակ տերմինը գործ է ածվում տարբեր իմաստով ու նշանակությամբ։

Ագարակը որպես ժառանգական տիրույթ, որպես հողային կալված բազմաթիվ անգամ հիշատակված է Հին կտակարանի հայերեն բնագրում։ Ահա մի երկու վկայություն։ «Եւ ագարակքն... ի քաղաքս նոցա մի վաճառեսցին. զի կալուած յաւիտենական է այն նոցա»[3]։

Ագարակը որպես կալվածք, որպես ժառանգական տիրույթ անցնում էր ժառանգության հորից որդուն. «ենդրեսցէ ի հօրէ իմմէ ագարակն»[4], կամ «Եւ եղև ի գնայն նորա... խնդրել ի հօրէ իւրմէ ագարակ»[5]։

Ագարակում ոչ միայն բնակություն էին հաստատում ստրուկները, այլև քահանաները, պաշտոնյաները։ «Եւ բնակեցին քահանայքն և զնտասիրն և ժողովուրդքն յԵրուսաղէմ և ի տեղիս նորա.

---

[1] Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հատ. 1-ին, էջ 3։

[2] Հ. Աճառյան, Արմատական բառարան, հատ. I, էջ 10—12։

[3] Գիրք Աստուածաշունչ հին ու նոր կտակարանաց, Վենետիկ, 1860, Ղեւտ, ԻԵ, 34։

[4] Նույն տեղում, Յեսս. ԺԵ, էջ 18, 28, 36, 45, 47, 67։

[5] Նույն տեղում, Դատաւորք. Ա. էջ 14, հմմտ. նաև Մննդ. ԻԴ, 9, 11, 13, 17, 19, 20,, ԻԵ. 9, 31։ Ղեւտ. ԻԵ. 34, Թիւք, ԻԳ, 34. Յեսս. ԺԳ. 28, ԺԵ, 18, 28, 36, 45—46, 60, ԺԲ, 6, 8, 27, 38, 48, ԻԱ, 12, ԻԴ, 32, Դատաւորք Ա. 14, Ե. 18, Հռութ. Ա, 1, 2, 6, 22, Բ. 6, Դ, 3, 5, Բ. Թագ. ԺԹ. 29, Գ. Թագ. Բ. 26. Դ. Թագ. ԺԸ. 17, Ա. Եզր. Ե. 46, Նեհմ, ԺԱ. 25, 30, ԺԲ, 10. Գ. Մակ. Ը. 1, Ովս. Ժ. 4, ԺԲ, 11. Միք. Ա. 6, 11, 12, Երեմ. Դ. 17, Է. 20, Ը. 10. ԻԶ. 18, ԼԲ. 7, Ե—9, 15, 25, 43, 44, Եզր. ԺԶ. 7, ԼԴ, 22, Մաթ. ԺԳ, 20, 27, 31, 36, 38, 41, Մակ., Ն. 14, Զ. 36, 56, ԺԳ. 11, ԺԵ, 21, Ղուկ. Ը, 34, Թ. 12, ԺԴ, 18, ԺԵ. 15, 25, Գործք Ե. և ուրիշներ։

և սաղմոսաց պաշտօնեայքն և դռնապանքն և ամենայն Իսրայէլ ի գեօղս և յագարակս իւրեանց»[1], կամ «Փաթաւ որդի Մեսիզաբիւլայ, Զարհն որդի Յուդայ, որ ի ձեռանէ թագաւորին ունէր զամենայն կազմած և բնակէր յագարակի իւրում»[2]:

Ագարակը, ինչպես նաև մյուս կալվածները, կարելի էր կոտակել, նվիրել։

«Վասն այնորիկ տայ զկանայս նոցա այլոց, և զագարակս նոցա օտար ժառանգաց»[3]։

Մեր մատենագիրները բոլոր դեպքերում ավան, շեն, ագարակ, գյուղ, գործ են ածում միևնույն իմաստով և նշանակությամբ։ Նրանք վկայում են, որ ագարակներում ապրում էին շինականներ և ոչ միայն ստրուկներ։ Ագաթանգեղոսը հարում է, որ Տրդատ թագավորը հատուկ նամակով դիմում է ագարակների, ավանների, շենների, գյուղերի բնակիչներին, ողջունում է նրանց, ասելով՝ «Տրդատ արքայ Հայոց մեծաց, առ մեծամեծս և առ իշխանս և առ նախարարս և առ գործակալս և առ այլ մարդիկդ, որ ընդ իմով իշխանութեամբ ՀՔ, յաւանս, ի շէնս, ի գեօղս, յագարակս, առ ազատս և առ շինականս, միանգամայն իսկ առ ամենեսեան, ողջոյն»[4]։ Այս ուշագրավ հատվածում նույնիսկ ակնարկ չկա ստրուկների մասին։ Այստեղ ուղղակի հիշատակված են Հայաստանի բոլոր դասերը և նրանց հետ շինականները, որոնք, անկասկած է, ապրում էին ագարակներում։ Ագաթանգեղոսը, որին քաջ հայտնի էր ստրուկ, ծառա, սպասավոր տերմինը, այս հատվածում չի ակնարկում, որ ագարակներում ապրում էին միայն ստրուկ-սպասավորներ։

Որ ագարակ-ավանները տիպիկ գյուղական վայրեր էին և նրանց բնակիչների հիմնական զբաղմունքը հողագործությունն էր, այդ մասին ավելի ուշագրավ տեղեկություններ են տալիս Ագաթանգեղոսը և Բուզանդը։

Խոսելով Տրդատ թագավորի և Գր. Լուսավորչի շինարարական գործունեության մասին, պատմիչները հաղորդում են, որ նրանք եկեղեցիներ են շինում «յամենայն աշխարհս, ի գաւառս, ի կողմանս, ի քաղաքս, յաւանս, ի շէնս, ի գեօղս և յագարակս»։

---

[1] Եզր. Ե, 16։
[2] Նեհ. ԺԱ, 24—25, հմմտ. նաև ԺԳ, 10, Յուդիթ, ԺԵ, 8 և ուր.։
[3] Երեմիա, Ը, 10, հմմտ. Փ. Բուզանդ. էջ 228, Ղ. Փարպեցի. էջ 26։
[4] Ագաթանգեղոս, էջ 73։
[5] Նույն տեղում, էջ 422—423։

Յուրաքանչյուր ագարակ կազմում էր մի գյուղական համայնք. նա իր սեփականության տակ ուներ հողեր, որոնցից հավասար պայմաններում օգտվում էին ագարակների բոլոր բնակիչները։ Տրդատ թագավորը և Գր. Լուսավորիչը եկեղեցիներին տնտեսապես ապահովելու համար գրավում էին ոչ թե լատիֆունդիաների, այլ գյուղական համայնքների հողերը և այն հանձնում եկեղեցիներին որպես ժառանգական սեփականություն։ Հայտնի է, որ Տրդատի հատուկ հրամանով եկեղեցիներին են հանձնում «չորս չորս հողս երդոյ յամենայն ագարակս տեղիս, իսկ յաւանսն հօթն հօթն հողս երդոյ՝ ի ծառայութիւն սպասաւորութեան քահանայութեանն», իսկ Պապ թագավորը «յեւթն հողոյն զհինգն հատանէր յարքունիս, և զերկուս միայն թողոյր երկուս հողս»[1]։ Անկասկած է ու անառարկելի, որ թագավորը և Գր. Լուսավորիչը բռնագրավում են ոչ թե սարսվների, որոնք երբեք հողակտորներ չեն ունեցել, այլ գյուղական համայնքների հողերը։

Ուշադրավ է նաև այն, որ Պապ թագավորը ավանների և ագարակների հողերի մեծ մասը, որ հատկացված էր հոգևոր ֆեոդալներին և եկեղեցիներին, սեփականացնում է, կամ ինչպես պատմիչն է պատկերավոր կերպով արտահայտել՝ «հատանէր յարքունիս»։ Այստեղ խոսքն, անկասկած, գյուղական համայնքներին և ոչ լատիֆունդական տնտեսություններին պատկանելիք հողերի մասին է։

Այս իմաստով և առումով ագարակ տերմինը հիշատակված է նաև մյուս պատմիչների մոտ։ Եղիշեն հիշատակում է, որ Հաղբերտ թագավորը հայ, առերևույթ կրոնափոխ դարձած, նախարարներին պարգևում է «զոմանս ագարակօք և մեծամեծ դեղօք, զոմանս պատուովք և իշխանութեամբք մեծամեծօք»[2], կամ «անբաւ առատութեամբ ագարակս և աւանս միոմ միոմ նոցա յարքունուստ շնորհէր»[3]։ Պարսկական բռնակալության դեմ 5-րդ դարում ապըստամբության դրոշ են պարզում ոչ միայն գյուղերի, այլև ագարակների բնակիչները[4]։ Ավաններ, ագարակներ ունեին մեծ գյուղերը, քաղաքները։ Պատմիչների պատկերացման համաձայն, Հայաստանում չկային քաղաքներ, ամրոցներ, մեծ գյուղեր առանց ագարակ-ավանների։ 5-րդ դարում ժողովրդա-ազատագրական շարժման դուրս եկած հայ ժողովուրդը քանդում է այն բերդերն ու

---

[1] Ագաթանգեղոս. էջ 423, Փ. Բուզանդ. էջ 191։

[2] Եղիշե, էջ 24։

[3] Նույն տեղում, էջ 65, հմմտ. Ղ. Փարպեցի, էջ 54։

[4] Եղիշե. էջ 73։

ավանները, որտեղ ապաստան էին գտել պարսիկները։ Ապստամբը ժողովուրդը գրավում է «զմեծն Արտաշատ հանդերձ աւանօք իւրովք», ապա գրավում է ամուր բերդ Անին, Գառնին, Արտագերսը, «զաւանս իւրեանց», Երկայնորդը, Արճնին, Բարձրաբուղը, Խորանիստը, Ծառանիստը, Ողականը։ Այս բոլոր վայրերը ունեին իրենց «դեղիք և ագարակք»[1]։ Հայտնի է, որ պարսիկները միացած հայրենիքի դավաճան Վասակ Սյունեցու հետ ասպատակում են Հայաստանը, ոչնչացնում ապստամբների մի մասին։ Տալով այս դեպքերի նկարագիրը, պատմիչը վկայում է, որ այդ հալածանքների հետևանքով «թողին այնուհետև իւրաքանչիւր զգեստս և զաւանս և զագարակս»[2]։

Այս վկայության մեջ նույնիսկ ակնարկ չկա, որ ագարակները լատիֆունդիաներ էին։ Ավաններ և ագարակներ կարող էին կառուցել թագավորները, մեծ իշխանները։ Մ. Խորենացին պատմում է, որ Տիգրանակերտ ավանը շինել էր Տիգրան Մեծը։ Այս ավանը հետագայում այնքան է ընդարձակվում, որ դառնում է Հայաստանի ամենամեծ քաղաքը և մայրաքաղաքը։

Տիգրան մեծը, ասում է Խորենացին, «յուղարկէ թագաւորապէս զքոյր իւր Տիգրանուհի մեծաւ ամբոխիւ ի Հայս, յաւանն՝ զոր շինեաց յիւր անուն Տիգրան, որ է Տիգրանակերտ, և զդաւառսն դայնոսիկ ի ծառայութիւն նմա հրամայի»[3]։ Վաղարշակ-Տրդատ թագավորը, ասում է Խորենացին, կարգում է նախարարական տներ և նրանց «շէնս պարգևէ»[4]։ Արտաշես թագավորը ոչ միայն շէն — ագարակներ է նվիրում հայ նորաստեղծ նախարարական տներին, այլև որոշում է «զամենայն գիւղից և ագարակաց»[5]։

Տիրան Արշակունի թագավորը իր մտերիմ և հավատարիմ Դրուասպին նվիրում է «զաւանն Տաւեանս հանդերձ ագարակօքն և զայգին մեծ»[6]։ Ներսես կաթողիկոսը, ասում է պատմիչը, հրամայում է. «ըստ դաւառաց դաւառաց շինել աղքատանոցս», աղքատանոցներին տնտեսապես ապահովելու համար կարգադրում է բաժանել «ի նոսա զաւանս և զագարակս, պտղաբերել յարդեանց անդաստանաց և ի կթից արօտականաց և ի գեղմանց, զի պաշտեսցեն զնոսա հարկաւ, բացէ ի բաց, և նոքա մի ելցեն ըստ բնակու-

---

[1] Եղիշե. էջ 87—88, 100—101։
[2] Նույն տեղում, էջ 162։
[3] Մ. Խորենացի, էջ 82—83։
[4] Նույն տեղում, էջ 110, 117, 181։
[5] Նույն տեղում, էջ 186. հմմտ. Ստ. Տարոնեցի. էջ 48։
[6] Նույն տեղում, էջ 194։

թիւնս իւրեանց»[1]։ Այս հատվածը մինչև այս եղած բոլոր վկայություններից ամենաուշագրավն է։ Ակնհայտ է, որ կաթողիկոսը հասել է այն բանին, որ ագարակներն ու ավանները որոշակի չափով հարկեր են ավել իրենց արդյունքներից, արոտավայրերից, անասուններից անկելանոցների և աղքատանոցների պահպանության համար։ Այսպես, ագարակը տիպիկ գյուղական վայր է իր հողերով, արոտավայրերով և անասունների հոտերով։ Որ ագարակները կալվածային բնույթի գյուղական վայրեր էին և ժառանգական տիրույթներ, այս մասին կա ավելի ուշագրավ վկայություն։ Խոսրով Թագավորի օրոք, ասում է պատմիչը, գյուղանդական Հայաստանից Պարսկահայք է վերադառնում Սահակ ասպետը, Խոսրովը սրան ոչ միայն նշանակում է հայկական զորքերի սպարապետ, այլև «ղարձոյց ի նա զիալուածս հայրենիս, և այլ աւան հանդերձ ագարակօք պարգևեաց նմա յայնոցիկ ժառանգութենէ, որք ի բաժնոյն Պարսից առ Արշակայ մնացին»[2]։ Ագարակ տերմինը իր այս նշանակությունը անփոփոխ կերպով պահպանում է նաև հետագա դարերի ընթացքում։

Սեբեոսը գյուղը և ավանը համարում է հոմանիշ։ Աբրահամ կաթողիկոսի մահից հետո, ասում է պատմիչը, հաջորդում է Տարոնի եպիսկոպոս Կոմիտասը, որն էր «ի դեղջէ Աղցիցն աւանէ»[3]։

Հովհան Մամիկոնյանը, ինչպես ցույց ենք ավել վերևում, Կուառոս, Մեղոի, Բրեխ, Տոմբ, Խորնի, Կեղք և Բաղու գյուղերը կոչում է մի դեպքում գյուղ, մյուս դեպքում «աւանք... մեծամեծք»[4]։

Այս նույն իմաստով ավան-ագարակ-գյուղերը հիշատակված են Մ. Կաղանկատվացու մոտ[5]։ Հովհ. Դրասխանակերտցին նկարագրելով Հայաստանի տնտեսական վերելքը, հանգամանորեն նշում է, որ ֆեոդալ-իշխանները բնակություն են հաստատում «իւրաքանչիւրքոք ի ժառանգութիւնս իւրեանց. և սեպհականեալ զերկիր (կարգա կալվածները) ...շինէին եկեղեցիս վիմարդ հատահեղոյս ձուլեալ կրով՝ ի մենաստանս և յատանս և յագարակս»[6]։ Եթե ագարակները ընդունենք որպես միայն ստրկական աշխատանքի վրա հիմնված յատիֆունդիաներ, ապա անիմաստ է դառնում Ագաթանգեղոսի, Փ. Բուզանդի և Հովհ. կաթողիկոսի վկայությունները այն մասին,

---

[1] Խորենացի, էջ 279։
[2] Նույն տեղում, էջ 313։
[3] Սեբեոս, էջ 124։
[4] Հովհան Մամիկոնյան, էջ 108—109, 110—111։
[5] Մ. Կաղանկատուացի, էջ 100, 177—178։
[6] Հովհ. Դրասխանակերտցի. էջ 199։

թե իշխանները, թագավորները կարող էին եկեղեցիներ, վանքեր կառուցել առանձին-առանձին վերցրած սարկատիրական տիպի տնտեսություններում։ Այստեղ, անկասկած, խոսքը մեծ գյուղերի և ագարակների մասին է։ Այս նույն պատմիչը տալով Այրարատի գյուղացիական ապստամբության նկարագիրը, վկայում է, որ ապստամբությանը մասնակցում էին ոչ միայն քաղաքների, այլև գյուղերի, ագարակների և ավանների բնակիչները[1]։

Միջին դարերում Հայաստանի խոշոր քաղաքներն ունեին ավան-ագարակներ։ Աշոտ Բագրատունին, ասում է Հովհ. կաթողիկոսը, «ընդ իւրով ձեռամբ նուաճեալ կացոյց զաւանս և զագարակս որ շուրջ զՎաղարշապատ քաղաքաւ...»[2]։

Ոչ միայն խոշոր կենտրոնական քաղաքներն ունեին իրենց ավան-ագարակները, այլև մեծ դաստակերտ-ձեռակերտները։

Խուզիմա արաբ ոստիկանը, ասում է պատմիչը, ցանկանում էր «Գնոց արծաթոյ» ձեռք բերել Դվինի կաթողիկոսական տան մեծամեծ դաստակերտները. «զԱրտաշատն և զԿաւակերտն և զՀոռոմոց Մարգ հանդերձ նոցունց ագարակօք...»[3]։

Արաբական Նսր ոստիկանը արշավում է Սյունիք, սրա Սմբատ իշխանը ապաստան է գտնում Վայոց ձորում։ Նսրի հետապնդումներից խուսափելու համար Սմբատը թողնում է ամրոցը և քաշվում Դվին։ Նսրը լուր ստանալով, որ Բեղա ամրոցը դատարկ է բնակիչներից և զորքից, «առնու և ընդ ձեռամբ նուաճէ տուանց իրիք աշխատութեան, և շուրջանակի զդեղս և զաւանս և զագարակս իւր անուն պայազատէ»[4]։

Սասանյան խոսրով թագավորը, հարում է Թ. Արծրունին, հատուկ նամակով դիմում է բյուզանդական կայսրին ասելով. «զամենայն յանցանս քո և զվնաս զոր արարեր թողում քեզ. արի առ զկնի քո և զորդիս և եկ այսր. և տաց քեզ զագարակս, այդիս և ձիթենիս և սերմանս, զի վարիցես և հնձեսցես և մեք սիրով նստեսցուք ի քեզ»[5]։ Շենները, ավանները, ագարակները ունեին իրենց հողերը, հնձանները, անասունների հոտերը։ Թ. Արծրունին տալով Բուղա ոստիկանի (852—855 թթ.) ասպատակությունների պատմությունը, նշում է, որ արաբները «ել զշէնս և զաւանս և զագա-

---

1 Հովհ. Դրասխանակերտցի, էջ 259։
2 Նույն տեղում, էջ 298։
3 Նույն տեղում, էջ 111—112։
4 Նույն տեղում, էջ 360։
5 Թ. Արծրունի, էջ 92։

բակս հրձիգ արարեալ՝ անապատս կացուցանեն ի մարդոյ և յանասունոյ»[1]։

Սելջուկան, ժառանգական գյուղեր և ագարակներ ունեին Արծրունի իշխան-ֆեոդալները։ Վահան և Մուշեղ Արծրունիները Բուզային սիրաշահելու, իրենց հայրենական կալվածները ասպատակությունից ազատելու համար որոշում են «զինքել և տալ նմա (Բուզային) գեօղս և ագարակս, և տալ հարկս արքունիս և պատանդս խաղաղութեան»[2]։

Արծրունի Գուրգեն իշխանը գնպանություն է հղում Ապուհեշեմի մոտ և խոստանում է նրան տալ «գանձս, գեօղս և ագարակս...»[3]։ Արծրունի Դավիթ, Աշոտ և Գուրգեն իշխանները նվիրում են Փշոց վանքին չորս «ագարակս... և գագարակն Ահավանք... և գԲերկրի և այլ բազում տեղիս»[4]։

Սմբատ Բագրատունի թագավորը Սյունյաց Սմբատ իշխանին պատժելու համար դիմում է Դավիթ Արծրունու ավագ եղբորը՝ Վասպուրականի Աշոտ իշխանին, խոստանալով նրան «քաղաքս, գաւառս, գեօղս և ագարակս» եթե սա օգնի իրեն Սմբատ Սյունյաց իշխանի ապստամբությունը ճնշելու համար[5]։

Վասպուրականի Սենեքերիմ և Դեբեսիկ իշխանները նույնպես ունեին «հայրենի բնիկ» սելջուկան «գաւառս և գեօղս և ագարակս...»[6]։ Զաքարյա կաթողիկոսի օրոք Աղթամարի վանքն ուներ բազմաթիվ գյուղեր, ագարակներ։ Ալի ոստիկանը,— ասում է պատմիչը,— ասպատակում է Վասպուրականը, նրա հորդաները տիրում են «գեղեցիկ և անասիկ կղզոյս Աղթամարայ և այլ բազում տեղեաց և ագարանից... և ագարակաց, գրով և անգիր»[7]։

Ավան, ագարակ բառերի իմաստն ու նշանակությունը ավելի պարզորոշ արտահայտել է Ստ. Տարոնեցին (Ասողիկը)։

Երկրի էկոնոմիկայի զարգացման հիմքի վրա ստեղծվում են նյութական պայմաններ ագարակների և ավանների հետագա վերելքի համար։ Բագրատունիների տիրապետության շրջանում, ասում է պատմիչը, «ագարակաց աւանացեալ և աւանաց բաղա-

---

[1] Թ. Արծրունի, էջ 127—128, 152։
[2] Նույն տեղում, էջ 133։
[3] Նույն տեղում, էջ 146։
[4] Նույն տեղում, էջ 229։
[5] Նույն տեղում, էջ 247։
[6] Նույն տեղում, էջ 306—307։
[7] Նույն տեղում, էջ 323—324։

բացեալ բազմամարդութեամբ և ընչեղութեամբ...»[1]։ Այս վկայությունը մեզ հայտնի բոլոր տեղեկություններից ամենից որոշակի սահմանադիծ է անցկացնում ավանների ու ագարակների միջև։ Ակնհայտ է, որ ավանները դարպացած ֆեոդալիզմի պայմաններում բաղաքագյուղ կամ գյուղաքաղաք էին և աճելով ու ընդարձակվելով վեր են ածվում իսկական քաղաքների, իսկ ագարակները, որոնք տիպիկ գյուղական վայրեր էին, վեր էին ածվում գյուղաքաղաք-ավանների։

Հետաքրքրական է, որ նույն պատմիչը խիստ զանազանություն է նկատում շենների, քաղաքների, գյուղերի և ագարակների միջև։ Նկարագրելով Չորրորդ Հայքի 995 թ. երկրաշարժը, պատմիչը ասում է, որ «եւ ամենայն շինուածք քաղաքաց, գիւղից և ագարակաց տապալեալ՝ գրնակիշն ի ներքոյ առնէին, մեռեալս ն կիսամեռս զնոսա առնելով»[2]։ Որ ավանները գյուղերից, ագարակներից տարբերվում էին և համարվում էին ավելի դարպացած վայրեր, արհեստների և թույլ զարգացած առևտրի կենտրոններ, այդ մասին վկայություններ է պահպանել Ար. Լաստիվերտցին։

Բյուզանդացիները, ասում է պատմիչը, «սրով և գերությամբ ապականեալ զմեծ աւանն՝ որ կոչի Օկոմի, և որ շուրջ զնովաւ գիւղք և ագարակք որ ի բաժնին էին»[3]։ Այս վկայության մեջ ավանն արդեն շրջապատված է ոչ միայն ագարակներով, այլև գյուղերով։ Պատմիչը ամեն դեպքում ավանը հիշատակում է քաղաքից հետո, գյուղերից և շեներից առաջ։ Սելջուկները, ասում է նա «զԱրծն այրեցին, և զայլ քաղաքս և գաւառս»[4]։ Սելջուկները ասպատակում են Հարք կամ Մանկանեղում գյուղաքաղաքը և «որ շուրջ զնովաւ գիւղք և ագարակ էին»[5]։ Միջին դարերում, զարգացած ֆեոդալական հարաբերությունների պայմաններում, ագարակը նույնացվում է գյուղի հետ և գործածվում նրան հավասար պայմաններում։ Այս երևույթը արձանագրված է Ստ. Օրբելյանի մոտ։ Այնպես Բաբիկ իշխանը, ասում է Օրբելյանը, տիրապետում է իր «ընդիկ ժառանգութեանն», դառը վշտով տեսնում է, թե ինչպես հիմնահատակ էր արված «զգեղեցկայարմար աւանս շէնից, գիւղից և ագարակաց. վատնեալ զամենայնն և յաւէր դարձացեալ»[6]։ Պատմիչները հա-

---

1 Ստ. Տարոնեցի. էջ 161։
2 Նույն տեղում, էջ 264։
3 Ար. Լաստիվերտցի, էջ 12։
4 Նույն տեղում, էջ 92—93։
5 Նույն տեղում, էջ 110։
6 Ստ. Օրբելեան. էջ 41։

ճախակի միևնույն վայրը մի դեպքում կոչում են գյուղ, մյուս դեպքում շեն։ Սյունյաց Ջևանշեր իշխանը Տաթևի վանքի վանահայր տեր Սիմոնի հետ գործարքի մեջ է մտնում։ Սրանից խնդրում է իրեն հանձնել Կովսական գավառի Բեխ գյուղը, որն էր «սեպհական ժառանգութիւն սուրբ խաչին» և առաջարկում է Բաղք գավառի իր սեփական Արուքս գյուղը։ Այս փոխանակությունը հաստատվում է հատուկ գիր-վճռով։

871 թ. կնքվում է հատուկ պայմանագիր, որտեղ Արուքսը կոչվում է ոչ թե գյուղ, այլ շեն։ Այս գիր-վճռում գրված է, որ Ջևանշերը իր «զշէն մի որ ի Բաղք գաւառի Արուքս անուն», փոխանակում է «ընդ Բեխոյ շինոյն որ ի Կովսական գաւառի էր»[1]։ Վասակ Սյունեցու դուստր Քուսզիդուխտը Բաղաց գավառի Մաճ գյուղը իր լեռներով, դաշտերով նվիրում է Սյունյաց եպիսկոպոս տեր Սիմոնին, գիր-վճռի մեջ Մաճը նույնպես կոչվում է շեն[2]։

Օրբելյանը Աղբերիս գյուղը մի դեպքում կոչում է գյուղ, մյուս դեպքում ագարակ։ 1223 թ. Բուլակ իշխանը Նորովանքին նվիրում է «զագարակն Աղբերիս իւրով սահմանօքն», իսկ գիր-վճռում ասված է, որ նա վանքին վաճառում է տալիս «զԱղբերիս գիւղ իւր ամենայն սահմանաւն...»[3]։ Ագարակներ ունեին նաև ամուր բերդերը։ Նույն պատմիչը վկայում է, որ «շնորհէ մայր սուլտանին զԱնապատ բերդն երկոտասան ագարակօք նմին տեառն Յովհաննիսի...»[4]։ Ինչպես գյուղերը, այնպես էլ ագարակները համարվում էին ժառանգական տիրույթ, անցնում էին հորից որդուն։ Սմբատ Օրբելյանը հետ է ստանում իր «ամենայն գաւառաց և գիւղից» հողերը, սակայն հետո «իւր կամաւ վասն սիրոյ և միաբանութեան՝ ոմանց դարձոյց և եթող յետս ասա և անդ ի գիւղից և յագարակաց և զայլն հաստատեաց սեպհական հայրենիք իւրոյ աղգի և զաւակաց»[5]։

Պատերազմական գերի-սարուկների ճնշող մեծամասնությունն էլ փոխադրվում էին ոչ միայն ագարակները, այլև դաստակերտները, ձեռակերտները։

Ակադեմիկոսներ Հ. Մանանդյանը, Հ. Աճառյանը, Ստ. Մալխասյանը, պրոֆ. Խ. Սամուելյանը «դաստակերտ-ձեռակերտ» տեր-

---

[1] Ստ. Օրբելեան, էջ 216—217։
[2] Նույն տեղում, էջ 219։
[3] Նույն տեղում, էջ 356—357։
[4] Նույն տեղում, էջ 349։ Հմմտ. Կ. Գանձակեցի. էջ 272։
[5] Նույն տեղում, էջ 414։

մինը ստուգաբանել են «կալվածատուն», «գյուղ», «շէն», «ավան», «ագարակ»[1]։

Եվ իսկապես, մեր մատենագիրները հենց այդ իմաստով էլ հասկացել և գործ են ածել դաստակերտ-ձեռակերտ տերմինը։

Դաստակերտը, որպես ժառանգական տիրույթ, հիշատակված է Հին կտակարանի հայերեն թարգմանության ընագրում։ Հայրենի ժառանգները, որպես սեփականություն, ստանում էին «ինչս» և «դաստակերտս» կամ ունեին սեփական «դաստակերտս և ավանս»[2]։

Ի. Ա. Ջավախովը հիմնվելով Վրաստանի մասին Ստրաբոնի հաղորդած ընդարձակ վկայությունների վրա, համոզիչ կերպով ապացուցել է, որ Վրաստանում նույնպես պատերազմական դերիներն ամրացվում էին թագավորական հողերին և աշխատում էին «թագավորական տան» սպառազրական կարիքները բավարարելու համար։ Հին Վրաստանում, վկայում է Ստրաբոնը, «ընակվում էին չորս դասեր... չորրորդ դասը կազմված էր հասարակ մարդկանցից, որոնք հանդիսանում էին «թագավորական ծառաներ» և սպասարկում էին թագավորին նրա կյանքի բոլոր անհրաժեշտ բարիքներով»[3]։

«Վերոհիշյալ վկայությունից երևում է,— եզրափակում է Ի. Ա. Ջավախովը,— որ լաոյները Վրաստանում հանդիսանում էին բնակիչների այն խումբը, որոնք ապրում էին թագավորական տոհմին պատկանող հողերի վրա և պարտավոր էին կատարել որոշակի նատուրալ պարտավորություններ։ Նրանց վերագրված կոչումը ցույց է տալիս, որ նրանք պետք է ունեցած լինեն սահմանափակ իրավունքներ»[4]։ Ստրաբոնը մեզ թողել է խիստ ուշագրավ վկայություններ այն մասին, որ Կապադովկիայի, Պոնտոսի, Փոքր Ասիայի ու Հայաստանի հեթանոս տաճարներն ունեին ընդարձակ կալվածագարակներ, որոնք մշակվում էին «տաճարական սպասավորների» (δοῦλοι) և «տաճարական աղախինների» (δοῦλαι) աշխատանքով։

---

1 Հ. Մանանդյան, Проблема общественного строя..., էջ 5, Հ. Անանյան. Արմատական բառարան, հ. II, էջ 420—421, Ստ. Մալխասյանց, Բացատրական բառարան, հ. I, էջ 492, Ռ. Սամուելյան. Ստրկություն..., էջ 113 և ուրիշ։

2 Եզր. ԼԸ, 12։

3 В. В. Латишев, Известия древних греческих и латинских писателей о Скифии и Кавказе, СПБ, 1890, стр. 140.

4 И. Джавахов, Госстрой..., стр. 71.

Սրանք ենթակա էին միայն թագավորներին և չէին կարող ոչ զատվել և ոչ էլ վաճառվել[1]:

Ստրաբոնի այդ արժեքավոր վկայությունները հաստատում է Ագաթանգեղոսը: Ագաթանգեղոսը պատմում է այն մասին, թե ինչպես Գրիգոր Լուսավորիչը և Տրդատ Գ. թագավորը քրիստոնյա եկեղեցիներին ու վանքերին անհատապես ապահովելու համար ավերում են հեթանոսական տաճարները, բռնագրավում են նրանց ընդարձակ կալվածները, շարժական կալը, սպասավորները և նվիրում եկեղեցիներին ու վանքերին: Ավելորդ չենք համարում վկայակոչելու Ագաթանգեղոսի ընդարձակ տեղեկությունների միայն առանձին հատվածները: Տրդատ Գ. թագավորը, գրում է պատմիչը. «...խաղայր գնացեալ երթայր... հասանէր ի Դարանաղեաց գաւառն... ի զեօղն Թորդան... և զդանձան ամենայն, զոսկւոյն և զարծաթոյն, ուստ հարկանէին...: Եւ զզեօղն ամենայն դաստակերտօքն հանդերձ և սահմանօքն յանուն եկեղեցւոյն նուիրէին... Երբեալ հասանէր յամուր տեղին անուանեալ Անի... Եւ զաւանն ամրականնաւ հանդերձ ի ծառայութիւն եկեղեցւոյն նուիրէին... Եւ զդաստակերտսն և զպաստաւորսն Ռմօքն հանդերձ և նոցին զեռանոմքն և սահմանօքն ի ծառայութիւն նուիրեցին եկեղեցւոյ սպասաւորութեան»[2]:

Հովհան Մամիկոնյանն իր «Պատմութիւն Տարօնայ» աշխատության մեջ հիշատակում է, որ Աշտիշատի հեթանոսական տաճարը ուներ 12 դյուղ: «Իբրև հիմնարկեաց սուրբն Գրիգոր զեկեղեցին և եկ անդ զնշխարսն և կանգնեաց զնշան տէրունական խաչին ի տեղի կոսցն Գիսիանէ և եթող անդ պաշտաւնեայս եկեղեցւոյն զԱնտոն և զԿրատնիդէս: Եւ զեպիփան Հայր հաստատեաց վանացն ձեռամբ իւրով. և եթող ի տեղուջն տրս կրտնաւորս ԽԳ և ԲԺ դաստակերտս նա, զի տեղեացն ծառայեցեն, յորոց մինն Կուառս և Մեղտի և Բրեխ և Տումբ և Խորնի, Կեղբ և Բաղու. զի աւանիս Լին սոմա բազումք և մեծամեծք ...Զի Կուառ ունի երդահամարս ԳՌ և ԲԺ և հեծեալս ՌԼ և հետեակս ԲՌ և Մ: Եւ Մեղտի ունի ծուխս ԲՌ և Է հարիւր և հեծեալս ԸՃ և հետեակս ՌԼ: Եւ Տումբ ծուխս Ջ և հեծեալս Ն: Եւ Խորնի ունի ծուխս ՌՋՋ և հեծեալս Է հարիւր և հետեակս Ռ և Է: Իսկ Բրեխ ունի ծուխս ԳՌ և ԲՃ և հեծեալս ԲՌ և Խ և հետեակս ապեկնաւորս ԸՃ և Խ և տիրապետս Ռ և Ջ և պարտաւորս Մ և Ջ: Արդ այս աւանագեղս ի բնէ

---

[1] Ստրաբոն, XI, 3:

[2] Ագաթանգեղոս, էջ 397—402:

տուեալ էին կատն ի ծառայութիւն, զոր և իշխանքն դարձեալ հաստատեցին ի վերայ եկեղեցոյն ամս Լ»[1]։

Նախ նկատենք, որ Հովհան Մամիկոնյանը դժբախտաբար 12 գյուղերից թվարկել է միայն 7 գյուղերի անունները։

Զեռքի տակ ունենալով հիշյալ 7 գյուղերի երդերի և զինված ուժերի քանակը, դժվար չէ կռահել, որ պատմիչի մոտ հիշատակված մնացած 5 գյուղերն էլ պետք է որ ունենային երդերի և զինված ուժերի նույն մոտավոր քանակը, ինչ որ հիշատակված մյուս գյուղերը։ Հովհան Մամիկոնյանի վկայության համաձայն այս 7 տվանը միասին ունեին 15.518 ծուխ, եթե այդ թիվը բաժանենք 7-ի, ապա միջին հաշվով յուրաքանչյուր տվան ուներ 2217 ծուխ, իսկ 12 տվանները միասին ունեին 26.604 ծուխ։ Եթե նկատի ունենանք, որ յուրաքանչյուր ծուխ միջին հաշվով պետք է ունենար 5—6 անդամ, եթե ոչ ավելին, ապա միայն Աշտիշատի հեթանոսական տաճարի դերիշխանության տակ գտնվում էին ավելի քան 150 հազար գյուղական բնակիչներ։ Հիշատակված 7 գյուղերը պատերազմի դեպքում տալիս էին բոլոր կարգի 15.847 զինվոր. յուրաքանչյուր գյուղ միջին հաշվով դուրս էր բերում 2264 զինվոր, իսկ 12 գյուղերը միասին կարող էին դուրս բերել 27.168 զինվոր։ Հեթանոսական տաճարի բոլոր գյուղերը պատմիչը կոչում է տվաններ, դասատակերտներ։ Հետևաբար, Աշտիշատի հեթանոսական տաճարը իր ընդարձակ կալվածներով, ռազմական հսկայական ուժով հանդիսանում էր ոչ թե լատիֆունդիական տիպի, ստրուկի աշխատանքի վրա հիմնված, լայն շուկաների հետ կապված տնտեսություն, այլ հոգևոր-ֆեոդալական տիպի տնտեսություն, հիմնված դեռևս ազատ համայնականի աշխատանքի վրա։ Աշտիշատի հեթանոսական տաճարի ռազմական այս հսկայական ուժի առկայությունը մեզ երբեք էլ զարմանք չպետք է պատճառի, եթե նկատի ունենք Ագաթանգեղոսի այն վկայությունը, որ Գրիգոր Լուսավորիչը և Տրդատ թագավորը երկարատև, դաժան և զինված պայքարի հետևանքով կարողացան խորտակել հեթանոսական տաճարների և ռազմական, և՛ տնտեսական հզորությունը։

Որ դասատակերտները, ագարակները ստրկական աշխատանքի վրա հիմնված, լայն շուկաների հետ կապված լատիֆունդիական տիպի տնտեսություններ չէին, այլ թագավորների, իշխանների և քրիստոնեության մուտքից հետո նաև կաթողիկոսների աթոռանիստ թաղաքներ, այդ մասին կան բազմաթիվ վկայություններ։ Ագա-

---

1 Հովհ. Մամիկոնյան. էջ 110—112։

թանգեղոսը դաստակերտ է կոչում ոչ միայն հեթանոսական մեհյանների սեփական տիրույթները, այլև Վաղարշապատ քաղաքը և նույնիսկ ամբողջ Հայաստանը։ Տրդատ թագավորն, ասում է պատմիչը, «հասանէր և յառաջի դաստակերտսն իւր, յոտաստակն Այրարատեան դաւառին ի Վաղարշապատ քաղաք»[1]։ Նույն պատմիչը դաստակերտ է կոչում Հայաստանը[2]։ Փ. Բուզանդը դաստակերտ է կոչում Արշակավան քաղաքը։ «Զայնու ժամանակաւ շինեաց իւր արքայն (Արշակը) դաստակերտ մի ի հովիտն անուանեալ ի Կոգ դաւառի»։

Արշակավան դաստակերտը հետո այնքան է աճում, որ «աւանանայր, քաղաքանայր, մեծացաւ, բազմացաւ և ելից զհովիտն ամենայն...»[3]։ Եթե Բուզանդը Արշակավանը համարում է դաստակերտ, ապա Խորենացին այն անվանում է ձեռակերտ[4]։

Եղիշեն դաստակերտ է անվանում ամբողջ Հայաստանը. «Եւ յայնչափ մեծ իշխանութեան՝ Դաստակերտ մեծ և սիրելի զՀայոց աշխարհս անուանէին»[5]։

Ներսես կաթողիկոսը դիմելով հայ նախարարական-ֆեոդալական դասերի ներկայացուցիչներին, ասում է. «Զի ամենեքեան դուք աւադիկ կայք և վկայէք, մանաւանդ զի ամենեքեան դուք կեցեալ էք յազգէդ արշակունոյ. ոմանք ի ձէնջ գաւառատեարք լեալք ի նոցանէն, և ոմանք մեծամեծք աշխարհաց, ոմանք աւագ աւագ աւանաց, գեղից և գանձուց տեարք լեալ էք, և այէսպէս դաստակերտացն»[6]։

Այս վկայության մեջ դաստակերտների ժառանգական տերերը նույն իշխան-ֆեոդալներն էին, գավառատերեր, աշխարհատերերը։ Դաստակերտներում գտնվում էին արքունական կայազորները։

Վասակ Սյունեցին, վկայում է Եղիշեն, ասպատակում և ավերում է «զբաղում տեղիս Հայոց աշխարհին, մանաւանդ զձմերոցս արքունի, որ կայանք զօրացն էին, զԳառնին և զԵրամայիս և զԴրասխանակերտն՝ զմեծ Դաստակերտն...»[7] Այս նույն վկայության մեջ պատմիչը սահմանագիծ է անցկացնում քաղաքների, ավանների, շենների, դաստակերտների միջև։ Օշականը ամրոց էր, Յոլակերտը,

---

1 Ագաթանգեղոս, էջ 424։
2 Նույն տեղում, էջ 73։
3 Փ. Բուզանդ, էջ 90—91։
4 Խորենացի, էջ 288, 291, 294։
5 Եղիշե, էջ 92։
6 Փ. Բուզանդ, էջ 137։
7 Եղիշե, էջ 100։

Կուաշն ավան, Արտաշատը քաղաք։ Սրանք բոլորն էլ շրջապատված էին գյուղերով և ավան-ագարակներով[1]։ Դաստակերտ-ձեռակերտներ շինում էին իշխանները, նախարարները, տոհմապետները։ Խորենացին պատմում է, որ Հայկ նահապետը շինում է «գիւղ մի, և անուանէ.. Հայկաշէն»[2]։ Հայկի Գեղամ ժառանգը շինում է ձեռակերտ «և կոչի զանուն... Գեղամի», այս ձեռակերտը ժառանգաբար անցնում է Գեղամի Գառնիկ թոռին և սրա անունով էլ կոչվում է Գառնի[3]։ Խորենացին ձեռակերտ և դաստակերտը համարում է հոմանիշ։ Երվանդ թագավորը, ասում է պատմիչը, շինում է իր ձեռակերտը, որը կոչվում է «Երուանդակերտ»։ «Քաղցր է ինձ,— շարունակում է պատմիչը,— ասել և յաղագս դեղեցիկ դաստակերտին Երուանդակերտի, զոր յօրինեաց նոյն ինքն Երուանդ դեղեցիկ և չքնաղ յօրինուածովք»[4]։

Խորենացին ձեռակերտ է կոչում Բագարանը[5]։ Նա խիստ սահմանագիծ է անցկացնում շենների, ագարակների, ձեռակերտ-դաստակերտների միջև։ Խոսելով Ամատունյաց նախարարական տոհմի ծագման մասին, Խորենացին խոստովանում է, թե երբ և ինչ պատճառով են նրանք Հայաստան եկել, իրեն անհայտ է, բայց նրանք «պատուին յԱրտաշիսէ դեղիւք և դաստակերտօք...»[6]։ Տրդատ թագավորը Սլկունյաց նախարարական տանը նույնպես նվիրում է «յաւիտենական իշխանութեամբ զդեղս և զդաստակերտս...»[7]։

Դաստակերտ էր նաև Սասանյան թագավորների Արտեմիս կայան-գահանիստ քաղաքը։ Խոսրով 2-րդ պարսկական թագավորը, «փոխանակ գոռիցն և պատերազմաց անձնատուր լեալ ի զբօսանս խաղաղականս ուրախ լինէր առատապէս ընդ կայանս իւր սիրելի Դաստակերտին իւրում...»։ Այս դաստակերտը՝ շրջապատված էր «արտօք», լի էր «անգէոլք և խաշամբք, և դրախտն արքունի երամովք փասենից, սիրամարգաց և ջայլեմանց, կնճից և այծեմանց...»[8]։

Այս նկարագրության մեջ դաստակերտը տիպիկ գյուղական վայր էր իր տնտեսական պիտույքներով։ Ղևոնդը ոչ միայն դաս-

---

1 Եղիշե, էջ 101։
2 Մ. Խորենացի, էջ 33։
3 Նույն տեղում, էջ 41։
4 Նույն տեղում, էջ 167։
5 Նույն տեղում, էջ 175։
6 Նույն տեղում, էջ 187։
7 Նույն տեղում, էջ 228։
8 Ղևոնդ, Պատմութիւն..., Առաջաբան, էջ եև, ծանոթ. 1։

տակերտ է կոչում զորակայանները, այլև Հայաստանի մեծ քաղաքները։ Պարսիկները, ասում է պատմիչը, «առնուին ի դերութիւն զաւանս Մարաց և զդաւառն Գողթն և զդաստակերտն Նախջաւանու»[1]։ Հովհ. Դրասխանակերտցին դաստակերտ է անվանում Արտաշատը, Կավակերտը, Հոռոմոց Մարդը, այսինքն Հովսեփ կաթողիկոսի սեփական տիրույթները[2]։ Դաստակերտ էր նաև Կողբը, Բյուրականը։ Այս ձեռակերտները, որպես ֆեոդալական կալված դասավորում և դնվում էին։ Հովհան կաթողիկոսը բողոքում է, որ Նար զորավարի հետապնդումից խուսափելու համար ինքն «ի բաց դինչան և զստացուածսն... չու յուզի անկեալ շողաք մինչև ի ձեռակերտ ամրոցիկն իմ Բիւրական, զոր ստացեալն էր իմ գանձի գնոյ, ուր և շինեալ յարդարեալ իսկ էի եկեղեցի հաստահեղոյս կոփածոյ քարամբք պերճապատճոյճ պճնողութեամբ և նկարակերտ յօրինուածով...»։ Այս ձեռակերտն ուներ բավականին հոծ բնակչություն, քահանաներ, դյուղացիներ և այլն[3]։

Արտաշես թագավորը, ասում է Ռ. Արծրունին, շինում է Արտաշատ մայրաքաղաքը, իսկ «զանուն քաղաքին կոչեցին Արտաշատ, որ թարգմանեալ ստուգաբանի Արտաշէսի ձեռակերտ»[4]։ Գյուտ կաթողիկոսի օրոք, ասում է պատմիչը, «շինեն նախարարքն Հայոց իւրաքանչիւր պալատս արքունականս և դաստակերտս յաւանսն, և զբաղաքն որմափակօք պարսպեն, և խաղաղեցուցանեն զերկիրս»[5]։

Աներկբայելի է, որ վերոհիշյալ բոլոր վկայություններում խոսքը մեծ, բազում բնակիչ ունեցող վայրերի մասին է։ Նույն պատմիչը Արծրունիների ասատնը կոչում է Գագիկ Արծրունու «ձեռակերտ»։

«Իսկ ի տիրական զօրավարութեանն Գագկայ սկզբնաւորեալ ձեռակերտ իւր՝ շինեաց զհողաբլուր բարձրաւանդակն ի Մահռաշա գեօղ յափն գետոյն յելս կոյս, որ հայի յՈստանն Ռշտունեաց...»[6]։

Դաստակերտները, որպես ֆեոդալական տիրույթ, որպես ֆեոդալական կալված անցնում էր ժառանգաբար։ Այս առթիվ ուշադրավ վկայություն է պահպանվել Ար. Լաստիվերտցու մոտ։

---

[1] Ղեւոնդ, էջ 7։
[2] Հովհ. Դրասխանակերտցի. էջ 112, 111։
[3] Նույն տեղում, էջ 336, 293։
[4] Ռ. Արծրունի, էջ 53—54։
[5] Նույն տեղում, էջ 79։
[6] Նույն տեղում, էջ 255։

«Այլ թագաւորն զաւուրսն զորս եկաց ի Սալքորայ, քանզի երիս բերդս իւրեանց դաստակերտօքն խնդրէր ի Գէորգէ, զոր Գուրգինայ տարեալ էր ի բաժնէն Կիւրապաղատէն անիրաւաբար, առաքէր առ նմա դեսպանս... թէ զոր քո ոչ է հայրենի ժառանգութիւն՝ թող, և կաց խաղաղութեամբ ի քո բաժնիդ, և մի խափան առնէր իմ ճանապարհին, որ ի Պարսիկս»[1]: Ոչ միայն առանձին բերդերն ունեին իրենց դաստակերտները, այլև քաղաքները։ «Քանզի զԱրճէշ իւրով դաստակերտօք նա էած ընդ ձեռամբ Հոռոմոց»[2]: Դաստակերտներով շրջապատված էր Բերկրին։ Միքայել կայսրի օրոք Բերկրի բերդաքաղաքի տակ, որն էր «վիճակի Արծրունեաց աշխարհին» բյուզանդացիները մեծ կորուստներ են կրում։ Այս Բերկրի բերդաքաղաքը հափշտակված է պարսիկների կողմից «հանդերձ իւրովք դաստակերտօքն...»[3]: Սելջուկները, ասում է պատմիչը, Վասպուրականը ասպատակելուց հետո մտնում են «ի գաւառն Բասեան, և մինչև ի դաստակերտն մեծ՝ որ կոչի Վաղարշաւան...»[4]:

Լիպարիտի Իվանե որդին, ասում է նույն պատմիչը, ուներ սեփական ժառանգություն «տեղիս բնակութեան զմեծ աւանն Երիզայ ի գաւառին Հաշտենից, և որ շուրջ զնովաւ դաստակերտք...»[5]:

Դաստակերտներ ուներ Մելիտին քաղաքը։ Սելջուկ-Թուրքերը, ասում է պատմիչը, «կացեալք ի քաղաքին աւուրս երկոտասան, և ի հիմանէ բրեալ ասպականեցին զնա և զդաստակերտս նորա շուրջանակի»[6]:

Յուսուֆը ասպատակում է Սյունիքը, գերում և սպանում է Գրիգոր Սուփան իշխանին։ Սուփանի մարմինը թաղում են «յիրում ձեռակերտ սրբարանին ի սուրբն Շիմոնեայ»[7]:

Դաստակերտ-ձեռակերտ ունեին վանքերն ու եկեղեցիները։ Սյունյաց Սահակ և Վասակ իշխանները իրենց մոր դին «շքեղագոյն պատուով... և աշխարհաժողով հանդիսիւ եդին ի հանդստի մերձ առ ձեռակերտ եկեղեցւոյն իւր ի Շողուագայ»։ Իսկ Սահակի դին թաղում են «յիրում ձեռակերտին առ դրան մեծ եկեղեցւոյն, որ ի Նո-

---

1 Ար. Լաստիվերտցի, էջ 23։
2 Նույն տեղում, էջ 31։
3 Նույն տեղում, էջ 40, 42։
4 Նույն տեղում, էջ 65։
5 Նույն տեղում, էջ 123։
6 Նույն տեղում, էջ 139։
7 Ստ. Օրբելեան, էջ 188։

դատուս»[1]։ Յուսուֆի աշխարհավեր արշավանքից հետո Սյունիք են վերադառնում մեծ իշխան Սմբատը, Սահակը, Բարգենը, Վասակը և տեսնում են արքունական ապարանքը քանդված, եկեղեցիները ավերված և «անընակ անապատացեալ զմեծամեծ աւանսն, և զգեղեցիկ դաստակերտն, ունայնացեալ զամբարս ցորենոյ և խորտակեալ զդուրս գինւոյ»[2]։ Դաստակերտը, որպես ֆեոդալական տիրույթ, վաճառվում էր։ Տեր Դավիթը, ասում է Գանձակեցին, «վաճառեաց անօրինաց զԴաստակերտն և զՍահմանախաչ»[3]։

Վարդան Բարձրբերդցին ասում է, որ Ներսես կաթողիկոսին թաղում են «յիւրում ձեռակերտին», իսկ Մ. Գոշին «յիւրում ձեռակերտին ի Դեսիկ, զոր շինեալ էր հրամանաւ Իւանէի...»[4]։

Այսպիսով, աղբյուրների մանրամասն քննարկումը հնարավորություն է տալիս եզրակացնել, որ ագարակները, ավանները, դաստակերտները, ձեռակերտները նույնիսկ Արշակունիների էպոխայում ստրկատիրական լատիֆունդիաներ չէին, այլ տիպիկ գյուղական վայրեր։ Ավաններն ու դաստակերտ-ձեռակերտները համարվում էին գյուղաքաղաք, բաղաքագյուղ։ Արդեն զարգացած ֆեոդալական հարաբերությունների պայմաններում ավանները վեր էին ածվում բաղաքների, ագարակները՝ ավանների։ Դաստակերտներ ունեին թագավորները, մեծամեծ իշխանները, նախարար ֆեոդալները, վանքերն ու եկեղեցիները։ Այս տիպիկ գյուղական վայրերում, ինչպես վաղ, այնպես էլ զարգացած ֆեոդալիզմի շրջանում ապրում էին շինական-գյուղացիները և սրանք էլ հանդիսանում էին հիմնական, անմիջական կենսամթերքներ արտադրողներ։ Այս վայրերում, նախնական շրջանում, անկասկած է, որ բնակություն էին հաստատում պատերազմական գերի-ստրուկներ, սակայն ժողովրդական տնտեսության մեջ սրանց խաղացած դերը երկրորդական էր, կամ խիստ աննշան։ Հայ աշխարհիկ և հոգևոր ֆեոդալները չէին. կարող կազմակերպել ստրկատիրական տիպի տնտեսություն նաև այն պատճառով, որ այս վայրերում ապրող գյուղացի-շինականներն էին համարվում հիմնական արտադրող դասը։

Պատերազմական գերիների մի ստվար մասը փոխադրվում էր հասարակական և պետական նշանակություն ունեցող ձեռնարկները, արհեստանոցները, հանքերը, ձկնորսարանները, աշխատում էր քաղաքային շինարարության վրա։

---

[1] Ստ. Օրբելեան, էջ 194։
[2] Նույն տեղում, էջ 193։
[3] Կ. Գանձակեցի, էջ 186։
[4] Վ. Բարձրբերդցի, էջ 97, 184։

Հին Հայաստանում լայն չափով տարածված էր ձկնորսարանների ցանցը։ Այստեղ աշխատում էին պատերազմական գերիները։ Գերիների մի այլ մասը փոխադրվում էր քաղաքները, աշխատում քաղաքային շինարարության վրա։ Աղվանից թագավոր Ուռնայրը դիմելով իր բանակին, կարդադրում է. «Յանձն լիցի ձեզ, յիշելով ի ժամանակի՝ իրրև ձերբակալ արասցուք զզօրսն Յունաց, զրաղումըս ի նոցանէն տարեցուսջիք, զի կալեալս, կապեալս տարցուք յԱղուանս ի գործ կաւադործութեան դաղատոս որմաշէնս պիտոյից մերոց քաղաքաց տպարանից և այլոց պիտոյից»[1]։

Թովմա Արծրունին վկայում է, որ Խլաթի ամիրան «...Զբնակիչս աշխարհին վարեաց ի գերութիւն... և զկէս գերեալն ընդ իրեանց ունելով ի քաղաքն, լինել իրեանց ջրկիրս և փայտակոտորս. և չարչարէին զնոսա ի գործս խիստ սաստկասառոյց ձմերանն դառնութեան, և զերծեալքն փախստեայ անկանէին ի կողմանս կողմանս աշխարհաց»[2]։

Պատերազմական գերիները փոխադրվում էին նաև արհեստանոցները, հանքերը, որտեղ նրանք կատարում էին հարկադիր, ձրի աշխատանք։

Հայտնի է, որ Հայաստանում մեծ չափերի էին հասնում երկաթի, արծաթի, կապարի, ոսկու հանքերի մշակումն ու օգտագործումը։ Ղ. Փարպեցին վկայում է, թե ինչպես Արշակ թագավորը Հայաստանի բաժանման հետևանքով թողնում է «Զբարի և զբնիկ վառանգութիւն նախնեաց իւրոց, զգաւառն Այրարատու, զհոյակապքն և զհռչակաւորն, և զականաւորն». ի միջի այլոց նշում է, որ այնտեղ կային ոսկու, արծաթի, երկաթի հանքեր, որտեղ, անկասկած, աշխատում էին ստրուկ-ոռազմագերիներ։ Ստրուկների աշխատանքով արտահանված ոսկին ու արծաթը «ընկալեալ արուեստող ձեռաց՝ զարդարեն զթագաւորս մեծատեսիլ զարդեօքն յօրինուածովքն, զոր ի խոյրսն և ի թագսն և ի հանդերձսն յոսկէհուռս պատճուճեալս ընդելուզանեն»[3]։

Մ. Խորենացին վկայում է, որ «Աստ իմն ակնակառոյց լեալ այրասիրտն այն և կաթոտն Շամիրամ, հրաման տայ չորից բիւրոց և երկուց հազարաց արանց անարուեստից գործատրաց յԱսորեստանեայց և յայլոց իշխեցելոց, և վեց հազար իւրոց ընտրելոց յամենայն արուեստաւոր գործաւորաց փայտի և քարի, պղնձոյ և եր-

---

[1] Փ. Բուզանդ, էջ 162։

[2] Թ. Արծրունի, էջ 118։

[3] Ղ. Փարպեցի, էջ 9—10։

կաթոյ, որք ամենեին կատարեալք իցեն յարուեստդիտութեան, ածել անխափան ի փափագեալ տեղին»[1]։

Մ. Կաղանկատվացին հարում է, թե «Առաքեաց (իշխանն Հիսիսոյ) գործակից ի վերայ ազգի ազգի արուեստագործաց, որք զգիտութիւն ոսկէծնութեան և արծաթահանութեան և երկաթահանութեան և պղնձագործութեան ունէին»[2]։

Հասկանալի է, որ հիշված հանքերում աշխատում էին ոչ միայն «հանցապարտ» դյուղացիները, շինականները, այլ գերազանցապես պատերազմական գերի-ստրուկները։

Վերոհիշյալ վկայությունները մեզ հնարավորություն են տալիս եզրակացնելու՝

1. Ինչպես շատ երկրներում, այնպես էլ Հին և միջնադարյան Հայաստանում ստրկությունը տարածված և ընդհանուր երևույթ էր։ Սակայն դյուղական համայնքների առկայությունը մի կողմից, նրանց կենսունակությունը, ազատ համայնական դյուղացու առկայությունը մյուս կողմից, արգելակեց ստրկության զարգացմանը և նա չհասավ անտիկ ստրկատիրական ասիճանին, այլ մնաց տնային, արևելյան տիպի ստրկատիրության ստադիայում։

2. Հայաստանում ստրկությունը հանդես չեկավ, որպես միակ արտադրության տիրապետող եղանակ նաև այն պատճառով, որովհետև այստեղ դյուղական երկրագործական համայնքները հանդիսանում էին բանվորական ուժի անբավ առատ աղբյուրներ և տարբերվում էին պատերազմական տատանվող և պատահական գերիների հոսանքներից։ Ավելին, դյուղական համայնքները, նրանց վարչական ապարատը հանդիսանում էին մշտական գործող այնպիսի օրգաններ, որոնք կազմակերպում և նպատակահարմար կերպով օգտագործում էին համայնքի անդամների աշխատանքը, ոչ միայն համայնքների, այլև թագավորական, աշխարհիկ և հոգևոր ֆեոդալներին պատկանող հողերի վրա։ Թագավորական տան և հոգևոր դասերին պատկանող ընդարձակ կալվածների վրա կատարվող հարկադիր աշխատանքը կրում էր կոլեկտիվ աշխատանքի բնույթ, իսկ այդ կոլեկտիվ աշխատանքը Դարոյ էր ապահովել միայն դյուղական երկրագործական համայնքը։ Եթե անտիկ ստրկատիրական հասարակություններում ստրկատերերը ձգտում էին կենտրոնացնել հնարավորին չափ ավելի ու ավելի ստրուկներ, որ-

---

[1] Մ. Խորենացի, էջ 52։

[2] Մ. Կաղանկատվացի, էջ 190։

պես «խոսող գործիքներ», սոսա Հին Հայաստանում մենք նկատում ենք բոլորովին հակառակ երևույթ — ոչ թե ստրուկների համակենտրոնացում, այլ նրանցից պատվելու ձգտում։

3. Պատերազմական գերիների մի զգալի մասը փոխադրվում էին թագավորական տիրույթները և աշխատում էին «թագավորական տան» սպասողական կարիքները բավարարելու համար։

4. Ռազմագերի ստրուկների մի զգալի մասը նվիրաբերվում էին հեթանոսական տաճարներին, իսկ քրիստոնեության մուտքից հետո՝ եկեղեցիներին։ Նրանք աշխատելով տաճարական և եկեղեցական տիրույթներում, կոչվում էին ծառա-ստրուկներ կամ սպասավորներ։

5. Պատերազմական գերիների մի մասն էլ փոխադրվում էր Հին Հայաստանի հանքերը, արհեստանոցները, ձկնորսարանները, հասարակական և պետական նշանակություն ունեցող ճեռնարկները։

6. Պատերազմական գերիները փոխադրվում էին նաև քաղաքները և աշխատում էին քաղաքային շինարարության, ռազմական և տնտեսական նշանակություն ունեցող ամրոցների, կառույցների, ճանապարհների, ջրանցքների և պետական նշանակություն ունեցող շինարարական ձեռնարկների վրա։

7. Քննարկված ժամանակաշրջանում Հին Հայաստանի տնտեսությունը նատուրալ էր. արտաքին և ներքին առևտուրն ու արհեստային արտադրությունը գտնվում էր զարգացման պրիմիտիվ աստիճանում։ Այդ էր գլխավոր պատճառը, որ Հին Հայաստանում չստեղծվեցին լատիֆունդիական տիպի, լայն շուկաների հետ կապված և միայն ստրուկի աշխատանքի վրա հիմնված տնտեսություններ։

8. Ստրուկների աշխատանքը «...Ոչ խոշոր հողագործության մեջ, ոչ էլ քաղաքային մանուֆակտուրաներում... այլևս այնպիսի եկամուտ չէր բերում, որ գործադրած աշխատանքն արդարացներ...»,[1] այդ պատճառով էլ արդեն ստրկության դարն անցել էր և նրան գալիս էր փոխարինելու ֆեոդալական հասարակարգը, որը հիմնված էր գյուղացու աշխատանքի և վաստակած արդյունքների շահագործման վրա։

---

[1] Ֆ. Էնգելս, Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, էջ 197։

2. ԾԱՌԱՆԵՐ, ԱՂԱԽԻՆՆԵՐ

Մեր հին մատենագիրները, առանձնապես Փ. Բուզանդը, հաճախակի գործածում են «ծառա», «ծառայութիւն» տերմինները։ Այս բառերը գործ են ածվել զանազան նշանակությամբ, բայց մեկ ընդհանուր իմաստով՝ ցույց տալու հասարակական տարբեր խավերի կացն ու կախումը ավելի բարձր խավերից։ «Ծառայութիւն» էին կոչվում այն բոլոր պարտավորությունները, որ ունեին նախարարները թագավորի, ազատները նախարարների, ստրուկներն իրենց տերերի հանդեպ, սակայն այս կարգի ծառայությունն առաջինից տարբերելու համար կոչվում էր «ի ստրկաց կարգի ծառայութիւն», կամ «ծառայութիւն ստրկութեան»։

Այս ծառայություններն ամենուր միատեսակ չէին։ Գյուղացիների մի մասի ծառայությունը սահմանափակվում էր հարկատվությամբ, իսկ մյուս մասը գտնվում էր ուղղակի ստրկական կացության մեջ և նրա ծառայությունը ոչ թե վասալական, այլ իսկապես ծառայի ծառայություն էր։ Անկասկած է, որ ծառա տերմինը իր մեջ իմաստավորում էր և ստրուկին և աղախնին, սակայն այդ երբեք չի նշանակում, որ ծառա տերմինի տակ մենք պետք է ընդունենք միայն ստրուկներին։

Ինչպես ռամիկը, այնպես էլ ծառան հանդիսանում են հավաքական տերմին։

Ծառաների պարտականությունները շատ մեծ էին։ Ծառաների մի մասը սպասարկում էր տիրոջ արքունիքը. կային արքունիքում զանազան տեսակի սպասավորներ, նաժիշտներ, դայակներ, աղախիններ, արհեստավորներ, վերակացուներ, բայց կային նաև հողագործ և անասնապահ ծառաներ, ջրկիրներ, վայտակիրներ։ Ծառաների, աղախինների մասին կան մատենագրական բազմաթիվ վկայություններ։ Ծառա-աղախինները ձեռք էին բերվում ռազմական արշավանքների, գնման և վաճառման, նվիրատվության, ազատ մարդկանց հարկադրաբար ստրկացման ճանապարհով։

Արդեն նշել ենք, որ պատերազմական գերիների մի մասը փոխադրվում էին թագավորական արքունիքները և իշխանական պալատները և դրվում էին «արքունի» ստրուկներին հավասար պայմաններում։ Հին կտակարանի հայերեն թարգմանության, Յայսմավուրքում, ազգային մատենագիրների, կրոնական-կանոնական որոշումների, դատաստանագրքերի մեջ պահպանվել են բազմաթիվ հիշատակություններ ծառա-աղախինների ստորադաս սոցիալական դրության մասին։

Հին կտակարանում և հայրապետական կանոններում պահպանվել է վկայություն այն մասին, որ տերերը գնումների միջոցով ձեռք էին բերում «ընդոծին և արծաթագին», «զամենայն արծաթագին», «արծաթագին ծառայք» և աղախիններ[1]։

Գնման եղանակով ծառա-սպասավորներ ձեռք բերելու դեպքերն այնքան մասսայական էին, որ նույնիսկ Յայսմավուրքը հատուկ խրատական կանոններով զգուշացնում է տերերին խուսափել այդ եղանակով ազատ մարդկանց ծառա-աղախին դարձնելու մեթոդներից։ «Գնոց ասէ զնեցյար՝ մի լինիր ծառայք մարդկան։ Ի միտ առ զզինսն որ տուանն ընդ քեզ և չլինիցիս ումեք ծառա ի մարդկանէ»։

Դվինի երկրորդ ժողովում (VI դ.) մշակված կանոններում խիստ կերպով պատվիրվում է հոգևոր դասերի ներկայացուցիչներին չզբաղվել հարբեցողությամբ, խուսափել արծաթագին ծառա-աղախիններ պահելուց։ «Մի գացի քահանայ արբեցող կամ հանդանակող և մի ունիցի արծաթագին աղախին»[3]։

Փ. Բուզանդը թողել է ուշագրավ վկայություն Արշակունի թագավորների ծառա-սպասավորների մասին։ Ատրպատականի մարզպան Վարազշապուհն, ասում է պատմիչը, դեսպանություն է ուղարկում Տիրանի մոտ և առաջարկում խաղաղության դաշինք կնքել։

Մինչև դեսպանության ներկայանալը հայոց թագավորը «խորհէր... ընդ իւր ծառայսն ներքինիսն սպասաւորսն իւրում սենեկի»[4]։

Ղազար Փարպեցին նկարագրելով Արարատյան դաշտի բնական հարստությունները, նախարար-իշխանների զբաղմունքը և որսի տեսարանները, ասում է, թե «Եւ շատք ի մանր մանկանց նախարարաց որդւոցն դաստիարակօք և ծառայիւք զայլ և այլ սեռս ի թռչնոցն որսացեալ բազայիւք՝ դարձեալ բերիցեն ի յաճումն ընթրեացն ուրախութեան...»[5]։

---

[1] Ասատուրաշունչ մատեան հին և նոր կտակարանաց, ըստ ճշգրիտ թարգմանութեանց նախնեաց մերոց, համեմատութեամբ եբրայական և յունական բնագրաց, Պոլիս, 1895, տե՛ս, Ծնն. Ժ, 14, ԺԷ, 12, ելք. ԺԲ, 44, Յուդիթ, Դ, 9։ Կանոնգիրք հայոց, էջ 115, հմմտ. ձեռագիր № 839, էջ 30բ, 31ա. ձեռագիր, № 6677, էջ 127ա, և ուրիշներ։

[2] Յայսմաւուրք, Պոլիս, 1834, հատ. II, էջ 143։

[3] Արել արքեպիսկոպոս Մխիթարեանց, Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց Եկեղեցւոյ, Վաղարշապատ, 1874, էջ 81։

[4] Փ. Բուզանդ, էջ 44։

[5] Ղ. Փարպեցի, էջ 10—13։

Նույն պատմիչը տալով հայ և վրաց ժողովուրդների ժողովրդական-ազատագրական պայքարի պատմությունը պարսկական բռնակալության դեմ, վկայում է, որ վրացական դեսպանները մեկնում են Հայաստան ու Վահան Մամիկոնյանին հաղորդում, թե ասպետ Սահակը և սպարապետ Վասակ Մամիկոնյանը կենդանի են և խնդրում են իրենց փոխադրել Հայաստան։ Երբ այդ լուրը լսեցին սրանց կանայք «զրդեին զսիրելիս իւրեանց և զազգականս, զդայեակս նոցա և զծառայս՝ փութալ ճեղել հասանել վաղվաղակի և ածել զնոսա»[1]։

Ծառա-սպասավորների ինստիտուտն այնքան մասսայական և տարածված երևույթ էր Հին Հայաստանում, որ ոչ միայն Արշակունի թագավորները, մեծամեծ նախարար-իշխանները, այլև ազատները և նույնիսկ կրտսեր նախարարները ունեին ծառա-սպասավորներ։

Պարսկական Հազարավուխտ զորավարի հետապնդումներից խուսափելու համար Վահան Մամիկոնյանը հայոց նախարարների հետ բանակ է դնում «յամուր տեղիս սահմանացն Խաղտեաց», այստեղ են մեկնում հայ նախարարները «հանդերձ իւրաքանչիւր ուրուք դայեկօք և սիրելի ծառայիւք»[2]։

Այնուհետև Գդիհոն իշխանի մահից հետո, ասում է Փարպեցին, նրա կուսակիցները «առեալ զնոցին զազգականս իւր և ծառայս յաշխարհն Սիւնեաց»[3]։

Աբրահամ Խոստովանողը իր «Վկայք Արևելից» աշխատության մեջ հիշատակում է, որ մոգպետը ցանկություն է հայտնում ամուսնանալ քրիստոնյա Եղանդուխտի հետ։ Եղանդուխտին հրապուրելու համար «տարեալ անցուցանիցեն առ դրաւք ապարանից իւրոց, և ցուցցեն նմա զամենայն տարբեր նորա, և զբազմութիւն ծառայից նորա և զաղախնանց...»[4]։

Այս հատվածում արդեն ծառա-աղախինները սպասարկում են մոգպետի արքունիքը և ուշագրավ է, որ նրանք թվարկվում են նրա դպյակի կահ-կարասիների հետ միասին։

Ագաթանգեղոսը նկարագրելով Տրդատ թագավորի կրոնադարձության պատմությունը, ասում է, որ «ամենայն ընտանիք թագա-

---

1 Ղ. Փարպեցի, էջ 142։

2 Նույն տեղում, էջ 145։

3 Նույն տեղում, էջ 153։

4 Աբրահամ Խոստովանող, Վկայք Արևելից՝ թարգմանութիւնք յասորերենէ Աշխատ. Դ. Տէր-Մկրտչեանի, Էջմիածին, 1921, էջ 162։

էորին, ծառայք և սպասաւորք առ հասարակ, հարուածովք հարեալք լինէին. և անհնարին սուգ վասն հարուածոցն լինէր»[1]:

Ագաթանգեղոսը, Եղիշեն, Ղ. Փարպեցին, Մ. Խորենացին ընդգծված սահմանագիծ են անցկացնում ազատների և ծառաների ծառայության միջև: Ազատները, ասում են պատմիչները «աղատութենէ անտի ի թագաւորութիւն ընթացան», իսկ «ծառայք ի ծառայութենէ յազատութիւն այնորիկ, որ առ զկերպարանս ծառայի»: Ուրեմն ծառաներն իրենց արտաքինով էլ տարբերվում էին ազատներից:

Եպիփանը, ասում է Բուզանդը, քարոզում էր Քրիստոսի բան ու բարը, ուսուցանում էր, որ նա «ընդ մարդկան շրջեցաւ, ի սրբոյ կուսէն մարմնացաւ, զկերպարանս ծառայի էառ...»[2]:

Աղբյուրների մանրակրկիտ հետազոտությունը ցույց է տալիս, որ նրանց հեղինակները խիստ զանազանություն են դնում ծառա, աղախին, սպասավոր և սարուկ տերմինների միջև: Ղ. Փարպեցին նկարագրելով Վարդանանց պատերազմը, վկայում է, որ Վարդան Մամիկոնյանը կարգադրում է, որ իր մոտ գան իր ընտանիքը, իր եղբայրները և «զաղատս և զծառայս և զամենայն միահամուռ զբազմութիւն դրանն իւրոյ...»[3]: *Ծառա-սպասավորների հիմնական պարտականությունն էր իրենց տերերի հանդեպ «զվաստակ և զհպատակութիւն»*[4]: *Պատմիչը կրոնա-բարոյական քարոզներով ուսուցում է, թե «ծառայք, հնազանդ լերուք մարմնաւոր տերանց ձերոց՝ որպէս Աստուծոյ»*[5]:

Ծառաների տաժանակիր աշխատանքը արձանագրված է ոչ միայն մատենագիրների, այլև ձեռագիր աղբյուրների, դատաստանագրքերի, կանոնական որոշումների և կտակարանների մեջ:

Աստվածաշնչում, «Վասն ծառայից» ենթավերնագրի տակ արձանագրված է «բուտ և թիր և բեռն իշոյ, հաց և դան և գործ ծառայից»: Ծառան, ասված է այստեղ, «գործեա գործ», սակայն նրա ձեռքերը դատարկ են մնում, նա ձգտում է «ազատութեան», բայց տերերը ոտնահարում են նրա իրավունքները: Ծառաների պարանոցին դրված է «լուծ և փոկ», ամբարտավան տերերը դուք չունեն իրենց ծառաների նկատմամբ, նրանք դժվարակիր աշխատանքով տանջում են իրենց ծառաներին, «չար գործ տանջանօք» խոշտանգում են նրանց: Եթե ծառան լողոքում է կամ խուսափում ծանր

---

1 Ագաթանգեղոս, *էջ 113։*

2 Փ. Բուզանդ. *էջ 188։* Ղ. Փարպեցի. *էջ 141—142։*

3 Ղ. Փարպեցի, *էջ 56—57։*

4 *Նույն տեղում, էջ 49։*

5 *Նույն տեղում, էջ 45։*

աշխատանքից, տերերը ավելի են ծանրացնում «զկապանս», լլկում և տանջում են նրանց[1]։

Պատմիչները լուսանք են թափում «չար», «անհնազանդ» ծառաների վրա։ Տերը լիիշխան իրավունք ունի իր ծառաների նկատմամբ, նա իրավունք ունի պատժել «անհնազանդ» ծառաներին, նրանց խոշտանգել և նույնիսկ «կորուսանել»։ Ծառայի հիմնական պարտականությունն է՝ «հնազանդութիւն և հպատակութիւն, զոր արժան է ծառայից առ տեառս առնել»։ Չար, անհնազանդ, ապըստամբ ծառան դատապարտվում է մահվան։

Տերերն ազատորեն տնօրինում էին ոչ միայն ծառաների, սպասավորների, աղախինների դույքը, այլև կյանքը։ Աթանասի կանոնները սահմանում են մահվան դատավճիռ անհնազանդ ծառաների նկատմամբ։

«Եթե,— ասված է Լ կանոնում,— ուրեք ծառայ յանհնազանդութեան դոցի և տէրն նորա առ բազում անգամ զայրանալոյն հարցէ և սպանցէ զծառայն... սպանաւղէ ապաշխարհեսցէ»[2]։

Աշխարհիկ և հոգևոր ֆեոդալները իրավունք ունեին որոնել և հետ բերել անհնազանդ, փախած ծառաներին։ Աթանասը իրավունք է տալիս քահանաներին պատվիրելով՝ «Եթէ ուրեք քահանայի ծառայք ապստամբին և դնան ի տէրէ իւրեանց... զի կալցին զգնացեալ ծառայսն և դարձուցեն անդրէն առ տէրն իւրեանց»[3]։ Առանց տերերի կամքի և ցանկության ամուսնացող ծառա-աղախինը նույնպես դատապարտվում է։ Բարսեղ Կեսարացու կանոնները պոռնիկ են հայտարարում այն բոլոր աղախիններին, որոնք «արտաքոյ կամաց տեառնն իւրոյ» ամուսնանում են[4]։

Սակայն եթե աղախինը բռնադատվում է տերերի կողմից, ապա տերը «առանց պատուհասի եղիցի»[5]։ Այս նույն քաղաքական դիծը անցկացնում են Ագաթանգեղոսը, Եղիշեն։ Ագաթանգեղոսը Գր. Լուսավորչի բերանով քարոզում է, «Հրամայեալ է յԱստուծոյ, զի ծառայք հնազանդ լիցին մարմնաւոր տերանց»[6]։

---

[1] Գիրք Աստուածաշունչք հին և նոր կտակարանց, Սիրաք, Լ. 25—26։ Հմմտ. նաև ձեռագիր № 2961, էջ 31ա, 31բ։

[2] Ձեռագիր, 6409, Կանոնք Աթանասի, կանոն, Լ, էջ 57բ։ Հմմտ. Ղ. Փարպեցի, էջ 45։

[3] Նույն տեղում, Կանոն ՀԱ, էջ 60ա, հմմտ. նաև ձեռագիր № 837, կանոն Լ, էջ 54բ, 61ա։ Հմմտ. ձեռագիր № 6409, կանոն ԻԱ և ԻԲ, էջ 64բ, 65ա։

[4] ՀՍՍՌ Մատենադարան, ձեռագիր 3706, կանոն ԻԱ, ԻԲ, էջ 95ա. բ.։

[5] Նույն տեղում։

[6] Ագաթանգեղոս, էջ 35—36։

Եղիշեն այս կրոնա-բարոյական, ըստ էության դասակարգային և սոցիալական պահանջը արտահայտել է ավելի բացորոշ ձևով։

Աստծու սուրբ կտակարանը և Պողոս առաքյալը, ասում է պատմիչը, պատվիրել են մեզ որ ծառաները պետք է հնազանդ լինեն «տերանց... մարմնաւորաց»։ Այդ ծառայությունը չպետք է լինի առերես, կեղծ, այլ «սրտի մտօք», որովհետև ծառայելով տերերին ծառաները կատարում են իրենց պարտքը աստծու և ոչ թե մարդկանց համար։ Հնազանդ ծառայելով տերերին, ծառաները միշտ պետք է հիշեն, որ նրանք իրենց վաստակի հատուցումը ոչ թե տերերից, այլ աստծուց են ստանալու[1]։ Հսկայական չափերի հասնող «ձեռնասուն» ծառաներ ուներ Վասակ Սյունեցին։ Վասակ Սյունեցու մահից հետո, ասում է պատմիչը, «փախստական եղեն ի նմանէ ձեռնասուն ծառայք նորա»[2]։

Յուրաքանչյուր խոշոր նախարար-ֆեոդալ ոչ միայն ուներ «ձեռնասուն» ծառաներ, այլև «ձեռնասուն սպասաւորս»[3]։

Ծառաները, սպասավորները, աղախինները հանդիսանալով տերերի լրիվ սեփականությունը, թագավորների, մեծամեծ նախարարների կողմից նվիրարերվում էին իրենց վասալներին։ Գեղամը, ասում է Խորենացին, իր որդի Սիսակին նվիրում է «զմեծ մասն ընչից իւրոց... և ծառայս անձինս բազումս...»[4]։ Արտաշես թագավորը իր Սմբատ զորավարին է նվիրում «զծառայսն Երուազայ... անձինս հինգ հարիւր»[5]։ Խորենացին միշտ էլ տարբերություն է տեսնում ստրուկի և ծառայի գոյավիճակի միջև։ Արտավազդը, ասում է պատմիչը, «ծառայ և ստրուկ որովայնի արդարև լինելով՝ զաղբիւս մեծացուցանէր»[6]։

Ծառա ռազմագերիների սոցիալական կացությունը Խորենացին բնութագրում է որպես «ի ստրկաց կարգի» ծառայություն։ Ալանաց թագավորի Սաթենիկ դուստրը աղերսում է Արտաշեսին, ասելով՝ «ոչ է օրէն դիւցազանց՝ զայլոց դիւցազանց զարմից բառնալ զկենդանութիւն, կամ ծառայեցուցանելով ի ստրկաց կարգի պահել...»[7]։ Նկարագրելով Արտաշես թագավորի թաղման ծիսակատարությունը,

---

1 Եղիշե, էջ 17։
2 Նույն տեղում, էջ 181—182։
3 Նույն տեղում, էջ 260։
4 Խորենացի, էջ 41։
5 Նույն տեղում, էջ 175։
6 Նույն տեղում, էջ 137։
7 Նույն տեղում, էջ 178։

Խորենացին ասում է, թե նրա գիտակի վրա մնաց ոչ միայն թագավորի սիրելի կանայք, այլև «հարճք և մտերիմ ծառայք»[1]։

Դ. Փարպեցին տալով Վահան Մամիկոնյանի եղբայր Վարդ Մամիկոնյանի հերոսական գործերի նկարագիրը, գրում է՝ «Իսկ զայրն Մամիկոնեան զՎարդ ոչ միայն լոկ անձամբ, այլև ծառայիւք, զրամբ և կազմածով, յամուր տեղեաց շահատանին, ի բարձրաբերձ պարսպացն և յասպարատիկ բազմութենէ պահապանացն, ընկալեալ իբրև զարծուի ի ցիս իւր և ընդ բազում անցուցեալ օթեանս՝ ածեալ հասուցանէր խաղաղութեամբ ի յերկիրս Հայոց»[2]։

Այս բոլոր վկայությունների մեջ մենք ծառա չպետք է հասկանանք միայն ստրուկներին, այլև հայ և պարսիկ իշխանների ենթապատավորներին, թիկնապահներին, կախման վիճակում գտնվող գյուղացիներին։

Այդ առթիվ ուշագրավ վկայություններ են պահպանվել Փավստոսի և Մ. Խորենացու մոտ։

Փավստոսը և Մ. Խորենացին նկարագրելով Արշակավան քաղաքի կառուցման և ավերման պատմությունը, նշում են, որ Արշակ թագավորը «Զայնու ժամանակաւ շինեաց... դաստակերտ մի ի հովիտն անուանեալ ի Կոզ դաւառի»։ Արշակ թագավորը այնուհետև հրաման է տալիս «ամենայն կողմանս դաւառաց իւրոց», որ այն բոլոր անձնավորությունները, որոնք պարտքեր ունեն, որոնք ուրիշից վնաս են կրել, կամ ով որ դատի տակ է, ով որ ուրիշին վնաս է պատճառել, վիրավորել է, կամ ով վախ ունի ուրիշից, թող «եկեսցէ յայն տեղի, զատ և իրաւունք մի լիցին»։ Արքայի այդ հրամանից հետո «ժողովեցան այնուհետև յայն տեղի ամենայն գողք և աւազակք, արիւնահանք, սպանողք, սուտք և մարգելոյզք, վնասակարք, գանձահատք, զրկողք, ստաղատք, զրախօսք, գերփողք, յափշտակողք, ժլատք..., բազում ծառայք զիւրեանց տերանց զգանձս ըմբռնեալ, փոխուցեալք անդր անկանէին...»[3]։

Այս հսկայական մարդկային հոսանքի հետևանքով «...տեղին աւանանայր, քաղաքանայր, մեծացաւ բազմացաւ և ելից զհովիտն ամենայն»[4]։

Փավստոսի այս արժեքավոր վկայությունը լրացնում է Մ. Խորենացին։ Մ. Խորենացու վկայությամբ նախարարները մի շարք անգամ դիմում են թագավորին, պահանջում են, որ նա հետ վերա-

---

1 Խորենացի, էջ 190։

2 Դ. Փարպեցի, էջ 131։

3 Փ. Բուզանդ, էջ 90—91։

4 Նույն տեղում։

գարձնի իրենց ծառաներին, սակայն թագավորը մերժում է։ Այն դեպքում, ըստ Խորենացու՝ «նախարարացն Հայոց ժողովեալ՝ դիմեցին ի վերայ արքունական ձեռակերտին Արշակաւանի, և հարին զնա սրով սուսերի յառնէ մինչև ցիին, բայց ի տղայոց ստնդիացաց. քանզի դառնացեալք էին իւրաքանչիւր ի վերայ ծառայից իւրեանց և յանցաւորաց։ Զոր թէպէտ և վաղ դիտացեալ մեծին Ներսիսի՝ ոչ յառաջ քան զկոտորելն ժամանեաց հասանել. այլ ի կատար գործոյն հասեալ՝ եղիտ բաժանեալ զտղայս կոտորելոցն, զի վարեսցեն ի դերութիւն որպէս զհեռաւոր թշնամեաց»[1]։

Լեոն և Մարկվարտը ենթադրել են, որ Արշակավան էին փախչում ոչ միայն «ավազակները», «մարդասպանները», «գողերն» ու «սրիկաները», այլև ճորտացած և կախյալ գյուղացիները[2]։

Ծառաների «ծառայությունը» խիստ բազմազան էր, տաժանակիր և կրում էր ստրկական բնույթ։ «Ծառա-աղախին-սպասավորների» հիմնական աղբյուրներն էին պատերազմը և գերեվարությունը, ծառաներից ու անազատ դասերից ծնված ժառանգական ծառաները, նվիրատվությունները, գնման և վաճառքի միջոցով ձեռք բերված արտադրության միջոցները և հողատորները կորցրած, երբեմն ազատ և համայնական շինականների շարքերից դուրս նկած հասարակական տարբեր դասերի և խավերի ներկայացուցիչները։ Ծառաների և սպասավորների շարքերն էին անցնում նույնիսկ ազատ դասի այն ներկայացուցիչները, որոնք քայքայվելով, զրկվելով իրենց արտադրության միջոցներից, որոնցում էին ապրուստի այլ աղբյուրներ։ Հետագայում, ֆեոդալական հարաբերությունների զարգացման և վերելքի պայմաններում, ծառա տերմինը աստիճանաբար իր տեղը զիջում է կախյալ և ճորտացված գյուղացիությանը, սակայն այդ պայմաններում էլ ծառաների ինստիտուտը չի չքանում ու անհետանում, այլ պահպանում է իր գոյությունը, բայց հասարակական հարաբերությունների այլ պայմաններում նա ստանում է այլ իմաստ ու նշանակություն։

3. ՄՇԱԿՆԵՐ

«Մշակ», «մշակություն» բառերի մասին պահպանված սկզբնաղբյուրների վկայությունների հետազոտությունը մեզ հաստատ

1 Մ. Խորենացի, էջ 289։

2 Լեո, Հայոց պատմություն, հ. 1, էջ 623, հմմտ.։ Markwart J., Südarmenien und die Tigrisquellen nach griechischen und arabischen Geographen, Wien, 1930, s. 62.

կռվաններ է տալիս ենթադրելու, որ «մշակ» տերմինի սոցիալական իմաստն ու նշանակությունը մինչև օրս ճիշտ չի ստուգաբանված։

Ակադեմիկոս Հ. Մանանդյանը հակված է հավասարության նշան դնելու «մշակի», «արքունի մշակների» և շինական դյուղացիների միջև։ Հիմնվելով Ղ. Փարպեցու և Եղիշեի՝ Աբրահամ Խոստովանողի և Խորեն Երեցի մասին տված վկայությունների վրա, հեղինակը ենթադրել է, որ «արքունի մշակք» անվան տակ կարելի է հասկանալ արքունի դյուղացիներին, որոնց դլխավոր պարտականությունը եղել է «ի հարկի ծառայությունը»[1]։

Ակադ. Հ. Մանանդյանի կարծիքով, ինչպես Պարսկաստանում, այնպես էլ Հին Հայաստանում ևս «շինական»-ները գտնվել են, «ի հարկի ծառայութեան» վիճակում, իրավունք չեն ունեցել ինքնակամ կերպով թողնել այդ ծառայությունը և, ըստ երևույթին, ժառանգաբար կապված են եղել իրենց զբաղմունքին, հողին ու հարկատու դրությանը»[2]։

Ակնհայտ է, որ ակադ. Հ. Մանանդյանը նպատակ է ունեցել ցույց տալու, որ դյուղացին եղել է հարկատու և առանց հիմքի «արքունի մշակներին» համարել է նույն շինականներին, ցույց տալու համար, որ ինչպես «արքունի մշակները», այնպես էլ իբր նրանց իրավահավասար դրության մեջ գտնվող շինականները եղել են հարկատու դասեր։ Որ շինականները եղել են հարկատու, այդ ապացուցման կարիք չունի։ Բայց որ շինականները արքունի մշակներ չէին, այդ արդեն ապացուցման խիստ կարիք ունի։ Մեր մատենագիրները, որոնց այնքան քաջ հայտնի են «արքունի մշակ», «արքունի ստրուկ», «արքունի ծառա», «դեղջուկ», «ռամիկ», «բաղմութիւն», «շինական», «կարճազատ» տերմինները, երբեք հավասարության նշան չեն դրել շինականի և մշակի միջև։ Ղազար Փարպեցին, որն այնքան սիրում է գործածել «ռամիկ», «շինական» տերմինը, բոլորովին այլ կապակցությամբ, այլ պայմաններում է, որ գործ է ածում «մշակ» տերմինը։

Պրոֆ. Խ. Սամուելյանը վիճելով ակադ. Հ. Մանանդյանի թեզի դեմ, զարգացնում է մի այլ տեսակետ։ Նրա կարծիքով «մշակ» բառը ունի ոչ թե շինականի, ինչպես ենթադրում է պրոֆ. Հ. Մանանդյանը, այլ ստրուկի իմաստ և նշանակություն[3]։

---

[1] Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը..., էջ 158։

[2] Նույն տեղում, էջ 159։

[3] Խ. Սամուելյան, Հին հայ իրավունքի պատմություն, հատ. I, էջ 289։

«Մշակ» տերմինին այլ իմաստ և նշանակություն է վերագրել Ս. Տ. Երեմյանը։ Հեղինակի կարծիքով այդ տերմինը խիստ դժվար է ստուգաբանության ենթարկվում։ «Գենետիկորեն հայկական մշակ, վրացական մուշակ տերմինը ծագել է սեմիտական մուշկենից, որը նշանակել է «գյուղացի», «հասարակ մարդ»։ Հավանական է, որ այդ ծառայագրված համայնականն էր, որը այս կամ այն պատճառով ընկել էր ստրուկների շարքը։ Բոլոր դեպքերում աշխատողը աշխատեր մասնատիրական տնտեսություններում, ո՞վ էլ որ լիներ—ազատ համայնական, վարձակալ կամ ստրուկ, արտահայտվել է մշակ տերմինով»[1]։

Թվում է, որ ակադ. Հ. Մանանդյանը, պրոֆ. Խ. Սամուելյանը և Ս. Երեմյանը սխալվում են։ Սկզբնաղբյուրներում «մշակների» մասին պահպանված վկայությունները ցույց են տալիս, որ նրանք ճորտ կամ ստրուկ չէին, այլ համայնքների քայքայման հետևանքով նրա շարքերից դուրս եկած, արտադրության միջոցները և հողակտորները կորցրած, ֆեոդալական պետությունից, արքունիքից, կամ ֆեոդալ հողատերերից տնտեսական և ոչ թե իրավական կախման վիճակում դրված սեփականազուրկ գյուղացիներ։ Այս դրությունն ապացուցելու համար դիմենք սկզբնաղբյուրներին։

«Մեկնութիւն գործոց առաքելոց, խմբագիր արարեալ նախնեաց յՈսկեբերանէ և Եփրեմէ» աշխատության մեջ հիշատակվում է, որ ադարակներում, գյուղերում աշխատում էին երկրագործ մշակները։ Մեկնության հրատարակիչն իր առաջաբանում գրում է, որ չնայած հեղինակի «անձն յանծանօթս կալեալ», սակայն «ժամանակ մատենագրելոյն կրտսեր է քան զՎկայասէրն, որպէս հայտ է ի հատուածոցն Շնորհալւոյն, Լամբրոնացւոյն և Կիրակոսին, որ գտանին ի սմա և յիշատակարանէն որ ի կատարած մատենիս»[2]։

Աշխատության վերջում եղած խիստ համառոտ հիշատակարանից երևում է, որ Գրիգոր Պահլավունու Գրիգոր որդին «մեծաւ ըղձմամբ հայացեալ գտի զտենչալիս... մեկնութիւն գործոց առաքելոց մեծին Յովհանու Ոսկեբերանի... և հանդիպեալ հմտագոյն հեռատրին Կիրակոսի յունական և հայկական ուսմամբ պերճացեալ... ետու թարգմանեալ զտենչալիս ոգւոյ իմոյ»[3]։ Հավանական է,

---

[1] С. Т. Еремян, О рабстве и рабовладении в древней Армении. (См. ВДИ, 1950, № 1, стр. 25).

[2] Մեկնութիւն գործոց առաքելոց, խմբագիր արարեալ նախնեաց յՈսկեբերանէ ի Եփրեմէ, Վենետիկ, 1839, Առաջարան, էջ 1։ Հմմտ. նաև ձեռագիր № 1363, էջ 74ա, 75բ, ձեռագիր № 1316, էջ 133բ, 134ա, բ, 135ա, 137ա և ուրիշները։

[3] Նույն տեղում, էջ 457։

որ նա 13-րդ դարի հեղինակ Կիրակոս Արևելցին էր, որը մեկնելով Ոսկեբերանին և Եփրեմին, իր աշխատության 18-րդ գլխում մեզ հետաքրքրող հարցի առնչությամբ գրում է՝ թե կան աղարակների և գյուղերի բազմաթիվ տերեր, որոնք փոխանակ իրենց հոգու և ապականված մարմինների փրկության մասին մտածեն և վանքեր ու եկեղեցիներ կառուցեն, տարվել են աշխարհիկ, այլասերված, ցոփ, դեղխ և անբարոյական կյանքով։ Դուք, ասում է քարոզների հեղինակը, որ «բաղումք... գեօղս և ագարակս ունեք, փոխանակ աղոթավայրեր կառուցելու, շինում եք «բաղնիս և գինեվաճառս», բազմապատկում եք ձեր կարողությունն ու «զշահս», կանգնեցնում եք «զշիրիմս և ապարանս» և չեք էլ մտահոգվում այն բազմաթիվ «երկրագործ մշակացն որ յագարակս բնակվեն» մասին, այլ անլուր խոշտանգումներով և ծանր հարկերով նրանց հետին տոնանկության եք հասցրել[1]։

Աներկբայելի է, որ մշակները հայ ֆեոդալական հասարակարգի այն դասն էր, որը կորցնելով իր հողակտորը և արտադրության գործիքները, վարձակալվում էր հողատեր ֆեոդալների մոտ և աշխատում նրանց տիրույթներում։ Ակնհայտ է, որ այս հատվածում մշակների հիմնական զբաղմունքը երկրագործությունն էր, իսկ բնակության վայրերը՝ գյուղերն ու ագարակները։

Որ մշակը ճորտ կամ սարուկ չէր, այդ մասին արժանահավատ վկայություններ են պահպանել մեր մատենագիրները։

Ղ. Փարպեցին տալով Վահան Մամիկոնյանի գլխավորած ժողովրդա-ազատագրական պայքարի պատմության նկարագիրը, ասում է, որ պարսիկների հետապնդումից խուսափելու համար Վահան Մամիկոնյանը իր մարդկանց հետ խույս է տալիս պարսիկներից «սակաւ արամբք երթային խռովեալք. և մերձեալք ի գիւղ մի Կարնոյ, որում անուն էր Արծաթի, և հասեալք ի հեղեղատ մի որ մերձ էր ի գիւղ մի, և կամեցեալք յեղեր հեղեղատին առ վայր մի հանգչել, ուր և ինձողմն արտորայոցն շուրջ զտեղօքն զորձէին։ Եւ իբրև գիտացին Պարսիկքն, թէ ոչ եղեն նոցա հասու՝ կամեցան մշակացն տեղեացն վնասել, թե «ընդէ՞ր բնաւ ծառայից արքայից արքայի տայք շրջել յաշխարհի ձերում»[2]։

Ինչպես նկատելի է, պատմիչը մշակների բնակավայրը հանձնարում է գյուղը, զբաղմունքը՝ երկրագործությունը։ Հետաքրքրությունն է, որ պատմիչն այդ շրջանները կոչում է մշակների «աշխարհ»,

---

1 Մեկնութիւն գործոց առաքելոց..., էջ 162։

2 Ղ. Փարպեցի, էջ 148 (ընդգծումները մերն են—Ս. Հ.)։

այսինքն այն բնակավայրը, որտեղ ապրում էին աշխարհիկ կամ հոգևոր ֆեոդալների հողերի վրա աշխատող սեփականաղուրկ, հարկատու կամ վարձակալված գյուղացի մշակները։

Ղ. Փարպեցին մշակների աշխատանքը միշտ էլ կապում է հողագործության, երկրագործության հետ։ Նկարագրելով հայ ժողովրդի ցասումը պարսիկների դեմ, տալով հայերի հերոսամարտի պատմությունը, նա նշում է, որ հայ քաջարի մարտիկները նույնպես էին հնձում պարսկական բանակը, ինչպես «ժիր մշակք քաջ սուր մանգաղաւ և դնրանդեաւ զխոտ հարկանիցեն...»[1]։

Նույն պատմիչը խոսելով ժողովրդա-ազատագրական պայքարի մասնակից շարժիչ ուժերի մասին նշում է, որ ապստամբությանը մասնակցում էին ոչ միայն «ձիոյ տէր»-երը, այլև նրանք, որոնք «ոչ գոյ ոչ տուն, և ոչ ծառայ, ոչ գունդ և ոչ տանուտէրութիւն» ունեին[2]։ Թվում է, որ ոչ կարողություն, ոչ տուն, ոչ ծառա, ոչ գունդ և տանուտերություն ունեցողները սեփականաղուրկ գյուղացիներն էին, որովհետև ինչպես իր տեղում ցույց կտանք, շինականը և «գոյ», և «տուն», և ձի ուներ։ Այս խավն արդեն գյուղական համայնքների քայքայման և ֆեոդալական շահագործման հետևանքով սեփականաղրկված գյուղացի-մշակն էր։

Արքունի մշակների մասին Ղ. Փարպեցին և Եղիշեն պահպանել են խիստ ուշագրավ և ընդարձակ վկայություններ։

Ղազար Փարպեցին և Եղիշեն խոսելով պարսկական Հազկերտ 2-րդ թագավորի Հայաստանի նկատմամբ վարած հարկային, վարչական և կրոնական դաժան քաղաքականության մասին վկայում են, որ Հազկերտ 2-րդ «արքայից-արքան» հրամայում է Աբրահամ Խոստովանողին և Խորեն երեցին դավանափոխ լինել, ընդունել մազդեիզմը, հակառակ դեպքում «...պատուհաս կրեսցեն խեղութեամբ, և երթեալ յԱսորեստան մշակուրիւն արասցեն ընդ արքունի մշակսն և ի հարկի կայցեն մինչև ցվախճան իւրեանց»։ Աբրահամ Խոստովանողը և Խորեն երեցը մերժում են Հազկերտի առաջարկը, որի հետևանքով «...կտրեալ զերկոցունց զականջսն՝ (ըստ Եղիշեի՝ «ունչս և զականջս») ետուն տանել յԱսորեստան, ի դատաւն՝ որ անուանեալ կոչի Շապուղ, կալ անդ նոցա ի հարկի և առնել մշակուրիւն արքունի»[3]։

Այս ընդարձակ վկայությունից ակնհայտ է, որ «արքունի մշակները» ստրուկներ չէին, ինչպես կարծում է պրոֆ. Խ. Սամուել-

---

1 Ղ. Փարպեցի, էջ 159։

2 Նույն տեղում, էջ 168։

3 Նույն տեղում, էջ 105—106, Եղիշե, էջ 237, 242։

յանը, սարուկները ոչ մի երկրում և ոչ մի ժամանակ հարկատու չեն եղել, այլ պատկանելիս են եղել տիրոջը, որպես նրա սեփականությունը։

Արքունի մշակները, ինչպես ենթադրել է ակադ. Հ. Մանանդյանը, շինականներ էլ չէին։ Որ այդ այդպես է, երևում է Եղիշեի մի դարձվածքից։ Խեղանդամ դարձած Աբրահամ խոստովանողը և նորին երեցը դահճապետին ասում են «մեք յարքունի երկիրն կէր մարմնովք մերովք ոչ վաստակեմք»[1]։

Արքունի «երկրի» մշակները և ընդհանրապես մշակները պետք է լիներին առողջ, ֆիզիկապես զիմացկուն, որպեսզի վաստակեին և իրեն և տիրոջ համար կենսական անհրաժեշտ բարիքներ։

«Արքունի մշակները» կախյալ և հարկատու գյուղացիներ էին։ Եվ Ղ. Փարպեցին և Եղիշեն մի շարք անգամ հիշատակում են, որ Հայկերաը սպառնում է նրանց ուղարկել Ասորեստան ոչ միայն «առնել մշակութիւն արքունի», այլ «կալ անդ ի հարկի», «ի հարկի կայցեն»։

Այսպիսով, «արքունի մշակ»-ները, մշակելով արքունիքին պատկանող հողերը, պարտավոր էին հարկեր տալու արքունիքին և դա էր նրանց գլխավոր պարտավորությունը։

Մշակների լայն տարածումը Հայաստանում և Պարսկաստանում պերճախոս ապացույց է այն բանի, որ գյուղական համայնքի երբեմնի ազատ և իրավահավասար անդամների մի մասը արդեն դատվում էր անտեսական կախյալ վիճակում և աշխատում էր ոչ միայն արքունական, այլև վանական ու կալվածատիրական հողերի վրա։

4. ԿԱՐՃԱՋԱՏՆԵՐ

Արտադրության ֆեոդալական եղանակի հաղթանակը լուրջ, արմատական և որակական փոփոխություններ առաջացրեց անմիջական նյութական բարիքներ արտադրող, երբեմնի ազատ, սեփական աշխատանքի միջոցներ և հողակտոր ունեցող, համայնական գյուղացիության սոցիալ-իրավական դոյավիճակում։ Գյուղական համայնքների քայքայման հետևանքով նրա շարքերից դուրս եկան ոչ միայն ծառաներ, մշակներ, այլև այնպիսի խավեր և դասեր, որոնք իսկապես գտնվում էին ստորադաս կացության մեջ և հայտնի էին «կարճաղատ» և «անտաղատ» անունների տակ։

---

1 Եղիշե, էջ 212։

Դժբախտաբար «կարճազատ» բառը գործածվում է միայն մեկ անգամ՝ Փ. Բուզանդի մոտ։ «Կարճազատ» տերմինի ստուգաբանության լուրջ փորձեր է կատարել ակադ. Հ. Մանանդյանը։ «Եթե,— գրել է հեղինակը,— «կարճազատացն» այս ընթերցվածն աղճատված չէ, այդ դեպքում՝ կարելի կլինի ենթադրել, որ բացի «անազատ շինականներից» գոյություն են ունեցել Հին Հայաստանում նաև «կարճազատ» գյուղացիներ։ Բայց թե ինչո՞վ էին տարբերվում «կարճազատ»-ներն «անազատ»-ներից՝ այդ դարձյալ պարզ չէ, մասնավորապես վկայությունների աղքատության պատճառով»[1]։

Մեզ թվում է, որ ակադ. Հ. Մանանդյանը իզուր է ամեն դեպքում բողոքում «մատենագրական վկայությունների աղքատության» համար։ Պատմիչը գործածելով «կարճազատ» տերմինը ցույց է տալիս գյուղացիների երեք հիմնական կատեգորիա՝ ազատ, անազատ և կարճազատ։

«Բայց Պապայ ի բուն ի կնոջէն ոչ մնաց, այլ էր նորա հարն մի ի գաւառէն Տարօնոյ, ի Հացեաց գեղջ կարճազատացն. և մնայ որ ի հարնէ անտի ի Հացեկացւոյն, որում անուն իւր որդւոյ հարնին Վրիկ կոչէր»[2]։

Անշուշտ «կարճազատացն» տերմինը պատմիչը պատահական չէ, որ գործ է ածում։ «Կարճազատացն» բառի հետ միասին Փ. Բուզանդը երկու անգամ գործ է ածում «հարճ» բառը, որը, ինչպես հայտնի է, նույնպես սոցիալապես անազատ դասին պատկանող իգական սեռի պատկանելիությունն էր ցույց տալիս։ Բացի այդ, «կարճազատ»-ը այստեղ գործածվում է ոչ թե մի գյուղացու, այլ ամբողջ գյուղի գյուղացիների սոցիալական կախված վիճակը արտահայտելու համար։ Փավստոսը, որին այնքան քաջ հայտնի են շինական, ծառա, ստրուկ, դեղջուկ, մշակ տերմինները, Հացեկաց գյուղի բնակիչներին կոչում է «կարճազատ»։ Այս վկայությունը ցույց է տալիս, որ գյուղացիության այս խավն արդեն դրված էր հողատեր-ֆեոդալներից տնտեսական կախյալ վիճակում։ «Կարճազատ» գյուղացին ազատ չէր, սակայն ճորտ էլ չէր, մնում էր այդ կացությունը արտահայտելու համար որոնել և գործածել համապատասխան, նրա սոցիալական դրությունը արտահայտող բառ և Փ. Բուզանդը գտնում ու գործածում է «կարճազատ» բառը։

---

[1] Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը..., էջ 173։

[2] Փ. Բուզանդ, էջ 42։

5. ԲՈԿՈՏՆԵՐ

Հայոց գաղական լեզուն մերկանգամ, ոտաբոբիկ ու հողաղուրկ գյուղացի արտահայտելու համար պահպանել է նաև մի այլ բառ՝ «բոկանի», «բոզանի» *կամ* «բոկոտն»:

Համաձայն պրոֆ. Ն. Ադոնցի ուսումնասիրության «բոկանի» *բառը հայերենից անցել է վրացերեն լեզվին և պահպանվել այնտեղ* բոզանի *ձևով։*

«Վրացերեն լեզուն,— գրում է պրոֆ. Ն. Ադոնցը,— ունի բոզանի *բառը, որը նշանակում է հողաղուրկ գյուղացի, նման ռուսական* bobil-*ին։ Սա ուրիշ բան չէ, եթե ոչ հայերեն* բոկանի, *որը երբեմն ունեցել է այլ իմաստ և իր հետ տարվել է և պահվել է վրաց լեզվում։ Կարևոր տերմին է թվում, և ոչ սովորական բառ, և հին վկա սակավահողության»*[1]։

Հայկազյան բառարանի հեղինակները, Հ. Աճառյանը, Ստ. Մալխասյանցը «բոկ», «բոկանի», «բոկոտն» *ստուգաբանել են բոբիկ,, ոտաբոբիկ, ոտքը մերկ*[2]։

Ինչպես Աղվանից աշխարհում վար ու այգի չունեցողները, այնպես էլ Վրաստանում և Հայաստանում «բոկոտները» արդեն գյուղական համայնքի քայքայման հետևանքով ճորտական ուղու վրա կանգնած գյուղացիության այն մասն էր, որ դուրս էր եկել շինականության շարքերից։

Այս կատեգորիայի գյուղացիների թվին էին պատկանում նաև գյուղական համայնքների քայքայման հետևանքով անմիջական արտադրողներից զատված հասարակական այն խավը, որին մեր պատմիչները կոչել են «անազատք» կամ «փախչողք ի ժառանգութիւնէ»։

6. «ԱՆԱԶԱՏՔ» ԿԱՄ «ՓԱԽՉՈՂՔ Ի ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԷ»

Արքունական, իշխանական-ֆեոդալական, վանական և եկեղեցական ընդարձակ տիրույթներին ամրացված գյուղացիության մի կատեգորիան հայտնի է «անազատ» անվան տակ։ Այս տերմինը մի շարք առիթներով հիշատակվում է կրոնա-կանոնական որոշումների մեջ և մատենագիրների մոտ։ Պատմիչները յուրաքանչյուր առիթով «ազատների» դասին հակադրում են «անազատներին» և

---

[1] Ն. Ադոնց, *Հին հայ շինականութիւն, գլ. V։*

[2] *Առձեռն բառարան Հայկազնեան լեզուի, էջ 195,* Հ. Աճառյան, *Արմատական բառարան, հ. 1, էջ 1131—1133,* Ստ. Մալխասյանց, *Բացատրական բառարան, հ. 1, էջ 383—384։*

միշտ էլ հիշատակում վերջիններիս իրավազուրկ, անազատ սոցիալական կացությունը։

Ղ. Փարպեցին պատմում է, որ Վարդան Մամիկոնյանի շուրջը համախմբվում են «ամենայն բազմութիւն զօրացն ազատաց և անազատաց, հանդերձ իշխանաւն Սիւնեաց Վասակաւ և ամենայն տանուտերամբքն և սեպհօք՝ հաստատէին զերդումն»[1]։

Սիսն կաթողիկոսի ղեկավարությամբ Պարտավի եկեղեցական ժողովը արգելում է «ազատների» և «անազատների» դասերին պատկանող մարդկանց ամուսնական մերձավորությունը։ «Առաջին ուրբ հարքն յիրեանց ժամանակս արգելին զազատս և զանազատս յարեան մերձաւորութիւնէ»[2]։ Անազատները, ինչպես պատկերավոր կերպով արտահայտել են Ագաթանգեղոսը և Եղիշեն «յանաշխարհիկ» մարդիկ էին։ Տրդատ թագավորը դիմելով Գր. Լուսավորչին, ասում է. «Այր մի օտարական և անաշխարհիկ՝ եկիր յարեցար ի մեզ»[3]։

Եղիշեն վկայում է, որ պարսկական ծանր, դաժան բռնակալության հետևանքով հայ նախարարների մի մասը ֆիզիկապես ոչընչացավ, մյուսները իրենց «ուստերք և դստերք և ամենայն ընտանիք իրեանց յանաշխարհիկս դրեցան, և ամենայն հայրենի դաւառք հատան ի նոցանէ»[4]։ Ուրեմն անաշխարհիկ, այսինքն առանց տիրույթների, սեփականություն և կարողություն չունեցող «անազատների» շարքն էին անցնում ոչ միայն քայքայված դյուղացիները, այլև նախարարական-ֆեոդալական տների որդիներն ու հայրենի կալվածները կորցրած ժառանգները։

Մ. Խորենացին իր «Ողբ»-ում, տալով հայ ֆեոդալական հասարակարգի տարբեր դասերի սոցիալ-տնտեսական դրության նկարագիրը, գրում է. «Ժողովրդականք վէսք, ստահակք, մեծախոսք, անվաստակք, արբեցողք, վնասակարք, փախչողք ի ժառանգութենէ»[5]։

«Փախչողք ի ժառանգութենէ» նախադասության իմաստը ճիշտ չեն ըմբռնել Մ. Էմինը, Խորեն վարդապետ Ստեփաննն, Ներսես Ակինյանը, որոնք ենթադրել են, որ «փախչողք ի ժառանգութենէ» վերաբերվել է կամ հոգևորականներին կամ նախարարներին[6]։

---

1 Ղ. Փարպեցի, էջ 61։

2 Կանոնգիրք հայոց, էջ 170, հմմտ. ձեռագիր, № 3706, կանոն. 9, էջ 95։

3 Ագաթանգեղոս, էջ 35։

4 Եղիշե, էջ 150։

5 Մ. Խորենացի, էջ 364։

6 Н. Эмин, История Армении Хоренского..... стр. 215, հմմտ. Մ. Խորենացու հայկական պատմութիւն, թարգմ. Խ. Ծ. վարդ. Ստեփաննի, Ս. Պետերբուրգ, 1889, էջ 350, ծանոթ. 814, Ն. Ակինյան, Մատենագրական հետազոտություններ, հ. Գ., Վիեննա, 1930, էջ 169։

Այս կռահումները պատմականորեն չեն հաստատվում։ Մ. Խորենացու մոտ պարզ ու որոշ ասված է, որ ժառանգությունից փախչում էին ոչ թե հոգևորականները, իշխանները, այլ ժողովուրդը, իսկ ժողովուրդ ասելով պատմիչն, անկասկած է, հասկացել է անմիջական արտադրողին։ Բացի այդ, ինչպես իրավացի նշել է ակադ. Հ. Մանանդյանը, «հոգևոր կոչումը, ինչպես հայտնի էր, կապված էր անտեսական ու սոցիալական այնպիսի արտոնությունների հետ, որ անհնթեթ կլիներ կարծել, իբր թե այդ կոչումից ժողովրդականները տրամադիր կլինեին խուսափել»[1]։ Այստեղ խոսքը ծանր հարկերից և ֆեոդալական խիստ շահագործումից փախչող «անազատ» գյուղացիների մասին է։

7. ՎԱՐ ԵՎ ԱՅԳԻ ՉՈՒՆԵՑՈՂ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐ

5—7-րդ դարերում արտադրության ֆեոդալական եղանակի տիրապետության, աշխարհիկ և հոգևոր խոշոր մասնատիրական հողատիրության զարգացման պայմաններում հին հայկական գյուղական համայնքներն ապրում էին նյութական և սոցիալական խորը հակասությունների ժամանակաշրջան։ Համայնքների քայքայման հետևանքով նրա շարքերից դուրս էին եկել ոչ միայն արտադրության միջոցները, այլև հողակտորները կորցրած գյուղացիների մի այնպիսի խավ, որը պատմական աղբյուրներում հայտնի էր «վար և այգի չունեցող» անվան տակ։ «Վար և այգի չունեցող» գյուղացիների մասին խիստ ուշագրավ և արժեքավոր վկայություն է պահպանել Մովսես Կաղանկատվացին իր «Պատմութիւն Աղուանից» աշխատության մեջ։ Պատմիչը հաղորդում է, որ Աղվանից Վաչագան III թագավորի հրամանով աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների աչքի ընկնող ներկայացուցիչները գումարում են աշխարհաժողով, որտեղ քննարկում և մշակում են ոչ միայն եկեղեցական, այլև աշխարհիկ կանոններ։

Ի շարս բազմաթիվ հարցերի, Աղվանից եկեղեցական ժողովը մշակում է հատուկ կանոններ այն մասին, թե հարկատու ընակիչները ինչպիսի քանակի հարկեր ու տուրքեր պետք է վճարեն հոգևոր դասին։

«Պտուղք ի ժողովրդենէ երիցուն՝ կարգն այս լիցի թուանիկն չորս դրիւ ցորեան, վեց դրիւ դարի և վիշտասան փաս քաղցու. և որ տատապնալն է՝ զհայիդ կէսն տացէ, և գինի՝ որչափ և կարողն իցէ.

---

1 Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը..., էջ 168։

իսկ որոյ վար և այգի ոչ է, մի առցեն... եւ ոյր ոչխար է ի տան՝ ոչխար մի և երեք զգաթ բուրդ և մեկ պանիր, և ոյր ձի ի տան իցեն՝ մին յսվանակ. և ոյր պախրէք իցեն՝ որթ մի»[1]։

Աղվանից եկեղեցական ժողովի այս պաշտոնական վաստաթուղթը ուշագրավ է այն իմաստով, որ երբեմնի «միասնական», «միատարր» գյուղական բնակչությունը ապրում էր նյութական և սոցիալական շերտավորման ժամանակաշրջան։ Վար և այգի չունեցող գյուղացիները կորցնելով արտադրության միջոցներն ու հողակտորները կապալագրվում էին ինչպես հողատեր ֆեոդալների. այնպես էլ, ամենայն հավանականությամբ, նույնիսկ «թուանիկ» կոչված գյուղացիների մոտ։ Արդեն գյուղական համայնքների շարքից դուրս եկած հասարակական այս խավը կանգնած էր ճորտացման ուղու վրա, դրված էր հողատեր ֆեոդալներից ոչ միայն տընտեսական, այլև անձնական կախման վիճակում։

8. ԹՈՒԱՆԻԿՆԵՐ

Գյուղական համայնքների քայքայման հետևանքով գյուղում հանդես էին եկել հարուստ, ուժեղ և կարողության տեր «թուանիկ» կոչված գյուղացիները։

Այս տերմինի վրա առաջին անգամ ուշադրություն դարձրեց Ն. Ադոնցը։ Հեղինակը «թուանիկ» բառը ստուգաբանել է, որպես հարուստ, ուժեղ և կարողության տեր գյուղացի։ Ն. Ադոնցը պատմական զուգահեռ անցկացնելով հայկական «թուանիկ» և պարթևական-պարսկական tuw-anik բառերի մեջ, նշում է, որ նա ծագել է պահլավական-պարսկական tuwanik բառից[2]։

«Թուանիկ» տերմինին այս նույն մեկնությունն են տվել ակադեմիկոսներ Հ. Աճառյանը և Ս. Մալխասյանը։ Հ. Աճառյանի կարծիքով «թուանիկ» նշանակում է «հարուստ, մեծատուն», որը ծագել է պարսկական tuwana, պհլ. tuvanik ուժեղ, զորեղ, կարող բառերից[3]։

Առաջին անգամ «թուանիկ» գյուղացիների առանձին կատեգորիայի մասին հիշատակված է ոչ թե Աղվանից Վաչագան արքայի

---

1 Մ. Կաղանկատուացի, էջ 99 և ուր. (ընդգծումները մերն են—Ս. Հ.). Հմմտ. Կանոնգիրք հայոց, էջ 193, ձեռագիր № 2677, էջ 210ա.բ. № 3706, էջ 245ա։

2 Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, стр. 486, примеч. № 2.

3 Հ. Աճառյան, Արմատական բառարան, հ. բ, էջ 1161—1162, հմմտ. Ս. Մալխասյան, Հայերեն բացատրական բառարան, հ. II, էջ 121։

կողմից մշակված կանոններում, ինչպես այդ ենթադրել են այդ տերմինը ստուգաբանող հեղինակները, այլ Բարսեղ Կեսարացու (370—378 թթ.) կանոններում: Այս կանոնը համարյա նույնությամբ կրկնված է Վաչագան արքայի կանոնում:

Բարսեղ Կեսարացին իր Կանոնգրքի ԻԶ կանոնում սահմանել է եկեղեցիներին վճարվող պտղի հետևյալ չափը. թուանիկները պարտադիր կերպով պետք է վճարեն «Զ ցորեն և Դ դրիւ դարի և ԺԶ փաս քաղցու», սառապյալ կոչված գյուղացիները՝ այդ հարկի կեսը, իսկ ովքեր ոչ վարելահող ունեն և ոչ էլ այգի, ոչինչ չպետք է վճարեն:

Հայրապետը միաժամանակ քարոզում է հավատացյալներին, որ եթե նրանք այս սահմանված չափից ավելի վճարեն «սակս ոդոյ բարի առնէ, որպէս Պողոս ասէ՝ որ առատութեամբ սերմանէ, առատութեամբ և հնձեսցէ»[1]:

Ինչպես նկատեցինք՝ Աղվանից եկեղեցական ժողովը պարտադրում է «թուանիկներին»՝ եկեղեցիներին և հոգևոր դասերին որպես «հաս» կամ «պտուղ» վճարել 4 դրիվ ցորեն, 6 դրիվ դարի, 16 թաս գինի և գյուղատնտեսական այլ մթերքներ: Ուրեմն, «թուանիկ»-ն ուներ իր սեփական տնտեսությունը, վարելահողերը և այգիները, անասունները և աշխատամիջոցները: Ինչպես Բարսեղ Կեսարացու կանոնը, այնպես էլ այս պաշտոնական փաստաթուղթը մեզ հնարավորություն են տալիս եզրակացնել, որ «թուանիկը» գյուղում հանդես եկած այն ունևոր գյուղացին էր, որը շահագործում էր «վար ու այգի չունեցող», սեփականաղուրկ համագյուղացիների աշխատանքը:

9. ՌԱՄԻԿՆԵՐ

«Ռամիկ» տերմինի լեզվական և սոցիալական իմաստն ունեցել է ստուգաբանված:

«Ռամիկ»-ը ստուգաբանված է հասարակ, վարի մարդ»[2], «հասարակ ժողովուրդ», «գյուղի կամ քաղաքի հասարակ մարդ»[3], «հասարակ դասակարգին պատկանող մարդ, ժողովրդի բազմություն»[4],

---

1 Ձեռագիր, № 3706, կանոն ԻԶ, էջ 210ա:

2 Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, էջ 709:

3 Հ. Աճառյան, Արմատական բառարան, հ. V, էջ 126:

4 Ստ. Մալխասյանց, Բացատրական բառարան, հ. IV, էջ 175:

«շինական, գեհիկ, մշակ»[1], «անազատ, ճորտ, ականաւոր»[2], «երամ, ամբոխ, խումբ, հոտ»[3], «խաժամուժ ժողովուրդ»[4]։

Այս բազմազան, մեկը մյուսին հակասող, արտաքուստ խիստ ուշադրավ մեկնությունները ոչ միայն չեն բացահայտել «ռամիկ» տերմինի լեզվական, այլև, որն ամենից կարևոր է, նրա սոցիալ-դասակարգային իմաստն ու նշանակությունը։

Այսպես, օրինակ, Ի. Ա. Ջավախովի կարծիքով Ատովմի, նրա որդու և ընկերների վկայաբանության մեջ հայերեն «ռամիկ» տերմինը թարգմանված է վրացերեն «չիներուլի», որը նշանակում է «ականավոր»։ «Ռամիկ» տերմինի այս ստուգաբանությունը, իհարկե, ճիշտ չէ։ «Ռամիկ» տերմինի «չիներուլի» թարգմանությունը թյուրիմացության արդյունք է, իսկ լավագույն դեպքում՝ աղավաղում։

Ակադ. Հ. Մանանդյանը մեր պատմական գրականության մեջ առաջինն էր, որ ճիշտ մեկնաբանեց «ռամիկ» տերմինի և՛ լեզվական, և՛ սոցիալական նշանակությունը։

Ակադ. Հ. Մանանդյանի կարծիքով «ռամիկ» բառը սկզբնական իր նշանակությամբ մոտավորապես համապատասխան պետք է լիներ գերմաներեն menge, masse և ռուսերեն толпа, масса բառերին...»։ «Ռամիկ» կարող էին անվանվել,— շարունակում է Հ. Մանանդյանը,— ոչ միայն «շինական»-ները, այլև, ընդհանրապես ժողովրդի ամբողջ բազմությունը, լիներ նա գյուղացի թե քաղաքացի, եթե նա չէր պատկանում ազնվական կամ հոգևորական դասերին»[5]։

Եվ իսկապես, արդեն 4—7-րդ դարերում, ֆեոդալական հարաբերությունների զարգացման և խորացման հետևանքով «ռամիկ» տերմինը իր սոցիալական իմաստով խիստ փոփոխության է ենթարկվում։ Պատմական այս էպոխայում «ռամիկ» հավաքական տերմինն իր մեջ է իմաստավորում ինչպես շինականներին, այնպես էլ մշակներին, ծառաներին, դեղջուկներին, վար և այգի, գույք չունեցող գյուղացիներին և քաղաքային բնակչության ստորին, սոցիալապես ցածր աստիճանի վրա գտնվող խավերին։

---

[1] Н. Адонц. Армения..., стр. 436, 479, նույնի, Հին հայ շինականությունը, գլ. 4։

[2] Н. Джавахов, Госстрой..., стр. 113.

[3] Н. Марр, Батум—Ардаган—Карс — исторический узел национальных отношений Кавказа, СПБ, 1922, стр. 33. Նույնի քննադատական հոդվածը Джавахов-ի Госстрой գրքի առթիվ (տես ЖМНП, 1908, 220—223).

[4] H. Hübschmann, Armenische Grammatik, Leipzig, 1895, S. 233.

[5] Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը..., էջ 149, 152։

Մեր մատենագիրներից Ղ. Փարպեցին ամենից շատ և հաճախ գործ է ածում «ռամիկ», Փ. Բուզանդը, Եղիշեն շինական, գեղջուկ, ծառա, աղախին տերմինները։ Մ. Խորենացին ունի «ռամիկ», բայց ավելի շատ «շինական» տերմինը։ Պատմական աղբյուրները հասարակական ցածր աստիճանի վրա գտնված բոլոր խավերի համար «ռամիկ»-ի հետ միաժամանակ գործ են ածում խիստ ուշագրավ «բազմութիւն» տերմինը։

Եկեղեցական-կանոնական օրենքները «ռամիկ» տերմինի տակ հասկացել են ինչպես գյուղերի, ավանների, շենների, այնպես էլ քաղաքատիպ վայրերի և քաղաքների բնակչության այն բազմությունը, որն իր իրավական և սոցիալական դրությամբ ավելի ցածր է կանգնած եղել մեծամեծ ավագներից, նախարարներից, կուսակալներից, գավառատերերից, աշխարհատերերից, աղատներից, սեպուհներից, ոստանիկներից և հոգևոր դասի ներկայացուցիչներից։

Փ. Բուզանդը թվելով իր էպոխայի հասարակական դասերին, միշտ պահպանում է հետևյալ հաջորդականությունը։ «Ապա առաւել ժողովեցան ի մի ժողով միաբանութեանն մարդիկ աշխարհին Հայաստան երկրին. նախարարք մեծամեծք, աւագք, կուսակալք, աշխարհակալք, ազատք, զօրագլուխք, գատաւորք, պետք, իշխանք... այլև ի շինականաց անգամ ռամիկ մարդկանն»[1]։

«Ռամիկ» հավաքական տերմինի իմաստն և սոցիալական նշանակությունը մատնանիշ է արել նաև Ղ. Փարպեցին։ Խոսելով հայ ժողովրդի քաղաքական շահերի դավաճան Վասակ Սյունեցու չարագործությունների մասին, վկայում է, որ Վասակ Սյունեցին ժողովրդա-ազատագրական շարժումների ժամանակ թույլ չէր տալիս, որպեսզի ռամիկ բազմությունը միանա ապստամբներին։ Վասակ Սյունին Հայաստանից Աղվանից աշխարհն է ուղարկում Վարդան Մամիկոնյանին, հայոց տանուտերերին և սեպուհներին, որոնք գիտեին նրա «չար մտածութիւնն», իսկ «յայլ ռամիկ բազմութենէն՝ զայնս արգելեալ առ իւր պահէր»[2]։

Եղիշեն տալով 451 թ. ապստամբության ժողովրդական բնույթի նկարագրությունը, գրում է, որ «աղաղակէին և ասէին գոհանալով արք և կանայք և ամենայն ռամիկ բազմութիւնն. «Պատրաստ

---

[1] Փ. Բուզանդ, էջ 46։

[2] Ղ. Փարպեցի, էջ 64։

եմք ի հալածանս և ի մահ և յամենայն նեղութիւնս և ի շարչարանքս...»[1]։

Խորենացին շատ լավ է հասկացել ռամիկի հավաքական իմաստը և այն նույնպես կոչել է «բազմութիւն»։ Խոսելով այն մասին, թե ինչպես Տրդատ 3-րդ թագավորը քրիստոնյա դառնալուց հետո փայլում էր ամեն տեսակի առաքինություններով, քարոզելով Քրիստոսի «գործ և բանն», պատմիչը գրում է, որ Տրդատը սաստում, հավատացնում էր «զմեծամեծ նախարարսն, միանգամայն և զամենայն բազմութիւն ռամկին, լինել արդարև Քրիստոսի...»[2]։

Խոսրով թագավորի դեմ, ասում է Խորենացին, ապստամբել էր Բակուր բդեշխը։ Խոսրովը Բակուրին պատժելու համար ուղարկում է Մանաճիհրին։ Մանաճիհրը «հարաւային գնդաւն և Կիլիկացւոց զօրօք» մեկնում է Բակուրի դեմ, ոչնչացնում է Բակուրին և նրան օգնող պարսկական ուժերը «և զդաւառս իշխանութեան նորա (Բակուրի) սրով դատի յանխնայ, ոչ միայն զմարտիկս, այլ և զռամիկ շինականս»։ Բայց Մանաճիհրի դեմ դուրս է գալիս Հակոբ եպիսկոպոսը և համոզում է նրան «արձակել զդերութիւն ռամկին...»[3]։

Մեր մատենագիրների մոտ հաճախակի «ռամիկ» տերմինը մերթ հանդիպում է «շինական», մերթ «բազմութիւն», «ամբոխ», «խառնիճաղանջ ժողովուրդ», «ժողովուրդ» տերմինների հետ, իսկ, որը ավելի հաճախակի է՝ որպես ինքնուրույն բառ։

Այս առթիվ ուշագրավ վկայություններ է թողել Ղ. Փարպեցին։

«Քանզի բազմութիւն փախստէիցն Հայոց,— գրում է պատմիչը,— նախարարք և սեպուհք, ոստանիկք և ռամիկք, դիմեալ ի յերկիրն Տայոց՝ ժողովէին առ Հմայեակ եղբայր սրբոյ զօրավարին Վարդանայ»[4], կամ, «եւ առեալ ընդ իւր (Վահան Մամիկոնյանը) զնախարարսն և զազատս և զայլ ամենայն ռամիկն, որք կամաւոր խնդութեամբ երթային ի գործ պատերազմին...»[5]։

Անկասկած է, որ պատմիչները հիշատակելով «ռամիկ»-ներին, նրանց շարքում հասկացել են նաև շինականներին ու հասարակական այլ խավերին։ Հաճախակի են դեպքերը, երբ մատենագիրները

---

1 Եղիշե, էջ 85։
2 Մ. Խորենացի, էջ 246։
3 Նույն տեղում, էջ 263։
4 Ղ. Փարպեցի, էջ 73։
5 Նույն տեղում, էջ 128։

շինականներին կոչել են «ռամիկ մարդիկ», «զռամիկ շինականս», կամ «շինականաց անդամ ռամիկ մարդկանն»[1]։

Սակայն այս վկայությունները մեզ իրավունք չեն տալիս ենթադրել, որ «ռամիկ» և «շինական» տերմինները հոմանիշ են և ունեն սոցիալական միևնույն իմաստն ու նշանակությունը։

«Ռամիկ» տերմինը չէր նշանակում «միաբանական», «միաբարը» և սոցիալապես ու քաղաքական իրավունքների տեսակետից հավասար պայմաններում գտնվող դասային խավ։ Արդեն աղբյուրները խիստ զանազանություն են դնում միևնույն տերմինի մեջ իմաստավորված դասային տարբեր խավերի միջև։ Մեր պատմագիրները համերաշխում են բոլոր դեպքերում, որ «ռամիկ»-ն իր տնտեսական ու սոցիալական կացությամբ «ազատների», «նախարար»-ների դասին չէր պատկանում, սակայն այստեղից չպետք է եզրակացնել, որ «ռամիկ» հավաքական անվան տակ մտած հասարակական բոլոր խավերը ճորտ էին և իրավազուրկ։

Մեզ թվում է, որ երբ մատենագիրները հիշատակում են նախարարներից, ավագներից, կուսակալներից, աշխարհակալներից, ազատներից, զորագլուխներից, դատավորներից, իշխաններից, պետերից հետո ռամիկ ու շինական տերմինները, այդ երբեք էլ չի նշանակում, որ բոլոր ռամիկները և շինականները անազատ էին և աղբյուրները նրանց հակադրում են ազատներին, մատնանշելով նրանց անազատ վիճակը։ Ֆեոդալական հարաբերությունների զարգացման բոլոր շրջաններում ռամիկն ու շինականը ճորտ ու անազատ չեն եղել, ինչպես այն թվում է առաջին հայացքից։

Աղբյուրները իշխող դասակարգի տարբեր խավերից ու դասերից հետո մատնացույց անելով «ռամիկ»-ին, «շինական»-ին, ցանկացել են ցույց տալ, որ նրանց գերազանց մասը եղել է առայժմ իրավապես ազատ և իրավունք է ունեցել իշխանների և նախարարների հետ միասին մասնակցելու աշխարհաժողովներին, քննելու և որոշելու Հայաստանին հուզող այն հարցերը, որոնք վերաբերվել են երկրի գլխավորապես արտաքին քաղաքականության և պաշտպանության շահերին։

«Ռամիկ»-ները հանդիսանալով Հին Հայաստանի ստորադաս դասերը, միաժամանակ վարում էին զինվորական ծառայություն։

Փ. Բուզանդը տալով հայ-պարսկական պատերազմների պատմությունը, ասում է, որ Տիրան թագավորին լքում են մեծամեծ

1 Փ. Բուզանդ. էջ 46, Մ. Խորենացի, էջ 263, և ուր.։

նախարարները, ավագ տանուտերերը և հայ «ազատաձին»։ Սրանց օրինակին հետևում են նաև «զօրքն արքունի յիւրաքանչիւր տունս, յիւրաքանչիւր կայնանս...։ Եւ ոչ ոք էր՝ որ մնացեալ էր առ թագաւորին, և ոչ գունդ և այրևձի. բայց միայն սակաւ սպասաւորք հանդերձ... և ռահվիրայ մարդիւն, և խառնաղանջ, խորանապահ զօրուն, և ռամիկսպաս զօրքն, և տիկնուն հանդերձ և արքայորդին մանուկն Արշակ»[1]։

5-րդ դ. բոլոր պատմիչներն այդ մասին թողել են բազմաթիվ վկայություններ։ Եղիշեն նկարագրելով 451 թ. ժողովրդա-ազատագրական պայքարը, վկայում է, որ Հազկերտ 2-րդը «Անդէն ի ներքոյ Պահ զրանն արգելոյր զրագմութիւն այրուձիոյն Հայոց, և զՎրաց և զԱղուանից, և զամենեցուն, որ էին հաւատացեալ ի սուրբ աւետարանն Քրիստոսի»[2]։

Պատմական այս էպոխայում իրանական բանակը նույնպես կազմված էր հեծելազորից և հետևակից։

«Իր սոցիալական կազմով,— գրում է պրոֆ. Պիգուլևսկայան,— իրանական հեծելազորը հավաքագրվում էր հողատերերից, ազնվականներից և ազատ գյուղացի-սեփականատերերից»[3]։

Ղ. Փարպեցին նկարագրելով պարսիկ Զատմիհր Հազարավուխտի արշավանքը Հայաստան նշում է. «Եւ տեսեալ սպարապետին Հայոց Վահանայ զայսչափ բազմութիւն զօրացն Պարսից, և այլ նախարարացն Հայոց, որ ընդ նմա էին, և այլ ռամիկ այրուձիոյն Հայոց...»[4]։

Դվինի ժողովի կանոններում նույնպես նշվում է, որ ռամիկները կազմում էին Հին Հայաստանի այրուձին։ Այդ կանոններում մենք կարդում ենք. «Ոմանք յաղատաց և յռամիկ հեծելոց հասանելով ի դիւղս ուրեք, թողեալ զգեղն ի վանս առնեն իշխանս և ի յարկս սրրոց... պղծեն»[5]։

Ղազար Փարպեցին նկարագրելով Հազկերտի դեպի Քուշանաց աշխարհը կատարած արշավանքները, գրում է.

«Եւ հասեալ ի սահմանս թշնամեացն՝... կորուսեալ ի զօրաց իւրոց արս ընտիրս և ականաւորս, նոյնպէս և յայլ ռամիկ այրուձիոյ»[6]։

---

1 Փ. Բուզանդ. էջ 45։

2 Եղիշե. էջ 27։

3 Н. В. Пигулевская, Византия и Иран на рубеже VI и VII вв., стр. 234.

4 Ղ. Փարպեցի, էջ 144։

5 Կանոնգիրք հայոց, էջ 128։

6 Ղ. Փարպեցի. էջ 86։

Նույն պատմիչը տալով 451 թ. ապստամբության պատմությունը, նշում է, որ «ռամիկ զօրացն բազմութիւնն» առանց ավագների հրամանի հարձակվեց «ի տուն մոխրանոցին» և քանդեց ու ավերեց պարսկական կրակատները[1]։

Ակոռիի հայանի ճակատամարտից հետո, Առաստամ Գնունին շտապում է Դվին և բնակիչներին հայտնում հայերի տարած փայլուն հաղթանակի մասին։ Այս ուրախաբեր լուրը «աւետեաց հայրապետին Հայոց Յոհաննու և ասաղ իշխանացն, մարզպանին Սահակայ և սպարապետին Հայոց Վահանայ, և ամենայն նախարարացն Հայոց և ռամկացն՝ դիմեալք միաբանութեամբ ի տունն Աստուծոյ»[2]։

Պարզ է, որ այս վկայությունների մեջ «ռամիկ» նշանակում է քաղաքի բնակչության ստորին խավը։ Ռամիկները որպես քաղաքային բնակչության սոցիալական ցածր աստիճանի վրա գտնվող խավեր հիշատակված են Հին կտակարանի հայերեն բնագրում։

«Եւ եղեւ յետ բանիցս այսոցիկ յաւուրս Արտաշէսի... հրաման ետ կոչել ի հարսանիսն զռամիկ քաղաքացիսն իւր ի գաւթի տան արքունի վհաւուրս վեց»[3]։

Ուրեմն «ռամիկ» տերմինը պատմական աղբյուրներում գործ է ածվում երկու իմաստով ու նշանակությամբ. ա) «Ռամիկ» տերմինը լայն առումով իր մեջ էր իմաստավորում ինչպես գյուղական, այնպես էլ քաղաքների բնակչության այն խավերին, որոնք չէին պատկանում արտոնված ու «ազատ» դասերի ներկայացուցիչներ՝ նախարարներին, հոգևորականներին։ «Ռամիկ» տերմինի տակ հասկացվում էր ինչպես դեռ իրավապես ազատ, այնպես էլ անձնապես կախված գյուղացիությունը և քաղաքային ստորադաս դասերը։ բ) Նեղ առումով «ռամիկ» նշանակում էր հայ ֆեոդալական հասարակության այն դասը, որը ոչ միայն հարկատու էր, այլև վարում էր զինվորական ծառայություն։ «Ռամիկը» ոչ միայն Հին Հայաստանում ստորին դասն էր, ոչ միայն գյուղական ողջ բնակչությունը իր բազմազան դասերով, այլև նրա տակ հասկացվում էր նաև քաղաքի պլեբեյական այն տարրը, որն, ինչպես նշել է Ֆ. Էնգելսը, հանդես էր գալիս քաղաքային տնտեսության և քաղաքային կյանքի զարգացման առաջին աստիճանում։ Ուրեմն «ռամիկը» մի տերմին էր, որի տակ հասկացվում էր և՛ ազատ ու կախ-

---

[1] Ղ. Փարպեցի, էջ 62։

[2] Նույն տեղում, էջ 126։

[3] Նար., Ա, 5, ԺԲ, 6։

յալ շինականը և մշակը, և գեղջուկը, վար ու այգի չունեցող գյուղացիությունը և քաղաքի ստորին խավերը։

«Ռամիկ» տերմինը հանդիսանալով հավաքական տերմին, իր մեջ իմաստավորելով ու արտահայտելով հայ ֆեոդալական հասարակության շահագործվող դասակարգի տարբեր դասերն ու խավերը, միժամանակ իր մեջ ընդգրկում էր հասարակական այնպիսի դասեր, որոնք կանգնած էին ճորտացման ուղու վրա։

Այսպիսով, շինական դասը միատարր, միասնական չէր. ֆեոդալական հարաբերությունների զարգացման հետևանքով նրա շարքերից արդեն 4—7-րդ դդ. դուրս էին եկել մշակներ, բոկոտներ, ծառաներ, վար ու այգի, կայք չունեցողներ, ժառանգությունից վիսչողներ, որոնք արդեն կանգնած էին ճորտացման ուղու վրա և աստիճանաբար ընկնում էին ոչ միայն տնտեսական, այլև իրավական կախյալ վիճակի մեջ։

Այս պայմաններում էլ Հին Հայաստանի անմիջական արտադրողը մնում էր դեռ իրավապես ազատ շինական-գյուղացին։ Հայաստանում, այս շրջանում, ֆեոդալական հասարակարգը խարբսխված էր ոչ թե ստրուկի, ծառայի, մշակի, վար ու այգի չունեցող գյուղացու, այլ շինականի աշխատանքի շահագործման վրա։ Հասարակության համար արտադրության պրոցեսում նյութական բարիքներ արտադրողը հիմնականում հանդիսանում էր շինականությունը։ Պատմական այս շրջանում դեռ շինականության ճնշող մեծամասնության հողակտորների, անձի իրավունքի նկատմամբ հողատեր-ֆեոդալների դասը լայն գրոհ չէր կազմակերպել, դեռ շատ ուժեղ էր ֆեոդալին ընդդիմադրող գյուղացիների կոլեկտիվ կազմակերպությունը՝ գյուղական համայնքը։

Սակայն, ինչպես մի շարք անգամ նշել ենք, արդեն 4—7-րդ դդ., արտադրության ֆեոդալական եղանակի հաղթանակի պայմաններում, ազատ շինականների մի մասին սպառնում էր անձնական կախվածություն։

Գյուղացու՝ շինականի ճորտացման պրոցեսը, այդ պրոցեսի զարգացման տարբեր էտապների պատմությունը, այնքան անհրաժեշտ ու գիտական մեծ նշանակություն ունեցող հարցեր են, որ մենք անհրաժեշտ ենք համարում այդ պրոբլեմները քննարկել ավելի հանգամանորեն, քան, որքան մեզ է թվում, արվել է մինչև օրս»։

Այս իսկ պատճառով, շինականների պատմությունը քննարկման ենք ենթարկելու երկու առանձին ենթավերնագրի տակ՝ ա) շինականները որպես համայնքի ազատ անդամներ և բ) կախյալ ու հողին ամրացված շինականներ։

10. ՇԻՆԱԿԱՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԶԱՏ ԱՆԴԱՄՆԵՐ

«Շինական» տերմինը պատմական սկզբնաղբյուրներում ամենից շատ գործածված բառն է։

Մեր աղբյուրները, կանոնական որոշումները «շինական» տերմինի տակ իմաստավորել են իրավազուրկ դեռ ազատ և կախյալ վիճակում գտնվող հայ գյուղացիության ամբողջ մասսան։ Հաճախ են դեպքերը, երբ նրանք շինական տերմինը գործ են ածել ռամիկ, գեղջուկ, մշակ, ծառա, բոկոտն, վար ու այգի չունեցող և այլ կարգի հասարակական խավերի ու դասերի հետ միաժամանակ։

Այդ իսկ պատճառով խիստ դժվար է սահմանագիծ անցկացնել ազատ համայնականի և կախյալ շինականների միջև։ Այսպես, օրինակ, երբ մեր մատենագիրները նշում են քաղաքացիների արտոնյալ կացությունը, երբ ցանկանում են ցույց տալ, որ քաղաքացիները օգտվում են քաղաքացիական ավելի լայն արտոնություններով, նրանք քաղաքացիներին հակադրում են ոչ թե կախյալ, այլ շինականությանն ընդհանրապես։ Ավելին, մեր համարյա բոլոր մատենագիրները և ազատ, և կախյալ շինականներին, և արդեն հողին ամրացված և ճորտացված գյուղացիներին իմաստավորում են մեկ ընդհանուր, հավաքական տերմին՝ ռամիկ կամ ռամիկների բազմություն անվան տակ։

Այս է հիմնական պատճառը, որ հայ շինականության պատմություն հետազոտողները շինականին ներկայացրել են որպես սոցիալապես «միասնական», «միատարր» մասսա, որի տակ հասկացել են թե ազատ, և թե կախյալ վիճակում գրված գյուղացիներին ընդհանրապես։ Եթե անցյալի բոլոր հետազոտողների համար (Ս. Բահաթրյան, Ա. Գարագաշյան, Հ. Մուսայելյան, Ի. Ա. Զավախով, Հ. Մանանդյան, Ն. Ադոնց, Խ. Սամուելյան) «շինականը» հանդիսացել է Հայաստանի բնակչության ճնշող մեծամասնությունը, անմիջական նյութական բարիքներ արտադրողը և գտնվել է «ճորտական» վիճակում, սակայն այդ իսկական «ստրկական» ճորտություն չէր, այլ «կիսատնկախ», «կարճաղատ» կացություն, ապա կախյալ շինականի, նրա մեջ հանդես եկած հասարակական այլ խավերի և ճորտացման ուղու վրա կանգնած դասերի պատմությունը մնացել է անլուծելի։ Նրանք վիճել են այն մասին, թե շինականն ազա՞տ էր, թե ճորտ, սակայն չեն տեսել, որ մինչև ճորտական իրավունքի հանդես գալը շինականը համայնքի ազատ անդամն էր, բայց հետագայում նրա շարքերից արդեն դուրս էին եկել և ճորտու-

թյան ուղու վրա էին կանգնել այլ խավեր, այլ դասեր, որոնք սկզբունական շրջանում մտնում էին նույն շինական հավաքական տերմինի մեջ։

Մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սկսած 4-րդ դարից անմիջական արտադրողի՝ շինականի թե տնտեսական և թե սոցիալ-իրավական ու քաղաքական կյանքում տեղի են ունենում խոր, լուրջ փոփոխություններ։ Նախարարական-ֆեոդալական, վանական-եկեղեցական խոշոր հողատիրության, ֆեոդալական հարաբերությունների զարգացման ու խորացման հետևանքով «միաանական», «միատարր» շինականությունը, տարրալուծվում է, քայքայվում և նրա շարքից դուրս են գալիս ու ճորտացման ուղու վրա կանգնում շինականներից անջատված ու առանձնացված հասարակական այն խավերը, որոնց մասին խոսք եղավ վերևում։

«Շինական» տերմինը գրավել է ինչպես անցյալի, այնպես էլ մեր օրերի հետազոտողների ուշադրությունը։

Հայկազյան բառագիրք կազմողները «շինական» տերմինը ստուգաբանել են «դեղական, դեղացի»[1], Ստ. Մալխասյանցի կարծիքով շինական նշանակում էր «շեներում ապրող, գյուղացի»[2]։ Ս. Բահաթրյանը շինական տերմինի տակ հասկացել է «օտար ցեղերից պատերազմի միջոցով ձեռք բերված և ճորտացված գյուղացիներ»[3], Ա. Դարագաշյանը կարծել է, որ շինական նույն մշակն էր, «ձեռնագործը» և «թանգարը» (commersant)[4]։

Վրացագետ և հայագետ Ի. Ա. Ջավախովը առաջին անգամ մատնացույց արեց «շինական»-ների «անաղատ» վիճակը և այն հակադրեց «աղատ»-ների դասին։

«Շինական»-ները,— գրում է Ի. Ա. Ջավախովը,— աղատ չեն եղել, հակադրվել են «աղատ»-ներին և կոչվել «անաղատ»[5]։

Այնուհետև բաղդատելով հայ և վրաց պատմական աղբյուրները, Ի. Ա. Ջավախովը հանգում է այն եզրակացության, որ հայ «շինականը» իր իրավական կացությամբ շատ մոտ էր միջնադարյան ճորտ գյուղացու կացությանը։

Ի. Ա. Ջավախովին, ինչպես երևում է, թյուրիմացության մեջ են դցել «աղատ», «անաղատ» տերմինները և առանց վերապահու-

---

[1] Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, էջ 635։

[2] Ստ. Մալխասյանց, Բացատրական բառարան, հ. III, էջ 516։

[3] Ս. Բահաթրյան, Անձնական և հողային իրավունքը Հին Հայաստանում, էջ 427, հմմտ. Հ. Մուսայելյան, Անդրկովկասի հողային պայմանները, էջ 150։

[4] Ա. Դարագաշյան, Քննական պատմութիւն, հ. II, էջ 10—12։

[5] И. Джавахов, Госстрой... стр. 194.

թյան նա «անազատ» տերմինի տակ իմաստավորել է Հայաստանի ողջ գյուղացիությունը և գտել, որ Արշակունիների օրոք գյուղացիշինականը թե տնտեսական և թե իրավական արդեն ճորտացված էր և ամրացված հողին։

Ինչպես նշել ենք վերևում, Ն. Ադոնցը իր ընդարձակ աշխատության մեջ համարյա թե չի շոշափում գյուղացիության տնտեսական և իրավական կացությունը։ Ն. Ադոնցի համար գոյություն չունեն գյուղական բնակչության տարբեր կատեգորիաներ։ «Բոլորը, ովքեր չեն մտնում ազատների, հայտնիների կամ հոգևոր դասի մեջ, պատմիչների պատկերացումով կազմում են մի մասսա, ստորին բնակիչների մի խավ՝ շինականություն (sinakanudiun)...»[1]։

Ահա այս մի քանի նախադասություններն են, որ մենք գտնում ենք Ն. Ադոնցի այնքան ծանրակշիռ աշխատության մեջ։ Այստեղ ոչ այնքան «վկայությունների սակավությունն է» հանցավոր, որքան բուրժուական պատմական գիտության արատավոր մեթոդոլոգիան, որը և հնարավորություն չտվեց Ն. Ադոնցին գիտականորեն շարադրելու գյուղացիների և նրանց դասակարգային պայքարի պատմությունը։

Պրոֆ. Լեոն նույնպես իր նախորդների օրինակով բողոքում է վկայությունների սակավության առթիվ։ Նրա մոտ գյուղացին նույնպես մի գորշ մասսա է, շինականը՝ հոմանիշ ռամիկին, գեղջուկին։ Լեոն իր «Հայոց պատմություն» աշխատության առաջին հատորում այս առթիվ գրում է.

«Թե ինչ տեսակ հարաբերություններ կային ավատական իշխանի և նրան ենթարկված երկրագործ ժողովրդի մեջ, այդ մասին որոշ տեղեկություններ չեն մնացել։ Բայց, անշուշտ, այդ հարաբերությունները նույնն էին, ինչ գոյություն ունեին ավատական կարգերին ենթարկված ուրիշ համայնքների մեջ։ Գյուղացին, որ կոչվում էր ռամիկ, գեղջուկ, շինական, ազատ չէր, ստանում էր հողաբաժին, որը կոչվում էր կալված, որից բաժանվել չէր կարող առանց իշխանի թույլտվության։ Բացի դրամական որոշ տուրքերից, գյուղացին տալիս էր իշխանին և որոշված մասերը (գուցե տասանորդ)։ Այդ բոլորի հետ միասին գյուղացին պարտավոր էր կատարել իշխանի համար և զանազան ձրի աշխատանքներ, որոնք այժմ էլ կոչվում են կոռ ու բեկար...։ Որ ավատական հողատիրության հետևանքով գյուղացիությունը Հայաստանում պետք է եղած լիներ ճորտ, ցույց է

---

[1] Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, стр. 479.

տալիս այն, որ պարթև նախարարություններն էլ ունեին ճորտեր և ստրուկներ»[1]։

Այսպիսով, ըստ Լեոյի, պատմական բոլոր էպոխաներում, բացի տոհմատիրության ժամանակաշրջանից, ռամիկը, շինականը, դեղջուկը ճորտ էին, հարկատու և կապված հողին։

Պրոֆ. Խ. Սամուելյանը «շինական» տերմինին տալիս է բոլորովին այլ մեկնություն։

«...Շինական բառը, իբրև ճորտ գյուղացի նշանակող տերմին ստուգաբանորեն ածանցվում է ոչ թե շեն բառից... այլ շինել բայից, որը նշանակում է կառուցել, մշակել»... «Մեր պատմական մատենագրության մեջ... ֆեոդալ դասակարգին... միշտ հակադրվում է շինականների դասակարգը, որոնք հին հայ իրականության ճորտերն էին»[2]։

Ակադ. Հ. Մանանդյանը վկայակոչելով Դվինի ժողովի 9-րդ կանոնը և Աղվանից Վաչե թագավորին պատկանող 1000 «երդ»-երի մասին Եղիշեի և Մ. Կաղանկատվացու հաղորդած տեղեկությունները, գտնում է, որ «շինական»-ները հարմարվել են կալվածատեր-ազնվականության հատուկ գույքը», որ նրանք ամրացված էին հողին ու ճորտացված, որ շինականները, նույնիսկ Մ. Խորենացու էպոխայում, դտնվել են «ճորտական վիճակում», որ «շինական»-ները գտնվելով «ի հարկի ծառայութեան» վիճակում իրավունք չեն ունեցել ինքնակամ թողնել այդ ծառայությունը և, ըստ երևույթին, ժառանգաբար կապված են եղել իրենց զբաղմունքին, հողին և հարկատու դրությանը»[3]։

Արդ, որո՞նք են այն վկայությունները, որոնց հիման վրա շինականների պատմությունը հետազոտողների մեծ մասը հանգել է այն եզրակացության, որ «շինական»-ները պետք է լինեին ճորտացված և կապված հողին (Հ. Մանանդյան, Ի. Ջավախով) կամ «ճորտություն, այն է՝ հողին ամրացած լինելը» (Խ. Սամուելյան) վերաբերվում է շինականությանը։ Այդ աղբյուրը մեկն է։ Եվ ակադ. Հ. Մանանդյանը և պրոֆ. Խ. Սամուելյանը վկայակոչել են Դվինի ժողովի կանոնների հանրահայտնի 9-րդ հոդվածը և Աղվանից Վաչե թագավորին պատկանած «1000» երդի մասին հղած վկայությունը։

---

1 Լեո, Հայոց պատմություն, հ. 1, էջ 484, (ընդգծումները հեղինակինն են—Ս. Հ.)։

2 Խ. Սամուելյան. Հին հայ իրավունքի պատմություն. հ. 1, էջ 253, 255, 261, նույնի, Մ. Դոշի Դատաստանագիրքը, էջ 297—299։

3 Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը..., էջ 159, 161—163, 166, 171, 175, 189 և ուր. (ընդգծումները մերն են—Ս. Հ.)։

Մենք նույնպես ավելորդ չենք համարում մեջ բերել այդ վկայությունները, սակայն բոլորովին այլ մեկնությամբ։

«Կանոնք Դուինայ սուրբ ժողովոյն» 9-րդ հոդվածում կարդում ենք՝ «Յորժամ ազատք զիւրեանց զերդ և զմարդ բաժանեն՝ յոլովք չարակնութեան առնեն, զժառանգաւորս եկեղեցւոյ ջանան ի ծառայութիւն և ի տրկութիւն արկանել...»[1]։

Եղիշեն պատմում է, որ Աղվանից Վաչե թագավորը պարսկական Պերոզ թագավորից «խնդրեաց զմանկութեան սեպհականն, զոր հօր իւրոյ շնորհեալ էր նմա ի տղայութեանն հազար երդ. առ զայն ի թագաւորէն, և նստաւ ի նմա միայնակեցօք հանդերձ»[2]։

Այս վկայությունը համարյա նույնությամբ կրկնում է Մ. Կաղանկատվացին։ Աղվանից Վաչե թագավորը,— գրում է Կաղանկատվացին,— «...հաճեցաւ միայն զսեպհականն առնուլ բաժին իւր, զոր ի հօրէն էր առեալ հազար երդ, առ զայն ի թագաւորէն և նստաւ ի նմա միայնակեցօք հանդերձ»[3]։

Այս վկայությունների հիման վրա և ակադ. Հ. Մանանդյանը, և պրոֆ. Խ. Սամուելյանը եզրակացնում են, որ «երդերն ու մարդիկ եղել են ժառանգական բաժանման առարկա», որ «այդ նույն գույքը, այսինքն երդերն ու մարդիկ հնարավոր է եղել գնել, վաճառել, ընծայել, կտակել», որ «տվյալ հոդվածներում արձագանք է գտել հնավանդ ֆեոդալական իրավունքը ճորտացած գյուղացու՝ շինականի, անձնավորության վրա, որն ամրացված էր հողին, և վերջապես, «երդ»-երի և մարդկանց այս բաժանումը վերաբերում է «ազատ»-ներին պատկանող «շինականներին»։

Թե ինչո՞ւ, ի՞նչ հանգամանքներ հաշվի առնելով «զերդ» և «զմարդ» տերմինների տակ և ակադ. Հ. Մանանդյանը և պրոֆ. Խ. Սամուելյանը հասկացել են շինականներ, և այն էլ ճորտ շինականներ, այդ մեկ համար անհասկանալի է։

«Երդ»-երի, «մարդկանց», հողի և ջրի բաժանելու սովորություն կար Հայաստանում 5-րդ դարում և մի դուցե նրանից առաջ։ Այս էպոխայում բաժանում էին ոչ միայն հանցապարտ շինականների, այլև հանցապարտ տղատների տունը, երդը, հողը, ջուրը, որդիները, սակայն այս բաժանումը «ճորտական վիճակի բնորոշ հատկանիշ» լինել չէր կարող։ Այս տոթիվ Շահապիվանի ժողովի Դ կանոնում մենք կարդում ենք.

---

[1] Կանոնգիրք Հայոց, էջ 126։

[2] Եղիշե, էջ 258։

[3] Մ. Կաղանկատվացի, էջ 24։

«Եթե որ զկինն թողցէ... զատաստանն այս լիցի, զտուն և զկեանս և զորդիս և զհող և զջուր և զամենայն ինչ բաժանեսցին հաստատակաց, զկէսն կնոջն առցեն...»[1]։ Վկայության շարունակությունից պարզվում է, որ այն հավասարապես վերաբերում է ինչպես ազատներին, այնպես էլ շինականներին։ Կանոնը խիստ կերպով դատապարտում է պոռնիկ, չար, արատ ունեցող, շնարարս վարքի տեր ազատներին և շինականներին ու թույլ է տալիս բաժանելու նրանց տունը, հողը, դույքը, ջուրը և նույնիսկ որդիները։

Բայց այս վկայությունից երբեք չի կարելի եզրակացնել, որ «երդ»-երի և «մարդկանց» բաժանումը «ճորտական իրավունքի բնորոշ հատկանիշն ու ապացույցն են»։

Մեզ համար անհասկանալի պատճառով և ակադ. Հ. Մանանդյանը, և պրոֆ. Խ. Սամուելյանը չեն օգտագործել նույն՝ Դվինի ժողովի մյուս կանոնները, որտեղ խոսվում է շինականների՝ որպես դեռ անձնապես ազատ դասի մասին։

Դվինի ժողովում հավաքված հոգևոր ֆեոդալները խիստ կերպով մեղադրում են ազատներին, որ չնայած նրանք ունեն սեփական հողեր, կալվածներ, հարկատու գյուղացիներ, կամ, ինչպես ասված է, «երդեր ու մարդիկ», սակայն նրանք դրանով չեն բավականանում, այլև ջանում են «զժառանգաւորս եկեղեցւոյ... ի ծառայութիւն և ի ստրկութիւն արկանել...»։ Ազատներից «ոմանք... ի վերայ վանայ իշխանութիւնս առնեն և զվանականս՝ զորս կամին հանեն և հարկանեն, զոր չէ արժան և օրէն...»[2]։

Որ ազատների ամբողջ զայրույթն ուղղված էր ֆեոդալական եկեղեցու տիրապետության դեմ, այդ կասկածից վեր է։ Ազատները պատմական այս շրջանում իրենց հողային տիրույթները կարող էին և լայնացնում էին միայն եկեղեցու ժառանգության և գյուղական համայնքների հողերի հաշվին։ Այստեղ, անկասկած է, որ «երդ»-ը և «մարդիկ» ասելով մենք պետք է հասկանանք ոչ թե ազատներին պատկանող գյուղացի-շինականները կամ իրավապես ճորտ գյուղացիները, այլ նրանց հարկատուները։

Որ ազատները անձնական իրավունք չեն ունեցել անմիջական արտադրողի անձի նկատմամբ, որ վերջինիս կախումը առաջիններից միայն տնտեսական էր և ոչ քաղաքական ու անձնական, այդ ապացուցում է նույն ժողովի 11-րդ կանոնը։ Այստեղ պարզ ու որոշ ասված է.

---

1 Կանոնգիրք հայոց, էջ 64։

2 Նույն տեղում, էջ 126—127։

«Ոմանք յաղատաց ի վերայ տկարանոցաց իշխանութիւն առնեն, և որպէս ի կենդանեաց՝ հարկս պահանջեն և ի կերակուրս և յրմպելիս զիւրեանց գործակալս մատուցանեն, կռուով (պետք է լինի կռռով) և պատուհասիւ (պարհակությամբ) նեղեն...»[1]:

Եթե գյուղացու անձի նկատմամբ ազատը կամ հողատեր ֆեոդալն իրավական տեր լիներ, եթե նա իսկապես ազատի հողին ամրացված ու նրա իշխանության տակ լիներ, ապա այդ երևույթը չէր դիտվի որպես հասարակական չարիք և եկեղեցին ստիպված նրա դեմ կանոնական որոշում չէր ընդունի: Մի՞թե հասկանալի չէ, որ ճորտ գյուղացու հիմնական պարտականությունն էր արտատնտեսական հարկադրանքը, կռռը, իսկ այստեղ այդ դատապարտվում է որպես անօրինական երևույթ:

Մեր կարծիքով, ինչպես Եղիշեի և Մ. Կաղանկատվացու մոտ հիշատակված Աղվանից Վաչե թագավորին պատկանող 1000 «երդ»-երի մասին վկայությունները, այնպես էլ Դվինի ժողովի 9-րդ կանոնը, «ճորտական վիճակի բնորոշ հատկանիշ և ապացույց» չեն:

Այդ վկայությունները ցույց են տալիս, որ «երդ»-երն ու «մարդիկ» բաժանվում էին ազատների մեջ՝ նրանցից հարկեր հավաքելու իմաստով: Ազատների դասը արդեն 5—7-րդ դդ. այնքան էր բազմացել և շատացել, որ եղած գյուղերը, հարկատուները այլևս նրանց կարիքներին չէին բավարարում. նրանք ոչ միայն իրար մեջ էին բաժանում հարկատու «երդ»-երն ու «մարդիկ» այլև շարակամորեն ձգտում էին եկեղեցու ժառանգությունը «ի ծառայութիւն և ի ստրկութիւն արկանել», «բաժանեն ըստ ընդհանրս եկեղեցւոյն», պարզ է, որ այստեղ «ծառայութիւն», «ստրկութիւն», ոչ թե ստրուկի ու ծառայի իմաստով է գործածվում, այլ ենթարկվածության:

Ազատները, որպես մանր հողատեր և ամենից բազմաքանակ ռազմա-աղնվական դաս, ունեին սեփական հողային տիրույթներ, որոնք մշակվում էին գյուղացիների կողմից, բայց շինականների մեծ մասը դեռ անձնապես ազատ էին, դեռ վերջնականապես չէին ամրացված հողին և ունեին տեղաշարժի իրավունք:

Ակադ. Հ. Մանանդյանը և պրոֆ. Խ. Սամուելյանը, ինչպես ցույց ենք տվել վերևում, մի դեպքում գտել են, որ «շինական»-ները եղել են «անազատ», գտնվել են ճորտական դրության մեջ, «եղել են ճորտացած և կապված հողին», մյուս դեպքում. երբ ցանկացել են իրենց այդ նախօրոք կանխատեսած եզրակացությունը փաս-

[1] Կանոնագիր հայոց, էջ 127—128:

տարկել աղբյուրների վկայությամբ, հակասել են իրենց և գտել, որ մատենագրական աղբյուրները, դժբախտաբար, հնարավորություն չեն տալիս քննության առնել և լուսաբանել այդ խնդիրը հանգամանորեն իր բոլոր մանրամասնություններով... «շինական»-ների «անազատ» լինելը, այսինքն «ազատ»-ների դասին չպատկանելը դեռևս ապացույց չէ նրանց ճորտական վիճակին...: Հիմնական խնդիրը, որ հարկավոր է դեռ լուծել «շինական»-ների վերաբերմամբ, այն է, թե արդյո՞ք նրանք եղել են կապված հողի հետ, ինչպես միջնադարյան ճորտերը, և արդյո՞ք նրանց կախումը կալվածատեր ազնվական դասից տնտեսական է եղել միայն, թե նաև անձնական»[1]:

Պրոֆ. Ս. Սամուելյանը նույնպես կասկածանքով է խոսում շինականների «ճորտական» վիճակի մասին. նա բողոքում է, որ մատենագրական տվյալները սուղ են և անորոշ, սակայն «շինականները գտնվելով ճորտական դրության մեջ, այնուամենայնիվ վայելում էին որոշ քաղաքացիական իրավունքներ»[2]:

Մատենագրական համարյա թե բոլոր վկայությունները ապացուցում են, որ շինականների մեծ մասը անձնապես անկախ է եղել գոնե մինչև 10-րդ դարը:

Եկեղեցական ժողովներում մշակված կանոններից, իրենց սոցիալական իմաստով, խիստ հետաքրքրական և բովանդակալից են «Կանոնք Շահապիվանի ժողովոյն», ոչ միայն Հայաստանի 5-րդ դ. տնտեսական կյանքի պատկերը ներկայացնելու, այլև շինականների սոցիալ-իրավական դրությունը մեկնաբանելու համար:

Այս ժողովը խիստ ու դաժան կանոններ է մշակել հոգևորականների պիղծ և այլասերված բարքերի (կանոն Ա, Բ, ԺԴ), աշխարհիկ ֆեոդալների ցոփ ու անբարոյական վարքի (կանոն Գ), ամուսնալուծության (կանոն Գ, Դ, Ե, Զ), առևանգումների (կանոն Է), կախարդության, մեռելների վրա կոծ անելու, մարդատյաց մենակեցության, մերձամուսնության (կանոն Ը, Թ, Ժ, ԺԱ, ԺԲ, ԺԳ, ԺԵ, ԺԶ, ԺԷ, ԺԸ) և, վերջապես, մծղնեական աղանդի դեմ (կանոն ԺԹ, Ի): Մինչև օրս, մեզ թվում է, ճիշտ չեն մեկնաբանված այս կանոնների բովանդակությունները. Շահապիվանի կանոնները հետազոտող մասնագետները կարծել են, որ հանցապարտ ազատները ենթակա են եղել միայն դրամական տուգանքների, որ նրանք իբր ազատ են եղել հարկադիր աշխատանքից, իսկ շինականները բացի

---

[1] Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը..., էջ 160—161:

[2] Ս. Սամուելյան, Հայ հին իրավունքի պատմություն, հ. 1, էջ 261:

դրամական տուգանքներից. ենթակա են եղել նաև հարկադիր աշխատանքի, ծեծի, մրելու, նրանց ճակատին աղվեսադրոշմ խարանելու։

Այստեղից էլ շինականների դրությունը հետազոտողները հանդել են այն սխալ եզրակացության, որ շինականը եղել է «անազատ», «ճորտ» և հանդիսացել է տիրոջ սեփականությունը։ Այս դրությունը չի ապացուցվում հենց իր՝ Շահապիվանի ժողովի կողմից մշակված կանոններով։ Ոչ միայն հարկադիր աշխատանքի են ուղարկվել «հանցապարտ» շինականները, այլև հոգևորականները, ազատները, նախարարները, բայց միայն մի դեպքում, եթե ապացուցվել է, որ նրանք հարել կամ մեղսակից են եղել «չարագործ» մծղնեական աղանդին։

Շահապիվանի ժողովի ԺԲ կանոնը դոդենոց է ուղարկում նաև երեցներին և սարկավագներին։

«Եթէ ոք ի մծղնէութեան գոցի կամ երէց կամ սարկաւագ կամ սրեղայ, քահանայութիւնն լուծցի, աղուէսդրոշմ ի ճակատն դիցի... Ապա եթէ դարձեալ ի նմին գոցի, ղջիղսն երկսին կտրեսցեն և ի դոդենոց տացեն... Ապա եթէ արբ կանամբք և որդւովք գոցին յաղանդին, զարանց և զկանանց և զիրագէտ մանկանց զջիղսն կտրեսցեն, աղուէսդրոշմ ի ճակատն դիցեն և ի դոդենոց տարցին յապաշխարութիւն»[1]։

Այստեղից երբեք էլ չի կարելի եզրակացնել, որ երեցները, սարկավագները, սրեղաները, նրանց ընտանիքի անդամները, աղամարդիկ, կանայք, «զիրագէտ» երեխաները «անազատ» էին, «իրավազուրկ», «ճորտ» որովհետև նրանք մարմնական պատիժների են ենթարկվում և որ զլխավորն է, ուղարկվում «դոդենոց»-ները «ապաշխարելու» համար։

Նույն ժողովի Ի կանոնը ուղղված է մծղնեական աղանդին համակրող մեծամեծ նախարարների, իշխանների դեմ։ Այս կանոնը խիստ կերպով դատապարտում է իշխաններին, գավառների տերերին, որ եթե նրանք համարձակվեն հովանավորել աղանդավորներին, ապա «ամենայն տամբ իւրով և ծննդովք և կենօք նզովեալ» լինեն, իսկ եթե «ի նախարարի տան գոցին պղծութիւնքն, կամ կին նորա կամ դուստր, կամ որդի, կամ ինքն զլխովին... ի մծղընէութեան գոցի, կալցեն միաբան պղծագործ ընտանեօքն հանդերձ և ի հրապարակ ածցեն առաջի զլխաւոր եպիսկոպոսին, և առաջի մեծամեծաց իշխանաց, և աւագ դատաւորաց և միաբան վրէժխնդիր լինիցին օրինացն Աստուծոյ»[2]. իսկ ստածու օրենքը պահանջում

[1] Կանոնգիրք հայոց, էջ 80։

[2] Նույն տեղում, էջ 81—82։

էր, ինչպես հայտնի է մյուս կանոններից, նրանց դեմքին աղվեսաքրոշմ դնել և ուրկանոցներ ու դոդենոցներ ուղարկել՝ հարկադիր աշխատանք կատարելու և «մեղքերը» քավելու համար։

Ոչ միայն 5-րդ, այլև 11-րդ դարում մարմնական դաժան պատիժների և խոշտանգումների էին ենթարկվում ու հասարակական հարկադիր աշխատանքի ուղարկվում ոչ միայն շինականները, այլև այն հոգևորականներն ու կույսերը, որոնք «... ի դիւաբնակ տանն... մտանեն» կամ «սատանեական խորհուրդ կատարեն»։ Այս հանցանքների մեջ բռնված հոգևորականներն ու կույսերը զրկվում էին «...յետին թոշակից», նրանց ճակատներին խարանվում էր աղվեսաքրոշմ, հանվում էր «ղջիլոտիցն» և ուղարկվում ուրկանոց ու դոդենոց «ի վախճան զամենայն կենաց իւրեանց» աշխատելու և «մեղքերը» ապաշխարելու համար[1]։

Այսպիսով, ոչ միայն շինականները, այլև հերետիկոսներին հարող իշխող դասի ներկայացուցիչներն էլ ենթակա էին հարկադիր աշխատանքի, իսկ հարկադիր աշխատանքը կամ մարմնական պատիժները, ինչպես տեսնում ենք, «անաղատության», «ճորտության» նշաններ չեն։

Մեր մատենագիրները, կանոնական որոշումները թողել են բազմաթիվ վկայություններ այն մասին, որ շինականները ունեին դույքային սեփականատիրության իրավունք, հողատոր, տուն, սեփական անհատական տնտեսություն, աշխատանքի գործիքներ, բաշող ուժեր, խոշոր և մանր եղջերավոր անասուններ, դրամ. նրանք իրավունք են ունեցել գնումների միջոցով լայնացնել իրենց հողատորները՝ ինչպես աշխարհիկ, այնպես էլ հոգևոր ֆեոդալների հողերի հաշվին։

Այս խնդիրն այնքան կարևոր է, որ մենք ավելորդ չենք համարում մեջ բերել շինականների դույքային սեփականության իրավունքը հաստատող մի շարք վկայություններ։

Շահապիվանի ժողովի Դ կանոնը իրավունք է տվել բաժանել հանցապարտ աղատների և շինականների «զտուն և զկանս և զորդիս և զհող և զջուր և զամենայն ինչ». այստեղ, իհարկե, խոսքը մասնավոր սեփականատիրոջը պատկանող տան, կայքի, հողի, ջրի և «ամենայն ինչ»-ի մասին է։

Շինականները ունեցել են իրենց սեփական կայքը օտարելու, նվիրելու և ժառանգելու իրավունք։

---

[1] Դաւիթ վարդապետ. մականուն Անյաղթ որդի, Երրորդ կանոնականք բանք, Ձեռագիր № 839, էջ 71բ, 73բ. հմմտ. Ձեռագիր № 648, էջ 108ա. բ։

Շահապիվանի ժողովի Ե կանոնում նշված է «Եթէ կին որ արար և ամուլ պատահեաց և այրն հանցէ զնա վասն ամլութեան, որ ինչ կնոջն կարասի բերեալ է ի տուն, թէ աղախին, թէ անասուն, թէ հանդերձ, թէ արծաթ, առնուլ իշխան է և գնալ։ Եւ եթէ քան զամլութիւնն այլ արատ չգտցի, մարդն տուգան ևս տացէ կնոջն վասն անարգանացն, թէ ազատ է ՌՄ դրամ, և թէ շինական՝ Ո»[1]։

Այս ուշագրավ վկայությունը մեզ շատ բան է ասում. նախ շինականի կինը ազատ էր, ճորտ չէր, նա ամուսնանալիս ոչ միայն իր «հանդերձն» էր շինականի տունը բերում, այլև աղախինները, անասունները, արծաթ։ Ուրեմն, հզոր և կարողության տեր շինականի կինը կարող էր նույնիսկ աղախին ունենալ։ Ավելին, անարգված կինը հատուցում էր ստանում ազատից 1200, շինականից 600 դրամ։ Հետևաբար, շինականը ուներ անձնական իրավունք տնօրինելու ոչ միայն իր կայքը, այլև դրամը։ Հետաքրքրական է, որ այս դեպքում շինականն ազատ էր մարմնական պատիժներից և միայն դրամական տուգանք էր վճարում։

Շինականներն ունեին քաղաքացիական իրավունքներ. նրանք կարող էին ընտրվել և նշանակվել քահանաներ, երեցներ։

Շահապիվանի ժողովի ԺԶ կանոնը հայտարարում է՝

«Վանայ երէց կամ անապատաւոր առանց դաւառի եպիսկոպոսին չիշխէ լինել եպիսկոպոս կամ երէց, կամ ազատ որ դատաւորաց, և կամ շինական վասն առաջնորդս կարգելոյ և նովիս պատրաստելոյ յեկեղեցւոյ»[2]։

Այս խիստ ուշագրավ կանոնը մենք համեմատեցինք Պետական Մատենադարանի № № 7615, 6409, 659 ձեռագրերի հետ, և համեմատությունը ցույց տվեց, որ անձնապես ազատ շինականները նախարարների, հոգևոր դասերի ներկայացուցիչների հետ հավասար կերպով մասնակցել են այն ժողովներին, որտեղ ընտրել են առաջնորդներ, եկեղեցիների հովիվներ, ժողովրդապետներ, օրենսդիրներ, դատավորներ։

«Բայց որ զլխաւոր եպիսկոպոսն է աշխարհին առանց նորա կամացն եպիսկոպոս ոք մի լիցի և վանայ երէց կամ անապատաւոր առանց դաւառին եպիսկոպոսին չիշխէ լինել։ Եպիսկոպոս ոք կամ երէց կամ ազատ ոք ի դատաւորաց և կամ շինական, վասն առաջնորդս կարգելոյ և հովիւս պատրաստելոյ եկեղեցւոյ և ժողովրդապէտս և աւրէնսդիր կացուցանելոյ, զի ծանուցցեն հեթա-

---

[1] Կանոնդիրք հայոց, էջ 64—65։

[2] Նույն տեղում, էջ 76։

նոսք թէ մարդիկք են սոքա և վասն այսր իրաց կաշառ առցեն. կամ աշառանաւք առիցեն և ոչ զճշմարտութիւն ընտրեսցեն»[1]։

Այսպիսով, իրավապես ազատ շինականը ոչ միայն կարող էր հոգևոր կոչում ստանալ միայն «աշխարհի» եպիսկոպոսի համաձայնությամբ, այլև ազատ դասերի ներկայացուցիչների հետ հավասար իրավունքներով մասնակցել այն ժողովներին, որտեղ ընտրվում էին եկեղեցական բարձրաստիճան պաշտոնյաներ։ Եկեղեցական կանոնները թույլ էին տալիս հոգևոր կոչում ստանալու նաև ծառաներին, բայց շինականի և ծառայի հոգևոր կոչում ստանալու մեջ կար հիմնական և արմատական տարբերություն։ Եթե շինականը հոգևոր կոչում էր ստանում եպիսկոպոսի համաձայնությունից հետո, ապա ծառան այդ նույն կոչումը կարող էր ստանալ միայն այն դեպքում, երբ նրան ծառայությունից ազատում էր իր տերը։

«Սահմանք և կանոնք առաքելոց ի ձեռն Կղիմայ, առաքեալ հեթանոսաց, երկրորդ առաքելականք» կանոնները սահմանել են, որ «Զծառայս առանց տէրանց կամաց ի ժառանգաւորութիւն ընձեռել ոչ տամք թոյլ... քանզի յայսմանէ կործանումն տանց լինի. ապա եթէ յորժամ ծառայն արժանի երևեսցի առ ի ձեռնադրութիւն յեկեղեցական աստիճան... և տեարք իւր բողոքեսցեն, ազատեսցեն և տանէ ի բաց արձակեսցեն, յայնժամ եղիցի»[2]։

Ակնհայտ է, որ «ծառան» իր սոցիալական կացությամբ, իրավական դրությամբ տարբերվում էր «շինական»-ից և միայն այն դեպքում կարող էր հոգևոր աստիճան ստանալ, եթե տերը նրան ազատ էր արձակում, իսկ շինականը, որպես իրավական ազատ անձ կարող էր նույն կոչումն ստանալ, եթե նրան հովանավորում կամ երաշխավորում էին եկեղեցու առաջնորդները, եպիսկոպոսները, իշխանները։

Որ գյուղական քահանաներ, երեցներ և եկեղեցու այլ սպասավորներ գավառի եպիսկոպոսների համաձայնությամբ հաճախակի ընտրվում կամ նշանակվում էին ժողովրդից, շինականներից,

---

1 Ձեռագիր № 7615, էջ 170բ, հմմտ. նաև ձեռագիր № 6409, էջ 81բ, ձեռագիր № 659, էջ 250ա, ձեռագիր № 778, էջ 232բ, ձեռագիր № 654, էջ 182ա, հմմտ. Մելիք-Թանգյան, Հայոց եկեղեցական իրավունքը, Շուշի, 1903, գիրք Ա., էջ 336, Կանոնգիրք, էջ 76։

2 Կանոնգիրք, էջ 250, հմմտ. ձեռագիր № 3706, կանոն ԼԶ, էջ 37բ, ձեռագիր № 6409, էջ 22ա, 25ա։

այդ մասին են վկայում նաև հայոց Սահակ կաթողիկոսի կանոնները և առանձնապես պատմագիր Ղ. Փարպեցու կենսագրությունը։

«Քահանայ որ, և որ ի քահանայական կարգի են ժողովրդականք,— կարդում ենք Սահակի կանոններում,— յաղատաց տունս ի դայեկութիւն և յայլ գործակալութիւն մի իշխեսցին առնել...»[1]։

Այստեղ անկասկած է, որ «և որ ի քահանայական կարգի են ժողովրդականք» ակնարկում են այն անձնավորություններին, որոնք ժողովրդի շարքերից դուրս գալով հասել էին քահանայի աստիճանին։ Իսկ քահանա կարող էր ընտրվել միայն իրավապես ազատ մարդը։ Այս փաստն ավելի ցայտուն կերպով հանդես է գալիս Ղ. Փարպեցու ինքնակենսագրության մեջ։

Ղ. Փարպեցին Վահան Մամիկոնյանին գրած իր հայանի «Թուղթ»-ում տալով իր կենսագրությունը գրում է, որ իր մանկությունը քաջ հայանի է Վահան Մամիկոնյանին, որ ինքը մանուկ հասակից մեկնել է «ի Հոռոմս», այնտեղ կրթվելով ու դաստիարակվելով «ելեալ անտի կեցի առ Կամսարականսդ», որից հետո «որպէս թէ ձանձրացեալ յաշխատութենէ շփոթիցն՝ կամեցայ պարապել աղօթից և հանգչել»։

Այստեղից նա մեկնում է Սյունիք «կեցի... առ առն միում... որում անուն էր Մովսէս...»։ Մովսեսի մոտից Ղազարին իր մոտ է տանում «քահանայապետ աշխարհին տէր Մուշէ»։

Տալով իր կենսագրության հետագա նկարագիրը, Ղ. Փարպեցին ի միջի այլոց գրում է՝

«Արդ՝ զառաջին կեչոյն իմոյ զվարս տէր Ներսեհ և Հրահատ Կամսարական զիտեն. զՍիւնեաց՝ յառաջագրեալ եպիսկոպոսն աշխարհին։ Եւ զու յայց ելեալ խնդրել զիս, և գտեալ յաշխարհին յայնմ՝ ածեր ի տուն, ոչ իբրև զաղմատ զոք ի կազմածէն և ի մանկտոյն, և ոչ իբրև օտար զոք ի էէն և կամ զծառայ ուրում. քանզի պարեզօտաւորք ազատեալ են ի Քրիստոս։ Իսկ որ զատոյցն զիս պարեզօտիւք ի ծառայութենէ աշխարհիս և ազատութեան եղև մեզ առիթ, տէր Աղան՝ էր տեառն էեոի էր»[2]։

Այս վկայությունը առիթ է տվել բանասերների մի մասին Ղազար Փարպեցուն համարելու «ընտիր և ազնուական» կամ «ազատ կամ յազգէ ազնուաց», կամ «որդի առն ունևորի», որ իբր, նա մերձավոր ազգական էր Մամիկոնյաններին, որ «թէև անյայտ է

---

1 Կանոնգիրք, էջ 24։

2 Ղ. Փարպեցի, էջ 187—188 (ընդգծումները մերն են—Ս. Հ.)։

մեզ անուն ծնողաց նորա, սակայն որպէս երևի, ականատերք սմանք էին և հարուստք»[1]։

Ակադ. Հ. Մանանդյանը բոլորովին նոր մեկնություն է տվել վերոհիշյալ վկայությանը։ Նրա կարծիքով «եթե Փարպեցին «աղատ»-ների կարգն է անցել հոգևոր կոչում ընդունելուց հետո, սակայն միևնույն ժամանակ, ինչպես ինքն է վկայում, չի եղել «ծառայ ուրուք», ոչ էլ «աղքատ ոք ի կաղմածէն և ի մանկուտյն», կարելի է, իմ կարծիքով, ենթադրել, որ նա եղել է, հավանաբար, շինական Փարպի գյուղից[2]։

Ակադ. Մանանդյանը մինչև այստեղ ճիշտ է. սակայն նրա եզրակացությունը, որ իբր ինչպես բոլոր շինականները, այնպես էլ Ղազար Փարպեցին, «իբրև «անազատ»-ներ, հատուկ «ծառայությամբ» կապված են եղել իրենց հողի և տերերի հետ», պատմականորեն չի հաստատվում։

Նախ՝ հայտնի է, որ Փարպի գյուղը Արծրունիների սեփականությունը չէր, որպեսզի Աղան Արծրունին «ճորտությունից» ազատեր իրեն չպատկանող գյուղի «ճորտ» կամ «անազատ» Ղազար Փարպեցուն։ Բացի այդ, «անազատ», «ճորտ» Ղ. Փարպեցին ինչպե՞ս կարող էր մեկնել Բյուզանդիա, վերադառնալուց հետո գնալ Սյունիք, ապրել բոլոր նրանց մոտ, ում ինքն էր ցանկանում, անցկացներ իր մանկությունն ու ծերությունը Մամիկոնյան իշխանների հետ։ Ամենայն հավանականությամբ նա ազատ գյուղացի էր, շինական և ինչպես բոլոր շինականները, այնպես էլ Ղ. Փարպեցին կարող էին հոգևորական դառնալ միայն գավառների եպիսկոպոսների կամ հովանավոր իշխանների երաշխավորության միջոցով։ Ղազարը դառավ հոգևորական Աղանի միջնորդությամբ։

484 թ., երբ Վահան Մամիկոնյանը դառնում է Հայաստանի մարզպան, նա իր մոտ է բերում Սյունիքում ապաստան գտած Փարպեցուն և նշանակում է Վաղարշապատի Կաթողիկեի վանահայր։

Այստեղ Ղազար Փարպեցու դեմ համախմբվում են ռեակցիոն, հետամնաց հոգևորականները, հարձակվում են վանքի վրա, հալածում և արտաքսում են վանահայր Ղազարին և խլում ամեն ինչ, «զիս հանին մերկ և թշնամանօք յամենայն արարելոց իմոց, զոր ի մանկուրենէ արարեալ էի», գրում է Ղազարը իր «Թուղթ»-ի մեջ։

---

[1] Դ. Ղարպետյան, Հայկական հին դպրության պատմություն, Վենետիկ, 1897, էջ 392, Խալաթեանց Գրիգոր, Ղազար Փարպեցի և գործք նորին, Մոսկվա 1883, էջ 4, Ղազարայ Փարպեցւոյ թուղթ առ Վահան տէրն Մամիկոնէից, ի լոյս ընծայեաց Մկրտիչ էմին, Մոսկվա, 1853, էջ 18։

[2] Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը..., էջ 165։

Ինչպես նկատելի է, «անազատ», «ճորտ» Ղ. Փարպեցին ոչ միայն ծերության, այլև մանկության հասակից ունեցել է իր սեփական կայքը, և «յամենայն արարելոցն»։ Այս փաստը ևս մի հենակ է այն մասին, որ ազատ շինականն իրավունք է ունեցել անօրինելու իր կարողությունն այնպես, ինչպես ինքն է ցանկացել։

Ղ. Փարպեցու վկայության այն մասը, որ «պատոյցն վիս պարեգոտիւք ի ծառայութենէ աշխարհիս և ազատութեան եղև մեզ առիթ, տէր Աղան՝ քո տեառն քեռի էր»՝ պետք է հասկանալ, որ այստեղ խոսքը ոչ թե «անազատությունից»՝ ճորտական վիճակից, ազատության անցնելու մասին է, այլ, ըստ Ղազարի, իսկական «ազատ» նա է, որ «ազատեալ է ի Քրիստոս», որն ազատված է «ի ծառայութենէ աշխարհիս»։

Աշխարհիկ կյանքից, աշխարհիկ ծառայությունից ազատ էին եկեղեցականները, հոգևորականները և ինչպես վկայում է Ղազար Փարպեցին, Աղանը, որի մոտ Ղազարը «անեալ և ուսուցեալ» էր, նրան դարձնում է պարեգոտ և հանդիսանում, նրա աշխարհիկ ծառայությունից և կյանքից, և ոչ թե ճորտական ծառայությունից, ազատության առիթը։

Շինականների քաղաքացիական իրավունքի հաստատման փաստեր կան եկեղեցական և առաքելական կանոններում։

Սահակի ԻԴ կանոնն ուղղված է այն քահանաների դեմ, որոնք ծառայություն են մատուցում շինականներին։ «Եւ արտաքոյ եկեղեցւոյ քահանայք մի իշխեսցին օրէնս ի տունս շինականաց տանել և անդ տալ զսրբութիւն»[1]։

Ուրեմն շինականը կարող էր իր տանը հրավիրել նույնիսկ քահանաներին եկեղեցական ծիսակատարություններ ընդունելու համար։ Անկասկած է, որ շինականը պետք է ունենար հայ եկեղեցու պաշտոնյաներին պատարագ մատուցելու հատուցումներ։

Սկզբնաղբյուրներում նույնիսկ ակնարկներ չկան այն մասին, որ եկեղեցական ծիսակատարությունները կարող էին կատարվել «ստրուկների» տանը, որովհետև ստրուկը սեփականություն և եկեղեցիներին ու նրա պաշտոնյաներին վճարումներ կատարելու միջոցներ չուներ։

Որ շինականները օգտվում էին քաղաքացիական իրավունքով, այդ մասին մենք վկայություններ ունենք Փավստոսի մոտ։

Հայոց թագավոր Տիրանի կուրացման և գերության պատմությունը նկարագրելիս Փավստոսը վկայում է, որ «ժողովեցան ի մի

[1] Կանոնդիրք հայոց, էջ 25։

ժողով միաբանութեանն մարդիկ աշխարհին Հայաստան երկրին. ...բայց ի զօրավարացն, այլ և ի շինականաց անգամ ռամիկ մարդկանն»[1]:

Այս ժողովում հավաքված բոլոր դասերը որոշում են պատգամավորներ ուղարկել «առ թագաւորն Յունաց, զի ի նա ձեռս տուեալ ծառայեսցեն նմա հնազանդութեամբ»: Այդպիսով, հայրենիքին սպառնացող վտանգի դեպքում շինականները մասնակցում էին աշխարհաժողովներին և երկրի քաղաքական կյանքին վերաբերող հարցերի լուծմանը:

Շինականները և «դաստապետք շինականաց» մասնակցել են Ներսես կաթողիկոսի հրավիրած ժողովին:

«Ապա,— վկայում է Փավստոսը,— ժողովեցան մարդիկ ամենայն աշխարհին իշխանութեանն թագաւորութեանն Հայոց. և եկին առ մեծ եպիսկոպոսապետն Հայոց Ներսէս, մեծամեծք նախարարք, կուսակալք, կողմակալք, գաւառատերք, գործակալք և դասապետք շինականաց ի մի վայր եկեալ ժողովեցան»[2]:

Փ. Բուզանդի այս հատվածն ուշադրավ է նաև այլ առումով: Անհերքելի է, որ շինականները, Փավստոսի օրոք, ընդգրկված էին գյուղական-երկրագործական համայնքներում և հանդիսանում էին համայնքների դեռ իրավասես անկախ ու ազատ անդամները: Ամենայն հավանականությամբ շինականները ընտրել են համայնքների ավագ առաջնորդները կամ ինչպես պատմիչն է ասում՝ «դաստապետք շինականաց», որոնք մասնակցելով աշխարհաժողովներին, պաշտպանել են շինականության շահերը:

«Դաստապետք շինականաց» ինստիտուտի առկայությունը Հին Հայաստանում ոչ մի կասկած չի հարուցում, որ շինականները դեռ ամենապես կախման վիճակում չէին դրված ֆեոդալական դասակարգի տարբեր խավերից և ինքնուրույնաբար տնօրինում էին համայնքների ներքին գործերը:

Եղիշեն նույնպես վկայում է, որ շինականը ուներ իր մասնավոր սեփականությունը, հողակտորը և քաղաքացիական իրավունքը. պատմիչի տեղեկության համաձայն, Հաղկերտ 2-րդ պարսկական թագավորը Հայաստան է ուղարկում Ատրորմիզդ մարզպանին, որը հավաքում է հայ նախարարներին, հոգևորականներին և թագավորի անունից հաղորդում «Զամենայն կարգս աստուածպաշտութեանն, որպէս զիարդ և ունէին յառաջ ժամանակաւ առ նախ-

[1] Փ. Բուզանդ, էջ 46:
[2] Նույն տեղում, էջ 136—137:

նեօքն, նոյնպէս և այժմ, ասէ, Կալցին։ Եւ եթէ ոք ի հեռի աշխարհ ուրեք գնացեալ իցեն, ունիմ իշխանութիւն յարբունուստ, երէ յազատաց իցեն, երէ ի շինականաց իցեն, երէ յեկեղեցւոյ, զինչ կեանս և բողեալ իցէ, եկեսցեն և կալցեն զիւրաքանչիւր զարարս»[1]։

Եղիշեն շարունակության մեջ վկայում է, որ այս հրամանը ուղարկվում է «ի կողմանս կողմանս», որի հետևանքով «բաղումք իսկ եկին և ժողովեցան, և կալան զիւրաքանչիւր կալուածս»[2]։

Այս վկայությունն այլևս ոչ մի կասկած չի հարուցում, որ շինականը ևս ուներ իր հողակտորը, դույքը, որ պարսկական թագավորը դիմում է ոչ միայն ազատներին, այլև շինականներին՝ վերադառնալու և ստանալու թողած կամ լքված ու կորցրած սեփականությունը, հողը։

Շինականները ոչ միայն ունեցել են անձնական ազատություն, այլև իրավունք հայց հարուցելու դատարաններում, գնումների միջոցով լայնացնելու իրենց հողակտորները։

Դվինի ժողովի Ը կանոնը արգելում է հոգևոր դասի ներկայացուցիչներին անշարժ կայքը, այսինքն հողը, ջուրը և «եկեղեցւոյ զամենայն շնորհս» վաճառել շինականներին։

Այդ կանոնը իրավունք է տալիս հոգևորականներին իրենց «զշարժուն կայքն» ժառանգել նրանց, ում իրենք են ցանկանում, բայց արգելում է եկեղեցու անշարժ կայքը «զհող և զջուր» և «զամենայն շնորհս» «եթէ ոչ որդիս կամ թոռունս ունիցին... զսրբոյ եկեղեցւոյ զժառանգութիւն յարժանաւոր մերձաւորացն օտարացուցանել և տալ հեռաւոր օտարաց»[3]։

Սակայն, եթե նա խախտում է այս կանոնը և եկեղեցու հողն ու ջուրը վաճառում, ապա պետք է վաճառի միայն «յուխտէ եկեղեցւոյ, թէև հեռաւոր ևս իցէ», բայց «մի շինականի ոմեք»։ Այս կանոնն այլևս ոչ մի կասկած չի հարուցում, որ եկեղեցու «ժառանգությունը», այսինքն հողային տիրույթների մի մասը գնումների հանապարհով անցնում էր շինականներին և այդ երևույթն այնքան մասսայական էր, որ եկեղեցին ստիպված հատուկ և խիստ կանոններով արգելում է այն։

Սովորական և տիրապետող կարծիք է, որ իբր մեր աղբյուրները հիշատակելով նախարարներից և ազատներից հետո՝ շինականներին, ցույց են տվել իբր նրանց անազատ կացությունը։ Մեզ թվում է բոլորովին հակառակը, որովհետև շինականները իրավա-

[1] Եղիշե, էջ 170—171։

[2] Նույն տեղում։

[3] Կանոնգիրք հայոց, էջ 125։

պես դեռ ազատ էին, այդ է պատճառը, որ նրանք հիշատակվում էին նախարարների և ազատների հետ միաժամանակ, նրանք նրանց հետ մասնակցում էին աշխարհաժողովներին, քննում էին երկրի ներքին և արտաքին կյանքին վերաբերող հարցեր։

Հետաքրքրական է, որ աղբյուրները երբեք չեն հիշատակում, որ աշխարհաժողովներին մասնակցելու իրավունք են ունեցել մշակները կամ ծառաները ու ստրուկները։ Այդ ինքնին հասկանալի է, սոցիալապես անազատ դասերն իրավունք չունեին ազատներին հավասար իրավունքներով աշխարհաժողովներին մասնակցելու։

Հայոց թագավորները հաճախակի նամակով դիմում էին ոչ միայն ազատներին, այլև շինականներին։ Ագաթանգեղոսի վկայությամբ Տրդատ թագավորը ողջույնով դիմում է Հայաստանի բոլոր բնակիչներին։

«Տրդատ արքայ Հայոց մեծաց, առ մեծամեծս և առ իշխանս և առ նախարարս և առ գործակալս և առ այլ մարդիկդ, որ ընդ իմով իշխանութեամբ էք, յաւանս, ի շէնս, ի դեղս, յագարակս, առ ազատս և առ շինականս, միանգամայն իսկ առ ամենեսեան, ողջոյն»[1]։

Մի այլ կապակցությամբ, դիմելով ազատներին և շինականներին, Տրդատը ասում է. «առ նախարարս և առ զօրս և առ շինականս և առ ամենեսին ողջոյն. ողջ լիջիք, և մեք մեղէն իսկ ողջ եմք»[2]։

Ակնհայտ է, որ Տրդատ թագավորը այս կերպ կարող էր դիմել և խոսել միայն իրավապես ազատ դասի մարդկանց հետ։ Ոչ մի երկրում և ոչ մի ժամանակ թագավորները անազատների և ճորտերի հետ այդ լեզվով չեն խոսել։

Այս նույն կարգի վկայություն մենք գտնում ենք Ղ. Փարպեցու մոտ. տալով հայ ժողովրդի քաղաքական շահերի դավաճան Վասակ Սյունեցու դավաճանության պատմությունը Ղ. Փարպեցին գրում է.

«Իսկ նենգաւոր իշխանն Սիւնեաց Վասակ ոչ երբէք դադարէր գրել նամակաց առ իշխանս և շինականս և քահանայս աշխարհիս Հայոց»[3]։

Այս վկայությունը խիստ ուշագրավ է նաև այն տեսակետից, որ այստեղ շինականները հիշատակված են քահանաներից առաջ։

Շինականների, դեռ որպես իրավապես ազատ դասի մասին

---

[1] Ագաթանգեղոս, էջ 73։

[2] Նույն տեղում, էջ 76 (բոլոր ընդգծումները մերն են—Ս. Հ.)։

[3] Ղ. Փարպեցի, էջ 67։

մի շարք վկայություններ է պահպանել Եղիշեն։ 449 թվին Հայաստան է գալիս Դենշապուհը։

Դենշապուհը աշխարհակալի է ենթարկում ոչ միայն հարկային բոլոր օբյեկտները, այլև հայ ֆեոդալական հասարակության բոլոր դասերին։ Նա վերացնում է եկեղեցու ապահարկությունը և հայ եկեղեցին ենթարկում է հարկի։ Հայաստանի առանց այդ էլ ծանր հարկերն ավելի է ծանրացնում, խախտում է հայերի միաբանությունը, նոր հարկի է ենթարկում նաև շինականներին, որպեսզի սրանք էլ «յոյժ աղքատութեան» պատճառով ընդունեն «յօրէնս մոգուց»[1]։

Անկասկած է, որ նոր, ավելի ծանր հարկի ենթակա գյուղացի շինականները պետք է որ ունենային հարկեր և տուրքեր վճարելու միջոցներ, մասնավոր սեփականության և անտեսական այլ օբյեկտներ։

Խիստ ուշագրավ է, որ նույն պատմիչը միշտ էլ ազատներից հետո թվարկում է շինականներին և մատնացույց անում նրանց անձնական ազատ դոյավիճակը։

Պարսկական մոգերը, ասում է պատմիչը, ոչ միայն նախարարների, ազատների այլև շինականների կանանց և որդիներին քարոզում էին «զուսումն վարդապետութեան մոգուցն»։ Նրանք հատուկ հրապարակ-վարժարաններում հավաքում էին ազատների և շինականների տղաներին, աղջիկներին և կրթում պարսկական օրենքներով։

«Ուստերք և դստերք ազատաց և շինականաց՝ կրթեսցին ի հրապարակս նոցուն մոգաց»[2]։ Եղիշեն, որ այնքան հաճախակի է գործածում «ստրուկ», «ծառա» տերմինները, երբեք և ոչ մի առիթով չի հիշատակում, որ սրանք էլ կարող էին ազատներին հավասար իրավունքներով մասնակցել աշխարհաժողովներին կամ կրթվել ու դաստիարակվել ազատներին հավասար պայմաններում։ Անշուշտ այստեղ խոսքը գնում է իրավական ազատ, գյուղական համայնքների անկախ և իրավահավասար բնակիչների մասին է։

Խիստ արժեքավոր է, որ նույն պատմիչը շինականներին թվարկում է ազատներից և քահանաներից առաջ։ Ժողովրդա-ազատագրական պայքարի կազմակերպիչները, ասում է Եղիշեն, «սփռեցան... ի գեղս և յագարակս և ի բազում ամուրս լեռնային գաւառացն։ Դրդեցին ժողովեցին զբազմութիւն արանց և կանանց, շի-

---

[1] Եղիշե, էջ 31։

[2] Նույն տեղում, էջ 67։

նականաց և ազատաց, զքահանայից և զմենակեցաց, խրատ եդին, պնդեցին և արարին զամենեսեան զինուորս Քրիստոսի»[1]։

Տալով հայ ժողովրդի քաղաքական շահերի դավաճան Վասակ Սյունեցու չարագործությունների ընդարձակ նկարագիրը, Եղիշեն վկայում է, որ Վասակը «յափշտակեաց և էառ և եհան յայտնութեամբ զբազումս յազատաց և զրազմագոյնս ի շինականաց և զայլ ոմանս յանուանեալ քահանայից»[2]։

Խոսելով Աբրահամ Խոստովանողի և Խորեն Երեցի վարքադրության մասին, Եղիշեն ասում է, որ երբ մահացավ Խորենը, և 10 տարի տաժանակիր աշխատանք կատարելուց հետո, Աբրահամ Խոստովանողը վերադարձավ Հայաստան, նրան հանդիսավոր դիմավորելու համար «փութացան և ելին ընդ առաջ նորա վաղվաղակի արք և կանայք, մեծամեծք և փոքունք, և ամենայն բազմութիւն ազատաց և շինականաց»[3]։

Հանցապարտ շինականները չէին պատժվում կամ դատվում «տիրոջ» կողմից, որովհետև նա դեռ «տեր» չուներ, այլ միայն դատական վճիռով էր, որ նրանք ենթարկվում էին և դրամական տուգանքի և մարմնական պատիժների։ 5-րդ դարում շինականների վճարունակությունը շատ բարձր էր. շինականը վճարում էր տուգանք ոչ միայն նատուրայով, այլև դրամով։

Շինականն ուներ նաև ամուսնության ազատ ընտրության իրավունք, որը կարգավորվում էր կրոնական իրավունքի նորմաներով այնպես, ինչպես ազատների ամուսնությունը, միայն այն տարբերությամբ, որ ամուսնական հանցանքների դեպքում ազատը վճարում էր 2 անգամ ավելի դրամական տուգանք, քան շինականը։

Այս առաջադրված հարցերը մեր նպատակի համար այնքան անհրաժեշտ են, որ մենք ավելորդ չենք համարում մեջ բերել մի շարք վկայություններ ևս։

Այդ նույն՝ Շահապիվանի ժողովի կանոններում կարդում ենք՝ «Եթէ ոք կին ունիցի և պոռնկեսցի, և զկարդ ամուսնութեան սրբութեամբ ոչ պահիցէ... տուգան կալցեն յեկեղեցի և ի կարօտեալս բաշխեսցեն... Եթէ ազատ է և դան չէ մարթ հարկանել, ի տուգանն և յապաշխարութիւնն յաւելցեն։ Մ դրամ կարօտելոց, Բ տարի ապաշխարութիւն...։ Ապա թէ շինական է, դան յոլով արբցէ Ճ դրամ տուգան տացէ յեկեղեցի և յաղքատս բաշխեսցեն, և տարի

---

[1] Եղիշե, էջ 73, 118։
[2] Նույն տեղում, էջ 118։
[3] Նույն տեղում, էջ 246։

մի ի պղծութենէն հեռացեալ՝ մոցի յեկեղեցի և ընդ ընկերս խառնեսցի։ Ապա եթէ շինական է, թէ այր և թէ կին կանոն այդ կացցէ»[1]։

«Հանցապարտ» շինականը իր տուգանքը վճարելուց և ապաշխարելուց հետո, որպես ազատ քաղաքացի արդեն իրավունք է ստանում մտնելու եկեղեցի և «ընդ ընկերս խառնեսցի»։

Հայտնի է, որ դրամական տուգանք վճարել են ոչ միայն հայ շինականները, այլև ուրիշ երկրների գյուղացիները։

«Ռուսսկայա պրավդա»-ն, արդեն առանձնահատուկ դրություն է հատկացնում «օդնիշչինիկին», այսինքն իշխանի «արքունի մարդուն», նրա տանը բնակվող, նրա մոտ ծառայող անձնավորությանը, իշխանի «տիունին», ախոռապետին։ Իշխանի մարդու արնագինը «Պրավդա»-ն սահմանում է 80 գրիվնա, իսկ սմերդին՝ միայն 5 գրիվնա—այսինքն «իշխանի ծառան» գնահատվում է 16 անգամ թանկ, քան սմերդը, խոլոպը, զակուպը, չելյադը, նույնիսկ այն դեպքում, եթե «իշխանի մարդը» իր սոցիալական ծագումով պատկանում էր «ստորին դասերին», այսինքն դուրս էր եկել ստրուկների, ծառաների, խոլոպների շարքերից։

«Ռուսսկայա պրավդա»-ն 12 գրիվնա տուգանք է սահմանում իշխանի կալվածների, գյուղերի, տնտեսության ավագներին, հսկիչներին, կառավարիչներին՝ անարգելու համար։

Կիևյան պետության գյուղացիության պատմության հետազոտողներին, հատկապես ակադ. Բ. Դ. Գրեկովին, ի հարկե հայտնի են այս փաստերը, սակայն նրանցից ոչ մեկը չի եզրակացրել, որ սմերդը ճորտ էր, ամբողջված հողին։

Ընդհակառակը, նշելով սմերդի ստորադաս դրությունը ակադ. Բ. Դ. Գրեկովը ցույց է տվել, որ ֆեոդալական հարաբերությունների զարգացման հետևանքով կարելի է և պետք է խոսել սմերդների սոցիալական կյանքում տեղի ունեցած փոփոխությունների մասին, այն մասին, որ պատմական այս էպոխայում սմերդները բաժանված էին երկու հիմնական մասի—սմերդներ, որոնք ֆեոդալական հարաբերությունների զարգացման և տիրապետության պայմաններում ևս դեռ մնում էին գյուղական համայնքների ազատ և իրավահավասար անդամները, որոնց և պետության հարաբերությունները որոշվում էր միայն հարկատվությամբ, և սմերդներ, որոնք այս կամ

---

[1] Կանոնգիրք հայոց, էջ 62—63։

այն չափով արդեն կախման վիճակում էին դրված հողատիրոջից և կատարում էին հարկադիր պարտավորություններ[1]։

Ակադ. Բ. Դ. Գրեկովը ուսումնասիրելով և ազատ, և կախյալ վիճակում դրված սմերդների տնտեսական, սոցիալական և իրավական կացությունը հանգել է այն եզրակացության, որ սմերդությունը ռուս ժողովրդի հիմնական մասն էր և նրանից էր, որ դասակարգերի կազմավորման հետևանքով առանձնացել էին ռուսական հասարակության այլ դասերը։ Արտոնված, իշխող դասակարգի հանդես գալով սմերդը կանգնում է հասարակական սանդուղքի ցածր աստիճանում։ Սկզբնական շրջանում նրանք համախմբված էին գյուղական համայնքներում, համայնքը պաշտպանում էր նրանց շահերը, հակադրվում էր ֆեոդալական հողատերերի ոտնձգություններին։

Ֆեոդալական հարաբերությունների հաղթանակը սմերդների կյանքում մտցրեց շատ կարևոր փոփոխություն և ամենից առաջ սմերդներին բաժանեց երկու մասի՝ սմերդներ-համայնականներ, որոնք անկախ էին մասնավոր հողատերերից և սմերդներ՝ արդեն դրված մասնավոր հողատերերից կախման վիճակում։

Գյուղական համայնքի քայքայման հետևանքով նախկին ազատ համայնականի մի մասը նույնպես թողեց համայնքը և ապրուստի միջոցներ որոնեց համայնքից դուրս։ Այս մասն է, որ ամենից շուտ և ամենից առաջ դրվում է հողատեր-ֆեոդալից կախման վիճակում, հանդիսանում է նրա համար բանվորական ուժ։

Սակայն, անկախ սմերդների մեծ մասը դեռ շարունակում է իր զոյությունն արդեն կախման վիճակում դրված սմերդների կողքին՝ նույնիսկ ֆեոդալական հարաբերությունների հետագա աճի ու խորացման պայմաններում։

Տարբեր էին նաև շահագործման ձևերը։ Եթե սմերդն ապրում էր ֆեոդալ-հողատերի կալվածներին կից, նա կատարում էր կոռային աշխատանք, ավելի հեռու ապրող գյուղացին տալիս էր հարկեր և մեծ մասամբ արդյունավճար[2]։

Մենք արդեն մի շարք անգամ առիթ ենք ունեցել նշել, որ շինականի ճորտացման պրոցեսն ընդգրկել է պատմական զարգացման երկարատև ժամանակաշրջան։

---

[1] Б. Д. Греков, Крестьяне на Руси, стр. 199. Его же, Киевская Русь, стр. 213. С. В. Юшков, Очерки по истории феодализма в Киевской Руси, М.—Л., 1939, стр. 120.

[2] Б. Д. Греков, Крестьяне на Руси, стр. 216—217.

Հին Հայաստանում շինականը դեռ անձնական ազատ էր, բայց անձնական դեռ ազատ շինականը իր սոցիալական դրությամբ ստրկատեր, արհամարհված և հարկատու դասակարգ էր։

Մեր մատենագիրների մոտ բազմաթիվ են այն կարգի վկայությունները, ուր շինականները համարվել են արհամարհված, հակադրվել են մեծամեծ նախարարներին, պետերին, աշխարհատերերին, գավառատերերին, ազատներին, սեպուհներին, ոստանիկներին։

Փ. Բուզանդը շինականների խավար, հետամնաց «արտաքոյ բան դիտութիւն արվեստին», չարքաշ և գառը կյանքը հակադրում է նախարարների ճոխ և փարթամ կյանքին[1]։

Բյուզանդական Կոստանդին կայսրը, վկայում է Փ. Բուզանդը, Արշավիր և Անդովկ իշխանների հետ սկսում է պարսկական բանակի հետախուզությունը։ Պարսիկներին անճանաչելի դառնալու համար Կոստանդինը հագնում է շինականի, կաղամբավաճառի հագուստ և ինչպես պատմիչն է վկայում՝ «ի շինականութեան կերպարանս ի կաղամբավաճառի օրինի՝ մտանէր ի բանակն Պարսից»[2]։ Նույն այն պատմիչը խիստ զանազանություն է նկատում շինականի և ծառայի արտաքին կերպարի միջև։

Եպիփանը, ասում է պատմիչը, մեկնում է Ծոփայց գավառը և ամենուր քարոզում է քրիստոսի բան ու բառը։ Քրիստոսը, պատմում է Եպիփանը հավատացյալներին, շրջում էր «ընդ մարդկան...» չէր խորշում ծառաներից, որովհետև ինքը «զկերպարանս ծառայի էառ»[3]։

Սկսած Մ. Խորենացու էպոխայից դասակարգային շերտավորումն ու տարբերությունը արդեն դրի է առնված որպես սոցիալական օրենք։ Մ. Խորենացին վկայում է, որ հայ Արշակունյաց դինաստիայի հիմնադիր Վաղարշակ-Տրդատ թագավորը հրամայում է, որ գյուղի բնակիչները պետք է հարգեն քաղաքացիներին որպես իշխանների։

«Հրաման տայ՝ և քաղաքացեաց մարդկան արգոյ և պատիւ ընել առաւել քան զգեղջկաց. և գեղջկաց պատուել զքաղաքացիս որպէս զիշխանս. և քաղաքացեաց մի կարի առ գեղջկօքն պերճանալ, այլ եղբայրաբար վարել, վասն բարեկարգութեան և աննա-

---

1 Փ. Բուզանդ, էջ 29։

2 Նույն տեղում, էջ 48։

3 Նույն տեղում, էջ 188։

խանձոտ կենաց, որ է շինութեան և խաղաղութեան կենաց պատճառք. և որ ինչ նման այսոցիկ»[1]։

Շինականների և ազատների տարբերությունը խիստ կերպով շեշտված է Փ. Բուզանդի, Եղիշեի և Ղազար Փարպեցու մոտ։

Փ. Բուզանդը յուրաքանչյուր առիթով շինականներին հակադրում է ազատների դասին և միշտ էլ հիշատակում է առաջինների ստորադաս և վերջիններին ազատ կացությունը[2]։

Նկարագրելով 5-րդ դ. հայ ժողովրդա-ազատագրական պայքարը, Եղիշեն պատմական զուգահեռ է անցկացնում շինականների և ազատ «փափկացեալ»-ների կյանքի միջև և եզրափակում է[3] «ոչ երևէր այնուհետև առաւել տէրն քան զծառայ, և ոչ ազատ փափկացեալ քան զգեղջուկ վշտացեալ»[3]։

Եղիշեն վառ էջեր է թողել շինականի տանջանքով լի կյանքի մասին։ Նա շինականի կյանքը համարել է «վշտամբերք», «վշտացեալ», որը համբերությամբ տանում է աշխարհիկ կյանքի դառնություններն ու կարիքը։ Խոսելով 5-րդ դ. դեպքերի մասին, տալով պարսկական բռնակալների, շարագործությունների, ասպատակությունների նկարագիրը, պատմիչը դառը կսկիծով նկարագրում է փափկասուն մայրերի ողբալի վիճակը, և այդ վիճակը համեմատում է շինականների առօրյա «վշտամբերք» և «տանջալից» դրության հետ։

«Ոչ ինչ յիշեցին ամենեին զանուն փափկութեան մայրենի ազատութեանն՝ այլ իբրև մարդք՝ որ վշտամբերք լեալ իցեն անդրստին ի շինական սովորութեանցն տանջելով վարեալ զկեանս աշխարհիս, անդրագոյնք ևս քան զնոսա յանձն առին զնամբերութիւն վշտաց»[4]։

481—484 թթ. ժողովրդա-ազատագրական շարժման ղեկավար Վահան Մամիկոնյանը պարսկական թագավոր Վաղարշին և նրա նախորդներին մեղադրում է, որ նրանք հովանավորում և լսում են բոլոր այն մարդկանց, որոնք լի են «ամենայն աղտեղութեամբք, սուտ, անպիտանք, աղտեղագործք, գաղտաշուրջք, գողք, լեառնախոյսք, դերեզմանակրկիտք, խարեբայք. և ընդ որս կրսեր շինականք մարդիկ աշխարհին Հայոց հաց գարշէին ուտել ընդ նոսա, և կամ բնաւ ի մօտ իսկ երթալ առ նոսա»[5]։

---

1 Մ. Խորենացի, էջ 117—118։

2 Փ. Բուզանդ, էջ 191—192։

3 Եղիշե, էջ 86։

4 Նույն տեղում, էջ 259։

5 Ղ. Փարպեցի, էջ 173։

Արհամարհանքը դեպի շինականների դասը ամենից ընդարձակ կերպով արտահայտված են Եղիշեի և Ղազար Փարպեցու մոտ։

«Բայց ի ժամ բազմականացն կարծիք իմն եղեն ի միտս սրբոցն վասն երիցու միոյ որ էր ընդ նոսա ի սուրբ կապանսն. զի ի մէջ շինական մարդկան կեցեալ էր, և տգիտագոյն ևս էր ի գրոց մխիթարութենէ»[1]։

Ղ. Փարպեցին նկարագրելով ավագների կանանց, նախարարների դուստրերի փափկասուն կյանքը, այն հակադրել է շունչոր, աղքատ դասի տառապեալ և չարքաշ կյանքին։

«Կանայք փափուկք, դստերք նախարարացն և կանայք աւագաց, փոխանակ նաշխոյ կորեակ ուտէին, և փոխանակ պարզ գինւոյ ջուր չափով ըմպէին. փոխանակ կերպասեայ ոսկեհուռ զգեստուցն խոշոր բրդեայս զգենուին, և փոխանակ բազմագիմի անկողնոցն փրիսայիւք ի վերայ երկրի դետնատարածք լինէին...»[2]։

Անկասկած է, որ արտադրության ֆեոդալական եղանակի տիրապետության շրջանում անմիջական նյութական բարիքներ արտադրողների բացարձակ ազատության մասին խոսելն առնվազն անհեթեթություն է։ Անկասկած է նաև այն, որ շինականների ճնշող մեծամասնությունը արդեն գրված էր տնտեսական կախյալ վիճակում և նրա վրա էր ընկած ֆեոդալական ամբողջ հիերարխիան իր բազմաթիվ աստիճաններով։ Սակայն, պատմական այս շրջանում խոսքը շինականների հարկատվության, և ոչ թե անձնական, իրավական կախման մասին է։ Եթե շինականների մի մասը արդեն ցանցված էր ֆեոդալական կապանքներով և աստիճանաբար անձնական կախյալ վիճակում էր գրված աշխարհիկ և հոգևոր ֆեոդալական ավատանուց, ապա նրա ճնշող մեծամասնությունը դեռ իրավապես ազատ էր, ամրացված չէր հողին և ուներ ազատ ելքի իրավունք։

Այսպիսով, Արշակունյաց և Մարզպանական Հայաստանում «շինական»-ների մեծ մասը դեռ իրավապես ազատ էր և համախմբված գյուղական համայնքներում։

Միայն հետագա դարերի ընթացքում, երբ ավելի են խորանում ու զարգանում ֆեոդալական հարաբերությունները, երբ վերջը են տալիս ֆեոդալական տնտեսությունը, քաղաքները և քաղաքային կյանքը, արդեն շինական տերմինի կողքին և նրա հետ միասին հանդես է գալիս ու քաղաքացիական իրավունք ստանում

---

1 Եղիշե, էջ 198։

2 Ղ. Փարպեցի, էջ 109—110։

Հորտ տերմինը։ Այս երևույթը իր սկիզբն է առնում 10-րդ դարում և ավելի է խորանում 12—13-րդ դարերում։

Պատմական այս շրջանում գյուղացիության մասսայական տնեզրկությունը, քայքայումը և հողին ամրացման երևույթները արդեն հանդես են գալիս ավելի մեծ չափերով, քան նախորդ շրջանում։

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՌԵՆՏԱՆԵՐԸ ՀԻՆ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀԱՐԿԵՐԸ ԵՎ ՏՈՒՐՔԵՐԸ: ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԲԱՐԻՔՆԵՐ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ

1. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵՆՏԱ ԿԱՄ ԿՈՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ֆեոդալական հասարակական-տնտեսական ֆորմացիայի նյութական բարիքներ արտադրողների անձնական աշխատանքի և ստեղծած արդյունքների յուրացումը իրականացվում է մինչկապիտալիստական աշխատանքային, արդյունքային և դրամական, մեկը մյուսին հաջորդող, ռենտաների միջոցով։

Ֆեոդալական հասարակարգում մինչկապիտալիստական հողային ռենտաներն անցել են զարգացման մի շարք էտապներ։ Առաջին շրջանում կամ վաղ ֆեոդալական հարաբերությունների առկայության պայմաններում նատուրալ բահրան ծադել և աստիճանաբար աճել ու զարգացել է սոսկ հարկերից և տուրքերից։

Արտադրության ֆեոդալական եղանակի հաղթանակի, ֆեոդալական արտադրական հարաբերությունների տիրապետության շրջանում նատուրալ բահրայի զարգացումը ընթացել է սկզբնական շրջանում պրիմիտիվ, իսկ ավելի ուշ շրջանում հանդես է եկել զարգացած աշխատանքային ռենտան կամ կոռը։

«...Կոռային աշխատանքը,— ասում է Կ. Մարքսը,— հիմնվում է աշխատանքի հասարակական բոլոր արտադրողական ուժերի անզարգացածության վրա, բուն իսկ աշխատանքի եղանակի հետամնացության վրա, ուստի բնականորեն նա պետք է անմիջական արտադրողների ամբողջ աշխատանքի համեմատաբար մի շատ

ավելի փոքր մասը խլի, քան արտադրության զարգացած եղանակներում ու հատկապես քան կապիտալիստական արտադրության ժամանակ»[1]։

Աշխատանքային ռենտայի առկայության դեպքում անմիջական նյութական բարիքներ արտադրողները իրենց պատկանող աշխատամիջոցներով՝ աշխատանքի գործիքներով, քաշող ուժով շաբաթվա որոշ օրեր հատկացնում են իրենց հողակտորի մշակման, իսկ մյուս օրերում անվարձ աշխատում են հողատիրոջ կալվածներում, հողատիրոջ համար։ Այս դեպքում հողային ռենտան և հավելյալ աշխատանքը նույնացված են։ «Ոչ թե շահույթը, այլ ռենտան է այն ձևը, որով այստեղ արտահայտվում է անվճար հավելյալ աշխատանքը»[2]։

Աշխատանքային ռենտայի կամ կոռային աշխատանքի ժամանակ անմիջական նյութական բարիքներ արտադրողների «բանվորական ժամանակը բաժանվում է հենց իրեն համար գործադրված բանվորական ժամանակի ու հողատիրոջ համար գործադրած կոռային բանվորական ժամանակի»[3]։

Աշխատանքային, ինչպես նաև մյուս ռենտաների տնտեսական հիմքը հանդիսանում է հողատեր-ֆեոդալների լրիվ սեփականությունը արտադրության միջոցների և ոչ լրիվ սեփականությունն արտադրության աշխատողի՝ ճորտացված և կախյալ գյուղացիների նկատմամբ։ Որպեսզի հողատեր ֆեոդալը յուրացներ և շահագործեր գյուղացիության և արհեստավորական դասերի հավելյալ աշխատանքը և արտադրած արդյունքները, նյութական բարիքներ արտադրողները պետք է իրենց սեփականության տակ ունենային անհատական արտադրամիջոցների վրա հիմնված մասնավոր սեփականություն։

Մասնավոր սեփականության առկայությունը հանդիսանում է այն տնտեսական բջիջը, որը և ստեղծում է նյութական բարիքներ ոչ միայն ֆեոդալ-հողատերերի համար հավելյալ արդյունքներ, այլև իրեն, նյութական բարիքներ արտադրողների համար, անհրաժեշտ կենսամիջոցներ արտադրելու համար։

Աշխատանքային ռենտայի տիրապետության շրջանում, ասում է Մարքսը, «անմիջական արտադրողի հենց իրեն համար կատարած աշխատանքն այստեղ դեռ տարածական ու ժամանակային ան-

---

[1] Կ. Մարքս, Կապիտալ, հատ. III, Երևան, 1949, էջ 332։

[2] Նույն տեղում, էջ 327։

[3] Նույն տեղում, էջ 328։

ջատված է հողատիրոջ համար կատարած նրա աշխատանքից, և վերջինս հանդես է գալիս երրորդ անձի համար կատարվող հարկադրական աշխատանքի բիրտ ձևով»[1]։

Աշխատանքային ռենտայի ժամանակ հողային ռենտայի մեջ մտնում է «հողային շղթայակցված մարդկային աշխատաուժը»։ Այս պայմաններում հանդես է գալիս սեփականատիրական այնպիսի հարաբերություն, ուր դյուղացուն ստիպում է լարել իր բանվորական ուժը և ստեղծել հավելյալ արդյունք հողի սեփականատիրոջ համար։

«Այնուհետև,— ասում է Մարքսը,— պարզ է, որ այն բոլոր ձևերում, որտեղ անմիջական բանվորը իր սեփական դոյամիջոցներն արտադրելու համար անհրաժեշտ արտադրության միջոցների ու աշխատանքի միջոցների «տերն» է մնում, սեփականության հարաբերությունը պետք է միաժամանակ հանդես գա իբրև անմիջական իշխման ու սարկացման հարաբերություն, հետևաբար անմիջական արտադրողն էլ՝ որպես անազատ. մի անազատություն, որը կարող է կոռային աշխատանքի հետ կապված ճորտությունից մեղմանալով հասնել մինչև սոսկական տուրքատարտություն»[2], կամ «Հողի սեփականատիրոջ նկատմամբ, ինչ անուն էլ որ տրվի սրան. նրա յուրացրած առկա հավելյալ արդյունքն այստեղ այն նորմալ ու իշխող ձևն է, որում անմիջաբար յուրացվում է ամբողջ անվճար հավելյալ աշխատանքը, իսկ հողային սեփականությունը կապում է այս յուրացման պատվանդանը»[3]։

Իրագործելով իրենց մասնատիրական իրավունքը հողի և ոչ լրիվ սեփականությունը ճորտացած դյուղացիների նկատմամբ, ֆեոդալ-հողատերերը հիմնված ֆեոդալական պետության, պետական-վարչական օրգանների ակտիվ օգնության և օժանդակության վրա, յուրացրին դյուղացիների ստեղծած հավելյալ արդյունքները ֆեոդալական ռենտաների միջոցով։ Սկզբնական շրջանում, ֆեոդալական կարգերի զարգացման առաջին աստիճանում ֆեոդալները յուրացրին գյուղացիների արտադրած արդյունքների աննշան մասը, դեռ այս էպոխայում համայնական գյուղացիների մեծ մասը պահպանում էին իրենց անձնական աղատությունը հենված համայնքների վրա, նրանք համաս, դարերի ընթացքում պայքարում էին ֆեոդալական շահագործման դեմ, ձգտում էին թեթևացնել հարկերը, ֆեոդալական պարտավորությունները։

---

[1] Կ. Մարքս, Կապիտալ, հատ. III, էջ 330։

[2] Նույն տեղում, էջ 328։

[3] Նույն տեղում, էջ 343։

Պատահական չպետք է համարել այն կարևոր փաստը, որ համարյա գյուղացիական բոլոր ապստամբությունների մարտական լոզունգն էր՝ վերադարձ դեպի անցյալը, դեպի վաղ ֆեոդալիզմի պատմաշրջանի հմայանքները։

Որպեսզի ֆեոդալ-հողատերերը կարողանան դուրս կորզել հավելյալ աշխատանք կամ արդյունք, նյութական բարիքներ արտադրողները պետք է իրենց տրամադրության տակ ունենան հողատերերից ստացած հողակտոր, սեփական աշխատամիջոցներ, ինվենտար, քաշող բանվորական ուժ՝ անասուններ։ «Հողազուրկ, ձիազուրկ, տնտեսազուրկ գյուղացին,— ուսուցանում է Վ. Ի. Լենինը,— անպետք առարկա է ճորտատիրական շահագործման համար»[1]։ Վ. Ի. Լենինը գյուղացիների հողակտորները և անհատական աշխատամիջոցների մասնավոր սեփականությունը համարում է կալվածատիրական տնտեսության անքակտելի մասը։ Գյուղացիության մասնավոր տնտեսության առկայությունը ապահովում է ապրուստի միջոցներ իր իսկ արտադրողի և բանվորական ձեռքեր՝ հողատեր ֆեոդալների համար։ Տնտեսական այս սիստեմը Վ. Ի. Լենինը կոչում է «կոռային տնտեսություն»[2]։

Կոռային «տնտեսական սիստեմի էությունն այն էր,— շարունակում է Վ. Ի. Լենինը,— որ հողային տնտեսության տվյալ միավորի, այսինքն՝ տվյալ կալվածքի, ամբողջ հողը բաժանվում էր կալվածատիրական և գյուղացիական հողի, վերջինս իրև հողաբաժին տրվում էր գյուղացիներին, որոնք... իրենց աշխատանքով և իրենց ինվենտարով մշակում էին այն, նրանցից իրենց ապրուստը ստանալով... գյուղացիների համար, որպես նրանց ապրուստի միջոցներ տվող, կալվածատիրոջ համար, որպես նրան աշխատող ձեռքեր տվող...։ Այսպիսով գյուղացու «հողաբաժինն» այս տնտեսության մեջ հանդիսանում էր որպես բնավճար աշխատավարձ... կամ կալվածատիրոջն աշխատող ձեռքերով ապահովելու միջոց»[3]։

Աշխատանքային ռենտայի տիրապետության շրջանում հողատեր ֆեոդալը յուրացնում է անմիջական նյութական բարիքներ արտադրողների հավելյալ աշխատանքը։ Այստեղ գյուղացու հավելյալ, անվճար աշխատանքը հանդես է գալիս իր բիրտ, հարկադիր ձևով։ Աշխատանքային ռենտան միաժամանակ ենթադրում է ար-

---

[1] Լենին, Երկեր, հ. 15, էջ 87, հմմ. հ. 3, էջ 222։

[2] Նույն տեղում, հ. 3, էջ 223։

[3] Նույն տեղում, էջ 220—223, հ. 12, էջ 318, հ. 15, էջ 87։

տադրողական ուժերի խիստ ցածր մակարդակ։ Անմիջական արտադրողի արամադրության տակ կա հնամոլ, խիստ պահպանողական աշխատամիջոցներ։ Ֆ. Էնգելսը բնութագրելով ֆեոդալական հասարակարգի արտադրության պրոցեսում գործող արտադրողական ուժերը, նշում է, որ նրան հատուկ էր «մանր, անհատական արտադրություն։ Արտադրության միջոցները նախատեսված են անհատական գործադրման համար և այդ պատճառով էլ պրիմիտիվ, անդյուրաշարժ են, մանր, չնչին գործողությամբ»[1]։ Այս նույն միտքն ավելի արտահայտիչ ձևով տվել է Վ. Ի. Լենինը։ Բնութագրելով կոռային տնտեսության էությունը, Լենինը նրա չորրորդ հատկանիշը համարում է հնամոլ տեխնիկայի առկայությունը։

Արտադրողական ուժերի զարգացման ցածր մակարդակը, նրա աճի դանդաղ տեմպերը տալիս էր այս շրջանի ողջ էկոնոմիկային բացարձակ կայուն բնույթ։ Այդ էր պատճառը, որ ֆեոդալական հարկերը, տուրքերը, պարհակները ֆիկսացիայի էին ենթարկվում սովորույթների և արարիցիաների ուժով։

Այսպիսով, ֆեոդալական հասարակարգում նյութական բարիքներ արտադրողները, այդ թվում նաև արհեստավորները, հանդիսանում են սեփական աշխատամիջոցների և անձնական աշխատանքի վրա հենված մանր սեփականատերեր։ Հետևաբար հարց է առաջանում՝ ի՞նչն է ստիպում նրանց անվճար կերպով աշխատել ֆեոդալական տիրույթում։ Այս հարցի դիտական պատասխանը տվել են Մարքսը և Լենինը։

Աշխատանքային ռենտայի կամ կոռային աշխատանքի ժամանակ, ասում է Մարքսը, «հողի անվանական սեփականատիրոջ համար կատարվող հավելյալ աշխատանքը նրանից կարող է քամվել միմիայն արտատնտեսական հարկադրանքով, ինչ ձև էլ որ սա ընդունելիս լինի»[2]։

Անդրադառնալով այդ նույն պրոբլեմին, Վ. Ի. Լենինը գրել է. «Եթե կալվածատերն անմիջական իշխանություն չունենար գյուղացու անձի վրա, ապա նա չէր կարող հարկադրել իրեն համար աշխատելու այն մարդուն, որը հողաբաժին ունի և սեփական տնտեսություն է վարում»[3]։

Սակայն «արտատնտեսական հարկադրանքը» մաքուր, վերացական, իդեական հասկացություն չէ, այլ տնտեսական կատեգո-

---

[1] Ֆ. Էնգելս, Անտի-Դյուրինգ, 1925, էջ 364։
[2] Կ. Մարքս, Կապիտալ, հատ. III, էջ 328—329։
[3] Լենին, Երկեր, հ. 3, էջ 224։

րիա։ «Արտատնտեսական հարկադրանքի» տնտեսական հիմքը հանդիսանում է ֆեոդալ-հողատերերի հողի նկատմամբ ունեցած սեփականության իրավունքը։

«Արտատնտեսական հարկադրանքի» տակ չէր իմաստավորվում միայն բացարձակ, մերկ հարկադրանք։ Մարքսը և Լենինը «արտատնտեսական հարկադրանք» հասկացության մեջ իմաստավորել են ինչպես բացարձակ հարկադրանքը՝ մահակի և մտրակի ուժը, այնպես էլ սովորույթի իրավունքը, ֆեոդալական օրենքների ուժը։ «Արտատնտեսական հարկադրանք» հասկացությունը, բնականաբար, ենթադրում է ոչ միայն ռազմական և վարչական բիրտ ուժի գործադրումը, այլև դարավոր սովորույթների և տրադիցիաների, գոյություն ունեցող տնտեսական և արտադրական հարաբերությունները։ «Արտատնտեսական հարկադրանքի» ուժը որոշվում էր ֆեոդալների տնտեսական հնարավորությամբ, մի հնարավորություն, որը նույնպես խարսխված էր հողի մասնավոր սեփականության վրա։

Սակայն ֆեոդալական հասարակարգի արտադրական հարաբերությունների հիմքը կազմող հողի մասնավոր սեփականությունը անսահմանափակ, բացարձակ սեփականության բնույթ չուներ, ինչպես ստրկատերերի սեփականությունը։ Ֆեոդալական հողային սեփականատիրական իրավունքը միաժամանակ պայմանական էր, դասային, հիմնված էր վասալական ծառայության սկզբունքի վրա։

Հողի ֆեոդալական սեփականության իրավունքն ուներ նաև այլ հատկանշական գծեր, որը նրան տարբերում էր ստրկատիրական և պլանտատորական տնտեսությունից։ Ստրկատիրական կարգերում ստրուկն իր աշխատանքը իրականացնում և հավելյալ արդյունքներ էր արտադրում ստրկատիրոջ արտադրամիջոցներով։ Այս պայմաններում ստրուկը շահագրգռված չէր աշխատանքում, չուներ սեփական տնտեսություն, ինքնուրույնաբար չէր աշխատում, այլ դառնում էր ստրկատիրոջ մահակի և մտրակի տակ։ Հողի ֆեոդալական սեփականատիրության պայմաններում ֆեոդալական տիրույթն անքակտելիորեն զուգակցված էր հողաբաժին ստացած գյուղացու մասնավոր սեփականության հետ։

Նախ ֆեոդալական հողատիրության համար բնորոշ է հողի սեփականության իրավունքի զուգակցումը ֆեոդալական կախման վիճակում գրված գյուղացիության նկատմամբ, քաղաքական գերիշխանության հետ։ Ֆեոդալական էպոխայում, բարձրագույն իշխանությունը ռազմական գործում և դատարանում հանդիսանում էր հողային սեփականության ատրիբուտը։ Այնուհետև, ֆեոդալական

խմունիտետը, որի հիմքը նույնպես կազմում էր ֆեոդալի սեփականությունը հողի նկատմամբ, հանդիսանում էր արտատնտեսական հարկադրանքի հիմնական միջոցը, իսկ սրա իրավական արտահայտությունը հողային ռենտան էր։

Որքանով որ ֆեոդալական հասարակարգում առանձին հողատերերի քաղաքական «հզորությունը որոշվում էր ոչ թե նրանց ստացած ռենտայի չափերով, այլ նրանց հպատակների թվով»[1], այնքանով հողատիրությունը կրում էր հիերարխիկ բնույթ։

Հողատիրության հիերարխիկ սիստեմը, նրա պայմանականությունը, հողատեր սյուզերենի համար կատարվող վասալական ծառայությունը հնարավորություն էր ընձեռում ոչ միայն շահագործելու նյութական բարիքներ արտադրողներին, այլև ֆեոդալական դասակարգի մեջ բաժանել և հողը, և հողից ստացած ռենտաները։

«Հիերարխիան,— գրել է Մարքսը,— հանդիսանում էր ֆեոդալիզմի իդեական ձևը՝ ֆեոդալիզմը — միջնադարյան արտադրական հարաբերությունների և շփման քաղաքական ձևը»[2]։

Այսպիսով, հողի ֆեոդալական՝ մասնավոր սեփականության աճն ու զարգացումը սերտորեն զուգակցված էր անմիջական նյութական բարիքներ արտադրողների շահագործման հետ։

Դասակարգային հասարակական այս կամ այն տնտեսական ֆորմացիաները մեկը մյուսից տարբերվում են նաև շահագործման եղանակով, այսինքն անմիջական արտադրողների աշխատանքի և ստեղծած արդյունքների յուրացման ձևերով։

Յուրաքանչյուր դասակարգային հասարակարգում արտադրված արդյունքները բաժանվում են երկու մասի՝ մի մասը յուրացվում, բռնագրավվում է իշխող, տիրապետող դասակարգի կողմից և ամեն դեպքում էլ այդ մասը կոչվում է հավելյալ արդյունք, իսկ մյուս մասը մնում է անմիջական արտադրողի տրամադրության տակ և կոչվում է գոյության միջոցների անհրաժեշտ, կենսական միջոց։ Սարկատիրական հասարակական ֆորմացիայում ստրուկների ստեղծած անհրաժեշտ կենսամթերքը բաղկացած է մեկ էլեմենտից՝ վերականգնել իր ծախսած բանվորական ուժը։ Վարձու բանվորների անհրաժեշտ կենսամիջոցները բաղկացած են երկու էլեմենտից՝ ա) վերականգնել անմիջական արտադրողի՝ բանվորի ծախսած բանվորական ուժը, բ) վերարտադրել նոր սերունդ և ապահովել կապիտալիստներին բանվորական ուժով։

---

[1] Կ. Մարքս, Կապիտալ, հ. I, Երևան, 1949, էջ 750։

[2] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. IV, стр. 157.

Ֆեոդալական հասարակարգում՝ ֆեոդալական կախման վիճակում գտնվող գյուղացու անմիջական կենսամիջոցները բաղկացած են 3 տարրերից. ա) վերականգնել իր խլած ծախսած բանվորական ուժը, բ) վերարտադրել գյուղացիական դասակարգը, այսինքն ապահովել կալվածատիրոջը բանվորական ձեռքերով և գ) ապահովել իր անհատական տնտեսության վերարտադրության հնարավորությունները։

Այն փաստը, որ գյուղացու ստեղծած անհրաժեշտ կենսամիջոցները բաղկացած են 3 տարրերից, ունի արտակարգ նշանակություն գյուղացիության պատմության և հատկապես ֆեոդալական հասարակական-տնտեսական ֆորմացիայի էությունն ու առանձնահատկությունները ճիշտ կերպով հասկանալու համար։

Գյուղացին հողատեր ֆեոդալի ոտնձգություններից ու հավակնություններից ոչ միայն պաշտպանում է իր անձը, իր ընտանիքը, այլև իր տնտեսությունը։ Ֆեոդալ հողատերն էլ իր հերթին, է տարբերություն ստրկատիրոջից, չի կարող ամբողջապես թափանցել անմիջական արտադրողի կենսամիջոցների ընագավառը, չի կարող ամբողջապես յուրացնել գյուղացու աշխատանքի և արդյունքի երրորդ տարրը, որովհետև այդ դեպքում ոչ միայն վտանգի տակ է դրվելու անմիջական արտադրողի ֆիզիկական գոյությունը, այլև հասարակության տնտեսական կառուցվածքը, այսինքն գյուղացու անհատական տնտեսությունը՝ ֆեոդալական հասարակարգի տնտեսական բջիջը։

Եթե ֆեոդալ հողատերը գյուղացուց խլում է այդ երրորդ, ֆեոդալական հասարակության համար անհրաժեշտ, այսինքն գյուղացու տնտեսության վերարտադրության տարրը, ապա գյուղացին զրկվում է վերարտադրության հնարավորությունից, նրա տնտեսությունը քայքայվում է, որով սպառվում են ոչ միայն հավելյալ արդյունքի արտադրության հնարավորությունները, այլև գյուղացին անկարող է այլևս պահպանել իր սերունդը, ապահովել բանվորական ձեռքերով կալվածատերերի տնտեսությունը, և գլխավորը՝ արտադրել կալվածատերերի կողմից յուրացվող հավելյալ արդյունքները։

Եթե ստրկատիրական հասարակական ֆորմացիայում շահագործման աղբյուրը հանդիսանում էր ստրուկի ֆիզիկական դիմացկունությունը, նրա պիտանիությունը, ապա ֆեոդալական հասարակարգում այդ աղբյուրը հանդիսանում է գյուղացու անհատական տնտեսության կայունությունը, նրա վերարտադրության հնարավորությունները։

Հայտնի է, որ արտատնտեսական հարկադրանքը տակա էր նաև տարկատիրական հասարակական-տնտեսական ֆորմացիայում, այդ հարկադրանքը իրականացվում էր տարկատիրական շահագործման եղանակի միջոցով։ Տարկատերն օգտագործելով իր տնտեսական հզորությունը և քաղաքական իշխանությունը, տարուկից խլում էր ամեն ինչ, նա էր տարուկի լիակատար տերը, նա զինում էր բոլոր միջոցներին, որպեսզի տարուկը չկարողանա ստեղծել իր անհատական տնտեսությունը. անհատական տնտեսության հանդես գալը արդեն նշանակում էր տարկական շահագործման եղանակի վախճան, այն դեպքում, երբ ֆեոդալ-հողատերերը, չնայած առանձին դեպքում, պատմական առանձին ժամանակաշրջաններում, խիստ ու դաժան շահագործման հետևանքով քայքայում են գյուղացիական առանձին տնտեսությունները. սակայն հիմնականում և ամբողջապես ոչ միայն հանդուրժում են, այլ պահպանում գյուղացու մասնավոր սեփականությունը՝ ֆեոդալական դասակարգի համար հավելյալ արդյունքներ ստեղծող տնտեսական աղբյուրը։ Ֆեոդալական-ճորտատիրական հասարակարգը գոյություն չէր ունենա, եթե որևէ գործոն չսահմանափակեր «արտատնտեսական հարկադրանքի» ծավալումը։ Այդ կարգավորող, սահմանափակող գործոնը գյուղացիական մասսաների դիմադրությունն էր, նրանց դարավոր պայքարը։ Այդ պայքարն է, որ կազմել է ֆեոդալական հասարակարգի շարժիչ ուժը։

Ընդարում, ֆեոդալական ռենտայի հաջորդական զարգացմանը զուգընթաց փոփոխման է ենթարկվում նաև ֆեոդալից կախում ունեցող անմիջական արտադրողի սոցիալ-իրավական դրությունը։

Աշխատանքային ռենտայի, կամ կոռի գերիշխանության պայմաններում ֆեոդալ հողատերը յուրացնում է անմիջական արտադրողի՝ գյուղացու հավելյալ աշխատանքը։ Այս ռենտայի տիրապետության էպոխայում գյուղացին հարկադիր կերպով կատարում է բազմազան և բազմատեսակ աշխատանքներ։ Նա իր արտադրական միջոցներով, քաշող ուժով, հերկում, ցանում է հողատիրոջ հողերը, դաշտից կալ է փոխադրում ֆեոդալի հունձը, խոտը, բերքը. կալից մառան է փոխադրում հացահատիկը, հարդը, աշխատում է անասնապահության բնագավառում, ախոռում, անասունների աղբը փոխադրում է դաշտ, աշխատում է ճանապարհների, ջրանցքների, բերդերի, ամրոցների, ֆեոդալական պալատ-դղյակների, եկեղեցիների, վանքերի, քաղաքների և այլ կարգի շինարարական աշխատանքների վրա։ Այս պայմաններում գյուղացին, անկասկած է, որ շահագրգռված չէր աշխատանքում, տալիս էր ավելի քիչ արդ-

յունքներ, հաճախակի թերանում էր պարտականությունների կատարման մեջ։ Ֆեոդալ հողատերն իր հերթին գյուղացու աշխատանքն ավելի մեծ չափերով յուրացնելու համար, դիմում էր հարկադրանքի և պատժի ավելի ու ավելի դաժան միջոցների, գործադրում էր տուգանքներ, նշանակում էր արտահերթ աշխատանքներ, լայն չափով գործի էր դնում վերակացուների մահակն ու մտրակը։

Այսպիսով, աշխատանքային ռենտան կամ կոռային աշխատանքն անցել է զարգացման երկու գլխավոր էտապ։ Արտադրության ֆեոդալական հարաբերությունների ծագման և սաղմնավորման պայմաններում աշխատավճար ռենտան խիստ պրիմիտիվ էր և թույլ զարգացած։ Կոռային աշխատանքը դեռ զուգակցված չէր հողի մասնավոր սեփականության հետ և չէր բխում նրանից։ Այս շրջանում հողատեր-ֆեոդալը ձգտում էր ստիպողաբար իր գերիշխանությանը ենթարկել հարևան համայնքները. նրան նույնիսկ հաջողվում է համայնական գյուղացիներին կամ հարկի ենթարկել կամ թե բռնագրավել նրանց կայքը։ Հողատեր-ֆեոդալի եկամտի գլխավոր աղբյուրը հանդիսանում էր ոչ թե զարգացած աշխատանքային ռենտան, այլ այն տուրքերը, որ նա հավաքում էր գյուղացիներից։

Հետագայում, երբ արտադրության ֆեոդալական եղանակը հանդես է գալիս որպես իշխող եղանակ, երբ ֆեոդալական կալվածքը ընդարձակվում է գյուղական համայնքների հողերի հաշվին, երբ ֆեոդալական ավագանին՝ մեծամեծ իշխանները, նախարարները, թագավորները, թագավորական տան անդամները իրենց մարդկանց մեջ են բաժանում ոչ միայն հողեր, գյուղեր, ավաններ, քաղաքներ, այլև սրանց բնակիչներին, արդեն ենթակա բնակիչներից հողատերերը դանձում են բնամթերքներով բահրա։ Բայց այս բահրան ոչ այլ ինչ է, եթե նույն հարկերի և տուրքերի սոսկ ձևափոխությունը։

Եթե նախորդ շրջանում հարկերն ու տուրքերը վճարում էր ամբողջ գյուղացիությունը, ապա այժմ որոշված նորմաներով և չափերով բահրան, և այն էլ կանոնավոր կերպով, վճարում են միայն ֆեոդալների տիրույթների վրա նստած կախյալ բնակիչները։ Այս երևույթը հատուկ էր ֆեոդալական բոլոր երկրներին։ Եվրոպայի ֆեոդալական հասարակության պատմության մասնագետները ցույց են տվել, որ հարկերի, տուրքերի, պրիմիտիվ և նախնական աշխատանքային ռենտայի, բնամթերքներով վճարվող բահրայի նույն հաջորդականությունն առկա է եղել Ֆրանսիայում 8-10-րդ դարերում, Անգլիայում մինչև նորմանների գրավումները, այսինքն մինչև 11-րդ դարի երկրորդ կեսը, Ռուսաստանում 12—15-րդ դարերում։ Այս բոլոր երկրներում ֆեոդալական շահագործման գլխավոր ձևը

եղել է արդյունքներով դանձվող հարկերը և տուրքերը։ Պրիմիտիվ աշխատանքային ռենտային և բնամթերքներով վճարվող բահրային դալիս է փոխարինելու աշխատավճար ռենտան և հողի հետ կապված կոռային աշխատանքը։

Ֆեոդալական հարաբերությունների զարգացման հաջորդ էտապում, երբ լրիվ կերպով ձևավորվում է ֆեոդալական հայրենիքը — տիրույթը, արդեն շահագործման տիրապետող ձևը հանդիսանում է աշխատանքային ռենտան։ Աշխատանքային ռենտան բոլորելով իր առաջին էտապը՝ անցնում է զարգացման երկրորդ փուլը։ Այս երևույթը Ֆրանսիայում հանդես է գալիս 10—13-րդ դդ., Անգլիայում 11-րդ դարի վերջերից մինչև 14-րդ դարը, Ռուսաստանում 15-րդ դարի կեսերից մինչև 19-րդ դարի 70-ական թվականները՝ մինչև ճորտատիրական իրավունքի լիկվիդացիան։ Այս երևույթը հատուկ է եղել նաև 10—13-րդ դդ. Հայաստանին։

Այսպիսով՝ աշխատանքային ռենտան կամ կոռային աշխատանքը հանդես է գալիս ֆեոդալական հարաբերությունների զարգացման նախնական շրջանում, փոխում է իր բնույթը զարգացած ֆեոդալիզմի էպոխայում։ Աշխատանքային ռենտան չի անէանում, չի կորցնում իր նշանակությունը նույնպես արդյունքային և դրամական ռենտաների գերիշխանության պայմաններում։

Ֆեոդալական շահագործման այս նախնական, պրիմիտիվ և ամենից պարզ ձևերն առկա էին նաև Հին Հայաստանում, այսինքն պատմական այն էպոխայում, երբ ձևավորվում էին հողի ֆեոդալական մասնավոր սեփականությունը և ֆեոդալական արտադրական հարաբերությունները։

Աշխատանքային ռենտան կամ կոռային աշխատանքը հայկական պատմական սկզբնաղբյուրներում, կանոնական որոշումներում, ձեռագիր հիշատակարաններում, վիմական արձանագրություններում և այլ կարգի ու բնույթի աղբյուրներում հայտնի են «խաշար», «դուդալ», «կոռ», «մարդահարկ», «բեկար», «պարհարկ», «արտին կոռ», «կոռավար», «մարդին կոռ», «մարդո կոռ», «վեցկէ կոռ», «եզին կոռ», «սայլին կոռ», «կամին կոռ», «փշո կոռ» անունների տակ։

Ֆեոդալական հասարակության ժամանակաշրջանի պատմիչ Փավստոս Բուզանդը նկարագրելով Խոսրով Թագավորի շինարարական գործունեությունը, վկայում է, թե «...Նա հրաման թագաւորն զօրավարին իւրոյ՝ հանել խաշար յաշխարհէն բազում, և բերել զվայրենի կաղին մայրեաց, և տնկել զայն յՅայրարատեան դաշտին. և առեալ յամուր բերդէն արքունի, որում կոչեն Գառնի, մինչև ի դաշտն Մնծամօրի ի բլուրն որ անուանեալ կոչի Դուին, որ

կայ ի հիւսիսոյ կողմանէ քաղաքին մեծի Արտաշատու, զգնան խոնարհ մինչև յապարանսն Տիկնունի՝ տնկեցին զկաղնին»[1]։ Այս վկայության մեջ «խաշարը» այն հասարակական մասշտաբի, անվճար, հարկադրական աշխատանքն է, որ երկրի բնակիչները իրենց արտադրամիջոցներով և քաշող ուժով պարտավոր էին կատարել թագավորական պալատ-դղյակների, ռազմական և տնտեսական նշանակություն ունեցող ճանապարհների, անտառների և այլ կարգի ու բնույթի աշխատանքների վրա։

Անկասկած է, որ այստեղ դեռ առկա չէ աշխատանքային ռենտան, դեռ նա զուգակցված չէ և չի բխում հողի ֆեոդալական սեփականատիրության իրավունքից։ Դժբախտաբար «խաշարի», որպես հասարակական բնույթի հարկադիր և ձրի աշխատանքի մասին մենք այլ վկայություններ չունենք։

Ամենայն հավանականությամբ հարկադիր աշխատանքի նշանակությամբ է գործածվել նաև «գուզազ» տերմինը։

Նույն պատմիչը թողել է խիստ ուշագրավ վկայություն «գուգազի» մասին։ Մաղթաց Սանեսան արքան հսկայական բանակով շարժվում է Հայաստան։ Պատերազմում սա պարտվում է Խոսրովի կողմից և ինքն էլ ընկնում գերի։ Տալով այդ դեպքի ընդարձակ նկարագիրը, պատմիչը միաժամանակ հիշատակում է, թե պատերազմի դաշտում այնքան դիակներ էր ընկած, որ «նեխէր երկիրն ի հոտոյ մեռելոցն»։ Սպանվածների դիակները թաղելու, հնարավոր համաճարակ հիվանդությունները կանխելու համար, Խոսրով թագավորը հրամայում է «գուզազ նանել յաշխարհէ, և անդէն ծածկել քարակարկառ վիմօք, զի մի ի շարաւոյ հոտայն մեռելոտի ոսկերացն երկիրն պղծեսցի»[2]։ Ակնհայտ է, որ այստեղ մատնացույց արված «գուզազն» ունի նույնպես հասարակական հարկադիր և անվճար աշխատանքի իմաստ և նշանակություն։ Ռազմական ամրոցներ, ճանապարհներ, խրամատներ կառուցելու, գործող բանակներին օգնելու և օժանդակելու համար նույնպես «գուզազ» էր հանվում։ «Խաշարի» և «գուզազի» միջոցով հայ Արշակունի թագավորները, մեծամեծ իշխանները կառուցում էին «պապարանս արքունական», անցկացնում էին ճանապարհներ, կառուցում էին կամուրջներ, բանակներին մատակարարում էին սննդամթերք, ջուր, փոխադրում էին ռազմական նյութեր։

---

[1] Փ. Բուզանդ, էջ 16։

[2] Նույն տեղում, էջ 15—16։

Խոսրով Թագավորը, ասում է պատմիչը, զբաղված էր շինարարական գործերով, բայց նրա շինարարական աշխատանքը ընդհատվում է, որովհետև պարսկական հոծ բանակը մտել էր Հեր և Զարեհանդ գավառները և պատրաստվում էր արշավելու Հայաստանի խորքերը։ Պարսկական արշավանքները կանգնեցնելու համար Խոսրով Թագավորը հրամայում է Բզնունյաց Դատաբե նահապետին «գուգաղ հանել յաշխարհէ աւելի քան զչափն և զհամար զօրսն մատնիլ զնդաան ընդ առաջ նոցա խաղալ հասանել ի դիմի հարկանել, արդելուլ զթշնամիսն»[1]։

Այս վիկայության մեջ արդեն «գուգաղն» ունի ռազմական պարտավորությունների բնույթ։

Ֆեոդալական Հայաստանում հարկադիր, անվարձ աշխատանքը իրականացվում էր ամենաբիրտ և դաժան ձևերով ու մեթոդներով։ Շահապիվանի հայտնի ժողովը, որտեղ հոդևոր ավագանու հետ միասին մասնակցում էին նաև աշխարհիկ ֆեոդալական դասի ներկայացուցիչները, սահմանել է շտեսնված ստորացուցիչ կանոններ «հանցապարտ» շինականների տաժանակիր աշխատանքի մասին։

Սեղ հետաքրքրող հարցի կապակցությամբ մեծ արժեք են ներկայացնում Շահապիվանի ժողովի Գ, Դ, Ե, Զ, Է, Թ, Ժ, ԺԱ, ԺԲ, ԺԳ, կանոնները։ Այս բոլոր կանոնները ուղղված են «հանցապարտ» ազատների և հատկապես շինականների դեմ։

«Հանցապարտ» ազատների դասին պատկանող մարդիկ իրենց հանցանքները քավելու համար ենթարկվում են դրամական տուգանքի, այն էլ շինականների համեմատությամբ կրկնակի չափով։ Շինականները ոչ միայն տուգանքի էին ենթարկվում, այլև խոշտանգվում էին և ուղարկվում հարկադիր աշխատանքի։ Ժողովի Դ կանոնը իրավունք է տալիս «հանցապարտ» շինականների կանանց ուղարկել «յուրկանոց տարի մի ազասցէ զոդեացն»։ Ժողովի Ե կանոնը ավելի է սաստկացնում շինականների կանանց ստրկական կացությունը։ Այս կանոնում սահմանված է, որ շինականի հանցապարտ կինը ոչ միայն պետք է անվճար կերպով մի լրիվ տարի աշխատի ուրկանոց-զոդենոցներում, այլև «յաղախնութեան կացցէ»։ Զ կանոնը տերերին իրավունք է տալիս դյուրող, կախարդող կանանց տանել ուրկանոցներում «Բ ամ ազացեն զոդեացն»։ Եթե կատարվում է մերձամուսնություն կամ որդին ամուսնանում է մոր

[1] Փ. Բուզանդ, էջ 17։

հետ, ապա տաժանակիր աշխատանքի ժամանակը սահմանվում է 10 տարի «Ժ տարի աղասցէ զողեացն»[1]։

Այս հատվածներում հիշատակված ուրկանոց-զոդենոցներն այն տաժանակիր աշխատանքի վայրերն էին, որտեղ ուղարկում էին «հանցապարտներին» ոչ թե ապրելու, այլ մահանալու համար։ Այս վայրերում ֆիզիկական աշխատանքը խիստ դժվար էր, ամեն ինչ կատարվում էր ձեռքով, օդը վարակված էր, հեղձուցիչ։

Կոռն իր իսկական իմաստով արձանագրված է 7-րդ դարում Դվինում հրավիրված եկեղեցական ժողովի կանոններում։

Դվինի եկեղեցական ժողովում, որտեղ մասնակցում էին հոգևոր դասի ավագանու հետ միասին նաև աշխարհիկ հողատեր ֆեոդալների ներկայացուցիչները, մշակվում է կոռի առթիվ հատուկ կանոն։

Այդ ժողովի ԺԱ կանոնում արձանագրված է, որ ազատները, այսինքն հողատեր ֆեոդալները «ի վերայ տկարանոցաց իշխանութիւն առնեն, և որպէս ի կենդանեաց՝ հարկս պահանջեն և ի կերակուրս և ըմպելիս զիւրանց գործակալս մատուցանեն, կռուով և պատուասիւ նեղեն, զողորմելի եղբայրսն շարշարեն անխղճաբար, որում պարտ և արժան էր հոգալ և խնամել յիւրաքանչիւր վաստակոց, ի կալոյ և ի հնձանէ և յամենայն արմտեաց տալ մասն և բաժին և մխիթարել զսիրտս նոցա և բժշկել զվէրս նոցա, զի եղիցին արժանաւորք մնծաց վարձուց և պարգևաց ի փառաւոր դալստեան որդւոյն Աստուծոյ»[2]։

Այս վկայությունը մեր առաջ բաց է անում անվճար աշխատանքի գործադրումը իր ամենաբիրտ ձևերով։ Հայ ազատանին քամում էր ոչ միայն նյութական բարիքներ արտադրողների հավելյալ արդյունքները, ոչ միայն ստանում էր հարկեր կալերից, հնձաններից, ոչ միայն պահանջում էր և կերակուր, և ըմպելիք,

---

[1] Կանոնգիրք հայոց, էջ 57—80։

[2] Կանոնգիրք հայոց, էջ 127—128։ Այստեղ հիշատակված «կռուով և պատուհասիւ» բառերը, ինչպես ցույց է տվել ակադ. Հ. Մանանդյանը, աղճատվել են հետագա արտագրողների կողմից։ Այս նույն կանոնը համարյա անփոփոխ վկայակոչում է Մ. Գոշն իր Դատաստանագրքում։ Խմբագրելով Դվինի ժողովի այս կանոնը, Գոշը գրում է. «Ոմանք ի տկարանոցս իշխանութիւն առնեն և հարկս և կերակուրս և ըմպելիս պահանջեն բռնութեամբ, և զիւրանց գործակալս ի վերայ դումարեն և կռուով ու պանակուրեամբ նեղեն և զողորմելի եղբարսն շարշարին անխղճաբար...»։ Մ. Գոշ, Դատաստանագիրք, Վաղարշապատ, 1880, մասն երկրորդ, կան. ՃԳ, էջ 412, տես նաև Հ. Մանանդյան. Ֆեոդալիզմը Հին Հայաստանում, էջ 203։

այլև նրա մի մասին իր գործակալ-հսկիչների միջոցով սահմանում էր կոռ և պարհակություն կատարել։

Հայ աշխատավոր գյուղացիությունը կոռ էր քաշում ոչ միայն սեփական շահագործող դասակի, այլև պարսկական և հետագա շրջաններում արաբ բռնակալների համար։ Արաբական պատմիչ Տաբարին հիշատակություն է թողել այն մասին, որ պարսկական Պերոզ թագավորը հատուկ հրովարտակով դիմում է իր բոլոր հպատակներին, խոստանում է նրանց ազատել «հողային հարկից և գլխահարկից, հանրօգուտ նպատակների համար կատարվող ծանրությունից և կոռից, որ նրանց շնորհում է, լիակատար ազատություն և հրամայում, որ նրանք հոգան և մտածեն իրենց սննդի և պահպանության մասին»[1]։

Անկասկած է, որ Պերոզի այս «մարդասիրական» հրովարտակը հետապնդում էր մեկ հիմնական նպատակ՝ ստեղծել նյութական բարիքներ արտադրողների համար տանելի պայմաններ, որպեսզի դրանով իսկ պետական գանձարանը նկատելու ստանալու տեսական հնարավորություն ունենար։

Աշխատանքային պարհակներն ու պարտավորությունները հայտնի էին նաև «մարդահարկ», «գործ», «ծանրություն» անունների տակ։

Ղևոնդ վարդապետը վկայում է, որ արաբական Եզիա ստիկանը մեծ նշանակություն տալով Կարին (Էրզրում) քաղաքի ռազմա-ստրատեգիական դիրքին, «մարդահարկի» միջոցով վերականգնում է քաղաքը։

Այս առթիվ պատմիչը գրում է՝ «Իսկ ի գալ միւսոյ ամին կազմեալ Եզիան զչօրսն որ ընդ ձեռամբ իւրով՝ երթայր հասանէր ի քաղաքն Կարնոյ և արկանէր մարդահարկ ի վերայ աշխարհին. և հաւաքեալ զրաղմութիւն անթիւ՝ կացուցանէր գործավարս ի վերայ գործոյն, և փոյթ յանձին կալեալ շինէր զխրամատեալ պարիսպ քաղաքին»[2]։

Վ. Բարձրբերդցու վկայության համաձայն, մոնղոլական Հուլավու խանը ձեռնարկում է Գառնի դաշտում շինել «շինուածս ըստ սրտի իւրում», որի հետևանքով «տառապեցաւ երկիր՝ մարդ և անասուն փայտս ծանուցեալ ի հեռաստանէ բերելով»[3]։

---

[1] Th. Nöeldeke, Tabari, Geschichte der Perser und Araber zur Zeit der Sasaniden, Leyden, 1879, p. 112.

[2] Ղևոնդ, էջ 129—130։

[3] Վ. Բարձրբերդցի, էջ 199, հմմտ. Կ. Գանձակեցի, էջ 380—381։

Ար. Լաստիվերտցին երկու անգամ հիշատակում է «գործ», «մարդահարկ» տերմինները։ Աբխազների Բագրատ թագավորը, ասում է պատմիչը, «երթեալ անցանէ ընդ Հարք և ընդ Մանազկերտ... դառնայ ի վերայ Բագրևանդայ և դայ ի քաղաքն Ուխտեայ և տիրէ բազում գաւառաց և բերդից և քաղաքաց։ Եւ կացուցանէ ի վերայ նոցա գործակալս և դատաւորս և վերակացուս»[1]։ Այս գործակալ-վերակացուներն էին, որ «մարդահարկի», «բեկարի» միջոցով կազմակերպում էին հասարակական անվճար, հարկադիր աշխատանքները։ Որ «մարդահարկը» պարտադիր աշխատանք էր, այս մասին ավելի ուշագրավ վկայություն է թողել նույն պատմիչը։ Պատմելով Դավիթ Բագրատունու գործունեության պատմությունը, պատմիչը հարում է, որ սա «տիրէ բազում գաւառաց և բերդից»։ Դավիթի օրոք «առաքէ ինքնակալ թագաւորն (բյուզանդական) զնիկոմիտացի իշխան ոմն, որ եկեալ մարդահարկ արկանէ յերկրիս, և ժողովեալ բազմութիւն մարդկան՝ սկիզբն առնէ վերստին շինելոյ գԹէոդուպոլիս»[2]։ Այստեղ ակնարկված «մարդահարկն» այն ձրի աշխատանքն էր, որ կատարվում էր քաղաքի շինարարության վրա։ Այս կարգի վկայություններ պահպանել են մեր մյուս մատենագիրները։

Ֆեոդալական հարաբերությունների զարգացման և խորացման հետևանքով արդեն 9—12-րդ դարերում կոռը հանդես է գալիս իր իսկական իմաստով ու նշանակությամբ։ Վիմական արձանագրություններում, այս էպոխայի մատենագիրների մոտ և ձեռագիր աղբյուրներում կան բազմաթիվ վկայություններ այն մասին, որ անմիջական արտադրողը պարտավոր էր կատարել. «մարդոյ կոռ»։ Սեփական քաշող ուժ ունեցող գյուղացին պարտավոր էր հողատիրոջը տալ նաև «եզին կոռ», սովորական էր երբ մի քանի ընտանիքներ հարկադիր կերպով դուրս էին բերում լծկան եզ և դութան։ Այս կոռը կոչվում է «վեցկէ կոռ»։ Գյուղացին պարտավոր էր ձրի կալսելու տիրոջ հունձը, այս պարագային նրա կոռը կոչվում էր «կամին կոռ»։

Գյուղացին պարտավոր էր իր փոխադրական միջոցներով դաշտից կալ և կալից տուն փոխադրել հողատիրոջ հունձը, բերքը, խոտը։ Այս կոռը կոչվում էր «սայլին կոռ»։

Սյունյաց Սուփան իշխանը Կոթի վանքի 901 թ. իր թողած արձանագրության մեջ հիշատակում է, որ գալով իր սեփական Կոթ

---

[1] Ար. Լաստիվերտցի, էջ 5։

[2] Նույն տեղում, էջ 11։

գյուղը, «...բաղում սպասաւորս ազատ արարի յարմունական ծառուրենէ և ի բեկարէ, և սահմանեցի հողս և ջուրս...»[1]։

Այս վկայության մեջ անկասկած է, որ «ծառուրենէ և ի բեկարէ» բառերը գործածված են պարտադիր աշխատանքի իմաստով։

Վիմական արձանագրություններում կան ավելի պարզ ու որոշ վկայություններ կոռի մասին՝ իր իսկական իմաստով գործածված։

Մրենի 992 թվականի արձանագրության մեջ այդ առթիվ կարդում ենք.

«Յանուն Աստուծոյ այս իմ հրամանք են Գագիկ Շահիաղնշահի. ազատեալ իմ զՄրենոյ կոռն որ ի Նախճաւանի էր զմարդոյ և զեզին»[2]։

Անիի 1057—1063 թթ. արձանագրությունները թողել են այս առթիվ ավելի ուշագրավ վկայություններ։ Այս արձանագրություններից մեկում ասված է, որ քաղաքի տերերն ու կառավարիչները համաձայնվում են և քաղաքը ազատում են ոչ միայն «զվեցկէ կոռ»-ից, այլև «և գոայլի, և զկամին» կոռերից և «զանդարիոն» հարկադիր աշխատանքներից[3]։

Կոռը, որպես հասարակական հարկադիր աշխատանք արձանագրված է նաև Զաքարյանի 1325 թվականի արձանագրության մեջ։

«Թվ. չհգ... մեք Դաւիթ և Վահագ Եփաթա և որդիք մեր Սատրիկ և Բահադին և Աւդուլա վասն յուսոյն, որ առ աստուած և մեր արևուս համար բողամ զվանաց կոռս զմարդս, եզին, իշս, զամենայն ցեղ կոռ...»[4]։

Մարդու, ձիու, եզի, ջորու, էշի, սայլի, կամի, դրասաի և «զամենայն ցեղ» կոռի մասին վկայություններ է պահպանել Մխիթար Գոշը։

«Այսպէս և յաւուրս շարաթու յեօթնէ մին գործիցի իշխանին և տէրունի. այլ աւելի աշխատելն զձեռամբ անկեալն՝ անիրաւութիւն մեծ է։

Եզին առանձինն այլ հարկ մի լիցի, զի այն իսկ է զոր աշխատեալ հնդեկի...։

---

[1] Վիմական տարեգիր, էջ 4—5, հմմտ. Ստ. Օրբելեան, էջ 177—178։

[2] Նույն տեղում, էջ 10—11, հմմտ. նաև Ալիշան, Շիրակ, էջ 138։

[3] Նույն տեղում, էջ 27։

[4] Նույն տեղում, էջ 161, հմմտ. նաև էջ 80, 83, 123 և ուր. տես նաև Շանխաբունեաց, հ. Ա, էջ 444, հ. Բ, էջ 163, Ալիշան, Այրարատ, էջ 292 (բոլոր ընդգծումները մերն են—Ս. Հ.)։

Զիոյ և ջորւոյ և իշոյ մի լիցի հարկ, զի նոքօք բաղում անգամ ծառայէ զտէրունիսն»[1]։

Կոռին ենթակա էին ոչ միայն գյուղացիները, այլև անասունները, այն էլ «բազում անգամ», իսկ անասուններն առանց տիրոջ կոռային աշխատանք կատարել չէին կարող։

Հողատեր ֆեոդալների համար կոռային աշխատանք կատարելու մասին ուշագրավ վկայություն է պահպանել Սմբատ Գունդստաբլը իր Դատաստանագրքում։

«Գաւառայ հարկն, որ սահմանովն որ սահմանված է, առնուն պարոնայքն...»։ Հարկատուներն ըստ Դատաստանագրքի պարտավոր էին «զ տասնէն զմէկ տան և ի շաբաթ օր մի պարոնին բանին... Եղն այլ ծանրութիւն չպարտի, զի զիր հնդակն տվել է, կովն լիտր մի եղ տայ պարոնին և այլ խոտաք չտայ։ Ոչխար երբ գառն կամ ուլ բերէ, տարեկան ի տասնէն մէկն առնու պարոնն»[2]։

Միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի և ֆեոդալական-արտադրական հարաբերությունների հետազոտող որոշ պատմաբաններ հենված Մ. Գոշի և Սմբատ Գունդստաբլի վերոհիշյալ սահմանած կանոնների վրա, աշխատել են ամեն կերպ ապացուցել, որ աշխատանքային ռենտան կամ կոռային աշխատանքը համեմատած ֆեոդալական մյուս երկրների հետ մեղմ մոտ չի խլել գյուղացիների աշխատանքի մեծ մասը, որ նա չի գերազանցել իրը շաբաթվա մեկ օրվան։ Այդ դրույթը չի ապացուցվում հենց այս վկայությունների ուշադիր քննարկման ժամանակ։ Նախ եթե կոռային աշխատանքը չխլեր գյուղացիների աշխատանքի մեծ մասը, ապա անիմաստ էր այդ առթիվ սահմանել հատուկ կանոններ, պահանջել, որ անմիջական արտադրողը իշխանի և պարոնի համար աշխատի միայն մեկ օր։

Մխիթար Գոշը պահպանել է կարևոր վկայություն նաև այն մասին, որ հողատեր-ֆեոդալները խախտում էին սովորույթների ու տրադիցիաների ուժով սահմանված կոռային աշխատանքի ժամանակը։ Նրանք ստիպում էին գյուղացիներին աշխատել նույնիսկ տոն օրերին։ Այս առթիվ օրենսդիրը սահմանել է հատուկ կանոն։ Գյուղացին, ասում է Գոշը, «ի տարեմուտս ըստ կարի ծառայեսցէ և լաւուրս տօնից։ Մի լիցի չէքուշէք բաղում, այլ չիք լիցին անիրաւ սո-

[1] Մ. Գոշ, Դատաստանագիրք, էջ 315—316։
[2] Ս. Գունդստաբլ, Դատաստանագիրք, էջ 18—19։

վորությունքն, զի և սահմանդ բաղում և յաւելորդ սովորութեանց եղև»[1]։

Բացի այս վկայություններից, բարեբախտաբար միջնադարյան ձեռագիր հիշատակարանում պահպանվել են խիստ ուշագրավ տեղեկություններ այն մասին, որ աշխատանքային ռենտան կամ կոռային աշխատանքը խլել է գյուղացու աշխատանքի մեծ մասը, նույնիսկ ամբողջ շաբաթը։

Վարդան վարդապետը իր «Համառոտ մեկնութիւն գրոցն արարածոց» աշխատության մեջ, առաքյալներից մեջ բերած կրոնաբարոյական քարոզներով աշխատում է համոզել տերերին, ասելով. անասնավածություն և անխղճություն է, որ նրանք ստիպում են ծառաներին, քաշող ուժերին շաբաթվա յոթ օրերում էլ աշխատել տերունական կալվածներում։

Այս աշխատության Իբ կանոնը սահմանում է հետևյալը. «վեց աւր գործեսցես զգործս քո, և յաւուրն է-երորդի հանգիցէ եղն քո, և էշ քո, ծառայ քո և աղախին քո»[2]։

Այս կանոնն այլևս ոչ մի կասկած չի հարուցում, որ աշխատանքային ռենտան կամ կոռային աշխատանքն անցել էր ամեն մի չափ ու սահման, որ հողատեր ֆեոդալները նույնիսկ կիրակի օրերն էլ ստիպում էին իրենցից կախման վիճակում գրված վարձկաններին աշխատելու տերունական կալվածներում։

Բացի աշխատանքային ռենտայի կամ կոռային աշխատանքի մասին այս ուղղակի ցուցումներից, կան այլ կողմնակի վկայություններ կոռային ծանր և տաժանակիր աշխատանքի մասին։ Վարդան Այդեկցին, իր քարոզներից մեկում, դատապարտում է այն շար և ագահ տերերին, որոնք շաբաթվա վեց օրերում շահագործում են հողակտորներն ու սեփական արտադրամիջոցները կորցրած գյուղացի-վարձկան-մշակներին։ Դուք, ասում է Վարդանը դիմելով հողատեր-ֆեոդալներին, ոչ խիղճ ունեք և ոչ աստված, ստիպում եք վարձկաններին շաբաթվա վեց օրերում քրտնաջան աշխատել, նույնիսկ թույլ չեք տալիս որպեսզի աշխատանքի ժամանակ նրանք դիտեն արևածագն ու մայրամուտը։

«Մտանէ վարձկանն,—ասում է Վարդանը,—ի տունն քո և խոնարհեցուցանէ զսուր իւր ի գործոյ քոյ, զվեց աւրն ոչ իշխէ ի վեր

---

1 Մ. Գոշ, Դատաստանագիրք, էջ 316։

2 Համառոտ մեկնութիւն գրոցն արարածոց, հաւաքեալ ի մեկնութէնէ Վարդանայ վարդապետի՝ առն հարգելի և իմաստնոյ աշխատութեամբ Գրիգորի վարդապետի։ (Տե՛ս Մատենադարան, ձեռագիր № 1054, էջ 71բ)։

հայել և տեսանել զարէգան թե ուստի՞ գա կամ ուր երթա. այլ զան եդեալ փութայ ի գործ քո և ի քիրան և ի վաստակն և յաշխատութիւնն, և ոչ ոք տայ ի վեր հայել և հանգչել, այլ կայ և մնայ յաւուր կիրակէին բազում տենչանաւք զի գուցէ փոշին թաթափեսցի ի մարմնոյ անտի»[1]:

Հողին ամրացված և կախյալ գյուղացիների կոռային պարտավորությունները բազմազան էր և բազմատեսակ:

Դավիթ Ալավկա որդին և Մ. Գոշը իրենց դատաստանագրքերում հատուկ կանոններ են սահմանել՝ կոռային աշխատանքների բնույթի մասին:

Հողատեր ֆեոդալները, աղատները, իշխանները, մեծատունները իրավունք ունեին իրենց ծառաների մի մասին՝ «ի գործ մշակութեան կարգել», մյուս մասին՝ «յայգեգործութիւն», երրորդներին «զինուորութիւն» և «այլքն ի յայլ գործ»: Այս ֆիզիկական աշխատանքն այնքան ծանր էր ու տաժանակիր, որ հաճախակի գործի տեղում մահանում էին վարձկանները: Երկու դատաստանագրքերի հեղինակները սահմանել են հետևյալ կանոնը.

Եթե վարձկանները աշխատանքի ժամանակ մահանում են, ապա «անպարտ են տեարքն նորա»: Եթե տերերը զգուշացրել են թե նրանց աշխատանքի պայմանները վտանգավոր են և եթե նրանք կարիքից դրդված հանձն են առել այդ պարտավորությունը և իրենց կյանքը վտանգի ենթարկել, ապա այս դեպքում էլ տերերն անպարտ են[2]:

Կռուի մասին ուշագրավ վկայություն է թողել Ներսես Շնորհալին: Ն. Շնորհալին իր «Թուղթ ընդհանրական»-ի «Առ իշխանս որ ըստ աշխարհի» ենթագլխում դառը վշտով է նկարագրում աղքատների, տնանկների, տերերից և իշխաններից կախման վիճակում գրված հասարակական տարբեր խավերի տաժանակիր աշխատանքը, ողբերգական գոյավիճակը:

Դիմելով աշխարհի տերերին, Շնորհալին ասում է. «մի անիրաւաբար վարիք առ հնազանդեալսդ ծանր և դժուարակիր հարկադրութեամբ՝ զոր ոչ կարեն բառնալ..., մի... զրկէք... և մի նեղէք

---

[1] Յանուն սասունցոյ Վարդան վարդապետի, ի ասացեալ յաղագս հոգեշահ բանից հոգւոյ և մարմնոյ ամէն: Ձեռագիր № 639, էջ 88ա։

[2] Դավիթ Ալավկա որդի, Խրատ կանոնականք, ձեռագիր № 839, էջ 56ա, բ. 57, ա, բ, հմմտ. նաև պրոֆ-դոկտ. Ա. Աբրահամյան, Դավիթ Ալավկա որդու կանոնները, Երևան, 1953, էջ 21—22, Մ. Գոշ, Դատաստանագիրք, էջ 419—420։

զաղքատաս և զտնանկս... այլ օրինօք գատեցէք», հարկը պահանջեք «ըստ չափոյ զօրութեան զիւրաքանչիւր ոք»[1]։

Ն. Շնորհալին խորհուրդ է տալիս «զօրաց և գաւառաց» տերերին «չար և անիրաւ» գործակալներ, գավառապետներ չնշանակել, սահման դնել նրանց անիրավություններին, ապօրինի գործարքներին, կաշառակերությանը։

Այս անիրավ և չար գործակալները, գավառապետները, որոնց Շնորհալին իրավամբ կոչում է «նեղիչներ», ոչ միայն հարկեր էին հավաքում, այլև կազմակերպում էին հասարակական մասշտաբի հարկադիր աշխատանք իշխանական կալվածներում, պետական և հասարակական շինարարական աշխատանքների վրա։ Ն. Շնորհալին, որպես ֆեոդալական դասակարգի կարկառուն ներկայացուցիչներից մեկը, խորհուրդ է տալիս տերերին չափից դուրս չշահագործել անմիջական արտադրողներին, որպեսզի նրանք ոչ միայն իրենց գոյությունը պաշտպանեն այլև «զարքունական հարկսն հատուցանել» կարողանան։

«Մի որպէս զանբան կենդանիս՝ որ բնութեամբ ծառայք են մարդկան, ծառայեցուցանէք զմարդիկ՝ որ ընդ իշխանութեամբ ձեռամբ լինին՝ ի գործ խիստ և անտանելի, որպէս և փարաւոն զորդիսն Իսրաէլի, և զայն՝ առանց կերակուր տալոյ նոցին... որպէս զի կարող լինիցին վաստակօք իւրեանց զաղքատանաց կեանս զտանց և զորդւոց իւրեանց լցուցանել, և զարքունական հարկսն հատուցանել»[2]։

Ն. Շնորհալու այս հատվածը կոռային աշխատանքի մասին եղած բազմաթիվ վկայություններից ամենից հետաքրքրական և ուշագրավ վկայությունն է։ Այստեղ ուղղակի ակնարկված է, որ անմիջական արտադրողը ունի իր սեփական տնտեսությունը, իր աշխատամիջոցները։ Այնուհետև հատվածի այն մասը, որտեղ ասված է, որ տերերը, իշխանները իրենց գործակալ-նեղիչների միջոցով սոցիալական այնպիսի ողբերգական գոյավիճակում են դրել հարկատու-գյուղացիներին, որոնք ոչ միայն չեն կարողանում արքունի հարկերը վճարել, այլև իրենց թշվառ ֆիզիկական գոյությունը պահպանել, հնարավորություն է տալիս ենթադրել, որ այստեղ իսկապես խոսքը ոչ թե վարձկանների, ծառաների, այլ հողին ամրացած և տերերից կախման վիճակում դրված գյուղացիների մասին է։ Ոչ-

---

[1] Թուղթ ընդհանրական արարեալ երիցս նրանալ սուրբ Հայրապետին մերոյ տեառն Ներսիսի Շնորհալւոյ, էջմիածին, 1865, էջ 92—93։

[2] Նույն տեղում, էջ 94։

մի երկրում ծառա-ստրուկները սեփական արտադրամիջոցների և անձնական աշխատանքի վրա հիմնված մասնավոր տնտեսություն չեն ունեցել. նրանք պատկանելիս են եղել տերերին, որպես «խոսող» գործիքներ։

Կոռային աշխատանք էին կատարում կամ աշխատանքային ռենտա վճարում ոչ միայն անհատ գյուղացիները, այլև հողատեր ֆեոդալներին ու հատկապես ֆեոդալական վանքերին ենթակա ամբողջ գյուղերը։ Ստ. Օրբելյանին վերագրված «Ժամանակագրութեան» հավելվածում պահպանվել են արժեքավոր վկայություններ ֆեոդալներից կախված գյուղերի հասարակական մասշտաբի պարտադիր կոռային աշխատանքի մասին։ Ստ. Օրբելյանի մոտ պահպանված Տաթևի վանքին ենթակա գյուղերի հարկացուցակները կազմված են, ինչպես մատնացույց է անում պատմիչը, «ըստ հին սահմանաց»։

Եվ իսկապես, «Հարկացուցակը» կազմված է Տաթևի ֆեոդալական վանքի հին վարչական բաժանման հիման վրա։

Հայտնի է, որ Սյունիքի գավառների վարչական կազմը 12—13-րդ դարերում ենթարկվեց որոշ փոփոխության. եթե «Հարկացուցակը» կազմված լիներ 12—13-րդ դարերում կամ ավելի ուշ շրջանում, անկասկած է, որ վարչական այդ փոփոխությունները պետք է որ արտահայտվեին և իրենց տեղը գտնեին «Հարկացուցակում»։ Բացի այդ «Հարկացուցակում» չի հիշատակված 1006 թ. հետո Սյունիքի կազմի մեջ մտած Նախիջևանը։ Այս փաստը նույնպես հաստատուն հենարան է և ցույց է տալիս, որ «Հարկացուցակը» կազմվել է ոչ ուշ քան 10—րդ դարը։

«Հուլավարն այսինքն վանքական գիւղօրէից հողոց տասանորդքն» խորագրի տակ թվարկելով Տաթևի վանքին վճարվելիք տասանորդի և այլ հարկերի մասին, հիշատակում է, որ Տաթև գյուղի գյուղացիները պարտավոր էին վանքին «ԺԴ բեռ ցորեն և Գ լիտր մեղր տան. և գլխովին բոլոր գեղովն մէկ օր վար անեն, Բ օր հունձ անեն, և մէկ օր ալ ջաղ անեն ինչ բան որ լինի. և մեկ օր եզնարածմն վանքիս համար խոտ հարեն։

«Սրբարանց՝ ԺԵ բեռն և Գ մարդան ցորեն. և Ա օր վար անեն, Բ օր հնձեն, և եզնարածմն Ա. օր խոտ հարեն, և իւրեանց գեղի առաջի մարգիմն ևս հարեն և Ա. օր ալ ջաղ անեն։

«Աղանց՝ Թ բեռն, Ա մարդան ցորեն և Ա օր վարեն, և Ա օր վեցկուն եզնարածմն խոտ հարեն և օր հնձին ջաղ անեն։

«Տանձատափ՝ Զ բեռն և Ե մարդան ցորեն, և ԱՌ դեան հոպ-

վայր տան, Ա. օր վարեն, Գ օր հնձեն, Ա. օր խոտ հարեն և Ա. օր ինչ բան որ հանդիպի ջառ անեն վանքիս»[1]:

Այս վկայությունն այլևս ոչ մի կասկած չի հարուցում, որ միջնադարյան Հայաստանում ոչ միայն կոռը գոյություն է ունեցել, այլև այն օրինականացվել և համարվել է սովորական երևույթ:

Միջնադարյան Հայաստանում աշխատանքային ռենտան կամ կոռն այնքան տարածված էր, որ սկզբնաղբյուրներում գործածական է «կոռավար» հող, «կոռավար» արտ, «կոռավար մարդ», «մեծ կոռավար» տերմինները:

Այս տերմինները չորս անգամ հիշատակված են վիմական արձանագրություններում և մեկ անգամ էլ Ստ. Օրբելյանի մոտ: Ահա այդ վկայությունները.

Հառիճի վանքի 1201 թ. արձանագրության մեջ հիշատակված է, որ Ամիրսպասալար Զաքարեն դանձապին է անում «զհռչակաւոր սուրբ ուխտս Հառիճայի յիւր բնական հայրենատիրացն... բոլոր իւր ամէն հողահատովն, սարովն և ջրովն, զոր բնական լեալ է», վանքին նվիրում է ջրաղաց «մի ի Գեսոիկ», «մի յԱնի» և «տարտէզ մի ի Ծաղկաձորին, այդի մի յԵրևան և այդի մի ի Թալին»: Հառիճում շինել է տալիս ամրոց, Կաթողիկե եկեղեցին զարդարում է «բազում ծախիւք»: Ամիրսպասալարը տալիս է արձանագրել, որ ինքը հաստատում է վանքի բոլոր տիրույթների սահմանները «ի Սահմանախաչէ ի Հառիճա գետն կոռ Մարգով, Գրերովն, Ցամաք Ձորով, Ճինարին Հարով, Գոմցեց ձորովն, Արենաղբիրով, հին Հառիճաով...»[2]:

Դսեղի 1237 թ. արձանագրությունով Գորգեի Աշոտ որդին Դսեղի Աստվածածին եկեղեցուն նվիրում է «Երկու մեծ կոռավար» հող և հաստատում «արձանագրով»[3]:

Գրիգոր իշխանը նույն վանքի 1241 թ. արձանագրության մեջ հիշատակում է, որ նա շինում է «Գրիգորաշէն» եկեղեցին և սրան

---

1 Ա.Հ. Աբրահամյան, Ստ. Օրբելիանի ժամանակագրություն, Երևան, 1942, էջ 44:

2 Մխիթարեանց Աբ., Պատմութիւն Մենաստանին Հառիճոյ, Տփխիս, 1856, էջ 62, Ալիշան, Շիրակ, էջ 161, Շահխաթունեաց Յովհ. եպ., Ստորագրութիւն Կաթողիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, էջմիածին, 1842, հ. 2, էջ 568, Վիմական տարեգիր, էջ 43:

3 Ջալալեան Սարգիս, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Ա. Տփխիս, 1842, էջ 113, Վիմական տարեգիր, էջ 80:

է նվիրում «Սիրեկայ գոմոց տային և մեծ կոռավարն Ագատակի Փայտաշէնու կէսն...»[1]:

Սիսնի 1283 թ. արձանագրությունով Վասակի որդի «մեծաշուք» պարոն Վահրամը «մեծաջան աշխատությամբ» շինել է տալիս եկեղեցի, այն զարդարում է «բազում սոյասիւք» և նվիրում է սուրբ ուխտին «զՔարաթաղին այդին վերին հատուցն... կոռ արտով...»[2]:

«Կոռավարի» մասին ուշագրավ վկայություն է պահպանել Ստ. Օրբելյանը: Սյունյաց տեր Սողոմոնը վճարում է 1200 դրամ և Սյունյաց Հրահատ իշխանաց իշխանից գնում է Դարատափ գյուղը: Այս գործարքը կատարելուց հետո հոգևոր ֆեոդալը թողնում է հետևյալ «գիր-վճիռը»:

«Շնորհիւն Աստուծոյ այս իմ ձեռին գիր է Տեառն Սաղօմօնի՝ Սիւնեաց եպիսկոպոսի, որ յառաջ ժամանակաց զնոտոյ կոռավարն Տեառն Գէորգեայ սուրբ նշանին հոգեցատուր էր արարեալ, զինչ պատճառօք և էր՝ այլ յայտնեալ էին»: Գրավելով Սյունիքի եպիսկոպոսի աթոռը, Սողոմոնը ոչ միայն հսկայական դրամով նոր տիրույթներ է ձեռք բերում, այլև վերականգնում է վանքին հնթակա գյուղերի «կոռավարը»[3]:

Հայ խոշոր ֆեոդալ հոգատերերը, իշխանաց-իշխանները, բազմաքանակ ազատները վանքերին և եկեղեցիներին էին նվիրում ոչ միայն իրենց սեփական, օտարելի հայրենական կալվածները, այլև գյուղացիների անվճար կոռային աշխատանքը: Այսպիսով, նոր տերերին էին անցնում ոչ միայն հողերը, այլև պարտադիր, ձրի աշխատանքի իրավունքը: Եթե մինչև նվիրաբերությունը անմիջական նյութական բարիքներ արտադրողներն աշխատավճար ունեցան էին տալիս հողատեր ֆեոդալներին, ապա այդ նույն «կոռավար» հողերը ու այդիները, մարգերն ու բանջարանոցներն անցնում էին նոր տերերին, իրենց կոռի հետ միասին. օտարացվում էին ոչ միայն գյուղերը, այլև «կոռավար» հարկադիր աշխատանքը: Աշխատավոր, բայց արդեն տնտեսական ու իրավական կախյալ վիճակում դրված, գյուղացիները պարտավոր էին նոր տերերի համար էլ իրենց սեփական աշխատամիջոցներով, քաշող ուժով, անձնական աշխատանքով կոռ կատարել:

---

[1] Ջալալեան Սարգիս, Ճանապարհորդութիւն..., էջ 114, Վիմական տարեգիր, էջ 83:

[2] Նույն տեղում, հատ. Բ, Տփղիս, 1858, էջ 141, Ալիշան, Սիսական, էջ 114, Վիմական տարեգիր, էջ 123:

[3] Ստ. Օրբելեան. էջ 215:

«Բեկար»—«բիգար»: Հասարակական մասշտաբի հարկադիր և անվճար աշխատանքն արտահայտելու համար պատմական սկզբնաղբյուրներում գործածական է նաև «բեկար» տերմինը: Այս տերմինը պատմական հին ծագում ունի և սկիզբ է առնում նախասասանյան շրջանից: Բայց «բեկար» բառը միայն 7-րդ դարից սկսած է, որ քաղաքացիական լայն իրավունք է ստանում և հիշատակվում սկզբնաղբյուրներում, որպես հարկադիր ու ձրի աշխատանք:

Եթե կոռը կապված էր հողի մասնավոր սեփականության հետ և կատարվում էր հողատեր ֆեոդալներին պատկանող հողերի վրա, ապա «բեկարը» հասարակական մասշտաբի այն հարկադիր և ձրի աշխատանքն էր, որ անմիջական նյութական բարիքներ արտադրողները իրենց սեփական աշխատանքով, աշխատամիջոցներով և քաշող ուժով կատարում էին բերդերի, ամրոց-պալատների, ճանապարհների, կամուրջների շինարարության վրա, իսկ պատերազմների ժամանակ՝ զոմակում:

«Բեկար» բառի ստուգաբանության լուրջ փորձեր է կատարել պրոֆ. Ն. Ադոնցը: Անդրադառնալով շինականների կողմից պետությանը և ֆեոդալական դասերին վճարված հարկերի քննարկմանը, հեղինակը գրել է.

«Բացի մատնացույց արված հարկերից, հայտնի էր հետևյալ կարգի պարհակը, ինչպես եվրոպական corvées=corrogata opera, ռուսական կոռը, որը և կոչվում էր բեկար, bekar: Այս բառը ծագել է պարսկական bekar amadan արտահայտությունից և նշանակում է աշխատանքի գնալ, որը և մինչև օրս էլ կոռ իմաստով գործածական է ժողովրդի մեջ: Իսկական իմաստով պարհակը կոչվում էր kar հայերեն կոռ, աշխատանք, հաճախակի միասին՝ կոռ և բեկար: Բեկար բառը հանդիպում է 641 թ. Դվինի ժողովի կանոններում»[1]:

Ակադ. Հ. Մանանդյանը մերժելով պրոֆ. Ն. Ադոնցի այս ստուգաբանությունը, գտնում է, որ «բեկարը կարող էր լինել կամ արքունի հարկ, հավանորեն, հողային կամ զինվորական ծառայության պարտավորություն...»[2]:

Ակադեմիկոս Հ. Աճառյանը իր «Հայերեն արմատական բառարան» աշխատության մեջ մերժում է և Ն. Ադոնցի և Հ. Մանանդյանի ստուգաբանությունը: Ն. Ադոնցի «այս ստուգաբանությունը,—

---

[1] Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, стр. 484.

[2] Հ. Մանանդյան, Հայաստանի արքունի հարկերը մարզպանության շրջանում (տե՛ս «Տեղեկագիր» ՀՍԽՀ Գիտությունների ակադեմիայի, 1926, № 1, էջ 37):

գրում է հեղինակը,— որի վրա ծանրանում է նաև Մանանդեան... բոլորովին զուրկ է արժեքից և յառաջացած է նոր պրս. bekār հընչման աղճեցությունից։ Սա մի բառ չէ, այլ kar «գործ» բառի տրական կամ նախդիր հայցականը, ba նախդիրը ծագում է հին պրս. patiy ընդ. paiti պրհ. pat, պազենտ. pa ձևից և եթե հայերենի մեջ դոյություն ունեցած լինէր, առնվազն պա ձևը պիտի ունենար, որով սպասելի էր պակար և ոչ բեկար»։ Սակայն ակադ. Հ. Աճառյանը ժխտելով Ն. Ադոնցի և Հ. Մանանդյանի «բեկար» բառի յեզվական ստուգաբանությունը, ինքը նույնպես դտնում է, որ «բեկարը» հարկ էր, «տերությեան վճարուած տուրք» կամ «պարտադիր ծառայություն, որ կատարում են զիւղացիք կալուածատիրոջ կամ պետութեան համար, ինչպես հողի մշակութիւն, հունձք և այլն»[1]։

Հեղինակի կարծիքով, «բեգարա» տերմինը այս նույն իմաստն է ունեցել նաև միջնադարյան Վրաստանում։ Սակայն հարդելի դիտնականի այս դրույթը չի ապացուցվում։ Մենք չունենք որևէ վկայություն, որ «բեկարը» նշանակեր հարկ, կամ հողի վրա կատարած կոռային աշխատանք։

Բեկարը որպես արքունիքի համար կատարվող հարկադիր և անվճար աշխատանք մատնացույց է արված նաև Գարեգին Հովսեփյանի «Զագաւանից ժողովը» հոդվածում[2]։

Պրոֆ. Ի. Պ. Պետրուշևսկին իր «Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении XVI—в начале XIX вв.» աշխատության մեջ հանդամանորեն տալիս է «բեկարի» բացատրությունը։

Նրա կարծիքով «բեկարը», կամ «բիգարը» որպես հարկադիր աշխատանք հայտնի էր Սասանյան Պարսկաստանում։ Եթե «բեկարի» ստուգաբանությունը և իմաստը դեռ անհայտ է,— գրում է Ի. Պետրուշևսկին,—ապա նրա տերմինային նշանակությունը բավականին պարզ է։ «Բեկարը» ամեն տեսակի պարհակ էր, պարտադիր աշխատանք, որը իշխողների և շրջանների կառավարիչների կողմից դրվում էր գյուղացիների վրա՝ պետական կարիքների համար։ «Բեկարն» այն պարհակն էր, որը գործադրվում էր դղյակների, ամրոցների, պալատների շինարարության վրա։ Գյուղացիները իրենց միջոցներով պարտավոր էին փոխադրել շինարարա-

---

[1] Հ. Աճառեան, Հայերեն արմատական բառարան, հ. I, էջ 1053—1054։

[2] Տե՛ս Գարեգին Հովսեփյան. Զագավանից ժողովը. «Ճողոպաթ», 1913, էջ 36։

կան նյութեր, անցկացնել ճանապարհներ, ուսման ջրանցքներ և առուներ, կատարել տերերի և կառավարիչների համար դաշտային աշխատանքներ և այլն[1]:

Այս նույն իմաստով «բիգար» բառը ստուգաբանել է Հ. Դ. Փափազյանն իր «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը» աշխատության մեջ: «Բեգար»,— գրում է հեղինակը,— հողագործ գյուղացիության կամ ռայաթների պարտադիր անվճար աշխատանքը ամրությունների, բերդերի, ջրանցքների և ճանապարհների վրա, ինչպես նաև ռազմական արշավանքների ժամանակ»[2]:

Ն. Բերձենիշվիլին գտնում է, որ «բեկարը» վրացական լեզվում ստացել է «բեգարա» իմաստը և նշանակել է արդյունավճար ռենտա[3]:

Այսպիսով, Ն. Ադոնցը, պարսկական և արաբական աղբյուրներին քաջ ծանոթ Հ. Սաֆարյանը, Ի. Պետրուշևսկին, Հ. Դ. Փափազյանը «բեկարը» համարում են անվճար հարկադիր աշխատանք, իսկ ակադ. Հ. Մանանդյանը և Ն. Բերձենիշվիլին՝ հողային հարկ, զինվորական ծառայություն կամ թե արդյունավճար ռենտա:

«Բեկարը», որպես հասարակական մասշտաբի հարկադիր աշխատանք, առաջին անգամ մատնացույց է արված VII դարի Դվինի ժողովի 8-րդ կանոնում:

Դվինի ժողովի 8-րդ կանոնում արձանագրված է «Եթէ ոք՝ այր կամ կին ի ժառանգաւորաց սրբոյ եկեղեցւոյ անորդի իցէ... մի իշխեսցէ հեռացուցանել զհող և զջուր և զամենայն շնորս եկեղեցւոյն... իսկ եթէ որդեղրեալն արժանասցի քահանայութեան՝ զեղջն վկայութեամբ կամ որ որդեղրեացն զնա և չէր անկ նմա քահանայութիւն, սակայն զկէս շնորհին կալցէ յաղագս ձեռնադրութեան, ազատ ի հարկէ և ի բեկարէ»[4]:

Ինչպես նկատեցինք, Սյունյաց Սուփան իշխանը իր 901 թ. արձանագրությունով Կոթի եկեղեցու սպասավորներին ազատում է ոչ միայն «յարքունական ծառուրենէ» այլև «ի բեկարէ»[5]:

Այս նույն վկայությունը համարյա նույնությամբ կրկնված է Ստ. Օրբելյանի մոտ: Ստ. Օրբելյանի մոտ նշվում է, որ Սուփան իշ-

---

[1] И. П. Петрушевский, Очерки... стр. 285.

[2] Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, հրավարտակներ, պրակ առաջին, ԺԵ—ԺԶ դդ., կազմեց Հ. Դ. Փափազյան, Երևան, 1956, էջ 107:

[3] Н. А. Бердзенишвили, Очерки из истории развития феодальных отношений в Грузии (XIII—XVI вв.), Тбилиси, 1938 г., стр. 17.

[4] Կանոնգիրք հայոց, էջ 124—125:

[5] Վիմական տարեգիր, էջ 4:

խանը ազատում է «այլ սպասաւորս բազումս... յարքունական... բեկարէ»[1]:

Հովհ. կաթողիկոս Դրասխանակերտցին խիստ զանազանություն է նկատում արքունի հարկի, «սակի» և «բեկարի» միջև:

Տալով արաբական ոստիկան Յուսուֆի շարագործությունների պատմությունը, պատմիչն ասում է, որ Դաղիկ Արծրունի թագավորը ոչ միայն Յուսուֆին վճարում է «պերկրորդն... կրկին կամ երեքկին զսակ հարկին» այլև «զամենայն բեկարս արքունի»[2]:

Այս հատվածներում, անկասկած է, որ «արքունի բեկարն» հասարակական մասշտաբի, անվճար հարկադիր աշխատանքն է, հակառակ դեպքում անիմաստ է դառնում արքունի հարկի կողքին «բեկարի» գործածությունը, եթե այն մենք ընդունենք որպես հարկ: Որ բեկարը հասարակական հարկադիր աշխատանք էր, այդ մասին այլ վկայություններ է թողել նույն պատմիչը:

Ալի ոստիկանը, ասում է պատմիչը, ամիրապետի հրամանով Աշոտ Բագրատունուն «բաղում զգեստիւք և արքունական պատուով ճոխացուցեալ՝ ի նա հաւատալով զսակս Հայոց և զամենայն բեկար արքունի»[3]:

Հետաքրքրական է, որ նույն պատմիչն արքունի սակն ու բեկարը համարում է արքունի յուծ: «Եւ այսպէս ընդարձակեալ զսահման տէրութեան իւրոյ... (Սմբատ Բագրատունին—Ս. Հ.) ընդ լծով արքունի սակից և բեկարաց և մաքսից կացուցեալ՝ զդէն քաջութեան մարտի իւրոյ նշան յաղթութեան կանգնէր»[4]:

Մ. Գոշն իր Դատաստանագրքում երկու անգամ գործածում է «պեկար», «բեկար», «անպեկար» տերմինները և երկու դեպքում էլ օգտագործում է Դվինի ժողովի 8-րդ և 9-րդ կանոնները, նոր խմբագրությամբ և լրացումներով:

Դվինի ժողովի 8-րդ կանոնը, ինչպես տեսանք վերևում, սահմանում է, որ եթե եկեղեցու սպասավորը ժառանգներ չունենար, եթե նա որդեգրում էր, գյուղի վկայությամբ, որևէ մեկին, ապա այս վերջինս ստանում էր անժառանգ հոգևորականի գույքի կեսը՝ «ազատ ի հարկէ և ի բեկարէ»: Մ. Գոշի մոտ այդ նույն ժառանգը «զկէս շնորհին կալցի յաղագս ձեռնադրութեանն անհարկ և անպեկար»[5]:

---

1 Ստ. Օրբելեան, էջ 178:

2 Հովհ. Դրասխանակերտցի, էջ 330:

3 Նույն տեղում, էջ 133:

4 Նույն տեղում, էջ 161—162:

5 Մ. Գոշ. Դատաստանագիրք, էջ 212:

Խմբագրելով Դվինի ժողովի 9-րդ կանոնը, որտեղ ասված է, որ ս. եկեղեցուն Գր. Լուսավորիչը և Տրդատը «մանկունս ընդ աղաւաց տոհմին են կարգեալ, և ազատ էին ս. եկեղեցւոյ հող և ջուր», որ այդ ազատությունը պահպանվել էր պարսիկ իշխանների օրոք, որ նրանք չեն եղել «խառնեալ ի շինականս իշխանութիւնն». Մ. Գոշը եզրակացնում է, որ եկեղեցու հողն ու ջուրը եղել է ազատ, չնայած պարսիկ թագավորության ժամանակ «ի պեկար արկին, սակայն ասուն ի գիւանի յայտնի է և չէ խառնեալ ի շինականս, բայց միայն զհարկն տային յարքունիսն»[1]:

Նկատելի է, որ մի դեպքում գործածական են «հարկ և բեկար», մյուս դեպքում «արքունի ծառութիւն և բեկար», երրորդ դեպքում «սակ, մաքս, բեկար», և վերջապես «պեկար և ոնպեկար» տերմինները:

Անհերքելի է, որ այս վկայությունների մեջ «բեկար-պիկար» տերմինը գործ է ածվում ոչ թե հողային հարկի, այլ հարկադիր աշխատանքի իմաստով:

Առաջին վկայության մեջ ակնհայտ է, որ «բեկարն» ունի այս իմաստը, որովհետև պարզ ասված է, որ հոգևորականի որդեգրված ժառանգը ազատվում է ոչ միայն արքունի հարկից, այլև «բեկարից»: Եթե բեկարը մենք ընդունենք հարկի առումով, ապա անիմաստ է դառնում նույն վկայության այն մասը, որտեղ հարկի հետ միաժամանակ գործածվում է «բեկար» տերմինը:

Երկրորդ և երրորդ վկայությունների մեջ էլ մեզ թվում է «բեկարը» գործածված է հարկադիր աշխատանքի իմաստով:

Այնուհետև իշխան Սոսիանն ազատում է եկեղեցու տնտեսության «ազատավորներին» արքունի ծառությունից և բեկարից:

Պարտադիր և անվճար աշխատանքի իմաստով են գործածված նաև Հովհաննես կաթողիկոսի վկայությունները: Անկարելի չէր, որ արաբ ոստիկանները հայ իշխաններին հանձնեին ոչ միայն հարկերի վերակացությունը, այլև արքունի բեկարի, այսինքն հարկադիր աշխատանքի վերահսկողությունը, նրա կազմակերպումը:

Աշոտ Բագրատունու որդի Սմբատ Բագրատունին ընդարձակելով իր տերության սահմանները, ոչ միայն նոր գրաված երկրների վրա հարկ է դնում, այլև ստիպում է այդ երկրների բնակիչներին նաև կատարել հասարակական ձրի «բեկար» կոչված աշխատանքը: Մ. Գոշի օրոք, հոգևոր կոչում ստացած նախկին հարկատուն և կու քաշողը, դառնում էր «անհարկ և անպեկար»: Պրոֆ. Ի. Պետրուշև-

[1] Մ. Գոշ. Դատաստանագիրք, էջ 215—216:

ակին բազմաթիվ վկայություններ է բերում պարսկական-մոնղոլական աղբյուրներից, որոնք նույնպես ապացուցում են, որ «բեկարը» հասարակական հարկադիր և ձրի աշխատանք էր։ Այս առթիվ նա գրում է՝ Բուրխան-ի-Դատիի մոտ «բիգար» տերմինի նշանակությունը բացատրված է հետևյալ կերպ. «պատվիրել աշխատելու առանց վարձի, այսինքն հրամայել (տանել) աշխատանք, իսկ վարձ չտալ»։ Մոնղոլական տիրապետության էպոխայում «բիգարի» մասին տեղեկությունները բազմաթիվ են և լավ բացատրում են նրա բնույթը։ Ջուվեյնի վկայությամբ, եթե հայտարարվում է «բիգար» և երբ տղամարդը բացակայում է, նրա վրա դրված անձնական պարհակը (բիգար-ի-հաֆին) պարտավոր է կատարել նրա կինը։

Ռաշիդ-ադ-դինը վկայում է, որ մոնղոլական իշխանները բեկարի միջոցով պալատներ էին կառուցում Հայաստանում, Ուրմիա լճի շրջանում, անցկացնում էին ջրանցքներ, վերականգնում էին բայքայված գյուղատնտեսությունը, որի հետևանքով շատ շրջաններ բայքայվեցին[1]։

Կոռ և բեկար էին կատարում բոլոր աշխատունակ մարդիկ, կանայք, ծերերը և երիտասարդները։ Նրանք ոչ միայն աշխատում էին պետական, իշխանական կառուցումների վրա, այլև հողատեր-ֆեոդալների կալվածներում, տանը, դաշտում, կալում և այլն։ Հարկադիր-անվճար աշխատանքը, որը կատարվում էր կալվածատիրոջ հողի վրա, ինչպես տեսանք, կոչվել է «կոռ», «ծանրություն», իսկ պետական և հասարակական այլ բնույթի աշխատանքը՝ «բեկար», «խաշար», «զուգալ»։

Այսպիսով, գյուղացին պարտավոր էր տալ մարդահարկ, քաշել կոռ, կատարել բեկար, պարհակություն, խաշար և այլն։ Սակայն աշխատավար ռենտան պատմական բոլոր ժամանակներում նույն բնույթը չուներ։ Եթե սկզբնական շրջանում գյուղացին աշխատում էր հասարակական-պետական նշանակություն ունեցող շինարարության վրա, կառուցում էր քաղաքներ, ճանապարհներ, ղղյակներ, կամուրջներ, ապա ֆեոդալական հարաբերությունների զարգացման հետևանքով, ինչպես նկատեցինք, փոխվում է կոռի իմաստն ու բովանդակությունը և 9—12-րդ դարերում կոռը հանդես է գալիս իր իսկական նշանակությամբ, որպես աշխատանքային ռենտա։

---

1 И. П. Петрушевский, Очерки..., стр. 284—286. Մմմ. Վ. Բարձրբերդցի, էջ 193, Կ. Դանձակեցի, էջ 380—381։

2. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՌԵՆՏԱ

Ֆեոդալական հասարակական-տնտեսական ֆորմացիայի արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների հետագա զարգացումն ու աճը ստեղծում են տնտեսական նախադրյալներ աշխատանքային renտայի զարգացման և նրա փոխարինմանը արդյունքային renտայով։

Անդրադառնալով այս հարցին Կ. Մարքսը ուսուցանում է. «Աշխատանքային renտայի փոխարկումն արդյունքներով renտայի, տնտեսագիտական տեսակետից քննելով, ոչինչ չի փոխում հողային renտայի էության մեջ»[1]։

Չնայած արդյունքներով renտայի գերիշխանության շրջանում ֆեոդալական renտայի էությունը մնում է նույնը, սակայն արդյունքներով վճարվող renտայի շրջանում գյուղացին հնարավորություն է ստանում իր բանվորական ժամանակի մի մասը գործադրել իր հողակտորի վրա, իր սեփական տնտեսությունում։ Այս renտայի ժամանակ գյուղացին արդեն շահագրգռված է աշխատանքում, ձգտում է ավելի շատ արտադրել և իր ստեղծած արդյունքների մի մասը անվճար կերպով հանձնում է հողատեր ֆեոդալին, որովհետև հողի մասնավոր սեփականատերը հանդիսանում է ոչ թե գյուղացին, այլ ֆեոդալը։ Արդյունքներով renտայի ժամանակ գյուղացին, համեմատած աշխատանքային renտայի հետ, ավելի մեծ հնարավորություն է ստանում արտադրել հավելյալ արդյունքներ։ Այս պայմաններում հողատեր ֆեոդալները, կամ թե սրանց գործակալները արդեն լիիրավ կերպով չեն տնօրինում գյուղացու հավելյալ աշխատանքը, ինչպես կոռի ժամանակ։ Ավելին. այս շրջանում համեմատաբար մեղմանում է ճորտական իրավունքն ու հարաբերությունները, գյուղացիության կախումը հողատեր ֆեոդալներից որոշ չափով թուլանում է։ Արդյունքներով վճարվող renտան հնարավորություններ է ստեղծում անմիջական արտադրողների մոտ ընդարձակելու իրենց մասնավոր սեփականությունը, գյուղացիական տնտեսություններին տալիս է ինքնուրույնություն և ավելի մեծ չափերով համապատասխանում է անհատական արտադրության բնույթին։ Հետևաբար, աշխատանքային renտայի փոխարկումը արդյունքներով renտայի ավելի մեծ չափերով նպաստում է ֆեոդալական արտադրողական ուժերի զարգացմանը, հանդիսանում է արտադրու-

---

[1] Կ. Մարքս, Կապիտալ, հատ. III, էջ 332։

թյան անհատական ընույթի և ֆեոդալական հողային մասնավոր սեփականության զարգացման ավելի կատարյալ ձևը։

Արդյունքներով ռենտան հանդիսանալով զարգացած ֆեոդալիզմի շրջանի «իշխող և ամենաշատ զարգացած ձևը» չի բացառում իր կողքին աշխատանքային ռենտայի առկայությունը։

Արդյունքներով ռենտային «միշտ էլ, սակայն ավելի շատ կամ թե ավելի քիչ չափով, ուղեկցում են նախորդ ձևի մնացուկները, այսինքն՝ այն ռենտայի մնացուկները, որը պետք է ուղղակի աշխատանքով, այսինքն կոռային աշխատանքով վճարել և, այս դեպքում հավասարապես միևնույն է, թե հողատերը մասնավոր անձն է արդյոք, թե՞ պետությունն է»։ Այստեղ «հայտնի կոռերը շարունակվում են հարատևել արդյունքներով ռենտայի կողքին»[1]։

Արդյունքներով ռենտան համեմատած աշխատանքային ռենտայի հետ ունի խոշոր առավելություն իրեն իսկ նյութական բարիքներ արտադրողների համար։

«Արդյունքներով ռենտան,— ասում է Մարքսը,— ենթադրում է անմիջական արտադրողի կուլտուրական ավելի բարձր մակարդակ, հետևաբար նրա աշխատանքի ու ընդհանրապես հասարակության զարգացման ավելի բարձր աստիճան, և նախընթաց ձևից նրանով է տարբերվում, որ հավելյալ աշխատանքն այլևս չի կատարվելու իր բնական կերպարանքով, հետևաբար ոչ էլ հողատիրոջ կամ թե նրա ներկայացուցիչի ուղղակի հսկման ու հարկադրանքի տակ. ընդհակառակը, անմիջական արտադրողը հավելյալ աշխատանքը կատարելու է ոչ թե ուղղակի հարկադրանքից, այլ ստեղծված հարաբերությունների ուժից մղված, ոչ թե մտրակից, այլ օրենքի որոշումից մղված՝ իր անձնական պատասխանատվությամբ»[2]։

Արդյունքներով ռենտայի գերիշխանության պայմաններում ֆեոդալական հասարակարգի անմիջական նյութական բարիքներ արտադրողները մնում են նույն գյուղացիները և արհեստավորները։

Արդյունքներով ռենտայի ժամանակ ֆեոդալական հասարակության համար անհրաժեշտ նյութական բարիքներ արտադրողները ավելի կամ պակաս չափով տնօրինում են իրենց ամբողջ բանվորական ժամանակը, «թեև այս բանվորական ժամանակի մի մասը, սկզբնապես նույնի դրեթե ամբողջ հավելութային մասն, առաջվա նման հողի սեփականատիրոջն է պատկանում անվճար կերպով, այն տարբերությամբ միայն, որ սա այս մասն այլևս անմիջաբար

---

[1] Կ. Մարքս, Կապիտալ, հատ. III, էջ 332—333։

[2] Նույն տեղում, էջ 333։

իր սեփական բնաձևով չի սահմանում, այլ սահմանում է այն արդյունքի բնաձևով, որում իրանում է բանվորական ժամանակը»[1]։

Ինչպես աշխատանքային, այնպես էլ արդյունքներով ռենտան ենթադրում է բնատնտեսության առկայությունը։ Նա այնուհետև ենթադրում է գյուղական տնայնագործության և արհեստային արտադրության միացումը երկրագործության հետ, այդ է պատճառը, որ արդյունքային ռենտայի մեջ մտնում են նաև արհեստավորների կողմից արտադրված հավելյալ արդյունքների մի մասը։

Այնուհետև արդյունքներով ռենտան չի կլանում գյուղացու ընտանիքի ամբողջ հավելյալ արդյունքը։ Ընդհակառակը, այստեղ արտադրողին, աշխատանքային ռենտայի համեմատությամբ, ավելի մեծ հնարավորություն է տրվում հավելյալ կենսամիջոցներ արտադրելու համար։ Այս ռենտայի ժամանակ ավելի մեծ տարբերություններ են առաջ գալիս նյութական բարիքներ արտադրողների տնտեսական դրության մեջ։ Նյութական բարիքներ արտադրողը այս պայմաններում հնարավորություն է ստանում, «իր հերթին շահագործի ուրիշի աշխատանքն անմիջապես»։

Այսպիսով, արդյունքային ռենտան ստեղծում է տնտեսական նախադրյալներ աշխատանքի հասարակական բաժանման, արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների ավելի ընդարձակման և զարգացման համար, անմիջական արտադրողին տալիս է հնարավորություն ընդարձակել իր տնտեսությունը, արտադրել հավելյալ արդյունքներ ոչ միայն հողատիրոջ, այլ իր սեփական կարիքները բավարարելու և մի մասն էլ շուկա դուրս բերելու համար։

Սակայն ֆեոդալական հասարակարգում անծանոթ չեն նաև այն որոշ դեպքերը, երբ արդյունքներով ռենտան կլանում է գյուղացու ամբողջ հավելյալ արդյունքները։

Արդյունքներով ռենտան, ասում է Մարքսը, «կարող է մի այնպիսի ծավալ ստանալ, որը լրջորեն սպառնում է աշխատանքի պայմանների, բուն իսկ արտադրության միջոցների վերարտադրությունը, ավելի կամ թե պակաս չափով անհնարին է դարձնում արտադրության ընդլայնումը և անմիջական արտադրողներին հարկադրում է բավարարելու կենսամիջոցների ֆիզիկական մինիմումով։ Այս տեղի է ունենում հատկապես այն դեպքում, երբ մի նվաճող առևտրական ազգ է այս ձևը պատրաստի գտնում և շահագործում, ինչպես, օրինակ, անգլիացիները Հնդկաստանում»[2]։

---

[1] Կ. Մարքս. Կապիտալ, հատ. III, էջ 333։

[2] Նույն տեղում, էջ 335։

Այս պայմաններում քայքայվում է գյուղացու անհատական տնտեսությունը, խորանում և սրվում է նյութական և սոցիալական շերտավորումը, գյուղացին կորցնում է իր հողակտորը, արտադրության միջոցները, հանդես են գալիս սեփականազուրկ տնանկներ, վարձկաններ, նվազունքներ, որոնք վարձակալվում են հողատեր ֆեոդալների, հարուստ և կարող համագյուղացիների կողմից։

Աշխարհիկ և հոգևոր ֆեոդալները, վանքերն ու եկեղեցիները ուղղակի և անուղղակի ճանապարհով յուրացնում են գյուղացիների հողակտորները և այն հանձնում են նույն գյուղացուն կոռ քաշելու և արդյունքներով ռենտա վճարելու համար։

Արդյունքներով ռենտայի ժամանակ ֆեոդալ հողատերը գյուղացու հավելյալ արդյունքի յուրացումով չի բավարարվում, նա օգտագործում է իր տրամադրության տակ եղած ջրաղացների, ձիթհանքերի, կամուրջների, արհեստանոցների, գետերի, լճերի, անտառների, հանքերի, ձկնորսարանների, արոտավայրերի մենաշնորհը և ստիպում է, որ գյուղացին վճարի որոշ հարկ այդ ձեռնարկներից և վայրերից օգտվելու համար։

Գյուղացին իր ժամանակի մեծ մասը նվիրում է այն աշխատանքին, որ նա պարտավոր է կատարել իր տիրոջ կալվածներում, նրա հողերի վրա «իսկ մի քանի ազատ ժամերում իր համար կատարած աշխատանքի արդյունքից նա պարտավոր էր վճարել տասանորդ, չինշ, բահրա և այլ վճարներ տիրոջը, հարկեր՝ հօդուտ իշխանի, ռազմական տուրքեր, տեղական և պետական հարկեր... Բացի սովորական կոռային ծառայությունից, իր տիրոջ համար նա պիտի հարդ հավաքեր... փայտ պիտի կտրեր, վայրի կենդանիներին հետամուտ պիտի լիներ, որպեսզի իր տերը հաջողությամբ որսորդություն աներ և այլն։ Ձկնորսության և որսորդության իրավունքը ֆեոդալին էր պատկանում և գյուղացին պարտավոր էր անխռով դիտել, թե ինչպես որսի վայրի կենդանիները փչացնում են նրա ցանքսերի բերքը։ Գրեթե ամեն տեղ տերերը բռնի միջոցներով խլել էին գյուղացիներից համայնական արոտատեղիները և անտառները»[1]։

Ինչպես աշխատանքային, այնպես էլ արդյունքներով վճարված ռենտան անցել է զարգացման տարբեր էտապներ։ Հին Հայաստանում անմիջական նյութական բարիքներ ստեղծողները սեփական շահագործող դասակարգին և օտար նվաճողներին վճարել են միայն հարկեր և տուրքեր, կատարել են ֆեոդալական այլ պարտավորու-

---

[1] Ֆ. Էնգելս. Գյուղացիական պատերազմը Գերմանիայում, Երևան, 1940, էջ 41—42։

թյուններ, իսկ 12—13-րդ դարերում զարգացած ֆեոդալական հարաբերությունների պայմաններում հարկերն ու տուրքերը հանդես են եկել իրենց իսկական առումով և նշանակությամբ, ընդունել են արդյունքներով վճարվող renta-ի իմաստ։

Արքունական կամ պետական հարկ. Հնագույն շրջանից եկած աբբունի հարկերի մասին բազմաթիվ վկայություններ է պահպանել պատմահայր Մ. Խորենացին։

Աբգար Թագավորի Թագավորության երկրորդ տարում, ասում է Խորենացին, «Հարկին Հռոմայեցւոց բոլորովիմբ ամենայն կողմանբըն Հայոց»[1]։

Աբգարը հատուկ դեսպանություն է հղում Մարինոս կայսեր մոտ բացատրելու, որ ինքը արևելք էր գնացել ոչ թե կայսեր դեմ բանակ գտամակերպելու համար, այլ իր եղբայր Արտաշեսի հետ դաշինք կնքելու։ Կայսրը պատասխանում է, որ նա երբեք չի կասկածել Աբգարի հավատարմության վրա, «միայն զի զհարկեալն լրիվ փութացցիս»[2]։ Երվանդ Թագավորի օրոք, շարունակում է պատմիչը. «բարձաւ իշխանութիւնն Հայոց ի Միջագետաց, և հարկս ևս առավելագոյնս տայր ի Հայոց Երուանդ»[3]։

Աբբունի հարկերը հավաքելու համար հռոմայեցիները ստեղծել էին հարկահավաք — գործակալների մի ամբողջ բանակ։ Հռոմեական գործակալները, վկայում է Խորենացին, հաստատվում են Եդեսիա քաղաքում և այստեղ ստեղծում են «զտունս դանձուց հարկացն ժողովելոց ի Հայոց, ի Միջագետաց և յԱսորեստանեաց... Եվ զդիւանն հարկաց... որ կայր ի Սինոպ Պոնտացւոց՝ անդր փոխեն»[4]։

Օգտվելով կայսրության դժվարություններից հայերը հրաժարվել էին հարկեր վճարելուց։ Հռոմեական կայսրությունը հարկային կացությունը վերականգնելու համար ուղարկում է հարկահաններ, որոնք «հատանեն... ի սահմանս Հայոց, զորս մաղթեալ Արտաշիսի և կրկին տուեալ զհարկսն՝ հաշտեցուցանէ»[5]։

Հռոմեական Տրայիանոս կայսրը արշավում է Պարսկաստանի վրա։ Նրա մոտ է ճամպարում Արտաշեսը և «մեծապէս ընծայիւր իջանէ ընդ առաջ նորա, զմեղանս յանձն առեալ, հանդերձ հարկօք

---

[1] Մ. Խորենացի, էջ 143։
[2] Նույն տեղում, էջ 148։
[3] Նույն տեղում, էջ 164։
[4] Նույն տեղում, հմմտ. Եզ. Տարոնեցի, էջ 47։
[5] Նույն տեղում, էջ 175—176։

անցելոց ամացն լինի առաջի նորա»[1]։ Արտաշեսն, ասում է Խորենացին, այս դեպքից հետո «անսայթաք հարկեաց Տրայիանու, և յետ նորա Ադրիանոսի կայսեր զամենայն աւարս իւր»[2]։ Բավական էր, որ հռոմեական բանակը պարտվեր, որպեսզի հարկատու երկրները դադարեին արքունական հարկ վճարելուց։ Երբ հրեաները ապստամբվում են Ադրիանոսի դեմ, օգտվելով այս կացությունից, «ի բաց կացին ի հարկելոյ Հռոմայեցւոց Ասորիք և Միջագետք և Պարսք ամենայն»[3]։

Խորենացին նկարագրելով Արտաշիր թագավորի գործունեությունը, ասում է, որ նա «դեղեցկապէս յարդարեալ զաշխարհս Հայոց ի կարգ առաջին հաստատէր։ Նաև զԱրշակունիսն, զմնկուսացեալսն ի թագէն և յԱյրարատն բնակելոյ, կարգէ ի նոյն տեղիս մտիւք և ոռճկօք, որպէս և էին»։ Այս ձեռնարկումներից հետո, Արտաշիրը «եւ զերկիրս գրով ընդ ճարկաւ իւրով արկանէ»[4]։

Խոսրով թագավորը օգտվելով այն հանգամանքից, թե «ձեռն Շապհոյ Պարսից արքայի ընդ թշնամիսն է՝ լուծանէ զխաղաղութիւնն որ ընդ նմա, և զմասնաւոր հարկսն արդելու ի նմանէ, տալով և զայն կայսեր. և ածելով զլօրս Յունաց՝ ընդդիմանայ արքային Պարսից»[5]։

Այսպիսով, Հայաստանը պետական կամ արքունական հարկեր է վճարել Հռոմեական կայսրությանը, հետո Բյուզանդիային։ Սակայն, հայտնի է, որ Հուստինիանոսի միջոցառումներից հետո Արևմտյան Հայաստանում նախարարական-ֆեոդալական կարգերն ու սիստեմն ապրեցին ծանր օրեր, ընդհակառակը, Նույնիսկ Արշակունիների դինաստիայի անկումից հետո այդ կարգերը դեռ երկար ժամանակ իրենց գոյությունը պահպանեցին Արևելյան կամ Պարսկական Հայաստանում, այդ է պատճառը, որ ֆեոդալական-նախարարական հողատիրության, արքունական և այլ տեսակի հարկերի, հարկային սիստեմի, անմիջական նյութական բարիքներ արտադրողների սոցիալ-տնտեսական գոյավիճակի և սրանց հետ անմիջականորեն առնչվող այլ պրոբլեմների մասին պահպանվել են ավելի բազմաքանակ վկայություններ Հայաստանի այս բաժնի մասին և մենք ավելի մանրամասն քննարկելու ենք հարկային սիստեմը Արևելյան Հայաստանում։

---

[1] Մ. Խորենացի, էջ 185։
[2] Նույն տեղում, էջ 186։
[3] Նույն տեղում, էջ 189։
[4] Նույն տեղում, էջ 216։
[5] Նույն տեղում, էջ 267—268։

Դեռ Հերոդոտը, Քսենոֆոնը, Ստրաբոնը խոսել են բազմաթիվ վկայություններ այն մասին, որ Հայաստանը Պարսկաստանին տալիս պետական հարկ վճարել է գյուղատնտեսական մթերքներ, խոշոր և մանր եղջերավոր անասուններ, ձիեր[1]:

Պարսկական հարկային քաղաքականության հետազոտությունը ցույց է տալիս, որ այնտեղ կային երկու հիմնական և գլխավոր հարկեր՝ հողային հարկ կամ xaradz և գլխահարկ կամ gezith: Պարսկական պետության և տրքունների եկամուտների գլխավոր աղբյուրները Հանդիսանում էին սեփական երկրներից և նվաճված տերիտորիաներից տրքունի դանձարան հոսող հողային հարկը և գլխահարկը:

Պարսկական խոսրով 1-ին թագավորը, օգտագործելով բյուզանդական հարկային սիստեմը, անցկացրեց հարկային ռեֆորմ: Բայց մինչ խոսրով 1-ինի ռեֆորմները, Սասանյան Պարսկաստանում հողային հարկը վճարվում էր բերքի $^1/_3$, $^1/_4$, $^1/_5$, $^1/_6$ մասը, նկատի ունենալով ավյալ հարկատու շրջանի պտղաբերությունը: Տաբարին վկայում է, որ հարկատուները վճարում էին նաև գլխահարկ, այն էլ դրամով[2]:

Դինավերին այլ վկայություն է տալիս. նրա տվյալների համաձայն հողային հարկը հավաքվում էր բերքի $^1/_2$ մինչև $^1/_{10}$ մասը՝ հաշվի առնելով ոչ միայն հողերի պտղաբերությունը, այլև նրանց մոտիկությունը քաղաքին[3]:

Կավադ առաջինի օրոք սկսած և նրա որդի խոսրով 1-ինի օրով ավարտված հարկային ռեֆորմն հետապնդում էր միայն մի նպատակ, կարգավորել հարկերը, գտնել հարկերի նոր աղբյուրներ, հարստացնել պետական դանձարանը:

Իր թագավորության օրոք Կավադը (488—531) հրամայում է կատարել հողերի, լեռների, դաշտերի չափումներ, որպեսզի հնարավոր լինի որոշել հարկերի չափը, հատկապես հողային հարկերը: Մինչ նրա մահը այդ գործը չի ավարտվում և հոր սկսած գործը շարունակում ու ավարտում է նրա որդի խոսրով Անուշիրվանը (531—579 թթ.): Խոսրով 1-ին Անուշիրվանը իր հերթին կարգա-

---

[1] Հերոդոտ, գիրք 3, գլ. 33, Քսենոֆոն, Կիրոպեդիա, գիրք 2, գլ. 14, 22, գիրք 3, գլ. 2, 19—22, Ստրաբոն 3, 14։

[2] Nöldeke, Tabarii, 131.

[3] Н. В. Пигулевская, К вопросу о податной реформе Хосроя Ануширвана (см. ВДИ, 1937, № 1, стр. 146. Ее же, Византия и Иран... стр. 221).

դրում է հաշվի առնել արմավենիների և ձիթենիների ծառատունկերը և նորից վերահամարել «գլուխները», այսինքն մարդկանց, որոնք ենթակա էին գլխահարկի։ Այս հաշվարկից հետո Խոսրով 1-ինը որոշում է հարկերի չափը։ Ամեն մի garib հողից, որտեղ ցանված է եղել դարի կամ ցորենի, պահանջվել է 1 դրամ հողահարկ, մեկ garib խաղողի այգուց՝ 8 դրամ, մեկ garib առվույտից՝ 7 դրամ և և այլն։ Հարկեր էին հավաքվում բրնձի դաշտերից, արմավենիների, ձիթենիների և այլ պտղատու ծառատունկերից[1]։

Բացի հողահարկից գլխահարկ էին վճարում բոլոր նրանք, որոնք 20 տարեկանից ցածր և 50 տարեկանից բարձր չէին։ Յուրաքանչյուր հարկատու անձ պարտավոր էր պետության դանձարանը մուծել 4, 6, 8, 12 դրամ, այս դեպքում հաշվի էր առնվում հարկատուի կարողությունը։

Հարկային այս կայուն չափը որոշելուց հետո Խոսրով 1-ինը կարգադրում է ինչպես հողային, այնպես էլ գլխահարկը մուծել պետական դանձարան տարեկան երեք անգամ, յուրաքանչյուր անգամ սահմանված հարկի 1/3 չափով։

Խոսրով 1-ը իր հարկային նոր սիստեմի անհրաժեշտությունը բացատրել է հետևյալ կերպ. «Այս ուղիով պետական դանձարանին կարվի այն միջոցները, որոնց նա այնքան կարիք ունի, իսկ պատերազմի դեպքում, այլևս անհրաժեշտություն չի լինի ժողովրդին նոր հարկերի ենթարկելու»[2]։

Խոսրով 1-ը ուներ հարկադրման և հարկահավաքման առանձին ինստիտուտ, առանձին գործակալ-տեսուչներ, որոնք բաշխում և հավաքում էին բնակիչների վրա դրված և հողային և գլխահարկը։

Տաբարիի այն ուշադրավ վկայությունը, որ իբր Խոսրով Անուշիրվանի օրոք, այսինքն 6-րդ դ. երկրորդ կեսին, Պարսկաստանում և՛ հողային և գլխահարկը հավաքվել է միայն դրամով, խիստ դասակծելի է թվում։ Ինչպես հայտնի է արաբական բոլոր աղբյուրները միաբերան վկայում են, որ արաբներն իրենց հարկային քաղաքականությունը և հարկադրման ու հարկահավաքման ամբողջ

---

[1] Nöldeke. Tabarī, 241. Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, стр. 484, 485. Н. В. Пигулевская, К вопросу о податной реформе Хосроя Ануширвана, стр. 146—147. Ее же, Византия и Иран... стр. 222—223. Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը... էջ 206—207։ Նույնի, Հայաստանի արքունի հարկերը..., էջ 6—7։

[2] Н. В. Пигулевская, К вопросу о податной реформе Хосроя Ануширвана, стр. 146—147. Ее же, Византия и Иран... стр. 222—223.

սխտեմը առանց փոփոխության վերցրել են պարսիկներից. իսկ հայտնի է, որ արաբների օրոք հարկերը հավաքվում էին և նատուրայով և փողով։ Տաբարու վկայությունները խոսրով 1-ինի հարկային ռեֆորմի և հարկը դրամով հավաքելու մասին, մեզ թվում է ճիշտ չի մեկնաբանված։ Հավանական է, որ ամեն մի garib-ից հավաքվող հարկի չափը գնահատվել է դրամով և գյուղացին դրամի հաշվին ու նրա դիմաց մուծել է դրամով գնահատված, բայց մթերքներով արժեքավորված հարկեր և տուրքեր։

Այս առթիվ մի կողմնակի վկայություն է պահպանել 10-րդ դ. արաբական պատմիչ Իբն-Խորդադբեն։ Իբն-Խորդադբեն վկայում է, որ պարսկական Սավադ նահանգի 12 շրջաններում կային պետական մթերանոցներ (bajadir), որտեղ գալիս էին շրջանի գյուղացիները և բերում, հանձնում էին մթերքներ, որպես հարկ[1]։

Որ արքունի հարկերը Սասանյան Պարսկաստանում վճարվել են նաև նատուրայով, այդ առթիվ մի ուշագրավ վկայություն է պահպանվել Աբ. Խոստովանողի «Վկայք Արևելից»-ի մեջ։

«Գան քեզ պատիւք և պատարագք ի հեռաստանէ և տասանորդք ի շորից կողմանց երկրի։ Ուտես զուրբ արդիւնս կալոց և ըմպես զազնուական գինիս հնձանաց»[2]։ Այս վկայությունը այլևս ոչ մի կասկած չի հարուցում հարկերը նատուրայով վճարելու մասին։

Այսպիսով, մեզ թվում է, անհնար չէր և այն, որ խոսրով 1-ի և նրա նախորդների օրոք հարկերը հավաքվում էին և դրամով և նատուրայով։ Այս փաստը ժխտել չի կարելի։ 5—6-րդ դարերում դեռ դրամը տնտեսության մեջ այնքան խոշոր դեր չէր խաղում, որ Պարսկաստանի բոլոր շրջաններից և բոլոր տեսակի հարկերը հավաքվեին միայն դրամով։

Կ. Մարքսը խոսելով դրամական ռենտայի մասին, մի շարք առթիվներով ասում է, որ «Արդյունքներով ռենտայի փոխարկումը փողային ռենտայի, որը սկզբում կատարվում էր տեղ-տեղ, հետո էլ ավելի կամ թե պակաս չափով մոտենում էր ազգային մասշտաբին... ենթադրում է առևտրի, քաղաքային արդյունաբերության, ընդհանրապես ապրանքային արտադրության և սրա հետ էլ փողային շրջանառության արդեն նշանավոր զարգացում... Արդյունքների շուկայական գին և այն, որ սրանք ծախվում են իրենց արժե-

---

[1] Н. В. Пигулевская, К вопросу о податной реформе Хосроя Ануширвана, стр. 223.

[2] Աբրահամ Խոստովանող, *Վկայք Արևելից*, աշխատ. Գ. Տեր-Մկրտչյանի, Էջմիածին, 1921, էջ 9, (ընդգծումները մերն են—Ս. Հ.)։

քին շատ թե քիչ մոտեցող գնով, մի պարագա, որը ամենևին անհրաժեշտ չէ նախկին ձևերի ժամանակ»[1]։

Պարզ է և միանգամայն հասկանալի, որ 5—6-րդ դարերում ինչպես Պարսկաստանում, այնպես էլ նրան ենթակա որևէ այլ երկրում դեռ չկային զարգացած քաղաքային արտադրություն, շուկայական գներ, որ բոլոր հարկերը հավաքեին դրամով կամ հանդես գար դրամական ռենտան։ Խոսրով 1-ի, ինչպես նաև արաբների օրոք, դրամական հարկերը սոսկ հարկային և ոչ թե դրամական ռենտայի բնույթ ունեին։

Պարսկական արքունիքին վճարած «արքունական» հարկի մասին բազմաթիվ ուղղակի և անուղղակի վկայություններ են պահպանվել հայկական սկզբնաղբյուրներում։

Փ. Բուզանդը նկարագրելով հայ-պարսկական երկարամյա պատերազմները վկայում է, որ «Տային զաշխարհն Հայոց ի ձեռն Սուրենայ և հնազանդէին հրամանաց թագաւորին Պարսից. և կարդէին թագաւորին Պարսից յաշխարհէն Հայոց հարկս՝ տալ ընձայս և պատարագս»։ Այս հարկերը վճարվում էին մթերքներով, անասուններով, արհեստային արտադրության իրերով։ Հայերը ոչ միայն պարտավորվում են վճարել «արքունի» հարկեր, այլև իրենց միջոցներով պահպանել մարզպանի արքունիքը, հոգալ նրա և նրա զորակայանի բոլոր ծախսերը։ «Սոյնպէս և մարզպանին Սուրենայ հասս և կօշիկս և զպիտոյս զռոճկացն, սոյնպէս և տասն հազարացն զարման և կերակուր ըստ պիտոյիցն»[2]։

Այս հատվածում «ռոճիկն», անկասկած հիշատակված է օրապահիկի և պարենի իմաստով, որը տրվում էր կենսամթերքներով։ Այս առումով «ռոճիկը» գործածական է մեր մյուս մատենագիրների մոտ։

Մովսես Խորենացին վկայում է, որ հայոց թագավորները թագի ժառանգներին ուղարկում էին «Ի դաւառն Հաշտենից» մշտական բնակություն հաստատելու և նրանց նվիրում այս գավառի «զշէնս ամենայն, հանդերձ յաւելուածով մտից առանձինն և ռոճկաց կարգելոց յարքունուստ»[3]։

Ղ. Փարպեցին ավելի ուշագրավ վկայություն է թողել այն մասին, որ հայերը պարսիկ մարզպաններին հարկեր էին վճարում կենսամթերքներով։

---

1 Կ. Մարքս, Կապիտալ, հատ. III, էջ 336։

2 Փ. Բուզանդ, էջ 208։

3 Խորենացի, էջ 118, 216, 223 և ուր.։

Պարսիկ մարզպանները դալիս էին Հայաստան «ինաւ... և որդուովք, դրամբ և սիրելովք, ծառայիւք և ազախնեօք»: Այս հոծ բազմությանը կերակրելու, սնունդ և հագուստ մատակարարելու համար հայ գյուղացիները վճարում էին ձրի կենսամթերքներ:

Մարզպանի և սրա հոծ արքունիքը, պարսկական կայազորը, բանակի հրամանատարները, պետական և վարչական ապարատում ծառայող մարդիկ սրպես մորեխ «զաշխարհին ուտեն՝ շատ վատանդ հասանէ աշխարհին մարդկան»[1]:

Պարսկական ռազմատենչ ազնվականությունը, մոգերը, ասում է պատմիչը, «խորհուրդ ի մէջ առեալ... ի հաբկատութեան կացուցանել զաշխարհս Հայոց»[2]:

Հայաստանում, ինչպես և ֆեոդալական բոլոր երկրներում, ֆեոդալական հիերարխիան զուգակցված էր նաև սուզերենի հանդեպ որոշակի պարտավորությունների կատարման հետ:

Այս պարտավորություններն արտահայտվում էին հարկեր վճարելու և զինվորական ծառայության մեջ: Հարկեր չվճարելը կամ զինվորական ծառայությունից խուսափելը դիտվում էր որպես պետական հանցագործություն և պատժվում էր զորական ուժով:

Պատմական սկզբնաղբյուրներում կան միայն մի քանի կողմնակի ցուցումներ, որոնք հիմք են տալիս ենթադրելու, որ հայ նախարարները, կիսանկախ ֆեոդալական իշխանությունները հարկատու էին կենտրոնական պետությանը, լիներ դա ազգային կամ օտար: Հայտնի է, որ Արշակունիների դինաստիայի անկումից հետո Սասանյան Պարսկաստանի գերիշխանության տակ անցած Հայաստանի արևելյան մասերը հարկատու էին պարսկական արքունիքին: Ղազար Փարպեցին վկայում է, որ Վասակ Սյունեցու օրոք Հայաստանը արքունի հարկեր էր վճարում Պարսկաստանին:

«Հարկքս ամենայն աշխարհիս Հայոց առ իս են,— ասում է Վասակը,— և գործակալք ամենայն յիմում ձեռին են»[3]:

Այս հատվածում ակնարկած «գործակալք ամենայն» և «հարկք ամենայն աշխարհիս Հայոց» դարձվածքները ցույց են տալիս, որ պարսկական արքունի հարկերն ու տուրքերը հայ նախարար-ֆեոդալներից հավաքում և արքունիք էր մուծում Հայաստանի մարզպանը իր գործակալ-հարկահանների միջոցով: Աներկբայելի է, որ հայ նախարարները արքունի հարկը հատուցելու համար պետք է

---

[1] Ղ. Փարպեցի. էջ 177—178:

[2] Նույն տեղում, էջ 75:

[3] Նույն տեղում, էջ 83:

հարկեր հավաքելիս նյութական բարիքներ արտադրողներից։ Ղազար Փարպեցին ունի մի այլ ուշագրավ վկայություն։ Հաղկերաց 2-րդը, ասում է պատմիչը, մեղադրում է Վասակ Սյունեցուն այն բանի համար, որ սա պատճառ է դարձել Վարդան Մամիկոնյանի և այլ նախարարների հակապարսկական ապստամբության, որի հետևանքով ինքը զրկվել է ոչ միայն նրանց ծառայությունից, այլև հարկերից, ուստի այդ չվճարած հարկերը պետք է հատուցի ինքը՝ Վասակը։ Հաղկերաց դիմելով Վասակին, ասում է՝ «Եւ զհարկեր... աշխարհին Հայոց... և զկարասին այնչափ զոր հաներ՝ հրամայեցաք խնդրել ի տանէ քումմէ (Վասակի) և յորդւոց քոց՝ մինչև վճարեսցի ամենայն»[1]։

Պարսկական արքունիքը հայ ֆեոդալ նախարարներից հարկեր էր գանձում սրանց տիրույթների և բնակչության քանակի համապատասխան։ Այս էր պատճառը, որ պարսկական Կավադ և Խոսրով թագավորները անցկացրին ոչ միայն հողերի, դաշտերի, այգիների հաշվառում, այլև հարկատու բնակչության մարդահամար՝ հարկերի և տուրքերի չափերը որոշելու համար։ Մովսես Խորենացին պահպանել է վկայություն այն մասին, որ պարսկական արքունիքին հարկատու էին հայ նախարարները։ Հաղկերտի մահից հետո, ասում է Խորենացին, հայ ապստամբ նախարարները ոչնչացնում են Հայաստանի պարսկական կայազորին, սպանում են նրանց զորապետին և իրենք էլ ապաստան գտնում անառիկ ամրոցներում և բերդերում։ Այս պայքարի հետևանքով Հայաստանում մոտ 3 տարի տիրում է անիշխանություն, որի հետևանքով «պակասեալ լինէին հարկք արքունի»[2]։

Հայ նախարար-ֆեոդալները հարկեր էին վճարում ոչ միայն Պարսկաստանին, այլև Արշակունիների ժամանակ՝ Արշակունի թագավորներին։ Նրանց հարկատու էր թագավորության վարչական և քաղաքական կենտրոն Այրարատը, որտեղ կենտրոնացված էին արքունիքի գանձերն ու հարստությունները։ Արշակունի թագավորները բացի Այրարատի սեփական տիրույթներից, ունեին վարչա-ռազմական կենտրոններ նաև Անդեղտանը, Դարանաղի գավառում, Արտագերսում, Դարոյնքում, Տարոնում և այլ վայրերում։ Անտարակույս է, որ այս բերդ-ամրոցները ոչ միայն ռազմական կետեր էին, այլև այդ գավառների վարչական այն կենտրոնները, որտեղ պահեստավորում էին երկրից հավաքված հարկերն ու տուրքերը։

---

[1] Ղ. Փարպեցի, էջ 85։

[2] Մ. Խորենացի, էջ 332։

Արքունի հարկերը կամ արքունի բեկարները, պարհարկները քամում էին անմիջական արտադրողի հավելյալ աշխատանքի և արդյունքների մեծ մասը։ Ղ. Փարպեցին դառը վշտով է նկարագրել հայ ժողովրդի թշվառ, ստրկական դոյավիճակը պարսկական տիրապետության շրջանում։ Հայաստանը բաժանելուց հետո, ասում է պատմիչը, «մատնեալ անկաք ի ստրկութիւն, և խոնարհեալք յանարգութիւն՝ անողորմութեամբ դտեալք ի բաժանումն. այլ և զգեղեցիկ տեղիս հանդստի մերոյ և բնակութեան տեսաք ժառանգեալ անբարհաւաճ և անաստուած ազգին Պարսկաց»[1]։ Պարսկական հարկահանները, գործակալ-վերակացուները «լծով խիստ և անօրէն ծառայութեան Պարսից» դուրս էին կորզում հսկայական չափերի հասած արքունի հարկեր։

Արքունական հարկի մասին բազմաթիվ վկայություններ ունի Եղիշեն։

Հայաստանի բաժանումից հետո, ասում է Եղիշեն, Արշակունի թագավորների և արքունիքի օգտին գանձվող հարկերը հիմա «յարքունիս Պարսկաց երթայր»[2]։

Առանձնապես «արքունի» հարկերն ու տուրքերը ահռելի չափերի են հասնում Հազկերտ 2-րդ պարսկական թագավորի օրոք։ Եղիշեն դառը վշտով է նկարագրում Դենշապուհի չարագործությունների պատմությունը։ Դենշապուհը, Հազկերտ 2-րդի կարգադրությամբ, գալիս է Հայաստան և անցկացնում է աշխարհագիր՝ հարկերի նոր օբյեկտներ հայտնաբերելու նպատակով։ Չնայած նա «խաղաղասէր կեղծաւորութեամբ» է անցկացնում աշխարհագիրը, որպեսզի թեթևացնի հարկերն ու տուրքերը, ֆեոդալական և հայկական «այրեվիս» զինվորական դաժան ծառայությունը, բայց նա «ի ներքոյ խորհուրդ չարագոյն ցուցանէր»։ Ավարտելով հարկային օբյեկտների և հարկատու բնակիչների հաշվառումը, Դենշապուհը նախ հարկի է ենթարկում, մինչև այդ ապահարկ հայ եկեղեցուն, հոգևոր դասերին։ Հարկի է ենթարկում նույնիսկ միայնակյաց քահանաներին և սրանց էլ «աշխարհագրով էարկ»։

Առանց այդ էլ խիստ ծանր հարկերը նա «առաւել ծանրացոյց»։ Սակայն այս չարագործությունների մեջ ամենից չարագույնն այն էր, որ նա հեռացնում է հայ հազարապետին և նրա փոխարեն «պարսիկ ած յաշխարհն, և մեւս ևս մոգպետ դատաւոր աշխարհին»։ Պարսկական հարկահանն ավելի է ծանրացնում հարկերն ու

---

[1] Ղ. Փարպեցի, էջ 8—9։

[2] Եղիշե, էջ 11։

տուրքերը։ «Քանզի,— ամփոփում է պատմիչը,— ուստի արժան էր առնուլ հարիւր դահեկան, նոյնչափ կրկնէին և առնուին, սոյնպէս և եպիսկոպոսաց և երիցանց դնէին, ոչ միայն շինաց՝ այլև ուսերակաց։ Նա բնաւ ո՞վ իսկ կարէ պատմել վասն ծանրութեան մտից և սակից, բաժից և հասից, լերանց և դաշտաց և մայրեաց։ Ոչ ըստ արքունի արժանատրութեանն առնուին, այլ հինաբար յափշտակելով, մինչև ինքեանք իսկ մեծապէս զարմանային՝ թէ ուստի այս ամենայն դանձ ելանէ՝ զիա՞րդ շէն կայցէ աշխարհն Հայաստանեաց»[1]։

Այս անլուր հարկային ծանր լուծը բացատրվում է նրանով, որ Պարսկաստանը Հաղկերտ 2-րդի օրոք ապրում էր նյութական և ֆինանսական շտեսնված դժվարություններ։ Հարկավոր էր և կենսամթերքներով և դրամով վճարվելիք հարկերի նոր օբյեկտներ հայտնաբերել, ինչպես արքունի հսկայական վարչական ապարատի ծախսերը հոգալու, այնպես էլ նվաճողական ակտիվ քաղաքականություն վարելու համար։

Եղիշեն իր աշխատության այլ մասերում մի շարք առիթներով հիշատակում է, որ իսկապես 5-րդ դարում Պարսկաստանին վճարած արքունի հարկերը աճում են շտեսնված չափերով։

Հայ նախարարները դիմելով Հաղկերտ 2-րդին, բողոքում են, որ սրա օրոք «մուտն ու սակն» և «որ այլ ևս էին հարկ աշխարհին, բազմագոյն քան առ հարբն նորա երթայր յարքունիս»[2]։ Հաղկերտը պահանջում է հայ նախարարներից դավանափոխ լինել և ենթարկվել պարսկական գերիշխանությանը, հակառակ դեպքում «Վնաս համարիմ ընդունել ի դանձ արքունի զհարկս աշխարհին ձերոյ...»[3]։ Պարսկաստանին արքունական հարկեր էին վճարում ոչ միայն հայերը, այլև վրացիները, աղվանները։

Աղվանից եպիսկոպոսը դիմում է Վարդան Մամիկոնյանին և խնդրում նրանից, որ օգնի իրենց պարսիկների ասպատակությունները կանխելու համար։ Պարսիկները, ասում է կաթողիկոսը, մեզնից պահանջում են դավանափոխ լինել, որի համար խոստանում են «պարգևս և պատիւս», «թողութիւն հարկացն յարքունուստ լիցի ձեզ», հակառակ պարագային սպառնում են գյուղերում և քաղաքներում շինել ատրուշաններ, ծանրացնել առանց այդ էլ ծանր արքունի հարկերը[4]։

---

[1] Եղիշե, էջ 31, 32։

[2] Նույն տեղում, էջ 58։

[3] Նույն տեղում, էջ 59։

[4] Նույն տեղում, էջ 90։

Հայ ժողովրդի քաղաքական շահերի, դավաճան Վասակ Սյունեցին, ասում է Եղիշեն, ապստամբների մի մասին ոչնչացնում է, մյուսներին դերում է և ուղարկում պարսկական արքունիք որպես ծառա-աղախին։ «Եւ ի վերայ այսր ամենայնի վնասու, և զող ևս դատանէր Հարկի աշխարհին, որ յարքունիսն երթայր»[1]։

451 թ., ինչպես հայտնի է, հայ ժողովուրդը բարձրացնում է ժողովրդա-ազատագրական պայքարի դրոշը։ Ապստամբները քանդում են պարսկական տարուշանները, մոգերի մի մասին ոչնչացնում են, մյուսներին դերում։ Դերի մոգերը մեղադրում են Վասակ Սյունեցուն, ասելով, որ սրա հանցագործ քաղաքականության հետևանքով հայերը «բաղում հարուածք հասցրեցին «ի զօրսն արքունի»։ Վասակը ոչ միայն պատճառ դարձավ պարսկական բանակի կորստյան, այլև ավերեց և գերեց աշխարհն Հայոց և «կորուստ Հարկացն արքունի»[2]։ Նկարագրելով Վասակի բանտարկությունը, Եղիշեն ասում է, որ նա ոչ միայն զրկվել էր կարողությունից, այլև պարսիկները Հայաստանի արքունի այն հարկերը, որոնք չէին վճարված ժողովրդա-ազատագրական պայքարի տարիներին, գրեցին «ի վերայ տան նորա», սակայն նա վճարելով իր ամբողջ կարողությունը, նույնիսկ «արտաս և զղարդս կանանց... ոչ կարաց հատուցանել զպարտսն արքունի»[3]։

Պարսկական արքունիքը ստիպված թեթևացնում է նվաճված երկրների վրա դրված արքունի հարկերը։ Նույն պատմիչը վկայում է, որ Ատրորմիզդ մարզպանը գալիս է Հայաստան «սիրով և խաղաղութեամբ» և հրամայում է «թողուլ... զհարկս աշխարհին, և զայրուձին ևս զարքունի թեթևացոյց առ ժամանակ մի»[4]։ Այս երևույթը պետք է բացատրել երկու հիմնական պատճառով. նախ ծանր հարկերի պատճառով միայն 5-րդ դարում պարսիկների դեմ երկու անգամ ապստամբվում է հայ ժողովուրդը։ Ապստամբներին «սիրաշահելու», ապստամբությունը բնում խեղդելու համար, անհրաժեշտ է, որ պարսիկները պետք է «առ ժամանակ մի» թեթևացնեին արքունի հարկերը։ Այնուհետև պարսկական դաժան հարկային քաղաքականությունն այն աստիճանի էր քայքայել ժողովրդական տնտեսությունը, այնպիսի գոյավիճակի մեջ էր դրել նյութական բարիքներ արտադրողներին, որ սրանք ոչ միայն չէին կարողա-

---

[1] Եղիշե, էջ 173—174։
[2] Նույն տեղում, էջ 174։
[3] Նույն տեղում, էջ 181, հմմտ. Պ. Փարպեցի. էջ 85։
[4] Նույն տեղում, էջ 168—170։

նում վճարել արքունի կոչված հարկերն ու տուրքերը, այլև պա-պանել իրենց թշվառ ֆիզիկական գոյությունը։ Պարսկական պետական եկամուտներն այս պայմաններում սպառվում էին, դանձարանը դատարկվում։

Սակայն այս գրությունը հարատևել չէր կարող։ Բավական էր, որ նյութական բարիքներ արտադրողները վերականգնեին իրենց բայքայված անտեսությունը, որպեսզի և հողային հարկը և գլխահարկը դանձվեր ավելի դաժան և բիրտ ձևերով, քան նախորդ շրջանում։

Այսպիսով, հայ ժողովուրդը պարսկական արքունիքին վճարել է արքունի բաղմաթիվ հարկեր։ Այս հարկը հավաքվել է հողից, այգիներից, խոտհարքներից, դաշտերից և գյուղատնտեսական ու երկրագործական այլ բնույթի օբյեկտներից։

Արքունի հարկի մասին մի շարք վկայություններ կան եկեղեցական ժողովներում մշակված կանոններում։

Ներսես կաթողիկոսի և Ներշապուհ Մամիկոնյան եպիսկոպոսի կողմից հաստատված հինգերորդ կանոնը պատվիրում է զինվորական ծառայության մեջ մտած, պիղծ և տգետ հոգևորականներին զրկել եկեղեցական «մտից» և բաժից, բռնադրավել նրանց հայրենի հող և ջուր» և վճարել որպես «յարքունիս հարկ»[1]։

7-րդ դարի մատենագիր Հովհան Մամիկոնյանն իր «Պատմութիւն Տարօնոյ» աշխատության մեջ տալով Տրդատ թագավորի և հյուսիսային հոների պայքարի պատմությունը, ասում է, որ «թագաւորն հիւսիսոյ ...առաքեաց թուղթ առ Տրդատ... Զի կամ տացես զիշխանսն իմ յիս և հարկս ինգետասան տարու, ապա թէ ոչ՝ քանդեալ զերկիրդ քո սրով և գերութեամբ»[2]։

Այս հարկն, անկասկած, արքունական այն հարկն էր, որ տալիս էր պարավոր պետությունը, որպես ռազմական տուգանք։

Որ գյուղացիները վճարում էին արքունական հարկեր, այդ երևում է նաև Հովհ. Մամիկոնյանի անուղղակի մեկ վկայությունից, որտեղ ասված է, երբ Վահան Մամիկոնյանը դառնում է Հայաստանի մարզպան, մեկնում է Գլակա վանքը և սրա ենթակա գերկոտասան գեղ աղատեաց... ջնջելով զանուանս նոցա յարքունական դիւանէն»[3]։

---

[1] Կանոնգիրք հայոց, էջ 109։
[2] Յովհ. Մամիկոնեան, էջ 133։
[3] Նույն տեղում, էջ 203։

Ակնհայտ է, որ այս 12 գյուղը մինչև վանքին անցնելը գրաված էին արքունական՝ դիվանում և հարկատու էին արքունիքին։ Անցնելով վանքի գերիշխանության տակ, նրանք աղատվում են արքունական հարկից և հարկատու դառնում վանքին։

8-րդ դարում, Պարտավում հրավիրված ժողովում, Սիոն Հայոց կաթողիկոսը մշակել և հաստատել է տալիս բազմաթիվ կանոններ։ Այդ կանոններից մեկում ասված է. «Գեղջ աւագ, որ յաղագս արՄունի հարկաց զդուռն եկեղեցւոյ փակել տայ բռնաւորին... նզովեսցի ի կեանս և ի մահ»[1]։

Հայաստանը արքունական հարկեր էր վճարում ոչ միայն Պարսկաստանին, այլև բյուզանդական կայսրությանը։

Մ. Խորենացին իր պատմության երրորդ գլխում վկայակոչում է «Թուղթ Վաղենտիանոսի առ Արշակ», որտեղ ի միջիայլոց ասված է, որ Արշակը երբեք չպետք է մոռանա այն չարիքները, որ նրան և Հայաստանին հասցրել են պարսիկները։ Դու, ասում է Վաղենտիանոս կայսրը, պետք է հեռանաս պարսիկներից և մոտենաս մեզ, որպեսզի միասին կռվենք նրանց դեմ։ Ապա կայսրը պահանջում է, ասելով, թե Արշակը պարտավոր է «հանդերձ զոհացողական թղթովք մերոց զօրավարացդ առաքեսցես զհարկս աշխարհիդ...»[2]։

Երբ բյուզանդական Թեոդորոս կայսրը, ասում է Խորենացին, իր բանակով արշավեց Հայաստան և հասավ նրա սահմաններին, «զարհուրի Արշակ և առաքէ ընդ առաջ նորա զմեծն Ներսէս, և ի հաշտութիւն մաղթեալ՝ տայ լիով զխափանեալ հարկսն...»[3]։

Ներսես կաթողիկոսին հաջողվում է խաղաղության դաշինք կնքել Թեոդորոսի հետ։ Ներսեսը թախանձում է կայսրին՝ «մի ինչ աշխարհիս մեղանչել, այլ առնուլ զհարկսն և զորդի Արշակայ զՊապ հանդերձ ամենայն նախարարացն որդւովք պատանդս, և դառնալ»[4]։

Պետական, արքունական հարկերի չվճարումը դիտվում էր որպես հանցագործություն։ Շապուհ պարսկական թագավորը չէր կարող հանդուրժել, որ հայերը արքունական հարկը վճարում են բյուզանդացիներին։

Բայց քանի որ Շապուհը զբաղված էր հյուսիսային ցեղերի դեմ պայքարելով, ժամանակավորապես հանդուրժում է այդ կա-

---

[1] Կանոնգիրք հայոց, էջ 172։
[2] Մ. Խորենացի, էջ 278։
[3] Նույն տեղում, էջ 281։
[4] Նույն տեղում, էջ 292։

ցությունը։ Սակայն ավարտելով պատերազմական գործողությունները հայտնում է իր զայրույթը «առ Արշակ, վասն ոչ նմա, այլ կայսեր հարկելոյ զայնքան ամս»[1]։ Արշակի մահից հետո պարսկական բանակը Մեհրուժան Արծրունու առաջնորդությամբ մտնում է Հայաստան։ Մեհրուժան Արծրունին «զեպիսկոպոսս և զքահանայս հարկաց պատճառաւ կապեալ՝ յերկիրն Պարսից տայր տանել»[2]։

Պարսից Վռամ-Կրման թագավորի օրոք, ասում է Խորենացին, հայոց Վռամշապուհ թագավորը «ծառայէր երկոցունց թագաւորացն, տալով հարկս, զմասինն Պարսից Վռամայ, և զմասինն Յունաց՝ Արկադեայ»[3]։

VII դարում վճարված արքունական հարկի մասին վկայություն ունի նաև Ասողիկը։

Սմբատ Բագրատունու օրոք, ասում է Ստ. Տարոնեցին, բյուզանդական Կոստանդին կայսրը կարգադրում է գրել «հրովարտակ ի Հայս՝ հարկել նոցա և յանձն առին իշխանքն նախարարօքն և կաթողիկոսն Ներսէս Շ (500) դահեկան յամենայն ամի հատուցանել»[4]։

Բացի հողային հարկից, ինչպես ցույց է տված վերևում, նյութական բարիքներ արտադրողները վճարել են նաև գլխահարկ։ Գլխահարկ էր գանձվում աշխատունակ բոլոր տղամարդկանցից։

Գլխահարկի մասին ուշագրավ վկայություն է պահպանվել «Դաշանց թղթի» մեջ։ Հայտնի է, որ խաչակիրների երրորդ և չորրորդ արշավանքների ժամանակ խմբագրված մի անվավեր աշխատություն տեղ է գտել Ագաթանգեղոսի պատմության ձեռագիր օրինակներից մեկի մեջ՝ «Դաշանց թուղթ» խորագիր կրող անվան տակ։ Սիրո և միաբանության այդ դաշինքում հանդամանորեն պատմվում է այն մասին, որ Կոստանդին կայսրը և Սեղբեստրոս պապը կնքում են դաշինք Տրդատ 3-րդ թագավորի և Գրիգոր Լուսավորչի հետ։ Մեզ հետաքրքրող հարցի առթիվ այնտեղ ասված է՝ «Արդ եկեղեցի և եկեղեցականք ամենայն դոյիւք իւրեանց ազատ և անհարկ լիցին՝ ամենայն դիմոսական հարկաց արքունի։ Նաև որք ունին զնշան կուսութեան և պարկեշտութեան, արք և կանայք շուխալզեստք և պարեգօտահանդերձք ամենեքեան ազատ լիցին և արքունուստ զգեցցին և զկերակրեսցին... Իսկ համօրէն մարդիկք սեփական ազգաց գաղմատացուցոս ամենեքին անգլխահարկ լիցին... յամենայն վաստակոց իւրեանց հնգեակ տացեն ի դրունս արքունի,

---

[1] Մ. Խորենացի, էջ 285—286։

[2] Նույն տեղում, էջ 301։

[3] Նույն տեղում, էջ 324։

[4] Ստ. Տարոնեցի. էջ 122։

Իսկ այլ ազգ և լեզուք՝ զորս մեծաւ պատերազմաւ հնազանդեցուցաք մեք և հայք. նոքա պարտին մեզ զգինս զլեռոց իւրեանց, բաց ի հնդեկէն։ Եւ ասն մեզ ոսկի և արծաթ ըստ կարի ի տարին Գ անգամ, զարունն ի գլխէ, և յամառն յանասնէ, և աշունն յարդեանց մաէ»[1]։

Բացի այս երկու հիմնական հարկերից, որոնք հայանի էին «արքունի հարկ» անվան տակ, անմիջական արտադրողները վճարել են նաև բազմաթիվ այլ հարկեր՝ «հաս», «սակ», «բաժ», «մուտ»։

Բնականորեն հարց է առաջանում, արդյո՞ք հայ աշխատավոր բնակչությունը, շինականները հարկեր վճարել են հայ Արշակունիներին, հայ արքունիքին։

Մ. Խորենացու և Փ. Բուզանդի մոտ պահպանված կողմնակի վկայությունների ուշադիր քննարկումը ցույց է տալիս, որ սեփական, ինքնուրույն պետության գոյության ժամանակ շինականները հարկատու էին ոչ միայն նախարար-ֆեոդալներին, այլև արքունիքին։

Մ. Խորենացին նկարագրելով Վաղարշակ-Տրդատ թագավորի գործունեությունը, ասում է, որ նա սահմանեց նախարարական կարգեր, նախարարական տներին նվիրեց անթիվ գյուղեր, շեներ, ավաններ։ Այս միջոցառումներից հետո, նա արշավում է հյուսիսային Հայաստանի վրա, անցնում է Պարխար լեռների ստորոտով, Տայքի վրայով դեպի անտառախիտ, մառախլապատ վայրերը, այստեղ կառուցում է արքունական ամրոցներ, անտառախիտ դաշտերը վեր է ածում արքունական որսի վայրի, զարկ է տալիս այգեգործությանը, երկիրը զարգնում է, բուրաստան, ապա իր մոտ է կանչում դեռ վայրի կյանքով ապրող ցեղերի առաջնորդներին, խիստ կերպով պատվիրում է թողնել ավազակությունը «և հրամանաց և հարկաց արքունի հպատակ լինել»[2]։

Այստեղ հիշատակված «հարկաց արքունի» նախադասությունը հնարավորություն է տալիս ենթադրել, որ Արշակունիների օրոք պետության հպատակները հարկեր և տուրքեր են վճարել արքունիքին։ Որ նյութական բարիքներ արտադրողները արքունական հարկեր են վճարել Արշակունիներին, այս մասին են վկայում Խորենացու հետևյալ հատվածները։

Զորս տարի անարգաբար թագավորելուց հետո Շապուհը լուր է ստանում իր հոր՝ Հազկերտի հիվանդության մասին։ Սա մեկ-

---

[1] Ագաթանգեղոս, Գիրք վիպասանութեան, Կ. Պոլիս, 1709, էջ 413—414։
[2] Մ. Խորենացի, էջ 108—109։

նում է Պարսկաստան և իր տեղակալներին ու զորապետին հրամայում է, որ կալանավորեն հայոց մեծամեծ նախարարներին և ուղարկեն Պարսկաստան։ Հայերը օգտվելով Շապուհի բացակայությունից, Ներսես Ճիճրակացու ղեկավարությամբ ապստամբում են, ոչնչացնում են պարսկական կայազորները, սպանում են պարսկական զորահրամանատարին, բայց պարսիկների հետապնդումից խուսափելու համար ցրվում են Հայաստանի անառիկ լեռները։ «Ուստի,— ասում է Խորենացին,— ազմիաւ և բազում խռովութեամբ մնացեալ աշխարհս մեր յանիշխանութեան ամս երիս, աւերեալ ամայանայր. վասն որոյ պակասեալ լինէին հարկք արքունի. և հատեալ ճանապարհք ոտիկաց, և ամենայն բարեկարգութիւն վրդովեալ ապականէր»[1]։

Սահակ կաթողիկոսի հաջորդ Շամուելը հափշտակում է ոչ միայն «եպիսկոպոսացն վիճակի», այլև «հարկացն արքունի հալածականս առնէր, յինքն կորզելով զամենեցուն տունս»[2]։

Արքունի հարկի մասին ուշագրավ վկայություններ է թողել Փ. Բուզանդը. պատմիչը վկայում է, որ երբ ավարտվեց պարսկական երկարամյա պատերազմները, սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը ձեռնարկեց ճնշել այն կենտրոնախույս նախարարներին, որոնք «ապստամբ եղեն ի թագաւորութենէն Արշակունեաց»։

Սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը նախ ճնշում է Ատրպատականի ապստամբությունը, ավերում և ասպատակում է այս գավառը, գերում է բազմաթիվ մարդկանց, իսկ մնացողներին «ի հարկի կացուցանէր»։ Սպարապետը ճնշում է Նոշիրականի ապստամբներին, և «զքնակիչս երկրին ի հարկի ծառայութեան կացուցանէր»։

«Հարկանէր Մուշեղ սպարապետն և զայս գաւառս ապստամբեալս յարքայէն Հայոց՝ զԿորդուս և զԿորդիս և զՏմորիս, առնոյր, գերէր և աւերէր, դնէր հարկ մնացորդացն...»։ Այստեղից Մուշեղը արշավում է «զկողմանսն Մարաց», որովհետև այս գավառն էլ էր ապստամբվել, նա ճնշում է Մարաց ապստամբներին, «Հարկանէր զնոսա մեծապէս, և գերէր զրաստս ի նոցանէն, և մնացորդացն դնէր հարկս...»։ «Մեծաւ պատերազմաւ» հպատակեցնում է նաև «զերկիրն Արցախայ», գերում է բնակիչների մեծ մասը, և «զմնացեալսն ի հարկի կացուցանէր»։ Այնուհետև Մուշեղ Մամիկոնյանը ոտքում է մեծ պատերազմ, «ընդ երկիրն Աղուանից» գրավում է

---

[1] Խորենացի, էջ 332։

[2] Նույն տեղում, էջ 353։

բաղմաթիվ գավառներ՝ «զՈւտի, զՇակաշէն և զձորն Դարպմանայ, զԿողթ և այլ որ շուրջն էին զնովաւ սահմանք գաւառք»։ Սպանում է սպատամբների առաջնորդներին, գերում է բաղմաթիվ գերիներ, իսկ «զմնացորդսն ի հարկի կացուցանէին»։

«Ապա խնդրէր զվրէժն մեծապէս սպարապետն Մուշեղ յերկրէն Պարսից և ի Փայտակարան քաղաքէ... զբազումս ի նոցանէ..... գերէր, և զմնացորդսն ի հարկի կացուցանէր... և անդ ոստիկանս վերակացուս բողոյր»։

Այսուհետև Մուշեղը արշավում է «յերկիրն Աղձնեաց», ձերբակալում է Աղձնեաց բդեշխին, գերում է երկրի բնակիչներին, և «զմնացեալսն ի հարկի կացուցանէր, և վերակացուս և ոստիկանս յերկրին Աղձնեաց բողոյին»։ Մուշեղը ճնշում է Ծոփքում բռնկված ապստամբությունը, և «զազգն ի հարկի կացուցանէր»։

Մուշեղը ասպատակում է արքունի ոստան Անդեղ տունը, բնակիչների մի մասին սրի է քաշում, բայց որովհետև «աշխարհն զի ոստան արքունի լեալ էր վաղ, բնակիչք գաւառին և ինքեանք կային ի հարկի ծառայութեան»։ Անդեղ տան ապստամբությունը ճնշելուց հետո, սպարապետը արշավում է «ի գաւառն Անձևայ» ասպատակում է այս գավառը և «որ շուրջ էին զնովաւ»։ Սպանում է գավառի տիրոջը և «ի հարկի ծառայութեան բազաւորին Հայոց Պապայ զամենեսեան առ հաստատակ կացուցանէր»[1]։

Հիմք ընդունելով այս և այլ կարգի մի շարք վկայություններ, Դուկ. Ինճիճյանը, Ա. Գարագաշյանը, Կ. Կոստանյանցը, Հ. Մուսայելյանը և Խ. Սամուելյանը ենթադրել են, որ հայ նախարարների ծառայության մեջ մտել է նաև հարկային ծառայությունը, որ հայ նախարարները պարտավոր են եղել հարկեր և տուրքեր վճարել Արշակունի թագավորներին[2]։ Սակայն պրոֆ. Ն. Ադոնցը մեկնելով Փ. Բուզանդի վերոհիշյալ վկայությունները, աշխատել է ապացուցել, որ «ի հարկի կացուցանէր» կամ «ի հարկի ծառայութեան կացուցանէր» նշանակել է ոչ թե հարկ դնել — наложить дань, այլ հնազանդեցնել, ստիպել հնազանդվել—привести в подчинение, заставить подчиниться[3]։ Այս մեկնությունը, ինչպես դիպուկ

---

[1] Փ. Բուզանդ, էջ 175—179։

[2] Տե՛ս Դուկ. Ինճիճեան, Հնախօսութիւն..., հ. 2, էջ 88, Ա. Գարագաշեան. Քննական պատմութիւն... մասն 2, էջ 7. Նորայր Բյուզանդացի, Կորիւն վարդապետ և նորին թարգմանութիւնք, Տփխիս, 1900, էջ 367, Հ. Մուսայելյան, Անդրկովկասի հողային պայմանները, էջ 13, Կ. Կոստանեանց, Հիւսուածք, գիրք 3, էջ 28, Խ. Սամուելյան, Մ. Գոշի Դատաստանագիրքը, էջ 38։

[3] Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, стр. 480, ծանոթ. 2։

կերպով նկատել է ակադ. Հ. Մանանդյանը, ճիշտ չէ։ Ակադ. Հ. Մանանդյանը հենված պատմիչի երրորդ և չորրորդ վկայություններում երկու անգամ մատնացույց արված «դներ հարկ մնացորդացն» դարձվածքի վրա, գտել է, որ այս «պարզ համեմատությունից երևում է, որ նվաճված բոլոր շրջանները հարկ էին վճարելու Պապ Յոգավորին»[1]։ Անկասկած է, որ պատմիչի վկայությունների թռուցիկ ուսումնասիրությունը կարող է հիմք տալ ենթադրելու, որ իբր այստեղ խոսքը հնազանդության և ոչ թե հարկատու կացության վերականգնման մասին է։ Սակայն պատմիչի 12 վկայությունների ուշադիր քննարկումը ցույց է տալիս, որ Պապի և Մուշեղ Մամիկոնյանի կողմից զենքի ուժով նվաճած ծայրագավառները, որոնք օգտվելով Երկրի քաղաքական անբարենպաստ կացությունից ապստամբվել էին և դադարել արքունի հարկեր վճարելուց, դարձյալ հարկատու են դառնում։ Պատմիչի յոթերորդ և տասներկուերորդ վկայությունների մեջ ասված է, թե հարկերը հավաքելու և հասարակական հարկադիր աշխատանքները կարգավորելու համար, Մուշեղ սպարապետը նշանակում է վերակացուներ և ոստիկաններ։ Որ Արշակունիներին հպատակ երկրները և արքունական ոստանները վճարել են արքունական կոչված հարկերը, այդ անկասկած է։ Պատմիչն իր տասնմեկերորդ վկայության մեջ ուղղակի ասում է, որ Անգեղտունը վաղ ժամանակից արքունական ոստան էր և սրա բնակիչները «ինքեանք կային ի հարկի ծառայութեան», որ այստեղ հարկատվության վերականգնման անհրաժեշտություն չկար։ Ուրեմն Արշակունիներին հարկեր էին վճարում ոչ միայն նրանց սեփական ոստանի, այլև նվաճած և հպատակեցված շրջանի բնակիչները։

Այսպիսով, շինական-գյուղացիները հարկեր են վճարել ոչ միայն հողատեր ֆեոդալներին, վանքերին և եկեղեցիներին, այլև պետությանը, արքունիքին։ Այս դրույթն ապացուցելու համար կան և այլ վկայություններ։ Սկզբնաղբյուրներում շինականների հարկային պարտավորությունները արտահայտվել են «ընդ հարկօք» կամ «ի հարկի ծառայութիւն» բնորոշ տերմիններով։ «Ընդ հարկօք» կամ «ի հարկի ծառայութիւն» տարբերվել է տարուկների «ի տարկաց կարգի» կամ «ծառայութիւն տարկութեան» և աղնվական դասերի «ի սպասու ծառայութիւն»-ից։ Ինչպես Արևմտյան Եվրոպայի ֆեոդալական կարգերին, այնպես էլ հայկական նախարարական կարգերին հատուկ է եղել վասալական ծառայությունը։

---

1 Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը..., էջ 88։

Հայաստանում էլ «ծառայ», «ծառայութիւն» տերմինները գործ են ածվել զանազան առումով և նշանակությամբ։ Այս տերմինները նախ ցույց են տալիս ֆեոդալական զանազան դասերի վասալական հարաբերությունները։ «Ծառայ» և «ծառայութիւն» էին կոչվում այն բոլոր պարտականությունները, որ ունեին նախարարֆեոդալները Արշակունի թագավորների հանդեպ, ազատները իրենց տեր սյուզերենի հանդեպ, սրանք «ծառայ» են կոչվել միայն վասալական իմաստով։ Այս տերմինները, ինչպես համոզեցուցիչ կերպով ապացուցել է Ն. Ադոնցը, իրենց սոցիալական առումով համապատասխանել են ֆեոդալական Եվրոպայի servus, servitium և ռուսական слуга, служба բառերին[1]։ «Ծառայ», «ծառայութիւն», «ի տարկայ կարգի ծառայութիւն», «ծառայութիւն տարկութեան», «ընդ հարկօք», «ի հարկի ծառայութիւն», «ի սպասու ծառայութիւն», սկզբնաղբյուրներում գործածվել են տարբեր իմաստով։ Եթե ազնվական-նախարարական դասի «ծառայութիւնն» նշանակել է վասալական ծառայություն, վասալական պարտավորություններ և նրա հիմնական էությունը հանդիսացել է զինվորական պարտավորությունները, շինականների «ընդ հարկօք» կամ «ի հարկի ծառայութեան» բուն էությունը հանդիսացել է հարկատվությունը, ֆեոդալական պարհակները ու պարտավորությունները։ Նորայր Բյուզանդացին իր «Կորիւն վարդապետ և նորին թարգմանութիւնք» աշխատության մեջ քննարկելով Փավստոսի վերոհիշյալ վկայությունները «ի հարկի ծառայութեան» մասին, ցույց է տվել, որ կտակարանի հայերեն հին թարգմանության մեջ փոխանակ «ի հարկի ծառայութեան կացուցանեմ» գործածված է «արկանեմ ընդ հարկաւք ծառայութեան» կամ «ածեմ ի հարկատուս»[2]։

Փավստոսը, Ղ. Փարպեցին և մեր մյուս մատենագիրները խիստ զանազանություն են դնում վերոհիշյալ տերմինների միջև։ Ինչպես նկատեցինք, Փ. Բուզանդը հարկատու դասերի հարկային կացությունն արտահայտելու համար միշտ էլ մատնացույց է անում նրանց «ի հարկի ծառայութիւն» կամ «ընդ հարկօք» տերմինները։ Ղազար Փարպեցին ունի «ի հարկի» բառը։ Տալով Արրահամ Խաստովանողի և Խորին Երեցի վարքագրության նկարագիրը, պատմիչը ասում է, որ Հալիերա 2-րդ թագավորը նրանց

---

[1] Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, стр. 459.

[2] Ն. Բյուզանդացի, Կորիւն վարդապետ և նորին թարգմանութիւնք, Տփղիս, 1900, էջ 367, Հմմտ. Աստուածաշունչ մատեան հին և նոր կտակարանաց, Վենետիկ, 1860, Գ. Թագ. գլ. Բ, 21, Բ, Մնաց., գլ. Ը, 8։

ստիպում է կրոնափոխ դառնալ, հակառակ դեպքում «պատուհաս կրեսցեն խեղութեամբ, և երթեալ յԱսորեստան մշակութիւն արասցեն ընդ արքունի մշական և ի հարկի կայցեն մինչև ցվախճան իւրեանց»։

Աբրահամ Խոստովանողը և Խորեն Երեցը հրաժարվում են Հայվերտի ասուաջարկը կատարելուց, թագավորը կարգադրում է կարել երկուսի ականջները և ուղարկել Ասորեստանի Շափուլ գավառը «կալ անդ նոցա ի հարկի և առնել մշակութիւն արքունի»[1]։

Արքունիքին վճարելիք հարկերի մասին ուղղակի վկայություն է պահպանվել Սեբեոսի մոտ։ Պատմիչը տալով Վահան Մամիկոնյանի ղեկավարությամբ ժողովրդա-ազատագրական պայքարի պատմությունը, ասում է, որ այդ ապստամբությունը հաղթականորեն ավարտելուց հետո «Այս Վահան ժողովեաց և զհարկս աշխարհին Հայոց և շինեաց եկեղեցիս մեծամեծս, զոր աւերեալ էր Պարսից ի Վաղարշապատ քաղաք և ի Դվնի և ի Մզբայս և ի բազում տեղիս աշխարհիս Հայոց»[2]։

Աշխատավոր և շահագործվող դասերի սոցիալական ծանր վիճակը խիստ մռայլ գույներով է նկարագրել 7-րդ դարի մատենագիր Հովհ. Մայրագոմեցին։ Մի կողմից, ասում է նա, պարսկական արքունիքի հարկային դաժան քաղաքականությունը, մյուս կողմից հայ նախարարաների, առևտրա-վաշխառուական դասերի շարագործությունները, հետին տնանկության էին հասցրել նյութական բարիքներ արտադրողներին։

Շահագործող և անաշխատ դասերը ցանքս չանելով բերք էին հավաքում. այն ժամանակ, երբ երկրագործ մշակը խաղաղություն, առատություն, անձրև և լիություն էր ցանկանում, վաշխառուն երազում էր սովի, աղքատության, պատերազմների և առավելագույն շահույթների մասին։

Երբ միտքդ ես բերում, շարունակում է հեղինակը, աղքատին և տնանկին, երբ տեսնում ես նրա տառապանքները, թշվառությունները, երբ զգում ես, որ նա քո եղբայրն է և կարիք ունի այն ամենին, ինչ որ դու, երբ տեսնում ես որ նա դաժան կարիքի և սովի ու աղքատության պատճառով թափառում է ամենուր, տափից տոչորվում է, ցրտից դողում, որովայնը դատարկ է, մարմինը մերկ,

---

[1] Ղ. Փարպեցի, էջ 105—106, Հմմտ. նդիշն, էջ 237—238։

[2] Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն, էջ 38։

մաղերը գզգզված, գեմքը թաշնած և դեղնած, հոգիդ տառապում է և ձեռքերդ դողում[1]։

Անմիջական նյութական բարիքներ արտադրողների հարկային դաժան լուծը էլ ավելի ծանրանում է արաբական տիրապետության օրոք։

Արաբական հարկային սիստեմն ու քաղաքականությունը համարյա անփոփոխ կերպով վերցված էր Բյուզանդական կայսրությունից և Սասանյան Պարսկաստանից։ Այսպես, օրինակ, Օմար խալիֆի կողմից սահմանած հարկային սիստեմը հար ու նման էր պարսկական խոսրով Անուշիրվան թագավորի կողմից սահմանած հարկային սիստեմին։ Օմարի հարկային սիստեմի հիմնական նպատակն էր գտնել հարկի ենթակա նոր օբյեկտներ, հարկի ենթարկել գրաված երկրների հողերը, կարգավորել գլխահարկը, ուղղանել «հանցապարտ» ընակիչներին։ Հողային հարկ, «հարկ ըստ գլխոյ մարդթուի» և «հարկ եկամտաց» կար նաև Բյուզանդիայում և Սասանյան Պարսկաստանում։ Բյուզանդիայում այդ հարկերը հայտնի էին tributum capitis և tributum soli, իսկ Պարսկաստանում հողային հարկ, գլխահարկ և եկամտահարկ անունների տակ։ Օմարն առաջին խալիֆն էր, որ սահմանեց արաբների օգտին վճարվելիք հարկերի չափը։ Եգիպտոսում, Ասորիքում, որտեղ շրջանառության մեջ ոսկի դրամն էր, հարկատուները պարտավոր էին յուրաքանչյուրն «ըստ գլխոյ մարդթուի» վճարել չորս դինար, իսկ Միջագետքում, Պարսկաստանում, քանի որ շրջանառության մեջ արծաթյա դրամներն էին, որոշվեց 40 սասանյան արծաթ դրամ որպես գլխահարկ։ Օմարը սահմանեց նաև մի այլ կանոն. ոչ մահմեդական հարկատուները հաշվառման ենթարկվեցին և նրանց պարանոցներից կախ տրվեց հատուկ նշաններ։

Արաբական խալիֆաթը նոր նվաճած երկրների հողերը հարկատվության և հարկեր հավաքելու իմաստով բաժանել էր երկու մասի. ա) Դար-ուլ-իսլամի, մահմեդական հողատերերին պատկանող և բ) Դար-ուլ-հերբի, ոչ մահմեդականներին պատկանող հողեր։

---

[1] Հովհան Մայրագոմեցին, ինչպես վկայում է Սա. Տարոնեցին, թողել է երեք աշխատություն, «անուն միոյն՝ Խրատ վարուց, և անուն միւսոյն՝ Հաւատարմատ, և անուն միւսոյն՝ Նոյեմակ» (էջ 87)։ Մայրագոմեցու «Խրատ վարուց» գիրքը հրատարակվել է Հովհան Մանդակունու «Ճառք» աշխատության մեջ։ Հովհ. Մայրագոմեցու այդ հատվածը մենք քաղել ենք «Տեառն Յովհաննու Մանդակունւոյ Ճառք» աշխատությունից, որը լույս է տեսել Վենետիկում, 1836 թ.։ Այս վկայությունը գտնվում է վերոհիշյալ աշխատության 52—55 էջերում։

Հողատիրության այս ձևերը պայմանավորում էին հարկային սիստեմը։ Դար-ուլ-իսլամի հողեր մշակող գյուղացիները պարտավոր էին վճարելու բերքի մեկ տասներորդ մասը՝ տասանորդ, ուշար, կամ աշար, իսկ երկրորդ կատեգորիայի հողեր մշակող «անհավատները» վճարում էին հողահարկ՝ «խարաջ» և գլխահարկ՝ «ջիզիա»։

Խալիֆաթը հողերի մի մասն էլ հանձնում էր որպես իկթա։ Իկթա հողերն իրենց հերթին ստորաբաժանվում էին 3 կատեգորիա՝ ա) Իկթան հանձնվում էր որպես ժառանգական տիրույթ, բ) որպես վասալական ծառայության հատուցում և գ) հյուսիսներից հարկեր հավաքելու պայմանով։

Բացի այս հարկերից ու տուրքերից խալիֆաթին հպատակ երկրների բնակիչները պարտավոր էին իրենց աշխատամիջոցներով, բաշող ուժով և անձնական աշխատանքով հարկադրաբար մասնակցել պետական և հասարակական բնույթի շինարարական աշխատանքներին—կառուցել ճանապարհներ, կամուրջներ, բերդ-ամրոցներ, անցկացնել ջրանցքներ, ռազմական արշավանքների ժամանակ փոխադրել ռազմամթերքներ, կերակրել պետական պաշտոնյաներին։

Արաբացիների օրոք խալիֆաթի, ոստիկանի, բանակի և պետական ու վարչական ապարատի օգտին գանձվում էին՝ հողային հարկ կամ «հարկ հողոյ»։ Հողային հարկը բաժանված էր երեք հարկի՝ «ըստ չափոյ հողոյն», «ըստ եկամտոյ» և «ըստ կալալոյ»։ Հարկի մյուս տեսակն էր գլխահարկը կամ «հարկ ըստ գլխոյ արանցն, կամ «ըստ գլխոյ»։ Խալիֆաթի հպատակները հարկեր էին հավաքում «ըստ սատացուածոց», տասանորդ՝ «ի նաւաց», հնդյակ՝ «յարդեւայն մեւաղաց և յարօտից», «սակ՝ տանց դրամահատութեան», «հասք՝ մաքսից», «սակ աղահատից և ձկնատեղեաց», «հարկ վասն շինելոյ ի շուկայս և ի հրապարակս քաղաքաց կրպակս», հարկեր ջրաղացներից և գործատներ-արհեստանոցներից, «հարկ յիրաց պահուճանաց», զինվորական ուժերի պահպանման տուրքեր, գետերից և լճերից օգտվելու վճարներ, փրկավճար, մեռելների դագաղներից և գերեզմանատներից որոշ գումար, հասարակական վայրերից, կամուրջներից, առուներից օգտվելու տուրքեր[1]։

Տե՛ս Ղևոնդ, Առաջարան,, էջ ԻԶ և ԻԷ, հմմտ. Բ. Խալաթեանց, Արաբացի Մատենագիրները Հայաստանի մասին, էջ 44. СМОМПК, вып. XXXX, стр. 4. Гофель. Курс мусульманского права, 1886. Kramer A., Culturgeschichte des Orients unter den Chalifen, Bd. I. Wien, 1875, p. 161—178: Հ. Մուսայելյան, Անդրկովկասի հողային պայմանները, էջ 42—44, Հայկական պետական համալսարանի գիտական «Տեղեկագիր», 1927, № 2—3, էջ 342—343։

Ոչ միայն հարկային սիստեմն ու քաղաքականությունը արաբների ժամանակ մնաց անփոփոխ, այլև արաբների պետական-վարչական ապարատը, հարկապահանջության եղանակը, աշխարհագիր անցկացնելու կարգը, չափերն ու կշիռները նվաճած երկրներում թողնվին նույնը։

Արաբ մատենագիրներ Իբն-Խորդադբեհն (820—911 թթ.), Իբն-Հաուկլը (10-րդ դ.), Իբն-Կոդաման (10-րդ դ.), Իբն-Խալդունը թողել են արժանահավատ վկայություններ Արաբական խալիֆաթի հարկային քաղաքականության, պետական եկամուտների և հպատակ երկրներից գանձվող հարկերի և տուրքերի չափի մասին[1]։

Իբն-Խալդունը վկայում է, որ Էլ-Մահդի և Հարուն խալիֆաների ժամանակ, այսինքն 8-րդ դարի վերջին և 9-րդ դարի սկզբին, «Արմինիան»—Հայաստանը, Վրաստանը և Աղվանքը, վճարում էին 13 միլիոն դիրհեմ պետական հարկ։ Մատենագրի տեղեկության համաձայն այդ գումարի կեսից ավելին վճարում էր Հայաստանը։ Համարյա նույն քանակի դրամական հարկեր էին վճարում Հայաստանը 9-րդ դարի 20—50-ական թվականներին։ Համաձայն արաբական մատենագիրներ Կոդամայի և Խորդադբեհի հարկային ցուցակի, Հայաստանը խալիֆաթին վճարում էր 8 միլիոն դիրհեմ։ Բայի դրամական այս ահռելի չափերի հասած գումարից, հայերը վճարում էին նաև «530 բաթլ բակմ (նախշած կերպաս), տաս հազար բաթլ աղած և 10 հազար բաթլ սուրմահի ձուկ, 200 ջորի, 30 նժույգ»[2]։

Ըստ Իբն-Հաուկլի վկայության, հայկական առանձին իշխանությունները և կիսանկախ թագավորությունները վճարում էին՝ Վայքուրը — Վայոց ձորը—50 հազար, Վասպուրականը 100 հազար, (հավանական է բայց է թողնվում վերջին 0—ն, պետք է լինի մեկ միլիոն), Բանու-Սանբատը՝ երկու միլիոն, Սյունիքը մեկ միլիոն և Բագրատունիները երկու միլիոն դիրհեմ հարկ[3]։

Հարկերի այս կիսով չափ նվազացումը չպետք է բացատրել արաբական խալիֆաթի սոսկ «մարդասիրական» քաղաքականությամբ, այլ սոցիալ-քաղաքական ավելի խորը պատճառներով։ Բանն այն էր, որ 9-րդ դարի 50—60-ական թվականներին մի կող-

---

1 Հ. Նալբանդյան, Արաբների հարկային քաղաքականությունը Հայաստանում (տե՛ս ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագիր» № 12, 1954, էջ 83)։

2 Նույն տեղում, էջ 82—83։

3 СМОМПК, вып. XXXVIII, стр. 105.

մից խալիֆաթի ներսում սրված գահակալական և սոցիալական կռիվներն ու շարժումները, մյուս կողմից դարերով ստրկացված և հարստահարված հպատակ ժողովուրդների ժողովրդա-ազատագրական պայքարն ու ապստամբությունները այնքան էին հյուծել, թուլացրել երբմնի հզոր խալիֆաթին, որ նա այլևս անկարող էր վերականգնել հարկերի և տուրքերի նախկին չափը։ Այնուհետև 9-րդ դարի վերջերին և հատկապես 10-րդ դարի սկզբներին ավելի ու ավելի սրվել էր արաբա-բյուզանդական հարաբերությունները։ Արաբա-բյուզանդական երկարատև պայքարից ի վերջո հաղթանակով դուրս եկավ Բյուզանդիան։ Խալիֆաթը զգալով, որ կորցնելու է իր գրաված երկրների մեծ մասը և այդ թվում Անդրկովկասը, բռնեց «սիրաշահման» քաղաքականության ուղին և առաջին հերթին ստիպված իջեցրեց դանձվող հարկերի և տուրքերի չափը։

Արաբական խիստ դաժան հարկային ու վարչական քաղաքականության մասին ավելի ուշադրավ վկայություններ է թողել Աբու-Յուսուֆ-Յաղուբն իր «Քիթաբ-էլ-խարաջ» հայտնի աշխատության մեջ։ Մատենագրի վկայությամբ գլխահարկը պետք է հավաքել բոլոր անհավատներից՝ քրիստոնյաներից, հրեաներից, կրակապաշտներից, սաբիրացիներից, սամարացիներից և ռազմադերի ստրուկներից։ Գլխահարկը վճարվում է յուրաքանչյուր տարի և այն էլ ոչ միայն դրամով, այլև «ուրիշ բաներով»—գրաստներ, տնային կահկարասի և այլ կարգի իրեր։ Գլխահարկի ենթակա էին ոչ միայն գյուղացիները, այլև հոգևորականները և նույնիսկ անապատականները։ Նա խորհուրդ է տալիս հարկեր չվճարողներին ենթարկել ֆիզիկական խոշտանգումների—ծեծել, կանգնեցնել արևի կիզիչ ճառագայթների տակ, պարանոցներից քարեր կամ ջրով լի սափորներ կախել, բանտարկել և բանտից բաց թողնել միայն այն ժամանակ, երբ գլխահարկը կվճարեն։ Հարկի պետք է ենթարկել քաղաքները, ժողովրդական տնտեսության բոլոր օբյեկտները, անհրաժեշտ է նշանակել կառավարիչ-հարկահավաքներ, որոնք պետք է հարկի ենթարկեն բոլոր նրանց, ովքեր զբաղվում են արհեստներով և առևտրով, նույնիսկ բժիշկներին՝ աղատ պրոֆեսիայի տեր մարդկանց։ Յաղուբը տալիս է նաև գլխահարկի չափը։ Ունևոր քաղաքացիներից պետք է հավաքել 48, միջին կարողության տեր մարդկանցից՝ 24, իսկ ովքեր «ձեռքով են աշխատում», այսինքն արհեստավորներից՝ 14 դիրհեմ։

Յաղուբը ցինիկաբար հայտնում է. «Մուսուլմանները այժմ կկերակրվեն զիմիների հաշվին, քանի դեռ կենդանի են, իսկ եթե մենք և նրանք մահանանք, մեր որդիները կկերակրվեն նրանց որ-

դիների հաշվին, ա յնպես որ նրանք կմնան մուսուլմանական կրոնի հպատակ և հարկատու ստրուկներ, քանի դեռ մուսուլմանական կրոնը կմնա գերիշխող»։ Սակայն այս բոլորը չէ։ «Հարկատու վիմիները,— շարունակում է Յաղուբը,— պետք է իրենց արտաքինով էլ տարբերվեն մուսուլմաններից, նրանք պետք է կրեն հատուկ գոտիներ, ոտքերին՝ տրեխներ՝ հատուկ կապերով։ Նրանց բնակարաններն ու շենքերը մահմեդականների շենքերից բարձր չպետք է լինեն, նրանք նոր տաճարներ, եկեղեցիներ չպետք է կառուցեն»[1]։

Մութավաքիլ խալիֆը 849 թ. իր հրովարտակով պահանջում է, որ պետությանն քրիստոնյա հպատակներն իրենց «ասպանդակը» պետք է կառուցեն միայն փայտից, արգելում է նրանց օգտվել մահմեդականների համար կառուցված բաղնիքներից, «այլ լիցեն նոցա բաղնիք իւրեանց առանձինն»։ Այս հպատակները իրավունք չունեին պահելու մահմեդական ծառա և աղախին, նրանք պետք է իրենց հագուստներով և կոշիկներով տարբերվեին մահմեդականներից։ Հրովարտակում ասված էր, որ «ամենայն քրիստոնեայք ի վերոյ զգեստուց իւրեանց արկցեն կապերտ փոքր դեղին գունով և մի զգենուցուն ի ապիտակ, որով խտրեսցին ի մահմեդականաց»։ Քրիստոնյա հպատակները, պետք է «գլխահարկըն ըստ մարդաթուի» կրկնակի վճարեն քան մահմեդականները[2]։

Արաբական հարկային քաղաքականության մասին խիստ ուշադրավ վկայություն է թողել 11-րդ դ. մատենագիր Մավերդին։ «Գլխահարկն ու խարաջը,— ասում է պատմիչը,— երկու իրավունքներ են, որոնց ասված ուղարկել է մուսուլմաններին, որպես պարգև անհավատների նկատմամբ»։ Այս երկու կարգի հարկերը հավաքվում են «անհավատներից յուրաքանչյուր տարի»[3]։

Որ արաբները, հպատակ երկրների բնակիչներից, հարկերի մի մասը և հատկապես գլխահարկը գանձում էին դրամով, այդ առթիվ արժանահավատ վկայություն է թողել Սեբեոսը։

Մարաց իշխաններն ու ժողովուրդը, ասում է պատմիչը, «ապստամբեցան... ի ծառայութենէն Իսմայէլի», սպանեցին «զիշխանն հարկապահանջին արքային Իսմայէլի... Քանզի ոչ կարացին

---

[1] Abou Yousouf Yakoub. Le livre de l'impot foncier (Kitab el-haradj). Traduit et annoté par E. Fagnan. Paris, 1921, p. 159—189.

[2] Վանոնդ, Յառաջաբան,, էջ ԼԹ։

[3] Праволевский, Палестинский сборник, СПБ, 1897, т. XVII, вып. 50, стр. 1229—1230.

համբերել դառն և դժնդակ ծառայութեանն և հարկին ծանրութեանն՝ որ ի վերայ նոցա, զի անդրէն ի նոցանէ միոյ միոյ ամի առնուին 3կն (365) պայուասիկ դրամ»: Թե որքան էր կազմում մեկ պայուասիկ դրամը, դժբախտաբար դժվար է ասել, համապատասխան վկայությունների բացակայության հետևանքով: Բայց պատմիչի այս հատվածի շարունակությունից հետևում է, որ արաբները ապստամբության ծավալը կասեցնելու, ապստամբներին իրենց ենթարկելու համար, երբ զգում են, որ հարկատուները այլևս չեն կարողանում վճարել 365 պայուասիկ հարկը, «առնուին ընդ միոյ միոյ դրամի մարդ մի, և ի բաց բարձին զհնձելութիւն և զիշխանութիւն աշխարհին»[1]:

Այսպիսով, խալիֆայի հպատակները մարդագլուխ վճարել են, որպես գլխահարկ, մեկական դրամ:

Հաշմ խալիֆը (724—742 թթ.), վկայում է Ղևոնդը, իր իշխանության առաջին տարում Հայաստան ուղարկեց Հերթին, որը «...աշխարհագիր առնել ընդ աշխարհս Հայոց վասն ծանրացուցանելոյ զանուր լծոյ ծառայութեան հարկատարութեան ազգի ազգի շարեօք... եւ բազում վտանգ հասուցանէր աշխարհիս, մինչ զի ամենեցուն հատուցել ի վերայ անհանդիստ նեղութեանցն, յորմէ ոչ դոյր ազատել ումեք յանհնարին վտանգիցն: Եւ յայնմհետէ առաւել ծանրացաւ ձեռն նորա ի վերայ աշխարհիս Հայոց»[2]:

Մովսես Կաղանկատվացին նույնպես վկայում է, որ Հերթը 725 թ. կատարում է աշխարհագիր և «...էարկ զմարդ և զանասուն և զբահմանս երկրի ընդ հարկաւ անթիւ ծառայութեան»[3]:

Արաբական խալիֆաթը 8-րդ դարի 50-ական թվականներին ապրում էր սոցիալական և ֆինանսական դժվարությունների մի ժամանակաշրջան. ֆինանսական այդ յուրահատուկ ճգնաժամից դուրս գալու միակ ելքը նա տեսնում էր հարկային դաժան քաղաքականության մեջ: Աբբասյան դինաստիայի հիմնադիր Աբու-Աբբաս-էլ-Սաֆֆահը (750—754 թթ.) Հայաստանի կառավարիչ է նշանակում իր եղբայր Աբու-Ջաֆար-ալ-Մանսուրին:

Ալ-Մանսուրի կառավարման շրջանում հայ ժողովուրդը տառապում է ծանր հարկերի և պարտավորությունների տակ: Ալ-Մանսուրը ոչ միայն ծանրացրեց առանց այդ էլ ծանր հարկերն ու տուրքերը, այլև պահանջեց խալիֆայի գանձարան մուծել ժողո-

---

1 Սեբեոս. էջ 239—240:

2 Ղևոնդ, էջ 100—101:

3 Մովսես Կաղանկատվացի. էջ 368: Հմմտ. Ստ. Տարոնեցի. էջ 128:

վրդա-ազատագրական պայքարի նախորդ 3 տարիների չվճարված հարկերը և ինչպես վկայում է Ղևոնդը, նա հարկեր էր պահանջում նաև մեռած մարդկանցից։

Մրվանի հաջորդ Աբդլա խալիֆը շարունակում է իր նախորդի հարկային քաղաքականությունը։ Ղևոնդ պատմագիրը թողել է ավելի ուշագրավ վկայություն այս խալիֆի հարկային դաժան քաղաքականության մասին։ Պատմագիրը վկայում է, որ Աբդլա խալիֆը Հայաստան է ուղարկում իր եղբայր Աբդլային, որին արաբացիք կոչում էին «հայր դանդի» որովհետև ըստ Ղևոնդի, նա «...ղդանդ առուել քան զԱստուած մեծարէր»։ Այս Աբդլա-դանդը սկսում է անողոք դաժանությամբ հարկի ենթարկել և հարկեր դանձել Հայաստանից։

Խոսքը տանք Ղևոնդին.

«Եւ տիրէ ընդ նորա Աբդլայ, և առաքէ զեղբայր իւր զմիւս Աբդլա շրջել ընդ ամենայն աշխարհս իշխանութեանն իւրոյ։ Որ նախ ելեալ յաշխարհս Հայոց՝ բազում վշտաց և նեղութեամբ վտանգէր զամենեսին և հասուցանէր ի չքաւորութիւն տնանկութեան, մինչև պահանջել հարկս և ի մեռելոցն։ Եւ զամենայն բազմութիւն սրբոց և այրեաց չարալլուկ տառապեցուցանէր. վտանգէր զքահանայս և զպաշտօնեայս տաճարաց՝ խորանին խոշտանգանօք և քքօք այպանութեան և գանիւք՝ ի յայտ ածել զանուանս վախճանելոցն և զընտանիս նոցուն։ Խոշտանգէր և զբնակիչս աշխարհիս բռնադոյն և դառն հարկապահանջութեամբ, առնուլ ըստ դլխոյ բազում զուզէս արծաթոյ և դնել կնիք կապարեայ յամենեցուն պարանոցս»[1]։

Ղևոնդի այս վկայությունը համարյա նույնությամբ պահպանել է Ստ. Տարոնեցին։

Աբդլա ոստիկանը գալով Հայաստան, ասում է պատմիչը, «շրջել ընդ ամենայն աշխարհս իւրոյ իշխանութեանն, առնուլ հարկս ի կենդանեաց և ի մեռելոց ըստ մարդաթուի»[2]։

Այս ոստիկանի չարագործությունները անցնում են ամեն մի չափ ու սահման։ Նա դիմում է ամենադաժան միջոցների անմիջական արտադրողներից հարկեր քամելու համար, շարունակում է պատմիչը, «բազում վշտաց և նեղութեամբ վտանգէր զամենեսեան և հասուցանէր ի չքաւորութիւն»։ Նա ստիպում է քահանաներին հայտ-

---

1 Ղևոնդ, էջ 127, հմմտ. Կ. Դանձակեցի, էջ 67—68։

2 Ստ. Տարոնեցի, էջ 131։

նել մեռած հարկատուների անունները, որպեսզի սրանց չվճարած հարկերը նրանց ընտանիքները «հատուցեն»։

Արդյա խալիֆը Հայաստան է ուղարկում Ծալեհ «անօրէն և արիւնահեղ» հարկահանին։ Ծալեհը այնքան դաժանորեն է հավաքում հարկերը, որ հարկատուների մի մասը փախչում է երկրից, մյուսները ինքնասպան են դառնում, որովհետև «ոչ կարէին յայնժամ այնպիսի նեղութեան տանել»։ Ծալեհը, ասում է պատմիչը, «Պահանջէր և հարկս յաշխարհէն, բաղում տագնապաւ խոշտանգեալ» հարկատուներին[1]։ Դրությունը չի փոխվում Եղիդ ոստիկանի օրոք։ Սրա ժամանակ «յոյժ ծանրացաւ անուր լծոյ հարկապահանջութեան ի վերայ աշխարհիս Հայոց»[2]։

Հողային հարկը և գլխահարկն ավելի են ծանրանում 8-րդ դ. վերջերին՝ առանձնապես Հարուն ալ-Ռաշիդ (786—809 թթ.) խալիֆի օրոք։ Հարուն ալ-Ռաշիդի օրով Հայաստանի ոստիկանն էր Սուլեյմանը, իսկ հարկահանը՝ «անօրէն», «վատթար աղդի», «որդին սատանայի» Իբն-Դոկը։

Իբն-Դոկը կամ Իբն-Դոկեն «եկեալ ի քաղաքն Դուին՝ սաստիկ դմնդակութեամբ խոշտանդէր զբնակիչս աշխարհիս հարկապահանջութեամբ։ Եւ որ ժողովեալ ամենայն նախարարք և ռամիկք հանդերձ եկեղեցականօք և կաթողիկոսին որոյ անուն էր Եսայիաս՝ աղաչէին թեթևացուցանել զանուր ծանրութեան սակին զոր պահանջէր. և ոչ ինչ օգտէին... Որոյ անդէն յղեալ ընդ կողմանս կողմանս աշխարհիս պահանջողս, և տուեալ հրաման՝ կրկին քան զոր ըստ ամին պահանջէին... և տայր կնիք կապարեայ դնել յամենեցուն պարանոցսն. և առ մի կնիք պահանջէր բաղում զուղայս, մինչև հատանել մարդկան ի յետին տնանկութիւն յանհամբեր նեղութեանցն առ ի չարաշուք դահճէն»[3]։

Ստ. Տարոնեցին այս հատվածին ավելացնում է «Եւ երկոտասան հազար մարդ տարագիմ դնացին յաշխարհն Յունաց»[4]։

Ղևոնդը և Ստ. Տարոնեցին վկայում են, որ Հայաստանը հեծում էր արաբական հարկային քաղաքականությունից 3 հիմնական պատճառով։ Արաբները խիստ ծանրացնում են առանց այդ էլ ծանր հարկերը, բնակիչների մեծ մասին հասցնում են ծայրահեղ չքավորության և տնանկության։ Երկրորդ՝ արաբները որոնում և

---

1 Ղևոնդ, էջ 133—134։

2 Նույն տեղում, էջ 135։

3 Նույն տեղում, էջ 167, Ստ. Տարոնեցի, էջ 134։

4 Ստ. Տարոնեցի. էջ 134։ Հմմտ. Կ. Դանձակեցի. էջ 68։

գանում են հարկի ենթակա նոր ազգություններ և հարկի են ենթարկում հասարակական նոր խավերին, ասենք հոգևորականներին, որոնք առաջ ազատ էին և վերջապես երրորդ՝ արաբները հարկերի մեծ մասը գանձում էին զրամով, իսկապես մետաղներով։

Ղևոնդի և մյուս մատենագիրների վկայությունից ակնհայտ է, որ բնահարկից զրամահարկին անցնելը կատարյալ աղետ էր ամբողջ Հայաստանի, նրա հասարակական տարբեր դասերի համար։

Ղևոնդը թողել է բազմաթիվ վկայություններ այն մասին, թե ինչպես հարկատուները շարունակ զրամ, արծաթ էին որոնում արաբների պահանջը հագեցնելու համար։ Ահա այդ վկայություններից միայն մի երկուսը.

«Յույժ սասականայր հեծութիւն աշխարհիս ի պահանջողաց հարկին. քանզի ամենեին նուազեալ էր զիւր արծաթոյ յաշխարհէս Հայոց»։ Հարկատու բնակիչները և նույնիսկ նախարարները,— ասում է Ղևոնդը,— այլևս չէին կարող արծաթ ճարել «վասն զի նուազունք էին»։ Արաբները «զործէին զզաղրագործութիւն և բազմացուցանէին զաղէաս և զհեծութիւնս աշխարհիս... Եւ էս առ այսորիւք արհամարհութիւնք հայրապետաց... զան և խոշտանգանք բահանայից, իշխանաց և նախարարաց քաշանք և քայքայութիւնք... հեծէին և հառաչէին յանհանգուրժելի տագնապէն. Ոանզի զոամիկ բազմութիւն... խոշտանգէին ազգի ազգի շարեօք, զոմանս փոկանարութեամբ լլկէին վասն հարկապանանջութեան դառնապէս, և զոմանս գելարանօք և կախաղանօք, և զոմանս մերկացեալ ի զգեստուցն՝ արկանէին ի մէջ լնից յաւուրս դառնաշունչ ձմերայնոյ, և կարգէին ի վերայ պանապանս, զի շարշարեսցեն զնոսա, և այնպէս շարալրուկ կատանօք կեղէին զկեանս նոցա, զոր պատմել ոչ կարեմք զաղեռիցն պատմութիւն»[1]։

Արաբական հարկային քաղաքականության մասին ուշագրավ վկայություններ ունի Հովհ. Դրասխանակերտցին։

Արաբական արշավանքների և ասպատակությունների հետևանքով, ասում է պատմիչը, «...աշխարհս մեր ծուլացաւ արտասուօք և լցաւ բազում ողբովք»[2]։

Դավիթ Արծրունին, վկայում է պատմիչը, «Այլ և զահ երկիւղի ամիրապետին ոչ զանխրանայր, այլ ըստ ակամայ հարկիցն սակի հաճէր հաւանեցուցանէր պարտավճար լեալ բռնադատին»[3]։

---

[1] Ղևոնդ, *էջ 136—139։*

[2] Հովհ. Դրասխանակերտցի, *էջ 98, 100, 169 և ուր։*

[3] *Նույն տեղում, էջ 324—325։*

Տալով Յուսուֆի աշխարհավեր արշավանքների նկարագիրը, պատմիչը դառը վշտով է նկարագրում հայ ժողովրդի ողբերգական կացությունը, հարկային դաժան լուծը։

Յուսուֆ ոստիկանն արշավանքի է ելնում Անձևացեաց երկրի դեմ։ Այս դավառի Ատոմ իշխանի մոտ դեսպան է ուղարկում, պահանջելով «տալ նմա զսակ հարկացն արքունի»։ Ատոմ իշխանը հնարավոր ասպատակությունից խուսափելու համար «հաստուցանէր նմա ըստ ձեռին բաւականի զմնասս հարկին կրկին յաւելուածով»։

Ատոմը ոչ միայն վճարում է արքունի հարկը կրկնապես, այլև «ընծայս ձեռաձիրս առատապէս պարգևէր՝ և մնացելոցն հարկաց ըստ ծանունս խնդրողին պատանդս յաղատատոհմէ տուեալ լինէր»[1]։ Ստանալով արքունի հարկերը, Յուսուֆը արշավում է Աղբակ դավառի վրա։ Այստեղից նա դիմում է Գագիկ թագավորին և պահանջում է ոչ միայն «զբաղում ամաց զնարկս արքունական՝ այլև զօժտութիւնս ևս ընծայից առանձին հայցէր տալ նմա»։ Գագիկ թագավորը Յուսուֆի պահանջները բավարարելու և պատերազմից խուսափելու նպատակով որոշում է վճարել «զերկրորդն՝ տալ կրկին կամ երեքկին զսակ հարկին և զամենայն բեկարս արքունի»։ Գագիկը Յուսուֆին բավարարելու համար ոչ միայն իր «ստացուածս առջի արկանէր», այլ իր բոլոր մերձավորներից, ազատներից, և «յոտմկաց և յանոտմկաց ժողովեալ արծաթ և ոսկի և կարասիս բազումս և ձիս և ջորիս՝ տայր տանել նմա առատ ձեռաձրիւք...»[2]։ Այս հատվածը մեր առաջ իր ամբողջ լուսությամբ բաց է անում արքունի հարկի իմաստն ու նշանակությունը։ Ուրեմն արքունի հարկը վճարվում էր ոչ միայն ոսկով և արծաթով, այլև կենսամթերքներով, խոշոր և մանր եղջերավոր անասուններով։ Այս վկայությունը հետաքրքրական է նաև մի այլ իմաստով։ Այստեղ ուղղակի մատնացույց է արված, որ արքունի կոչված հարկը վճարում էին ոչ միայն ազատները, այլև ռամիկներն ու ոչ ռամիկները, այսինքն քաղաքային դասերի ստորին խավերը և գյուղացիները։

Արքունի հարկի մասին ուշադրավ տեղեկություններ է տալիս Թ. Արծրունին։ Նա վկայում է, որ Ապուսեթ ոստիկանի Վասպուրականի կատարած արշավանքի հիմնական նպատակն էր «առնուլ հարկս արքունի»։ Աշոտ Արծրունին խնդրում է Ապուսեթին չասպատակել Վասպուրականը և խոստանում է վճարել «արքունի» հարկերը։

«Ընդ նոյն ժամանակս,— ասում է Արծրունին,— յղէ թագաւորն զոմն ի յաւագ նախարարացն վերակացու Հայոց և հաստատիմ

---

[1] Հովհ. Դրասխանակերտցի, էջ 328—329։

[2] Նույն տեղում, էջ 328—330։

ի վերայ հարկաց արքունի Ապուսէթ անուամբ...»[1]։ Աշոտ Արծրունին և Բագրատ Բագրատունին կանխում են Ապուսէթի ասպատակությունները և տալիս են «զհարկս և հասս արքունի և դարձուցանեն զնա ընդ նոյն ուստի եկն»[2]։

Արքունի հարկերի վերակացու Ապուսէթին հաջորդում է Մուսե ոստիկանը։ Պատմիչը սրան կոչում է «հարկաց արքունի» վերակացու։ Ինչպես Ապուսէթը վերադարձել էր Ասորիք, սակայն սրա կարգադրությամբ Ալա հարկահանը պետք է մնար Հայաստանում այնքան ժամանակ, «մինչև ցբովանդակ զհարկս և զհասս արքունի յամենայն կողմանցն Հայոց առ նա բերցեն յիւրաքանչիւր սահմանաց»[3]։ Վասպուրականի իշխանները, ամենայն հավանականությամբ, հրաժարվել էին «արքունի» հարկեր վճարելուց, որովհետև Մուսե զորավարը և Ալա ամիրան ասպատակում են «ընդ կողմանս կողմանս յերկիրն Վասպուրական», գերում և ավերում են, հափշտակում են բնակիչների ինչքը և ստացվածքը։

Աշոտ Արծրունին բողոքում է այս արարքի դեմ՝ ասելով «Ելեր զու յաշխարհս Հայոց հրամանաւ արքունի՝ առնուլ զնարկս արքունի. մի՞թէ և հրաման ունիս յարքունուստ գերել, գերիսել յաւեր դարձուցանել զաշխարհս մեր»[4]։ Մենք, ասում է Աշոտը, երբեք չենք հրաժարվել «հարկաց արքունի» վճարելուց և խոստանում ենք ձեզ նույնպես «տացուք... հարկաց արքունի»[5]։

Ատրպատականի Էմիր Յուսուֆն արշավում է Սմբատ Բագրատունու վրա «վասն բեկանելոյ նորա զնարկս արքունի»[6], սակայն Սմբատը «ոչ խնդրեաց երթալ զհետ խաղաղութեան, տալ զնարկս արքունի»[7]։

Արաբական «արքունի հարկերը» հավաքում էին ոչ միայն ոստիկանները, հարկահանները, արքունական հարկերի հսկիչ տեսուչները, այլև խալիֆաթի գերիշխանության ենթակա հայ իշխանները և նույնիսկ թագավորները։

Դավիթ Արծրունին, ասում է Թ. Արծրունին, երբ կարգվում է «ի վերայ Հայաստանեայց» թագավոր, խալիֆաթը ստիպված առա-

---

[1] Թ. Արծրունի, էջ 107։
[2] Նույն տեղում, էջ 108։
[3] Նույն տեղում, էջ 111։
[4] Նույն տեղում, էջ 111։
[5] Նույն տեղում, էջ 111։
[6] Նույն տեղում, էջ 283։
[7] Նույն տեղում, էջ 284։

քում է նրան թագ և «հանդերձս զարդուց զարմանալիս և յանձն առնել նմա զհարկս արքունի»[1]։

Վարդան Բարձրբերդցին ավելի մռայլ գույներով է նկարագրում արաբ հարկահանների չարագործությունները։ Վարդանը սրանց կոչում է «դառը նեղիչ»-ներ, «կատաղի»-ներ[2]։

Արաբական խալիֆաթի խիստ ու դաժան հարկային քաղաքականության մասին վկայություններ են պահպանվել նաև ձեռագիր աղբյուրներում և օտար մատենագիրների մոտ։

Պետական Մատենադարանում պահպանված № 8507 ձեռագրում դառը վշտով է նկարագրվում քրիստոնյա հարկատուների թշվառ գոյավիճակը Ջաֆար ամիրայի օրոք։

Ջաֆարն, ասված է ձեռագրում, ձեռնարկում է շինել Բաղդատը, որի համար նա բաղում «ճշդիւ հարկս էառ ի քրիստոնէից, մինչև նեղայնալ բառնային զգերեզմանս մեռելոց և թէ մնացեալ էր գինդ կամ մատանի հետ սիրեկան մեռելի, զայն առնուին և տային ի հարկն և ոչ վճարէին»[3]։ Այս վկայությունը բավականին ընդարձակ ձևով հաղորդում է Միքայել Ասորին իր ժամանակագրության ասորական բնագրում։ Աբու Ջաֆարը, ասում է ժամանակագրության հեղինակը, Բաբելոնից մեկնում է Միջագետք, Սիրիա և Պաղեստին։ Նա Ջեզիրեյում կառավարիչ է նշանակում Մուսաբի որդի հրեա Մանուային, իսկ Քենեշրինում՝ Սուլեյմանի որդի Մուսային. «երկուսն էլ անդուութ և անօրեն»։ Ջաֆարն ամբողջ արծաթն ու ոսկին հավաքում էր իր գանձարանում, այնպես, որ ոչ մի դինար և զուզա չէր երևում, բացի վաճառականների մոտ եղածից։

Կարիքը մարդկանց ստիպեց մեռելների գերեզմանները պեղել և պղծել նրանց փոշին։ Նրանք (մարդիկ, հարկատուները) նրանց (մեռելների) փոշիները լցնում էին ջրի մեջ՝ ջոկելու համար ոսկին, արծաթը կամ ուրիշ այլ թանկագին քարեր, որպեսզի հարկապահանջներին տային հարկի փոխարեն[4]։

Նույն պատմիչի վկայությամբ հարկերն այնքան ծանր էին, որ հարկատուները հասել էին հետին տանկության և հարկահավաքների պահանջները բավարարելու համար ստիպված վաճառում էին

---

1 Թ. Արծրունի, էջ 286։

2 Վարդան Բարձրբերդցի, էջ 103։

3 Ձեռագիր № 8507, էջ 244։

4 Տե՛ս Chronique de Michel le Syrien, fascicule, I, Paris, 1901, հմմտ. Միքայել Ասորի, ժամանակագրություն, 1870, էջ 362—363. 1871, էջ 352, հմմտ. նաև էջ 147, 183 և ուր.։

«զէշ և զեղն ընդ միոյ և զտղայս ընդ հինգ դրամի, զի տացեն հարկս պահանջողացն»[1]:

Այս բոլոր միջոցառումները ժողովրդի դրությունը դարձնում են ողբերգական, ինչքան շատ էին վճարում հարկատուները, այնքան ավելի շատ էին պահանջում հարկահավաքները: Արաբական հարկերից ազատվելու համար միակ ելքը կամ մասսայական փախուստն էր, կամ բացահայտ ապստամբությունը, կամ ինքնասպանությունը:

Արաբական խալիֆաթին հարկավոր էին միջոցներ և այդ միջոցները պետք է հայթայթվեին ամեն գնով: Հարկատուն եթե հրաժարվում էր հարկից, բանտարկվում էին նրա գույքը, հարկատուները, ինչպես վկայում է պատմիչը, «ոչ զատանէին զգինս փրկանաց անձին իւրեանց», իսկ հարկահավաքները «չար կատանօք գելարանօք և կախաղանօք և զառն տանջանօք կեղէին զկեանս մարդկան»: Արաբներից ազատվելու համար հայերի մի մասը «ձիւնահեղձ և զետավեժ լինէին վասն անտանելի աղետից»:

Այս մասսայական աղետի և դժբախտությունների պատճառը Ղևոնդն իրապես համարում է այն, որ արաբները հարկը պահանջում էին դրամով «ըստ գլխոյ»:

Ստ. Տարոնեցին, Կ. Գանձակեցին հաստատում են Ղևոնդի այն վկայությունը, ուր ասված է, որ արաբները հարկերը հավաքում էին սկզբից «ըստ երդոյ», «ի տանէ», իսկ 3-րդ դարից սկսած՝ «ըստ գլխոյ», կամ «ըստ մարդաթուի»[2]:

Կ. Գանձակեցին նույնպես հաստատում է այս վկայությունը: Մահմեդի օրոք, վկայում է պատմիչը, արաբները «յամենայն տանէ տուեալ չորս դրամ և երեք մոթ խորբալ՝ որ է ցորեան, և ձրոյ տօպրակ մի և պարան մի մաղէ և ձեթնարար մի»[3]:

Այսպիսով, արաբական հարկային քաղաքականությունը ընդգրկում է պատմական երկու շրջան: Սկսած 7-րդ դ. 50-ական թվականներից մինչև 8-րդ դ. առաջին քառորդը նրանք հարկերը հավաքում էին «ըստ երդոյ», կամ «ի տանէ» և այն էլ բնամթերքով-հարկն էր բացառված նաև այն հանգամանքը, որ այս շրջանում էլ հարկերի մի, բայց ոչ գերազանց մասը, վճարվել է նաև դրամով, իսկ 8-րդ դ. առաջին քառորդից հետո, մինչև 9-րդ դ. 70-ական

---

[1] Մ. Ասողիկ, *Ժամանակագրութիւն*, էջ 363։
Ստ. Տարոնեցի, էջ 133։

[3] Կ. Գանձակեցի, էջ 57—58, հմմտ. Մ. Կաղանկատուացի, էջ 368, Սամուել Անեցի, էջ 82, Գ. Հովսեփյան, *Հիշատակարան...*, 207, 950—992, Բ. Խալաթյանց. *Արարատի մասնագիրները*, էջ 44, 80, 88։

թվականները՝ «ըստ գլխոյ» կամ «ըստ մարդաթուի», կամ «ըստ գլուխս արանց»։ Այս երկրորդ շրջանում հարկերի մեծ մասը հավաքվում էր դրամով, իսկ սա էլ իր հերթին չէր բացառում այն հանգամանքը, որ դրամական հարկերի հետ արաբները հարկերի մի մասն էլ հավաքում էին բնամթերքով։

Հայաստանի դրությունն առանձնապես ողբերգական է դառնում Յուսուֆ ոստիկանի օրոք։ Սմբատ թագավորը սրա օրոք հարկեր է վճարում ոչ միայն խալիֆաթին, այլև իրեն՝ ոստիկանին։ Արաբները հարկերի չափը այնքան են բարձրացնում, որ Սմբատը մի քանի անգամ ավելի շատ հարկեր է հավաքում, քան նրա նախորդները։ Այս առիթով Հովհ. Դրասխանակերտցին գրում է. «Եւ ապա ընդ բոլոր աշխարհս տէրութեան իւրոյ հինգերորդել հրամայէ զամենայն երամակս ձիոց և զանդեայս արջառոց և զհօտս ոչխարաց՝ և տալ ի ղրադատ տուգանս սակին...»[1]։ Հարկերն այնքան ծանր էին, որ հարկատուները «զսպանութեան խորհուրդ՝ խորհէին արքայի»։

Բացի արքունական հարկերից, հայերը պարտավոր էին ոստիկանին «նվեր» տալ ձիեր, ջորիներ, ղենքեր, նաև «դանձս ոսկոյ և արծաթոյ»։

Արդ, ինչո՞վ է բացատրվում երկրի տնտեսական քայքայումը, դրամի և արծաթի հատնումը, ժողովրդական մասսաների մասսայական աղքատությունը։ Այդ հարցի պատասխանը տվել է Կ. Մարքսը։

Կ. Մարքսը Հռոմեական կայսրության և Ֆրանսիայի օրինակով ցույց է տվել, որ երբ ապրանքային և դրամական տնտեսությունները դեռ բավականաչափ զարգացած չեն, բնահարկից դրամային հարկին անցնելը միշտ էլ խորապես ցնցում և քայքայում է ամբողջ ժողովրդական տնտեսությունը։

«Թէ այսպիսի փոխակերպության հնարավորությունը (այսինքն՝ բնահարկից դրամահարկին անցնելը—Ս. Հ.) որքան է կախված արտադրության պրոցեսի ընդհանուր բնույթից, ցույց է տալիս, օրինակ, Հռոմեական կայսրության՝ բոլոր հարկերը փողով դանձելու երկու անգամ ձախողված փորձը։ Ֆրանսիական գյուղացիության սարսափելի աղքատությունը Լյուդովիկոս XIV-ի ժամանակ, որն այնպես պերճախոս նշավակել են Բուագիլբերը, Մարշալ Վոբանը և ուրիշները առաջացել էր ոչ միայն հարկերի բարձրու-

1 Հովհ. Դրասխանակերտցի, էջ 205։

1131—24

թյունից, այլև նատուրալ հարկերը փողային հարկեր դարձնելուց»[1]։

Անենք, արարները իրենք էլ էին զգում դրամական հարկերի աղետաբեր հետևանքները, ինչպես խալիֆաթի, այնպես էլ նրան հպատակ երկրների համար։

Յաղուբն առաջարկում է խալիֆային վերադառնալ հարկերի գանձման բնամթերային հին ձևին։ Նա առաջարկում է դրամով վճարվելիք mukasame-ն փոխել բնամթերքներով վճարվելիք wozife-ով, որը և ավելի շահավետ էր պետական գանձարանին և ավելի թեթև հարկատուների համար. նա գտնում է, որ բնամթերքով վճարվելիք հարկերի ժամանակ հարկատուն կազատվի հարկահավաքների, դրծակալների, ձեռնավորների, կառավարիչների, առևտրականների չարաշահություններից։

Վկայակոչելով Օմարին, խրախուսելով նրա հարկային քաղաքականությունը, Յաղուբը նշում է, որ հարկատուները դրամական հարկի պայմաններում այնպես են քայքայվել, որ նրանց հողերն այլևս իրենց կերակրել չեն կարող. նա պահանջում է պետությանը հանձնել ցորենի և գարու 2/5 մասը, անջրդի հողերի բերքից վերցնել 3/10, իսկ այգիներից նրանց բերքի 1/4 մասը։

Յաղուբը սահմանել է նաև անասնահարկի չափը՝ 1—120 ոչխար ունեցողը պետք է վճարի մեկ ոչխար, 120—200՝ երկու, 200—300՝ երեք, հետագա ամեն մի հարյուրից՝ դարձյալ մեկ ոչխար կամ այծ։

Այս երևույթը տեղի ունեցավ նաև Հայաստանում, արարների տիրապետության երկրորդ շրջանում, երբ ապրանքային թույլ զարգացած տնտեսության, քաղաքների և քաղաքային կյանքի, ապրանքափոխանակության և դրամական անհամեմատ ցածր մակարդակի պայմաններում արարները բնահարկից անցան դրամական հարկի։

Արաբական խալիֆաթի անկումից հետո, «արքունական հարկի» մենաշնորհն անցնում է Բագրատունիներին։

Եթե նախորդ շրջանում «արքունական հարկը» իր մեջ իմաստավորում էր միայն հարկերն ու տուրքերը, ապա զարգացած ֆեոդալական արտադրական հարաբերությունների, արտադրության ֆեոդալական եղանակի տիրապետության պայմաններում արդյունքային ռենտան հանդես է գալիս իր իսկական առումով։

---

[1] Կ. Մարքս, Կապիտալ, առաջին հատոր, Երևան, 1954, էջ 151։

12—13-րդ դարերում արագ թափով աճում է հողի ֆեոդալական մասնավոր սեփականությունը: Երկրի արտադրողական ուժերը այս շրջանում ապրում են նոր վերելք: Խորանում է աշխատանքի հասարակական բաժանումը, կատարելագործվում է երկրագործական տեխնիկան: Գյուղատնտեսության մեջ մուտք է գործում ծանր երկաթյա խոփով և հատուկ ձևիչով դուբանը:

Ֆեոդալ-հողատերերը, վանքերն ու եկեղեցիները ավելի շատ արդյունքային ունենա սատանալու համար անցկացնում են արհեստական ջրանցքներ, առուներ. վարելահողերը, դաշտերը, այգիները մաքրում են մոլախոտերից, դաշտ են փոխադրում պարարտանյութեր, տնկում են պտղատու ծառեր, զարկ են տալիս տեխնիկական կուլտուրաների՝ բամբակի, կանեփի, կտավհատի մշակույթին:

Երկրի էկոնոմիկայում տեղի ունեցած փոփոխություններն ու տեղաշարժերը ստեղծում են անհրաժեշտ բարենպաստ պայմաններ քաղաքների, քաղաքային կյանքի, արհեստային արտադրության, ապրանքափոխանակության, դրամական շրջանառության, ապրանքային արտադրության, շուկայական կապերի և՛ խորացման և՛ ընդարձակման համար: Ժողովրդական տնտեսությունն ապրանքայնացման է ենթարկվում և նրա գերակշիռ մասն արդեն արտադրվում է շուկայի համար: Պատմական այս էպոխայում հանդես են գալիս հողատիրության նոր ձևեր: Ֆեոդալական, վանական, եկեղեցական՝ «հայրենիք», «պարգևականք» հողերի կողքին հանդես են գալիս «քսակագինք», «արծաթագինք», «դրամագինք» հողերը:

Ֆեոդալական և գյուղական համայնքների հողերի մի զգալի մասն անցնում է առևտրական-վաշխառուական դասին պատկանող նոր խավի ձեռքը:

Անկասկած է, որ արդյունքներով վճարվող ռենտան, այս պայմաններում, ապրում է զարգացման նոր շրջան և հանդիսանում է հողային ռենտայի տիրապետող ձևը:

Մատենագրական տարբեր բնույթի աղբյուրների, ձեռագիր հիշատակարանների, վիմական արձանագրությունների, կանոնական որոշումների, դատաստանագրքերի, կալվածագրերի, քաղաքական և գեղարվեստական գրականության և այլ սկզբնաղբյուրների ուշադիր հետազոտությունը և բաղդատումը հնարավորություններ է տալիս ապացուցել, որ 10—13-րդ դարերում պետական-արքունական, իշխանական-ֆեոդալական, վանքական և եկեղեցական «հայրենիք», «պարգևականք», «քսակագինք», «դրամագինք», «հալալ ընչիք» կալված-տիրույթների վրա նստած,

մասամբ հողին ամրացված և գերազանցապես հարկատու նյութական բարիքներ արտադրողները վճարում էին շուրջ 30 տեսակի հարկեր, կատարում էին ֆեոդալական պարհարկներ և պարտավորություններ։

Բագրատունիների տիրապետության էպոխայում անմիջական արտադրողները հարկադիր կերպով վճարել են արքունական կոչված հարկը թե արդյունքներով և թե դրամով։

Հովհ. Դրասխանակերտցին նկարագրելով Սմբատ Բագրատունի թագավորի և արաբական Ափշին ոստիկանի մեջ բորբոքված պատերազմական գործողությունների պատմությունը, վկայում է, որ երբ Ափշինը թողնում է Հայաստանն ու շարժվում Ատրպատական, նրան կրնկակոխ հետապնդում է Սմբատը և հասնում Դվին։ Թագավորը շրջապատում է Դվինը։ Դվինի արաբ զորավարներ Մահմեդն ու Ոսման չեն ցանկանում քաղաքը հանձնել թագավորին։ Երբ Սմբատը համոզվեց, որ սրանք չեն ցանկանում հանձնվել և ոչ էլ հնազանդվել «ի ծառայութիւն ինքեան և զսակ արքունի հարկաց և մաքսից նուազեցուցեալ...»[1], հարձակվում և գրավում է քաղաքը։ Անկասկած է, որ Դվինը գրավելուց հետո արքունի հարկ—սակի և մաքսի մենաշնորհը անցնում է Սմբատին։ Գագիկ Արծրունին որոշում է պատժել «այլոց խժականաց և անզգեստից առեցողացն», իր թագավորության հյուսիսային սահմանների վրա բնակվող այն ցեղերին, որոնք ապստամբվել և չէին ցանկանում արքունական հարկ վճարել։

Գագիկ Արծրունին ռազմական ուժով ճնշում է սրանց դիմադրությունը և «ի դիմի հարեալ՝ ի հարկէ յոտին կացուցանէր»[2]։ Նույն պատմիչն ասում է, թե «ոմանք և հեթանոսք ի բնակչաց տեղւոյն հողագործ մշակութեան պարապեալ՝ և հարկս մեզ հարկէին»[3]։

Ստ. Տարոնեցին թողել է ավելի ուշագրավ վկայություններ արքունական վճարվող հարկերի մասին։ Գագիկ Բագրատունի թագավորը, գրել է պատմիչը, տիրում է «յոլով բերդից և գաւառաց ի սահմանացն Վայոց ձորոյ, Խաչենոյ և Փառիսոսոյ՝ առաւել քան զեղբայր իւր»։ Այս գրված տերիտորիայի բնակիչներին ազատում է պետության օգտին գանձվող «զբաժ հարկաց»[4]։

---

[1] Հովհ. Դրասխանակերտցի, էջ 160։
[2] Նույն տեղում, էջ 324։
[3] Նույն տեղում, էջ 348։
[4] Ստ. Տարոնեցի. էջ 256։

Բագրատունիներին տրքունական և պետական հարկեր էին վճարում ոչ միայն իրենց գերիշխանության տակ գտնվող նյութական բարիքներ արտադրողները, այլև կիսանկախ ֆեոդալական ինքնուրույն իշխանությունները։ Որ Բագրատունիների գերիշխանությունը ճանաչած մանր թագավորությունները հարկատու էին կենտրոնական պետությանը, այս մասին ուշագրավ վկայություններ ունի Թ. Արծրունին։

Սմբատ Բագրատունու թագավորության երկրորդ տարում «ի բաց եկաց,— ասում է Արծրունին,— ի հնազանդութենէ թագաւորին Հայոց» Սյունիքի Սմբատ իշխանը։ Աշոտ Բագրատունու դեմ պայքարելու, պետական հարկեր չվճարելու համար, Սյունիքի իշխանը սկսում է բանակցություններ կայսրիկների հետ և խոստանում է նրանց վճարել «զհարկս և զհասս»։ Ստանալով կայսրիկներից օգնություն, Սմբատ իշխանը 10.000-անոց բանակով արշավանքի է ելնում և բանակ է դնում Վայոց ձորի մոտ։ Սմբատ Բագրատունին դիմում է Արծրունյաց Աշոտ իշխանին, խնդրում է սրա օգնությունը և խոստանում է «տալ նմա քաղաքս, գաւառս, գեօղս և ապարակս» եթե նա համաձայնի օգնել իրեն։

Վասպուրականի իշխանը դիմում է Սմբատ իշխանին և համոզում, որ նրա ապստամբությունը թագավորի դեմ անօգուտ է, անմտություն։ Նա համոզում է ապստամբ իշխանին և թագավորին՝ խաղաղության դաշինք կնքել։ Սմբատ թագավորը համաձայնվում է միայն մի պայմանով, որ Սմբատ իշխանը վճարի արքունական հարկերը։ Թագավորի այս պահանջը կատարելու համար, նրա մոտ է գալիս Սմբատ իշխանի Սահակ եղբայրը «ընդ իւր բերելով զհարկսն»[1]։

Սկզբնաղբյուրներում պահպանվել են այլ վկայություններ վասալների կողմից Բագրատունի թագավորներին վճարված հարկերի և տուրքերի մասին։ Թովմա Արծրունին տալով Ապահունիքի կայսրիկների իշխան՝ Արգուհամանի որդիների Սմբատ 1-ին Բագրատունի թագավորի դեմ բարձրացրած ապստամբության պատմությունը, ասում է, որ Սմբատ 1-ինը իր զորքերի և վրաց ու աղվանից իր վասալ իշխանների զորքերի գլուխ անցած արշավում է Ապահունիք, որովհետև սեղական ֆեոդալ Արգուհամանի որդիները ոչ միայն ապստամբել, այլև հրաժարվել էին «տալ հարկս և զինուորել որպէս օրէն էր»[2]։

---

[1] Թ. Արծրունի, էջ 247—248։

[2] Նույն տեղում, էջ 245—246։

Թովմա Արծրունին թողել է այլ կարգի տեղեկություններ այն մասին, որ Սմբատ 1-ինը զենքի ուժով ստիպում է ոչ միայն Սյունյաց Սմբատ իշխանին, Աբգուսահամանի որդիներին, այլև իր վասալ այլ իշխաններին արքունի հարկերը մուծել ոչ թե արաբներին, այլ Բագրատունիների արքունի գանձարանը։

Սմբատ 1-ին թագավորին հարկատու էին ոչ միայն հայ ֆեոդալները, այլև քաղաքի բնակիչները, հաղարապետներ և գավառների կառավարիչներ։

Ահմետ էմիրը, ասում է Թովմա Արծրունին, ոչ միայն դրավում է «զաշխարհն Տարոնոյ», այլև այն անջատում է «ի Հայոց պետութենէ»։

Սմբատը մի շարք անգամներ դիմում է Ահմետին և պահանջում «թողուլ անդրէն զաշխարհն» և այն հանձնել «ի ձեռս Աշոտի որդւոյ՝ իշխանին Դաւթայ»։ Ահմետը, շարունակում է պատմիչը, «ոչ խոնարհեալ ունկն դնել ասացելոցն, արհամարհեալ զառաքելովքն»։ Ահմետին պատժելու համար, հայոց թագավորը դեսպաններ է ուղարկում «յամենայն սահմանս տէրութիւնն Հայոց, Վրաց և Աղուանից և առ Բաղամացիսն և հազարապետս և զաւառակալս, և որ սիրողաբար առ նա զինազանդութեանն հարկ հարկանէին»[1]։

Պատմական սկզբնաղբյուրներում պահպանվել են բազմաթիվ վկայություններ այն մասին, որ հողատեր-ֆեոդալները օգտվելով կենտրոնական իշխանության անզորությունից, իրենց հայրենիքները նվիրում էին վանքերին և եկեղեցիներին և ազատում արքունական կոչվող հարկերից։

Սյունյաց տեր Փիլիպպե իշխանը Տաթևի վանքին է նվիրում իր հայրական հայրենիք՝ Յուրականխոռ գյուղը և «զմիւս շէնն՝ զԱղուերծ գոր գնեալ» էր... իրենց «սահմանօրդ բոլոր՝ լերամբ և դաշտովք, հողով և ջրով, այգօք և ընկուզօք, ջրաղացովք և ամենայն մտիւք... ազատ են դրա յամենայն արքունի հարկաց»[2]։ Նույն նահանգի Սմբատ իշխանի կին Շահանդուխտը, իր Վասակ և Սևադա որդիների հետ, Տաթևին է նվիրում 6000 դրամ և «զդիւղն Տեղ, որ ի Հաբանդ գաւառի... իր ամենայն բոլոր սահմանովն, լերամբ և դաշտիւ և այլ մտիւք... ազատ յամենայն հարկաց»։ Շահանդուխտն իր Թողած կալվածագրում ասում է, որ Տեղ գյուղը ոչ որ իրավունք

---

[1] Թ. Արծրունի, էջ 236—237, (ընդգծումները մերն են—Ս. Հ.)։
[2] Ստ. Օրբելեան, էջ 269—270։

չունի խափանել «կամ չար և կամ այլ ինչ արքունի հարկ ի վերայ դնել...»[1]։

Սյունյաց Սմբատ իշխանի Վասակ որդին Տաթևի վանքին է նվիրում Գրուակ գյուղը «իւր բոլոր սահմանովն... ազատ յամենայն... հարկաց»։ Գրիգորի Հասան որդին հատուկ գիր-վճիռով Նորաշենիկ և Ջեռատիվան գյուղերը, Սենեքերիմ Թագավորի հրամանով, նվիրում է նույն Տաթև վանքին «ազատ յարքունի հարկաց...»[2]։ Սկսելով էր, որ մինչև վանքին նվիրելը այս գյուղերը արքունի հարկ էին վճարում Սենեքերիմ Թագավորին։

Տաթևի վանքի եպիսկոպոս Գրիգորը օգտվելով այն հանգամանքից, որ Սենեքերիմ Թագավորը եկել էր վանք «ի տես յաղօթս», բողոքում է, որ Հարժիս, Բերդկաներեչ գյուղերը և Ցուրագետը հավիտյանակալ են եկեղեցուց։ Գրիգորը Թագավորի մոտ է բերում այն բոլոր կալվածագրերը, որ վանքին տվել էին նախորդ Թագավորները «անխախտ պայմանաւ», և «երեք անգամ հաստատած էին այս դիւղօրայքս ի սուրբ աթոռն»։ Առաջին անգամ հաստատել էր Սմբատ Բագրատունին, ապա Սյունյաց մեծ իշխան Աշոտը, երրորդ անգամ՝ Սյունյաց Սմբատ Թագավորը։

Գրիգորը Թագավորին ցույց է տալիս, որ Բերդկաներեչ գյուղը «գանձագին էր տէր Դաւթի», իսկ Հարժիսը «գնոյ առեալ էր» որպես հայրենիք։ Սենեքերիմ Թագավորը կարգադրում է հետ վերադարձնել այդ գյուղերը «ի մայրաքաղաքս Տաթև»։

Սակայն Գրիգորը այսքանով չի բավականանում. նա պահանջում է, որ Թագավորը չորրորդ անգամ հատուկ գիր-վճիռով վանքի վրա հաստատի այս գյուղերը։

Սենեքերիմը իր կողմից Թողած գիր-վճիռում արձանագրել է տալիս, թե «կրկին հաստատեցի իմով ձեռամբս անխախտ հայրենիք սմա զՀարժիս, զԲերդկաներեչի, զՑուրագետ... յաւիտենական... ազատ յամենայն հարկաց ի վանսն Տաթևոյ»[3]։

Կապրինայի Աշոտ որդին վանքին վաճառում է անում իր «հայրենի ժառանգութիւնն» Ամբրավաքար գյուղը և նզովում է բոլորին, ովքեր կրկին կհամարձակվեն այս գյուղի վրա արքունի և այլ տեսակի հարկ դնել։

Բուպակ իշխանաց-իշխանը Նորավանքին է նվիրում Աղբերիս գյուղն «իւր ամէն սահմանամբ... ազատ յամենայն հարկաց»[4]։

---

[1] Ստ. Օրբելեան, էջ 291—292։

[2] Նույն տեղում, էջ 306—307, 326—327։

[3] Նույն տեղում, էջ 327—330։

[4] Նույն տեղում, էջ 357։

Ինքը, Ստեփաննոս Օրբելյանը, որպես խաշոր հողատեր, Նորավանքին է նվիրում իր «նալալ հայրենիքն և զգանձագին դիւղն Զուայ իւր ամենն սահմանօքն, հողով և ջրով և այգեստաններօք և բոլոր բնակչօք... ազատ յամենայն հարկաց և ի դիւանէ անդաւի (անվճելի)... և տուեալ էաք ի դիւան 21 000 դրամ. և զդիւղն Արտաշէն և զսուրբ Սահակ, որ իմ հայրենաբաժին էր ի մեր նալալ ընչից և հայրենեաց»: Նվիրելով այդ գյուղերը, հոգևոր ֆեոդալը իր թողած արձանագրության մեջ ասում է, «և արդ՝ մի ոք իշխեսցէ իշխանութիւն վարել ի վերայ այս շինուցս, և կամ հարկ կամ դիւան կամ մալ կամ այլ ինչ դնել ի վերայ. այլ միայն իշխեսցեն առաջնորդք սուրբ ուխտիս Նորավանից և վայելեսցեն ժառանգաւորք տանս...»[1]:

Զաքարե և Իվանե Զաքարյանները սելջուկներից հետ են խլում Դեղարքունիքը, Արտաշիրը, Այրարատը, Դվինը, Ամբերդը, Անին, Կարսը, Վայոց ձորը և Սյունյաց գավառը իրենց գյուղերով, բերդերով: Հետ նվաճելով այս գավառները և քաղաքները, սրանց դարձնում են «հարկատուք»: Ստիպում են, որ արքունի հարկեր վճարի նաև «զՍուլտանն Կարնոյ քաղաքին»[2]: Զաքարյաններին ոչ միայն այս գավառներն են հարկատու դառնում, այլև «բազում ազգք հարկեին նոցա»[3]:

Զաքարեի և Իվանեի այս հաջողություններից ստիպված Աշրաֆ սուլթանը Տարոն գավառի եկեղեցիները, որոնք «ընդ հարկիւ էին», կիսով չափ ազատում է հարկերը[4]:

Արքունիքին կամ պետությանը վճարված հարկերի մասին վկայություններ ունի Մխիթար Գոշը: Օրենսդիրը սահմանել է հետևյալ պարտադիր օրենքը: Եթե որևէ մեկը, ասում է Գոշը, իր կնոջը առանց լուրջ պատճառի բաց է թողնում, ապա «զատաստան այս լիցի զորդիսն և զկեանսն և զտուն և զհողն և զջուրն և զամենայն ինչ բաժանեսցեն հասարակաց»: Հանցապարտ ազատի կամ շինականի գույքի կեսը բռնագրավում ու հանձնվում է անարգված կնոջը, իսկ մյուս կեսը «կալցին և զարքունի հարկն ողջ արասցեն»[5]:

12-րդ դարի վերջին և 13-րդ դարի սկզբներին Հայաստանում կատաղի պայքար է գնում աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների մեջ հողային նոր տիրույթներ, աշխատավոր կախյալ գյուղացիներ ձեռք բերելու համար: Հոգևոր ֆեոդալները, ֆեոդալական վանքերն

---

[1] Ստ. Օրբելեան, էջ 493։ (Ընդգծումները հեղինակինն է—Ս. Հ.)։
[2] Կ. Գանձակեցի, էջ 154—155։
[3] Նույն տեղում, էջ 155։
[4] Նույն տեղում, էջ 157։
[5] Մ. Գոշ, էջ 193—194։

ու եկեղեցիներն ունեին ընդարձակ տիրույթներ, հսկայական հարստություն, մեծաքանակ խոշոր և մանր եղջերավոր անասուններ, վանքերին կից կային հատուկ արհեստանոց-գործատներ։

Վանքերն ու եկեղեցիները, հոգևոր ֆեոդալական դասի ավագանին վաշխառության, առևտրական գործարքների ճանապարհով կուտակում էին դրամական խոշոր միջոցներ։

Ազատները, աշխատրիկ ֆեոդալական դասի այլ խավերը՝ անտարբեր չէին կարող դիտել, թե ինչպիսի արագությամբ էր աճում վանքերի և եկեղեցիների կալվածները։ Ամենայն հավանականությամբ սրանք, պատմական այս էպոխայում էլ, ձգտում էին, իսկ շատ հաճախ դիմում, ղենքի ուժի ֆեոդալական եկեղեցու տիրույթները եթե ոչ գրավելու, ապա սահմանափակելու համար։

Այս է հիմնական պատճառը, որ օրենսդիրը դիմում է եկեղեցու պատմական անցյալին, ամեն կերպ ձգտում է ապացուցել, որ եկեղեցիների, վանքերի, հոգևոր ֆեոդալների կայքն ու գույքը, հողն ու ջուրը դեռ Գրիգոր Լուսավորիչը և Տրդատ թագավորը «ազատաց տունս կարգել» էին և ազատ էր ամեն տեսակի՝ այդ թվում և արքունի հարկերից։

Իսկ հիմա, ասում է Գոշը, ազատները ոչ միայն իրենց «զերդ և զմարդ բաժանեն», այլև «շարակնութեամբ առնեն» և հոգևոր դասերին «ի ստրկութեան» են ենթարկում։ Այս մի այնպիսի արարք է, ասում է Գոշը, որ «չվայելէ քրիստոնէից»։ Ֆեոդալական դասակարգի այս կարկառուն ներկայացուցիչը լուտանքներ է թափում «շարանենդ» այն ազատների վրա, որոնք քրիստոնեական եկեղեցու հետ ավելի վատ են վարվում, քան պարսիկներն իրենց տիրապետության շրջանում։ Մինչև մեր ազատները, քարոզում է օրենսդիրը, մոռացել կամ չգիտեն, որ նույնիսկ պարսկական տիրապետության էպոխայում պարսիկները թեպետ եկեղեցուն «պեկար արկին, սակայն տունն ի դիւանի յայտնի է և չէ խառնեալ ի շինականս, բայց միայն զնուարկսն տային յարմունիսն»[1]։

Գոշը պահանջում է եկեղեցուն հարկատու դարձնող իշխանների և ազատների համար պատարագ չմատուցել, իսկ եթե նրանք սրանից հետո էլ կձգտեն բաժանել «զշնորհս սրբոյ եկեղեցւոյն և որպէս կամին մատակարարեն, և վարդապետին հրամանի և իրաւանց ունին՝ չդնեն այնպիսիքն նոյնպէս ի մեր օրհնութենէ, հեռի եղիցին»[2]։

---

[1] Մ. Գոշ, էջ 215—216։

[2] Նույն տեղում, էջ 216—217։

«Դատաստանագրքի» երկրորդ մասի «Յաղագս դատաստանաց թագաւորաց և որք ընդ ձեռամբն նոցա» կանոնում Գոշը սահմանել է նույնիսկ արքունական հարկերի չափը։ Թագավորն, ասում է Գոշը. «տիրապէս Աստուած է և անուանակիր միայն» մարդ։ Նա իրավունք ունի ոչ միայն իշխել իր ազգի վրա, այլև «հարկ առնէ յազգաց»[1]։ Այստեղ աներկբայելի է, որ խոսքն արքունի հարկի մասին է։

"Թագավորը, ասում է Գոշը, երբ պատերազմ է մղում օտար թշնամիների դեմ ու պատերազմն ավարտում է հաղթանակով, պետք է զիմադրողներին ոչնչացնի, իսկ նրա հնազանդությունն ընդունողներին «ընդ հարկիւ կալցի»[2]։

Գոշը սահմանել է խիստ դաժան կանոն «անհավատների համար»։ Եթե թագավորի հպատակ այլ ազգին պատկանող մարդը սպանում է քրիստոնյա հպատակին, բայց միջոցներ չունի սպանվածի տուգանքը հատուցել, թագավորն իրավունք ունի նրան վաճառել, ստացած գրամը հատուցել սպանվածի ընտանիքին, իսկ նրա «տունն յաւար յարքունիս լիցի»[3]։ Այսպիսով, հանցագործ հպատակի տունն, այսինքն նրա անշարժ կայքը, նույնպես անցնում էր արքունիքին։ Արքունիքի եկամուտի հիմնական աղբյուրներից մեկն էլ պատերազմական ավարն էր։

Եթե թագավորն անձամբ «ամենայն զօրօք, զրոշիւք և փողովք» մասնակցում էր պատերազմին, ապա ավար վերցրած ոսկին «թագաւորի լիցի»[4]։ Թագավորը ոչ միայն առանում էր ոսկի և թանկագին քարեր, այլև «գերուսն և աւարին կէսն»[5]։ Պատերազմական ավարների և գերիների տասներորդ մասը բաժին էր հանվում եկեղեցուն։ Գոշը հատուկ կանոն է սահմանել «գաւառաց և ազգաց» հարկերի բաշխման մասին։ Թագավորը և իշխանները պետք է «Զանդաստանացն զհինգերորդ մասն առցեն», իսկ «արծաթագին անդաստան և այգեստան և բուրաստան մի լիցի ընդ հարկաւ հնդեկի, նմանապէս և ջրաղաց և տուն և խանութ»[6]։

Այս հատվածը խիստ մշուշապատ է և հետազոտողին հնարավորություն չի տալիս որոշել թե վերոհիշյալ երկրագործական օբյեկտները հարկի ենթակա էին թե ոչ։ Անիմաստ է ասել, որ իբր արծաթագին անդաստանները, այգեստանները և բուրաստանները

---

[1] Մ. Գոշ, էջ 299—300։
[2] Նույն տեղում, էջ 307։
[3] Նույն տեղում, էջ 310։
[4] Նույն տեղում, էջ 311։
[5] Նույն տեղում, էջ 312։
[6] Նույն տեղում, էջ 314։

ապահարկ էին։ Այս դրույթը չի ապացուցվում հենց իրեն Մ. Գոշի նույն հատվածի վերջին տողերի ուշադիր քննարկումից։ Գոշը սահմանելով հարկերի չափը, այս հատվածը եզրափակում է հետևյալ բառերով. «Բայց անդաստանք ջրարբիք՝ լիցին ընդ հնդեկաւ, այլ ոստինք (անջրդիք) տասանորդեսցին»։ Ակնհայտ է, որ օրենսդիրը որոշել է ջրովի և անջրդի հողերի, այգիների, անդաստանների հարկադրման չափը։ Եթե հողը ջրովի էր, ապա նրա մշակողը պետք է տար բերքի 1/5 մասը, իսկ եթե անջրդի՝ 1/10-ը։ Մ. Գոշը սահմանել է ոչ միայն երկրագործական օբյեկտներից վերցրված, այլև անասուններից հավաքած հարկերի չափը։ Եզներին տասանձին հարկ չպետք է լինի՝ «զի այն իսկ է զոր աշխատեալ հնդեկի»։ Ուրեմն եզներից էլ հարկ էին հավաքում, յուրաքանչյուր կովից պետք է առնել ոչ ավելի հարկ, այլ մի լիտր յուղ, իսկ ոչխարներից և դառներից՝ 1/10-րդ մասը։ Ձիերից, ջորիներից, էշերից, ասում է Գոշը, հարկեր չպետք է հավաքել, որովհետև «նոքօք բաղում անգամ ծառայէ զտէրունիսն»։

Գոշը բողոքում է, որ թագավորները, աշխարհիկ և հոգևոր ֆեոդալները խախտում են այս կանոնները և հարկատուներից այնքան հարկ են հավաքում, որ նրանց հասցրել են վերջին տնանկությյան[1]։

Նյութական բարիքներ արտադրողները պարտավոր էին նաև հատուցել այն ծախսերը, որոնք կատարվում էին քաղաքներ, բերդեր կառուցելու համար։

«Ի շինուածս քաղաքի և բերդի եթէ պակասիցէ զանձ արքունի. ամենեքեան հասարակ վճարիցեն»[2]։ Բայց սրանով էլ չէր սահմանափակվում այն հարկերն ու ֆեոդալական պարտավորությունները, որ վճարում և կատարում էին նյութական բարիքներ արտադրողները։

Գոշը իր «Յաղագս դատաստանաց գաւառաց և գեղից և նոցունց իրաց» կանոնում սահմանել է հետևյալ կարգը, եթե գավառներում հայտնաբերվել են ոսկեհանքեր, ապա այն «արքայից լիցի, իսկ արծաթ թագուհեաց»։ Միայն թագավորն ու թագուհին կարող էին իրենց հայեցողությամբ ստացած ոսկին կամ արծաթը «մասնաւորել կամ ոչ»։ Եթե հայտնաբերվում է պղինձ, երկաթ, աղ, բորակ, նավթ, կուպր, ապակի, այս բոլորն «իշխանեաց իցէ մեծամեծաց», միայն մի պայմանով, եթե այս բոլորը նրանց պար-

---

[1] Մ. Գոշ, էջ 316։

[2] Նույն տեղում, էջ 318։

պետում է թագավորը։ Ակն ու մարգարիտը և այլ թանկագին քարերը պատկանում է նույնպես թագավորին։

Եթե վաճառքի է հանվում ձեթ, խունկ, գինեախունկ, գզիր, մաստակ, ծառի սունկ և այլ ապրանքներ, ապա վաճառքից ստացած գումարի տասներորդ մասը «իշխանաց է»։ Եթե հայտնաբերված են պաղատու ծառեր, ապա սրանք էլ անցնում են իշխաններին։ Եթե շինականները հավաքում են օտար սահմաններում պտուղներ, ապա պետք է հավաքած պտուղների մեկ տասներորդ մասը մատնահանեն «օտարացն ի կթել պտղոցն»։ Եթե որևէ մեկը դաշտում կամ իր կալվածում կամ տուն կառուցելու ժամանակ գտնում է ոսկի կամ արծաթ «արքունի լիցի և գտնողին տասանորդիցէ յաղագս տեղւոյն և գտանելոյն կրկին»։

Բայց եթե գտնողը ազատ մարդ չէ, այլ վարձկան, ապա նա իրավունք չունի ստանալու գտած ոսկու և արծաթի 1/10 մասը, այլ տերերը՝ ըստ իրենց կամաց կարող են նրան միայն «մատնատրել»[1]։

Այսպիսով, արքունական հարկը իր գոյությունը պահպանում է նաև միջին դարերում։ Սակայն, ինչպես նկատելի է վերոհիշյալ բազմաթիվ վկայություններից, պատմական այս շրջանում նա ստանում է նոր իմաստ և նշանակություն և մտնում է իր լիիրավ իրավունքի մեջ որպես արդյունքներով ռենտա։

«Չար», «արքունի չար», «անչար», «անչարութիւն», «բերդաչար» «մեծ և փոքր չար»։ Արքունական հարկի մեջ էր մտնում նաև հարկի մի տեսակը, որը սկզբնաղբյուրներում հայտնի է «չար» անվան տակ։ «Չար» հարկային տերմինը խիստ դժվար է ստուգաբանության ենթարկվում։ Սկզբնաղբյուրներում և վիմական արձանագրություններում պահպանված «չար» տերմինի ուշադիր քննարկումը հնարավորություն է տալիս միայն մի քանի հնարավոր ենթադրությունների և կռահումների։

«Չարը» որպես հողային և արքունական հարկ մատնացույց է արված հետևյալ վկայություններում։

Այսպես Սևադա իշխանի դուստր Շահանդուխտը Տաթևի վանքին վանում է անում իր գանձագին Տեղ դյուղը և արձանագրում, որ ոչ ոք իր մահից հետո իրավունք չունի, Տեղ դյուղը «հանել... ի Տաթևայ և կամ հակառակ կալ մեր հողոյս և կամ չար և կամ այլ ինչ արքունի հարկ փր վերայ դնել»[2]։ Այստեղ ակնարկած «չարը»

---

[1] Մ. Դոշ, էջ 328։

[2] Սա. Օրբելեան, էջ 291—292; Հմմտ. Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթևի, Հաղարծնի և Գոգիվանքի եկեղեցիները և վանական շինարարությունները, գրեց Մ. արքեպ. Տեր-Մովսիսյան, Երուսաղեմ, 1938, էջ 232։

արքունական հարկ էր, հետևաբար գյուղերը այդ հարկից ազատվում էին միայն վանքերին անցնելուց հետո։

Սյունյաց Սմբատ մեծ իշխանի Վասակ որդին Տաթևի վանքին է նվիրում իր հայրենի Գրուակ գյուղը «իւր բոլոր սահմանովն... ի ձեռն աստուածապատիւ եպիսկոպոսին Սիւնեաց տեառն Յովհաննիսի, աղատ յամենայն շարէ և հարկաց...»[1]։

1089 թ. Աշոտ իշխանը նույն վանքին է տալիս Ամբրավաքար գյուղը և թողնում է հետևյալ կտակը՝ «Եռու զիմ հայրենի ժառանգութիւնն զԱմբրաւաքար ի սուրբ նշանն ի Տաթև ի ձեռն տեառն Գրիգորոյ... Եւ արդ՝ չունի ոք հրաման խախտել զայս, եթէ հակառակի և կամ շար և հարկ ի վերայ դնէ.. նզովեալ լիցի...»[2]։

Սակայն «շար» կոչված հարկն ինչով էր տարբերվում արքունական մյուս հարկերից, հարկերի և տուրքերի որ տեսակներն էր իր մեջ իմաստավորում, դժվար է ասել, անհրաժեշտ, ուղղակի ցույցումների բացակայության հետևանքով։

Մենք ունենք վկայություն, որ գյուղերը «շար» էին վճարում նաև հոգևոր ֆեոդալներին, իսկ սրանք ամենայն հավանականությամբ այդ հարկի մի մասը մուծում էին արքունիք։ Նորավանքի 1296 թվականի արձանագրությունով Սյունյաց եպիսկոպոս Ստեփանոսը նույն վանքին է նվիրում իր «հոգւոյ մասն և բաժին» Զովա գյուղը որպես վանքի «ժառանգութիւն... աղատ յամէն աշխարհական հարկաց ի դիւանէ, ի խալանէ և յամէն շարէ, զոր գնեալ էի յիմ ախբարէն ի Ջալալէն և տուեալ ԻԱ հազար (21 000) դրամ»[3]։

Հոռոմոսի 1247 թ. արձանագրությունով Սմբատի որդի Անագովելը վանքին նվիրում է «ի Դրասպարի զԳիշկոյն տունն իր հողովն, ունց Գիշուկն ունեցեալ է, Հոռոմի վանիցս սուրբ Յովանիսի հայրենիք... աղատ... յամէն շարէ...»[4]։

«Շար» կոչված հարկը հոգատեր ֆեոդալները հավաքել են ոչ միայն գյուղերից, այլև հողերից, այգիներից, ձիթհանքերից, աղահանքերից և արտադրության այլ օբյեկտներից։

Հոռոմոսի վանքի 1038 թվականի արձանագրության մեջ, Գագիկ Շահնշահի՝ Հովհաննես որդին հիշատակում է, որ նա վանքին

---

[1] Ստ. Օրբելեան, էջ 306—307։ Հմմտ. Գար. Հովսեփյան, Զագավանից ժողովը. տես «Շողակաթ», 1913, էջ 35—36, 44։

[2] Նույն տեղում, էջ 331։

[3] Վիմական տարեգիր, էջ 137։ Հմմտ. Ստ. Օրբելեան, էջ 492—493, Ջալալեան, Բ. 175, Ալիշան, Սիսական, էջ 196։

[4] Վիմական տարեգիր, էջ 91, Սարգսեան, էջ 146։

նվիրել է Կողբում գտնված իր հալալ հայրենի ժառանգության այդին «ազատ յամենայն չարէ»[1]:

Այս մասին ավելի ընդարձակ վկայություն է պահպանվել Դաղի վանքի 1265 թ. արձանագրության մեջ: Այստեղ ասված է, որ Լիպարիտ իշխանի Սմբատ որդին միաբանելով վանքի վանահայր Աթանասի հետ, իր հալալ միջոցներով գնում և վանքին է նվիրում «գեղատաշանց այգին և յենկիս... գնած ձիթահանքն և այլ արդիւնք» Կանոնիկավոր գյուղը և վկաների ներկայությամբ հաստատել է տալիս, որ այս նվերները ազատ են «ամէն խարնովն անշար...»[2]:

«Չարը» նաև գանձվում էր ազից: Հոռոմոսի նույն վանքի, նույն թվականի արձանագրության մեջ հիշատակված է, որ Հովհաննես իշխանը կառուցել է տալիս Հոռոմոսի վանքը, վանքին է նվիրում իր Կողբի այգին և տարին «Ճ բեռն (100 բեռ) աղ յամենայն ամի ազատ յամենայն չարէ ի հայրապետութեան տէր Պետրոսի»[3]:

Սրբոնական «չար» էր վճարվում նաև վարելահողերից, դաշտերից, խոտհարքերից: Հերերի 1317 թվի արձանագրությունով Օրբելյան Լիպարիտ իշխանի Սմբատ որդին եկեղեցուն է նվիրում «զԴաւիթիթիմն հողն ...անշարութեամբ»[4]:

Դանդի 1237 թ. արձանագրությունով Աշոտը իր բաժին հողերն ու կալը նվիրում է վանքին... «ազատ յամենայն չարէ»[5]:

Այս հարկը հավաքվում էր նաև բերդերից և ամրոցներից: Ստ. Օրբելյանը վկայում է, որ Մահման և Գեվորգ իշխանները Սյունյաց Սենեքերիմ թագավորի հրամանով Տաթևին են վերադարձնում Հարժիս, Բերդիանները, Յուրայգետ գյուղերը: Իրենց թողած կտակում ասվում են թե՝ «արդ ոչ մերոց և ոչ ամենք չկայ իշխանութիւն և հաշիւ հետ այս շինուածիցս, ոչ շարի, ոչ Տաճկաց հարկի, ոչ բերդաշարի, ոչ դանդրահի (դինվորական հարկ — Ս. Հ.) և ոչ այլ իրաց, այլ միայն սուրբ խաչիս և հոգւոյ տեառնս է իշխանութիւն»[6]: Սկզբնաղբյուրներում կան վկայություններ, որ նույնիսկ վանքերին և եկեղեցիներին անցնելուց հետո էլ գյուղերը չէին ազատվում «չարի» հարկից, այլ նրա մի մասից, մի բաժնից: Այսպես, օրինակ, հիշա-

---

[1] Վիմական տարեգիր, էջ 21:

[2] Նույն տեղում, էջ 107. (բոլոր ընդգծումները մերն են—Ս. Հ.):

[3] Նույն տեղում, էջ 21, Ալիշան, Շիրակ, էջ 20:

[4] Նույն տեղում, էջ 158, Ջալալյան, մասն Բ., էջ 141, Ալիշան, Սիսական, էջ 114:

[5] Նույն տեղում, էջ 80:

[6] Ստ. Օրբելիան, էջ 330:

տակվում է, որ տերերը պետք է գյուղերը «թեթև» պահեն «ի շարէ», այսինքն թեթևացնել այդ հարկի չափը։

Ակնհայտ է, որ այս բոլոր վկայությունների մեջ «շարը» հիշատակված է որպես արքունի հարկ։ Սակայն «շարը» ոչ միայն արքունի, այլև ընդհանրապես հողային և գլխահարկ էր։ «Շար» էր նաև անասուններից հավաքված արքունի հարկը և գյուղացիների կողմից կատարվող գինվորական հարկադիր ծառայությունը։

Որ «շարը» հողային հարկ էր, այդ ակնհայտ է վիմական արձանագրությունների վերոհիշյալ վկայություններից։ Բայց «շարը» միայն հողային հարկ չէր, այլ հարկ էր ընդհանրապես։ Ոչ միայն հողերն, այլև անասունները ապատվում էին «արքունական շարից»։ Կար և «փոքր» և «մեծ» «շար»։

Այս առումով խիստ ուշադրավ է Շիրակավանի անթվակիր արձանագրություններից մեկը։ Այս արձանագրության մեջ հիշատակվում է, որ Շիրակավանի տանուտերեր Խաշուտը, Մխիթարիչը, քահանաների և այլ մեծամեծերի ու փոքրերի հետ, դալիս են սբ. Աստվածածին եկեղեցին, հաստատում են «արձան անջինջ», որով խիստ պատվիրում են, թե «...ով եկեղեցոյս դրանս կա և սպասաւորէ սմա՝ թէ արեղա եթէ միակեց, թէ շատ տաւար ունենան եթէ քիչ, թէ շատ վաստակ ցանեն և թէ քիչ, ոչ շարիատ, ոչ հաւարեալ, ոչ սուսունի, ոչ եղին թաղար, ոչ մեծ շար, ոչ փոքր հետ եկեղեցոյս սպասաւորացս ոչ ում խաւսք չինի»[1]։

Այս արձանագրության իմաստն, ինչպես նկատելի է, խիստ մշուշապատ է, սակայն մեզ թվում է «մեծ» ու «փոքր» «շարերն» այստեղ գործ են ածված որպես հարկային տերմին և այն էլ ոչ միայն հողային հարկի, այլև անասնահարկի իմաստով։

«Արքունական շարը» նշանակել է նաև գլխահարկ։ Այդ հարկին ենթակա էին նույնիսկ քահանաները և նրանք, որոնք «քահանայական կարգէ» էին։

Սյունյաց Սուփան իշխանը 901 թ. Մաքենոցաց վանքին ու Կոթի եկեղեցուն նվիրում է հողեր, գյուղեր, հանդեր, խոշոր և մանր եղջյուրավոր անասուններ, 1250 դրամ, որս «ձկնաց», տալիս է վանքի և եկեղեցու սպասավորներին տատ-առատ նվերներ, շինում է յոթ սենյակ և հիշատակում է, թե «զԱստուածածնին քահանայքն ազատ արարամ յամենայն արքունի շարէ, ընդ նոսին և զայլ պաշտաւնեայս եկեղեցոյ, որք ի քահանայական կարգէ»[2]։

---

[1] Վիմական տարեգիր, էջ 247։

[2] Նույն տեղում, էջ 5, հմմտ. Ստ. Օրբելեան, էջ 178, 181։

Վիմական արձանագրությունների վկայությունն «արքունական չարի» մասին դալիս է լրացնելու 13-րդ դ. պատմիչ Ստ. Օրբելյանը։

Պատմիչի հաղորդած տեղեկությունները մեկ ավելորդ կռվան են տալիս ենթադրելու, որ «արքունական չար» էին վճարում նաև հոգևորականները, և նրանց այդ հարկից կարող էին ազատել միայն թագավորը, թագավորազունները և առանձին ու անկախ իշխանները։

Սյունյաց Սուփան իշխանը իր թողած հիշատակարանում տալիս է արձանագրել, որ ինքը Աստվածածին եկեղեցուն նվիրած գյուղերը ազատ է անում «յարքունական ծանրութենէ և ի բեկարէ...» սահմանում է եկեղեցու «հողս և ջուրս» և սպառնում է, որ եթե որևէ մեկը մտադրվի այդ նվերները հափշտակել, կամ «...զքանանայ ի չար ընկենու զոր ազատեցի ես յամենայն ուրեք...»[1], նզովյալ լինի։

Ինչպես նշել ենք վերևում «չարը» որպես հարկ ուներ ավելի լայն նշանակություն, մենք հավանական ենք համարում, որ նա ոչ միայն հողային ու գլխահարկ էր, այլ հարկ էր ընդհանրապես, որը հավաքվում էր արքունիքի համար և հողատերից և անասուններից, և հոգևորականներից ու հարկատուներից և հանքերից ու արտադրական ձեռնարկություններից։

Պրոֆ. Ի. Պ. Պետրուշևսկին, իր «Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI-начале XIX вв.» աշխատության մեջ, խոսելով հարկային տերմինների մասին, վկայակոչելով մոնղոլական և պարսկական աղբյուրները, մատնացույց է անում հարկային մի տերմին «չերիք» անվան տակ։ «Չերիք բառը մոնղոլական տիրապետության էպոխայում,— գրում է Պետրուշևսկին,— նշանակում էր «զորադունդ», այսինքն «ֆեոդալական աշխարհազոր»։

Բուրխան-ի Ղադին «չերիքը» բնորոշում է որպես «բանակ», որն ուղարկվում էր պետության տարբեր շրջաններից գործող բանակին օգնելու համար։ «Չերիքը» որպես ռազմական ծառայության պարտավորություն մատնացույց է արվում սուլթան Յաղուբ Ակ-Կոյունլու հրովարտակում հիջրեի 893 թ. (1488 թ.) ընդհանուր պարտավորությունների հետ միասին[2]։

---

[1] Ստ. Օրբելյան, էջ 178, 180—181։

[2] И. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI—начале XIX вв., стр. 290—291.

Որ «չարը» մեղ մոտ էլ գործ է ածվել նաև զինվորական հարկի առումով, այդ մասին միայն մի կողմնակի վկայություն է պահպանել Ստ. Օրբելյանը։ 1091 թ. Սյունյաց Մահման և Գեվորգ իշխանները Սենեքերիմ թագավորի հրամանով Տաթևին են վերադարձնում Հարժիս, Բերդկաներեչ և Ցուրագետ գյուղերը և թողնում են հիշատակարան, որ այդ գյուղերը ազատվում են բոլոր տեսակի հարկերից և այդ թվում «գունդգահից»[1]։ Այստեղ «գունդգահ» նշանակել է զինվորական պարտականություններ և բանակին պահպանելու ծախսեր։

Սյունյաց Սուփան իշխանի 901 թ. Մաքենոցաց վանքի պատերի վրա թողած արձանագրության տեքստից դատելով կարելի է ենթադրել, որ «չար» հարկը հավաքվել է նաև բնակելի տներից, կուղպակներից, իշևան-քարվանսարաներից, արոտավայրերից, անասուններից, գետերից, ձկնորսարաններից։

Այս արձանագրության մեջ հիշատակված է, որ Սուփանը շինում է Մաքենոցաց Եկեղեցին, նրան զարդարում է «անխնայաբար», տալիս է իր «սեփական տեղն» իր բոլոր սահմաններով «լերամբ և դաշտիս», նվիրում է նաև «որս ձկանց», Անի քաղաքի իր հինգ կուղպակ-խանութները, մեկ այգի Երևանում, «հինգ հարիւր առու այգի» Գառնի գյուղաքաղաքում, երկու այգի՝ Նեղգիսում, տալիս է «չոլիրս եղանց և չոկս ղուարակաց, և անդեայս և հատս ոչխարաց... ազատ... յամենայն արքունի չարէ»[2]։

Այսպիսով «չարի» մասին եղած այս վկայությունների ուշադիր քննարկումը ցույց է տալիս, որ այդ հարկը դանձվել է գյուղերից, այգիներից, դաշտերից, ձիթհանքերից, աղահանքերից, ձկնորսարաններից, գետերից, լճերից, կուղպակ-խանութներից, իշևան-քարվանսարաներից, անասուններից, բերդ-ամրոցներից, ճանապարհներից։ «Չար»-ը պանձվում էր ռազմական ծախսերը հոգալու, բանակը պահպանելու համար։

«Չարից» կարող էին ազատել միայն թագավորները և սրանց գործակալ մեծամեծ իշխանները։ Հավանական է, որ «չարից» ազատ էին այն գյուղերը, որոնք թագավորական հատուկ հրովարտակով հանձնվում էին վանքերին, եկեղեցիներին։

«Չարն» իր մեջ իմաստավորելով բազմազան հարկեր, տուրքեր և ֆեոդալական պարտավորություններ, հավանական է, համընկ-

---

[1] Ստ. Օրբելյան, էջ 330, հմմտ. Ն. Շնորհալի, Թուղթ ընդհանրական, էջ 100։

[2] Վիմական տարեգիր, էջ 5, Ստ. Օրբելյան, էջ 170—171, Ալիշան, Սիսական, էջ 68։

նում էր պարսկական «չհար» տերմինի հետ և նշանակում էր հոդահարկի, գլխահարկի, անասնահարկի և վերը ցույց տված այլ հարկերի 1/4 մասը, որը գանձվում էր կենտրոնացած պետության օգտին։

«Արքունական նեպակ» կամ «նեպուկ»։ Կենտրոնական պետությանը կամ արքունիքին արդյունքներով վճարված ռենտայի և դրամական հարկերի ու տուրքերի մեջ մտնում էր նաև «նեպակը»։

Հարկային այս տերմինի իմաստն ու նշանակությունը քննարկման չի ենթարկված, ինչպես անցյալի, այնպես էլ մեր օրերի պատմական բնույթի աշխատություններում։ Ավելին, որպես հարկային տերմին, այն նույնիսկ չի հիշատակված։

Արքունական նեպակի կամ նեպուկի միայն լեզվական ստուգաբանությամբ զբաղվել են Նոր Հայկազյան բառարանի կազմողները, ակադ. ակադ. Հ. Աճառյանը և Ստ. Մալխասյանցը։

Նոր Հայկազյան և Առձեռն բառարանների հեղինակները համեմատելով հայկական «նեպակը» հունական «նեպուկ» բառի հետ, գտել են, որ այն նշանակել է գյուղատնտեսության վնասատուներին՝ բազմոտանի ճիճուներին, կոլիդայքներին, ընդոունիներին, մողեսներին ոչնչացնելու այն պարտադիր աշխատանքը, որ կառավարությունը դնում էր առանձին գյուղերի վրա[1]։

Այս ստուգաբանության միակ հիմքը Եղիշեի համապատասխան վկայությունն է, որ քննարկվելու է ստորև։

Ակադ. Հ. Աճառյանը նույնպես հակված է ենթադրելու, թե՝ «նեպակը» մի տեսակ հարկ էր, որը պրադաշտական օրենքով «ջնջելիք վնասակար միջատների համար կառավարության կողմից նշանակված կապճահամար կամ չափն է»[2]։ Այս նույն իմաստով «նեպակը» ստուգաբանել է Ստ. Մալխասյանցը։ Հեղինակի կարծիքով «նեպակը» հին ժամանակներից սկսած «արքունական հարկի» մի տեսակն էր՝ «հավանորեն վնասակար միջատների ոչնչացման... պարտադիր աշխատանք, կոռ»[3]։

Այս կասկածներն ու հավանական ենթադրությունները, անկասկած է, որ զուրկ չեն որոշ հիմքերից։ Հայտնի է, որ պարսկական արքունիքը իր տիրապետությանը ենթակա գյուղերի վրա, որպես հասարակական անվճար և հարկադիր պարտավորություն,

---

[1] Նոր Հայկազնեան բառարան, տե՛ս նեպակ կամ նեպուկ բառը, հմմտ. Առձեռն բառարան, էջ 615։

[2] Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 5, էջ 86—87։

[3] Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ. 3, էջ 451։

դրել է նաև գյուղատնտեսական վնասատուներին ոչնչացնելու որոշ հարկ, տուրք։

Սակայն միջին դարերում, զարգացած ֆեոդալական հարաբերությունների պայմաններում, «նեպակը» փոխում է իր իմաստն ու նշանակությունը և հանդես է գալիս որպես արքունական և այն էլ դրամական հարկ։

Արքունական նեպակի կամ նեպովի մասին առաջին անգամ հիշատակում է Թ. Արծրունին։ Պատմիչը քննադատելով և մերժելով զրադաշտական կրոնի դրույթները, ծաղրելով Որմիզդի դավանաբանությունը կամ «յիմար Զրադաշտն», ասում է. Որմիզդը սաստիկ սովի պատճառով դուրս է գալիս սնունդ փնտրելու «ընդ վայրըս մի»։ Նա մի մոզի է գողանում և թաքցնում է, որ մենակ հագեցնի իր սովը, սակայն երեկոյան «մոզնսք և կովիդայք, քարաթաթօշք և բնդոունք ի վերայ եկեալ կերան զորս նորա։ Արդ յայսմ հետէ ըստ նեպովի գեաղջն կապճահամար ժժակք յամենայն ի դուռն արքունի ի սատակումն եկեսցեն. զի սոքա վնասակարք առ աստուծոյն էին»[1]։

Թ. Արծրունին համարյա թե բառացի կրկնում է Եղիշեի վկայությունը պարսկական դաժան հարկային քաղաքականության մասին, բայց ավելացնում է «ըստ նեպովի» բառերը։ Եղիշեն իր աշխատության երկրորդ եղանակի մեջ հիշատակում է, թե ինչպիսի սառը ընդունելություն են գտնում Պարսկաստան մեկնած 5-րդ դարի ազատագրական պայքարի ղեկավար հայոց, վրաց և աղվանից պատգամավորները, ինչպես Հազկերտ 2-րդը չարությամբ և նենգությամբ է զիմում հայերի, վրացիների ու աղվանների պատգամավորներին ասելով, որ նա բոլորին կոչնչացնի, կուղարկի «սադաստան», խորշակի կենթարկի, մի մասին կբանտարկի և տանջամահ կանի, որ նա սրանց աշխարհները կուղարկի «զօրս անթիւս հանդերձ փղօք», կանանց ու երեխաներին խաժաստան կաքսորի, եկեղեցիները կքանդի։ Ապա տալով Հայաստանում մոգերի գործունեությունը, եզրափակում է. «Օձք և մողէսք, գորտք և մրջմունք. և որ այլ ևս խառնափնդոր բազմաճճիք են՝ մի կացցեն, այլ վաղ թուով համարով ի մէջ բերցին ըստ արքունի չափոյն։ Եւ որ այլևս ինչ սպասք իցեն. կամ զոհից կամ սպանդից, ըստ տօնական կարգին՝ տարեւոր թուականին, և ըստ կապճաթիւ մոխրաչափ կարգին»[2]։

Եղիշեի մոտ, ինչպես նկատելի է, չկա «նեպակ» տերմինը։ Սակայն Եղիշեի այս ընդարձակ հատվածից ակնհայտ է, որ

---

[1] Թ. Արծրունի, էջ 27։

[2] Եղիշե, էջ 67—68։

պարսկական դուռը յուրաքանչյուր գյուղի վրա դրել էր վնասատուների ոչնչացման որոշ չափ, որոշ քանակ: Գյուղացիները այդ որոշ չափն ու քանակը բաժանում էին իրար մեջ, հավաքում և ոչնչացնում էին գյուղատնտեսության վնասատուներին: Թ. Արծրունին այս հատվածի մեջ, ինչպես նկատեցինք, ավելացնում է «նեպուկ» տերմինը: Ահա Արծրունու այս վկայությունն է, որ հիմք է հանդիսացել «նեպուկ» կամ «նեպակ» տերմինը մեկնաբանել որպես բալմոտանի ճիճու, որպես այդ ճիճուների ոչնչացման հարկադիր իրական աշխատանք:

9-րդ դ. «նեպակը» ոչ թե ճիճուներ ոչնչացնող հարկադիր աշխատանք էր, այլ հողային հարկ և այն էլ դրամական հարկ: Որ «նեպակը» դրամական հարկ էր և վճարում էին գյուղերը, այն էլ արքունիքին, այդ մասին են խոսում Ստ. Օրբելյանի մոտ պահպանված «նեպակի» վերաբերյալ վկայությունները:

Ստ. Օրբելյանը պատմում է, որ Տաթևի վանքի սահմանները, հողային տիրույթները, «յոյժ նեղ» էին և «անձուկ», չէին բավարարում «սլիտոյից աթոռոյն»: Այստեղ է գալիս Սյունյաց գահակալ Փիլիպպե իշխանը. վանահայր Դավիթը, վճարելով 10.000 դրամ, Փիլիպպե իշխանից գնում է Արծիվ և Բերդկաներեչ գյուղերը՝ «ազատ յամենայն աշխարհական հարկաց և ի նեպակաց»[1]:

Այս վկայության մեջ դեռ «նեպակը» ստուգաբանության չի ենթարկվում, դեռ հայտնի չէ թե նա ինչ իմաստ ու նշանակություն ունի: Բայց բարեբախտաբար Ստ. Օրբելյանն ունի մի այլ, ավելի որոշակի վկայություն այն մասին, որ «նեպակը» դրամական հարկ էր: Այս վկայությունը «նեպակի» իմաստը ստուգաբանելու համար այնքան կարևոր է, որ մենք ավելորդ չենք համարում մեջ բերել ամբողջապես:

«Յայսմ ժամանակի իշխան մի Սիսական Զեւանշէր անուն որդի Սահակայ...,—գրում է Ստ. Օրբելյանը,— դայ առ Տէր Սարգսն և խնդրէ ի նմանէ զգիւղն Բեխ, որ ի Կովսական գաւառի, որ էր սեպհական ժառանգութիւն սուրբ խաչին... և փոխանակէ դիւր սեպհական գիւղն Արուքս որ ի Բաղք գաւառի. որ հաւանեալ եպիսկոպոսին՝ տայ զԲեխ և առնու զԱրուքս գիւղ. և գրեն զվճիռ պայմանին այսպէս. «յ320 թուականութեանս Հայոց... Առաք զԲեխ իւր սահմանովն և արտունի նեպակովն և տուաք զԱրուքս իւր սահմանովն և արտունի նեպակովն որ էր 12 դրամ...»[2]:

---

[1] Ստ. Օրբելեան, էջ 204—205։

[2] Նույն տեղում, էջ 216—218։

Ակնհայտ է, որ այս հատվածում «նեպակը» ոչ թե իշխանի և վանքի օգտին դանձվող, այլ արքունական հարկ է։ Նույնիսկ եթե գյուղերը փոխանակվում էին կամ անցնում նոր տերերին, նրանք չէին ազատվում «արքունական նեպակ» կոչվող հարկից։ Սակայն մեզ այստեղ բոլորովին այլ հարց է զբաղեցնում։ Ինչպես վկայում է պատմիչը և Բեխը և Արուքսը արքունիքին վճարել են 6-ական դրամ՝ «նեպակ» հարկ։ Բայց «արքունի նեպակի» ստուգաբանությունը այսքանով չի սահմանափակվում։ Ստ. Օրբելյանը իր աշխատության վերջում «Սիւնեաց երկոտասան գաւառաց հարկ եկեղեցւոյ ըստ հին սահմանին» խորագրի տակ թվարկում է Տաթևի վանքին հարկատու գյուղերի ցուցակը և յուրաքանչյուր գյուղի դիմաց դնում է 6, 8, 10, 12, 20 և այլ թվեր։

Մինչև օրս պատմական գրականության մեջ վերջնականապես չի պարզաբանված, թե ի՞նչ են նշանակում այդ թվերը՝ դրամ, գյուղատնտեսական մթերքների որոշ քանակ, չափ, թե այլ բան։ Պատմաբան-բանասերների մի մասն այդ թվերը մեկնել է ցորենի բեռ, իսկ Սմբատյանցը՝ դրամ, սակայն այս կարծիքները չեն փաստարկվել, այլ կատարել են միայն հնարավոր ենթադրություններ և կռահումներ։

Եթե մենք ընդունենք, որ «արքունի նեպակը» արքունիքին դրամով վճարվող հարկ էր, ապա հեշտությամբ մեկնաբանվում է Ստ. Օրբելյանի մոտ Տաթևի վանքին հարկատու գյուղերի դիմ դրված թվերի կնճռոտ պրոբլեմը։ Իր աշխատության վերջում Ստ. Օրբելյանը, Բաղք գավառի հարկատու գյուղերի մեջ հիշատակում է Արուքս գյուղը և նրա դիմաց դնում է 6 թիվը, Գողնական գավառի հարկատու գյուղերի թվում հիշատակում է Բեխ գյուղը և նույնպես դնում է 6 թիվը[1]։

Ինչպես նկատեցինք, Ջևանշեր իշխանը և Սողոմոն եպիսկոպոսը կատարում են այս երկու գյուղերի փոխանակությունը և տալիս են արձանագրել, որ նրանց արքունիքին վճարվելիք «նեպակը» կազմում է 12 դրամ, որ այդ գյուղերը պարտավոր են այսուհետև էլ վճարել «արքունական նեպակ»՝ 6-ական դրամով։ Հետևաբար, Արուքս և Բեխ, ինչպես նաև մյուս հարկատու գյուղերն, արդեն Ստ. Օրբելյանի էպոխայում ինչպես արքունական, այնպես էլ վանական հարկերը վճարում էին դրամով։

Որ Ստ. Օրբելյանի մոտ հիշատակված Տաթևի վանքին հարկատու գյուղերը հարկերը դրամով էին վճարում, այդ մասին մենք

---

[1] Ստ. Օրբելեան, էջ 518—519։

ուղղակի վկայություններ ունենք հենց իրեն՝ Ստ. Օրբելյանի պատմության ձեռագիր տեքստում, որը մեզ անհայտ պատճառով բաց են թողել և՛ Կ. Շահնազարյանցը և՛ Ղուկասյան Մատենադարանի հրատարակիչները։ Պետական Մատենադարանում պահպանված Ստ. Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» աշխատության ձեռագրերի համեմատությունը ցույց տվեց, որ Ծղուկ գավառի Նորիք գյուղի հարկը սահմանվել է «ԺԲ (12) դահեկան»[1], ինչպես ուշադրավ է, որ Տաթևի վանքին հարկատու 657 գյուղերից Նորիքը հիշատակված է որպես առաջին գյուղը։ Հետևաբար, պատմիչն անհրաժեշտ չի համարել Նորիքին հաջորդող 656 գյուղերի դիմաց դրված թվերից հետո անընդհատ կրկնել «դահեկան» բառը։

Ստ. Օրբելյանի աշխատության երկու հրատարակության ժամանակ, ձեռագրերի անուշադիր արտագրության հետևանքով, բաց են թողել Երանջակ գավառի՝ վանքին հարկատու 20 գյուղեր[2]։ Ուշադրության արժանի է, որ այս բաց թողնված գավառի Սուրբ Գևորգ գյուղի հարկի դիմաց դրված է՝ «Բ. դահեկան և Ը դրամ»։ Այս երկու ուղղակի վկայությունը այլևս ոչ մի կասկած չեն հարուցում, որ հարկատու բոլոր գյուղերը վանքին հարկերը վճարել են դրամ-դահեկաններով։

Ստեփաննոս Օրբելյանին վերագրած «Ժամանակագրութեան» հավելվածում՝ «Տաթևու թեմին, պատուղն այս է այժմ ժամանակի ԺԴ դաւառաց» պահպանվել են կարևոր տեղեկություններ դրամական հարկերի և տուրքերի մասին։ Այստեղ հաջորդաբար թվարկված են Տաթևի վանքին ենթակա և հարկատու գավառների՝ 261 գյուղերի վրա դրված հարկերի քանակն ու չափը։

Մացրու գավառի Թոս գյուղը վճարել է «ԺԳ ապասի ԳՃ», իսկ Աղավնակը «ԺԲ ապասի ԳՃ», Ղարադաղի գավառում գտնված Շմքռի գյուղը՝ «ԺԲ ապասի ՃԾ», Շափխանե գյուղը՝ «ԺԷ ապասի», Իսախանին՝ «Ռ ու ԺԸ շահի», Ներքին Ասրան՝ «Ռ ապասի» և այլն[3]։

Բացի այս ուղղակի վկայություններից, պահպանվել են նաև կողմնակի այլ տեղեկություններ, որոնք հաստատում են մեր այս եզրակացությունը։ 18-րդ դարում կազմած մի ձեռագիր հիշատա-

---

[1] Ձեռագիր № 6271, էջ 332ա։

[2] Հմմտ. ձեռագիր № 6271, էջ 322—337. Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպ. Սիւնեաց։ Ի լոյս ընծայեց հանդերձ ծանօթ. Կ. վ. Շահնազարեանց, Պարիզ, 1859, էջ 272, Ղուկասյան մատենադարանի հրատարակություն, էջ 522։

[3] Ա. Արբանդյան. Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, Երևան, 1942, էջ 41—43։

կարանում ասված է՝ «Սիւնեաց երկոտասան գաւառաց վանքի պտուղն, այսինքն Տաթեւու վեց հազար եօթն հարիւր ռսկի է։ Թող ըզհոգերաժինն և աթոռահակն»[1]։ Ճիշտ է, այս ձեռագիրը կազմված է 18-րդ դարում (1735 թ.), սակայն, ամենայն հավանականությամբ, ձեռագիր կազմողն օգտագործել է Ստ. Օրբելյանի աշխատությունը, որովհետև պատմիչի մոտ բերված թվերի համեմատությունն այս ձեռագրի թվերի հետ ցույց տվեց, որ նրանք շատ աննշան տարբերությամբ համընկնում են։

Եթե Ստ. Օրբելյանի տպագիր տեքստերում մատնացույց է արված, որ Տաթևի վանքին հարկատու 657 գյուղերը վճարել են 6331 դահեկան, իսկ եթե սրան ավելացնենք նաև տպագրության ժամանակ բաց թողնված 20 գյուղերի 200 դահեկան հարկը, ապա ըստ Օրբելյանի Տաթևն իրեն ենթակա 677 գյուղերից գանձում էր 6531 դահեկան հարկ, այսինքն 169 դահեկան պակաս, քան մատնացույց է արված № 3409 ձեռագրում։

Կան այլ կողմնակի վկայություններ այն մասին, որ Տաթևի վանքի հարկատու և վանքապատկան գյուղերը Տաթևին «հաս» կոչված հարկը վճարել են դրամով։

Ալիշանն իր «Սիսական» աշխատության մեջ վկայակոչելով մի շարք ուղղակի և անուղղակի տվյալները, ցույց է տվել, որ Տաթևի վանքը Հայաստանի բաղմաթիվ ֆեոդալական վանքերից ամենից հարուստն էր և հզորը։ Ալիշանը մատնացույց է արել, որ Տաթևի վանքը իր հողային հսկայական կալվածներից ստանում էր ավելի շատ հաս-եկամուտ, քան «ղյուղովս յաթոռաց Հայոց»։ Տաթևի վանքը ուներ և «գեօղս և ագարակս և լերինս և դաշտս և ջուրս»։ Եթե 10—13-րդ դդ. Տաթևին ենթակա էին շուրջ 700 հարկատու գյուղեր, ապա հետագայում այդ գյուղերի թիվը «նուազելով նուազեցին» հասնելով 260-ի։

Այս 260 հարկատու գյուղերի, շարունակում է Ալիշանը, հարկերը, որոնք հայտնի էին «Տաթեւոյ թեմի պտուղ» անվան տակ, գանձվում էին պարսկական շահիներով, իսկ պարսկական մեկ շահին հավասար էր մոտ 0,25 ֆրանկի. եթե ստույգ են պատմական վկայությունները, եզրակացնում է Ալիշանը, ապա վանքը հավաքում էր մեծաքանակ թվով դրամ, որը տատանվում էր 580—600 հազար շահու մեջ։

Եթե պարսկական մեկ շահին իրավամբ ընդունենք 0,25 ֆրանկ, ապա Տաթևի վանքը, նույնիսկ երկրի համար քաղաքական

[1] Ձեռագիր № 3409, էջ 104ա։

անբարենպաստ պայմաններում, դանձում էր տարեկան 120,000 ֆրանկ և ավելի[1]:

Այսպիսով, ինչպես Ստ. Օրբելյանի աշխատության ձեռագրերի մեջ պահպանված, այնպես էլ «արքունական նեպակի» և № 3409 ձեռագրում հիշատակված այս փաստերի հիման վրա կարելի է վստահորեն պնդել և հաստատապես որոշել, որ Ստ. Օրբելյանի պատմաշրջանում Տաթևին հարկատու գյուղերը հարկեր և տուրքեր վանքին վճարել են դրամով: Իսկ այս խիստ արժեքավոր է ոչ միայն վանքապատկան կամ վանքերին ու եկեղեցիներին ենթակա գյուղերի, այլև արքունական, աշխարհական հարկային սիստեմի կնճռոտ պրոբլեմը լուսաբանելու և դիտականորեն հիմնավորելու համար:

Որ 10—13-րդ դարերում արդյունքներով վճարվող հողային renտայի կողքին, նրա հետ միասին, հանդես էին եկել դրամով վճարվող հարկերն ու տուրքերը, այդ պրոբլեմը մենք հանդամանորեն քննարկման կենթարկենք «Դրամական հարկեր և տուրքեր» ենթավերնագրի տակ:

«Աշխարհական հարկ»: Սկզբնաղբյուրները և հատկապես վիմական արձանագրությունները խիստ տարբերություն են դնում «արքունի հարկի», «արքունական չարի», «արքունական նեպակի» և «աշխարհական» հարկերի միջև: Եթե, ինչպես ցույց տրվեց վերևում, նյութական բարիքներ արտադրողները «արքունական» կոչված հարկը վճարում էին սեպհական շրջանում Արաբական խալիֆաթին, ապա, խալիֆաթի գերիշխանությունը տապալելուց հետո, Բագրատունիներին և ավելի ուշ՝ Զաքարյաններին, ապա «աշխարհական» հարկերն ու տուրքերը, կամ արդյունքներով renտան, նյութական բարիքներ արտադրողները վճարում էին հողատեր ֆեոդալներին, նրանց կողմից գյուղացիներին հատկացված հողակտորների օգտագործման համար:

«Աշխարհական հարկի», որպես հողատեր ֆեոդալներին վճարվող արդյունքներով renտայի մասին, ուշագրավ վկայություններ են պահպանվել վիմական արձանագրություններում և այդ պատմաշրջանի սկզբնաղբյուրներում:

Ստ. Օրբելյանը վկայում է, որ Տաթևի վանքի սահմանները. հողային տիրույթները «յոյժ նեղ և անձուկ էր... և ոչ էր բաւական պիտոյից սիոոյն»:

---

[1] Ալիշան, *Սիսական*, էջ 242—243։

839 թ. Տաթևի վանահայր տեր Դավիթը այդ «յոյժ նեղ ու անձոմ» սահմանները յայնացնելու համար՝ վճարելով 10.000 դրամ. Սյունյաց Թիլիպպե իշխանից գնում է Արծիվ և Բերդկաներեչ գյուղերը՝ «բոլորն ընդ ջրաթափովն՝ ազատ յամենայն աշխարհական ճարկաց»[1]:

Սյունյաց իշխանուհի Մարիամը գալիս է Սևան «առ սուրբն Մաշտոց», կառուցել է տալիս «ղգեղազարդեալ եկեղեցիսն յանուն սուրբ Առաքելոց, և զմիւսն, յանուն տիրուհւոյ Աստուածածնին»: Այս եկեղեցիները զարդարում է «մեծամեծ սպասուք», եկեղեցիների սպասավորների համար կառուցել է տալիս բնակարաններ: Այստեղ է գալիս նաև իշխանաց-փշխան Աշոտը, որն Աստվածածին եկեղեցուն նվիրում է Վարսեր, Ցամաքաբերդ, Գոմաձոր, Բերդ գյուղերը, Ուռյաց տափը և մեկ այգի Գառնիում, մեկ այգի Երևանում և «յայլ տեղիս... «ազատ յամենայն աշխարհական ճարկաց»[2]:

Նույն Մարիամ իշխանուհին կառուցել է տալիս նաև «զմեծապայծառ եկեղեցին ի Շողուատայ յանուն սրբոյ առաքելոյն Պետրոսի»: Շողուատայի եկեղեցուն տնտեսապես ապահովելու համար 874 թ. վճարում է 60.000 դրամ, գնում է Շողուատա գյուղը, նվիրում է եկեղեցուն «ազատ յամենայն աշխարհական ճարկաց»: 3000 դահեկանով գնում է Մաղազ գավառի Գներ գյուղը և դարձյալ նվիրում եկեղեցուն ու աղատում բոլոր տեսակի հարկերից[3]:

«Աշխարհական» կոչված հարկի բազմազան տեսակների մասին ամենից ուշագրավ վկայություն պահպանվել է Ստ. Օրբելյանի մոտ. Գատմիչը իր աշխատության վերջաբանում՝ «Սկիզբն և պատճառ շինութեան և նախապատիւ գահերիցութեան սուրբ և գերահռչակ և փառաւոր ուխտին և աշխարհաբնակ խմբարանին Նորավանից», վառ գույներով է նկարագրում Նորավանքի տիրույթները, նրան կից տնտեսական ձեռնարկները և հսկայական հարստությունը: Դեռ շատ հին ժամանակներից, ասում է պատմիչը, «ի նեղ և անձուկ ձորակին» կառուցված էր սուրբ Կարապետի անվան «յոյժ սքանչելագործ և տհարկու և անուանի մերձակայ սահմանացն եկեղեցին: Եկեղեցու շրջապատը նման էր դրախտի, նրա չորս կողմերից բխում էին քաղցրահամ աղբյուրներ, իսկ «ձորն ամենայն գեղեցկացեալ էր այդեօք և թանձրախիտ ծառօք մրգաբերօք»: Սակայն այս եկեղեցին, Բաղաց թագավորության անկումից հետո, կորցնում է իր

[1] Ստ. Օրբելեան, էջ 204—205:
[2] Նույն տեղում, էջ 173—174:
[3] Նույն տեղում, էջ 173—175:

վարեմի նշանակությունը։ Հովհաննես եպիսկոպոսը 1105 թ. Վայոց ձորում կառուցել է տալիս մի նոր եկեղեցի, այստեղ է հավաքում կրոնավորների հոծ բանակ։ Սրանց բնակավայրերով և հողերով ապահովելու համար այս հոգևոր ֆեոդալը դիմում է բոլոր միջոցներին և «հեռացուցանէ ի վայրիցն զամենայն արս աշխարհականս», այսինքն եկեղեցու շրջապատի բնակիչներին և թույլ չի տալիս, որ այդ վայրում այսուհետև բնակություն հաստատեն ոչ միայն «լկտի մարդիկ», այլև կանայք։

Հովհաննես եպիսկոպոսը ղենքի և դրամի ուժով «առնու ի սահմանակցացն հողս և անդաստանս ի ժառանգութիւն եկեղեցւոյն ի Գանձակեցեացն և ի Տխարբեցեացն»։

Այս շարագործությունների հետևանքով ապստամբում են շրջակայքի բնակիչները և բերդապահ Խաղբիկ Խորասանի ղեկավարությամբ սպանում Հովհաննեսին։ Սակայն Հովհաննեսի հաջորդները վարում են իրենց նախորդի քաղաքականությունը։ Սրան հաջորդող տեր Ստեփանոսը բնակություն է հաստատում Նորավանքում, որովհետև «հին աթոռն աւերեալ էր և ապականեալ»։ Ստեփանոսը Նորավանքում հաստատում է «տուն աթոռոյ եպիսկոպոսութեան» և Աթաբակից ստանում է շնորհագիր եկեղեցու անխախտ ժառանգության մասին։

Ստեփանոսը, ասում է պատմիչը, «նմանապէս և խնդրէ թուղթ շրջաբերականի ի մեծ կաթողիկոսէն Հայոց ի տէր Գրիգորէ զի լիցի սեպհական վիճակ ժառանգութեան այս դաւառք սուրբ ուխտին Նորավանից»։ Այնուհետև Ստեփանոսը մեկնում է Աթաբակի մոտ, որան ցույց է տալիս սուլթանի նամակը և «ի նմանէ ևս առնոյր մանշուր հաստատուն դրոյ ամենայն ժառանգութեանց եկեղեցւոյն Նորավանից»։ Աթաբակը Ստեփանոսին նվիրում է Ագարակ գյուղը։ Ստեփանոսին հաջողվում է «զամենայն որ ինչ էր վանիցն արար ազատ յամենայն աշխարհական հարկաց՝ զնող և զջուր, զայգի, զգիւղ և զագարակ և զբերդն իսկ Անապատայ»[1]։ Ուրեմն աշխարհական կոչված հարկին ենթակա էին հողերը, ջրերը, այգիները, գյուղերը, ագարակները և նույնիսկ բերդ ամրոցները։

Հայոց Սմբատ Բագրատունի թագավորը «ընդ գնոյ» գնում է և «զմեծ աւանն Կարճաւան յԱրևիք դաւառի... գնէ և զՀարժիս ի տէրանցն Սիւնեաց և զայն ևս ընծայէ ազատ յամենայն հարկաց...»[2]։

---

[1] Ստ. Օրբելեան, էջ 346—352։

[2] Նույն տեղում, էջ 228—229։

Իշխանաց իշխան Աշոտի Գրիգոր որդին վկայում է, որ Վասակ թագավորը տալիս է վանքին Գրոտակ գյուղը, «ազատ յամենայն շարժ և հարկաց...»[1]։

Հովհաննավանքի արձանագրություններից մեկում հիշատակվում է, որ Սարգսի որդիներ Իվանեն և Զաքարեն վանքին են նվիրում Որդան և Տաճկամարգ գյուղերը ու ազատում են «զամենայն հայրենիք ուր և իցէ ի գաւառիս՝ եթե այգի, եթէ հող սոցա» ամեն տեսակի հարկերից[2]։

Աշխարհական հարկը վիմագիր արձանագրություններում հաճախ կոչվում է «բնովին հարկ»։ Տեկորի արձանագրության մեջ հայտնի արքա Աշոտը հաստատում է, որ Տեկորը այլևս ոչ շարիատ և ոչ էլ «զհարկն բնովիմբ» և ոչ էլ «թաստակ» հավիտյան չի վճարելու։ Տեկորի մի այլ արձանագրության մեջ հիշատակվում է, որ Թաթոյ իշխանը թողել է «զՏեկորոյ հարկն...»[3]։

Այսպիսով, ինչպես վիմական արձանագրություններում պահպանված, այնպես էլ երկու օրենսդիրների կողմից սահմանված վկայությունների հիման վրա կարելի է եզրակացնել, որ ջրովի ու ավելի պտղաբեր հողերից հողատեր ֆեոդալների օգտին գանձվում էր բերքի 1/5՝ իսկ անջրդի, առապարհողերի բերքի 1/10 մասը։

Անմիջական նյութական բարիքներ արտադրողները բացի հողային հարկից արդյո՞ք գլխահարկ վճարել են թե ոչ, այդ մասին մենք ուղղակի ցուցումներ չունենք։ Ինչպես ցույց տրվեց վերևում, արաբները իրենց տիրապետության երկրորդ շրջանում երդահարկը փոխարինեցին գլխահարկով։ Անկասկած է, որ արաբական տիրապետությունից հետո հարկերի մենաշնորհն անցնելով Բագրատունիներին և ավելի ուշ՝ Զաքարյաններին, պետք է որ սրանց անցներ նաև գլխահարկի մենաշնորհը։ Մ. Գոշի մոտ պահպանված անուղղակի մի վկայությունը հնարավորություն է տալիս ենթադրել, որ անմիջական արտադրողները հողատեր-ֆեոդալներին վճարել են նաև գլխահարկ։ Օրենսդիրը բողոքում է, որ «զհարկս գաւառաց և ազգաց թագաւորք և իշխանք անարդարութեամբ առցեն», որ նրանք չպետք է ավելի հարկեր պահանջեն «քան զառաջնոցն սովորութիւնս» էր։ Այս նույն հատվածում Գոշը ասում է. «Այլ թէ բնակիչքն ընդ արուեստի և կամ ընդ վաճառի հարկիցին, զի ոչ է հարկ գլխոյ քրիս-

---

[1] Ստ. Օրբելեան, էջ 306—307։

[2] Կ. Ղաֆադարյան, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, էջ 76։

[3] Վիմական տարեգիր, էջ 13, 15, հմմտ. նաև 50—51, 53, 116—117, 134—135, 137—138 և ուր.։ Մ. Գոշ, էջ 314—315, 427, Ս. Գունդստարլ, էջ 20։

տոնէից, բայց այլապէսաց՝ յորժամ բռնի ընդ հարկաւ արասցեն»[1]։ Այս կանոնը ցույց է տալիս, որ հողատեր-ֆեոդալները, ոտնահարելով բոլոր արարողությունները ու սովորույթները, ղլխահարկի էին ենթարկում տեսարաններին, արհեստավորներին և քրիստոնյա հպատակ հարկատուներին։ Գոշը պահանջում է իշխող և շահագործող դասակարգի մարդկանցից ղլխահարկի ենթարկել միայն «այլապէսաց», իսկ քրիստոնյա հպատակներին ազատել այդ հարկից։ Հետևաբար, եթե քրիստոնյա հպատակ հարկատուները ղլխահարկ չվճարեին, ապա անիմաստ է դառնում այս կանոնի առկայությունը Գոշի Դատաստանագրքում։ Ուրեմն բացի հողահարկից, անմիջական նյութական բարիքներ արտադրողները վճարում էին նաև ղլխահարկ։

«Անասնահարկ», «ճարկ ղեսարայ», «պաշղխոտ», «մրուր», «ապուռեշ»։ Բացի հողահարկից, ղլխահարկից նյութական բարիքներ արտադրողները հարկեր էին վճարում անասուններից, արոտավայր-անդաստաններից, խոտհարքներից, անասունների արտադրանքներից՝ կաթից, յուղից, պանրից։ Նրանք պարտավոր էին հարկեր վճարել, երբ անասունների հոտերը փոխադրվում էին մեկ ֆեոդալի հողից մյուսի հողը։

Հովհ. Դրասխանակերտցին նկարագրելով Սմբատ Բագրատունի Թագավորի հարկային քաղաքականությունը, վկայում է, որ թագավորը «ընդ բոլոր աշխարհս տէրութեան իւրոյ հինգերորդել հրամայէ զամենայն երամակս ձիոց և զանդեայս արջառոց և զիստս ոչխարաց...»[2]։ Այս հատվածում անասնահարկը սահմանված է՝ հինգից մեկը։

Անասնահարկի մասին հատուկ կանոններ են մշակել Մ. Գոշը և Սմբատ Գունդստաբլը։

Օրենսդիրները սահմանել են անասնահարկի մասին հետևյալ կանոնները. «Եղն այլ ծառայութիւն չպարտի, զի զիր հնգակն տվել է. կովն լիտր մի եղ տայ պարոնին և այլ խոտչէք չտայ։ Ոչխարն երբ դառն կամ ուլ բերէ, տարեկան ի տասէն մէկն առնու պարոնն»։

«Եղին այլ հարկ մի լիցի», որովհետև նա «աշխատեալ է հնգակի», կովից պետք է մի լիտր յուղ վերցնել, արոտավայրերը չպետք է լրացուցիչ հարկի ենթարկվեն, որովհետև հարկի են ենթարկվում անասունները, որոնք սնվում են արոտավայրերից։

---

[1] Մ. Գոշ, էջ 314։

[2] Հովհ. Դրասխանակերտցի, էջ 205։

Ոչխարներից, պառներից պետք է հարկ հավաքել տասից մեկը, իսկ ձիերից, ջորիներից, էշերից այլ հարկեր չպետք է պահանջեն... «զի նոքօք բաղում անգամ ծառայք զտէրունիսն»[1]։

Անասնահարկի, խոտահարկի մասին բազմաթիվ վկայություններ են պահպանված վիմական արձանագրություններում։

Տեկորի 1042 թ. արձանագրությունով ոմն իշխանի դուստրը Յողնում է «զՏեկորոյ զպալաշդխոտս շահնշահի արևշատութեան և իմ ծնողացս հոգւոյն»[2]։

1295 թ. Օշական է գալիս ոմն Բեսաթա և տալիս է արձանագրել, որ նա թողնում է «զՅաւշավանու զէնարայ զհարկն զգեղիս և զվանորայից...»[3]։

Ակնհայտ է, որ մինչև վանքին նվիրելը, Օշականի բնակիչները անասնահարկ են վճարել հողատեր պարոնին։ Անասնահարկի, իր բազմաթիվ տեսակներով, մասին ուշագրավ վկայություններ են պահպանվել Անիի 1301 և 1320 թթ. արձանագրությունների մեջ։

1301 թ. Անի է գալիս Իվանեի Աղբուղա որդին և իր թողած արձանագրության մեջ հիշատակում է, որ Անին խիստ թըշվառ վիճակում էր գտնվում, որովհետև «շատ հարկ էր ի վերայ դրած»։

Աղբուղան թողնում է քաղաքի «Գ. հարկ» և «զեղինն հաղրն, զկովին համբրէլն, զոչխարին աղլ հակն...»[4]։ 1320 թ. Խուանդուխտ իշխանուհին իր որդի Զաքարեի հետ թողնում են Անի քաղաքին «զկովերոյն և զիշանուն զհամբրելն և զդռնագիրն մեծի և զփորու...»[5]։

Անասնահարկ էր նաև «մրուրը»։ Այս բառը միայն մեկ անգամ է գործածված Մրենի 1041 թ. արձանագրության մեջ։ 1041 թ. Աշոտի՝ Գագիկ Շահնշահ որդին մեկնում է Մրեն և տալիս է արձանագրել թե «այս իմ հրամանքն են... ազատեալ եմ զՄրենոյ հարկն զծուծ և մրուր, զկապիճքն...»[6]։

Ակնհայտ է, որ այս արձանագրության մեջ «մրուրը» հիշատակված է որպես առանձին հարկ։ Հարկային այս տերմինը խիստ դրժվար է ստուգաբանության ենթարկվում։ Մենք այլ վկայություններ

---

[1] Սմբատ Գունդստաբլ, Դատաստանագիրք, էջ 18—19, հմմտ. Մ. Գոշ, էջ 315—316։

[2] Վիմական տարեգիր, էջ 22։

[3] Նույն տեղում, էջ 137։

[4] Նույն տեղում, էջ 151։

Նույն տեղում, էջ 160։

[6] Նույն տեղում, էջ 22։

չունենք «մրուրի» իմաստն ու նշանակությունը պարզելու համար։ Ակադեմիկոսներ՝ Հ. Աճառյանը, Ստ. Մալխասյանցը «մրուրը» ստուգաբանել են որպես հարկի մի տեսակ, որը ծագել է արաբական «murur» բառից, իսկ այդ բառը արաբների մոտ նշանակել է «անցք, անցնել, անցահարկ» կամ այն հարկը, որ վճարել են «անասունները մի տեղով անցկացնելու իրավունք ստանալու համար»[1]։

«Մրուրի» մասին այլ վկայությունների բացակայությունը մեզ նույնպես հնարավորություն չի տալիս այլ առումով ստուգաբանել հարկային այդ տերմինը, և մնում է ենթադրել, որ «մրուրն» այն անասնահարկն էր, որ գանձվում էր անասուններից՝ մի ֆեոդալի կալվածներից մյուսն անցնելու ժամանակ։

Վիմական արձանագրություններից մեկում, անասնահարկի առումով է գործածված «ապուռիշ» բառը։ Այս արձանագրության վրա առաջին անգամ ուշադրություն է դարձրել ակադեմիկոս Ն. Մառը։

Հեղինակի կարծիքով հայկական «ապուռ» բառը ածանցված է պարսկական «abriz» արմատից և նշանակել է «գրույլ, ջրամուղ»[2]։

Ակադեմիկոսներ Հ. Աճառյանը, Ստ. Մալխասյանցը նշել են, որ «ապուռ», «ապուռիշ» նշանակել է՝ «ջրի առու, հարկ էշի վրա կամ ابور — անցնել, հարկ, որ Կիլիկյան շրջանում առնում էին տրանզիտով անցնող ապրանքներից»[3]։

Շիրակավանի 1228 թ. արձանագրությունը մեզ հնարավորություն է տալիս այլ բացատրություն տալու այդ բառին։ Այս արձանագրության մեջ հիշատակված է, որ տիրապետ Իվանեն և խոշակը Շիրակ գյուղն ազատում են «զապուռիշի և զջրսահին բաժն յորդեցէ յորդիք ազատ ի բաժէն...»[4]։

Թվում է, որ այստեղ գործածված «ապուռիշի» բառն իր նշանակությամբ համընկնում է արաբական «murur» բառի հետ և նշանակում է «անցահարկ», «անասնահարկ», տվյալ դեպքում՝ «էշահարկ»։ Անհավանական չէ, որ այս հարկը գանձվում էր էշերից, երբ նրանք անցնում էին մեկ ֆեոդալ հողատիրոջ սահմաններից դեպի

---

1 Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. IV, էջ 1199—1200, Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ. III, էջ 376։

2 Н. Марр, Заметки о трех армянских надписях, տես նաև СМОМПК. вып. XVII, стр. 17, 174.

3 Հ. Աճառյան, Արմատական բառարան, հ. I, էջ 456—457. Ստ. Մալխասյանց, Բացատրական բառարան, հ. 1, էջ 210։

4 Վիմական տարեգիր, էջ 71։

մյուսի տերիտորիան։ Հայտնի է նաև, որ Հայաստանում, հատկապես լեռնային շրջաններում, էշը հանդիսանում էր ոչ միայն փոխադրության միջոց, այլև լայն չափով օգտագործվում էր ժողովրդական տնտեսության մեջ, որպես աշխատող ուժ։ Ուրեմն «ապուռիշ» գանձվում էր ոչ միայն ապրանքատար, այլև բանող էշերից։

Ջրային հարկ, «ջրասաքին բաժ»։ Հողային հարկի, գլխահարկի և անասնահարկի հետ միաժամանակ ֆեոդալ հողատերերը գանձել են նաև ջրային հարկ։

Արևելյան երկրներում և այդ թվում Հայաստանում, միշտ էլ հողի մասնատիրական իրավունքը զուգակցվում էր ջրային սեփականատիրության իրավունքի հետ։

Հայ ֆեոդալ-իշխանները, ֆեոդալական վանքերն ու եկեղեցիները միջին դարերում անցկացրել են բազմաթիվ արհեստական ջրանցքներ, առուներ հողը ավելի բերքատու դարձնելու և ավելի մեծ եկամուտներ ստանալու համար։ Ստ. Օրբելյանը թողել է բազմաթիվ վկայություններ այն մասին, որ Սյունյաց աշխարհի վանքերն ու եկեղեցիները ծախսում են հսկայական միջոցներ արհեստական ջրանցք-առուներ անցկացնելու համար։ Տաթևի վանքի Հակոբ եպիսկոպոսը վճարելով 12000 դրամ, պատվական գոհարներ և «բազում աշխատութեամբ և մեծամեծ ծախիւք» բերել է տալիս առու «ի լեռնէն Զագէձորայ... ի Յաքուտն» և վանքի բոլոր «առապար և փշալից» դաշտերն ու այգիները դարձնում է «վարդուտ և տնկալից...»։ Մշակել է տալիս «բազում այգիս և որթս սորեկս... ...զանազան պտղաբերաց ձիթենիս և թզենիս և նռենիս և յամենայն մրգաբերաց», առապար և փշալից հողերը դարձնում է «դրախտս զարմանալիս... ի վայելումն եղբայրութեանն...»։

Հակոբ եպիսկոպոսը ընդարձակելով վանքի և սրան կից եկեղեցիների ֆեոդալական տիրույթները, թողնում է դիր-հիշատակ, որ ոչ միայն հողերն ու գյուղերն են վանքի ժառանգական, անքակտելի սեփականություն, այլև ջուրը։

«Եւ չկայ յայս ջրոյս հաշիւ,— ասում է Հակոբը,— ոչ Նորեցեաց, ոչ Խոտանանեցեաց, ոչ Շնհէրացեաց կամ Հալեցեաց, ոչ այլ մարդոյ, ոչ յարտ կտրել և ոչ ի մարգ և ոչ պարտիզի ջուր տալ, զատ ի մատակէդ ըմպելոյ մարդոյ և անասնոյ»[1]։

Հակոբ եպիսկոպոսի օրինակով, 1008 թ. Հովհաննես եպիսկոպոսը նույնպես «բազում ջանիւ և մեծամեծ ծախիւք» ջրանցք է հանում Ձկնարած գետից և բերում է «յանդաստան վանիցն» և ան-

[1] Ստ. Օրբելեան, էջ 252—255։

ջրերի բոլոր առապար հողերը դարձնում է «ջրարբի»։ Հովհաննես եպիսկոպոսն իր դիր-հիշատակարանում պատվիրում է բոլորին, այդ թվում նաև «Պրակեցեաց և Կեչուտեցեաց և... այլ սահմանակից գիւղօրէիցն» բնակիչներին, որ նրանք որևէ հաշիվ և պահանջ չունեն այս ջրանցքի նկատմամբ[1]։

Կոշի վանքի 1101 թ. արձանագրության մեջ հիշատակված է, որ հայր Հովհաննեսը «բաղում աշխատութեամբ» ծախսելով Մ (200) դահեկան, Կոշի տանուտերերի հետ միասին, անց են կացնում «զԲնաջուր առուն»[2]։ Հռոմոսի 1198 թ. արձանագրության մեջ հիշատակված է, որ սմն Մխիթար «մեծ ծախիւբ» Ականց ջուրը բերել է տալիս «ի Հռոմոսի վանս...»[3]։

Վանքերն ու եկեղեցիներն անցկացնելով ջրանցք-առուներ ոչ միայն պաղաբեր էին դարձնում եկեղեցիների տնտեսությունները, այլև օգտագործում էին ջրի ուժը՝ ջրաղաց-ճիթհանքեր աշխատացնելու համար[1]։

Որ հողային մասնավոր սեփականության իրավունքը ենթադրել է նաև ջրի մասնավոր սեփականություն, այս մասին հատուկ կանոն է սահմանել Մ. Գոշը։ Օրենսդիրը բաղաքում է, որ թագավորներն ու իշխանները սեփականացրել են ոչ միայն հողերը, այլև ջուրը, չնայած նրանք ջրի նկատմամբ այդ իրավունքը չունեն։ «Զի հող միայն է թագաւորի և իշխանի,— ասում է Գոշը,— և ոչ ջուր...»[5]։

Թե ինչ չափով հողային և ջրի մասնավոր սեփականությունն առնչված էին մեկը մյուսի հետ և վերջինս կապված ու պայմանավորված էր առաջինով, այդ ակներև է այն բնորոշ փաստից, որ սկզբնաղբյուրները ամեն դեպքում հողային մասնատիրական իրավունքի կողքին հիշատակում են նաև ջրի նկատմամբ եղած իրավունքը։

Հողային և ջրային սեփականատիրության միասնական իրավունքը իր արտահայտությունն է գտել եկեղեցական աշխարհաժողովների կողմից մշակված կանոններում, վիմական արձանագրություններում և պատմական բնույթի սկզբնաղբյուրներում։ Հողը և ջուրը որպես մասնավոր սեփականության անքակտելի տարրեր արձանագրված է Շահապիվանի ժողովի և Ներսես կաթողիկոսի ու

---

[1] Ստ. Օրբելիան, էջ 262—263։
[2] Վիմական տարեգիր, էջ 28։
[3] Նույն տեղում, էջ 39։
[4] Նույն տեղում, էջ 46։
[5] Մ. Գոշ, էջ 315։

Ներշապուհ Մամիկոնյանի կողմից մշակված կանոններում։ Շահապիվանի ժողովի Դ կանոնն իրավունք է վերապահում բռնագրավել «հանցապարտ ազատների «զհող և զջուր»[1]։

Ներսես կաթողիկոսը և Ներշապուհ Մամիկոնյանը իրավունք են տվել եպիսկոպոսներին բռնագրավել հանցապարտ հոգևորականների հողը և ջուրը[2]։

Մ. Կաղանկատվացին վկայություն է թողել այն մասին, թե ինչպես պարսկական Շապուհ թագավորը կամենալով որոշել հայ նախարարների նախապատվության աստիճանները, դիմելով սրանց՝ ասում է, որ եթե դուք չկարողանաք հաստատել ձեր իրավունքներն ու արտոնությունները, ապա «զպատիւ և զտուն, զնող, զջուր և զտատցուածս ձեր Արևուց աշխարհի ազատ արանցս շնորհեսցուք»[3]։

Միջին դարերում հողատեր ֆեոդալները, որպես հողի և ջրի հայրենատեր-սեփականատեր, վանքերին և եկեղեցիներին նվիրաբերում են գետերից և ջրանցքներից լիակատար կամ շաբաթվա որոշ օրեր օգտվելու իրավունքը։

Տեկորի 1036 թ. արձանագրության մեջ հիշատակված է, որ Տեկորի և Ագարակի մեջ կատաղի վեճ էր սկսվել ջրից օգտվելու պատճառով։ Այս վեճը կարգավորելու համար սահմանվում է հետևյալ կարգը՝ Տեկորին իրավունք է տրվում չորս օր և չորս գիշեր, իսկ Ագարակին երեք օր և երեք գիշեր օգտվել ջրից[4]։ Այրիվանքի 1300 թ. արձանագրությունով վանքին թույլ է տրվում ջրից օգտվել միայն ուրբաթ օրը[5]։

Այսպիսով, հողի և ջրի մասնավոր սեփականության իրավունքը հանդիսանում էր անտեսական այն հիմքը, որը հնարավորություն էր տալիս աշխարհիկ ֆեոդալ հողատերերին դանձել նաև ջրից օգտվելու որոշակի հարկեր և տուրքեր։

1036 թվականին Պետրոս կաթողիկոսը Աշնակ գյուղի այգին նվիրում է Անիի սուրբ Լուսավորիչ եկեղեցուն «որմով և ծառովք պտղաբերովք և անպտղովք և խոտագետնովք և Գ. (3) աւր ջուր ազատ ի խալաէ և ի գեղջէ յամենայն հասուց»[6]։ Այս հատվածում ջրից գանձվող հարկը կոչվել է «խալէ» կամ «հաս»։

Շիրակավանի 1228 թ. արձանագրությունով աթաբակ Իվանեն և Խոշակը թողնում են Շիրակ գյուղի «...զջրսահին բաժն, յորդեցէ

---

1 Կանոնգիրք, էջ 64։

2 Նույն տեղում, էջ 109։

3 Մ. Կաղանկատվացի, էջ 119—120. հմմտ. Ստ. Օրբելեան, էջ 30—31։

4 Վիմական տարեգիր, էջ 20։

5 Նույն տեղում, էջ 40։

6 Նույն տեղում, էջ 20։

յորդիք աղաս ի բաժէն»[1]։ Այսպես արդեն ջրից դանձվող հարկը կոչվել է «բաժ»։

Ջրից դանձվող հարկերի չափն ու քանակը որոշել խիստ դժվար է։ Հավանական ենթադրություն է, որ այդ հարկը դանձվում էր նկատի ունենալով թե մեկ օրում հողերը որքան «բահաբերան» ջուր են ստացել։ Որ այս հարկը դանձվում էր «ըստ բահի», այդ մասին մի կողմնակի վկայություն է պահպանվել վիմական արձանագրություններում։

1251 թ. Խաթրա վանքի արձանագրության մեջ հիշատակված է, թե Օրբելյան Տարսայիճ իշխանի Ասփեն դուստրը վանքին է նվիրում իր «իսաս հողն Բլրի հանդի զՆեննեկան Ա բահի ջուր»[2]։

«Շարիատ»։ Ֆեոդալական հասարակական-տնտեսական ֆորմացիայի նյութական բարիքներ արտադրողների կողմից արդյունքներով կամ նատուրայով ու դրամով վճարված հարկերն ու տուրքերը հայտնի է նաև «շարիատ» անվան տակ։ Հարկային այս տերմինը ունի շատ ավելի լայն իմաստ ու նշանակություն, քան մինչև այդ մեզ հայտնի հարկային բոլոր տերմինները։

«Շարիատ» հարկային տերմինը ստուգաբանել են նոր Հայկազյան բառարանի կազմողները, ակադ. Ն. Մառը, Ս. Եղիազարյանը, ակադեմիկոսներ Հ. Մանանդյանը, Հ. Աճառյանը և Ստ. Մալխասյանցը։

Նոր Հայկազյան բառարան կազմողները գտել են, որ «շարիատ» նշանակել է «իբրև յաւելուած, այսինքն՝ վաշխ յաւելեալ ի վերայ փոխոյ քան զդլուխ դրամոյն և այլոց ինչից, ասելի բան տուածին»[3]։

Ակադ. Ն. Մառը «շարիատը» համեմատելով արաբական sariat բառի հետ նշել է, որ հայկական «շարիատը» ծագել է արաբական «sariat»-ից և իբր «շարիատ» են կոչվել այն բոլոր հարկերն ու տուրքերը, որ դանձվել են մահմեդական «շարիատ» սովորույթի համաձայն[4]։

Ս. Ա. Եղիազարյանը ընդունելով Ն. Մառի այս ստուգաբանությունը, իր կողմից ավելացրել է, թե «շարիատը» հարկի նույն տասանորդն էր, որը «շարիատ» մահմեդական իրավունքով հարկի էր ենթարկվում Հայաստանի տնտեսության բոլոր ճյուղերը, բոլոր տեսակի կայքն ու գույքը, արհեստային արտադրության և առևտրա-

---

[1] Վիմական տարեգիր, էջ 71։

[2] Նույն տեղում, էջ 148, հմմտ. նաև էջ 62։

[3] Տես ՆՀԲ, «Շարիատ» բառը, հմմտ. Առձեռն բառարան, էջ 633։

[4] Н. Марр, Новые материалы по армянской эпиграфике. См. ЗВО т. VIII, СПБ, 1893, стр. 80.

բական գործարքներից ստացած եկամուտները, հարկատու հպատակները, գյուղատնտեսական մթերքները, անասունները և այլն[1]։

Ակադ. Ն. Մառը և սրա օրինակով Ս. Եղիազարյանը, ինչպես գիպուկ կերպով նկատում է ակադ. Հ. Մանանդյանը, աչքաթող են արել պատմական այն իրողությունը, որ «շարիատը» որպես հարկային տերմին գործածական էր Հին կտակարանի դրաբար թարգմանության մեջ։

Պատմական սկզբնաղբյուրներում պահպանված «շարիատ» հարկային տերմինի մասին եղած վկայությունների հիման վրա ակադ. Հ. Մանանդյանը գտել է, թե «շարիատ» համարվել են այն բոլոր հարկերը ու տուրքերը, որ վճարվել են հողից, այգիներից, բամբակից, հացից և դարմանից[2]։

Ակադ. Հ. Աճառյանը իր «Հայերեն արմատական բառարան» աշխատության մեջ «շարիատը» համարում է «տոկոս, վաշխ» կամ հողային հարկ, որը անստույգ ձևով գործածված է երկու անգամ Հովհաննավանքի անթվակիր մի արձանագրության մեջ, «Շարիատն», շարունակում է ակադ. Հ. Աճառյանը, ունի տասանորդի իմաստ և համընկնում է արաբական «sariat» բառի հետ»[3]։

Ակադ. Ստ. Մալխասյանցը ընդունում է «շարիատ» հարկային տերմինին տված իր նախորդների կարծիքը և ավելացնում է, որ «շարիատը տոկոս էր, որ վճարվում էր փոխ տրված կենսամթերքների համար, իբրև հավելված։ Շարիատը բնական բերքով այն հարկն էր, որ շինականները վճարում էին կալվածատերերին—արտերից, այգիներից, անասուններից։ Շարիատի քանակն ու չափը, շարունակում է հեղինակը, որոշել դժվար է, մի քանի դեպքում այն հավասար է եղել բերքի տասանորդին»[4]։

Այս բոլոր ստուգաբանությունները թերի են և լրիվ չափով չեն բացահայտում «շարիատ» հարկային տերմինի իմաստն ու նշանակությունը։

«Շարիատի» մասին եղած բոլոր վկայությունների հետազոտությունը ցույց է տալիս, որ հարկային այս տերմինը ունեցել է ավելի լայն իմաստ, քան մինչև օրս կարծվել է։ «Շարիատը» ոչ մի-

---

[1] С. А. Егиазаров, Исследования по истории армянского права, Киев, 1919, стр. 4, 40.

[2] Հ. Մանանդյան, Նյութեր Հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության, Երևան, 1928, էջ 55։

[3] Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. V, էջ 302—303։

[4] Ստ. Մալխասյանց, Բացատրական բառարան, հ. III, էջ 507։

այն հողային հարկ էր, արդյունքներով վճարված ռենտա, այլև դրամական հարկ։

«Շարիատ» հարկային տերմինը անցել է պատմական զարգացման մի շարք էտապներ։ Եթե սկզբնական շրջանում նա նշանակել է վաշխ, տոկոս, հավելվածք, ապա միջին դարերում աշխատանքի հասարակական բաժանման խորացման և ընդարձակման, քաղաքների, քաղաքային կյանքի, արհեստային արտադրության, ապրանքափոխանակության և դրամական շրջանառության զարգացման հետևանքով «շարիատը» հանդես է գալիս նաև որպես դրամական հարկ։

«Շարիատը» որպես հարկային տերմին հայտնի էր նույնիսկ 5-րդ դարում, երբ չկային ոչ մահմեդականներ և ոչ էլ հարկային մահմեդական սիստեմը։ Հին կտակարանի գրաբար թարգմանության տեքստում «շարիատը» որպես հարկային տերմին գործածված է միայն երկու անգամ։

«Եթէ աղքատանայցէ եղբայր քո և տկարանայցէ ձեռօք,— ասված է Հին կտակարանում,— ...Մի առնուցուս ի նմանէ վաշխ և տոկոս... զարծաթ քո մի տայցես նմա ընդ տոկոսեօք և զկերակուր քո մի տայցես նմա ընդ շարիատիւ»[1]։

Հին կտակարան կազմողներն առաքյալների քարոզներից մեջ բերած հատվածներով աշխատում են համոզել առևտրա-վաշխառուական դասի ներկայացուցիչներին, որ նրանք չպետք է ծանր տոկոսներ ստանան փոխ տված արծաթի և սննդամթերքների դիմաց։

«Մի տայցես եղբօր քում արծաթ վաշխիւ, և մի զկերակուր շարիատիւ, և մի տոկոսեօք...»[2]։

Այս երկու հատվածներում «շարիատը» հանդես է եկել որպես տոկոս, որը վճարում էին փոխառուները ստացած կենսամթերքների համար։

Հենց «շարիատ» հարկային տերմինի այս իմաստն էլ հաշվի առնելով Հայկազյան բառարան կազմողները այն մեկնել են որպես «յաւելեալ ի վերայ փոխոյ» կամ «զգլուխս դրամոյն և այլոց ընչից»։ Բայց, ինչպես նշվեց վերևում, արդեն միջին դարերում «շարիատ» հարկային տերմինը ենթարկվում է լուրջ փոփոխության. նա հանդես է գալիս որպես հարկային տերմին շատ ավելի լայն առումով, քան «արքունական հարկը», «արքունի նեպակը», «չարը», «աշխարհական հարկը»։

---

[1] Գիրք Աստուածաշունչ մատեան հին և նոր կտակարանաց, Ղևտ, գլ. ԻԵ, 37։
[2] Նույն տեղում, Բ օրէնք, գլ. ԻԳ, 19։

Սկզբնաղբյուրներում պահպանված վկայությունները հնարավորություն են տալիս ենթադրել, որ «շարիատն» արդյունքային ու դրամով գանձվող այն հարկն թ տուրքն էր, որ հողատեր ֆեոդալները ստանում էին հողերից, այգիներից, հացաբույսերից, հացից, անասուններից, բամբակից, գյուղատնտեսական և անասնապահական արդյունքներից, հարդից և խոտից։

«Շարիատը» որպես հողային հարկ։ Այս առումով և նշանակությամբ «շարիատը» մի շարք անգամ գործածվում է վիմական արձանագրություններում։ Տեկորի 1008 թ. արձանագրությունով Կատրանիդե հայոց թագուհին աղատում է «զՏեկորոյ շարյատն վասն Գագիկայ Շահնշահի սրբեշատութեան և իմ որդեացն...»[1]։

Որ «շարիատը» հիշատակված է գյուղերից գանձվող այլ հարկերից զատ, որպես առանձին հարկ, այդ մասին խիստ ուշագրավ վկայություն է պահպանվել Կատրանիդե թագուհու կողմից թողած և Աշոտ թագավորի կողմից հաստատված Տեկորի արձանագրության երկրորդ մասում։

«Արդ եթէ ոք հակառակ դա կամ հարկիս կամ շարիատիս թողուցու ՅԺԸ-ի՝ն նզովեալ է...»[2]։

Մոստարայի 1015 թ. արձանագրության մեջ հիշատակված է, որ Համզեի որդի իշխանաց-իշխան Վահրամը թողնում է «զՄաստարայի շարիատն վասն Գագիկայ Շահնշահի...»[3]։

Ալամնայի արձանագրությամբ Աշոտ Գ-ի դուստր, վրաց և հայոց թագուհի Սոփեն թողնում է «զԱլամանն շարյատս»[4]։

Այս հատվածներում պարզ չէ, թե արդյոք «շարիատը» հողային հարկ է, թե հարկ ընդհանրապես։ Բայց բարեբախտաբար Հովհաննավանքի 1204 թ. արձանագրության մեջ պահպանված վկայությունը հնարավորություն է տալիս պնդել, որ վերոհիշյալ հատվածներում մատնացույց արված «շարիատը» հողային հարկ էր։

Այս հատվածում «շարիատը», որպես հողային հարկ, այնքան արժեքավոր է, որ այն մեջ ենք բերում ամբողջապես։

Ոմն Գրիգորի որդի Ամսաջանը գալով Հովհաննավանք, արձանագրել է տալիս, թե «հէնց էլաւ պարոնաց ձեռնէ զերկիրս առին ես չբաժանեցայ ի ծառայութենէ... Ոհանավանք ինձ տվին հէրէնիք. Հատարայոց տոնա խլած էր, ...հողի շարատ էր գրած. մեք էլ...

---

[1] Վիմական տարեգիր, էջ 13։

[2] Թ. Թորամանյան, Հայկական ճարտարապետություն, Երևան, 1942, էջ 218—219։

[3] Վիմական տարեգիր, էջ 14, հմմտ. Ալիշան, Այրարատ, էջ 136։

[4] Նույն տեղում, էջ 26։

ի սուրբ Կարապետս ապստարեցաք, վանաց... հողի շարիատ վեր կալաք վասն արեշատութեան պարոնաց մերոց...»[1]։

Անկասկած է, որ այս հատվածում արդեն «շարիատը» հողային հարկ է։ Որ «շարիատը» հողային հարկ էր, այդ են ապացուցում նաև մյուս վկայություններում պահպանված հատվածները։

Աշտարակի 1323 թ. արձանագրության մեջ ուղղակի մատնացույց է տրված, որ «շարիատը» հողային հարկ է։ 1323 թ. Աշտարակ է դալիս Աղպուղայի ամուսին Սիթիխաթունը և սուրբ Մարիանն եկեղեցուն է նվիրում «զՓարպոյ հողին կէսն», թողնում է հիշատակարան, որ այսուհետև ոչ ոք իրավունք չունի այդ հողերից «ոչ շարիատ ոչ էլ մեծ կամ փոքր խարճ...» պահանջել[2]։

«Շարիատը» որպես այգիներից ստացած հարկ։ Այգիներից հավաքված հարկը նույնպես լայն առումով կոչվել է «շարիատ»։

Իվանեի որդի Աղբուղան թողնում է «զՓարպոյ այգեաց շարիատն»[3]։

Դեմիտրեի որդի Դավիթը թողնում է «զԱւանայ զայգեաց շարէտն» և արձանագրել է տալիս, որ ոչ ոք «ի մերոց կամ յաւտարաց» իրավունք չունի խանգարել նրա գիր-վճիռը և նորից «զշարէտ ասնու...»[4]։

«Շարիատի», որպես այգիներից գանձվող հարկի մասին մատնացույց է տրված նաև Ավանի 1287 թվականի արձանագրության մեջ։ Այս արձանագրությունով ոմն Խութլու Բուղան Ավանի այգիները ազատում է «շարիատ»-ից։

«...թվին ՉԼԶ (1287) յաշխարհակալութեան արքայից արքայի Արղունին, ես աթապակ և ամիրսպասալար Խութլու բուղա... թողի զԱւանայ զայգոց շարեան...»[5]։

«Շարիատը» որպես հացաբույսերից և հացից հավաքված հարկ։ Այս իմաստով «շարիատը» գործածվում է Արուճի և Մրենի վիմական արձանագրություններում։

Խուսան աղայի որդի՝ Մակլին արձանագրել է տալիս, որ՝ «եկի Արուճ իմ հաւրս գանձային գեղս և թողի զհացին շարիատն...»[6]։

---

[1] Վիմական տարեգիր, էջ 142։

[2] Նույն տեղում, էջ 161։

[3] Նույն տեղում, էջ 107։

[4] Նույն տեղում, էջ 127։

[5] Կ. Ղաֆադարյան. Ավանի երկրագործության ծածկագիր արձանագրությունը, Երևան, 1945, էջ 20։

[6] Վիմական տարեգիր, էջ 126։

Պարոն Սահմադինը Մրենի արձանագրության մեջ հիշատակում է, որ ինքը «հալալ արդեանց», գնել էր Մրենը, հաստատել էր «արձանագրով» և թողել «զՄրենոյ տասնակն ճացին, որ ի շարիաթն...»[1]:

«Շարիատը» որպես անասուններից հավաքած հարկ: *Անասուններից հավաքած հարկը նույնպես կոչվել է «շարիատ»։ Շիրակավանի արձանագրության մեջ Շիրակավանի տանուտերեր Խաշուտը և Մխիթարիչը վկայել են, որ «...ով եկեղեցոյս դրանս կա և սպասաւորէ սմա թէ աբեղա եթէ միակեց, թէ շատ տաւար ունենան եթէ քիչ թէ շատ վաստակ ցանեն և թէ քիչ. ոչ շարիատ, ոչ համարելէ, ոչ սուսունի, ոչ եղին թաղար... հետ եկեղեցոյս սպասաւորացս ոչ սմա խաւսք չինի»*[2]։

«Շարիաթը» որպես դրամական հարկ: *Այս առումով խիստ ուշագրավ է Գառնիի մի արձանագրությունը։*

Այս արձանագրության մեջ հիշատակվում է, որ «Զխ թվին[ի] Խոշաք դուստր Աթա[պակ] Աւագի[ն] որդո Աթապեկ Իւանէի, որդո Մեծին Սարգսի և իմ որդին Ամիր-Զաքարէն դիր տուաք Գառնո մէր սեփական հայրեն[ա]ցս, որ եկն ժԱ սպ[իտակ] շարիատ էր և ի ոչխարն Ա։ Բալախահարկ և մեք վերուցուք զայս հարկ աշխարհակալուց կենացն և դմեր զավակ[ացն] արևին... աղատեց[աք] զեկն և զոչխար յամենայ[ն] հարկաց, վերացուք և զգինոյ բաժ[ն]»[3]։

«Շարիաթը» որպես բամբակի ցանքից և բամբակի բերքից հավաքված հարկ: *Շիրին և Պայլու խաթունները, Թողթնոը, Թալեսը, Խոճեն, Ղայիրը թողնում են «զՀրիփսիմուցս զբաբակին շարիատն և զշահնային բաբակի հարկն...»*[4]։

Օշականի 1286 թ. արձանագրությունով ոմն Սահականոս ձեռնավոր և Վահրամ Քեթոբարը թողնում են «զՅաւշականու քահանայից զինչ հարկ որ կայր այդուց... բամբակի և ժամահարին...»[5]։

«Շարիաթը» որպես յուղից և ձերից վերցված հարկ: *Խոսրովանուշ հայոց թագուհին հաստատում է յուղից տրվելիք «շարիատի» չափը՝ «կայթ մի»։ Տեկորի արձանագրության մեջ այս առ-*

---

[1] *Վիմական տարեգիր, էջ 126, հմմտ.* Ալիշան, *Շիրակ, էջ 140։*

[2] *Նույն տեղում, էջ 247։*

[3] *«Հուլիս», 1910, № 8։*

[4] *Վիմական տարեգիր, էջ 138։*

[5] *Նույն տեղում, էջ 129։*

թիվ կարդում ենք «ես Խաչատուր Հայոց թագուհի հաստատեալ եմ զՏեկորոյ շարյեատն յեղն կայթ մի»[1]։

Շարիատ է կոչվել նաև հարդից հավաքված հարկը։ Օշականի արձանագրության մեջ հիշատակվում է, որ պարոն Սահմատին թողնում է «զՅաուշականս զհացի և զդարմանի զշարիատն զվերի և զներքի զամէն հանդի...»[2]։

Ակադ. Հ. Մանանդյանն իր «Նյութեր հին Հայաստանի տնտեսական կյանքի պատմության» հոդվածում շատ հաջող փորձեր է կատարել բացատրելու «շարիատի» նշանակությունը և որոշելու նրա չափերը։ Նա բանավեճի մեջ մտնելով պրոֆ. Ս. Եղիազարյանի հետ, առարկում ու մերժում է սրա այն դրությունը, որ իբր «շարիատը» բացառապես տասանորդի իմաստ ունի։ Պրոֆ. Ս. Եղիազարյանը հիմք ունենալով Մրենի այն արձանագրությունը, որտեղ ասված է, թե Սենոպ Սահմադին թողել է Մրենի «Տասնակն հացին, որ ի շարիատ» ենթադրել է, որ դա «մահմեդական տասանորդ» կամ «աշար» հարկն էր։

Ակադ. Հ. Մանանդյանը այս ենթադրությունը համարում է անհավանական։ Մրենում, ասում է նա, եթե «շարիատը» տասանորդ էր, այդ չի կարող, բնականաբար, ապացույց լինել, որ նա նույն նշանակությունն է ունեցել նաև մյուս վկայություններում։

«Շարիատը», որի բուն իմաստը տոկոս էր,— շարունակում է ակադ. Հ. Մանանդյանը,— բերքի որոշ մասն էր, որի քանակը տարբեր վկայություններում, որ վերաբերվում են զանազան դարաշրջանների, կարող էր նույնը չլինել»[3]։

Այնուհետև ակադ. Հ. Մանանդյանը խիստ զգուշությամբ նշում է, որ «եթե վիմական տարեգրի «կայթ մի» ընթերցվածը ճիշտ համարենք և տաւերորդ դարի այս «կայթը» հավասար ընդունենք Շիրակացու ժամանակվա «կայթին», որը բյուզանդական 60 լիտր էր, ապա Տեկորի յուղի բնահարկն այժմյան կշռով հավասար կլինի 19,584 կիլոգրամի[4]։ Ակադ. Հ. Մանանդյանը միաժամանակ նշում է, որ այս «հաշիվն անում ենք վերապահորեն, որովհետև կշիռներն ու չափերը կարող էին նույնը չլինել զանազան դարաշրջաններում և տարբեր տեղերում»[5]։

---

[1] Վիմական տարեգիր, էջ 8, հմմտ. Ալիշան, Այրարատ, էջ 61։

[2] Նույն տեղում, էջ 130։

[3] Հ. Մանանդյան. Նյութեր... (տե՛ս ՀՍԽՀ Գնահատողարանի «Տեղեկագիր», Երևան, 1928, № 4, էջ 57—58)։

[4] Նույն տեղում, էջ 57։

[5] Նույն տեղում, էջ 58։

Ակադ. Հ. Մանանդյանի նույնիսկ այս զգուշավոր հաշիվները մեզ խիստ կասկածելի են թվում։ Նախ անընդունելի է, որ Տեկորի նման մեծ գյուղը տարեկան հայոց թագուհուն վճարեր ընդամենը 19,5 կիլոգրամ յոտ, երկրորդ՝ անհավանական է, որ հայոց թագուհի խոսրովանուշը 19,5 կիլոգրամ յուղից ազատելու համար մեկներ Տեկոր և արքայական հրամանով հաստատեր և ազատեր գյուղը այդ չնչին հարկից։

«Շարիատի» մասին առայժմ մեզ հայտնի 14 վկայությունները հնարավորություն չեն տալիս որոշելու նրա չափը. մնում է ենթադրել, որ «շարիատը» բնամթերքներից, անասուններից և՝ նատուրայով և՝ դրամով հավաքված հարկի որոշ չափ էր, որոշ քանակ։ Անհավանական չէ, որ այդ որոշ չափն ու քանակը չէր գերազանցում եկամտի 1/10-ը, որովհետև, ինչպես ճիշտ կռահել է Ս. Եղիազարյանը, Մրենի 1284 թ. արձանագրության մեջ ուղղակի հիշատակվում է, որ «Սէնոպ Սահմատինը» Մրենը ազատում է «տասանային հացի, որ ի շարիատն...»։

Բացի այս ուղղակի ցուցումից, վիմական արձանագրություններում պահպանված են այլ կողմնակի վկայություններ, որոնք հնարավորություն են տալիս ենթադրել, որ «շարիատը» բնամթերքով և դրամով վճարվող հարկի տասանորդն էր։

Սեղտ իշխանուհին 1021 թ. Բագնայրի արձանագրության մեջ հիշատակում է, որ «տասնորդեցի զվաստակս գեղջն իմոյ, Գաղտաի ընծայելով ի սուրբ ուխտս Բագնայրիս...»[1]։

Թվում է, որ ճիշտ է նաև ակադ. Հ. Մանանդյանի այն կռահումը, որ «շարիատը» որպես տոկոս, բերքի մի մասը տարբեր դարաշրջաններում կարող էր նույնը չլիներ։

Այսպիսով, «շարիատի» մասին եղած և մեզ հայտնի բոլոր վկայությունները առայժմ մեզ հնարավորություն չեն տալիս ճշտությամբ որոշել նրա չափը։ Բայց Բագնայրի 1021 թ., Մրենի 1284 թ. արձանագրությունների և արաբական «ուշուր» կամ «աշուր» տասանորդ հարկային չափի հիման վրա կարելի է հաստատապես պնդել, որ «շարիատն» աշխարհիկ ֆեոդալներին վճարվող հարկի տասանորդն էր։

«Պախտ-տանց»։ «Պախտը» որպես արդյունավճար ռենտա հիշատակվում է միայն մեկ անգամ և այն էլ Անիի 1045—1054 թթ. արձանագրությունում։ Առոն մագիստրոսը այս արձանագրության մեջ հիշատակում է, որ ինքը գալիս է «դեղեցկաշէն բերդս յԱնի»,

---

[1] Ալիշան. Շիրակ, էջ 113, Վիմական տարեգիր, էջ 27—28։

բերում է «ոսկի մատանեաւ զիր ազատութեան զինքնակալ ծիրանեծին թագուհոյն վասն պախտից տանց Բաղաքիս և բաստակին, զոր տային ամ յամէ շափ ուրից լաւերց, այլ և ի խնդրոյ իշխանաւորացս խափանեցի և զզիւտ Երկուց լաւերց, զոր տայր մուրսիրն այս ամէն»[1]:

Հ. Աճառյանը իր Արմատական բառարանում «պախտը» ստուգաբանել է «տան հարկ», որը նրա կարծիքով նորագյուտ բառ է[2]: Ստ. Մալխասյանցի կարծիքով «պախտ տանցը» շարիաթի նման հարկ էր, որ տուն գլուխ վճարում էին բերքով, ութ լիտր քանակությամբ»[3]:

Ակադ. Հ. Մանանդյանը գտնում է, որ «պախտ տանցը» հարկի մի մասն էր, բաժինը և վճարվում էր դարձյալ նատուրայով: «Պախտը»,— գրում է ակադ. Հ. Մանանդյանը,— իմ կարծիքով, հոմանիշ է «շարիաթին», և հավանորեն նույն հարկի պարսկերեն անունն է[4]: Մեզ թվում է, որ հարգելի գիտնականի այս ենթադրությունը անհիմն է և պատմականորեն չի փաստարկվում:

Ինչպես ցույց ենք տվել վերևում, «շարիաթը», որպես հողային տեսակ, ուներ ավելի լայն նշանակություն ու իմաստ, քան մեզ հայտնի հարկային բոլոր տերմինները: Բացի այդ, «շարիաթը» վճարում էին գյուղացիները, իսկ «պախտը», վճարում էին քաղաքի բնակիչները:

Առան մագիստրոսը արքայական հրամանով, և այն էլ քաղաքի իշխանավորների «խնդրով» և համաձայնությամբ, ազատում է յուրաքանչյուր «տանց քաղաքի» «պախտի» ութ լիտրից երկուսը և թողնում է միայն վեց լիտր: Այստեղ խոսքն, անկասկած, քաղաքային բնակիչներից հավաքած հարկի և ոչ թե գյուղացիներից վերցրած «շարիաթի» մասին է:

Մեր կարծիքով այս հարկը հավաքվել է այգեգործությամբ պարապող քաղաքի բնակիչներից:

Այս դրույթն ապացուցվում է նաև այլ վկայություններով: Հայտնի է, որ ներմուծվող գինիների և ոգելից խմիչքների վրա միջնադարյան քաղաքներում դրվում էր հատուկ մաքս: Երբ ոգելից խմիչքները վաճառվում էին խանութներում և շուկաներում, ապա վաճառողը վճարում էր վաճառման հարկ: Բայց ոգելից խմիչքները հարկի էին ենթարկվում մինչև վաճառելը. արտադրողը պարտավոր

---

[1] Վիմական տարեգիր, էջ 27:

[2] Հ. Աճառյան, Արմատական բառարան, հ. V, էջ 781:

[3] Ս. Մալխասյանց, Բացատրական բառարան, հ. IV, էջ 36:

[4] Հ. Մանանդյան, Նյութեր..., էջ 59:

էր հարկ վճարել արտադրանքի համար։ Ուրեմն «պախտ» հարկը լիտրներով վճարված այն հարկն էր, որ արտադրողը տալիս էր խմիչքներից, մինչև շուկա դուրս բերելը։ Իսկ երբ դուրս էր բերում վաճառելու, նա տալիս էր վաճառման հարկը, որը արձանագրություններում կոչվել է «խալէ» կամ «խալալ»։

1057—1083 թթ. Անիի մի արձանագրության մեջ հիշատակվում է, որ քաղաքում կար «գինևոր» անեցիների հատուկ կատեգորիա։ Հավանական է, որ «պախտը» վճարում էին հենց այս «գինևոր» անեցիները և մյուս քաղաքների նույն կատեգորիայի բնակիչները։

«Թաստակ»։ Ինչպես «շարիատը», «պախտը», այնպես էլ «թաստակը» գործ է ածվում միայն վիմական արձանագրություններում։ Այս հարկը մեկնաբանելու այլ աղբյուրներ չկան և այդ է պատճառը, որ հարկային այս տերմինների ստուգաբանությունները հիմնված են միայն հավանական ենթադրությունների և կռահումների վրա։

Ակադ. Ն. Մառը «թաստակը» ստուգաբանել է «հրամանագիր» և համարել է հոմանիշ պարսկական dāstāk տերմինին[1]։ Ս. Ամատունին իր «Հայոց բառ ու բանում» «թաստակը» համարում է «կոռ» և գտնում է, որ այս նույն կոռն էր[2]։ Աճառյանը կրկնում է այն, ինչ նախորդ տերմինների մասին՝ մի տեսակ հարկ, նորագյուտ բառ[3]։

Պրոֆ. Ս. Եղիազարյանը նույնպես կարծել է, որ «թաստակն» իրանական ծագում ունի և փոպված է dāstāk բառի հետ և գտել է, որ նա որոշ տուրք էր «հարկահավաքի օգտին»[4]։ Ակադ. Հ. Մանանդյանը գտնում է, որ Ս. Եղիազարյանի այս ենթադրությունը կամ գուշակությունը անհավանական չէ, որ ինքն այդ եզրակացության է եկել ոչ թե գուշակության, այլ «փաստական ուրիշ ցուցումների գնությամբ, որ բխում են արձանագրական վկայություններից»[5]։

«Թաստակը», որպես հարկ, արձանագրություններում հիշատակված է 5 անգամ և այն էլ 11-րդ դարում, որից հետո «թաստակի» մասին այլևս ոչ մի վկայություն չկա։

Տեկորի 1008—1014 թթ. արձանագրությունը բաղկացած է երկու

---

[1] Н. Марр, Новые материалы по армянской эпиграфике, стр. 80.
[2] Ս. Ամատունի, *Հայոց բառ ու բան*, Վաղարշապատ, 1912, էջ 205։
[3] Հ. Աճառյան, *Արմատական բառարան*, հ. I, էջ 1144—1145։
[4] Ս. Եղիազարյան, Исследования..., էջ 4, 42։
[5] Հ. Մանանդյան, *Նյութեր...*, էջ 61։

մասից։ Առաջին մասում Կատրանիդե Հայոց թագուհին Տեկորն ազատում է «շարիատից», իսկ երկրորդ մասում Աշոտ թագավորը հաստատում է, որ նա Տեկորն ազատում է նաև «թաստակից»։ «...Եվ Աշոտ թագաւոր,— կարդում ենք այդ արձանագրության մեջ,— թողեալ եմ զհարկն բնութիմբ յափանենից և զթաստակն...»[1]։

Ակնհայտ է, որ Տեկորը վճարել է և՛ հարկ, և՛ «շարիատ», և՛ «թաստակ»։ Այստեղ հարկը գործածված է կամ արքունի կամ թի աշխարհական հարկի իմաստով։ «Շարիատը», ինչպես տեսանք, բնամթերքով և դրամով վճարվելիք հարկի մի մասն էր, մի բաժինը, իսկ «թաստակը» դեռ ստուգաբանության չի ենթարկվում։ «Թաստակի» իմաստն ըմբռնելու համար անհրաժեշտ ենք համարում մեջ բերել նաև մյուս բոլոր վկայությունները։

Հռոմոսի 1013 թ. արձանագրությունում հիշատակված է, որ Գագիկ Ա. թագավորի հրամանով ոմն Անանիա առաջնորդը «մեծաւ ջանիւ» Հռոմոսը ազատում է «զհարկ և զթաստակ» հարկերից[2]։

Երևանի 1038 թ. արձանագրությունով Աբբասի դուստր «բարեպաշտ» թագուհին ազատում է «զերկրվայց թաստակաս յորդէց յորդիս»[3]։ Ասածը, ինչպես վկայակոչել ենք վերևում, Անի քաղաքն ազատում է թաստակից[4]։

Եվ, վերջապես, մի վկայություն էլ կա «թաստակից» ազատելու մասին 1041 թ. Ալամի արձանագրությունում[5]։

Այս 5 վկայություններից, ինչպես նկատելի է, 4-ում հիշատակված է, որ տերերը գյուղերն ազատում են «թաստակ» հարկից, իսկ մեկ վկայության մեջ մատնացույց է արված, որ «թաստակից» ազատվում են նաև Անի քաղաքի բնակիչները։

«Թաստակը» եթե մենք համարենք նույն «շարիատը» կամ «պախտ տանցը» կամ այս հարկերի ¼-ը, ինչպես ենթադրել է ակադ. Հ. Մանանդյանը, ապա անիմաստ է դառնում նույն արձանագրությունների մեջ «շարիատի» և «պախտ տանցի» հետ միաժամանակ «թաստակի» հիշատակությունը։ Հարկերի այս 3 տեսակների միաժամանակ հիշատակումը ամուր հենակ է ենթադրելու, որ «թաստակը» հարկի առանձին տեսակ էր։

---

[1] Վիմական տարեգիր, էջ 13։

[2] Նույն տեղում, էջ 14։

[3] Նույն տեղում, էջ 21։ Հմմտ. նաև Գարեգին վարդապետ, Քարտեզ հայ հնագիտության, տես «Ճողովածու», 1913, էջ 179։

[4] Վիմական տարեգիր, էջ 27։

[5] Н. Марр. Новые материалы по армянской эпиграфике, стр. 26.

«Թաստակ» հարկի մասին առայժմ մեզ հայտնի բոլոր վկայությունները հաստատ հիմքեր են տալիս պնդել, որ այդ հարկը չի վճարվել «մութասիպներին», «ձեռնավորներին», «շահնարներին», ինչպես ենթադրել է տակավ. Հ. Մանանդյանը, որովհետև վիմական արձանագրություններում հիշատակված պետական պաշտոնյաներին, հարկահավաք-կառավարիչներին վճարված տուրքերը հայտնի են ոչ թե «թաստակ», այլ «հարկ» անվան տակ։

Հավանական ենք համարում, որ «թաստակ» կոչված բնամթերքներով հարկը դանձվել է արքունիքին և արքունի տան սեփականին պատկանող հայրենի կալվածների վրա նստած գյուղացիներից և ոչ թե միջնադարյան Հայաստանի հարկատու բնակչության բոլոր կատեգորիաներից։ Այս ենթադրության միակ հաստատումն կովանն այն է, որ «թաստակի» մասին եղած և մեզ հայտնի բոլոր վկայությունները վերաբերվում են միայն թագավորական տանը պատկանող բնակավայրերին։ Հայտնի է, որ Տեկորը պատկանում էր Կատրանիդե թագուհուն և սրա Աշոտ որդուն, Հոռոմոսը և Երեսուքը՝ թագրատունիներին և սրանց ժառանգներին։

«Ամիրանարկ» կամ «ամիրաներին» վճարվելիք տուրքեր։ Միջնադարյան Հայաստանի քաղաքները կառավարվում էին քաղաքապետ ամիրաների միջոցով։ Խոշոր, զարգացած, առևտրի և արհեստային արտադրության կենտրոններն ունեին «ամիրայից—ամիրաներ»։

Քաղաքների կառավարիչ ամիրաներն ունեին լայն ֆունկցիաներ և գործունեության ընդարձակ շրջան։ Նրանց էր ենթակա քաղաքների խորհուրդը, ավագանին, քաղաքային պաշտոնյաները, մուխթասիպները և այլն։ Ամիրաները պետությունից ոռճիկ չէին ստանում և ապրում էին հարկատուներից հավաքած տուրքերի միջոցով։

Բջնիի անթվակիր արձանագրություններից մեկում հիշատակված է, որ «Ես Զաքարէ... վասն մեր յերկար կենդանութեան և փրկութեան հոգոյ իմոյ ի վեր կալայ, որ ի Բջնի այլ մարդոյ տերութիւն չէլնի. և թողի զամէն հարկ, զամիրայնական, զհարսանէհակ, զկովայհամարն, զկալաթաղարն, զսայլի սպն. զմահկանէն և աւտարականն քան զդաղմէն այլ իրք չտայ. աղման չանեն, որ յայսմհետէ մինչև յաւիտեան հաստատուն կացցէ արձանս իմ»[1]։ Ինչպես նկատելի է, Բջնիի բնակիչները վճարել են նաև «ամիրահարկ»։

---

[1] Վիմական տարեգիրք, էջ 226—227։

«Մուխթասիպ»-ներին վճարված տուրքեր։ Հայ աշխատավոր ժողովուրդը բացի վերոհիշյալ հարկերից պարտադիր կերպով տուրքեր է վճարել նաև պետական այս պաշտոնյաներին։

«Մուխթասիպ» կամ «մուսայիպ» տերմինը գործածական է վիմական արձանագրություններում, Սմբատ Գունդստաբլի Դատաստանագրքում, արաբական աղբյուրներում։ Մուխթասիպ—մուսայիպ muhtasib պետական այն պաշտոնյան էր, որը քաղաքներում վարում էր ոստիկանական պաշտոն, հսկում էր շուկաների, հրապարակների, խանութների, կշիռների, չափերի վրա և հավաքում էր պետության կողմից քաղաքների բնակիչների վրա դրված հարկերը և տուրքերը[1]։

«Մուխթասիպ»-ների ինստիտուտը լայն տարածում էր գտել Հայաստանի բոլոր քաղաքներում և քաղաքատիպ վայրերում։ «Մուխթասիպ»-ները պետությունից ռոճիկ չէին ստանում, այլ ապրում էին քաղաքներից հավաքված եկամուտներով։

Քաղաքներում բնակություն հաստատած այս պաշտոնյաները ստանում էին տուրքերի մի մասը և այդ տուրքը հայտնի է «մուխթասիպ»-ներին վճարվելիք հարկի անվան տակ։ «Մուխթասիպ»-ներին վճարվելիք տուրքերի մասին պահպանվել է միայն երկու վկայություն։

Առոն մագիստրոսը Անիի 1045—1054 թթ. արձանագրությունում հիշատակում է, որ նա որոշում է «մուխթասիպին» վճարվելիք տուրքի չափը։ Եթե առաջ Անիի բնակիչները սրանց տուրք էին վճարում «ութ լիտեր», ապա «ի խնդրոյ իշխանաւորացս» նա խափանում է և «զվիտ երկուց լտերց, զոր տայր մուխթիբն այս ամէն»[2]։ Մեկ անգամ էլ մենք «մուխթասիպին» վճարած տուրքի մասին հանդիպում ենք Անիի անթվակիր արձանագրության մեջ։

«...Ի տէրութեան քաղաքիս աստուածասէր պատրոնացն Գրիգոր աղին և Յովաննիսի և յեպիսկոպոսութեան տէր Յոհաննիսի... ի զժուարութիւն քաղաքիս և խորհուրդ բարի ծագեց ի սիրտս պարոնացն Գրիգորի] և Յով[աննիսի] որ զքաղաքս մեր նորոգել շինեցին և զամենայն հարկապահանջութիւն բարձին... և զթաղառ, զհեծել, զղստիշուն, զախսրթամարն և զդառնադիրն ի բաժ, ի դաղմս

---

[1] Վիմական տարեգիր, էջ 27, 221։ Ս. Գունդստաբլ, Դատաստանագիրք, էջ 63, Մ. Գոշ, Դատաստանագիրք, էջ 434—436, հմմտ. Ալիշան, Շիրակ, էջ 101, Հ. Անասյան, Արմատական բառարան, հ. IV, էջ 1145, Հ. Մանանդյան, Նյութեր..., էջ 62։

[2] Վիմական տարեգիր, էջ 27։

և ի մուսայիսն դարձուցին և զարոռին ճարկն, որ յետո ի չարաց դրած էր...»[1]: Ակնհայտ է, որ այս երկու արձանագրություններում թվարկելով հարկերի բոլոր տեսակները, տալով «մուխթասիպ»-ներին վճարվելիք տուրքի անունները, նույնիսկ ակնարկով չեն հիշատակել, որ նա կոչվել է «թաստակ» կամ «շարիաա»։

«Ձեռնավոր»-ներին վճարված տուրքեր: Միջնադարյան Հայաստանում X դարից սկսած լայն տարածում է ստանում վարչական պաշտոնյաների հարկահավաք գործակալների մի ինստիտուտ՝ «ձեռնավորներ» անվան տակ։ Առաջին անգամ «ձեռնավոր» բառը գործածվում է 904 թ. կազմված «դիր վճռի շրջակայ սահմանին Տաթևոյ վանքի» կոնդակի մեջ։ Այնուհետև «ձեռնավոր» տերմինը ստանում է քաղաքացիական իրավունք և հիշատակվում է ոչ միայն Ստ. Օրբելյանի մոտ, այլև վիմական արձանագրություններում, պատմական այլ կարգի սկզբնաղբյուրներում, եկեղեցական ժողովների կողմից մշակված կանոնական որոշումներում։

«Ձեռնավոր» բառի իմաստը բացահայտել է ակադ. Ն. Մառը։ Հեղինակի կարծիքով եթե շրջանի կամ գավառի վարչական ապարատի ղեկավար պարոնին ենթակա էր էվան կամ եվան (эвань или евань) պաշտոնյան, ապա ամիրային ենթակա էին ձեռնավորները[2]։

Սկզբնաղբյուրներում «ձեռնավորները» միշտ էլ հիշատակվում են որպես հարկահավաք գործակալներ։

Տաթևի վանքի 904 թ. արձանագրության մեջ հիշատակված է, որ Սյունյաց տեր Աշոտ իշխանը իր Սմբատ, Սահակ և Բարգեն որդիների, Գրիգոր Սուփանի և սրա եղբայրներ Սահակի, Վասակի, Ջագիկի և սրա Ջվանշեր որդին, և «այլ աղատք և համազգիք» մարդկանց հետ որոշում են Տաթևի տիրույթների սահմանները և խիստ կերպով պատվիրում, թե «յայսմհետէ մինչև յաւիտեան այս լիցի սահման Տաթևոյ...» և ոչ ոք իրավունք չունի խախտել իրենց կողմից որոշված սահմանները, ոչ «յաւագաց կամ ի ձեռնաւորաց և ի խոստակդարաց կամ ի տանուտէրաց»[3]։

1084 թ. ոմն Հասան, Սյունյաց Սենեքերիմ թագավորի հրամանով նույն վանքին է նվիրում Կովսական գավառի իր Մշտաքախթեն բերդը, Նորաշինիկ և Ջեռատիվան գյուղերը՝ «ազատ յարքունի հարկաց»։ Ապա խիստ կերպով, նույն թագավորի անունից, պատ-

---

[1] Վիմական տարեգիր, էջ 231։

[2] Н. Марр, Новые материалы по армянской эпиграфике, стр. 89—90.

[3] Ստ. Օրբելյան, էջ 231—233։

վիրում է ավագներին և «ձեռնավորներին» հանդիսաց թողնել այդ գյուղերը և իրենց օգտին հարկեր չհավաքել[1]։

1261 թ. իշխանաց-իշխան Սմբատը Տաթևին է նվիրում իր «հալալ հայրենեացն երկու գիւղ՝ զԱւէշ և զԱնապատս...» և «զԱզատ գիւղն իւր ամեն սահմանովն»։ Երկու այդի և այլ բազմաթիվ նվերներ, խիստ կերպով պատվիրում է ավագներին, «ձեռնավորներին» և սանուտներին չխախտել իր հիշատակը և գյուղերը հետ չխլել[2]։

Բազաց գավառի մեծազգի տոհմին պատկանող ոմն իշխան Նորավանքին է նվիրում իր Նրբոյն բերդը, «այլովք ագարակօք», այդին և անները և թողնում է հիշատակարան, որ ոչ ոք «զ մեծամեծաց կամ զ փոքունց. յաւագաց կամ զ ձեռնաւորաց» չպետք է խախտի իր նվերները[3]։

Այս կարգի վկայություններ կան նաև այլ նվիրատվությունների հետ կապված դիր-վճիռների մեջ[4]։

«Ձեռնավորները» որպես պետական վարչական օրգանների ներկայացուցիչներ դաժան կերպով շահագործում էին անմիջական նյութական բարիքներ արտադրողներին, ապրում էին սրանց կողմից վճարված տուրքերի և «նվերների» հաշվին։

Ձեռնավոր-գործակալների շարաշահությունների, կամայականությունների, դաժանությունների դեմ բողոքի ձայներ են բարձրացրել Ն. Շնորհալին, Վարդան Այգեկցին։

Ն. Շնորհալին դիմելով իշխաններին, ասում է. «Մի շար և անիրաւ գործակալս և դաւառապետս կացուցանէք զ վերայ աշխարհի ձերոյ...»[5]։ Այս շար և անիրավ գործակալները ոչ միայն դաժան էին, այլև կաշառակեր, նրանք խլում էին «վաստակաւորացն» եկամտի մեծ մասը, ոտնահարում բոլոր հրամանները և իրավունքները, հարստահարելով հարստանում։

«Ձեռնավորի» դաժան ու զազրելի կերպարն ամենից բնորոշ կերպով տվել է Վարդան Այգեկցին իր «Իշխան և այրի» առակում։ Դաժան, չոյժ շար իշխաններից մեկը հարկեր էր հավաքում նույնիսկ այրի կանանցից։ Այրիներից մեկը ողբում է ասածուն, որ այդ շար իշխանի կյանքը երկարացնի։ Իշխանին հայտնում են, որ քո շարության փոխարեն այրին «աղաւթք կու առնէ»։

---

[1] Ստ. Օրբելեան, էջ 326—327։

[2] Նույն տեղում, էջ 361—362։

[3] Նույն տեղում, էջ 367։

[4] Նույն տեղում, էջ 417, 491 և ուր.։

[5] Ն. Շնորհալի, Թուղթ ընդհանրական, էջ 93։

Իշխանն այրի կնոջ մոտ է ուղարկում իր հարկահավաք «ձեռնավորին» «ելն ձեռաւորն և ասէ,— գրում է Վարդանը,— ես քեզ լաւ չեմ արարել, դու ինձ համար էր կու աղաւթես»։ Այրին պատասխանում է, որ քո հայրը շար էր, ես աղոթեցի դու նստար նրա տեղը, «այլ խիստ և շար. կու վախեմ թէ մեռանիս, նա քո որդին այլ խիստ լինի և շար»[1]։ Այս հատվածում «ձեռնավորը» իշխանի հարկավաք-գործակալն էր։ Որ ձեռնավորները իրենց համար ժողովրդից տուրքեր էին հավաքում, այդ մասին կան բազմաթիվ վկայություններ։

Հաղպատի 1210 թ. արձանագրության մեջ ասված է, թե Շահնշահ Զաքարեն վանքի հետ կատարում է գյուղերի փոխանակություն. վանքին տալիս է իր հայրենի Աշոցք և Հալալաշեն գյուղերը «ազատ յամենայն հարկէ ի պատրոնաց, ի ձեռնաւորաց»[2]։

Շիրակավանի 1228 թ. արձանագրության մեջ հիշատակված է, որ ոմն ձեռնավոր Գոգին գյուղը ազատել է տալիս «զապուռիշի և զչլուսահին բաժից»[3]։

Հոռոմոսի 1228 թ. արձանագրության մեջ «ձեռնավորի» պարտականություն կատարողը կոչված է «գործաւոր»։

Մրենի 1273 թ. արձանագրության մեջ ասված է, որ պարոն Սահմադինը ազատում է Մրենի և Օշականի այգիները «խալալ և յերրորդ հարկէ...»։ Այնուհետև ասվում է, որ ոչ ամիրաները և ոչ էլ «ձեռնավորները» իրավունք չունեն վերականգնելու այգիների «խալալ» կոչված հարկը[4]։

Նորավանքի 1275 և 1292 թթ. արձանագրություններով Տարսայիճ իշխանը վանքին նվիրաբերում է «Շնհերոյ հայրենիքն... իւր սահմանաւքն», սահմանում է «Հալէձորոյ հարկն..... ի տարում վաթսուն սպիտակ» և ազատում է «յամէն ճարկաց... ոչ ամիրայ, ոչ պարոն, ոչ ձեռնաւորի ոչ ինչ հաշիւ չկայ հետ Հալէձորոյ...»[5]։

Օշականի 1286 թ. արձանագրության մեջ հիշատակված է, որ Ստեփանոս «ձեռնաւորը» «հրամանաւ պարոն Սահմադինին», Վահրամ Քեթոբարի հետ միասին, թողնում է «զՅաւշականու քահանայից զինչ հարկ որ կայր՝ այգւոյ, բամբակի...»[6]։

Օշականի 1288 թ. արձանագրության մեջ նույնպես հիշատակ-

---

[1] Ն. Սաո, Ժողովածոյք առակաց Վարդանայ, Աո. ՅԾԶ, էջ 326։
[2] Վիմական տարեգիր, էջ 50—51։
[3] Նույն տեղում, էջ 71։
[4] Նույն տեղում, էջ 116, 130։
[5] Նույն տեղում, էջ 149—150։
[6] Նույն տեղում, էջ 129։

վում է, որ Գնշմարդը ու Հավիկ «ձեռնաւորն» ոչ միայն ս. Կարապետի այդիների հարին են աղաղում, այլև «զՄիրիենու ձեռնաւորին գնարկն գինչ որ կայր»[1]:

Տարսայիճ «իշխանաց իշխանը» Տաթևի վանքին նվիրում է իր «սեփական» վեց գյուղերն իրենց բոլոր սահմաններով, «հողով և ջրով, լերամբ և դաշտիւ», և տալիս է արձանագրել, թե «չեմ մեր ի մերոց կամ յօտարաց կամ յիշխանաց կամ ի ձեռնաւորաց այս հաստատ պայմանս և անքակ վճիռս խափանել ջանայ, կամ զայն զիւղօրէքն կամ զայգին յայս եկեղեցւոյս հանել խորհի՝ բաժին ընդ Յուդայի և ընդ այլ խաչահանուացն եղիցի... նզովեալ լիցի»[2]:

«Ձեռնավորի» մասին մի վկայություն էլ պահպանվել է Դպրի վանքի 1261 թ. արձանագրության մեջ: Այս արձանագրությունը ուշագրավ է այն իմաստով, որ «ձեռնաւորը» ունեցել է հող, անասուններ: Սասանա ձեռնավորը վանքին է նվիրում Զորապանոյ հողն, չորս եզ և այլ արդյունքներ[3]:

«Ձեռնավորի» մասին համապատասխան վկայություններ կան Զաքարյանի 1270 թվականի ժողովի կողմից մշակված և հաստատված կանոններում: Այս կանոններում արգելվում է քահանաներին ստանձնել «ձեռնավորի» պաշտոնը: «Քահանայ այլ գործ չառնէ,— ասված է ժողովի Զ կանոնում,— պարոնին ձեռնաւորութիւն կամ մուձրութիւն»[4]:

Գարեգին Հովսեփյանը իր «Զաքարյանից ժողովը» հոդվածում բերում է նաև մի այլ վկայություն «ձեռնավորի» մասին: Այս հիշատակությունը արձանագրված է Հին Ուրծի (Քեշիշ գաղ) շրջանի եկեղեցիներից մեկի պատի վրա: Արձանագրության տեքստը աղավաղված է, միտքն անհասկանալի: Սակայն այդ աղավաղված տեքստը հնարավորություն է տալիս երկու ենթադրություն կատարել՝ կամ «ձեռնավորենին» ու շահնաները գյուղը ազատել են հարկերից կամ, որն ավելի հավանական է, հավաքել են հարկեր իրենց օգտին: Ահա այդ արձանագրությունը.

«Յուսովն անմարին ասածոյ ես արդնապարան յլուկումին ողորմութեամբ զձեռնաւորին զշահնայհա(ր) կին...»[5]:

---

[1] Վիմական տարեգիր, էջ 130։

[2] Ստ. Օրբելեան, էջ 416—417։

[3] Վիմական տարեգիր, էջ 103, Ջալալյանց. Հ. Բ, էջ 227, Մովսիսյան. էջ 94։

[4] Գարեգին վարդապետ, Զաքարյանից ժողովը, «Շողակաթ», 1913, Վաղարշապատ, էջ 44, հմմտ. Կանոնգիրք, կան. Զ, էջ 185։

[5] Նույն տեղում, էջ 35։

Գարեգին Հովսեփյանն իր հոդվածում հարկահավաքների մեջ հիշատակում է նաև «մուճուր» կամ «մուճրութիւն» բառը։ Այս բառը ստուգաբանության խիստ դժվար է ենթարկվում։ Տ. Սահակ վ. Ամատունին իր «Հայոց բառ և բան» աշխատության մեջ հիմնված խոյեցիների և աշտարակցիների բառապաշարում պահպանված «մարճուր» բառի վրա, գտել է, թե «մուճուր» նշանակել է «հարստանիքների դինու և պաշարների վրա հսկող անձ»։ Սակայն այս բանով չի սպառվում «մուճուրի» ստուգաբանությունը։ «Մուճուր», «մուճրութիւն» նշանակել է նաև վարչական պաշտոնյա, հավանաբար հարկերի և հասույթների գանձող կամ թե հարկերը պահպանող մառանապետ։ «Մուճուրն» այս իմաստով համընկնում է «ձեռնավորի» հետ։

«Նանիաներին» վճարված տուրքեր։ Բացի «ամիրահարկից», «մուխթասիպների» և «ձեռնավորների» օգտին գանձվող տուրքերից, աղբյուրները թողել են վկայություններ նաև պետական այլ պաշտոնյաներին՝ «շահնաներին» վճարվելիք տուրքերի մասին։ Հովհաննես վանքի 1296 թ. արձանագրության մեջ ասված է, որ Շիրին, Պայլուն խաթունները, Թողթեսը, Թալեսը, Խոճեն և Ղայիբը եկեղեցապատկան գյուղերը ազատում են բամբակի «շարիատից» և «ղշահնահ» օգտին գանձվող բամբակի հարկից[1]։ Ուշագրավ է, որ հարկահավաք-գործակալները տուրքեր են ստացել գյուղատնտեսական մթերքների բոլոր տեսակներից և այդ թվում նույնիսկ բամբակից։

Այսպիսով, անմիջական նյութական բարիքներ արտադրողները հարկեր և տուրքեր են վճարել ոչ միայն հողատեր ֆեոդալներին, այլև քաղաքներում «մուխթասիպներին», գյուղերում ձեռնավորներին, «շահնաներին»։ Ակնհայտ է, որ այս բոլոր վկայություններում, նույնիսկ ակնարկով չի հիշատակված, թե հարկահավաք-կառավարիչ-գործակալների օգտին հավաքվող հարկերն ու տուրքերը կոչվել են «շարիատ» կամ «թաստակ»։ Ընդհակառակը, նրանք կոչված են իրենց իսկական անուններով՝ «ամիրայի», «մուխթասիպի», «ձեռնավորի» և «շահնահ» հարկ։

«Խալէ», «խալալ», «խալան»։ Անմիջական նյութական բարիքներ արտադրողները ընամթերքներով վճարել են նաև «խալէ-խալալ-խալան» կոչված հարկը։

Հարկային այս տերմինը գործածական է վիմական արձանագրություններում և այն էլ միայն վեց անգամ։

---

[1] Վիմական տարեգիր, էջ 138։

Անիի 1036 թ. արձանագրության մեջ հիշատակված է, որ կաթողիկոս Պետրոսը մարզպան Ապլղարիպին նվիրում է Աշնկ կամ Մշնկ գյուղում իրեն սեփական այգին «որմով և ծառովք պտղաբերովք և անպտղովք և խոտագետնովք և Գ. աւր ջուր ազատ ի խալաէ և ի գեղջէ յամենայն հասուց»[1]։

Բալինի 1267 թ. արձանագրությունով պարոն Աղպուղան ազատում է իր հայրենի Բալին գյուղի գինուց հավաքված «խալեն» հարկը։

«Այս իմ գիր է պարոն Աղպուղայիս...կամ եղև ինձ յաստուծոյ և թողի զիմ հայրենիք գեղիս զԲալնայ գինոյ խալէն, վասն արեշատութեան ամիրսպասալար Շահնշահի եղբաւր իմոյ և ինձ Աղպուղայիս...»[2]։

Միջնադարյան Հայաստանի ամենախոշոր հողատեր-ֆեոդալ և վաշխառու պարոն Սահմադինը Մրենի իր 1273 թ. արձանագրության մեջ հիշատակում է, թե ինքը գալիս է Մրեն և ազատում է զուրբ ուխտին Արջվառեոյ այգիքն Մրենո և Աւշակնո ի խալալ և յերրորդ հարկէ, որ բնավան ազատ էր»[3]։

Պարոն Սահմադինը 1288 թ. դարձյալ արձանագրել է տալիս, որ նա և իր ամուսինը Մրենի այգիները ազատում են «խալեն» կոչված հարկից։

«...ես պարոն Սէնոպ Սահմադինս և ամուսին իմ Ռուրատա... Մրենոյ հացին շարիատն թողել էաք և հայմալ թողաք զեզեց գինոյ և իսաղոզի խալէն...»[4]։

Նորավանքի 1296 թ. արձանագրությունով Սյունյաց Ստեփանոս եպիսկոպոսը Նորավանքի եկեղեցուն է նվիրում իր սեփական Զովա գյուղը «իւր բոլոր սահմանաւքն ազատ յամէն աշխարհական հարկաց ի գիւանէ ի խալանէ և յամէն չարէ...»[5]։

Այս հատվածներում, բացի առաջին վկայությունից, անկասկած է, որ «խալէն» այգիներից, պտղատու ծառերից, ոդեից խմիչքներից գանձվող հարկն էր։ Հայաստանի քաղաքական անկախության ժամանակաշրջանում «խալէ» կոչված հարկը գանձվում էր հողատեր-ֆեոդալների օգտին։ Հայտնի է, որ միջնադարյան Հայաստանում բարձր զարգացման էր հասել այգեգործությունը և գինեգործությունը ոչ միայն գյուղերում, այլև քաղաքներում։ Անիի 1057—1063 թթ. արձանագրությունների մեջ հիշատակված է, որ կային քա-

---

[1] Վիմական տարեգիր, էջ 20։
[2] Նույն տեղում, էջ 110—111։
[3] Նույն տեղում, էջ 116։
[4] Նույն տեղում, էջ 130։
[5] Նույն տեղում, էջ 137։

զաքի բնակիչների հատուկ կատեգորիա՝ «գինետր» անեցիներ, որոնք նույնպես վճարում էին «խալէ» կոչված հարկը։ Հավանական է, որ այս հարկը գանձվում էր այդիների բերքից, իսկ երբ այդ բերքը մշակվում և դուրս էր բերվում շուկա վաճառքի, ապա վաճառողը վճարում էր ոչ թե «խալէ», այլ «բաժ-մաքս»։

Երբ ոդելից խմիչքները ներմուծվում և վաճառվում էին քաղաքներում, ապա վաճառողները տալիս էին վաճառահարկ կամ առևտրահարկ։ Բայց ոդելից խմիչքները հարկի ֆին ենթարկվում նախքան շուկա դուրս բերելը։ Այս դեպքում «խալէն» փոխում է իր իմաստը և ստանում մաքսի-բաժի նշանակություն։

«Խալէ» կամ «խալան» հարկը գանձում էին նաև մոնդոլ-թաթարները։ Արուսայիթ Բահաթուր խանը ստիպված հատուկ հրովարտակով պատվիրում է հարկահավաք-կառավարիչներին շատից դուրս հարկեր չգանձել նյութական բարիքներ արտադրողներից, որովհետև ծանր հարկերի պատճառով երկրի բնակիչները լքել են իրենց տները, քայքայվել է ժողովրդական տնտեսությունը և պակասել պետական եկամուտները։

«Մի ավելի ինչ պահանջեսցեն տուրս քան զհարկ կնքոյ (տաղմա) և զբաժ. և մի կարացեն պահանջել ինչ աւելի յամենայն անձնէ, փրրս խալան կամ փարշ գինոյ, որպէս յառաջ քան զայս փ քաղաքի տատ Անոյ և յայլ գաւառս Վրաց, պատրուակաւ խալանի և փարշի գինոյ և այլոց անիրաւ հարկաց՝ հարստահարութեան հարուցանելով... և բնակիչքն ի բաց ցրուեցան, և տանուտեարք քաղաքին և գաստրին ի պատճառս խալանի... թողեալ լիքն զտունս և զինչս իւրեանց զանշարժ և զշարժուն»[1]։

Այս հատվածում արդեն «խալէ-խալանը» ոգելից խմիչքներից գանձվող պետական հարկ է։

«Հաս»։ Հասը Հայաստանի հնագույն շրջանի հարկային բազմաթիվ տերմիններից մեկն է։ Ինչպես հարկային մյուս տերմինները, այնպես էլ «հասը» ֆեոդալական հարաբերությունների զարգացման հետևանքով ենթարկվել է որոշակի փոփոխության։ «Հասը» որպես հարկային տերմին զարգացած ֆեոդալիզմի էպոխայում ստանում է նոր իմաստ ու նշանակություն և հանդես է գալիս ավելի լայն առումով, քան մինչև օրս ենթադրվել է։

Ինչպես հարկային մյուս տերմինների, այնպես էլ «հասի» լեզվական ստուգաբանության և մեկնության փորձեր են կատարել հա-

---

[1] Ալիշան, *Շիրակ*, էջ 56։

լերեն բառարան կազմողները և Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքը հետազոտող պատմաբան-մասնագետները։

Հայկազյան բառարան կազմողները «հասը» մեկնել են որպես «ինչ իրամամբք հասանելի է կամ հասանել, այսինքն՝ անկ է ոսկի որպես զատուցեալ տուրք, եկամուտ, բաժին, բաժ, տասանորդ, նուիրելի Աստուծոյ մասն»[1]։

Ակադ. Հ. Աճառյանը «հասը» համարում է տուրք, հարկ, բաժին և նշում է, որ «շատ դործածական և զանազան նշանակություններով զարգացած արմատ է, որից կազմված են հասանել, ժամանել և այլն»[2]։

Ակադ. Ստ. Մալխասյանցը «հասին» տվել է հետևյալ բացատրությունը. «Ինչ որ հասնում է մեկին իրրև բաժին կամ իրավունք. հասույթ։ Հին Հայաստանում հարկ՝ հատկապես ուղղակի հարկ. դլխահարկ (դուցե նաև հողային բերքից տուրք)»[3]։ Ակնհայտ է, որ ինչպես ակադ. Հ. Աճառյանը, նույնպես և ակադ. Ստ. Մալխասյանցը կրկնել են նոր Հայկազյան բառարան կազմողներին։

Հարկային այս տերմինի վրա առաջին անդամ լուրջ ուշադրություն է դարձրել բանասեր Կ. Եղյանը՝ Ղևոնդ վարդապետի Պատմության հրատարակության իր առաջաբանում։ Թվարկելով Արաբական խալիֆային վճարվելիք շուրջ 12 տեսակի հարկերը, Եղյանը մատնացույց է անում, որ արաբական վենտրոնական իշխանության տկարացման հետևանքով ընդարձակվում էր ոստիկանների իշխանությունը, որոնք «հասքն արքունի» կոչվող հարկի անշան մասն էին հատուցում կենտրոնական իշխանությանը և «գմնացուածս հարկաց ոչ յղէին այլեւ յարքունիս»։ Եղյանը մատնացույց է անում նաև արաբներին վճարվող «հասք մաքսը»[4]։ Այսպիսով, ըստ Եղյանի, «հասքը» և արքունի հարկ էր և մաքսի մի մասը, մի բաժինը։

«Հաս» հարկային տերմինին բոլորովին այլ մեկնություն է տվել պրոֆ. Ն. Ադոնցը։ Խոսելով Սասանյան Պարսկաստանի հարկային սիստեմի մասին, ցույց տալով, որ Պարսկաստանում կային հարկի երկու հիմնական ձև՝ խարաջ՝ հողահարկ և դեղիք՝ դլխահարկ, հեղինակը գրել է. «Ավելի քան հավանական է, որ «սակն» ու «բաժը» իրենց բովանդակությամբ նույնն են, ինչ որ էին խարաջն ու դեղիքը, այսինքն հողահարկն ու դլխահարկը։ Շատ կարելի է.

---

[1] ՆՀԲ, հ. 2, էջ 49. հմմտ. Առձեռն բառարան, էջ 476։

[2] Հ. Աճառյան, Արմատական բառարան, հ. IV, էջ 142—147։

[3] Ստ. Մալխասյանց. Բացատրական բառարան, հ. IV, էջ 56։

[4] Ղևոնդ. Յառաջաբան, էջ ԻԷ։

ամփոփում է Ն. Ադոնցը, որ հայ հողի վրա համապատասխան արտահայտություններ էին «մուտն» ու «հասը» որ պատմադիրը (նկատի ունի Եղիշեին) մեջ է բերում սակին ու բաժին զուգահեռ[1]։

Այնուհետև, Ն. Ադոնցը «հաս», «սակ», «բաժ» բառերը համարում է «հարկերի տեխնիկական անուններ»։

Ուշագրավ է, որ Ն. Ադոնցը, հայկական և օտար սկզբնաղբյուրների քաջ գիտակը, ոչ մի վկայություն չի բերում ապացուցելու, որ «հասը» նույն դլխահարին էր, կամ Սասանյան Պարսկաստանի գեղիթը։

Ակադ. Հ. Մանանդյանը մերժելով Ն. Ադոնցի «հաս-դլխահարկ» ստուգաբանությունը, առաջարկում է նոր մեկնություն՝, «հասը որպես հողահարկ»[2]։ Այս ստուգաբանությունները մերժել է Թ. Ավդալբեկյանն իր «Հաս, սակ ու բաժ» հոդվածում։ Հեղինակը պատմական սկզբնաղբյուրներից բերած հարուստ նյութերի հիման վրա մերժում է «հասի» որպես հողահարկի կամ դլխահարկի իմաստը և ցույց է տալիս, որ «հաս» հարկային տերմինը անցնում է իմաստաբանական զարդացման մի շարք էտապներ՝ հաս-հասանելիք, հաս-հասույթ, հաս-տուրք, հաս-հարկ։ «Այն բոպեից, ասում է հեղինակը, երբ հասը ստանում է հարկի նշանակություն, ամեն մի հարկ, ուրեմն և հողահարկը, կարող է հաս կոչվել։ Կարողանալն, իհարկե, կարող է, բայց արդյոք իրականում հասը կոչվե՞լ է նաև հողահարկը կամ... միա՞յն հողահարկը — այս հարցումներին մեր կարծիքով դրական պատասխան տալու հիմքեր չկան առայժմ»[3]։

Անկասկած է, որ մենք սխալ գործած կլինենք եթե ոչ միայն «հասի», այլև հարկային մեզ հայտնի բոլոր տերմինների տակ իմաստավորենք միևնույն իմաստն ու նշանակությունը և պնդենք թե «հասը» միայն դլխահարկ էր կամ հողահարկ։ Հարկային բոլոր տերմինները, այդ թվում նաև «հասը» անցել են պատմական զարդացման մի շարք էտապներ, իրենց վրա են կրել այս կամ այն էպոխայի կնիքը, ենթարկվել են փոփոխության, ստացել են նոր իմաստ և նշանակություն և հաճախակի իրենց մեջ իմաստավորել են այլ տեսակի հարկեր և տուրքեր։ Պատմական զարդացման նույնանման էվոլյուցիա է ապրել նաև «հասը»։

---

[1] Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, стр. 481—485.

[2] Հ. Մանանդյան. *Հայաստանի արքունի հարկերը Մարզպանության շրջանում (տե՛ս «Տեղեկագիր» ՀՍԽՀ Գիտության և արվեստի ինստիտուտի, 1926, № 1, էջ 26—28)։*

[3] Թադ. Ավդալբեկյան. *Հաս, սակ ու բաժ, Երևան, 1926, էջ 12։*

«Հաս» հարկային տերմինի մասին բազմաբանակ և բազմատեսակ վկայություններ կան Հին և Նոր կտակարանի հայերեն բնագրում, հայկական կանոնագրքերում, դատաստանագրքերում, պատմական սկզբնաղբյուրներում, վիմական արձանագրություններում և ձեռագիր հիշատակարաններում։

Հին կտակարանի հայերեն թարգմանության մեջ «հասը» գործածված է տարբեր առումով և նշանակությամբ։ Այստեղ «հաս» են կոչվել այն բոլոր հարկերն ու տուրքերը, որ հատկացվել են կրոնական հիմնարկների և սրանց բազմաբանակ սպասավորների պահպանման համար՝ կալից, հնձանից, անասուններից և նույնիսկ դրամից։

Այստեղ պահպանված վկայությունները ամենից լավ կերպով են բացահայտում «հասի» նշանակությունը։ Ահա այդ վկայություններից միայն մի քանիսը։

«Եւ զերին զաջոյ՝ տայցէք հաս քահանային ի զոհից փրկութեան ձերոյ»[1]։ Այս հատվածում «հասը» տաճարներում զոհաբերված և նրա սպասավորների օգտին վճարված կենդանու մի մասն է, մի բաժինը։ «Հաս» էր հացաբույսերից ստացած մի մասը։

«Ուտեսէք դուք ի հացէ երկրին, առջիք հաս ի նուէր Տեառն... և տարջիք զհաց հասին Տեառն, զառաջիք զայն Տեառն որպէս զհաս ի կալոյ...»[2]։ «Հաս» էր նաև տաճարներին և սրանց սպասավորներին հանձնվելիք ամեն մի հարկ և տուրք։

«Զամենայն ինչ հաս ի սրբութեանցն զոր հանիցեն Տեառն որդիքն Իսրայելի, քեզ եառու...»[3]։

Կտակարանում պահպանված վկայություններից կարելի է ենթադրել, որ «հասը» չի դերազանցել բերքի և եկամուտի մեկ տասանորդից։

«Զի զտասանորդս... զոր զատուցեն տեառն հաս եառու... ի ժառանգութիւն» կամ «Եթէ առնուցաք յորդւոցն Իսրայելի տասանորդս, զոր եառու ձեզ, հանիցէք և դուք անտի հաս Տեառն՝ ի տասանորդն ի տասանորդէ. և համարեսցի ձեզ հասն ձեր իբրև զցորեան՝ ի կալոյ և իբրև զպտուղ ի հնձանէ»[4]։

«Հաս» էր նաև դրամական մասնահանումը։

«Զկէս երկդրամին, որ իցէ ըստ սրբութեան երկդրամենին. քան դանդ է երկդրամեանն. և կէս երկդրամենին եղիցի հաս Տեառն»

---

[1] Ղևտ., գլ. է, 32. գլ. ժ., 14, հմմտ. Թիւք., գլ. Զ., 20։

[2] Թիւք, Գլ. ԺԵ, 20։

[3] Թիւք. գլ. ԺԸ, 19։

[4] Թիւք, գլ. ԺԸ, 24—28։

կամ «Եւ առցես զարծաթ հասին... և տացես զնա ի գործ խորանին վկայութեան»[1]։

Մովսեսը քարոզում է հպատակներին, ասելով, թե այս է պատգամը «զոր պատուիրեաց տէր... առէք ի ձէնջ հաս Տեառն... բերցեն պտուղ տեառն՝ ոսկի և արծաթ, պղինձ և կապուտակ (հակինթ, ակ, թանկագին քարեր) և ծիրանի և կարմիր կրկին մանեալ և բեհեզ նիւթեալ և մազ այծեաց...»[2]։

Այս վերջին հատվածում «հասն» իսկապես այն դլխահարկն է, որը հոգուտ տաճարին մարդագլուխ դանձվում էր չափահաս հրեաներից։

Սակայն «հասի» ստուգաբանությունն այսքանով չի սպառվում։ «Հասը» նաև հարկ էր։ Ահա այդ վկայությունները։

«Արդ դիք ի վերայ դոցա հարկս և հասս»[3] կամ թագաւորք աղդաց յոտէ առնուն զհարկս կամ զհասն, յորդւոց իւրեանց թէ յօտարաց»[4]։ Անկասկած է, որ հացից, գալից, հնձանից դանձված «հասը» աղերսվում էր հողային հարկի հետ։ Ուրեմն «հասը» և դլխահարկ էր, և հողահարկ։

Հին կտակարանում կան համապատասխան հատվածներ, որոնք կարդավորում են ռազմական ավարի և ռազմագերիների բաշխման կարգը։

«Եւ առաջիք հաս տեառն յամենայն արանց պատերազմողաց երթելոց ի պատերազմ, ոչի մի ի հինգ հարիւրոց ի մարդոյ և յանասնոյ, և յարջառոյ և յոչխարէ և յայծեաց...»։

Այս հսկայական ավարից և ռազմագերիներից «հաս» է տրվել տաճարներին հետևյալ հարաբերությամբ.

«Եւ եղև կէս աւարին երթելոցն ի պատերազմ ի թուոյ ոչխարացն՝ երեք հարիւր և երեսուն հազար և եօթն հազար և հինգ հարիւր։ Եւ եղև հասն Տեառն յոչխարէ՝ վեց հարիւր և եօթանասուն և հինգ, և արջառ՝ երեսուն և վեց հազար, և հասն Տեառն՝ եօթանասուն և երկու, և էշք՝ երեսուն հազար և հինգ հարիւր, և հասն Տեառն վաթսուն և մի. և ոգիք մարդկան՝ վեշտասան հազար, և հաս ի նոցանէ Տեառն՝ երեսուն և երկու ոգիք»։ ...«Եւ եղև ամենայն ոսկի հասին, զոր հանին Տեառն՝ վեշտասան հազար և եօթն հարիւր և յիսուն սիկղ ի հազարապետաց անտի»[5]։

---

[1] Ելք, գլ. Լ. 13—14, 16։
[2] Ելք, Գլ. Լե, 5—7։
[3] Բ. Եզր. գլ. Դ, 20։
[4] Մատ. գլ. ԺԷ, 24, հմմտ. Ա. թագ. գլ. ԺԲ, 3։
[5] Թիւք, գլ, ԼԱ, 28, 36—40, 52։

Ինչպես ակնհայտ է, այս հատվածների մեջ «հասն» իր մեջ իմաստավորել է հարկերի և տուրքերի այն բոլոր մասը, բաժինը, աղմկական ավարի և գերիների այն մասը, որ մասնատվել է կրոնական հիմնարկների օգտին։

«Հասի», որպես եկեղեցուն վճարվելիք հարկի մի մասի, մի բաժնի մասին ուշագրավ վկայություն է պահպանված Գրիգոր Լուսավորչի կանոններում։

Այստեղ թվարկված են այն բոլոր հարկերն ու տուրքերը, «կամավոր» նվերները, որ հավատացյալ քրիստոնյաները պարտադիր կերպով վճարել են բազմաթիվ եկեղեցիներին՝ սրանց բազմաքանակ ծառայավորների պահպանության համար։

Գրիգոր Լուսավորիչը խիստ կերպով պատվիրում է, թե «ոչ է օրէն ումեք զհաս տեառն ի յարկս իւրում թողուլ»[1]։ Այս նույն կանոնը համարյա անփոփոխ կերպով անցել է Սահակ կաթողիկոսի կողմից հաստատված կանոններում[2]։ Սահակը պահանջում է եկեղեցու ծառայավորներից, որ նրանք իրավունք չունեն «զհասս եկեղեցոյ՝ զորս ըստ սահմանադրութեան նախնեաց սովոր են աշխարհականք տալ քահանայից... ծախեսցեն ընդվայր»[3]։

Սահակ կաթողիկոսը պատվիրում է հոգևոր դասի ներկայացուցիչներին ժողովրդից հավաքած «հասը» հավասար կերպով բաժանել եկեղեցու ծառայավորների մեջ, նրա մի մասը մասնատել արքեպիսկոպոսներին։

«Եւ հասք ձեր եղիցին ի պատարագս՝ կաշի և աջոյ էրի անդամ և ճրագու և դմակ և սիրտ և լեարդաբոյթ և երիկամունք և ճարպով ի կողիցն և ի խոտոցաց մասն, լեղուն և աջոյ ակն և ամենայն խորհրդական մասունքն»[4]։

Սակ ժողովի կողմից մշակված կանոններում ասված է, որ ժողովուրդը «հոժարութեամբ» և «աղաչանօք» վճարում է քահանաներին «զհասս... յամենայն արմտեաց պտուղս, և զկարգեալ բաժին մատաղին, և պատՀին ընծայիւք, և թաղմանն հանդերձ, և ժամու դրամ... և կերակուր...»[5]։

---

[1] Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ հանդերձ կանոնագրութեամբ ի պէտս ժառանգաւորաց, Արել. արքեպիսկոպոս Սիսիրարեանց, Վաղարշապատ, 1874, էջ 31։

[2] Կանոնագիրք հայոց, էջ 37։

[3] Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ... էջ 52։

[4] Կանոնագիրք հայոց, էջ 54։

[5] Նույն տեղում, էջ 178, 203—204։

Եկեղեցական աշխարհաժողովները սահմանել են նաև «հասի» չափը՝ քերքի մեկ տասներորդ մասը[1]։

Սահակ կաթողիկոսի կանոններում սահմանված է «հաս»— դրամական գլխահարկի չափը։ «Եւ հասք ի ձէնջ ի սեղան տեառն Եղիցի դրամ մի յամենայն տունց ձերոց և նուիրեալք ի ձէնջ»[2]։ «Հասը» որպես եկեղեցու եկամուտ մասնահանվում էր և տրվում նաև հոգևոր դասի ընտանիքի անդամներին։ Քահանայի այրի կնոջն իրավունք էր տրված ստանալ «հասին սեղանոյ և նուիրանաց ոմայ» մի մասը, մի բաժին[3]։

Սահակ կաթողիկոսը բողոքում է, որ գյուղական քահանաները, եկեղեցու սպասավորները, վարդապետները, հավաքելով «ի ժողովրդոյ... հոգևոր հարկս», բաժին չեն տալիս եպիսկոպոսներին։ «Որպէս ի ժողովրդոյ հարկին ձեզ հոգևոր հարկս, այնպէս և դուք պարտիք հասս հոգևորս հարկիլ եպիսկոպոսաց...»[4]։ Այս հատվածում արդեն «հասը» հարկ է կամ տուրք։

Քահանաները հաս էին ստանում նաև վաճառականներից։ Կարինի եկեղեցական ժողովում մշակված կանոններն արգելում են քահանաներին ապաշխարություն տալ վաճառականներին և դրա փոխարեն «հաս» ստանալ։ «Եւ հաս մի առցեն ի նոցանէ (վաճառականներից) մաքսատրաքար, այլ ձրի առեալ և ձրի տուք»[5]։

Աղվանից Սիմեոն կաթողիկոսը դատապարտում է այն բոլոր հոգևորականներին, որոնք մտնում են զինվորական ծառայության մեջ կամ զբաղվում վաճառականությամբ։ Կաթողիկոսը խիստ կեղծով պատմիրում է «մի զհացն և զհասն»[6] տալ այդպիսիներին։

Արդեն 4-րդ և 5-րդ դարերում, արտադրության ֆեոդալական եղանակի հաղթանակի պայմաններում, հաս-մաս-բաժին իմաստը ենթարկվում է լուրջ փոփոխության։ «Հասը» ստանում է ընդհանրապես հարկի և մասնավորապես արքունական և պետական հարկի իմաստ ու նշանակություն։

«Հաս» հարկը այս առումով մատնացույց է արված Աշտիշատի եկեղեցական ժողովի մշակած կանոններում, Փ. Բուզանդի, Եղիշեի և Զաքարե Հռետորի մոտ։ Հայտնի է, որ 4-րդ դարում հայ եկեղեցու առաջնորդ Ներսես կաթողիկոսը կառուցել է տալիս այս-

---

[1] Կանոնգիրք հայոց, էջ 54։
[2] Նույն տեղում, էջ 55։
[3] Նույն տեղում, էջ 56։
[4] Նույն տեղում, էջ 55։
[5] Նույն տեղում, էջ 113։
[6] Մ. Կաղանկատուացի, էջ 352—354, հմմտ. Կանոնգիրք հայոց, էջ 203։

պես կոչված բարեգործական հաստատություններ՝ անկելանոցներ, հիվանդանոցներ, որբանոցներ և սրանց պահպանության համար սահմանում է «հաս և տուրս ի գիւղից և ի քաղաքաց»։ Այս հաստատություններում ապաստան գտած հաշմանդամների համար նա եկեղեցու եկամուտներից մասնահանում է որոշ միջոցներ, որը նույնպես կոչվում է «հաս»։ «Վարդեաց նոցա առանձին հաս, զի անխնամ մնալով նոցին՝ ոմանք ի գողութիւն, և այլք յայլ և այլ անկարգութիւնս մտաբերէին»[1]։

Խիստ ուշագրավ է, որ Աշտիշատի ժողովի կողմից մշակված կանոններում, Փ. Բուզանդի մոտ, և Ներսես կաթողիկոսի կողմից կառուցված բարեգործական հիմնարկներին գյուղերից և քաղաքներից վճարված «հասը» Մ. Խորենացու մոտ կոչվել է պտուղ։ «Իսկ նորա (Ներսէսի) հրամայեալ՝ ըստ գաւառաց գաւառաց շինել աղքատանոցս ի խորշս և ի գերծ տեղիս, զի փոխանակ հիւանդանոցացն Յունաց լինիցին ի մխիթարութիւն մարմնոց վշտացելոց»։ Այս հիմնարկները ապահովելու համար Ներսես կաթողիկոսը սրանց մեջ է բաժանում «զաւանս և զդարակս, պտղաբերել յարդեանց անդաստանաց և ի կթից արօտականաց և ի գեղմանց. զի պաշտեսցեն զնոսա հարկաւ, բայէ ի բաց, և նոքա մի ելցեն ըստ բնակութիւնս իւրեանց»[2]։ Այս հատվածում հասպտուղը արդեն հարկ է։

Գյուղերն ու քաղաքները պարտավոր էին հարկ-հասը վճարել ոչ միայն բարեգործական հիմնարկներին, այլև վանքերին, եկեղեցիներին, սրանց առաջնորդներին, վանքերին կից եղած տնտեսական հիմնարկներին, հյուրանոցներին։

Պարտավի եկեղեցական երկրորդ ժողովը սահմանել է հետևյալ կանոնը։

«Վանք շինեսցին ի գիւղս, զի անդ հանդիցեն առաջնորդք. նա և հիւրանոց և աղքատանոց. և հաս նոցա ի գիւղից տացի»[3]։

Հայաստանի բաժանումից հետո երկիրը պարտավոր էր Պարսկաստանին վճարել արքունական հարկ, որը շատ հաճախ կոչվում էր «հաս»։

Փ. Բուզանդը վկայում է, որ պարսկական արքունիքը Հայաստանի մարզպան է նշանակում Սուրենին և կարգադրում «յաշ-

---

[1] Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ..., էջ 32—34։ Հմմտ. Փ. Բուզանդ, էջ 63—64։

[2] Մ. Խորենացի, էջ 279։

[3] Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ..., էջ 97։

խարհէն Հայոց հարկս՝ տալ՝ ընձայս և պատարագս» Խիստ ուշադրավ է, որ նույն հատվածի վերջին մասում հարկ բառի փոխարեն գործածված է «հասը»։

«Սոյնպէս և մարզպանին Սուրենայ նասս և կօշիկս և զպիտոյս զոռճկացն, սոյնպէս և տասն հազարացն դրման և կերակուր ըստ պիտոյիցն»[1]։

Սիրիական ժամանակագիր Զաքարե Հռետորը (6-րդ դար) տալով պարսկական արքունիքի օգտին գանձվող հարկերի և տուրքերի պատմությունն ասում է, որ Պարսկական պետության Արզանենի շրջանի գյուղերը հարկադիր կերպով վճարում էին ոչ քիչ քանակի դլխահարկ, որը հավաքվում էր այնտեղ ապրող բնակիչներից և ուղարկվում արքունական գանձարանը և մուծում էին թագավորի կողմից այնտեղ նշանակված եֆտախաշի (կուսակալի, մարզպանի, թիմապահի) պահպանության համար[2]։ Նույն պատմիչը թողել է ավելի ուշագրավ վկայություն պարսկական մարզպանների օգտին գանձվող «հաս» հարկի մասին։

«Բացի դլխահարկից, որ ժողովուրդը պարտավոր էր վճարել պարսկական արքաներին, ասում է Զաքարիա Հռետորը, պետք է վճարեր նույնպես և «հաս» բդեշխին՝ մարզպանին, որն իբրև արքայի հյուպատոսը գներկայանար»[3]։

Որ այս շրջանում «հասն» արդեն ստացել էր արքունի հարկի իմաստ այդ է վկայում Եղիշեի մոտ պահպանված հատվածը։ Նկարագրելով Դենշապուհի շարադրությունների պատմությունը, պատմիչը ասում է, որ նա մեծամեծ չափերով ծանրացրեց առանց այդ էլ հարկային ծանր լուծը, հարկի ենթարկեց հայ հասարակության բոլոր դասերի և խավերի մարդկանց և նույնիսկ ոչ միայն շեն, այլև անշեն վայրերը։

«Նա բնաւ ո՞վ իսկ կարէ պատմել վասն ծանրութեան մտից և սակից, բաժից և նասից, լերաց և դաշտաց և մայրեաց»[4]։

Խիստ ուշագրավ է, որ Դվինի ժողովի 9-րդ կանոնում մի դեպքում «հասը» գործածված է բաժնի, մասի, մյուս դեպքում հարկի իմաստով։

---

[1] Փ. Բուզանդ, էջ 207—208։

[2] Н. Пигулевская, Сирийские источники по истории народов СССР, М.—Л., 1941, стр. 163.

[3] K. Ahrens und C. Krüger, Die sogenannte Kirchengeschichte des Zacharias Rhetor, in deutscher Überzetzung herausgegeben, Leipzig, 1899. p. 173.

[4] Եղիշե, էջ 32։

«Եկեղեցականք,— ասված է այդ կանոնում,— ոչաս լիցին ի հարկաց և եթէ իշխան ոք առցէ ի նոցանէ զիասս, կամ ծառայեցուցէ զնոսա, զրկեսցի յօրհնութենէ եկեղեցւոյ, և մի ոք ի քահանայից մատուսցէ պատարագ վասն նորա, մինչև ապաշխարեսցէ»[1]։ Անտարակուսելի է, որ այս հատվածում հարկ և «հաս» բառերը գործածված են որպես հոմանիշ բառեր։ Զարմանալի չպետք է թվա, որ Դվինի ժողովի 9-րդ կանոնում մատնանշված այս հարկ — «հաս» բառը արդեն Մ. Գոշի Դատաստանագրքում անվանված է «հարկ» և ոչ թե «հաս»։ Ամենայն հավանականությամբ օրենսդրի օրոք արդեն այդ տերմինները ստացել էին նույն իմաստն ու նշանակությունը։ Գոշը իր Դատաստանագրքի «Յաղագս դատաստանաց տանց քահանայից» ՃՁ կանոնում, խմբագրելով Դվինի ժողովի վերոհիշյալ կանոնը, ասում է՝ Գր. Լուսավորիչը և Տրդատ 3-րդ թագավորը սուրբ եկեղեցու «զժառանգութիւնն ընդ այլ ազատաց տուեալ կարգեալ է և ազատ էին սրբոյ եկեղեցւոյն հողովն և ջրովն։ Եւ ի պարսից թագաւորութեան ժամանակս թէպէտև ի պակաս արկին, սակայն տունն ի դիւանի յայտնի է և չէ խառնեալ ի շինականս, բայց միայն զհարկսն տային յարքունիսն»[2]։ Ակնհայտ է, որ Դվինի ժողովի 9-րդ կանոնի «զհաս» ընթերցվածի փոխարեն Գոշը գործածել է «զհարկսն» բառը։

Գոշի մոտ գործածված «զհարկսն» բառը կարելի է երկու կերպ մեկնաբանել։ Կամ Դվինի ժողովի «զհասն» բառը Գոշն ինքն է դարձրել «զհարկսն» որն ամենից հավանական է և ցույց է տալիս, որ Գոշի շրջանում հարկ—«հաս» տերմինները հոմանիշ էին, կամ, ինչպես տեսանք, Դվինի ժողովի 9-րդ կանոնում մի դեպքում գործածական է եղել հարկ, մյուս դեպքում «հաս» բառերը, որոնք հետագա արտագրողների մոտ հանդես են եկել ոչ թե հարկ, այլ «հաս» անվան տակ։

Այս երկու պարագային էլ «հասը» նշանակել է հարկ և այն էլ արքունի հարկ։

Այսպիսով, «հաս» տերմինն անցել է իմաստաբանական մի շարք փուլեր։ Սկզբնական շրջանում այն նշանակել է հասանելիք, բաժին, մաս, որը վճարել են հավատացյալները կրոնական հիմնարկների և սրանց սպասավորների պահպանման համար։ Իսկ հետագա դարերում «հասը» ստացել է հարկի և տուրքի իմաստ։

---

[1] Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ, էջ 89, նմմ. Կանոնգիրք, էջ 126—128։

[2] Մ. Գոշ, էջ 215—216։

Արդեն միջին դարերում «հասը» որպես հարկային տերմին ստիպված էր իր տեղը զիջել է «հարկ» տերմինին և ձուլվել սրա հետ։

«Մուտ»։ «Մուտ» տերմինը նույնպես պատմական շատ հին անցյալ ունի։ Նա իր սկիզբն է առնում Մարզպանության ժամանակաշրջանից և պահպանում է իր գոյությունը նաև միջին դարերում։

Եղիշեն թվարկելով պարսկական արքունիքին վճարված հարկերը և հարկային տերմինները, մատնացույց է արել, որ Հայաստանը որպես պետական հարկ «հասի», «սակի», «բաժի» հետ միաժամանակ վճարել է նաև «մուտ»[1]։

«Մուտը» որպես եկամուտ, հիշատակված է նաև Մ. Խորենացու մոտ[2]։

«Մուտը» որպես եկամտի հարկի մի բաժինը, մի մասը, հիշատակված է Սահակ կաթողիկոսի կանոններում[3]։

Ներսես կաթողիկոսի և Ներշապուհ Մամիկոնյանի մշակած կանոնները իրավունք են տալիս հանցապարտ հոգևորականներին վրկել «ի մասնէ մտից»[4], այսինքն եկեղեցուց ստացած եկամտից։ Այս նույն կանոնները իրավունք են տալիս եկեղեցուն ստանալ պտուղ, «մուտ» և այլ հարկեր։

«Եւ Կտակարանս և մարգարէս և Առաքեալս և Աւետարանս,— ասված է Ը կանոնում,— բովանդակ ստացսի ի սրբոյ եկեղեցւոյ. ի պտղոյ և ի մտից, և հանդերձս բովանդակ սրբոյ տեղանոյն»[5]։

«Մուտը» Ասորական դատաստանագրքում կոչվել է գրավ դրած հողի դիմաց տրված տոկոսը, եկամուտը։

«Եթէ գրաւ դնէ ոք զիւր հողն այլում և լինի ի մէջ նոցին պայման, որ զմուտս հողոյն առնու պարտատէրն փոխարէն վաշխին»[6]։

«Մուտ» էր կոչվում գրավ դրած անասուններից ստացած եկամուտը, որը և անցնում էր պարտատերին «փոխարէն վաշխիցն»։

«Մուտ» էր գրավ դրած տան վարձը։ «Ասպա թէ ունին տուն կամ հող սրբքն, առնու պարտատէրն զայն և գործէ և վարձէ... և ցանէ և ուտէ զմուտն և որպէս խորի և առնէ...»։ Այսպես, պարտատերը կարող է անարգել, օգտագործել որբերի հողն ու տունը

---

[1] Եղիշե, էջ 32։

[2] Մ. Խորենացի, էջ 137, 216։

[3] Կանոնգիրք հայոց, էջ 55, 56, 110։

[4] Նույն տեղում, էջ 110։

[5] Նույն տեղում, էջ 110։

[6] Ասորական դատաստանագիրք, էջ 51։

մինչև «քսան և հինգ ամաց», որից հետո որբերը իրավունք էին ստանում ներկայանալ պարտատիրոջը «հաշվին զմուտ տարեացն, զոր կալաւ զհաշվին, թէ լինի ասել՝ ինքն զարձուցանէ յորբերն և թէ պակասի՝ զմնացեալն յորբերն»[1]։

Ինչպես նկատելի է, այս վկայությունների մեջ «մուտը» գրավ դրած հողերի, տների այն եկամուտն էր, որ յուրացնում էր պարտատերը, վաշխառուն բոլորից և այդ թվում որբերից։ «Մուտ» էր կոչվում նաև քաղաքներից ստացած եկամուտը։

Ակադ. Հ. Մանանդյանը ենթադրել է, որ «մուտը» կարող էր գործածվել «ոչ թե ընդհանրապես եկամուտի, այլ քաղաքներում վճարվող հատուկ հարկերի համար»[2]։ Ակադ. Հ. Մանանդյանի այս ենթադրության միակ կռվանը 7-րդ դարի պատմիչ Հովհան Մամիկոնյանի այն վկայությունն է, որտեղ նա խոսելով պարսիկների հարկային դաժան քաղաքականության մասին, իմիջիայլոց նշում է, որ Սմբատ իշխանը դիմելով Սուրեն զորավարին ասում է, որ ինքը հավանում է Սուրենի կողմից տրված 100.000 դահեկանին, բայց նա թող հաշվի առնի, որ պարսիկները «հարիւր ութսուն հազար դահեկանի լուր փայտ են տարեալ ի Բարբէոյ, և Դ՚Ռ դահեկանի խոտ են կերեալ ի գաշտէդ... և զվեց զատուին հարկն զոր առեալ են և զԱղամին մուտն զոր կերեալ են Դ՚Ռ դահեկան զայն թող տան»[3]։

Այս մեկ հատիկ վկայությունը մեզ իրավունք չի տալիս «մուտը» ստուգաբանել, որպես «քաղաքներում վճարվող հատուկ հարկ»։ Ասենք վկայությունից այդ չի հետևում։ Այստեղ որոշակի ասված է, որ պարսիկները նշված քաղաքի եկամտից 4000 դահեկան են տարել։ Բայց ամեն պարագային եկամուտը հարկ չէ։ Անկասկած է, որ քաղաքները ունեին եկամուտի այլ աղբյուրներ, որոնց մի մասը, մի բաժինը հավաքել են պարսիկները։ Այդ եկամուտի տակ կարելի է ենթադրել շուկաներից, առևտրական հրապարակներից, խանութներից տներից, արհեստանոցներից, կամուրջներից, ճանապարհներից և այլ օբյեկտներից հավաքած եկամուտները։ «Մուտը» պահպանում է եկամտի իր իմաստը նաև միջին դարերում։ Այդ առթիվ արժանահավատ վկայություններ են թողել Ստ. Օրբելյանը, Մ. Ուռհայեցին։ Սյունյաց Փիլիպպե իշխանը Տաթևի վանքի վանահայր Հակոբին նվիրում է իր «հալալ հայրենեաց զՅուրսանխոռ... զԱղուերծ» գյուղերը իրենց բոլոր սահմաններով «լերամբ և դաշտովք,

---

[1] Ասորական դատաստանագիրք, էջ 54—55։

[2] Հ. Մանանդյան, Հայաստանի որբունի հարկերը..., էջ 23։

[3] Հովհ. Մամիկոնյան, էջ 229—233։

հողով և ջրով, այդօր և ընկուզօք, ջրաղացովք և ամենայն մտիւք»[1], այսինքն ամբողջ եկամուտով, արդյունքներով։

Այս նույն կերպ է վարվում Սևադա իշխանի Շահանդուխտ դուստրը։ Սա Տաթևին է նվիրում Հարանդ գավառի Տեղ գյուղը «փուր ամենայն բոլոր սահմանովն, լերամբ և դաշտիւ և այլ մտիւք...»[2]։

Մ. Ուռհայեցին վկայում է, որ բյուզանդական կայսր Հովհան Չմշկիկը սկսելով պատերազմական գործողություններ պարսիկների դեմ «կամեցաւ զմուտն յաշխարհն Հայոց առնել»[3]։ Այս բոլոր հատվածներում «մուտը» քաղաքներից դանձվող հատուկ հարկ չէ, այլ ընդհանրապես եկամուտ՝ բաժին։ Խիստ ուշագրավ է, որ «մուտն» որպես հարկային տերմին չի հիշատակվում ոչ վիմական արձանագրություններում և ոչ էլ պատմական այլ աղբյուրներում։

«Սակ»։ Հարկային այս բառը հիշատակվում է 5-րդ դարից սկսած։ Ինչպես հարկային մյուս, այնպես էլ «սակ» բառը ոչ միայն իր գոյությունը պահպանում է միջին դարերում, այլև ապրում է զարգացման նոր էվոլյուցիա և ենթարկվում է որակական ու իմաստային լուրջ փոփոխության։ Եթե սկզբնական շրջանում «սակը» նշանակել է թիվ, չափ, համար, ապա միջին դարերում, զարգացած ֆեոդալիզմի շրջանում, «սակը» հանդես է գալիս որպես հարկ, ավելի լայն առումով ու նշանակությամբ։ «Սակ» բառի ստուգաբանությունը փորձեր են կատարել բացահայտել հայերեն բառարանների կազմողները, Գաբրիել Ավետիքյանը, Փորթուգալ Փաշան, Քերովբե Պատկանյանը, Ն. Ադոնցը, Հ. Հյուրշմանը, Հ. Մանանդյանը, հատկապես Թ. Ավդալբեկյանը և ուրիշները։

Նոր Հայկազյան բառարանը «սակը» մեկնել է «սակաւ, որպես թե չափով, չափաւոր. փոքր քանակաւ կամ թուով» կամ «որոշած, կտրած, դրած կարգ, պայման... թիւ։ Սահմանեալ տուրք, եկամուտ, հաս, հարկ, խարաջ, բաժ արքունի»[4]։

Ակադ. Հ. Աճառյանը վկայակոչելով Կտակարանի հայերեն բնագրում «սակի» մասին պահպանված վկայությունները, «սակը» համարում է «տուրք, հարկ»։ «Սակը» հեղինակի կարծիքում ծագել է պահլավերեն sak բառից և նշանակել է «տուրք»։ Sāk և bāž համընկնում է «տուրք և մաքս» բառերի հետ։ Պարսկական sak կամ

---

[1] Ստ. Օրբելեան, էջ 269—270։

[2] Նույն տեղում, էջ 291։

[3] Մ. Ուռհայեցի, ժամանակագրութիւն, էջ 17։

[4] ՆՀԲ, հ. Բ, էջ 62, 684։

sā նույնպես նշանակել է «հարկ, տուրք»[1]։ Ստ. Մալխասյանցը ենթադրում է, որ «սակ—պահել. sāk պարսկ. sāv, sā նույնպես նշանակել է «հարկ—տուրք»։ «Սակ» էր նաև «ընդհանրապես պետական հարկը և մասնավորապես գլխահարկը»[2]։

Մխիթարյան միաբան Գաբրիել Ավետիքյանը դեռ 1859 թվականին ուշադրություն է դարձրել Գրիգոր Նարեկացու մոտ չորս անգամ գործածված «սակ» բառի վրա, և ցույց է տվել, որ «սակը» Նարեկացու մոտ գործածվել է «չափ, հաշիվ, թիվ» իմաստով։ Իր այս դրույթն ապացուցելու համար Գ. Ավետիքյանը վկայակոչել է Գ. Նարեկացու մոտ պահպանված հետևյալ հատվածները.

«Եթէ կշռեսցես զմեղանաց իմոց ծանրութիւն — դիմելով աստծուն, ասում է Նարեկացին,— ընդ քաղցրութեան քո և մի ընդ արդարութեան, զի առ սակ նախնումն յոյժ է նուազեալ, իսկ ի ներհակ վերջնոյս՝ յաւէտ ծանրակիր»։

Երկրորդ հատվածում Նարեկացին հիշատակում է, թե «Ի ճառս եռախառնաց քումդ պարզեսցս՝ նորին իսկ սակով սիրելն կարգեսցի»։ «Անթիւս զրեմ զպարտուցս սակ անձինս մեղանաց» և վերջապես «գիտացեալ զսակն որքանութեանց հոգածին բնութեանս»[3]։

Վկայակոչելով Նարեկացու մոտ պահպանված այս հատվածները Գ. Ավետիքյանը գրել է, թե «զսակ պարտուցս» նշանակում է «զհաշիւ կամ զթիւ պարտուցս», իսկ «գիտակցեալ զսակն որքանութեանց հոգածին բնութեանս՝ «գիտելով զչափ կարողութեան հոգեղէն բնութեանս»[4]։

Միքայել Փորթուգալ Փաշան «սակ» բառը ստուգաբանել է «հոգէ մը կամ շէնքէ մը առնուած այն տուրքն, որոյ քանակը կանխաւ որոշեալ է...»[5]։

Գերմանական գիտնական Հ. Հյուբշմանը վկայակոչելով Եղիշեի, Սեբեոսի, Եվսեբիոսի և Ոսկեբերանի մոտ պահպանված «սակի» մասին եղած բոլոր վկայությունները, սակը մեկնել է որպես հարկ։

Հ. Հյուբշմանը հայկական «սակը» համեմատելով պահլավերեն և պարսկական sāk բառի հետ, գտել է, որ այս երկուսն էլ նշանա-

---

[1] Հ. Աճառյան, Արմատական բառարան, հ. VI, էջ 29—31։

[2] Ստ. Մալխասյանց, Բացատրական բառարան, հ, IV, էջ 170։

[3] Նարեկ աղօթից, աշխատասիր. Գաբրիէլի Ատետիքեան, Վենետիկ, 1859, էջ 580, համմտ. Նարեկ ԺԶ, բ. ԺԷ, գ., խէ, բ. Հ. գ.։

[4] Նույն տեղում, էջ 236, 357։

[5] Եղիշէի վարդապետի վասն Վարդանանց և հայոց պատերազմի և բննադատութիւնք Միքայէլ փաշայի Փորթուգալ, Վենետիկ, 1902, էջ 224, § 17, 2։

կել են հարկ. բայց այն ի՞նչ հարկ էր, հարկերի և տուրքերի ի՞նչ տեսակներ էր իր մեջ իմաստավորում Հ. Հյուբշմանը այդ հարցը թողնում է բաց։ Հեղինակի կարծիքով sāk բառը նոր պարսկերենում ստացել է sā—sāv. ձևը և ունի սոսկ հարկի իմաստ[1]։

Պրոֆ. Ն. Ադոնցը մերժելով «սակ» բառին իր նախորդների տված մեկնությունը կարծում է, որ «սակ» նշանակել է հողահարկ։ Հեղինակի կարծիքով հայկական «սակը» և պարսկերեն sa=sav տերմինները, անկասկած, կապ ունեն սակ-չափ, թիվ, սակարկել. սակս ու սակավ բառերի հետ[2]։

Ակադ. Հ. Մանանդյանը «սակը» համարում է նույն գլխահարկը։ Հեղինակը վկայակոչելով Գր. Նարեկացու մոտ հիշատակված «սակ» և «սատեր» բառերը, գտնում է, որ «սակը» գլխահարկ էր և վճարվում էր դրամով[3]։

Թ. Ավդալբեկյանը մերժելով այս մեկնությունները, համոզեցուցիչ կերպով ցույց է տվել, որ «սակն» եթե սկզբնական շրջանում նշանակել է թիվ, համար, չափ, դրույք և «կտրական» գումար, ապա վերջին կետից ելնելով «սակը» անցնում է իմաստաբանական զարգացման նոր աստիճաններ։ Ուստի «սակ» էր ոչ միայն փրկանքը կամ գերեգինը, ոչ միայն ոռճիկն ու վասալների կողմից վճարված հարկերը, այլև հարկն ընդհանրապես[4]։

Պատմական սկզբնաղբյուրներում «սակի» մասին պահպանված վկայությունների քննարկումը ցույց է տալիս, որ վերոհիշյալ մեկնությունները թերի են և լրիվ կերպով չեն բացահայտում նրա էությունը։ Ինչպես հարկային բոլոր տերմինները, այնպես էլ «սակը» անցել է իմաստաբանական զարգացման տարբեր աստիճաններ և իր մեջ է իմաստավորել և հողահարկը և գլխահարկը և դրամական հարկերն ու տուրքերը և փրկավճարը ու ոռճիկը և շահով տրված դրամի տոկոսը։

Այս հարկային տերմինի մասին ամենահին վկայությունը պահպանված է Հին կտակարանի հայերեն բնագրում։ Այստեղ հիշատակված է, որ արքունիքին հարկատու բնակիչները արքունական մթերանոց էին բերում «զգարին և զյարդն... իւրաքանչիւր ըստ

---

[1] H. Hübschmann. Armenische Grammatik, Leipzig 1897. p. 234.

[2] Н. Адонц. Армения в эпоху Юстиниана, стр. 482—483.

[3] Հ. Մանանդյան. *Հայաստանի արքունի հարկերը (տե՛ս «Տեղեկագիր» ՀՍԽՀ Գիտության և արվեստի ինստիտուտի, 1926, № 1, էջ 26—29)։*

[4] Թ. Ավդալբեկյան. *Հաս, սակ, բաժ, էջ 24։*

սակի իւրում»[1]։ Ակնհայտ է, որ այս հատվածում սակը բնամթերքով հանձնված հարկի չափն էր, քանակը։

«Սակը» նաև արքունի հարկ էր։ Եղիշեն թողել է խիստ ուշագրավ վկայություն «սակ» արքունի հարկի մասին։ Տալով պարսկական արքունիքի հարկային քաղաքականության նկարագիրը, Եղիշեի մոտ եղած մեկ այլ վկայությունից նույնպես կարելի է ենթադրել, որ «սակը» արքունիքին վճարված հարկ էր։ Ժողովրդա-ազատագրական պայքարի ելած հայ ժողովուրդը բողոքում է պարսկական Հազկերտ 2-րդ թագավորին, ասելով, որ սրա օրոք Հայաստանը ավելի շատ հարկեր է վճարում, քան նրա հոր՝ Շապուհի օրոք։ «Իսկ զմահից և զսակից, և որ այլ ևս էին հարկ աշխարհին բազմապոյն քան զառ հարքն նորա երթայր յարքունիս»[2]։ Անշուշտ, այս երկու հատվածներում «սակը» մատնացույց է արված որպես արքունական հարկ։

«Սակը» որպես արքունական հարկի չափ, քանակ գործածական է նաև Թ. Արծրունու մոտ։ Նկարագրելով Բուղայի արշավանքների և ասպատակությունների պատմությունը, Վասպուրականի իշխանների պայքարը, պատմիչն ասում է, որ Վասպուրականի Գուրգեն իշխանը Բուղայի մոտ է ուղարկում իր մորը և առաջարկում խաղաղության դաշինք կնքել ու պահանջում է արարական զորավարից, որ իրեն հանձնի «զիշխանութիւնն Վասպուրականի փոխանակ եղբօր իւրոյ»։ Այս պայմանը ընդունելու դեպքում Գուրգենը խոստանում է, որ ինքը և իրեն ենթակա բոլոր իշխանները կընդունեն արարական գերիշխանությունը, կհնազանդվեն Բուղային և անթիերի կերպով կվճարեն «հարկս և ի հասս չափոյ սակի արքունական աւանդաւոր անց»[3]։

7-րդ դարի պատմիչ Սեբեոսը «սակը» համարում է մի դեպքում ռազմական փրկավճար, մյուս դեպքում՝ արքունի հարկ։

Տալով արարա-բյուզանդական երկարատև պատերազմների պատմությունը, պատմիչը վկայում է, որ բյուզանդական Կոստանդին կայսրը «զաւ համարեցաւ տալ սակ, և առնել հաշտութիւն»։ Կոստանդին կայսրը հրամայում է Պրոկոպիոս զորավարին մեկնել Դամասկոս «առ Մահիս իշխան զարուն Իսմայէլի և կատարեալ զպայման հաշտութեան ըստ զարուն կամայն»[5]։ Ստանալով

[1] Գ. Խոր., Դ., 28։
[2] Եղիշե, էջ 32։
[3] Նույն տեղում, էջ 58։
[4] Թ. Արծրունի, էջ 143
[5] Սեբեոս, էջ 191—192։

կայսեր հրամանը, Պրոկոպիոսը մեկնում է Դամասկոս և «յայտնեաց զչափ սակին և առաց զսահմանն և առ զհաշտութիւնն...»[1]։

Այստեղ «սակը» արդեն ռազմական փրկավճար է և ոչ թե հողային կամ գլխահարկ։

Մի այլ վկայության մեջ խոսելով այն մասին, թե ինչպես հայ նախարարների մի մասը՝ Թեոդորոս Ռշտունու գլխավորությամբ հարում են արաբական օրիենտացիային և ռազմական դաշինք կնքում արաբական ամիրապետի հետ՝ ընդդեմ Բյուզանդիայի, Սեբեոսը գրում է, որ ամիրապետը դիմելով Թեոդորոս Ռշտունուն ասում է. «Այս լիցի ուխտ հաշտութեան իմոյ ընդ իս և ընդ ձեզ որչափ ամաց և դուք կամիջիք, և ոչ առնում ի ձէնջ սակ զերրեամ մի. ապա յայնժամ տացիք երդմամբ, որչափ և դուք կամիջիք. և հնձեալ կալէք յաշխարհիդ ժե. հազար։ Եւ հաց յաշխարէն տուք, և եւ ի սակն արքունի անդարեմ...»[2]։ Այս հատվածում արդեն «սակը» բնամթերքներով վճարված արքունի հարկ է։

«Սակը» որպես փրկավճար, դերեգին, զինվորական ռոճիկ գործածական է նաև Հովհաննես Դրասխանակերտցու մոտ։

Մատենագիրը պատմում է, որ 9-րդ դարի վերջին քառորդին արաբական Ափշին ոստիկանը գերում է Գևորգ 2-րդ Գառնեցի կաթողիկոսին և տանում Փայտակարան քաղաքը։ Կաթողիկոսին գերությունից ազատելու համար պահանջում է մեծ փրկավճար կամ «սակ»։

«Իսկ իրև ամիսք երկու կատարէր ի բանտի անդ,— գրում է պատմիչը,— ապա ոստիկանն Հագարացի գանձս ոսկւոյ և արծաթոյ պահանջէր ի մեծ կաթողիկոսէն...»։ Սմբատ Թագավորի հրամանով Համամ իշխանը, կաթողիկոսին և գերի տարած հայ նախարարներին ազատելու համար, «առնոյր և յտուաքեալ գանձն առ յլրմէն ևս յաւելեալ՝ ի լրոմն սակին՝ տայր տանիլ ոստիկանին»[3]։

Պատմիչը «սակ» բառը այս նույն իմաստով է գործածում, երբ նկարագրում է Սյունյաց Սահակ և Բաբգեն իշխանների գերության պատմությունը։ Սահակին և Բաբգենին գերում է արաբական Նսր ոստիկանը։ Նսրը ստանալով «սակ» փրկավճարը գերությունից արձակում է Բաբգենին, իսկ «զՍահակ եղբայր նորուն դեռևս ի դիպահուռ թողեալ, մինչև առցէ ի նմանէ ևս զդահեկա-

---

[1] Սեբեոս, էջ 192։

[2] Նույն տեղում, էջ 224։

[3] Հովհ. Դրասխանակերտցի, էջ 170—171։

նոցն պարտապանութիւնն խոստման, և ապա արձակեսցէ և տացէ նմա՝ ի ձեռս սեպհական տէրութիւնն իւր»[1]։

Խիստ ուշագրավ է, որ Հովհաննես Դրասխանակերտցու մոտ հիշատակված «սակը», Ստ. Օրբելյանի մոտ ստացել է «գերեզին» անունը։ Նոր ոստիկանը, ասում է պատմիչը, «իսկ .և իսկ առեալ զտարապարտ սակ զնոյ անձինն ի Բարգենէ՝ արձակէ զնա, բայց զՍահակ արդել անդէն զի ոչ ունէր զծանր սակ դահեկանին զոր գերեզին խնդրէին»[2]։

Որ «սակը» փրկավճար էր, գերեզին, ռազմական տուգանք, այդ մասին կան համապատասխան վկայություններ Ղևոնդի մոտ։

Արաբները հայ նախարարների մի մասին փակում են Նախճավանի ամրոցում և ոչչակիդում, իսկ մնացածներին բանտարկում են և պահանջում փրկավճար՝ բանտից ազատելու համար։ Ոչչակիդումից ազատված նախարարներին, ասում է Ղևոնդը, «եդին ի կապանս բանտի... և պահանջէին ի նոցանէ բազում ոսկի և կշիռ արծաթոյ. և խոստացան նոցա, թե յորժամ հատուսցեն նոցա զսակ արծաթոյն՝ արձակեսցին զնոսա կենդանիս»[3]։

«Սակը», որպես զինվորական ոռճիկ, որպես ռազմական ուժերի պահպանման միջոց մատնացույց է արված նաև Ղևոնդի հետևյալ վկայության մեջ։

«Եւ Եղիա կացուցանէր ի վերայ աշխարհիս իշխան ի նախարարացն Հայոց զԻսահակ որդի Բագարատայ ի նոյն տանէ իշխանին Աշոտոյ... Եւ առաջնորդէր զօրաց իւրոց ակամայութեամբ կոխել զաշխատութիւն մարտիցն ուր և առաքէր. զի յայնմհետէ հատաւ սակ արծաթոյն, որ զայր ամի ամի յարքունուստ զօրացն Հայոց»[4]։

Աներկրայելի է, որ այս բոլոր հատվածներում մատնացույց արված «սակը» նշանակել է փրկավճար, գերեզին, զինվորական ոռճիկ։ Սակայն «սակ» տերմինի իմաստը սրանով չի սպառվում։ Հաճախակի են դեպքերը, որ միևնույն պատմիչը «սակը» նույնացնում է ընդհանրապես հարկի հետ և գործածում է հարկի, և այն էլ օտար նվաճողներին վճարվելիք հարկի իմաստով։

Ղևոնդը տալով Եղիա ոստիկանի հարկային դաժան քաղաքականության նկարագիրը, ասում է, որ սա «վարեաց զաշխարհս Հայոց ի նոյն սակ հարկի»[5]։ Կամ արաբական մի այլ հարկահան

---

[1] Հովհ. Դրասխանակերտցի, էջ 358—359։

[2] Ստ. Օրբելյան, էջ 199—200։

[3] Ղևոնդ, էջ 34։

[4] Նույն տեղում, էջ 128—129։

[5] Նույն տեղում, էջ 14։

Իբնդոկեն մեկնում է Դվին և «սաստիկ դժնդակութեամբ խոշտանգէր զբնակիչս աշխարհիս հարկապահանջութեամբ»։ Այս հարկը պատմիչը կոչում է «սակ»։

Հավաքվում են, շարունակում է պատմիչը, հայ նախարարներն ու ռամիկները, հոգևորականներն ու Եսայի կաթողիկոսին հանձնարարում են միջնորդել արաբական հարկահանին «թեթևացուցանել զանուր ծանրութեան սակին...»[1]։ Ուշադրավ է, որ պատմիչն այս նախադասության մեջ մի դեպքում գործածում է հարկ, մյուս դեպքում «սակ» տերմինները։

Այսպիսով, ամեն մի հարկ, և անհավանական չէ նույնպես գլխահարկը, կարող էին «սակ» կոչվել։ Բայց այս երբեք էլ չի նշանակում, որ «սակ» կոչվել է միայն գլխահարկը։

«Սակը» որպես հարկային տերմին ամենից շատ գործածական է Հովհաննես Դրասխանակերտցու մոտ։ Նկարագրելով Եղբ կաթողիկոսի կրոնադարձության պատմությունը, մատենագիրը ասում է, որ նա բյուզանդական կայսրության մատուցած ծառայության դիմաց ստանում է Կողբի աղահանքերի երրորդ մասը և «մեծաւ շքով» վերադառնում է Հայաստան։ Եղբին դիմավորելու համար Հայաստանի սահմանապուին են մեկնում հայ հոգևորականների մի մասը, բացի Հովհան Մայրագամեցուց։ «Բայց փիլիսոփոսն Յոհան... ոչ ևս ընդ այլսն երթալով լնուլ զսակ հարկին, որ ի վերայ կայր»[2]։ Այստեղ արդեն «սակը» հարկ է, սակայն ինչ հարկ, դեռ հայտնի չէ։ Նույն պատմիչը տալով արաբական ոստիկանների ասպատակությունների և դաժան հարկային քաղաքականության պատմությունը, վկայում է, որ Եղիտ ոստիկանը արաբական ամիրաներին զգուշացնում է բանտարկել Աղվանից Ներսես կաթողիկոսին, որովհետև նա ամեն կերպ ձգտում է մերձենալ Բյուզանդիայի հետ, խոստանում է նրանց վճարել «սակս հարկաց»[3]։

Որ «սակը» հարկ էր ընդհանրապես և արքունի հարկ մասնավորապես, այդ է ասացուցում նույն պատմիչի մի այլ վկայությունը։ Տալով Աշոտ Բագրատունու դահակալության պատմությունը, ասում է, որ արաբական ամիրապետը Հայաստան է ուղարկում Ալի ոստիկանին, որպեսզի սա Հայոց իշխանաց-իշխանին

---

[1] Ղևոնդ, էջ 167։

[2] Հովհ. Դրասխանակերտցի, էջ 78։

[3] Նույն տեղում, էջ 100։

հաստատեր գահի վրա և նրան հանձներ «զսակս հայոց և զամենայն բեկար արքունի»[1]:

Այս հատվածում ակնարկած «բեկարն», ինչպես ցույց է տրված վերևում, հստակորեն մասշտաբի այն հարկագիր և ձրի աշխատանքն էր, որ նյութական բարիքներ արտադրողները կատարում էին պետական և հասարակական նշանակություն ունեցող շինարարական աշխատանքներում, իսկ «սակն», անկասկած, արտաքին արքունիքին վճարվող հարկն էր, որը Բագրատունիների դինաստիայի հաստատումից հետո մենաշնորհ կերպով անցնում է Բագրատունիների կենտրոնական իշխանությանը: Հովհ. Դրասխանակերտցին ոչ միայն սահմանագիծ է անցկացնում «սակի» և բեկարի, այլև «սակի» և մաքսի միջև: Սմբատ Բագրատունի թագավորը, ասում է մատենագիրը, փորձ է կատարում մեկնել Դվին և բանակցություններ սկսել արաբական Ափշին զորավարի հետ: Սմբատը շրջապատում է Դվինը, որովհետև Ափշինը հրաժարվել էր ծառայել Սմբատին և «զսակ արքունի հարկաց և մաքսից նուազեցուցեալ...»[2]:

Սմբատ Բագրատունին ձեռնարկելով իր պետության տերիտորիայի ընդարձակմանը, նա, ինչպես նշում է պատմիչը, գրավում է «յարևմտից հիւսիսոյ մինչև ցԿարնոյ քաղաք, և անդր ևս քան զԿղարջս՝ բերեալ մինչև առ ափն ծովուն մեծի, և մինչև ցսահմանս Եկեղեացոյ և մինչև ցստորոտ մեծի լերինն Կովկասու, զԴուդարացիս և զՕմանարս մինչև ցդուռն Ալանաց»: Սմբատը ոչ միայն ընդարձակում է իր տերության սահմանները, այլև «ընդ լծով արքունի սակից և բեկարաց և մաքսից կացուցեալ՝ զղէն քաջութեան մարտի իւրոյ նշան յաղթութեան կանգնէր»[3]:

Այստեղ արդեն «սակը» արքունի հարկ է:

Արքունական հարկ «սակը» չվճարելը դիտվում էր որպես պետական հանցագործություն և հաճախակի լուծվում էր միայն զենքի ուժով: Արաբական Ափշին զորավարը, երբ զգում է, որ այլևս անկարող է զենքի ուժով իրեն ենթարկել Սմբատ Թագավորին, դիմում է արաբական խորամանկ քաղաքականության. նա պահանջում է Թագավորից վճարել միայն «սակ» հարկը և այն էլ ոչ նախնական չափով:

Ափշինը, շարունակում է պատմիչը, «փրկեաց, եթէ անհնար է արքայի դատաճանիլ առ ի նմանէ և զի միանգամ և երկիցս

---

[1] Հովհ. Դրասխանակերտցի, էջ 133։

[2] Նույն տեղում, էջ 160։

[3] Նույն տեղում, էջ 161—162։

և երիցս զիրթ առեալ էր՝ դարձեալ ապա յայնց բարուց թուեցուցանէր սակս բարեխորհրդութեան և սիրալիր զթոց զգալն իւր առ արքայ...»։ Ափշինի հաջորդ Յուսուֆն ընթանում է իր նախորդի ուղիով։ Նա նույնպես ստիպված դաշինք է կնքում Սմբատի հետ և «թերևաբերն զսակն արմունի արարեալ...»[1]։

Եղերացոց թագավորը, ասում է պատմիչը, հարկատու էր Սմբատ Բագրատունուն. այս հարկը նա կոչում է «սակ»։

«Եւ իբրև չոգաւ հաստատեցաւ և միապետեաց զիւր սեպհական տէրութիւնն, ի բազում հնազանդութիւն և մտերմական ծառայութիւն համախոհութեան զինքն արքային Սմբատայ բերէր սակս հայրաբուն նախախնամութեան նորա առ նա՝ հեշտ և բազձալի զայն իւր վարկեալ»[2]։ Այս «սակ» կոչված հարկը վճարում էին անմիջական նյութական բարիքներ արտադրողները։

Այս մասին խիստ ուշագրավ վկայություն է պահպանել նույն պատմիչը։

«Եւ ապա,— գրում է Դրասխանակերտցին,— ընդ բոլոր աշխարհս տէրութեան իւրոյ հինգերորդել հրամայէ (Սմբատը) զամենայն երամակս ձիոց և զանդեայս արջառոց և զհօտս ոչխարաց՝ և տայ ի զրադատ տուգանս սակին...»[3]։

«Սակի» մասին այս վկայությունը մեզ հայտնի բոլոր հատվածներից ամենից ուշագրավն է։ Այստեղ մատնացույց է արված, որ «սակ» հարկը հավաքվել է ոչ միայն հողից, այլև արոտավայրերից, խոշոր և մանր եղջերավոր անասուններից և այն էլ հնգից մեկը։ Ուրեմն «սակը» կազմել է անմիջական արտադրողների եկամուտներից վճարված հարկի 1/5 մասը։

Բայց «սակը» միայն արքունի հարկ չէր. նա իր մեջ իմաստավորում էր բազմաթիվ այլ հարկեր ու տուրքեր։ «Սակ» էր նաև կենտրոնական իշխանությանը, հողատեր ֆեոդալներին վասալների կողմից վճարված հարկերը։

«Այլև իշխանն Մոկաց՝ Գրիգոր, եղբարբ իւրով Գուրգենաւ բազումս յարդարէր ընծայէր զսակ հարկի ծառայութեան առաջի Գագկայ ի հալածանս անդ»[4]։

Այս և Եղերացոց թագավորի կողմից Սմբատ Բագրատունուն վճարվելիք «սակն» այն հարկն էր, որ վասալները տալիս էին սյուզերենին՝ սրանից ստացած տիրույթների կամ պետական պաշ-

---

[1] Հովհ. դրասխանակերտցի, էջ 185—186, 193։

[2] Նույն տեղում, էջ 202։

[3] Նույն տեղում, էջ 205, 214, 306, 325 և ուր.։

[4] Նույն տեղում, էջ 292, 328։

տոնների համար։ «Սակ» հարկը օտար բռնակալներին վճարել են նաև հայ եկեղեցիները և վանքերը։ Կիրակոս Գանձակեցին տալով Իվանեի և Զաքարեի արշավանքների պատմությունը, վկայում է, որ սելջուկները դերի են վերցնում Իվանե իշխանին և գերությունից ազատում են միայն այն դեպքում, երբ Իվանեն իր դուստրին կնության է տալիս Աշրաֆ զորավարին։ Այս ամուսնությունը, ասում է պատմիչը, Թեթեացրեց Հայաստանի վիճակը. «Եւ առաւել երկրին Տարօնոյ, զի վանորայքն՝ որ ասդ էին, ընդ հարկիւ էին, Թեթեացուցին զսակ հարկին, և կիսոց զամէնն իսկ թողին»[1]։ «Սակ» հարկը սնխախտ կերպով իր գոյությունը պահպանում է նաև մոնղոլ-թաթարական տիրապետության օրոք։

Կիրակոս Գանձակեցին վկայում է, որ մոնղոլ-թաթարները բոլորից պահանջում էին «խստագոյն հարկս, աւելի քան զկար մարդոյն»։ Խիստ ու դաժան հարկային քաղաքականությունը քայքայում է երկրի էկոնոմիկան, կանգնեցնում արտադրողական ուժերի զարգացումը։ Մոնղոլ-թաթարական հարկահանները, շարունակում է պատմիչը, «ոնոչին անհնարին կատանօք և շարչարանօք և դեղոցօք», իսկ ովքեր խուսափում էին հարկեր վճարելուց նրանց «ըմբռնեալ սպանանէին», իսկ եթե որևէ մեկը չէր կարողանում վճարել «զսակն՝ զմանկունս նոցա առնուին ընդ պարտուցն, քանզի Պարսիկ տաճկահաւատք սպառաւորք շրջէին»[2]։ Անմիջական նյութական բարիքներ արտադրողները ոչ միայն «սակ» հարկ էին վճարում օտար նվաճողներին, այլև սեփական շահագործող դասերին։

Օգտագործելով քաղաքական անբարենպաստ պայմանները, աշխատավորների թշվառ ու ողբերգական կացությունը, դավառատեր իշխանները միացել էին նվաճողներին և քամում էին անմիջական բարիքներ արտադրողների դառը քրտինքը։

«Այլ և իշխանքն,— ամփոփում է պատմիչը,— տեարք դաւառացն նոցուն գործակից լեալ ի նեղելոցն և ի պահանջելն վասն իւրեանց շահելոյ»[3]։ Այս բոլորը չէր։ Հարկի են ենթարկվում «զամենայն արուեստագէտս, եթէ ի քաղաքս և եթէ ի գիւղս, զամենայն ի հարկի կացուցին»։ Հարկի են ենթարկում ծովերը, գետերն ու

---

[1] Կ. Գանձակեցի, էջ 156—157, հմմտ. Մ. Ուռհայեցի, էջ 411։
[2] Նույն տեղում, էջ 348—349։
[3] Նույն տեղում։

լճերը, երկաթահանքերը, աղահանքերը, արհեստային արտադրության ձեռնարկները[1]։

Ճիշտ է, այս բազմաթիվ և բազմազան հարկերը պատմիչը «սակ» չի կոչել, բայց վերոհիշյալ վկայության հիման վրա կարելի է ենթադրել, որ «սակ» հարկային տերմինը ուներ ավելի լայն իմաստ ու նշանակություն, քան մինչև օրս կարծվել է։ Այս տերմինը հավաքական տերմին էր և իր մեջ իմաստավորում էր բազմաթիվ հարկեր ու տուրքեր։

«Սակ» էր բնամթերքներով, դրամով, մասնավորապես արծաթով վճարված տուրքերը։ «Սակ» էր նաև պարտքով վերցրած դրամագլխի տոկոսը։

Գրիգոր Տաթևացին դատապարտելով շար, ագահ վաշխառուներին, հողևոր դասի ներկայացուցիչներին և մեծատուններին կրոնա-բարոյական քարոզներով համոզում է, որ անիրավություն է դրամը վաշխով տալը և «սակ» պահանջելը։ Ահա այդ վկայությունները.

«Զինչ է ասելն մի լինիր երաշխաւոր բարեկամին քո... Զի դու վճարեցես զսակ պարտուց նորա»[2]։

«Որքան փոխ տան, զնոյն չափ սակին խնդրեն զդիտոյն»[3]։

Այս հատվածներում արդեն սակը տոկոս է, վաշխ և ոչ թե գլխահարկ, հողային հարկ կամ արքունական հարկ։

Այսպիսով, «սակի» մասին առայժմ մեզ հայտնի վկայությունների հետազոտությունը ցույց է տալիս, որ նա սկզբնական շրջանում նշանակել է փրկավճար, գերեգին, զինվորական ռոճիկ և ռազմական ուժերի պահպանման ծախս, որոշ չափ, թիվ, համար, ապա հետագայում, զարգացած ֆեոդալական հարաբերությունների պայմաններում ստանում է արքունական հարկի, գլխահարկի և այլ բազմաթիվ հարկերի և տուրքերի իմաստ։

Աշխատանքի հասարակական բաժանման, ապրանքային արտադրության, դրամական շրջանառության, քաղաքների և քաղաքային կյանքի զարգացման հետևանքով, չնայած «սակը» պահպանում է արքունական հարկի իր նախավանդ նշանակությունը, սակայն նա իր մեջ իմաստավորում է նաև պարտքով տրված դրամի տոկոսը և չափը և նույնիսկ դրամական հարկերն ու տուրքերը։

---

[1] Կ. Գանձակեցի, էջ 349։

[2] Գրիգորի աշակերտի նամենին Յովհաննու Որսնեցոյ և քաջ դիտապետի համառօտ հաւաքումն յառակաց գրոցն Սողոմոնի ի լուսաւոր բանից մեծին Ներսիսի (տե՛ս Ձեռագիր № 2188, էջ 29բ)։

[3] Նույն տեղում, հմմտ. նաև ձեռագիր № 1149, էջ 27ա։

Բաժ: «Բաժ» հարկային տերմինն ամենից շատ գործածվող և ամենից շատ ծածված տերմինն է: Այս բառը, որպես հարկային տերմին, հիշատակված է սկսած 5-րդ դարից: Այս տերմինի մասին հիշատակել են Եղիշեն, Եզնիկ Կողբացին, մեր մյուս մատենագիրները և առանձնապես վիմական արձանագրությունները: «Բաժը» որպես հարկային տերմին ստուգաբանել են Ն. Ադոնցը, Մ. Փոքիուգալը, Հ. Հյուբշմանը, Ս. Եղիազարյանը, Հ. Մանանդյանը, Բ. Ավդալբեկյանը և առանց բացառության հայերեն բառարան կազմող բոլոր հեղինակները:

Սկսենք վերջիններից. Նոր Հայկազյան և Առձեռն բառարանները «բաժը» մեկնել են «բաժին արքունի — այսինքն մաքս վաճառելի իրաց, տուրք, փայ...»[1]:

Հ. Աճառյանը «բաժը» ստուգաբանել է «արքունի տուրք, հարկ, մաքս»[2]: Ստ. Մալխասյանը «բաժին» տալիս է ավելի ընդարձակ իմաստ ու նշանակություն. «Բաժ-բաժին, մաս... արքունական հարկ՝ փոխադրվող կամ վաճառվող տարանքներից, մաքս... անուղղակի տուրք, որ ստացվում էր զանազան մթերքներից, օրարարդից, ծխախոտից, շաքարից և այլն: Հնում բաժը պետական բյուջեի եկամուտներից մեկն էր կազմում... տուրք որ տեղ-տեղ պահանջում են ավելի ճանապարհով կամ կամուրջով անցնելու համար»[3]:

Հ. Հյուբշմանը իր «Armenische grammatik» աշխատության մեջ, վկայակոչելով Եղիշեի մոտ գործածված «բաժը» այն թարգմանել է zoll մաքս և նշել է, որ «բաժ» մաքս էր նշանակում նաև պահլավերենում baz անվան տակ: Հ. Հյուբշմանը միաժամանակ մատնացույց է արել, թե բաժարան, բաժարար կամ մաքսապետ դրած է ածել նաև Ֆիրդուսին՝ իր «Շահնամեում»[4]:

Առաջին անգամ մեր պատմագրության մեջ Ն. Ադոնցն էր, որ «բաժին» ավելց այլ նշանակություն: Վկայակոչելով Եղիշեի մոտ գործածված «բաժի» մասին վկայությունը, հեղինակը ընդունել է, որ «բաժ» նշանակել է հաս—գեղիթ—գլխահարկ[5]:

Մ. Փոքիուգալը իր «Եղիշեի վարդապետի վասն Վարդանանց և

---

[1] ՆԲՀ. հ. Ա, էջ 421, Առձեռն, էջ 163:

[2] Հ. Աճառյան. Արմատական բառարան, հ. 1, էջ 874:

[3] Ստ. Մալխասյանց, Բացատրական բառարան, հ. 1, էջ 313:

[4] H. Hübschmann. Armenische grammatik, էջ 114—115:

[5] Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, стр. 481—485.

Հայոց պատերազմի» աշխատության մեջ «բաժը» բացատրել է որպես «փոխադրության տուրք»[1]։

Ս. Եղիազարյանը «բաժը» ստուգաբանել է, որպես շալակ վարձից, ուղներից հավաքված և տների վրա դրված հարկ[2]։ Ակադ. Հ. Մանանդյանն անվերապահորեն ընդունում է, որ «բաժ» տերմինը մաքս է կոչվել պատմական բոլոր ժամանակաշրջաններում և բոլոր պայմաններում։ Բաժը, ասում է Հ. Մանանդյանը, Հայաստանի հնագույն հարկերից մեկն է և ունեցել է ոչ թե հողային, այլ մաքսային հարկի իմաստ։ Այն իբրև մաքսային հարկ գոյություն է ունեցել Հայաստանում նաև «Արշակունիների և Մարզպանության ժամանակ»[3]։

Այսպիսով, ակադ. Հ. Մանանդյանը փաստորեն վերադարձ է կատարում բաժի, որպես մաքսի, ըմբռնման հին մեկնությանը։ Որ «բաժը» գործածվել է մաքսի նշանակությամբ և իմաստով, այդ բացառել և ժխտել անկարելի է։

«Բաժ» մաքսի մասին ամենահին վկայությունը պահպանել է 7-րդ դարի նշանավոր մատենագիր Անանիա Շիրակացին։

«Այր մի վաճառական,— գրել է Շիրակացին,— էանց ընդ երիս բաղաքս և բաժ արարին յառաջնումն»[4]։

Սակայն այս մեկ հատիկ վկայության հիման վրա պնդել, թե «բաժը» պատմական բոլոր շրջաններում ունեցել է նույն առումն ու նշանակությունը, ինչպես այդ կատարել է ակադ. Հ. Մանանդյանը, սխալ գործած կլինենք։

Սկզբնական առումով «բաժ» է կոչվել ամեն մի բաժին, մաս։ Հետագայում «բաժը» ստացել է այլ իմաստ, այսինքն անմիջական արտադրողը իր արտադրանքի մի մասը՝ բաժինը հանձնել է իշխող դասերին, որպես արդյունավճար հարկ, իսկ միջին դարերում քաղաքների, քաղաքային կյանքի, արհեստային արտադրության, ապրանքափոխանակության, դրամական շրջանառության ու ներքին շուկայի զարգացման պայմաններում «բաժը» ստանում է գերազան-

---

[1] Միքայել Փաշա Փորուզալ. Եղիշեի վարդապետի վասն Վարդանանց և հայոց պատերազմի, էջ 224, § 17. 2։

[2] С. А. Егиазаров, Исследования по истории армянского права, стр. 99.

[3] Հ. Մանանդյան, Հայաստանի արքունի հարկերը..., էջ 23։

[4] Անանիա վարդապետի Շիրակացւոյ, Յաղագս հարցման և լուծման. Հրատ. Գալուստ տէր-Մկրտչեան, Արարատ, 1896 թ., Հարցում ԺԱ. հմմտ. առանձին գրքով, Վաղարշապատ, 1896 թ.։ Ակադեմիկոս Հ. Օրբելին այս նույն առումով էլ «բաժը» թարգմանել է пошлина—մաքս, (տես Вопросы и решения вардапета Анания Ширакаци СПБ, 1918 г. стр. 44).

ցապես մաքսի իմաստ ու նշանակություն։ Պատմական այս տարբեր ժամանակաշրջաններում առաջ են գալիս «բաժի» երեք տեսակներ — բաժ—բաժին, բաժ—հարկ, բաժ—մաքս։

«Բաժը», որպես բաժին, հարկ և տուրք հիշատակված է Հին կտակարանի հայերեն բնագրում, Եղնիկ Կողբացու և Եղիշեի մոտ։

Մակարայեցոց Ա. գրքում հիշատակված է, որ հրեաների թագավորը հարկատուներին ազատում է «ի հարկաց և զբաժ զաղջն և զպսակաց»[1]։ Այս վկայության մեջ, անկասկած է, որ «բաժը» աղահարկ և պսակադրության հարկ է և ոչ թե սոսկ մաքս։ «Բաժը» որպես բաժին, մաս, գործածական է նաև Եղնիկի մոտ։

Բանավեճի մեջ մտնելով զրադաշտական և հին հայկական հեթանոսական կրոնների հետ, Եղնիկը գրել է.

«Արդ եթէ նա վասն նորա յաշտ առնէր, զի որդի լինիցի նմա, իսկ Որմիզդ վասն նորա յո՞ր սակս առնէր... միթէ՝ յորմէ զորդի՝ն խնդրեաց, թէ գուցէ ընդ որդոյն տալոյ՝ զնա բաժ առնուցու»[2]։

«Բաժի», որպես հարկի, և այն էլ արքունի հարկի մասին, ամենից ուշագրավ վկայությունը պահպանել է Եղիշեն։ Տալով պարսկական արքունիքի դաժան հարկային քաղաքականության պատմությունը, մատենագիրը նշում է, թե «բնաւ ո՞վ իսկ կարէ պատմել վասն ծանրութեան մտից և սակից, բաժից և հասից, լերանց և դաշտաց և մայրեաց»[3]։

Այս հատվածներում նույնիսկ ակնարկ չկա, թե «բաժը» մաքս է, առևտրական կամ անցահարկ։ Բոլոր վկայություններում «բաժը» բաժին է, աղահարկ, պսակադրության հարկ, փոխհատուցում, փերկավճար, պետական և ընդհանրապես հարկ։ «Բաժ»—բաժին, «բաժ»—հարկ և «բաժ»—մաքս բառերը պատմական տարբեր էպոխաներում, արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների զարգացման տարբեր ստադիաներում ստացել են այլ իմաստ և նշանակություն։ Այսպես, օրինակ, «բաժ»—բաժինը հանդես է եկել այն ժամանակ, երբ նյութական բարիքներ արտադրողները իրենց արդյունքների մի մասը, մի բաժինը վճարել են կենտրոնական պետությանը և իշխող դասերին։ Հետագայում նա ստացել է հարկի և ավելի ուշ՝ մաքսի իմաստը։

«Բաժ»— մաքսը հանդես է եկել պատմական այն ժամանակաշրջանում, երբ զարգացան ֆեոդալական քաղաքները, քաղաքային կյանքը, ապրանքային արտադրությունը, առևտուրը, դրամական

[1] Մակարայեցոց, Ա. գիրք, գլ. Ժ, 29։
[2] Եղնիկայ վարդապետի Կողբացւոյ եղծ աղանդոց, Թիֆլիս, 1914, էջ 90։
[3] Եղիշե, էջ 32։

շրջանառությունը, խորացավ և ընդարձակվեց աշխատանքի հասարակական բաժանումը։ Այս պայմաններում է, որ «բաժը» ստանում է մաքսի իմաստ։

Այս նույն իմաստով «բաժ» — մաքսը գործածական է Մխիթար Գոշի և Սմբատ Գունդստաբլի դատաստանագրքերում։ Մխիթար Գոշը «բաժը» կոչում է մաքս։ «Մաքս, որ է բաժ», ասում է օրենսդիրը, կարելի է դանձել միայն այն դեպքում, երբ «ի քաղաքս կամ ի դաւառս եկեալ վաճառիցեն»։

Մխիթար Գոշը սահմանել է կանոններ այն մասին, որ մաքս— «բաժը» պետք է դանձել միայն քաղաքներում և ոչ թե «...յանցս հանապարհաց մաքսել, եթէ ոչ վաճառիցեն»[1]։ Այս վկայության մեջ «բաժը» ոչ միայն առևտրական գործարքներից դանձվող, այլև անցահարկ է։ Սմբատ Գունդստաբլը իր Դատաստանագրքում տալիս է «բաժ»—մաքսի մի քանի տեսակներ։ «Եւ ուր վաճառ լինի,— գրում է օրենսդիրը,— նա զկապալն առնուլ պատեհ է և զբաժն, բայց ուր ծախս չլինի, նա չէ իրաւունք բաժ առնել...»[2]։ Ակնհայտ է, որ այս վկայության մեջ այն հանդես է եկել որպես երկու կարգի հարկ՝ մաքս և կապալ, իսկ կապալ ինչպես Գունդստաբլի մոտ, այնպես էլ «Անտիոքայ Անասիղներում» գործ է ածվել վճար, վարձ իմաստով։

«Բաժ»—մաքսի և կապալի տարբերությունը հիշատակված է հետևյալ վկայություններում։ «Ջրաղացք և խանութք և հայնց իրք, որ կապալ բերէ, նա չէ պատեհ, որ յամէ վճարեն»[3], կամ «Արուեստաւոր, որ յումեքէ վարձ առնու, որ իրք շինէ, կամ կապալով բան առնէ ու չանէ բան»[4], կամ «Զաթոռին հարկն, որ յետոյ ի շարաց դրած էր, զկապալն յեպիսկոպոսէն բարձին»[5]։ Այս վկայություններում կապալը այն վարձն էր, որ դանձվում էր ջրաղացներից, կապալ էր նաև աթոռահարկը և կապալով վերցրած գործ-աշխատանքը։

Սակայն «բաժ»-ը ոչ միայն մաքս էր, կապալավարձ, վաճառահարկ կամ առևտրահարկ, այլև հարկ էր ընդհանրապես։

10-րդ դարի վերջի և 11-րդ դարի սկզբի մատենագիր Ստ. Տարոնեցին (Ասողիկը) պահպանել է խիստ ուշագրավ վկայություն «բաժ» — հարկի մասին։ Խոսելով Գագիկ թագավորի շինարարա-

---

[1] Մ. Գոշ, էջ 435։

[2] Ս. Գունդստաբլ, Դատաստանագիրք..., էջ 64։

[3] Նույն տեղում, էջ 61։

[4] Նույն տեղում, էջ 71, հմմտ. Մխիթար Գոշ, էջ 369, կանոն ԺԷ։

[5] Վիմական տարեգիր, էջ 221։

կան և պետական ձեռնարկումների մասին, պատմիչը ասում է, որ նա տիրեց «յոլով բերդից և գաւառաց ի սահմանացն Վայոց ձորոյ, Խաչենոյ և Փառիսոսոյ՝ առաւել քան զեղբայր իւր»: Իր քաղաքական գերիշխանության տակ միավորելով Հայաստանի բերդերն ու գավառները Գագիկ թագավորը «զբաժ հարկաց յոլովից տեղեաց ազատեաց...»[1]: Այս հատվածում բաժը արդեն հարկ է և այն էլ բերդերից և գավառներից հավաքված հարկ:

Որ «բաժը» նույնիսկ 10—13-րդ դարերում պահպանել է հարկային տերմինի իր նշանակությունը, չնայած նա մեծամասամբ գործածական է որպես մաքս, այդ մասին են վկայում նաև Շիրակավանի 1228 թ. արձանագրությունը: Այս արձանագրության մեջ ասթաբեկ Իվանեն հիշատակում է՝ «Թողաք զգիւղս Շիրակա զապուռիշի և զջրանին բաժն յորդեցէ յորդիր ազատ ի բաժէն...»[2]:

13-րդ դարում «բաժից» ազատվում էր նաև «երիցանին»: Այս առումով խիստ ուշագրավ է Անիի 1236 թ. արձանագրությունը: Այստեղ արձանագրված է, որ հարկահավաք-կառավարիչներ — «տարմանիներն» ազատում են «ի յԱնոյ երիցանուս զբաժն... չունի զբ իշխանութիւն բաժ ուղել...»: Անիի երիցանուն բաժից ազատում է նաև Քոթիին[3]:

Անիի 1320 թ. արձանագրությունով Սարգիս Շիլենցը ազատում է «զԱրջուտսոն տուրբ Գրիգորս զբաժն մեծ և զփոքր...»[4]: Նույնիսկ այս հատվածներում «բաժը» դեռ պահպանում է բաժին, մաս իմաստը:

Սակայն 12—13-րդ դարերում արդեն նկատելի կերպով հետին պլան է մղվում «բաժ»—բաժին, «բաժ»—հարկ տերմինը և հանդես է գալիս «բաժ»—մաքս: Բայի Մ. Գոշից, Ս. Գունդստաբլից այս իմաստով «բաժը» գործածվել է վիմական արձանագրություններում: Այստեղ գործածված «բաժը» բազմազան է, բազմատեսակ: Այն արդեն կապված է քաղաքային կյանքի և ապրանքափոխանակության ու դրամական շրջանառության զարգացման հետ:

Արդեն «բաժ» են վճարում և «գինեւոր» և «շալակաւոր» անեցիք, և մսագործները և առևտրով զբաղվող վաճառականները, հոգեվորականները, առանձին եկեղեցիներն ու վանքերը և արհեստավոր-

---

[1] Ստ. Տարոնեցի, էջ 256։
[2] Վիմական տարեգիր, էջ 71։
[3] Նույն տեղում, էջ 106, 222։
[4] Նույն տեղում, էջ 169, 222։

ներն ու արհեստային ձեռնարկները։ Այս «բաժը» կոչվում էր խիստ բնորոշ անունով՝ «ամէն ցեղէ բաժ»։

«Բաժի» էին ենթարկվում արտադրված ու հատկապես վաճառքի հանված ապրանքները։ Այս մասին է վկայում Գառնիի այն արձանագրությունը, որտեղ Խոշաքը անասուններին ազատում է «շարիատից»։ Այս արձանագրության մեջ նա հիշատակում է, որ Գառնիի վանքին նվիրում է իր սեփական «հայրենիքն», իսկ եղներն ու ոչխարները ազատում է «շարիատից» և վերացնում է «զգինուոյ բաժն» և արձանագրել է տալիս, որ եթե «որ ի մերոց կամ յաւտարաց հայրենակալաց կամ ի հոգացողաց խափանել ջանա զմեր աւանդածէն՝ Կայենի և վարձ զՀուդայի առցէ»[1]։

Անիի 1057—1063 թթ. արձանագրության մեջ Բագրատ Մաշիտոտոսը բյուզանդական Կոստանդին կայսրի հրամանով և Անիի տանուտերեր՝ Մխիթարի, Գրիգորի, Սարգսի հետ և սրանց համաձայնությամբ անեցիների հարկը թեթևացնում է և արձանագրել տալիս, թե «եւ գինևոր Անեցի, եթէ սայլով, եթէ դրաստով ազատ է։ Եւ Անեցի, որ իւրենն մորթելիք դնէ, բաժն ազատ է։ Եւ շալակաւոր Անեցի յամէն ցեղ բաժին կէսն ազատ է...։ Եւ մսագործի, եթէ պախրէի լինի գլուխ, եթէ ոչխարի, կէսն տա, կէսն ազատ է։ Եւ ի նստոին կարէն Ո դրամն ազատ է»[2]։

Անիի անթվակիր մեկ արձանագրության մեջ հիշատակվում է, որ Անին ազատվում է «զդռնագիրն ի բաժ» հարկից[3]։

Որ «բաժը» մաքս էր և այն էլ առևտրական մաքս, այդ առթիվ խիստ ուշագրավ վկայություն է պահպանել Վարդան Այգեկցին իր քարոզներից մեկում։

Այս քարոզը վերնագրված է «Վասն զրկանաց», որտեղ Այգեկցին թվարկում է իր-էպոխայի զրկանքների, չարաշահությունների, կաշառակերության բոլոր տեսակները և այդ թվում «չար ու անօրէն մաքսն»։

«Է կատարեալ չար և անօրէնութիւն և զրկանք և մաքսաւորութիւն զոր բաժ կոչեն, այսինքն բաժին»։ Այս «բաժը», ասում է Վարդանը, անիրավաբար սահմանել են հայոց առաջին թագավորները «վասն ազահութեան իւրեանց»։ Չնայած իրենք մահացել են, բայց մնացել է «չար պտուղ վաստակոց նոցա»։ Այս «բաժը», ասում է քարոզագրքի հեղինակը, «չար զրկանք է... պիղծ յիշատակ նոցայ»։

---

[1] Տե՛ս «Հովիտ», 1910, № 8։

[2] Վիմական տարեգիր, էջ 27։

[3] Նույն տեղում, էջ 221։

Բաժարար—մաքսավորները նստում են «ի կիցս ճանապարհաց և լրբութեամբ բաժին խնդրեն յանցաւորաց»[1]։

Ակնհայտ է, որ այս վկայությունների մեջ «բաժը» առևտրական գործարքներից, փոխադրական միջոցներից հավաքված հարկմաքս էր։

«Բաժը» տալիս էին ոչ միայն քաղաքի բնակչության մի մասը՝ սահնք առևտրականները, այլև «շալակաւոր», «գինեւոր», անեցիները։

Անիի 1263 թ. և անթվակիր մի արձանագրության մեջ երկու անգամ հիշվում է, որ քաղաքի բնակիչները ազատվում են «բաժից»։ Առաջին արձանագրության մեջ հիշատակված է՝ «բարձաք ի Անոյ իրիցանուս զբաժն, զոր ի սկզբանէ ազատ էր... չունի որ իշխանութիւն բաժ ուզելու...», երկրորդ արձանագրության մեջ նշված է՝ «տեսայ զԱնոյ իրիցանուս զիրաւունքն հրամանքն, որ ի սկզբանէ բաժ ու տամղա չէին տվել. ես այլ հաստատեցի...»։

Ինչպես ակադ. Հ. Մանանդյանը, այնպես էլ Թ. Ավդալբեկյանը այս երկու արձանագրություններում մատնանշված «երիցանները» հասկացել են որպես հոգևորականներ, երեցներ։ Ակադ. Հ. Մանանդյանը այս առթիվ գրում է, որ «Անի քաղաքի երեցները ինչպես և Արջոյատիճի սբ. Գրիգոր եկեղեցին ազատ են հայտարարվել «բաժից», հավանորեն փոխադրության հարկերից»։

Թ. Ավդալբեկյանը մերժելով ակադ. Մանանդյանի այս դրույթը, իր հերթին ավելացնում է, որ «այս արձանագրությունները վերլուծելիս «բաժ»-մաքս թեպիսն ընդունելու դեմ կարող են ծառանալ այսպիսի առարկություններ։

Քահանաների առևտրով պարապելը դժվար թե այդքան համատարած լիներ, որ կարիք զգացվեր հատուկ պաշտոնագրերով, վիմական վավերագրերով հավերժացնելու նրանց առևտրական գործունեության ազատությունը»։ Թ. Ավդալբեկյանը գտնում է, որ «երիցանի» «բաժը» պետք է հասկանալ այն իմաստով, որ հոգևորականներն էլ Անու շրջանում զբաղվում էին այգու և գինու մշակությամբ և այդ արձանագրություններում հիշված հարկ-բաժը ակցիզ, մաքս էր[3]։

Մեզ թվում է, որ ակադ. Հ. Մանանդյանը և Թ. Ավդալբեկյանը սխալվում են։ Այստեղ խոսքը ոչ թե երեցների, հոգևորականների, այլ քաղաքի ծերերի վաստակների խորհրդի, այսինքն, քաղաք-

---

[1] Ձեռագիր № 8030, էջ 217բ, 218ա։

[2] Վիմական տարեգիր, էջ 106, 222։

[3] Թ. Ավդալբեկյան, Հաս, սակ, բաժ, էջ 37։

ների կառավարչական-վարչական օրգանների մասին։ Ամենայն հավանականությամբ «բաժը» իր բոլոր բազմազան տեսակներով հավաքում էր քաղաքի «երիցանին», ավազների կամ ծերերի խորհուրդը իր թաղմաչիների, մուխթասիպների ձեռքով, քաղաքի բնակիչներից, ինչպես քաղաքի պաշտպանության կառավարման, այնպես էլ իշխանին ու տերերին հարկեր վճարելու համար։ Այդ երկու արձանագրության բովանդակությունը հաստատում է այս դրույթը։

1263 թ. արձանագրության մեջ ոչ միայն ասված է, որ միայն Անիի «երիցանիին» աղատվում է «բաժից», այլև հաստատում է, որ այսուհետև «չունի ոք իշխանութիւն բաժ ուղելու...»։ Եթե այստեղ «բաժը» երեցներից հավաքված մաքսը լիներ, ապա արձանագրության մեջ պետք է ասվեր, որ աղատվում է ոչ թե «երիցանիին», այլ երեցները։ Հայտնի է, որ այդ էպոխայում «բաժ»—հարկը վճարում էին քաղաքի բնակիչները, հատկապես սուեորականները և արհեստավորները։ Առանց քաղաքի «երիցանու», կամ իշխանավորների համաձայնության ոչ ոք հարկից բնակիչներին աղատել չէր կարող։ Ահա մի վկայություն ևս։ Առանը չի կարողանում Անին աղատել թաստակից, առանց «ինդրոյ իշխանաւորաց...»։

Այսպիսով «բաժը» սկզբնական շրջանում բաժին էր, մաս, հետո հարկ, իսկ 12—14-րդ դարերում՝ հարկ—մաքս։

Միջին դարերում, զարգացած ֆեոդալական հարաբերությունների պայմաններում, «բաժի» էին ենթակա՝ քաղաքների հրապարակներում և շուկաներում վաճառվող մթերք-ապրանքները, ոգելից խմիչքները, արհեստավորների արտադրանքը, վանքերի և եկեղեցիների կողմից շուկա դուրս բերված գյուղատնտեսական մթերքները և արհեստային արտադրության ապրանքները։ Այս հարկ—մաքսը վճարում էին թե գյուղերի և թե քաղաքների բնակիչները։ Գյուղերում ինչպես բոլոր հարկերը, այնպես էլ «բաժը» գանձում էին «ձեռնաւորները», «շահնաները», իսկ քաղաքներում «տամղաչիները», «մուխթասիպները», «բաժրարները», բաժպանները։ «Բաժը» գանձվում էր ճանապարհների, կամուրջների վրա և քաղաքների դարբասների մոտ ու շուկաներում։

Միջնադարյան Հայաստանում կային փոքր և մեծ «բաժեր»։ Ակադեմիկոս Վ. Բարտոլդն իրավամբ նշում է, որ «մեծ» և «փոքր» դռնագինը և բաժն ունեցել են միևնույն իմաստն ու նշանակությունը[1]։

---

[1] В. Бартольд, Персидская надпись на стене аннийской мечети Мануче, СПБ, 1911, стр. 7.

«Ծուծ»։ Հարկային այս տերմինը խիստ դժվար է ստուգաբանության ենթարկվում։ «Ծուծը» որպես հարկային տերմին միայն մեկ անգամ է հիշատակված Մրենի 1041 թ. արձանագրության մեջ։ 1041 թվականին դալով իր հայրենի տիրույթ Մրեն գյուղը, Աշոտ որդի Գագիկ Շահնշահը տալիս է արձանագրել, թե «ՆՂ. թուականութեանս Հայոց, ի հայրապետութեան տեառն Պետրոսի և Խաչիկ հալոց կաթողիկոսաց, այս իմ հրամանքն են, Գագիկ Շահանշահի, որդւոյ Աշոտոյ, ազատեալ եմ զՄրենոյ հարկն՝ զծուծ և զմուր և զկապիճն...»[1]։

Ակնհայտ է, որ այս հատվածում «ծուծը» հիշատակված է «մրուր» և «կապիճ» հարկերի հետ և նրանցից առաջ, որպես գյուղերից գանձվող հարկ։ Սակայն «ծուծն» ինչ տեսակի հարկ էր կամ տուրք, իր մեջ ի՞նչ հարկ էր իմաստավորում, մեզ հայտնի չէ։ Աղբյուրների ներկա վիճակը հնարավորություն չի տալիս ավելի բան ասել «ծուծի» մասին և մնում է հավանական այն ենթադրությունը, որ գյուղերը բացի վերահիշյալ բազմաթիվ հարկերից և տուրքերից վճարել են նաև «ծուծ» կոչվող հարկը։

«Կապիճ»։ Այս բառը պատմական շատ հին անցյալ ունի. «կապիճն» որպես չափ և հարկ գործածական է Հին կտակարանի հայերեն բնագրում, Ագաթանգեղոսի, Եղիշեի, Ղ. Փարպեցու, Թովմա Արծրունու, Կ. Գանձակեցու մոտ և վիմական արձանագրություններում։

Այս բառը Նոր Հայկազյան բառարանում ստուգաբանված է որպես «աման մը, չափ մը, ամանով չափված...»[2]։ Ակադեմիկոսներ՝ Հ. Աճառյանը և Ստ. Մալխասյանցը կապիճին տվել են ավելի լայն իմաստ ու նշանակություն։ Չժխտելով և բացասելով «կապիճի», որպես չափի նշանակությունը, նրանք «կապիճը» մեկնել են «մի տեսակ հարկ»[3], «բնական բերքով վճարվող մի հին հարկ»[4]։

«Կապիճը» որպես չափ և նույնիսկ հարկ, մատնացույց է արված Հին կտակարանում։

«Մի առնիցէք անիրաւութիւն ի դատաստանի, ի չափս և ի կշիռս և ի զոյգս... և կապիճ արդար լինիցի ձեր»[5] կամ «եղև սով մեծ ի Սամարիա... Եվ եղև գլուխ մի էշոյ յիսուն սկեղ արծաթոյ, և չոր-

---

[1] Վիմական տարեգիր, էջ 22։
[2] Առձեռն բառարան, էջ 423։
[3] Հ. Աճառյան, Արմատական բառարան, հ. III, էջ 989—990։
[4] Ստ. Մալխասյանց, Բացատրական բառարան, հ. II, էջ 391։
[5] Ղևտ., գլ. ԺԹ, 36։

բարդ կապեի աղբոյ աղաւնեաց՝ յիսուն և հինգ արծաթոյ»[1] և վերջապես «կապին մի ցորեան դինարի միոջ. և երեք կապին գարի դինարի միոջ»:

Եթե «կապիճի» մասին առաջին վկայությունը խիստ մշուշապատ է և հնարավորություն չի ընձեռում պարզելու այդ տերմինի իմաստը, որովհետև այստեղ խոսվում է անարդարացի դատավորների և առևտրա-վաշխառուների կեղծ չափերի և կշեռքների մասին, և «կապիճն» ինչպես ակնհայտ է դատավորներին վճարվող տուգանքն էր կամ առևտրականների կողմից խարդախ չափ ու կշեռքի ճիշտությամբ յուրացվող գումարը, ապա մյուս երկու վկայությունների մեջ «կապիճն» արդեն չափ է, քանակ:

Ուշադրավ է, որ Ագաթանգեղոսի մոտ «կապիճ» բառը գործածված է այլ առումով. «Եւ ետ հրաման,— գրել է պատմիչը,— արկանել կապիճս երկաթիս ի ծունկս նորա, և վարել ուռունս ստուարս, և բառնալ ի կախաղան՝ մինչև յօշեսցին ծունկք նորա անդէն»[3]: Այստեղ արդեն կապիճը սրունքները ոլորող և խոշտանգող երկաթյա գործիք է: Եղիշեն վկայում է, որ պարսկական արքունիքը իր հպատակ երկրների բնակիչներին պարտավորեցնում էր ոչնչացնել գյուղատնտեսության վնասատուներին և «վաղ թուով համարով ի մէջ բերցին ըստ արքունի չափոյն։ Եւ որ այլ ևս ինչ սպասք իցեն, կամ զոհից կամ սպանդից, ըստ տօնական կարգին՝ տարեւոր թուականին, և ըստ կայսնաթիւ մոխրաչափի կարգին»[4]: Այստեղ, ակնհայտ է, որ «կապիճը» չափ է: Այս առումով կապիճը գործածական է Թ. Արծրունու և Կ. Գանձակեցու մոտ:

Թ. Արծրունին հաստատելով Եղիշեի վերոհիշյալ վկայությունը, իր հերթին ավելացնում է, թե «Արդ՝ յայսմ հետէ ըստ նեպուկի գեաղջն կապնաճամար ժժակք յամենայն ի դուռն արքունի ի սատակումն եկեսցեն. զի սոքա վնասակարք առ աստուծոյն եղեն»[5]:

Կ. Գանձակեցին տալով թաթար-մոնղոլական ծանր հարկերի և ֆեոդալական պարտավորությունների ընդարձակ նկարագիրը, հիշատակում է, որ հարկատուները բերելով «կապին մի գարի՝ արկանեն առաջի խաչին և ամենայն զօրքն տանեն ի նմանէ երի-

---

[1] Գ. Թագ., գլ. Զ., 25։
[2] Յայտ., գլ. Զ., 6։
[3] Ագաթանգեղոս, էջ 67։
[4] Եղիշե, էջ 67—68։
[5] Թ. Արծրունի, էջ 27։

վարաց իրեանց, և ոչ պակասի... նոյնչափ կապնին անդէն մնայ...»[1]:

«Կապիճը» որպես չափ հիշատակված է նաև վիմական արձանագրություններում:

Անիի 1173 թ. արձանագրության մեջ ասված է, որ ոմն Տրդատ քահանան և իր կին Խուշուշը սուրբ Փրկիչ եկեղեցուն վասիմ են անում իրենց զանձապին հայրենիքը, կառուցել են տալիս ամռան և ձմռան ժամատներ, եկեղեցուն նվիրում են այլ ապասներ, չորս այգի, երկու տուն, այլ «ապաս պիտոյից հացի և գինւոյ... մեծ արտոմ նվեռեցն նարիւր կապնով»[2]: Այստեղ կապիճն արդեն հողաչափ է:

Հռոմոսի 1259 թ. արձանագրությունով ոմն Հովհաննես վանքին է նվիրում իր զանձապին երկու տունը և «ի կապիճ ցորեն սերման»[3]:

Սակայն մենք ունենք այլ վկայություններ, որոնք ապացուցում են որ «կապիճը» հարկ էր և նույնիսկ դրամական հարկ:

Մրենի 1041 թ. արձանագրությունով Աշոտ Թագավորի Դաղիկ Շահնշահ որդին Ներսեհը աղաղում է «հարկն... կապիճքն»:

Անիի 1057—1063 թթ. արձանագրություններով Բագրատ Վախեցին քաղաքի բնակիչներին աղաղում է «կապիճ» հարկից և արձանագրել է տալիս՝ «նե ի կապճին տային դահեկանին Զ. դրամ, այժմ տան Դ., Բ. աղաղէ»[4]:

Այսպիսով «կապիճն» եթե սկզբնական շրջանում և նույնիսկ միջին դարերում դեռ պահպանում էր իր չափ, քանակ, հողաչափ նշանակությունը, սակայն նա միաժամանակ ստանում է նաև հարկի և նույնիսկ դրամական հարկի իմաստ:

3. ՀՈԳԵՎՈՐ ՖԵՈԴԱԼՆԵՐԻՆ, ՎԱՆՔԵՐԻՆ ՈՒ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻՆ ՎՃԱՐՎԱԾ ՀԱՐԿԵՐ, ՏՈՒՐՔԵՐ ԵՎ ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՊԱՐՀԱԿՆԵՐ

Քրիստոնեության մուտքից հետո հայ եկեղեցին, հիմնված կենտրոնական իշխանության ակտիվ օգնության և օժանդակության վրա, շատ կարճ ժամանակամիջոցում ընդարձակում է իր հողային տիրույթները և հանդես է գալիս որպես ֆեոդալական ամե-

[1] Կ. Գանձակեցի, էջ 190—191։
[2] Վիմական տարեգիր, էջ 31—32։
[3] Նույն տեղում, էջ 97։
[4] Նույն տեղում, էջ 22։
[5] Նույն տեղում, էջ 27։

նախորոշոր կազմակերպություն։ Հայ Արշակունի առաջին թագավորները եկեղեցիներին և հոգևոր բազմաթիվ, բազմաստիճան դասերին տնտեսապես ապահովելու համար նվիրաբերում են ոչ միայն հողեր, գյուղեր, շարժական և անշարժ կայք, այլև սահմանում են եկեղեցիների, վանքերի, եկեղեցական բազմաթիվ կազմակերպությունների, սրանց ապասավորների, հոգևոր դասերի օգտին գանձվող հարկեր և տուրքեր։ Հայ հոգևոր դասն իր սոցիալական գոյավիճակով դասվում է «աղատանիի» շարքը, հայտարարվում է «ապահարկ» և իրավունք է ստանում գանձել «հարկ», «հաս», «մուտ», «պտուղ», «տասանորդ» կոչվող հարկերը։ Անմիջական նյութական բարիքներ արտադրողները բացի այս ուղղակի հարկերից, վանքերին և եկեղեցիներին «նվիրաբերում» են «կամավոր» նվերներ, իրենց միջոցներով մշակում են հոգևոր ֆեոդալների ընդարձակ կալվածները, վանքերի և եկեղեցիների սեփական հողերը, այգիները, խոտհարքները, անցկացնում են արհեստական ոռոգման առու-ջրանցքներ, կառուցում են կամուրջներ, ճանապարհներ, վանքեր, եկեղեցիներ և սրանց կից տնտեսական ու բնակելի այլ շենքեր՝ մատաններ, պահեստներ, նկուղներ և աշխատում անասնապահության բնագավառում։

Սկսած 4-րդ դարի սկզբներից եկեղեցիները և հոգևոր դասը, սիստեմատիկաբար, խիստ համառ կերպով, ընդարձակում են իրենց հողային տիրույթները և ձեռք բերում կախյալ բնակիչներ։ Քրիստոնեության մուտքից հետո հրավիրված եկեղեցական բազմաթիվ ժողովները մշակում են խիստ ու դաժան կանոններ ոչ միայն եկեղեցու տիրույթները պաշտպանելու, այլև անհնազանդ հարկատուներին պատժելու համար։ Ագաթանգեղոսը, Փ. Բուզանդը, Ղ. Փարպեցին, Մ. Խորենացին և մեր մյուս մատենագիրները միաբերան վկայում են, որ Արշակունի թագավորները ոչ միայն գյուղեր, ավաններ և ագարակներ են նվիրում եկեղեցիներին, ոչ միայն ադարակներում և ավաններում ծառայող հոգևորականներին բավարարում են հողով, այլև կարգավորում են եկեղեցիներին և հոգևոր ֆեոդալներին վճարվող հարկերն ու տուրքերը, խիստ կերպով պատժում են նրանց, ովքեր թերանում են հարկային պարտավորությունների կատարման մեջ[1]։ Դեռ Բարսեղի և Սահակի կանոններում սահմանված են, որ եթե որևէ մեկը «արկնցէ զպտուղ... կամ զայլ նասս» վճարել եկեղեցուն և քահանաներին, որ «զսուրբ հայրապետացն կարգեալ է»

---

[1] Ագաթանգեղոս, էջ 399—404, 422—423, Փ. Բուզանդ, էջ 193, Ղ. Փարպեցի, էջ 38, 195, Մ. Խորենացի, էջ 279, Կանոնագիրք հայոց, էջ 55—56։

նղովյալ լինի[1]։ Այդ նույն կանոնները խրախուսում են այն հավատացյալներին, որոնք «յոժարութեամբ» հանձնում են «զհաստս քահանայիցն յամենայն արմատեաց պտուղս», տալիս են մատաղի մի մասը, պատկառության ծախսերը, թաղման հանդերձները և նույնիսկ «ժամու դրամ»-ները[2]։

Աշխիշատի ժողովի վեցերորդ կանոնում ասված է, որ երկրի թագավորը, մեծամեծ իշխանները և բոլոր նրանք, որոնք «ի վերայ ընկերին ոմեցին իշխանութիւն» պետք է գործ ունենան «ընդ իւրեանց ծառայս և ընդ կրտսերս և ընդ աշակերտս։ ...Մի անարժանս, և աւելի տարապայմանս հարկօք նեղել, քան զչափն յուշ առնելով, զի և նոցա տէր գոյ յերկինս»։ Այս նույն կանոնում միաժամանակ պատվիրվում է հարկատուներին չթերանալ հարկեր վճարելու մեջ «էթէ յարդարն հնազանդութիւն իւրեանց տէրանց»[3]։

Հայ եկեղեցու Հայրապետ Սահակն իր կանոնների 10-րդ հոդվածում դատապարտում է այն հոգևոր տերերին, որոնք փոխանակ բարեպաշտ կերպով եկեղեցուն ծառայելու, փափագում են՝ «զհարկս միայն պահանջել և ապահութեամբ զոսկոյ և զարծաթոյ մթերս... մթերել...»[4]։

Ֆեոդալական եկեղեցին, հոգևոր ֆեոդալները դանձում էին «ի ժողովրդականաց» «հաս», «պտուղ», «տասանորդ»։ Դվինի ժողովի ԺԴ կանոնում ասված է «Տուրք եկեղեցւոյ ըստ օրինի բաժանեսցին. ասպ երիցանց՝ երիս և կէս մասն. հաստրակ քահանայից՝ երկու մասն. սարկաւագաց՝ մի և կէս մասն», դպիրներին և այլի կանանց «ելիկ իցեն կարօտ՝ մի մասն»[5]։

Աշխարհիկ և հոգևոր ֆեոդալները ոչ մի միջոցի առաջ կանգ չէին առնում անվճար աշխատանք և հավելյալ արդյունքներ քամելու համար։ Սրանք, ասում է Սահակը, հափշտակում էին «որբոցն և այրեաց և տնանկաց» վարձը, կողոպտում էին բոլորին[6]։

Եկեղեցական ժողովներում մշակված և օրենքի ուժ ստացած կանոնն անարգանքի սյունին է գամում այն հոգևոր հայրերին,

---

[1] Կանոնք սուրբ ժողովոց և հարց եկեղեցւոյ, պրակ Ա. խմբագրեց՝ Ա. Դավթյան, Թիֆլիս, 1904, էջ 72։

[2] Նույն տեղում, հմմտ. նաև Դանդրայի ժողովի կան. կան. 7—8, Բ. Առաքելական 3, 4, Բարսեղ Կեսարացու, 1—4, 13, 18, Գարտավի 18, Սսի 19։

[3] Կանոնդիրք հայոց, էջ 15։

[4] Նույն տեղում, էջ 19։

[5] Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ, էջ 79, հմմտ. Կանոնդիրք, էջ 23, 27, 55, 111, հմմտ. ձեռագիր № 2677, էջ 232ա և ուր.։

[6] Նույն տեղում, էջ 48։

որոնք ժողովրդից հոգևոր հարկ հավաքելով, ամեն ինչ իրենք են յուրացնում։

Հողային նոր տիրություններ, հարկատու հպատակներ, ֆեոդալական կալվածներում աշխատող բանվորական ուժ ձեռք բերելու համար կատաղի, իսկ շատ հաճախ զինված, պայքար էր բորբոքվում կենտրոնական իշխանության, աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների միջև։ Այս պայքարը մեղմացնելու համար հրավիրվում են աշխարհաժողովներ, որտեղ հոգևոր դասերի հետ միասին մասնակցում էին նաև աշխարհիկ իշխանության ներկայացուցիչները, մեծամեծ ֆեոդալ-նախարարները, ազատները։ Դժբախտաբար այս աշխարհաժողովներում քննարկման չեն ենթարկվել հարկերի կարգավորման խնդիրը, եթե չհաշվենք Աղվանից Վաչագան III թագավորի կողմից հրավիրված աշխարհաժողովը։ Այս ժողովի մշակած 3-րդ կանոնը խիստ բացառիկ նշանակություն ունի քննարկվող պրոբլեմի պարզաբանման համար։

Այս կանոններում սահմանված հատուկ իրավական նորմերով կարգավորվել են երեցներին վճարվելիք հարկերի տեսակները ու չափը։ Կանոններում պատվիրված է ազատներին և շինականներին ճանաչել եկեղեցու իշխանությունը, չխափանել եկեղեցու ծիսակատարությունները (կանոն Դ), եկեղեցուն իրավունք է տրված «հանցապարտ» հոգևորականներին զրկել եկեղեցու ծառայությունից, նրանց հողաբաժին-խոստակները բռնագրավել, որպես եկեղեցու սեփականություն (կանոն Ե), սահմանված է, որ եթե վանքերում և եկեղեցիներում կան բազմաթիվ հոգևոր-սպասավորներ, բայց նրանց «ժողովուրդք սակաս» են, այսինքն հարկատուները քիչ են, իսկ այլ «վանաց ժողովուրդքք բազում են և երիցունք սակաս», ապա կաթողիկոսին, եպիսկոպոսներին իրավունք է վերապահվում «ի բազում ժողովրդենէն առցեն և տացեն վանացն, որոյ երիցունք շատ են» (կանոն Զ)։

Իրավունք է տրված եպիսկոպոսներին դատել, պատժել և տուգանել «հանցապարտ» քնակիչներին (կանոն Է)։

Արգելվում է հոգևորականներին բացի իրենց ենթակա շենքյուղերից «զայլ շէն» ունենալը, եթե երկու ագարակներ սահմանակից են, ապա կարիք չկա յուրաքանչյուր ագարակում առանձին երեց պահել (կանոն Ը)։

Իրավունք է վերապահված եպիսկոպոսներին դատել և պատժել, նույնիսկ շեներից աքսորել այն բոլոր մարդկանց, որոնք կհամարձակվեն հոգևոր դասերի վրա «բամբաս դիցէն» (կանոն ԺԴ)։ Հոգևոր առաջնորդներին իրավունք է տրված «ի բաց հալածես-

ցեն ի շինուց» կամ «ի շինուց արտաքս հանցեն» այն բոլոր մարդկանց, որոնք թերանում են եկեղեցական պարտականությունները կատարելու մեջ (կանոն ԺԴ, ԺԵ)։

Եպիսկոպոսները և երեցները բողոքում են թագավորին, թե «ի շինի երկուս կամ ղերիս եկեղեցիս տունեն վանս»։ Քննարկելով այս բողոքը «ազատ մարդիկք պայմանեցին և արքայի ի եպիսկոպոսաց... այսպէս... թէ զարարեալ եկեղեցուն թողցեն, և զպատուղ և զինաս եկեղեցւոյ ի վասն՝ եկեղեցին տացեն» (կանոն ԺԶ)։ Ուրեմն ազատները ձգտում էին եկեղեցուն վճարվելիք «հասն» ու «պտուղը» խափանել, վերացնել կամ թե դանձել իրենց օգտին։

Արգելվում է ազատներին առանց եպիսկոպոսի դիտության երեցներին ազատել իրենց դատատեղեր-կալվածներից (կան. ԺԹ)։ Եթե հավատացյալը ատա վկայություն է տալիս, իրավունք է տրվում շենի ավագներին բռնադրավել «զմարդոյ հեղն» և հանձնել երեցներին (կան. ԺԴ)։ Այս բազմաթիվ կանոնների մեջ ամենից ուշադրավը 3-րդ կանոնն է։ Այստեղ պարզ և որոշ սահմանված է, թե գյուղական բնակիչների որ կատեգորիան ինչ չափի հարկեր պետք է վճարի ֆեոդալական եկեղեցուն։ Վաչագան թագավորի կողմից հաստատած և հոգևոր ու աշխարհիկ ֆեոդալների կողմից հավանություն ստացած այս կանոնը նոր խմբագրությամբ և հավելումներով քաղված է Բարսեղ Կեսարացու կանոններից։

Բարսեղ Կեսարացին իր հայրապետության տարիներին (370—378 թթ.) մշակել է հատուկ կանոններ, որոնք հայտնի են «Կանոնք երրորդ Բարսեղի Կեսարու Հայրապետի» անվան տակ։ Այս կանոնների ԻԶ հոդվածում սահմանված է, որ հարուստ, հզոր, սեփական տնտեսություն ունեցող և համապատասխանների աշխատանքը շահագործող թվանիկ կոչված գյուղացին պարտադիր կերպով պետք է վճարի «Դ. դրիւ ցորեն, Զ. դրիւ գարի, և ԺԶ փաս քաղցու», եթե գյուղացին հարուստ չէ, բայց ունի սեփական տնտեսություն, պետք է վճարի թվանիկ գյուղացիների կողմից վճարվելիք հարկի կեսը և «զինի որչափ որ կարողիցէ». իսկ այն գյուղացիները, որոնք «վար և այգի» չունեն չպետք է հարկի ենթարկվեն։

Բայց Բարսեղ Կեսարացու կանոններից երևում է, որ այս երրորդ կատեգորիայի, սեփականատուրկ գյուղացիներն էլ հարկեր էին վճարում, հավանական է կու էին քաշում կամ թե վարձակալվում հողատերերի մոտ։ Բարսեղ Կեսարացին դիմելով հողատերերին, ասում է, «փսկ յորս վայր և այդի չիցէ» հարկեր մի պահան-

ջեր։ Ակնհայտ է, որ եթե սրանք հարկատու չլինեին, անիմաստ կդառնար նրանց համար սահմանել հատուկ կանոն[1]։

Բարսեղ Կեսարացու այս կանոնը նոր լրացումներով և խմբագրությամբ մտնում է Աղվանից Վաչագան Թագավորի կողմից հաստատված կանոններում։

«Պատուղք ի ժողովրդենէ երիցուն՝ կարգն այս լիցի. ի թուականին Դ դրիւ ցորեան և Զ դրիւ գարի և ԺԶ փաս քաղցու, և որ տառապեալն իցէ զհացիդ կէսն տացէ և գինի որչափ կարող է. իսկ որոյ վայր և այդի ոչ է, մի տացեն»։

Սակայն պարտադիր չէ, որ հարկատուները միայն այս սահմանված հարկերը տային։ Եթե որևէ մեկը «աւելի քան զայս տացէ սակս հոգւոյ, բարի առնէ»։ Այնուհետև վկայակոչելով Պողոս առաքյալի այն պատվերը, որտեղ ասված է, թե «որ առատութեամբ սերմանէ, առատութեամբ հնձեսցէ» եկեղեցին դիմում է տմեն միջոցի համոզելու հարկատուներին, թե նրանք էլ պետք է անթերի, առանց տրտունջի վճարեն եկեղեցուն հասանելիք հարկերը։

Բացի հողահարկից, եկեղեցին իրավունք է ստանում հարկեր հավաքել նաև անասուններից։

«Եւ ոչ ոչխար է ի տան, ոչխար մի և երեք գզաթ բուրդ և մէկ պանիր. և ոչ ձի ի տան իցէ մին յովանակ, և ոչ պախրէք իցեն, որք մի»[2]։

Օտար և սեփական շահագործող դասերի ծանր հարկերը, հասարակական անվարձ, հարկադիր աշխատանքը և ֆեոդալական տարբեր բնույթի պարտավորությունները այն աստիճանի թշվառ դրությունում էին դրել նյութական բարիքներ արտադրողներին, որ Պարտավի եկեղեցական ժողովը կոչ է անում իշխող դասերին դուք ունենալ հարկատուների նկատմամբ։ Դուք, ասված է այդ ժողովի ԺԴ կանոնում, այն աստիճանի եք հասցրել ժողովրդին, որ նա այլևս ոչինչ չունի վճարելու և ստիպված «ի նեղութենէ հարկաց անձինքն հանեն ի վաճառ...»[3]։

Բացի պաշտոնական սահմանված հարկերից և տուրքերից եկեղեցիները, վանքերը և հոգևոր դասը ստանում էին այսպես կոչված «նամակաւոր նվերներ», կնքադրամ, թաղման, ծիսակատարությունների, դերեզմանները օրհնելու, տնօրհնեք, նշանադրության, պսակադրության, կալահարկ, այգեհավաքի հարկ, մատաղացուի մի մա-

---

[1] Ձեռագիր № 3706, կան. ԻԶ, էջ 210ա։

[2] Կանոնագիրք հայոց, էջ 193, հմմտ. ձեռագիր № 2677, էջ 210ա։

[3] Նույն տեղում, էջ 169։

սը և այլն։ Մատենադարանի ձեռագիր աղբյուրներում կան բազմաթիվ վկայություններ եկեղեցիներին և հոգևոր դասերին վճարվելիք հարկերի մասին։ Ահա բազմաթիվ վկայություններից ամենից բնորոշը։ «Վասն քահանայից ասնելոյ զպատուղ ժողովրդեան» վերնագրի տակ տված է.

«Եւ ասեն իրաւունք քահանայից ի ժողովրդոցն... Եթէ արջառ իցէ, եթէ ոչխար՝ տացէ քահանային զաջոյ երինն և զծնօտն և զդմակն, զպատուղս ցորենոյ և զգինւոյ և յեղոյ և բրդոյ ոչխարաց... ամենայն ընչից պարտէ տալ զպատուղս քահանայից... զայդ եդան սուրբ առաքեալքն և սուրբ ժողովոյն հաստատեցին»[1]։

Հայ ֆեոդալական եկեղեցին դարերով պայքարել է, գործադրել է խիստ ու դաժան պատժիչ միջոցներ այն բոլոր «խռովարարների», «անհնազանդների» դեմ, որոնք պայքարել են հոգևոր հարկերից և ֆեոդալական պարտավորություններից ազատվելու համար։ Եկեղեցիների, վանքերի առաջնորդները, առանձին հոգևորականները հանդես են գալիս ոչ միայն կրոնա-բարոյական քարոզներով, անեծքներով, նզովքներով, այլև զենքով։ Նրանք դիմում և հայցում են աշխարհիկ ֆեոդալ-իշխանների, կենտրոնական պետության օգնությունը հարկատվության խախտված կարգը վերականգնելու համար։ Հայտնի է, որ Տաթևի վանքը շուրջ մեկ դար պայքար է ծավալում Ցուրարերդի, Բերդի և Տամալեկ գյուղերի բնակիչներին ոչ միայն տեղահան անելու, այլև հարկային նախկին կացությունը վերականգնելու համար[2]։ Հարկային բազմաթիվ տերմիններ ստուգաբանելիս ցույց տրվեց, որ այս կամ այն գյուղը նվիրաբերվելով վանքին ազատվում է աշխարհական, արքունի հարկերից հօգուտ վանքի, կամ թե գյուղացիները պարտավորվում են կոռ քաշել վանքերի համար։

Հաճախակի են դեպքերը, երբ հայոց թագավորները և կաթողիկոսները հատուկ հրովարտակներով, կարգավորում են եկեղեցիներին վճարվելիք հարկերի չափը, սահմանում են հասարակական մասշտաբի հարկադիր աշխատանք վանքեր ու եկեղեցիներ կառուցելու, առուներ և ջրանցքներ անցկացնելու, կամուրջներ և ճանապարհներ պատրաստելու համար։

«Պարգևագիր Աշոտ թագաւորի և կոնդակ Խաչիկ կաթողիկոսի» փաստաթղթում որոշված է ոչ միայն Նախավկա վանքի հողային տիրույթները, այլև նրան վճարվելիք հարկերի տեսակները։ Այս

---

[1] Ձեռագիր № 837, էջ 147ա և բ։

[2] Տե՛ս Ստ. Օրբելեան, էջ 229—230, 248։

փաստաթղթով Աշոտ թագավորը վանքին է նվիրում ոչ միայն բազմաթիվ գյուղեր, հողեր և շարժական ու անշարժ կայք, այլև պահանջում է ընակիչներից «հասք և դիրաւունս զոր պարտիք (գյուղերի բնակիչները) տալ Աստուծոյ բաժին՝ Աթոռոյ տեառնականս զխաշօրհնութեան և զսրբանուէրս, զիրաւունս մատաղաց, կենդանեաց և ննջեցելոց... և զամենայն իրաւունս կենաց և մահու լիովին և անթերի տալ ի ձեռս դրան զուարթ և առատ սրտիւ»[1]։

Վանքերն ու եկեղեցիները պայքար էին ծավալում իշխանների, ազատների դեմ հարկերից ազատվելու համար։ Հաղպատի վանահայր Հովհաննեսը հիշատակություն է թողել այն մասին, որ Զաքարե և Իվանե ամիրսպասալարները «կրկին ազատեցան եկեղեցիք մեր յամենայն հարկէ» կամ 1300 թ. ամիր սպասալար Մխարգրձելը Սանահնի բոլոր եկեղեցիները ազատում է «ամէն հարկէ»[2]։

Այսպիսով, հայ աշխատավոր գյուղացիությունը բացի արքունական և աշխարհական կոչված հարկերից, հարկեր ու տուրքեր էր վճարում նաև ֆեոդալական եկեղեցիներին, վանքերին և հոգևոր բարձրաստիճան դասերին։ Այս հարկերը չէին գերազանցում նրա եկամտի $^1/_{10}$ մասը և կոչվում էին «հաս», «պտուղ» և «տասանորդ»։

4. ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ

Մարքսը ցույց է տվել, որ ֆեոդալիզմի զարգացման վերջին շրջանում, երբ փոխանակությունը, արհեստային ու ապրանքային արտադրությունը, քաղաքներն ու քաղաքային կյանքը արդեն նշանակալից զարգացում են ստանում, հանդես է գալիս դրամական ռենտան՝ դրամական բահրայի տեսքով։

Դրամական ռենտան,— ուսուցանում է Մարքսը,— ծագում և զարգանում է արդյունքներով վճարվող ռենտայի հասարակ ձևափոխությունից այնպես, ինչպես այս վերջինը աշխատանքային ռենտայից։

«Հողային ռենտայի այս բոլոր ձևերի՝ աշխատանքային ռենտայի, արդյունքներով ռենտայի, փողային ռենտայի (իբրև արդյունքներով ռենտայի սոսկ փոխակերպյալ ձևի), այս բոլոր ձևերի տարածման ժամանակ ռենտատուն միշտ ենթադրվում է որպես հո-

---

[1] «Արարատ», 1868, էջ 31—34, Սմբատեանց, «Երնջակ», էջ 410, Ալիշան, Սիսական, էջ 516—517, տես նաև Գ. Հովսեփեան, Յիշատակարանք..., էջ 132։

[2] Վիմական տարեգիր, էջ 33—34։

ղի իսկական մշակողը ու տիրակալը, որի անվճար հավելյալ աշխատանքը ուղղակի հողի սեփականատիրոջն է գնում»[1]։ Փողային ռենտայի ժամանակ նյութական բարիքներ արտադրողները աշխատանքային կամ արդյունքային ռենտաների փոխարեն հողատիրականատիրոջը վճարում են հարկերն ու տուրքերը փողով, իսկ դրամ ձեռք բերելու համար նրանք պետք է որ արտադրած արդյունքների մի մասը ապրանքի փոխարկեն կամ թե վաճառքի համար ապրանք արտադրեն։ Հետևաբար, ուսուցանում է Մարքսը, «արդյունքներով ռենտայի փոխարկումը փողային ռենտայի, որը սկզբում կատարվում է տեղ-տեղ, հետո էլ ավելի կամ թե պակաս չափով մոտենում է ազգային մասշտաբին, այդ փոխարկումն ենթադրում է առևտրի, քաղաքային արդյունաբերության, ընդհանրապես ապրանքային արտադրության և սրա հետ էլ փողային շրջանառության արդեն նշանավոր զարգացում»[2]։ Բայց Մարքսը և Լենինը միշտ էլ զգուշացրել են, որ դրամական ռենտան պետք է զանազանել դրամական հարկերից և տուրքերից։ Դրամական հարկերն ու տուրքերը տեսակ են եղել ֆեոդալական հասարակական-տնտեսական ֆորմացիայի պատմության ողջ ժամանակաշրջանում։

Դրամական հարկերն ու տուրքերը, թույլ զարգացած փողային ռենտան մի դեպքում հանդես են եկել որպես սոսկ դրամական հատուցումներ, մյուս դեպքում՝ որպես դրամական հարկեր և տուրքեր։ Դրամական հարկեր ու տուրքեր գյուղացին վճարել է և հողի սեփականատիրոջը, և պետությանը, և պետական պաշտոնյաներին։ Դրամական հարկերի ու տուրքերի փոխարեն հանդես եկած դրամական ռենտան իր հետ բերում է նաև հասարակական նոր երևույթներ։

Նախ հենց որ ռենտան փողային ռենտայի ձև է ընդունում, արդեն ռենտատարտ գյուղացիների և հողի սեփականատիրոջ միջև եղած հարաբերությունները «ստանում են պայմանագրական հարաբերության ձև»։ Այնուհետև գյուղացիների մի շնչին մասը ստանում է ավելի մեծ հնարավորություններ ոչ միայն վարձակալելու, այլև գնելու հողը, շատ հաճախ նաև իր անձնական իրավունքները, անձնական ազատությունը։ Փողային ռենտայի ժամանակ ավելի են սրվում ու խորանում սոցիալական հարաբերությունները ոչ միայն գյուղերում ու քաղաքներում, այլև իրենց գյուղացիների մեջ։

[1] Կ. Մարքս, Կապիտալ, հատ. III, էջ 341։
[2] Նույն տեղում, էջ 336։

«...Նատուրալ ռենտայի փոխարկումը փողային ռենտայի ոչ միայն անհրաժեշտորեն ուղեկցում է, այլև կանխակայում է ունեզուրկ և փողով վարձվող բատրակների դասակարգի գոյացումը»[1]։ Գյուղում հանդես են գալիս կուլակները և սկսում են շահագործել գյուղական վարձու բատրակներին, ունեզուրկ գյուղացիներին, նույնիսկ ուժեղ, հարուստ, գյուղացիները իրենց հերթին պահում են ճորտեր։

Մարքսը և Լենինը տալով մինչ կապիտալիստական հողային ռենտաների դիտական բնութագիրը, միշտ էլ զգուշացրել են, որ անթույլատրելի է դրամական ռենտան ֆեոդալիզմի էպոխայում նույնացնել կապիտալիստական հողային ռենտայի հետ։

«Պետք է խիստ կերպով տարբերել դրամական ռենտան կապիտալիստական հողային ռենտայից,— գրել է Վ. Ի. Լենինը,— վերջինս կապիտալիստներ ու վարձու բանվորներ է ենթադրում, հողագործության մեջ, առաջինը՝ կախումն ունեցող գյուղացիներ... Դրամական ռենտայի օրինակը Ռուսաստանում կալվածատիրոջը տրվող գյուղացիական բահրան է։ Կասկած չկա, որ մեր գյուղացիների նաև արդի հարկերի մեջ դրամական ռենտայի որոշ բաժին կա։ Երբեմն հողի գյուղացիական վարձակալությունն էլ մոտենում է դրամական ռենտային, երբ հողի բարձր վարձագինը գյուղացուն բաժին է թողնում ոչ ավելի, քան խղճուկ աշխատավարձը»[2]։

Դրամական հատուցումներ, դրամական հարկեր և տուրքեր առկա են եղել նաև Հին Հայաստանում։

5-րդ դարի մեր բոլոր մատենագիրները և եկեղեցական աշխարհաժողովների կողմից մշակված ու հաստատված կանոնները պահպանել են արժանահավատ վկայություններ դրամական հարկերի և տուրքերի մասին։

Եղիշեն վկայում է, որ Հայաստանը պարսկական արքունիքին հարկերը վճարում էր ոչ միայն բնամթերքներով, այլև դրամով։ Պատմիչը նույնիսկ հիշատակում է, որ պարսկական արքունիքը հարկերը հավաքում էր դահեկաններով։

«Քանզի ուստի արժան էր առնուլ հարիւր դահեկան, նոյնչափ կրկնելին և առնուին. սոյնպէս և եպիսկոպոսաց և երիցանաց դնէին, ոչ միայն շինաց՝ այլև աւերակաց»[3]։ Այս հատվածը մեզ հնարավորություն է տալիս մի քանի եզրակացության համար։ Նախ՝ այստեղ հիշատակված դրամական հարկը, ամենայն հավանականու-

[1] Կ. Մարքս, Կապիտալ, հատ. III, էջ 337։

[2] Լենին, Երկեր, հ. 3, էջ 203։

[3] Եղիշե, էջ 32։

թյամբ, գլխահարկն էր, որովհետև պատմիչն ուղղակի ասում է, որ պարսիկները հարկի են ենթարկում բոլորին, այդ թվում եպիսկոպոսներին և երեցներին։ Այնուհետև «ոչ միայն շինաց, այլև աւերակաց» նախադասությունը ցույց է տալիս, որ դրամական հարկի ենթակա էին ոչ միայն շինները, գյուղերն ու ավանները, այլև անշեն վայրերը — ասենք բերդերն ու ճանապարհները, ռազմական ամրոցները, գետերը, լճերը, անտառները և այլն։ Այսպիսով, հարկերի և տուրքերի, անկասկած է նաև գլխահարկի, մի մասը պարսկական հարկահավաքները գանձում էին դրամով։

Որ գյուղերը, ձիթոբաստանները հարկերը դրամով վճարում էին հողատեր ֆեոդալներին, իսկ վանքերին անցնելուց հետո՝ հոգևոր ֆեոդալներին, այդ առթիվ խիստ արժեքավոր վկայություն է պահպանվել Մարենոցաց վանքի 10-րդ դարի վիմական արձանագրություններից մեկի մեջ։

901 թ. Սյունյաց Սուփան իշխանը տալիս է արձանագրել, որ նա կառուցում և «անխնայարար» զարդարում է Մարենոցաց վանքը, նրան է նվիրում իր «Զսեփական տեղն... ամենայն սահմանաւք՝ լերամբ և դաշտիւ» տալիս է «որս ձկանց զԲողաշէն՝ սեղանոյն և եւթն հարիւր դրամ ի Դեղձանագետոյ զապալչէն, երկու հարիւր դրամ ի Կարիկայ, երեքհարիւր յիսուն՝ յԱնմեռէն, որ լինի ՌՄԾ (1250) դրամ»[1]։

Այս հարուստ, մեծատուն ֆեոդալ-առևտրականը նյութական այնպիսի հարստություն էր կուտակել, որ ոչ պակաս նվեր է տալիս Կոթա կամ Շաղպա վանքին։ Նա ոչ միայն վանքին տալիս է հողեր, ջուր այլև վանքը ազատում է ամեն տեսակ հարկերից և վանքի սպասավորներին տալիս է «միոյ միոյ քահանայի յիսուն դրամ ի տարեջ...»[2]։

Աշոտի որդի Գագիկ Շահնշահը Մաստարա գյուղը ազատում է դրամական հարկից։

«... Կամ եղեւ ինձ Գագիկայ Շահինշահի, որդւոյ Աշոտոյ, Թողուլ զՄաստարայի հարկին զաւելորդն ՁՌ (դրամ) և ածի ԵՌ»[3]։ Այս վկայության մեջ արդեն ամբողջ գյուղն է հանդես գալիս որպես փողային ռենտատու գյուղ։ Որ գյուղերը հարկերի մի մասը վճարել են դրամով, այդ մասին է վկայում Հռոմոսի 1269 թ. վիմական արձանագրությունը։ Այս արձանագրությունով Թաիկը Հռոմոսի

---

[1] Վիմական տարեգիր, էջ 5, հմմտ. Ստ. Օրբելեան, էջ 178—179։
[2] Նույն տեղում, էջ 5։
[3] Նույն տեղում, էջ 13։

վանքին է նվիրում «զԱբէլի ակն, որ ի Դվնա դռանն, զոր իմ որդին Հաղբակէին ի Գարեգոյնէն գրաւկնեց էՃ սպիտակ. ԸՃ սպիտակ ի վերա խարն արար ու եղաւ ՌՇ սպիտակ...»[1]:

Սյունյաց Տարսաիճ իշխանը իր կողմից կառուցված Նորավանքին նվիրում է «Հալէձորոյ և Շնհէրոյ» իր հայրենիքը և սահմանում է «Հալէձորոյ հարկն... ի տարում վաթսուն սպիտակ...»[2]:

Դրամական հարկեր էին վճարում նաև քաղաքի բնակիչների տարբեր կատեգորիաները: Բագրատ Վխկեցին Անի քաղաքի բնակիչներին ազատում է «Ի կապճին... դահեկանին Զ դրամ, այժմ տան Գ., Բ. ազատէ»[3]:

Ակնհայտ է, որ այս հատվածում կապիճը քաղաքի բնակիչներից հավաքվող դրամական հարկ էր:

14-րդ դարի սկզբի հեղինակ Դանիել Աղթամարցին խոսելով մոնղոլական հարկային քաղաքականության մասին վկայում է, որ մոնղոլական խան՝ Խարբանդան «ընդ ամենայն իշխանութեան իւրոյ դնել նշան խայտառակութեան քրիստոնէից և հարկ առնուլ ըստ մարդաթիւի ի (40) արծաթոյ մինչև ի ԺԸ (10) ըստ կարի»[4]: Այս հատվածում դրամական հարկը քրիստոնյա հպատակներից գանձվող գլխահարկն էր:

Ինչպես ցույց է տրված վերևում «արքունական նեպակ», «շար», «աշխարհական հարկ», «շարիատ», «սակ», «բաժ» հարկային տերմիններն իրենց մեջ իմաստավորում էին նաև դրամական հարկերն ու տուրքերը: Անմիջական նյութական բարիքներ արտադրողները դրամական հարկեր ու տուրքեր էին վճարում պետական հարկահավաք-կառավարիչներին, ֆեոդալական վանքերին ու եկեղեցիներին և հոգևոր դասին: Հայտնի է, որ Տաթևի վանքն իր սեփական և հարկատու գյուղերից բնամթերքներով հարկերի հետ գանձում էր նաև դրամական հարկեր:

Դրամը 10—13-րդ դդ. ժողովրդական տնտեսության մեջ արդեն նշանակալից դեր էր խաղում: Նյութական բարիքներ արտադրողները ոչ միայն հարկերի և տուրքերի մի մասը վճարում էին դրամով, այլև կատարած «հանցանքների» դիմաց հատուցում էին դրամական տուգանքներ: Մխիթար Գոշը սահմանել է դրամական տուգանքների որոշակի կարգ: Նրա Դատաստանագրքում կան բազմա-

---

[1] Վիմական տարեգիր, էջ 112, հմմտ. էջ 151:

[2] Նույն տեղում, էջ 149—150:

[3] Նույն տեղում, էջ 27, Ալիշան, Սիսական, էջ 191:

[4] «ԺԴ դարի հիշատակարանները», կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 40: Հմմտ. Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հ. Բ, 1956, էջ 381:

թիվ հոդվածներ դրամական շրջանառության, դրամական հարկերի և առանձնապես տուգանքների մասին։ Օգտագործելով, լրացնելով և խմբագրելով նախորդ շրջանի եկեղեցական ժողովների կողմից մշակված կանոնները, օրենսդիրը սահմանել է կատարած հանցանքների պատժի բազմազան տեսակներ, որոնց մեջ ծանրակշիռ տեղ են գրավում դրամական տուգանքները[1]։

Դրամական հարկեր և տուրքեր էին գանձվում նաև քաղաքներից, քաղաքատիպ վայրերից, իշխան-քարվանսարաներից, կուղպակ-խանութներից, հանքերից, տներից, ջրաղացներից, ձիթհանքերից, քաղաքային դասերից և հատկապես արհեստավորներից։ Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ ֆեոդալական տիրույթների մեջ մտնում էին նաև տնտեսական և արհեստային արտադրության բազմաթիվ և բազմազան արտադրական ձեռնարկներ, քաղաքներ և քաղաքատիպ վայրեր և որ ֆեոդալ-հողատերերի կալվածներում կային բազմաթիվ խանութներ և իշխաններ, որոնք ֆեոդալական սեփականության անձեռնմխելի մասն էին կազմում, կաշխատենք ամենաընդհանուր և համառոտ գծերով կանգ առնել նաև այդ օբյեկտներից գանձվող հարկերի և տուրքերի վրա։

Սմբատ թագավորը դիմելով արաբական Ափշին զորավարին ասում է, թե դու ինչու ես զայրացել իմ և բյուզանդական Լևոն կայսեր դաշինքի առթիվ։ Ես, ասում է Սմբատը, «թէ սէր ընդ Կայսեր Լեւի՝ և այն ևս վասն ձեր օգտի»։ Այդ դաշինքի հետևանքով, շարունակում է Սմբատը, «այլ և վաճառականաց, որք ընդ դենիդ քո բացեալ ճանապարհ, զի արասցեն մուտ յաշխարհս նոցա և ի նոցա լիութենէն փարթամացուսցեն զձեր դանձարանսդ»[2]։

Այս հատվածից երևում է, որ արաբական խալիֆայի հարստության աղբյուրներից մեկն էլ վաճառական-առևտրականներից գանձվող հարկն էր։

Սմբատ Գունդստաբլը և Մ. Գոշը սահմանել են հատուկ կանոն, որ առևտրական-վաճառականներից գանձվող մաքսը պետք է առնել այն ժամանակ, երբ վաճառականները «ի քաղաքս կամ ի գաւառս եկեալ վաճառիցեն»[3]։

Այս կանոնի սահմանումը, անկասկած է, նպաստելու էր առևտրական գործարքների լայն ծավալին։ Առևտրականները, անկաս-

---

[1] Մ. Գոշ, Դատաստանագիրք, էջ 117, 118, 194, 196—197, (տե՛ս նույն էջի 209 ծանոթությունը)։

[2] Հովհ. Դրասխանակերտցի, էջ 159—160։

[3] Մ. Գոշ. Դատաստանագիրք, էջ 435, հմմտ. Սմբատ Գունդստաբլ, էջ 64։

կած է, հարկի էին ենթարկվում ֆեոդալական բաղմաթիվ իշխան-ների կողմից և որպիսի այդ կամայականությունները վերացվի և Գոշը և Սմբատը սահմանում են նրանցից գանձվող մաքսի որոշ չափ և այն էլ միայն վաճառավայրերում։

Հարկի և հարկադիր ու ձրի աշխատանքի ենթակա էին նաև արհեստավորները։

Անիի 1057—1063 թթ. արձանագրության մեջ հիշատակվում է, որ բյուզանդական կատապան Բագրատ Վխկեցին քաղաքն ազատում է «անդարիոն»-ից, այսինքն ձրի, հարկադիր այն աշխատանքներից, որ պարտավոր էին քաղաքի բնակչության ստորադաս խավերը կատարել նրա տերերի համար։ Այս «անդարիոնը» անկասկած մեծապես ծանրացած էր արհեստավորների վրա[1]։

Արհեստավորների հարկատվության մասին խիստ ուշագրավ վկայություն է պահպանվել Անիի 1255 թ. արձանագրություններից մեկի մեջ։

1255 թ. Անի է գալիս Դեշ անունով դամղաչին և տալիս է արձանագրել, որ ինքը Անի քաղաքի պարոնների հրամանով թողնում է Անիի «զքասանկին զդամղէն.. որ ի դրուց գայ... և ներկարարն զվաճառին քասանիկ չառնեն...»[2]։

Դժբախտաբար հատվածը խիստ մշուշապատ է, անհասկանալի ու հնարավորություն չի տալիս պարզել, թե ինչ տեսակի հարկի էին ենթակա արհեստավոր-ներկարարները։

Բայց վկայությունից մի բան պարզ է, որ արհեստավոր-ներկարարները ենթակա են եղել քաղաքի առևտրական գործարքներից գանձվող դամղա կամ տամղա կոչվող դրամական հարկի և այդ հարկը վճարել են քաղաքի տեր-պարոններին՝ դամղաչիների միջոցով։

Ավանի 1285 և 1287 թթ. արձանագրություններից երևում է, որ հարկերից ազատվում են ոչ միայն այգիները, այլև ջուլհակները կամ ջուլհականոցները[3]։ Անիում հարկի են ենթակա եղել մոտ 38 տեսակի արհեստային արտադրություն։

Մ. Գոշը իր Դատաստանագրքում հատուկ հոդված ունի արհեստավորների հարկատվության մասին։ «Այլ թէ ընակիչքն ընդ արուեստի և կամ ընդ վաճառի հարկիցին, զի ոչ է հարկ գլխոյ քրիստոնէից, բայց այլազգեաց՝ յորժամ բռնի ընդ հարկաւ արասցեն»[4]։

---

1 Վիմական տարեգիր, էջ 27։

2 Ալիշան. Շիրակ, էջ 62, Վիմական տարեգիր, էջ 149։

3 Կ. Ղաֆադարյան, Ավանի երկլեզվյան արձանագրությունը, էջ 18—20։

4 Մ. Գոշ, էջ 314։

Պետական-արքունական հարկահան-գործակալները նյութական բարիքներ արտադրողներից գանձում էին հարկերը և հավաքում «տուն գանձուք և հարկաց աշխարհի» մթերանոցները։

Հարկային այդպիսի մթերանոցներ կային ոչ միայն խոշոր, վարչական և պետական կենտրոններ հանդիսացող քաղաքներում, այլև առանձին գավառներում։ Ստեփաննոս Օրբելյանը ասում է, որ Երինջիկ անունով ոմն իշխանուհի շինել է տալիս «զանհնարին ամուրն Երնջակ. և յիւր անուն բերդն և գաւառն կոչի Երնջակայ. և գնեն ի նմա տուն գանձու և նարկաց աշխարհին»[1]։

Այսպիսով, որքան որ հնարավորություն են տալիս պատմական սկզբնաղբյուրները պահպանված վկայությունները, Հայաստանում էլ անմիջական նյութական բարիքներ արտադրողների հավելյալ աշխատանքի և ստեղծած արդյունքների յուրացումը իրականացվել է ֆեոդալական հողային, մեկը մյուսին հաջորդող ռենտաների միջոցով։

Հայաստանում, վաղ ֆեոդալական հարաբերությունների շրջանում, անմիջական արտադրողները սկզբնական շրջանում վճարել են հարկեր և տուրքեր, ապա կատարել են հասարակական անվճար, հարկադիր աշխատանք։ Այստեղ էլ ֆեոդալական կալվածք-տիրության կազմավորման հետ միաժամանակ դերիշխող դիրք է ձեռք բերել աշխատանքային ռենտան կամ կոռային աշխատանքը, իսկ ավելի ուշ հանդես են եկել արդյունքային ռենտան և դրամական հարկերն ու տուրքերը։

---

[1] Ստ. Օրբելեան, էջ 13։

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԴԵՄ ՇԱՀԱԳՈՐԾՎՈՂ ԴԱՍԵՐԻ ՄՂԱԾ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ԶԵՎԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Մարքսիզմ-լենինիզմի կլասիկները ուսուցանում են, որ մինչև այժմ եղած բոլոր դասակարգային հասարակությունների պատմությունը հանդիսացել է շահագործողների և շահագործվողների միջև եղած դասակարգային դաժան հակամարտությունների և գոտեմարտերի պատմություն:

Ինչպես յուրաքանչյուր դասակարգային հասարակության, այնպես էլ ֆեոդալական հասարակական-տնտեսական ֆորմացիայում գյուղացիության և արհեստավորական դասերի մղած պայքարը հանդիսացել է այդ հասարակության շարժիչ ուժը, կամ, ճիմնական գիծը:

Հետևաբար, զբաղվել նյութական բարիքներ արտադրողների պատմությամբ, այդ երբեք էլ չի նշանակում լուսաբանել միայն երկրի էկոնոմիկայի, աշխարհիկ և հոգևոր խոշոր հողատիրության, ֆեոդալական տնտեսության, քաղաքների և քաղաքային կյանքի զարգացման, անմիջական արտադրողների սոցիալ-իրավական կացության հարցերը, այլ ամենից առաջ բացահայտել դասակարգային այն փոթորկալից պայքարը, որը չի դադարել ֆեոդալական հասարակական-տնտեսական ֆորմացիայի պատմության ամբողջ ժամանակաշրջանում:

Աշխատավոր մասսաները աշխատել ու ստեղծել են հասարակության գոյության նյութական բարիքներ արտադրական հարաբերությունների որոշակի պայմաններում, իսկ դասակարգային հասարակության արտադրական հարաբերությունները միշտ էլ եղել են

շահագործման ու շահագործողների դեմ մղվող պայքարի հարաբերություններ։

Մարքսիզմի կլասիկները միշտ էլ բարձր են գնահատել շահագործվող դասակարգերի մղած պայքարը ֆեոդալական շահագործման, ֆեոդալական կարգերի դեմ։

Մարքսն ու Էնգելսը անդրադառնալով գյուղացիների մղած պայքարին, մի շարք առիթներով նշել են, որ «միջնադարյան բոլոր մեծ ապստամբությունները սկիզբ են առել գյուղից»[1]։

Գյուղացիական ապստամբությունները շատ բարձր է գնահատել Վ. Ի. Լենինը։ Նա իր «Գյուղական չքավորությանը» աշխատության մեջ խոսելով ֆեոդալական հասարակարգում գյուղում տեղի ունեցած դասակարգային պայքարի մասին, գրել է.

«Ի՞նչ է դասակարգային պայքարը։ Դա ժողովրդի մի մասի պայքարն է մյուսի դեմ, իրավազուրկների, ճնշվածների և աշխատավորների մասսայի պայքարն է արտոնյալների, ճնշողների ու ձրիակերների դեմ...։ Երբ գոյություն ուներ ճորտատիրական իրավունքը, այն ժամանակ գյուղացիների ամբողջ մասսան պայքարում էր իր ճնշողների, կալվածատերերի դասակարգի դեմ, որոնց պահպանում, պաշտպանում ու օժանդակում էր ցարական կառավարությունը։ Գյուղացիները չէին կարողանում միանալ, գյուղացիներն այն ժամանակ բոլորովին ճնշված էին խավարից, գյուղացիներն օգնականներ ու եղբայրներ չունեին քաղաքի բանվորների մեջ, բայց գյուղացիներն, այնուամենայնիվ, պայքարում էին ինչպես գիտեին և ինչպես կարողանում էին»[2]։

«Իսկ գյուղացիները,— ուսուցանում է Վ. Ի. Լենինը,— պայքարում են սարկությունից, աշխատավճարներից, ճորտատիրական շահագործումից ազատագրվելու համար։ Գյուղացիները նրա համար են պայքարում, որ հնարավորություն ունենան քիչ թե շատ մարդավայել ապրելու»[3]։ Վ. Ի. Լենինն իր «Ճառ կառափնարանից Ստեփան Ռազինի հուշարձանի բացման ժամանակ» ելույթում անդրադառնալով այդ նույն հարցին, ասել է. «Այս Կառափնարանը մեզ հիշեցնում է, թե քանի հարյուրամյակ աշխատավոր մասսաները տանջվել ու խիստ տառապել են հարստահարիչների լծի տակ...։ Այս հուշարձանը ներկայացնում է խռովարար գյուղացիության ներկայացուցիչներից մեկին»[4]։

---

1 К. Маркс и Ф. Энгельс, Немецкая идеология, 1935, стр. 42.

2 Ленин, Երկեր, հատ. 6, էջ 538 (ընդգծումը Լենինինն է)։

3 Նույն տեղում, հատ. 12, էջ 329։

4 Նույն տեղում, հատ. 29, էջ 400։

Մարքսիզմ-լենինիզմի կլասիկները նշելով գյուղացիական ապստամբությունների և պայքարի պատմական մեծ նշանակությունը միշտ էլ ուսուցանել են, որ գյուղացիների պայքարը ունեցել է տեղական, մեկուսացած, սահմանափակ բնույթ։

«...Քանի որ մանր գյուղացիների մեջ գոյություն ունի միայն տեղական կապ,— գրել է Կ. Մարքսը,— քանի որ նրանց շահերի նույնությունը չի ստեղծում նրանց մեջ ընդհանուր ազգային կապ, ընդհանուր քաղաքական կազմակերպություն — նրանք դասակարգ չեն կազմում»[1]։

Ֆ. Էնգելսը ցույց է տվել, որ «գյուղացիների միմյանցից անջատված վիճակը ծայր աստիճան դժվարացնում էր նրանց ընդհանուր միաբանությունը», կամ «գյուղացիները ի վիճակի չէին մենամենակ հեղափոխություն կատարել, քանի դեռ նրանց դեմ ծառացած էր իշխանների, ազնվականության և քաղաքների կազմակերպված և սերտորեն միախմբված ուժը»[2]։

Ֆ. Էնգելսը ուսուցանում է, որ գյուղացիությունը միայն դաշնակցած այս կամ այն դասակարգի հետ, կարող էր հաղթանակի շանսեր ունենալ, սակայն «...ի՞նչպես կարող էր գյուղացիությունը դաշնակցել մյուս դասերի հետ, երբ սրանք բոլորն էլ այս կամ այն չափով շահագործում էին նրան»[3]։

Այսպիսով, գյուղացիական ամեն մի ապստամբության հատուկ է ներքին խորը հակասություն։ Մի կողմից նա իր բնույթով մասսայական շարժում է, դասակարգային պայքար, մյուս կողմից գյուղացին պայքարում է իր տնտեսությունը պահպանելու համար, պայքարում է արգելելու ֆեոդալի մուտքը անմիջական կենսամիջոցների արտադրության բնագավառը։ Այս ներքին հակասություններն էլ հանդիսանում են գյուղացիական շարժումների և ապստամբությունների պարտության պատճառները։ Այդ է պատճառը, որ տեղայնությունը, տնտեսությունը պաշտպանելու ձգտումը, բաժանվածությունը, տրոհվածությունը գյուղացիական ապստամբությունների բնորոշ գծերն են։

Ֆեոդալական հասարակարգում շահագործվող մասսաների մղած դասակարգային պայքարը անցել է երեք՝ մեկը մյուսին հաջորդող էտապներ.

---

1 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. VIII, стр. 406.

2 Ֆ. Էնգելս, Գյուղացիական պատերազմը Գերմանիայում, Երևան, 1940, էջ 42—43։

3 Նույն տեղում, էջ 43։

1. Պայքարի առաջին էտապում գյուղացիները կամ անձամբ, կամ կոլեկտիվի հետ միասին հակադրվել են ֆեոդալական շահագործմանը, անհատորեն կամ կոլեկտիվի հետ միասին հրաժարվել են կատարելու ֆեոդալական դասակարգի, նրա պետության այս կամ այն պահանջը, թերացել կամ հրաժարվել են հարկեր վճարել, ֆեոդալական պարտավորությունները կատարել, չեն ենթարկվել տիրող դասակարգի օրենքներին, պետական որոշումներին, պայքարել են անհատական իրավունքների սահմանափակման դեմ, ոչնչացրել, հրդեհել են ֆեոդալի ցանքերը, սպանել են անհատ ֆեոդալներին, բռնագրավել են նրանց գույքը, տունը, հրաժարվել են ներկայանալու ֆեոդալական դատարան, բողոքել են ֆեոդալների տպօրինի արարքների ու գործողությունների դեմ, սանձահարել են նրանց բոլոր և ամեն տեսակի ոտնձգությունները՝ իրենց անձի, տնտեսության, գույքի և հողակտորի նկատմամբ։

2. Մասսայական կերպով, հաճախակի ոչ միայն առանձին ընտանիքներով, այլև ամբողջ գյուղերով լքել են ֆեոդալին, փախել են նրա կալվածներից և ֆեոդալական դաժան շահագործումից, դեպի ապատ, անմարդաբնակ վայրերը, լեռները, այսպիսով ծանր ու անբուժելի հարված են հասցրել ֆեոդալական տնտեսությանը։ Ֆեոդալները այս պայմաններում զրկվել են բանվորական ձեռքերից, իսկ նրանց տնտեսությունը, որը հիմնված էր գյուղացիների և նրանց ընտանիքի անդամների շահագործման վրա, տարրալուծվել և քայքայվել է։

3. Պայքարի ամենաբարձր և կատարյալ ձևը հանդիսացել է բացահայտ, զինված ապստամբությունը։ Այս դեպքում գյուղացիությունը պայքարել է ոչ թե անհատ ֆեոդալների կամ ֆեոդալական առանձին խմբերի, այլ ֆեոդալական հասարակարգի, ֆեոդալական պետության դեմ։ Զինված ապստամբության հիմնական նպատակն եղել է ոչնչացնել գոյություն ունեցող սոցիալական անարդարությունը, ֆեոդալական շահագործումը, բարելավել գյուղացիական դասակարգի գոյության պայմանները, սանձահարել ֆեոդալական շահագործման հարաճուն աճը։

Սակայն պայքարի այս երեք՝ հաջորդաբար զարգացող ձևերն ու մեթոդները մեկը մյուսին չեն բացասել, չեն ժխտել։ Ընդհակառակը, նրանք հաճախակի հանդես են եկել միաժամանակ, միասնաբար, մեկը մյուսի կողքին։ Ֆեոդալական շահագործման դեմ գյուղացիության մղած պայքարի այս երեք հիմնական ձևերից բացի, գյուղացիները ֆեոդալական հասարակարգի ողջ պատմության ընթացքում մղել են նաև պասիվ տնտեսական պայքար։ Պայքարի

այս ձևն արտահայտվել է նրանով, որ արտադրության սեփական միջոցների վրա հիմնված գյուղացու անհատական տնտեսությունը դիմադրողական մեծ ուժ է ներկայացրել՝ ֆեոդալ հողատերերի բոլոր հնարավոր ոտնձգություններից գյուղացիների անձը և տնտեսությունը պաշտպանելու համար։ Գյուղացիները ամեն կերպ ձգտել են լայնացնել իրենց տնտեսությունը, ավելի շատ արդյունքներ արտադրելու և այս ճանապարհով իջեցնելու ֆեոդալ-հողատիրոջը վճարվելիք հավելյալ արդյունքների և հետևաբար շահագործման չափը։

Մարքսիզմ-լենինիզմի կլասիկների գրությունները մեզ հնարավորություն են տալիս այդ դիրքերից գնահատելու Հայաստանում բռնկված սոցիալական շարժումները և գյուղացիական ապստամբությունները։

Հայաստանում սոցիալական շարժումները և գյուղացիական ապստամբությունները դարավոր պատմություն ունեն։

Սոցիալական շարժումների և ժողովրդական ապստամբության մասին առաջին տեղեկությունները հաղորդում է Մ. Խորենացին։

Հայաստանի լեռնաբնակ «ավաղակներն», ասում է Խորենացին, օգտագործելով երկրի համար արտաքին քաղաքական անբարենպաստ պայմանները, ապստամբել էին Տիգրան երկրորդի դեմ։ Այս շարժումն այնքան մեծ ծավալ էր ստացել, որ Տիգրան 2-րդը ստիպված Ասորիքից ռազմական ուժով մեկնում է Հայաստան «ավաղակների» մեծ վտանգ ներկայացնող ապստամբությունը ռազմական ուժով ճնշելու համար։ Մ. Խորենացին նկարագրելով հայ-հռոմեական ռազմական գործողությունները, պատմում է, որ երբ Պոմպեոսը «զօրօք բազմօք» մտնում է Միջագետք, հանձնարարում է իր Սկավրոս զորավարին շտապ մեկնել Ասորիք և «տալ պատերազմ ընդ Տիգրանայ»։ Սկավրոսը Տիգրանին Ասորիքում չի գտնում, որովհետև նա մեկնել էր «յուր աշխարհն վասն խուճապանաց յելուզակին»։ Տիգրան 2-րդը հսկայական ավարով և ռազմագերիներով վերադառնում է Հայաստան, ռազմագերիների մի մասին բնակեցնում է «Յարմաւիր և յաւանին Վարդգէսի՝ որ ի վերայ Քասաղ գետոյ», որից հետո դիմում է կտրուկ միջոցների և «զյեղուզակսն բնաջինջ արարեալ ի լեռնէն»[1]։

Մ. Խորենացու այս առաջին, խիստ մշուշապատ վկայությունից հետո, Հայաստանում ծայր առած սոցիալական շարժումների և դասակարգային պայքարի մասին, տեղեկությունները ընդհատվում են

[1] Մ. Խորենացի, էջ 129—130։

առնվազն մինչև 4-րդ դարը։ Պատմական այս ընթացաշրջանում է, որ Հայաստանում վերջնականապես հաղթանակում են արտադրության ֆեոդալական եղանակը և ֆեոդալական հարաբերությունները։ Աշխարհիկ և հոգևոր ֆեոդալները, ֆեոդալական եկեղեցին հիմնված Արշակունիների կենտրոնացած պետականության ակտիվ օգնության և օժանդակության վրա սիստեմատիկաբար ընդարձակում են իրենց տիրույթները։ Բնական է և միանգամայն հասկանալի, որ այս պայմաններում ավելի են սրվում և խորանում սոցիալական հակամարտություններն ու դասակարգային պայքարը։

1. ԱՆՀԱՏԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՍՍԻՎ ՁԵՎ

Դասակարգային պայքարի համեմատաբար պասսիվ ձևը անհատական ընդդիմություններն էին։ Պայքարի այս եղանակի մասին մի շարք վկայություններ են պահպանվել պատմական սկզբնաղբյուրներում։

Ագաթանգեղոսը խորը զայրույթով է խոսում «անհնազանդ», «ապստամբ» ծառաների «չարագործությունների» մասին։ Պատմիչը կրոնա-բարոյական քարոզներով, ավետարանից, առաքյալներից և հատկապես Գր. Լուսավորչի պատվիրաններից բերած օրինակներով աշխատում է համոզել «ծառաներին», որ նրանք պետք է հնազանդ լինեն իրենց «մարմնաւոր տերանց»[1]։

«Ծառաները», ասում է պատմիչը, երբեք ապերախտ չպետք է լինեն իրենց կերակրող տերերի հանդեպ, նրանց հիմնական պարտականությունն է անթերի և անտրտունջ ծառայել տերերին, որպեսզի աշխարհի կարգը չխախտվի։

Այս նույն քաղաքական գիծն են անցկացնում Փ. Բուզանդը, Եղիշեն, Ղ. Փարպեցին։ Պատմիչները պատվիրում են ծառաներին «հնազանդ կալ տերանց իւրեանց»[2]։

Եկեղեցական ժողովները, առաքելական կանոնները նույնպես պատվիրում են խիստ պատժել անհնազանդ հպատակներին, տերերին լքող ծառաներին։

Եկեղեցական «աշխարհաժողովներում» մշակված և առանձին առաքելական կանոնները անպարտ են համարում այն բոլոր տերե-

---

[1] Ագաթանգեղոս, էջ 35։

[2] Փ. Բուզանդ, էջ 137, հմմտ. Եղիշե, էջ 17, Ղ. Փարպեցի, էջ 45, 174 և ուր.։

բին, որոնք սպանում կամ մարմնական խոշտանգումների են ենթարկում «հանցապարտ», անհնազանդ և հատկապես տերերին լքող ապստամբ ծառաներին։ Այս իմաստով խիստ ուշադրավ են Աթանասի, Բասեղ Կեսարացու և Փոքր Հայքի Հարևան Պափլագոնիայի Մայրաքաղաք՝ Գանդրայի եկեղեցական ժողովում մշակված կանոնները։

Աթանասի կանոնշարքի ՀԱ կանոնը իր սուր ծայրով ուղղված է սոցիալական շարժումների, «հանցապարտ», անհնազանդ և ապըստամբ ծառաների ու հասարակական ցածր աստիճանում գտնված խավերի դեմ։ Եթե անհնազանդ և ապստամբ ծառաները լքում են իրենց տերերին, տերերը ոչ միայն իրավունք ունեն որոնել և հետ բերել փախած ծառաներին, այլև սպանել նրանց։

Աթանաս Աղեքսանդրացուն վերագրված կանոնամարերից մեկում գրված է հետևյալ հարցը. ինչպե՞ս վերաբերվել, եթե «... ծառայք ապստամբին և դնան ի տէրէ իւրեանց»։ Աթանասը սահմանել է հետևյալ օրենքը. «զի կալցին զընացեալ ծառայսն և դարձուցեն անդրեն առ տէրն իւրեանց...»[1]։

«Եթէ ուրուք ծառայ յանհնազանդութեան դտցի,— կարդում ենք այդ կանոնում,— և տէրն նորա առ բազում անդամ զայրանալոյն հարցէ և սպանցէ զծառայն՝ որպէս հրաման տացուք...»։ Այն դեպքում ծառաներին սպանողները, ասում է Աթանասը, «անպարտ» են և պետք է միայն «ապաշխարէսցեն»[2]։

4-րդ դարի քաղաքական գործիչ և Կապադովկիայի եպիսկոպոս Բասեղ Կեսարացին իր բազմաթիվ աշխատություններում և առանձնապես նամակներում կարևոր և վստահելի տվյալներ է պահպանել Փոքր Հայքի սոցիալական շարժումների և անհնազանդ, «հանցապարտ» ծառաների ելույթների մասին։ Բասեղ Կեսարացին նույնպես «անպարտ» է հայտարարում այն տերերին, որոնք սպանում կամ խեղանդամ են դարձնում անհնազանդ ծառաներին[3]։

4-րդ դարի վերջերին սոցիալական շարժումները այնպիսի չափերի են հասնում, որ աշխարհիկ ու հոգևոր հայրերը հրավիրում են Գանդրայի եկեղեցական ժողովը, որտեղ մշակում են մի շարք խիստ ու դաժան կանոններ և հատուկ համախոսական թղթով դիմում են հայկական եկեղեցու հայրերին անհաշտ պայքար ծավալել սոցիա-

---

[1] Մատենադարան, ձեռագիր № 6409, կանոն ՀԱ, էջ 60ա, հմմտ. ձեռագիր № 3706, կան. Լ, էջ 172ա, ձեռագիր № 1054, էջ 71բ։

[2] Ձեռագիր № 6409, կանոն Լ, էջ 57, հմմտ. նաև ձեռագիր № 2677, կան. Լ, էջ 72բ։

[3] Ձեռագիր № 2677, էջ 102բ, հմմտ. ձեռագիր № 1779, էջ 108ա, 108բ։

լական շարժումների և Փոքր Հայքի «հերետիկոսների» դեմ։ Մենք այստեղ հնարավորություն չունենք վկայակոչելու Գանդրայի ժողովի այն բոլոր կանոնները, որոնք շոշափում են էպոխայի սոցիալական և քաղաքական հարցերը, սակայն մեր առաջադրված հարցի կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում վկայակոչել մի շարք հատվածներ։ Գանդրայի ժողովի Գ կանոնը դատապարտում է այն ծառաներին, որոնք «արհամարհել ղտեարս իւրեանց» փախչում են ի «ծառայութենէ նոցա»։ Գանդրայի ժողովը պահանջում է խիստ կերպով պատժել նրանց, որոնք արհամարհում են «զտուն աստուծոյ», կամ հրաժարվում են «զպտուղ եկեղեցւոյն վճարելուց»[1]։

Գանդրայի ժողովում մշակած կանոնները իրենց մեջ պահպանել են մի շարք տեղեկություններ «հերետիկոսների» քարոզած սոցիալական գաղափարախոսության մասին։ Նրանք, ասված է այդ ժողովի կանոններում, ժխտում և բացասում են պաշտոնական եկեղեցու անհրաժեշտությունը։ «Հերետիկոսներն» ուսուցանում են իրենց կողմնակիցներին և հետևողներին, որ մարդը, հավատացյալը առանց եկեղեցու միջնորդության ի վիճակի է իր աղոթքը լսելի դարձնել աստծուն։ «Ոչ արտաքս քան զեկեղեցին ժողովս ժողովիցին և արհամարհիցեն զեկեղեցին և կամիցին զեկեղեցւոյ պէտս գործել... նզովյալ լիցին»[2]։ Նրանք ոչ միայն ժխտում և արհամարհում են պաշտոնական եկեղեցու անհրաժեշտությունը, այլև հրաժարվում են եկեղեցիներին և հոգևոր դասերին հարկեր վճարելուց։ Ժողովի է կանոնը նզովում է այն բոլոր հարկատուներին «ոչք զպտուղ եկեղեցւոյն կամին արտաքս... առնուլ»[3]։

«Հերետիկոսները» ոչ միայն ժխտում էին նյութական անհավասարության վրա հիմնված ֆեոդալական եկեղեցու հիերարխիան, այլև ձգտում էին ստեղծել նյութական հավասարության վրա հիմնված համայնքներ, քարոզում էին ծառաներին, ստրուկներին, գյուղացիներին թողնել իրենց տերերին և մտնել այդ համայնքները։

Ասված, քարոզում են նրանք, բոլորին ստեղծել է աղատ և հավասար, հետևաբար չպետք է լինեն ոչ տերեր և ոչ էլ ծառաներ։ Այս սոցիալական տրդարացի պահանջը խստագույն կերպով դատապարտվում է Գանդրայի ժողովի կողմից։

---

[1] Ձեռագիր № 2677, կանոն Գ, Ն, Է, Ը, էջ 137ա., հմմտ. նաև ձեռագիր № 2964, էջ 40ա, բ, ձեռագիր № 6409, էջ 54բ, 61բ և ուր.։

[2] Ձեռագիր № 2677, կանոն Ն և Զ, էջ 137ա, հմմտ. նաև ձեռագիր № 2964, էջ 40ա։

[3] Նույն տեղում, կանոն Է, էջ 137ա։

Ժողովի Գ կանոնը հայտարարում է «Այք ղծառայ... արհամարհել զտեարս իւրեանց, և հեռանալ ի ծառայութենէ նոցա, և ոչ ամենայն փութութեամբ պատուել և պաշտել զնոսա... նզովեալ լիցին»[1]։ Ամենայն հավանականությամբ «հերետիկոսների» այս սկզբունքը լայն արձագանք էր գտել ծառաների, աղախինների, ստրուկների և գյուղացիների շրջանում, որովհետև Ժողովը արձանագրել է, որ «ծառայք ի տերեանց հեռացան և անարգեցին զտեարս իւրեանց»։ Բացի Գանգրայի Ժողովի կանոններից, Բարսեղ Կեսարացին նույնպես պահպանել է խիստ ուշագրավ վկայություն այն մասին, որ շահագործվող դասերի մարդիկ արհամարհելով իրենց տերերին, մասսայաբար փախչում և մտնում էին հերետիկոսների շարքերը։ Պաշտոնական եկեղեցու հայրերը առանձնապես խիստ գայրույթ են հայտնում այն մասին, որ հերետիկոսները քարոզում էին սեռերի իրավահավասարություն, այս երևույթը նրանք համարում են «սատանայի գործ», «պոռնիկություն»։

Գանգրայի ժողովը ոչ միայն խիստ ու դաժան կանոններ է մշակում ծառա-ստրուկների դեմ, այլև կոչ է անում աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալներին միացյալ ճակատ կազմել և արմատախիլ անել սոցիալական այդ «չարիքը»։

Ամենայն հավանականությամբ Սեբաստիայում և սրա շրջաններում սկսված «հերետիկոսների» այս շարժումները դուրս էին եկել իրենց շրջանների սահմաններից և իրենց ազդեցության գոտին տարածել էին նաև Արշակունյաց Հայաստանում[2]։

4—5-րդ դարերում Արշակունյաց Հայաստանի տերիտորիան նույնպես դառնում է սոցիալական շարժումների և դասակարգային դաժան պայքարի թատերաբեմ։ Հայտնի է, որ 4-րդ դարի վերջերին պատմական Հայաստանը բաժանված էր բյուզանդական կայսրության և Պարսկաստանի միջև։ Հայ աշխատավոր բնակչությունը, Հայաստանը երկու մասի բաժանվելուց հետո, շահագործվում էր կրկնակի կերպով և ինչպես պատկերավոր կերպով արտահայտել է Ղ. Փարպեցին հեծում էր «դառն ու ստրկական լծի տակ»։ Հայ գյուղացին հիմա պարտավոր էր հարկեր և տուրքեր վճարել ոչ միայն սեփական շահագործող դասերին, այլև Պարսկաստանին և Բյուզանդիային։ Մի կողմից օտար բռնակալական լուծը, մյուս կողմից ֆեոդալական երկպառակությունները, հաճախակի կրկնվող

---

[1] Ձեռագիր, № 2677, կանոն Գ։

[2] Այս հարցերի մասին հանգամանորեն տե՛ս Լ. Խաչիկյան, Փոքր Հայքի սոցիալական շարժումների պատմությունից, Երևան, 1951։

պատերազմներն ու ռազմական արշավանքները քայքայում էին ժողովրդական տնտեսությունը։ Կրկնակի լծի տակ շահագործվող մասսաները կամ լքում էին տերերին, կամ մասսայաբար փախչում նրանցից։

Դասակարգային դաժան պայքարը և սոցիալական շարժումները 4-րդ դարում այնքան լայն ծավալ էին ստացել, որ աշխարհիկ և հոգևոր ֆեոդալները, նրանց դեմ կազմակերպված պայքար ծավալելու համար հրավիրում են Աշտիշատի հայտնի ժողովը։

Այս ժողովին մասնակցում են և աշխարհիկ և հոգևոր ֆեոդալները՝ Ներսես կաթողիկոսի ղեկավարությամբ։ Մ. Խորենացին վկայում է, թե Ներսես կաթողիկոսը «ժողով արարեալ եպիսկոպոսաց և համօրէն աշխարհականաց, կանոնական սահմանադրութեամբ հաստատեաց»։

Աշտիշատի ժողովը հայ պատմական իրականության մեջ պաշտոնական կանոնների մշակման և հաստատման հիմքը դրեց։ Ժողովի հիմնական նպատակն էր մեղմել դասակարգային սուր բախումները և հակամարտությունները, ապահովել իշխող դասերի քաղաքական իշխանությունն ու տնտեսական արտոնությունները, ծանր հարկերի և ֆեոդալական դաժան պարտավորությունների տակ թշվառ գոյավիճակի մեջ դրված հասարակության ստորին խավերի բոլոր ոտնձգություններից։ Ժողովի 2 կանոնը պահանջում է իշխող դասերի այն ներկայացուցիչներից, որոնք «ի վերայ ընկերին ունիցին իշխանութիւն» գութ ունենալ նրանց նկատմամբ, ծանր հարկերով չնեղել իրենց ծառաներին և կրտսեր եղբայրներին։

Աշտիշատի ժողովը քարոզում է անհնազանդ, ըմբոստ և խռովահույզ ծառաներին, հնազանդ լինել իրենց տերերին։ «...Սոյնպէս և ծառայից պատուիրէր կալ յարդարն հնազանդութեան իւրեանց տէրացն»[1]։

Ամենայն հավանականությամբ Աշտիշատի ժողովի նախօրեին խախտվել էր այդ «արդար» հնազանդությունը և ժողովը դեղատոմսեր է առաջարկում ծառաներին հնազանդության մեջ պահելու համար։ Ժողովն իրավունք է տալիս «անհնազանդ» ծառաներին պատժել, աքսորել և այդ եղանակով ստիպել մյուսներին «կալ հնազանդութեան իւրեանց տէրանց»[2]։

---

[1] Կանոնգիրք հայոց, էջ 15։
[2] Նույն տեղում։

2. ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՓԱԽՈՒՍՏԸ ՈՐՊԵՍ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ՁԵՎ

Հին և միջնադարյան Հայաստանում շահագործվող դասերի մասսայական փախուստը հանդես է գալիս երկու հիմնական ձևով։

Չորրորդ և հինգերորդ դարերում, ֆեոդալական Հայաստանում մեծ ծավալ էր ստացել այսպես կոչված «անապատականների» շարժումը։ Ֆեոդալական կարգերի ծանրության տակ հյուծված, հարստահարված ու հուսախաբված մարդիկ մասսայաբար փախչում էին դեպի Միջագետքի, Ասորիքի անմարդաբնակ անապատները, գրկանքներով լի, սակայն սոցիալական անարդարությունից և ճնշումից ազատ անապատական կյանք վարելու հույսով։

«Անապատականների» շարժումը դասակարգային պայքարի ձևերից մեկն էր։ Նրանք չէին ճանաչում աշխարհիկ և հոգևոր իշխանությունը, չէին ենթարկվում պետությանը, պաշտոնական եկեղեցուն, փախչում էին դեպի լեռները, անմարդաբնակ վայրերը և ստեղծում էին «անապատականների» համայնքներ, որտեղ տոկա էին նյութական և սոցիալական արդարություն ու հավասարություն։ Հայտնի է, որ այդպիսի համայնքներ են ստեղծվում Ծաղկոտն գավառի Ոսկիք կոչվող վայրում և Հայաստանի այլ մասերում։

Գյուղացիների, ծառաների, աղախինների և հասարակական ստորին աստիճանի վրա կանգնած այլ խավերի մասսայական փախուստի մասին մեզ ուշագրավ վկայություններ են թողել Փ. Բուզանդը և Մ. Խորենացին։

Փավստոս Բուզանդը, որն այնքան պերճախոս ու առատաձեռն է թագավորներին, մեծամեծ ու պայծառափայլ իշխաններին, տերերին, նախարարներին գովերգելու մեջ, փոխում է և լեզուն, և ոճը, երբ խոսում է Տիրանի «անմիտ», «անպիտան» թագավորության ժամանակի մասին։

Փ. Բուզանդը հաղորդում է, որ այս «յանպիտան և յանմիտ» թագավորության կարճ ժամանակաշրջանում, ավելի շատ չարիքներ տեղի ունեցան, քան «յամենայն դարս»։ Ոչ միայն «...թշնամիք թշնամեաց և բարեկամք բարեկամաց և ընկերք ընկերաց դաւաճանութիւնս մատնութիւնս սկսան յարուցանել ի մէջ Հայաստան երկրին», այլև «բիւր ազգի ազգի թշնամութիւնս գործէին»[1]։

Հայ եկեղեցու դեմ կռվի ելած մարդիկ ոչ միայն ասպատակում էին իրենց շահագործողների կալվածները, սպանում նրանց,

---

[1] Փ. Բուզանդ, էջ 40։

այլև «զրանս սուրբս արհամարհէին»։ Նրանք եկեղեցիներին, աշխարհիկ և հոգևոր ֆեոդալներին հասցնում էին մեծամեծ չարիքներ, իսկ «զբարի գործել նոքա երբէք ինչ ոչ գիտացին»։ Ապատամբներին պատմիչը կոչում է «որդիք... խստասիրտք, խստաշունչք... զրպարտիչք...»[1]։

Դասակարգային այս դաժան կռվի ժամանակ, «խռովարարները» շարունակում է Բուզանդը, «միմեանցք քանդեալք աւերեցան վասն անօրէնութեան իւրեանց»։ Այս անողոք պայքարը իր ոլորտում էր առել հայ հասարակության բոլոր խավերին, բոլոր դասերին։ Խոսք տանք Բուզանդին՝

«Անդ էր տեսանել այր ընկերի արեամբք ծարաւեալք ըմպելով, ոգոյր չափ դային վնասուցն՝ անխրատ վարս և անհանճար միտս ունելով... Վասն այսորիկ ոչ զիսրատ իմաստութեան լսէին, և ոչ առաջնորդացն ասելոյ, զասաւածոյ պատգամսն անտացեալք հնազանդէին, այլ վասն ի նոցանէն յանդիմանութեանն, ատէին և հալածէին զնոսա և սպանանէին»։

Սակայն այդ բոլորը չէր, ընկերը դուրս էր եկել ընկերոջ, եղբայրը՝ եղբոր, ընտանիքը՝ ընտանիքի, ազգականը՝ ազգականի, խնամիները՝ խնամիների դեմ, և այդ բոլորը ձգտում էին «զմիմեանս խոցատել, և նենգել՝... ամենայն չարութեամբ և ոխակալութեամբ»[2]։

Մ. Խորենացին իր «Ողբի» մեջ տալով հայ հասարակության տարբեր դասերի նկարագիրը, անարգանքի սյունին գամելով արծաթասեր, քան ատովածասեր, կեղծավոր, վաճառաշահ կբենավորներին, «արծաթով ընտրեալը» վարդապետներին, կողոպտիչ, անհարիր, անապարծ, հեշտասեր զորականներին, դողակից, ժլատ, ագահ, հափշտակող, աշխարհավերը իշխաններին, ամարդի, խաբող, ստախոս, կաշառակեր դատավորներին, խիստ ու դաժան թագավորներին, ասում է, որ սրանք ողբերգական այնպիսի գոյավիճակում են դրել նյութական բարիքներ արտադրողներին, որ վերջիններս ոչ միայն մասսայական կերպով փախչում են ծանր հարկերից և իշխանների կամայականություններից, այլև «ի ժառանգութենէ»[3]։

Այս մասսայական աղետի սոցիալական դրդապատճառները մեծ վարպետությամբ բացահայտել է Խորենացին։

---

[1] Փ. Բուզանդ, էջ 29—30։

[2] Նույն տեղում, էջ 29—30։

[3] Մ. Խորենացի, էջ 364։

Իշխող դասերի կամայականությունների հետևանքով Հայոց մեծ և փարթամ աշխարհը դադարել է բերք տալուց, խիստ կերպով նվազել է ընտանի կենդանիների թիվը։ Իշխող դասերը հաշվի չառնելով ժողովրդի թշվառ կացությունը, նրա վզին դրել են «բեռինս... անհունս և դժուարակիրս»։ Խիստ և չար թագավորները հրապարակում են անտանելի «անհարթարարք, անողորմք» հրամաններ և վերակացուների միջոցով կյանքում իրականացնում են «հրամանս... անտանելիս...»։ Սրանք, որպես անհագուրդ ագռուկներ քամում են աշխատավոր բնակչության դառը քրտինքով ստեղծած վաստակը, հափշտակում են նրա ստացվածքը և անթիվ ու անտանելի նեղություններ պատճառում «ռամկաց»։ Գրավում են քաղաքները, ավերում են բնակավայրերը։ Սոցիալական այս հիմքի վրա սրվում է դասակարգային հակամարտությունը։

«Եւ ի վերայ այսր ամենայնի,— եզրափակում է պատմիչը,— խռովութիւնք յամենայն կողմանց»[1], «...մարտք ի ներքուստ... արհաւիրք ի հեթանոսաց և մարտք ի հերձուածողաց»[2]։

Թվում է, որ Խորենացու «Ողբի» սոցիալական մոտիվը հենց այս սուր հակամարտություններն էին, որոնք իրապես ցնցել էին Հայոց «մեծ և փարթամ» աշխարհը։ Ուշագրավ է պատմիչի այն դիտողությունը, որ այդ պայքարին ակտիվորեն մասնակցում էին ռամիկները։ Պատմիչները վկայում են, որ աշխարհիկ մեծամեծ նախարարների և ֆեոդալականացված եկեղեցու դեմ մարտի են ելնում հայ հասարակության տարբեր դասերն ու խավերը։ Կռվի ելնելով Արշակունիների կենտրոնացած պետության և հատկապես ֆեոդալական եկեղեցու դեմ, հասարակական յուրաքանչյուր խավ և դաս ղեկավարվում էր, իհարկե, սեփական շահերով և ձգտումներով։ Հաճախակի են դեպքերը, որ դաժան պայքար են սկսում եկեղեցու դեմ նույնիսկ Արշակունի թագավորները։ Արշակունի թագավորները ձգտելով ստեղծել կենտրոնացած պետականություն, ամեն քայլափոխում ընդհարվում էին մեծամեծ նախարար-ֆեոդալների և հատկապես հոգևոր տերերի հետ։ Փավստոս Բուզանդը և Մ. Խորենացին թողել են արժանահավատ վկայություններ այն մասին, որ Արշակ թագավորը փորձեր է կատարում կենտրոնախույս տարրերի դեմ պայքարելու համար հիմնվել ոչ միայն նոր բարձրացող ազատների, այլև քաղաքային բնակչության վրա։ Նրա ձեռնարկությամբ կառուցված Արշակավան քաղաքը դառնում է այն կարևոր կայանը, որտեղ ապաստան են գտնում ֆեոդալական ծանր հար-

[1] Մ. Խորենացի, էջ 365։

[2] Նույն տեղում, էջ 360։

կերից և պարհակներից փախչող՝ անբավական տարրերը։ Ֆեոդալական Հայաստանում աշխատավոր զանգվածների սոցիալ-տնտեսական գոյավիճակը խիստ անմխիթար էր։ Այս հիմքի վրա սոցիալական շարժումները լայն ծավալ են ստանում քաղաքներում, որտեղ կուտակված էին ոչ միայն իշխող դասերի ներկայացուցիչները, առևտրականները, այլև արհեստավորներն ու երկրագործ աշխատավոր բնակչությունը։

Փ. Բուզանդը և Մ. Խորենացին զայրույթով են խոսում Արշակավան քաղաքի կառուցման մասին, որովհետև նրանց կարծիքով Արշակավանում բնակություն են հաստատում ոչ միայն «գողք և աւազակք, արիւնահանք, սպանողք... և մարդելոյզք, վնասակարք, զանձահատք, զրկողք, ստապատք, զրախօսք, դերփողք, յափշտակողք, ժլատք...» այլև «բազում ծառայք զիւրեանց տերանց զզանձս ըմբռնեալ, փախուցեալք անդր անկանէին...»[1]։

Մ. Խորենացին վկայում է, որ հայ աշխարհիկ և հոգևոր ֆեոդալները մի շարք անգամ բողոքում են Արշակ 2-րդ և պարսկական Շապուհ թագավորներին, փախած ծառաներին հետ վերադարձնելու համար։ Սակայն երբ նրանց այդ բողոքները շոշափելի արդյունք չեն տալիս, երբ «պարտականօք», հանցավորները չեն ցանկանում վերադառնալ իրենց նախկին տերերի մոտ, այն ժամանակ Հայոց նախարարները «...ժողովեալ՝ դիմեցին ի վերայ արքունական ձեռնակերտին Արշակաւանի, և հարին զնա սրով սուսերի յառնէ մինչև ցկին... հանգի դառնացեալք էին իւրամանչիւր ի վերայ ծառայից իւրեանց և յանցաւորաց»[2]։

Հայ նախարարները ոչ միայն ֆիզիկապես ոչնչացնում են ծառա-ազատարդկանց և կանանց, այլև նրանց անչափահաս երեխաներին բաժանում են իրար մեջ և դերում են «որպէս զհեաւոր թշնամեաց»[3]։

Եղիշեն ամենից լավ է հասկացել և փորձեր է կատարել բացահայտել սոցիալական շարժումների և դասակարգային պայքարի տնտեսական դրդապատճառները։

Պատմիչն անարգանքի սյունին է գամում հայ և օտար ֆեոդալական իշխող դասերի այն ներկայացուցիչներին, որոնք քամում են աշխատավոր բնակչության դառը քրտինքով ձեռք բերված վաստակը։ Սրանք, ասում է պատմիչը, գործում են ամեն տեսակի չարիք-

---

[1] Փ. Բուզանդ, էջ 91, Մ. Խորենացի, էջ 288—289։

[2] Մ. Խորենացի, էջ 288—289։

[3] Նույն տեղում (բոլոր ընդգծումները մերն են—Ս. Հ.)։

ներ, թշվառության և հետին տնանկության են հասցրել աղքատներին, անլուր կերպով կեղեքում են նրանց։ «Քանզի,—բացականչում է Եղիշեն,— զի՞նչ աղէտք տարակուսի են որ ոչ գործին յերկրային ախտաբերս. թշուառութիւնք աղքատաց և անթիւ չարչարանք նոցուն, աղցաւոր ծանրութիւնք հարկահանաց, ղղուանք և կոփանք ի բռնաւոր ընկերակցաց, քաղց և ծարաւ ըստ կարօտութեան բնութեանս»։ Բայց այս բոլորը չէ։ Զմեռային սառնամանիքներն ու ամառային տոթը, տարաժամ հիվանդություններն ու «աղտոտ մահարերք հանապազ տանջեն զմարդիկ»։

«Իսկ արդ զի՞նչ... չարիք իցեն որ ի նոսա ոչ գործիցին. ընդ մեծութիւն խառնեալ է յափշտակութիւն ընչից աղքատաց...»[1]։

Արտաքին արշավանքներն ու ասպատակությունները մի կողմից և «արհաւիրք ի ներքնոց» մյուս կողմից ավելի դժնդակ են դարձնում աշխատավոր բնակչության առանց այդ էլ ողբերգական գոյավիճակը։

Արդյոք կա որևէ մեկը, ամփոփում է Եղիշեն, որ մտածէ աղքատ և անանկ մարդու մասին, այն մարդու, որ տոչորվում է տոթից, դողում ցրտից, քաղցած է և ծարավ և «ամենայն աղքատութեան» դատապարտված։ Այս թշվառության հիմնական պատճառն է՝ «Արտաքոյ՝ անիրաւութիւն, յափշտակութիւն, դէճ պղծութիւն անառակ յարձակմամբ. ի ներքոյ ամբարշտութիւն, ուրացութիւն, տգիտութիւն, անդարձ մոլորութիւն ի կամաւոր աղատութենէն»[2]։ Այս ներքին երկպառակություններն ու պայքարը արտահայտվել են մի քանի ձևերով. նույն պատմիչի վկայությամբ ծառաները այլևս չէին ցանկանում ենթարկվել և դուրս էին եկել տերերի դեմ։ Վարդան Մամիկոնյանը բողոքում է, ասելով, որ մեր դեմ ոչ միայն դուրս են եկել մեր ընկերները, որոնք ցանկանում են ոչնչացնել մեզ, այլև «ծառայքն մեր սարտուցեալ փախչէին ի մէնջ»[3]։

Սոցիալական այս «չարիքն» արմատախիլ անելու համար ֆեոդալական եկեղեցին և իշխող դասերը դիմում են պայքարի դաժան միջոցների։

Հայտնի է, որ քրիստոնեության մուտքից և հատկապես Արշակունիների դինաստիայի անկումից հետո հայ ֆեոդալական եկեղեցու և նրա ավագանու ձեռքում է կենտրոնանում և օրենսդրական և դատական իշխանությունը։

---

[1] Եղիշե, էջ 144, 221—222։

[2] Նույն տեղում, էջ 221—222։

[3] Նույն տեղում, էջ 134։

Եկեղեցին իրավունք է ստանում հարց հարուցել, կազմակերպել «հանցագործների» հետաքննման և քննարկման գործը, դատել և պատժել եկեղեցու և աշխարհիկ ֆեոդալների դեմ կատարած ամեն մի «հանցագործություն»։ Եկեղեցին թափանցում է աշխարհիկ կյանքի բոլոր բնագավառները. նա որոնում և հայտնաբերում է «հանցագործներին», որոշում նրանց հանցանքների և պատիժների չափը, նշանակում է խիստ պատժիչ միջոցներ՝ տուգանք, հարկադիր աշխատանք, աքսոր, ծեծ, մարմնական և ֆիզիկական խոշտանգումներ, ազվեստդրոշմ խարանելու իրավունք, ջրերի կտրել, քարկոծություն, լեզուն արմատախիլ անել և այլն։ Առաքելական կանոնների և եկեղեցական ժողովների որոշումների հետազոտությունը ցույց է տալիս, որ հանցանք էին համարվում՝ հավատուրացությունը, ազանդներին հարելը կամ համակրելը, եկեղեցու և աշխարհիկ ֆեոդալների սեփականության դեմ ոտնձգություններ կատարելը և այլն։ Եկեղեցին իրավասու էր կազմակերպել դատական պրոցես։ Մինչև դատական պրոցեսը հոգևոր քննիչները քննարկում էին բոլոր «հանցանքները», իսկ որոշումները կայացնելուց հետո այն իրականացնում էին գործադիր իշխանության ներկայացուցիչները։ Եկեղեցիներին կից կային բանտեր, տուգանքներ հավաքող հսկիչներ, քննիչներ և այլն։

Ֆեոդալական եկեղեցին իրավունք է ստանում և այդ իրավունքը օրինականացնում են աշխարհաժողովները՝ դատել և պատժի ու տուգանքի ենթարկել բոլոր «հանցագործներին»։ Առանձնապես դատվում և աքսորվում էին մծղնե և այլ ազանդներին հարող աշխարհականները, հոգևորականները, երեցները, սարկավագները և եկեղեցու այլ սպասավորները։

Աշխարհաժողովները պահանջում են եպիսկոպոսից և կաթողիկոսից լայն կերպով օգտագործել «մեծամեծ իշխաններին» և «ստոր դատաւորներին» հանցագործներին հայտնաբերելու և պատժելու համար[1]։

«Կանոնք սրբոյն Սահակայ Հայոց Հայրապետի» Դ կանոնը իրավունք է տալիս ծեծել և տուգանել որոնչացող հավատացյալներին։

---

1 Մ. Դոշ, Դատաստանագիրք, Առաջաբան, էջ 76—77, հմմտ. Ա. Գարագաշյան, Քննական պատմութիւն Հայոց, հ. 2, էջ 18, Մելիք-Թանգյան, Հայոց եկեղեցու իրավունքը, Շուշի, 1904, հ. 1, էջ 93, 315—321, Արել Մխիթարեանց, Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ, Վաղարշապատ, 1874, էջ 11, 40 ուր։

«Զնոյն և տեսուչք քորեպիսկոպոսք պարտին համառօտել զամենայն եկեղեցիս. և թէ որ հեղգասցի և կամ ստերիւրեալ գոցի, յանդիմանեսցեն և կշտամբեսցեն խրատու վարդապետութեան»։ Եթե այս խրատները անզոր են նրանց դարձի բերելու համար, այն դեպքում քորեպիսկոպոս—տեսուչները իրավունք ունեն «դանիւք և տուգանօք պատուհասեսցեն ստենական հրապարակաւ, զի այլք երկիցին»[1]։

Որ Սահակ կաթողիկոսի կողմից մշակված ու հաստատված կանոնների մեծ մասը ուղղված էր հերետիկոսների դեմ, այդ են ցույց տալիս Թ, Լն, ԼԶ և ԽԵ կանոնները։

Թ կանոնը պահանջում է հավատացյալներից «փախչել ի հերձուածողաց յաղծապիղծ գործոց»։ Այդ կանոնը իրավունք է տալիս եկեղեցու տեսուչ—քորեպիսկոպոսներին «քննել և դատավճիռ հատանել և զծանր» պատիժների ենթարկել նրանց, կանգ չառնելով նույնիսկ մահապատժի ենթարկելու ոչ մի միջոցի առաջ[2]։

Եկեղեցու հայրերը, ասված է ԼԵ կանոնում, չպետք է հանդուրժեն, որ հերետիկոսները իրենց «տխմար բանիւք» «կռիւս և հերձուածս մուծանել ի միաբանութիւն հաւատոյ...», նրանք պետք է համոզելու հետ միասին գործադրեն խոշտանգումների մեթոդները[3]։

ԽԵ կանոնը պահանջում է եպիսկոպոսներից նշանակել «տեսուչս ի առաջնորդս գաւառաց և գիւղից» և նրանց իրավունք վերապահել քննել ու պատժել «հանցագործներին»[4]։

Դասակարգային սուր և դաժան պայքարի վառ փաստեր կան նաև եկեղեցական ժողովներում մշակված ու հաստատված մյուս կանոններում։

«Սահմանադրութիւն կարգաց՝ ընկալեալ ի նահատակէն Տեառնէ Գրիգորէ՝ թարգմանեցաւ ընդ ձեռն Եղնակայ՝ հրամանաւ Երանելոյն Սահակայ եպիսկոպոսապետին Հայոց, և նորին Աթոռակցաց, թէ՞ որպես սահմանեցաւ կարգ ուխտի և որոշումն վանաց» նախաբանում ասված է, որ կան մարդիկ, որոնք քարոզում են, որ եկեղեցիները շինված են ոչ թե «զհաւատովն» այլ «քարանց և փայտից»։

Բայց այս բոլորը չէ։ Եկեղեցու թշնամիները, ասված է այնտեղ, «տխմար բանիւք իւրեանց կամեցան կռիւս, հերձուածս մու-

---

[1] Կանոնգիրք հայոց, էջ 16—17։
[2] Նույն տեղում, էջ 18—19։
[3] Նույն տեղում, էջ 29—32։
[4] Նույն տեղում, էջ 39—40։

ծանել ի միաբանութիւն հաւատոյ, և մոռացան զբանն պատուիրանին որ ասէ. Մի է տէր, մի հաւատ, մի մկրտութիւն»[1]։ Ուրեմն «սրբոտար» հերձվածողները ժխտում էին պաշտոնական եկեղեցին, նրա ծիսակատարությունները։

Դասակարգային հակամարտությունների մի շարք փաստեր արձանագրված են Շահապիվանի ժողովի կանոններում։ Սահակ կաթողիկոսի և Մեսրոպ Մաշտոցի մահից հետո, պայքարը եկեղեցու դեմ այնպիսի ծավալ է ստանում, որ «լինէր եղծումն և քայքայումն կարգաց և օրինաց եկեղեցւոյ...»[2]։

Բացի անհատական ընդդիմադրությունից, մասսայական փախուստից և զինված ապստամբություններից, 4—5-րդ դարերում և ավելի ուշ շրջանում՝ ինչպես Արևելյան երկրներում, այնպես էլ Հայաստանում դասակարգային պայքարը հանդես է եկել նաև որպես աղանդավորական-հերետիկոսական շարժում։ Ֆր. Էնգելսը ցույց է տվել, որ հերետիկոս-աղանդավորական շարժումները հասարակության պատմական զարգացման տարբեր էպոխաներում տարբեր բնույթ են ունեցել և արտահայտել են հասարակական տարբեր խավերի ձգտումներն ու իղձերը։

«Ֆեոդալիզմի դեմ ուղղված հեղափոխական օպոզիցիան նկատվում է ամբողջ միջնադարի ընթացքում, նայած ժամանակի պայմաններին, նա հանդես է գալիս մերթ իբրև միստիկա, մերթ որպես բացորոշ հերետիկոսություն, մերթ որպես զինված ապստամբություն»[3]։ Անդրադառնալով այդ նույն հարցին, Ֆր. Էնգելսը մի այլ տեղիում գրել է՝

«Պարզ է, որ այս պայմաններում բոլոր այն ընդհանուր բնույթ կրող հարձակումները, որ կատարվում էին ֆեոդալիզմի և ամենից առաջ եկեղեցու դեմ, ինչպես նաև հեղափոխական, հասարակական և քաղաքական բոլոր ուսմունքները, միաժամանակ նաև աստվածաբանական հերետիկոսություններ պիտի լինեին»[4]։

Այն մոլեգին ակնարկները, քարոզները, մեկնությունները, դավանաբանական ճառերը և հատկապես եկեղեցական ժողովներում մշակած խիստ ու դաժան կանոնները, որոնք ուղղված էին հերետիկոսների դեմ՝ հաստատում են, որ Հին Հայաստանում մեծ ծավալ էին ստացել հերետիկոսների, աղանդավորների՝ ըստ էության

---

[1] Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ, էջ 25։
[2] Կանոնդիրք, էջ 57։
[3] Ֆ. Էնգելս, Դյուզացիական պատերազմը Գերմանիայում, էջ 46։
[4] Նույն տեղում։

սոցիալական շարժումները։ Հայ ֆեոդալական հասարակության իշխող դասերը և հատկապես ֆեոդալական եկեղեցու «պատուարժան» հայրերը, պաշտոնական եկեղեցու վարդապետ—իդեոլոգները դարերով և՛ դաղափարական և՛ վարչական ու պատժիչ միջոցներով կռվի են ելել քրիստոնեական եկեղեցու, աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների «միասնությունը» տարրալուծող սոցիալական շարժումների դեմ։

Նեստորի ուսմունքը, ինչպես հայտնի է, պարարտ հող է գտնում Արևելքում և հատկապես Սիրիայում։ Հովհան Դամասկացու կուսակիցները նրա ուսմունքը քարոզում են Հայաստանում և այստեղ գտնում են շատ ու շատ հետևորդներ։ Բյուզանդական պաշտոնական եկեղեցու առաջնորդները ոչ միայն մեծագույն ուշադրությամբ հետևում էին Փոքր Ասիայի հերետիկոսների գործունեությանը, դաժան պայքար էին ծավալում սրանց դեմ, այլև հատուկ կոչով դիմում էին հայ եկեղեցու գործիչներին՝ Սահակ կաթողիկոսին և Մեսրոպ Մաշտոցին դաղափարական պայքար ծավալել Հայաստան ներթափանցած աղանդների դեմ։ 4-րդ և հատկապես 5-րդ դարերում սոցիալական-աղանդավորական շարժումները այնքան լայն ծավալ էին ստացել, որ 5-րդ դարի նշանավոր փիլիսոփա Եղնիկ Կողբացին իր աշխատության մեջ սուր քննադատության է ենթարկում աղանդավորների դաղափարախոսությունը և փորձում է փիլիսոփայորեն հիմնավորել քրիստոնեական վարդապետությունը, երկաթապատել այդ նոր կրոնը բոլոր և ամեն տեսակի ոտնձդությունների։

5-րդ դարում ծավալված սոցիալական-աղանդավորական շարժումների մասին պատմական վկայություններ են թողել այդ էպոխայի պատմիչները։

Կորյունը արդարացնում է «բորբորիանոսների» աղանդին հարող «ժանտագործ մարդկանց» նկատմամբ կիրառվող խոշտանգումները իրենց բիրտ ու դաժան ձևերով։ Երբ Մեսրոպ Մաշտոցը համոզվեց, գրել է Կորյունը, որ «բորբորիանոսների» աղանդը լայն արձագանք է գտել Հայաստանում և ունի շատ հետևորդներ, ձեռնարկեց «ղժպիրհ և զկամակոր աղանդն Բորբորիանոսացն քննել»։ Եվ երբ ոչ մի միջոց չդտավ նրանց դարձի բերելու համար, սկսեց գործի դնել «զթշուառացուցիչ դատաղանն»։ Մեսրոպը կանգ չառավ, շարունակում է պատմիչը, այդ չար աղանդը արմատախիլ անելու և ոչ մի միջոցի առաջ։ Նա ծանրագույն պատուհասներով, բանտերով, տանջանքներով և գելարաններով սկսեց նրանց հալածանքը։ Եվ երբ այս դաժան միջոցներն էլ անզոր գտնվեցին, այն ժամանակ ջարդ

տալով, խանձելով, մրելով և պես-պես ձևերով խայտառակելով նրանց դուրս քշեցին Հայաստանից։

«Յետ այնորիկ,— գրել է Կորյունը,— ձեռն արկանէր (Մեսրոպը) զժպիրհ և զկամակոր ազանդն Բարբարիանոսացն քննել, և որք ոչն գային յողղութիւն հաւատական բանին՝ սատակագոյն խոշտանգանօք պատուհասէին ի բանդ և ի կապանս, և յայլ ինչ տանջանարանս. իսկ յորժամ այնու ևս, պակասելք ի փրկութենէ դատանէին Աստուծոյ ատելիքն, ապա խանձելս և մրելս և պէս-պէս խայտառականօք հալածէին յաշխարհէ»[1]։

«Բարբարիանոսների» սոցիալական շարժման կողմնակիցների, հարողների և սրանց առաջնորդների քարոզած ուսմունքի մասին դժբախտաբար մատենագրական վկայությունները խիստ սուղ են և հետազոտողին հնարավորություն չեն տալիս հանգամանորեն շարադրել նրանց դաղափարախոսությունը։ Հայ եկեղեցու դաղափարախոսները նրանց կոչել են «զամենայն մեղս անխտիր» գործող մարդիկ, որոնք չեն ընդունում պաշտոնական եկեղեցու ծիսակատարությունները[2]։

Ուշադրավ է, որ պատմական սկզբնաղբյուրներում, «բարբարիանոսների» ազանդին հարողներին կոչել են «ժանտ», «խուժադուժ» մարդիկ, որոնք ժխտում էին եկեղեցու առաջնորդներին և միաբաններին։

«Բարբարիոսմոս,— ասված է մի ձեռագիր հիշատակարանում,— որ Թարքմանի խուժադուժ, սկսեալ յԱդամայ մինչև յաւուրս Նոյի, եւ բարբարիոսմոս կոչեցան վասնզի ոչ գոյր յայնժամ մարդկան գլուխ կամ առաջնորդ կամ միաբանութիւն, այլ ամենայն որ ըստ հովճութեան կամայ իւրո ապրէնս գնէր»[3]։ Ուրեմն այդ շարժման հարողները ժխտում և բացասում էին ոչ միայն եկեղեցիների առաջնորդներին և միաբանությունները, այլև աշխարհիկ առաջնորդներին։

Այս էր հիմնական պատճառը, որ այդ ազանդի դեմ գործադրվում էր պատժի ամենադաժան միջոցներ։

Մ. Խորենացին վկայում է, որ Կոստանդինապոլսի պատրիարք Աստիկոսը (405—425 թթ.) Սահակ կաթողիկոսին դիմում է հա-

---

[1] Կորյուն. Պատմութիւն վարուց և մահուան սրբոյն Մեսրոպայ վարդապետի մերոյ Թարգմանչի, Թիֆլիզ, 1913, էջ 50—51, հմմտ. նաև էջ 26։

[2] Տե՛ս «Գիրք հերձուածոց», էջ 18, հմմտ. ձեռագիր № 687, էջ 388ա։

[3] Ձեռագիր № 3681, էջ 91բ։ Ուշադրավ է, որ «Գիրք հերձուածոց»-ի մեջ ասված է, որ նրանք չէին ընդունում ոչ մի առաջնորդ, այլ «ամենայն որ ըստ կամայ իւրոց գնայր» (տե՛ս, Գիրք հերձուածոց, էջ 1)։

տուկ հրահանգով և ասում, որ բյուզանդական Թեոդոսոս կայսրը (408—450 թթ.) թույլ է տալիս նրան Արևմտյան կամ բյուզանդական Հայաստանում ծավալել կուլտուրական գործունեություն՝ պայմանով, որ Սահակը սկսի պայքարը բորբորիտների դեմ։

«Իսկ արդ—գրել է Խորենացին,— հրամանաւ ինքնակալին Աւգոստոսի տուեալ լիցի քեզ իշխանութիւն վարդապետել զկողմնդ մեր. և աղանդոյդ բորբորիտոնաց՝ կամ հաւանեցուցանել, կամ հալածել ի քոմմէ վիճակէդ»[1]։

Ստանալով բյուզանդական կայսրի խրախուսական նամակ—հրահանգը և՛ Սահակ կաթողիկոսը և՛ Մեսրոպ Մաշտոցը ձեռնարկեցին լայն միջոցառումներ «բորբորիտների» դեմ։ Ամենայն հավանականությամբ նրանց այս պայքարում օգնում էին նաև աշխարհիկ ֆեոդալները։

Մ. Խորենացին ասում է, որ երբ Մաշտոցն իր միսիան կատարեց Արևմտյան Հայաստանում՝ Սահակ կաթողիկոսը նրան հանձնարարեց կազմակերպել պայքարը բորբորիտների դեմ։

«Հրամայէ քննել զժանդագործ բորբորիտոնսն, և եթէ ոչ հեղութեամբ և ոչ ստստիւ գայցեն յուղղութիւն՝ շարշարանօք հալածել. զի որպէս թշնամիք ի թշնամեաց վրէժ առնուցուն, և խայտառակեսցի իրաւացի մահուամբ անիրաւ մահ հոգւոց»[2]։

Խորենացու և Կորյունի վկայություններից ակնհայտ է, որ Սահակ կաթողիկոսը և Մեսրոպ Մաշտոցը գործադրում են բորբորիտներին հալածելու խիստ միջոցներ։

Մեսրոպ Մաշտոցը նույն եռանդով պայքար է ծավալում աղանդավորների դեմ նաև Սպեր, Դերջան, Եկեղյաց և Գողթան գավառներում[3]։

Կորյունի մոտ կան մի երկու այլ ակնարկներ Հայաստանում բռնկված աղանդավորական այլ շարժումների մասին։

Սահակ կաթողիկոսի և Մեսրոպ Մաշտոցի օրոք, ասում է Կորյունը, Հայաստան է բերվում Թեոդոսոս Մոպսուեստացու կամ Մամեստացու «ընդունայնախօս աւանդութիւնք» «սուտապատումք» գրքերը։ Այս մասին Սահակին և Մեսրոպին հայտնում են եկեղեցու հայրապետները։ Սահակն ու Մեսրոպը «ճշմարտասէր. փութով» ոչնչացնում են այդ վտանգավոր գրքերը և «աշխարհահալած

---

[1] Մ. Խորենացի, էջ 336։

[2] Նույն տեղում, էջ 337։

[3] Նույն տեղում, էջ 340—41։

արտաքոյ իւրեանց մերժեցին. զի մի ի լուսաւոր վարդապետութիւնն՝ ծուխ ինչ սատանայական յարիցէ»[1]։

Կորյունը վկայում է, որ թե Թեոդորոս Մոպսուեստացին, թե՛ նրա աշակերտ Նեստորը բազմաթիվ համակրողներ ունեին նաև Հայաստանում։ Եփեսոսի ժողովից հետո, ասում է Կորյունը, Թեոդորոսը «ըստ Պաւղոսի՝ Սամոսատացւոյ և ըստ Նեստորի հերձուածոյն դիրս ստացեալ համաձայնս պարզամտացն և դիւրահաւանիցն, և եկեալ յաշխարհս մեր՝ կամէին ուսուցանել զչար աղանդն»[2]։ Այս աղանդի հարողներին, շարունակում է պատմիչը, Սահակը և Մեսրոպը սկսեցին «ի բաց հալածեալ յիւրեանց աշխարհէն»[3]։

Այսպիսով, Կորյունի և Մ. Խորենացու վկայությունների հիման վրա կարելի է հաստատապես պնդել, որ «բորբորիտների» աղանդավորական-սոցիալական շարժումը լայն արձագանք էր գտել Արևմտյան և Արևելյան Հայաստանի հայ շահագործվող և հարստահարվող խավերի մեջ և սրանք կրոնական քողի տակ պայքարի են ելել ինչպես աշխարհիկ, այնպես էլ հոգևոր ֆեոդալների և եկեղեցու դեմ։

«Բորբորիտների» շարժումից հետո Հայաստանում ծայր է առնում ազատագրական-սոցիալական մի այլ և հզոր շարժում՝ մծղնեությունը։ Մծղնեական շարժման մասին պահպանված մատենագրական աղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն մեծապես իրարանցում է առաջացրել հայ հասարակության մթնոլորտում և իր դեմ է համախմբել աշխարհիկ և հատկապես հոգևոր ֆեոդալներին։ Եվ դա հասկանալի է ու բնական։

Ինչպես ցույց է տրված վերևում, արտադրության ֆեոդալական եղանակի հաղթանակը լուրջ ճեղքվածքներ էր առաջացրել գյուղական համայնքների մեջ։ Գյուղական համայնքներում ընդգրկված շինականների մի զգալի մասը տարրալուծվել, կորցրել էր իր արտադրության միջոցներն ու հողակտորը։

Գյուղական — երկրագործական համայնքները ցանցվել էին ֆեոդալական կապանքներով։ Ֆեոդալական դաժան պարտավորությունները, կոռային աշխատանքը, ծանր հարկերն ու տուրքերը հետին տոնանկության էին հասցրել նյութական բարիքներ արտա-

---

[1] Կորյուն, էջ 37։

[2] Նույն տեղում, էջ 59։

[3] Նույն տեղում։

դրողներին։ Իշխող ֆեոդալական դասակարգի ճոխ և փարթամ կյանքի հարաճուն պահանջները բավարարելու, բազմաթիվ եկեղեցականների, հոգևոր դասի ավազակաբարո և օտար բռնակալներին կերակրելու համար անմիջական արտադրողները հանձնում էին իրենց վերջին ունեցվածքը։ Մասսայական հողազրկումը, ֆեոդալական հարատև երկպառակությունները և ներքին պայքարը, արտաքին հաճախակի կրկնվող աշխարհավեր արշավանքներն ու ասպատակությունները ծայր աստիճանի ստորացուցիչ և թշվառ վիճակում էին դրել հայ աշխատավորական զանգվածներին։ Այդ էր պատճառը, որ սոցիալական ամեն մի ուսմունք, ամեն մի շարժում, որը ուղղված էր ֆեոդալական կարգերի դեմ, պարարտ հող էր գտնում շահագործվող դասերի մեջ։

Սոցիալ-տնտեսական այս հիմքի վրա 5-րդ դարում Հայաստանում բռնկվում է մծղնեական ազանդավորական-սոցիալական շարժումը, որը և ցնցող տպավորություն է թողնում աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների վրա։

Հայ ֆեոդալական հասարակարգի շահագործող դասերը միասնական ճակատ են կազմում և շարժման կողմնակիցների նկատմամբ գործադրում են յուրատեսակ, բարբարոսական պատժիչ միջոցներ, որը հատուկ չէր եկեղեցու և ավետարանի ոգուն։ Մծղնեական շարժման դեմ կազմակերպված պայքար ծավալելու համար 447 թ. հրավիրվում է Շահապիվանի հայտնի ժողովը Հովսեփ կաթողիկոսի ղեկավարությամբ։

Այս աշխարհաժողովին մասնակցում են շուրջ 20 եպիսկոպոսներ, շատ երեցներ, սարկավագներ, իշխաններ, պետեր, զավառապետեր, «բռնատոր» զորապետեր, հազարապետեր, կուսակալ-աղատներ, ավագ և մեծամեծ նախարարներ, ժողովին ներկա էին Վարդան Մամիկոնյանը, մարզպան Վասակ Սյունեցին։

Շահապիվանի ժողովը քննարկում և հաստատում է իրեն նախորդող Նիկիայի, Կ. Պոլսի, Եփեսոսի ժողովների, Գր. Լուսավորչի, Ներսես և Սահակ կաթողիկոսների, առաքելական կանոնները և իր կողմից մշակում ու հաստատում է նոր կանոններ։ Շահապիվանի ժողովում մշակած կանոնները ստանում են քաղաքացիական օրենքի պարտավորական ուժ՝ պատժի և տուգանքի տակ ձգելով օրինազանցներին։ Ժողովը մշակում և հաստատում է մարմնական խոշտանգումների ամենադաժան պատիժներ, որոնք բոլորովին անհամատեղելի են ավետարանի և եկեղեցու քարոզների և այլ եկեղեցական ժողովների կողմից մշակված որոշումների ոգուն։

Եթե օտար ժողովներում մշակված և հաստատված կանոններում սահմանվում են միայն ապաշխարանք կամ նզովք, ապա Շահապիվանի ժողովը պահանջում է ծեծել, տուգանել, աքսորել և հարկադիր աշխատանքի ուղարկել «հանցապարտներին»։

«Հանցապարտ», բայց առողջ գյուղացիներին հարկադրաբար ուղարկում էին սուր վարակիչ վայրերը՝ տարիներով տաժանակիր աշխատանք կատարելու համար, հաստատ հավատացած, որ այդ վայրերում նրանք անպայման պետք է մահանան։

Հայ Եկեղեցու պաշտոնական դաղափարախոսներից մեկը՝ Մելիք-Թանդյանը ամեն կերպ ձգտում է արդարացնել այդ միջնադարյան ինկվիզիցիան։

«Մեր անտաշ և կոպիտ գյուղացիների համար,— ասում է Մ.-Թանդյանը,— հարկավոր էր միայն ծեծ, ճիպոտ և տանջանք. այն ժամանակ միայն մերոնք կվախենային և կկատարեին ավետարանի և Եկեղեցու սահմանած կանոնները»[1]։

Որ իսկապես Շահապիվանի ժողովի կողմից հաստատված կանոնները ուղղված էին «անհնազանդ», «անտաշ» և «կոպիտ» շինականների դեմ, այդ ամենից լավ կերպով բացահայտված է ժողովի կողմից մշակված կանոնաշարքի ներածական բաժնում։

Հայոց կաթողիկոս Սահակի և Մեսրոպ Մաշտոցի մահից հետո, ասված է առաջաբանում, «վինէր եղծումն և քայքայումն կարգաց և օրինաց եկեղեցւոյ... Բազմանային, որք յաճախէին ի գործն պղծութեան և ընդդէմ գնային... Քանզի կարգք եկեղեցւոյ թուլացան և մարդիկք յանօրէնութիւն դարձան»։ Օգտագործելով երկրի քաղաքական անբարենպաստ պայմանները, Հայաստանում տարածվել էր «մծղնէից և այլոց չարեաց» աղանդը, որին հարել էին բոլոր «կնահանները», «պոռնիկները», «գողերը», «անձնակամները» և «յամենայն խոտորնակ» «չարագործները»։

Սոցիալական այս երևույթի պատճառը ժողովը համարում է «զգաղձն վնասակար», որ յուրաքանչյուր օր արմատանում էր թերահավատների մեջ որպես «սէղն»։ Այս երևույթը համընդհանուր էր ամբողջ Հայաստանի համար։ Նա որպես վտանգավոր շարժում թափանցում էր «յաշխարհիս Հայոց ի մէջ տանս Թորգոմայ»։

Ահա սոցիալական այս «չարիքը» արմատախիլ անելու համար էր, որ հայ ֆեոդալական եկեղեցին մոբիլիզացնում է իշխող դասե-

---

[1] Մելիք-Թանդյան. Հայոց եկեղեցական իրավունքը, հ. 1, էջ 326։

ոի ուժերը՝ ֆեոդալական կարգերից դժգոհ և նրա դեմ ըմբոստացող հոսանքների դեմ։

Շահապիվանի ժողովի կողմից մշակված և հաստատված ու քաղաքացիական օրենքի ուժ ստացած կանոնները բաժանվում են երկու խմբի։ Առաջին խմբում բավական ընդարձակ կերպով տրվում է սոցիալական շարժումների դրդապատճառները, խոսվում է հասարակական չարիքների, եկեղեցու ներսում ծայր առած անկարգությունների մասին, դատապարտվում են արծաթասեր, վաշխառու եպիսկոպոսները, եկեղեցու սպասավորները, խարազանվում են «տրտնջացող», «ամբարտավան», «շատախոս» և «ծաղրաբան» քաղաքացիները։ Կանոնների երկրորդ մասը բացառապես ուղղված է մծղնեական շարժմանը հարողների դեմ։ Այս խմբում կանոնների և ոգը, և բովանդակությունը ավելի խիստ ու դաժան է, քան առաջին մասում։

Ժողովը դատապարտում է ոչ միայն մծղնեական աղանդին հարողներին, այլև նրանց հովանավորողներին, նրանց հետ որևէ կապ և հաղորդակցություն պահպանող հոգևորականներին, իշխաններին։ Ժողովը հայ հասարակության շահագործող դասերին «չար վտանգից փրկելու» համար մշակում է միջոցառումներ իր էպոխայի հասարակական այլանդակ բարքերը բարելավելու նպատակով, որպեսզի դժգոհ տարրերն այն չօգտագործեն իրենց պայքարի մեջ նոր զանգվածներ ներգրավելու համար։ Պիղծ և այլասերված եպիսկոպոսները և երեցները կարգալուծ են արվում և դրամական տուգանքի ենթարկվում (կան. Ա և Բ)։ Դրամական տուգանքների են ենթարկվում այլասերված ազատները, անհնազանդ, հանցապարտ շինականները (կան. Գ, Դ, Ե, Զ, Է), խստիվ պախարակվում են կախարդները, դյութողները, որոնք ենթակա են քարկոծման (կան. Ը, Թ), դատափետվում են վաշխառու, կաշառակեր, արծաթասեր, արծաթը շահով տվող վաշխառուները (կան. ԺԵ)։ Դատապարտվում են աշխարհիկ խաղ և երգ սիրողները կամ սրանց երկրպագուները, այն բոլոր անձնավորությունները, որոնք «հանդուգն» են և վարկաբեկում են եկեղեցու բարձրաստիճան պաշտոնյաներին։

Շահապիվանի ժողովը, իհարկե, միջոցներ է մշակում այս սոցիալական հակամարտությունները մեղմելու, եկեղեցու բարոյալքված պատիվը բարձրացնելու, իշխող և շահագործող դասերին պաշտպանելու համար։ Սակայն ժողովը միաժամանակ մշակում է խիստ ու դաժան կանոններ մծղնեական շարժումը իր բնում խեղդելու, նրա հետևորդներին և հովանավորողներին մինչև այդ չը-

տեսնված մարմնական խոշտանգումների ենթարկելու համար։ Ժողովը անողոք էր ոչ միայն այն շինականների, քաղաքային ստորին խավերի նկատմամբ, որոնք հարել էին այդ շարժմանը, այլև հոգևոր և աշխարհիկ դասերի ներկայացուցիչների հանդեպ։

Ժողովի բոլոր կանոնները համարյա թե պատվում են այս հիմնական առանցքի շուրջը։

Շահապիվանի ժողովի Ա. և Բ կանոնները կարդալուց են անում այն բոլոր՝ եպիսկոպոսներին, քահանաներին, որոնք հարում են «պիղծերին» կամ «չարեաց» գործերին։ Այդ կանոնները իրավունք են տալիս ոչ միայն սրանց կարդալուց անելու, այլև դրամական տուգանքների ենթարկելու և արքունի հարկատուների շարքը մտցնելու[1]։ Ժողովի ԺԴ կանոնը խիստ կերպով դատապարտում է հոգևոր դասի այն բոլոր ներկայացուցիչներին, որոնք «որպես սովորութիւնք մծղնէից» տանտիկիններ են պահում[2]։ Այս երևույթը համարվում է «ամբարիշտ», որը հատուկ էր միայն մաքսավորներին։

Ժողովի ԺԵ կանոնը կոչ է անում չխախտել սուրբ հավատքը և հաստատ մնալ եկեղեցու տրադիցիաներին ու սովորույթներին։

Ժողովը բացահայտում է «սուրբ հավատքի» խախտման սոցիալական դրդապատճառները։

Աշխարհիկ և հոգևոր ֆեոդալները կուտակելով հսկայական դրամական միջոցներ, ոսկի, արծաթ, թանկագին քարեր իրենց արծաթը տալիս էին վարձով և պահանջում բարձր տոկոսներ։ Ժողովը պահանջում է, որ արծաթը չպետք է տալ տոկոսով և նրա դիմաց դրավական վերցնել։

«Չարծաթ ի վարձու ոչ տալ և տոկոսիօք ոչ պահանջել, զդրաւ պարտապանին վաղվաղակի դարձուցանել» ասված է ԺԵ կանոնում։

Ժողովն անարդանքի սյունին է դամում պոռնիկ, գող, ագահ, արծաթասեր, կաշառակեր, բանսարկու, հարբեցող, կամակոր, հպարտ, չարակամ, ամբարտավան, լկտի, ազգատներին ատող տերերին, հոգևորականներին։ Դուք, ասված է ժողովի որոշումների մեջ, խախտում եք աստծո պատվիրանները, մարդկանց մեջ սահմանված խաղաղությունը։ Սոցիալական այս շարիքների հիմքի վրա է, որ խախտվել է «կարգ եկեղեցւոյ» և մարդիկ անօրէն են դարձել։ Աներկբայելի է, որ այս մեղադրանքները, որ Շահապիվանի ժողովը

---

[1] Կանոնգիրք հայոց, էջ 60—61։

[2] Նույն տեղում, էջ 79։

նետում է աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների հասցեին, առաջ էին քաշում և քարոզում մծղնեական շարժման գաղափարակիրները։

Շահապիվանի ժողովը փորձեր է կատարում մշակել ախտերի մեջ տառապող դասերին փրկելու դեղատոմսեր։ Հաշտեցման դիծ անցկացնել շահագործող և պայքարի ելած շահագործվող դասերի մեջ, մեղմել սոցիալական շարժումները և դասակարգային հակամարտությունները — այս էր Շահապիվանի ժողովի քաղաքական նպատակը։ Բայց ժողովը միաժամանակ վճռական միջոցներ է մշակում մծղնեական շարժման դեմ։ Ժողովի որոշումների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ենթադրել նաև, որ այն հրավիրվել էր սոցիալական շարժումները արմատախիլ անելու համար։

Որ մծղնեական աղանդավորական-սոցիալական շարժումը Շահապիվանի ժողովի շրջանում լայն արձագանք էր գտել հայ ֆեոդալական կարգերի, ֆեոդալական եկեղեցու, աշխարհիկ և հոգևոր ֆեոդալական բարձրաստիճան պաշտոնյաների շարագործությունների դժգոհ հասարակական լայն զանգվածների շրջանում, այդ են ապացուցում այդ ժողովի ԺԲ և Ի կանոնները։

«Եթե ոք ի մծղնէութեան դտցի,— հայտարարում է ԺԲ կանոնը,— կամ երէց կամ սարկաւագ կամ աբեղայ, քահանայութիւնն լուծցի, աղոսէսդրոշմ ի ճակատն դիցի և ի տեղիս ճգնաւորաց յապաշխարութիւն տացեն»։ Եթե այս դաժան խոշտանգումները նրանց դարձի չեն բերելու, այդ դեպքում ժողովը իրավունք է տալիս մծղնեական շարժման հարող մարդկանց «զջիղսն երկոսին կարեսցեն և ի գոդենոց տացեն...»։ Կանոնը չի խնայում նաև կանանց, երեխաներին։ «Ապա եթէ արք կանամբք և որդւովք դտցին յաղանդին, զարանց.և զկանանց և զիրագէտ մանկանց զջիղսն կարեսցեն, աղուէսդրոշմ ի ճակատն դիցեն և ի գոդենոց տարցին յապաշխարութիւն»։ ԺԲ կանոնը իրավունք է տալիս եկեղեցու հայրերին խլել աղանդավորների անչափահաս երեխաներին և հանձնել եկեղեցու վարդապետներին, որպեսզի սրանք «սնուցեն և ուսուցեն զնոսա ի հաւատս ճշմարիտս և յերկիւղ տեառն»[1]։ Ժողովի Ի կանոնը ավելի դաժան և բիրտ պատժիչ միջոցներ է առաջարկում մծղնեական շարժմանը հարող աշխարհիկ մարդկանց համար։

Եթե, ասված է նույն կանոնում, «զմծղնէիցն զպատուհասն» իր շարագործություններն է կատարում ժողովրդի մեջ և գյուղերի երեցները, եպիսկոպոսները և աշխարհիկ իշխանության ներկայացուցիչ-

---

[1] Կանոնագիրք հայոց, էջ 79—80։

ները հովանավորում են նրանց, ապա հոգևոր դասի ներկայացուցիչները կարգալուծ են արվում, հեռացվում են եկեղեցու ժառանգությունից, իսկ իշխաններն ու ավագ նախարարները նզովվում են։ Անկասկած է, որ մծղնեական շարժմանը հարող հայ ֆեոդալական հասարակության տարբեր խավերն ու դասերը ղեկավարվում էին իրենց սեփական շահերով և ձգտումներով։ Եթե աշխատավոր և շահագործվող ժողովուրդը պայքարում էր ֆեոդալական դաժան շահագործման, ծանր հարկերի և տուրքերի դեմ, եթե նա ձգտում էր վերադառնալ վաղ քրիստոնեական համայնական շրջանը, որտեղ տակա էին նյութական և սոցիալական արդարությունն ու հավասարությունը, եթե նա աշխատում էր ոչնչացնել աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների կալվածները ու արտոնությունները, ապա աշխարհիկ ֆեոդալների ներկայացուցիչները ձգտում էին օգտագործել այդ շարժումը, իրենց տիրույթները եկեղեցականների հաշվին ընդարձակելու համար։

Այս էր հիմնական պատճառը, որ Շահապիվանի ժողովը, որը արտահայտում էր աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների քաղաքական շահերը, պատժի, անարգանքի միջոցներ է մշակում այդ շարժմանը հարող հասարակական ստորին դասերի նկատմամբ։

Ժողովի որոշումների ուսումնասիրությունը միաժամանակ ցույց է տալիս, որ այստեղ էլ խիստ կերպով պահպանվում է դասային իրավությունը։ Եվ իսկապես, եթե մծղնեական շարժման հարող ստորին խավի մարդկանց և դյուղական քահանաների համար սահմանվում է ֆիզիկական ծանր խոշտանգումներ, հարկադիր աշխատանք, եթե ժողովը իրավունք է տալիս կարելու նրանց ջղերն ու աղվեսագրոշմ խարանել ճակատներին, ապա շարժմանը հարող եպիսկոպոսները կարգալուծ են արվում, իսկ մեծամեծ նախարարները միայն նզովվում։

«Եթէ ի նախարարի տան գայցին պղծութիւնքն կամ կին նորա, կամ դուստր, կամ որդի, կամ ինքն գլխովին... ամենայն տամբ իւրով և ծննդովք և կենօք նզովեալ լիցի»[1]։

Եթե մծղնեական շարժմանը հարում են մանր և միջին ազնվականները և «ոստիկանները», ապա կանոնը իրավունք է տալիս «ոստիկանին» և նրա ընտանիքին «ի հրապարակ» ածել «առաջի գլխաւոր եպիսկոպոսին, և առաջի մեծամեծաց իշխանաց և աւագ դատաւորաց» որպեսզի դատեն «օրինացն Աստուծոյ»։ Շահապիվանի ժողովը արդարացնում է մարմնական խոշտանգումները։ Այդ պատժիչ մի-

---

[1] Կանոնգիրք հայոց, էջ 81—82։

ջոցները, ասված է Ի կանոնում, կտիպեն մարդկանց «սրբութեամբ և երկիւղիւ պաշտեսցեն զարարիչն ամենեցուն»։

Սակայն այս դաժան միջոցները անզոր էին արմատախիլ անելու սոցիալական շարժումները և նրանք հետագայում հանդես են գալիս ավելի լայն թափով, քան նախորդ շրջանում։

Որ սոցիալական շարժումները և դասակարգային դաժան պայքարը խիստ կերպով սրվել էր շահագործող և շահագործվող դասակարգերի միջև, այդ առթիվ ուշադրավ տեղեկություններ են պահպանվել Աղվանից Վաչագան արքայի կողմից մշակված կանոնախմբի ներածական մասում։

«Յամս Վաչականայ Աղուանից արքայի բազում հակառականութիւնք լինէին ի մէջ աշխարհականաց, եպիսկոպոսաց, քահանայից, քորեպիսկոպոսաց, ազատաց և ռամկաց»[1]։ Այս ժողովում մշակված և հաստատված կանոններից երևում է, որ շահագործվող դասերը թերանում էին իրենց պարտականությունները, ֆեոդալական պարհարկները կատարելու մեջ։ Նրանք բացահայտ կերպով հրաժարվում էին եկեղեցիներին և հոգևոր ֆեոդալներին վճարելու «հաս», «պտուղ» և «տասանորդ»։ Հարկերն ու տուրքերն այնքան ծանր էին և կամայականությունները դաժան, որ ժողովը ստիպված սահմանում է հարկերի և տուրքերի որոշակի քանակ և պահանջում է վերջ տալ կամայականություններին, որոնք և ծնում են դժգոհություններ, հուզումներ, անկարգություններ։

Սոցիալական շարժումները և դասակարգային հակամարտությունները նոր, հուժկու թափով հանդես են գալիս 6—7-րդ դարերում։ Հայաստանի հարևան պետությունների ընդհարումները, որոնք տեղի էին ունենում Հայաստանի տերիտորիայի վրա, արաբական արշավանքներն ու տասպատակությունները, հայ ֆեոդալ դասակարգի դաժան քաղաքականությունը, հարկային նոր սիստեմը ստեղծել էին պարարտ հող սոցիալական շարժումների համար։ Պատմական այս էպոխայում Հայաստանը դառնում է ժողովրդաազատագրական պայքարի, հասարակական-քաղաքական բախումների, սոցիալական ըմբոստացումների նոր թատերաբեմ։

645 թվականին Ներսես Տայեցի կաթողիկոսի ղեկավարությամբ հրավիրվում է Դվինի եկեղեցական ժողովը։ Ժողովին մասնակցում են հայ եկեղեցու բարձրաստիճան ներկայացուցիչները։

Դվինի ժողովը քննարկում է սոցիալական բազմաթիվ պրոբ-

---

[1] Կանոնգիրք հայոց, էջ 192։

լեմներ և հատկապես ֆեոդալական եկեղեցու բարեկարգման և ամրապնդման հարցը։

Դվինի ժողովը արձանագրում է, որ եկեղեցիների և վանքերի պատերից ներս էին թափանցել «Բուլուբիանք և անկարգութիւնք» և վերջապես եկեղեցիներից դժգոհ տարրերը արհամարհելով եկեղեցական ծիսակատարությունները «խոսովութիւնս» էին հարուցանում նրա ներսում։ Եկեղեցու դեմ սկսված շարժումները արմատախիլ անելու համար ժողովը մշակում է մի շարք պատժիչ կանոններ[1]։

Դվինի ժողովում մշակված և հաստատված կանոնների հետաքրքրությունը ցույց է տալիս, որ սահմանվում են մի շարք միջոցառումներ հոգևոր դասերին և եկեղեցիներին աշխարհիկ մարդկանց քննադատությունից, եկեղեցու դեմ բռնկված սոցիալական ըմբոստացումներից ապահովելու համար։ Ժողովը հայտարարում է, որ քրիստոնեական եկեղեցին հանդիսանում է մի ղեկավար, հոգևոր մարմին ամբողջ հավատացյալների համար և եթե որևէ մեկը փորձ է կատարում դուրս գալ եկեղեցու դեմ, ապա նա դուրս է գալիս աստծո դեմ։ Ժողովը խստիվ կերպով խարազանում է եկեղեցու իրավասությունը և հոգևոր դասերի իրավունքները խախտող աշխարհիկ մարդկանց՝ նախարարներին, ազատներին, շինականներին, ռամիկներին։ Ժողովի Ա, Բ, Գ, Դ կանոնները դատապարտում են «անպարտաճանաչ» առաջնորդներին, եպիսկոպոսներին, մեկը մյուսի «վիճակը» խլող կրոնավորներին։ Ե կանոնը սահմանում է, որ ոչ ոք իրավունք չունի արտանջալու եկեղեցու սուրբ որոշումների դեմ, որովհետև «ի սկզբանէ որպիսի հրաման ի սրբոյն Գրիգորէ է լեալ՝ նոյնպէս և եղիցի, որոյ շատ է ժառանգութիւնն՝ զշատն կերիցէ, որոյ սակաւ՝ զսակաւն կալցի...»[2]։

Բնական է և հասկանալի, որ ամեն մի ընդվզում, ըմբոստացում, դժգոհություն և շարժում այդ ժառանգության դեմ պետք է հայտարարվեր որպես «չարի» գործ, որպես «սատանեյական» արարմունք։ Դվինի եկեղեցական ժողովը խիստ ու պահանջկոտ կանոններ է մշակում ոչ միայն աշխարհիկ մարդկանց, այլև «բռնութեամբ» մեկը մյուսի «վիճակը», «ժառանգությունը» հափշտակող եպիսկոպոսների, անհնազանդ քահանաների, երեցների և եկեղեցու այլ սպասավորների նկատմամբ։ Դվինի ժողովը անարգանքի այնքան է դատում այն բոլոր հոգևորականներին, որոնք «յափսէ եկեղեցւոյ զկարգ և զպաշտօն թողին և զհեծելութիւն ստացան»։

---

[1] Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ, էջ 87—88։

[2] Կանոնգիրք հայոց, էջ 122—124։

Պատմական այս շրջանում սոցիալական շարժումները ուղղված էին հոգևոր դասի այն ներկայացուցիչների դեմ, որոնք «ձիաբուծք, վաճառականք, վաւաշոտք» էին և փոխանակ «կրօնաւորութեամբ» պարապելու, հանդես էին եկել որպես գյուղերի և քաղաքների, «դատաւորապետ աշխարհական իշխանաց» հարկահաններ կամ «զրող հարկաց-կամ գրողաց կամակից կամ ինչ այլ գործակալութիւն աշխարհի լինելով»[1]։ Այս ժողովի որոշումների մեջ հատուկ տեղ են գրավում Ը, Թ, Ժ և ԺԲ կանոնները, որոնց ուշադիր քննարկումը ցույց է տալիս, որ 7-րդ դարում աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալների մեջ կատաղի պայքար էր ընթանում հողային տիրույթներ և կախյալ գյուղացիներ ձեռք բերելու համար[2]։

Ժողովի ԺԲ կանոնը դատապարտում է ոչ միայն այն ազատներին, որոնք բնակություն են հաստատում վանքերում, այլև այն ազատներին և «յոտմիկ հեծելոց», որոնք հաճախակի իջևանում են վանքերում, եկեղեցիներում, այստեղ խնջույքներ են կազմակերպում, հրավիրում են դուսաններ, դերասաններ, պարուհիներ և պղծում են «յարկս սրբոց... զնուիրեալ տեղիսն Աստուծոյ, զոր սոսկալի է քրիստոնէից լսել՝ թող թէ առնել»[3]. Եկեղեցիներն ու վանքերը այս «պիղծերից» փրկելու համար Դվինի ժողովի մասնակիցները մշակում են յուրահատուկ դեղատոմս։ Նրանք մատնացույց են անում, որ ազատներից և ռամիկներից կազմված զորքերը կարող են իջևանել վանքերին և եկեղեցիներին մոտ գտնվող գյուղերում և այնտեղ անցկացնել իրենց աշխարհիկ ցոփ կյանքը։

Ժողովի կանոնները հնարավորություն են տալիս ենթադրել, որ այն հետապնդել է երկու նպատակ. նախ դատապարտել է հայ հոգևոր դասի այլասերված կյանքը, արձանագրել, որ ժողովուրդը երես է դարձրել եկեղեցիներից, չի սիրում ու հարգում հոգևորականներին, որովհետև սրանք մոռացել են աստծո պատվիրանները և բռնված են հարստություններ կուտակելու տենչով։ Այնուհետև ժողովը դատապարտում է այն ազատներին, որոնք ջանում են եթե ոչ լիկվիդացնել, գոնե սահմանափակել եկեղեցու տիրույթները և կախյալ բնակիչների թիվը։ Եվ, վերջապես, աշխարհիկ և հոգևոր ֆեոդալներին կոչ է անում միասնական ճակատ կազմել ուժեղացող ժողովրդական անբավականության և սոցիալական շարժումների դեմ։

---

[1] Ջեռագիր № 838, էջ 31բ։

[2] Կանոնդիրք հայոց, էջ 125—126։

[3] Նույն տեղում, էջ 127—128։

Սոցիալական շարժումների դեմ կազմակերպված պայքարի անհրաժեշտությունով պետք է բացատրել այն զարմանալի փաստը, որ Դվինի այս ժողովը ջանում է նույնիսկ համախմբել հայ քաղկեդոնականներին և լուսավորչականներին, եկեղեցու և՛ ներքին և՛ արտաքին թշնամիների դեմ։ Այս հաշտարար դիծը կրոնական երկու հակամարտ հոսանքների միջև, վկայում է նաև սոցիալական շարժման մեծ վտանգի մասին։

Դվինի ժողովը կոչ է անում աշխարհիկ և հոգևոր տերերին ոչ թե պայքարել մեկը մյուսի դեմ, դրավել ուրիշների ժառանգությունը, այլ միասնական ճակատ կազմել այն սոցիալական բախումների և շարժումների դեմ, որոնք խարխլում են եկեղեցու հիմքերը։ Դվինի ժողովի կողմից հաստատված կանոնների մեջ մենք նկատում ենք Հայաստանի սոցիալական ընդվզումների խուլ արձագանքը և նրա դեմ պայքարի կտրուկ միջոցներ։ Կարծեք այս ժողովը կանխատեսում էր գյուղացիական այն հուժկու ապստամբությունը, որն այնքան մեծ անհանգստություն է պատճառել Դվինի մի այլ ժողովում հավաքված հոգևոր հայրերին՝ Հովհան Օձնեցու ղեկավարությամբ։

3. ՊԱՎԼԻԿՅԱՆ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Պավլիկյան գյուղացիական ապստամբությունը վաղուց ի վեր գրավել է ինչպես օտար, այնպես էլ հայ պատմագրության ուշադրությունը։ Սակայն հայ կղերա-ֆեոդալական և բուրժուական պատմագրության ոչ պատմական և դիտական մեթոդը և մեթոդոլոգիան, նրա սահմանափակությունը հնարավորություն չտվեց և չէր կարող տալ դիտականորեն շարադրել այդ շարժման սոցիալ-դասակարգային էությունը։ Հայ կղերապատմագրության ներկայացուցիչները լավագույն դեպքում սահմանափակվել են միայն շարժման սկզբնաղբյուրների քննարկման, նրան հարողների դավանաբանական հայացքների և շարժման ժամանակագրությունների հարցերի ճշմտան գործով[1]։

---

[1] Տես, Չամչյան Մ., Պատմութիւն հայոց, հ. Ա, Վենետիկ, 1784, Սարգսյան Եսայեվ. Ուսումնասիրություն Մանիքեա—Պաւղիկեան—Թոնդրակեցիներու ազանդին. Վենետիկ, 1893, Ջամինյան Ա.— Հայոց եկեղեցու պատմութիւն, հատ. Ա. Նոր-Նախիջևան, 1908, Մելիք-Թանգյան, Հայոց եկեղեցական իրավունքը, գիրք Ա. Շուշի, 1903, Փափազյան Ի., Պատմութիւն եկեղեցական, Վենետիկ, 1848, Կարապետ սարկ. Տէր-Մկրտչեան, Պաւղիկեանք բիւզանդական կայսրութեան մեջ և մերձաւոր հերձուածային երևոյթներ Հայաստանի մէջ. Երուսաղէմ, 1938։

Արդեն սովետական պատմագրության ներկայացուցիչները պատմական սկզբնաղբյուրների հետազոտության և բաղդատման հիմքի վրա բացահայտել են Պավլիկյան շարժման սոցիալ-դասակարգային էությունը, ցույց են տվել, որ նա ուներ հակաֆեոդալական և միաժամանակ ժողովրդա-ազատագրական պայքարի բնույթ։ Սովետական պատմագրության ներկայացուցիչները միաժամանակ ապացուցել են, որ Պավլիկյան շարժումը հանդիսացել է միջնադարյան շահագործվող և հարստահարվող գյուղացիական և աշխատավորական մասսաների ամենախոշոր զինված ապստամբություններից մեկը, որը ուղղված էր ոչ միայն սեփական շահագործող, այլև օտար նվաճողների դեմ[1]։ Այս իսկ պատճառով մենք ավելորդ ենք համարում շարադրել Պավլիկյան շարժման սկզբնաղբյուրների, նրա ծագման, կազմավորման, ընթացքի և պարտության պատճառների մանրամասն պատմությունը։ Աշխատության այս մասում բավականանալու ենք միայն շարժման գլխավոր էտապների և հատկապես նրա սոցիալական և քաղաքական իմաստի ու նշանակության, նրա դասակարգային էության, նրա առաջնորդների քարոզած գաղափարախոսության հարցերի քննարկումով։

Պավլիկյան գյուղացիական շարժումը իր սկիզբն առնելով 6-րդ դարի առաջին կեսից հարատևում է մինչև 9-րդ դարի 70-ական թվականները, անցնում է կազմավորման, զարգացման և անկման հետևյալ էտապները։

Վեցերորդ դարի առաջին կեսին շարժումը ապրում է իր ծագման և կազմավորման, ամրապնդման և ձևավորման ժամանակաշրջանը։ 6-րդ դարի կեսից մինչև 7-րդ դարի վերջերը շարժումը աստիճանաբար դուրս է գալիս կրոնական պաճուճանքների շրջանակից և ստանում է սոցիալական շարժման բնույթ։ Պատմական այս շրջանում Պավլիկյան շարժումը տարածվում է Արևելյան Հայաստանի տերիտորիայի մեծ մասում և լայն արձագանքներ է գտնում աշխատավոր մասսաների մեջ։

---

[1] Տե՛ս Ա. Կարինյան, *Սոցիալական պայքարի արձագանքները հին հայ գրականության մեջ («Գիտական բանասիրական հետազոտություններ», գիրք Ա., Երևան, 1946, էջ 361—365)*, «Сборник документов по социально-экономической истории Византии», Москва, 1951. Лепшиц Е., Павликанское движение в Византии в VIII в. и первой половине XI века (см. «Византийский Временник», т. V, за 1952) Ստ. Մելիք-Բախշյան, *Պավլիկյան շարժումը Հայաստանում, Երևան, 1953*, Կ. Յուզբաշյան. Հ. Բարիկյան, *Նոր ուսումնասիրություն պավլիկյան շարժման մասին (տե՛ս ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագիր», № 10, 1954, էջ 87—95։*

7-րդ դարի վերջերից մինչև 8-րդ դարի վերջերը, Պավլիկյան գյուղացիական ապստամբությունն ապրում է իր զարգացման նոր ժամանակաշրջանը: Նա ընդգրկում է Հայաստանի տերիտորիայի մեծ մասը և հասնում է մինչև Կովկասյան լեռնաշղթան: Նրա կենտրոնը դառնում է Նիբրկերտը: Պատմական այս շրջանում Պավլիկյան շարժումն ուղղված էր ոչ միայն սեփական շահագործող դասերի, այլև Բյուզանդական կայսրության և Արաբական խալիֆաթի դեմ: Եվ, վերջապես, 9-րդ դարի սկզբներից մինչև նույն դարի 70-ական թվականները Պավլիկյան շարժումն ապրում է իր զարգացման և անկման վերջին շրջանը: Նրան մասնակցում են Բյուզանդական կայսրության և Արաբական խալիֆաթի դերիշխանության տակ գտնվող այլ ժողովուրդներ: Նա իր բոցերի մեջ է առնում Հայաստանի արևմտյան և հարավային նահանգների մեծ մասը՝ Փոքր Հայքը, Պոնտոսի և Կապադովկիայի արևելյան շրջանները: Շարժման կենտրոնն է դառնում բացի Նիբրկերտից նաև Թեֆրիկը:

Դժբախտաբար 6-րդ դ. կեսին Արևելյան Հայաստանում բռնկված Պավլիկյան շարժման մասին մատենագրական վկայությունները սակավ են: Նրանց մասին վկայությունները ավելի հաճախակի են դառնում 8-րդ և առանձնապես 9-րդ դարերում: Բայց հայկական պաշտոնական եկեղեցու դաղափարախոսները պահպանել են բազմաթիվ կողմնակի վկայություններ այն մասին, որ 6—7-րդ դարերում Հայաստանը դառնում է սոցիալական շարժումների թատերաբեմ: Այսպես, օրինակ, հայոց կաթողիկոս Կոմիտասը (615—628 թթ.) դատապարտում է «աղանդաւորներին»: Գրիգոր Մարկավագապետը խոսում է այն «խուովարարների» և «մոլորվածների» մասին, որոնք մերժում են Քրիստոսին, չեն ընդունում եկեղեցու ծիսակատարությունները[1]:

Հովհան Օձնեցին վկայում է, որ իր շրջանում անհավատները «...շատան զօղեցին յոլորտս ուրեք աշխարհիս մերոյ...», որ նրանք «սարսեալք կային յուղիղ և ի դերապանձ կրօնից քրիստոսականաց», նրանք դուրս գալով իրենց «յորջից» «ի միասին ընթացեալ կուտեցան ամենայն ուստեք, որպէս անդեղք աշխարհաց... և զանուանն իւրեանց զաղտախինս յանդգնեցան կախել զայնցանէ, որ զերկնից բարութեանցն բուռն հարեալ ունիցին յուսով»[2]:

Սկսած 7-րդ դարի վերջերից և առանձնապես 8-րդ դ. սկզբից

---

[1] Բ. Սարգսյան, Գրիգոր Մարկավագապետ, «Բազմավեպ», Վենետիկ, 1904, էջ 124:

[2] Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ Մատենագրութիւնք, Վենետիկ, 1833, էջ 39:

երբ շարժումը լայն թափ ու ծավալ է ստանում, արդեն աշխարհիկ և հոգևոր ֆեոդալները միացյալ ճակատով դրոհ են կազմակերպում նրա դեմ։ 719 թ. կաթողիկոս Հովհան Օձնեցու ղեկավարությամբ գումարվում է Դվինի ժողովը, որտեղ դրվում է նաև պավլիկյանների դեմ պայքարի միջոցառումների հարցը։

Ժողովի ԻԲ կանոնը խիստ կերպով դատապարտում է բոլոր նրանց, ովքեր նույնիսկ համակրում են հերձվողականներին։

«Ոչ է պարտ,— ասված է այդ կանոնում.— ամենևին անխտիր չինել և հաղորդութիւնն առնել ընդ հերձուածողացս, այլ խորշիլ ի նոցանէ և ոչ հաւասարիլ ընդ նոսա ի հոգեկան և ի մարմնական սեղանն զի պատկառեսցին և փափաքեսցին միաբանիլ ընդ ուղղափառութեան աւանդիչս»[1]։

Սակայն Դվինի ժողովին մասնակից հոգևոր հայրերի համար այս կանոնը թվում է խիստ մեղմ։ Պավլիկյանների դեմ ավելի դաժան, կտրուկ և պատժիչ միջոցներ է առաջարկում ԼԲ կանոնը։ Կանոնը դատապարտում է Պավլիկյան շարժմանը հարողներին, պահանջում է խուսափել նրանցից, որովհետև նրանք «սատանայի որդիք» են և «լուցկիք յափտենական հրոյն», որոնց նկատմամբ պետք է գործադրել միայն պատժիչ մեթոդներ։

«Ոչ է պարտ շարաղանդ մծղնէիցն, որ կոչին Պաւլիկեանք,— կարգում ենք ԼԲ կանոնում,— տեղի օթել ոմեք և կամ յարիլ և խօսակից լինել և երթևեկութիւնս առնել. այլ ամենևին հեռանալ ի նոցանէ, զարշիլ և ատել զնոսա, զի որդիք սատանայի են և լուցկիք յափտենական հրոյն և օտարացեալ են ի սիրոյ կամաց Արարչին. եթէ ոք իցէ, որ յարիցէ ի նոսա... պարտ է զայնպիսին խոշտանգել և ծանր պատուհաս ի վերայ ածել... Ապա թէ վերստին ի նմին դտցին, զայնպիսին հրամայեմք ամենևին հատանել և արտաքս ընկենուլ իբրև զժանտախտս յանդամոց եկեղեցւոյ Քրիստոսի...»[2]։

Սակայն այս միջոցառումները չկարողացան խորտակել պավլիկյանների կամքը. եկեղեցին սկսեց նրանց դեմ գաղափարական և կազմակերպչական սուր պայքար։ Հովհան Օձնեցին 720 թ., այսինքն, Դվինի ժողովից մի տարի հետո, մեկնում է Դամասկոս՝ Օմար 2-րդ խալիֆի (717—720 թթ.) մոտ և թույլտվություն ու օգնական ուժ ստանում դենքով ճնշելու պավլիկյաններին։ Հայ աշխարհիկ ու հոգևոր դասերի ու արաբների միացյալ ջանքերով հալածանքներ և

---

[1] Կանոնգիրք հայոց, էջ 147։

[2] Նույն տեղում, էջ 148—149։

տանջանքներ սկսվեցին պավլիկյանների դեմ, որոնք մասսայաբար փախան հայրենիքից և սկսեցին իրենց պայքարը Արևմտյան Հայաստանում։ Արևմտյան Հայաստանում այդ շարժման դեմ հրով ու սրով պայքար սկսեց Բյուզանդական կայսրությունը։

Ն. Լիպշիցը իր «Павликианское движение в Византии в VIII в. и первой половине XI века» հոդվածում համոզեցուցիչ կերպով ցույց է տվել, որ բյուզանդական Լեվոն 3-րդ և հատկապես Կոստանդին 5-րդ կայսրները բյուզանդական հոգևոր ֆեոդալների, հսկայական չափերի հողային սիրուպներ ունեցող վանքերի և արաբական սպառնալից արշավանքների դեմ ժամանակավորապես օգտագործում են պավլիկյանների ռազմական ուժերը։

843 թ. պատկերապաշտությունը վերականգնելուց հետո բյուզանդական Թեոդորա կայսրուհու հրամանով մահապատժի են ենթարկվում շուրջ 100.000 պավլիկյաններ։ Որքան էլ չափազանցված լինեն թվական այս տվյալները, այնուամենայնիվ նա վկայում է Պավլիկյան շարժման մասսայական բնույթը։ Արդեն 9-րդ դարում Պավլիկյան շարժումը ստանում է բացահայտ ղեկված ապստամբության բնույթ։ Պավլիկյանների պայքարը 9-րդ դարում լայն չափ է ստանում նաև այն պատճառով, որ այդ շարժումը համընկնում է կայսրության դեմ Թոնմա Սլավոնացու ղեկավարած ժողովրդական ապստամբության հետ։

Պավլիկյանների մի մասը ակտիվորեն մասնակցում է Թոնմա Սլավոնացու ղեկավարած ապստամբությանը և պայքարում է նրա դրոշի տակ, կայսրության դեմ։ Կայսրության դեմ ակտիվ կերպով պայքարում էին Հունաստանի և Մակեդոնիայի հարստահարված և շահագործված սլավոնները։ Կայսրության դեմ պայքարող սլավոնների և պավլիկյանների շարժիչ ուժը համայնական գյուղացիությունն էր։ Հայտնի է, որ 9-րդ դարից կայսրության մեջ առաջացել էին սոցիալ-տնտեսական նոր հարաբերություններ։ Արտադրության ֆեոդալական եղանակը հաղթանակել էր վերջնականապես։ Ֆեոդալական հարաբերությունների հաղթանակը խորը ճեղքվածքներ էր առաջացրել գյուղական համայնքներում, տարրալուծվում էր համայնքային հողատիրությունը։ Անմիջական նյութական բարիքներ արտադրողների մեծ մասը տարրալուծվել և կորցրել էր իր հողակտորը և արտադրության սեփական միջոցները։ Համայնական քայքայված գյուղացիությունն էր, որ ղեկի դիմեց իր հողակտորի նկատմամբ ինչպես աշխարհիկ, այնպես էլ հոգևոր ֆեոդալների և սրանց պետության բոլոր տնձգությունների դեմ։

Կայսրությունը 9-րդ դարում այլևս չէր կարող հանդուրժել Պավլիկյան հզոր շարժումը։

Միքայել 3-րդ կայսրը 859 թ. ռազմական արշավանքի դուրս եկավ պավլիկյանների դեմ։ Բյուզանդական բանակը շրջապատեց Սամոսատ քաղաքը, սակայն պավլիկյանները հարձակվեցին բյուզանդական բանակի վրա, գլխովին ջախջախեցին և քիչ մնաց որ կայսրը գերի վերցվեր։ Միքայել 3-րդ կայսրը 40,000-անոց բանակով իր երկրորդ արշավանքը կրկնեց 860—861 թթ., բայց դարձյալ անհաջող։ Բյուզանդիան խայտառակ պարտություն պարտության հետևից կրեց նաև հաջորդ արշավանքների ժամանակ։ Առանձնապես Բյուզանդիան խայտառակ պարտություն կրեց պավլիկյաններից Բարսեղ Ա.-ի (867—886) օրոք։ Բարսեղ Ա կայսրը երեք անգամ արշավանքի դուրս եկավ պավլիկյանների դեմ։

Պավլիկյան շարժումը առանձնակի թափ ստացավ և իր վերելքը ապրեց 9-րդ դ. 70-ական թվականներին։ Այս էպոխայում և Բյուզանդիային և Հայաստանին սպառնացող Պավլիկյան շարժումը ստիպեց, որպեսզի նրա դեմ համախմբվեն երկու երկրների ֆեոդալական, եկեղեցական և ռազմական ուժերը։

Պատմական այս էպոխայում կայսրությունը օրհասական պայքար է ծավալում պավլիկյանների դեմ։ Մակեդոնյան դինաստիայի ներկայացուցիչ Բարսեղ Ա կայսրը, բյուզանդական ռազմա-ֆեոդալական դասը իրենց քաղաքականության կենտրոնական պրոբլեմը համարում են պայքար պավլիկյանների դեմ, որովհետև նրանք կայսրության դեմ հանեցին ամբողջ Փոքր Ասիայի ճնշված ու շահագործված տարրերին՝ գյուղացիներին, սարովներին, կոլոններին։

Պավլիկյանները Կարբեասի ղեկավարությամբ մի շարք վճռական ճակատամարտեր տվին կայսրության բանակին, սակայն պավլիկյանների կորուստը նույնպես խիստ զգալի էր։ Պատերազմի դաշտում ընկան հազարավոր պավլիկյաններ իրենց ղեկավար Կարբեասի հետ միասին։ Կարբեասի հերոսական մահից հետո շարժման ղեկավարությունն իր ձեռքը վերցրեց Խրիսոխիրը։

Խրիսոխիրը, որին բյուզանդական աղբյուրները կոչում են «ապի և խիզախ», իր համախոհների հետ «ասպատակում է հռոմեական սերիտորիան»։ Բարսեղ Ա 871 թ. հսկայական զորական ուժերի գլուխ անցած արշավում է պավլիկյանների վրա, ավերում է նրանց բնակավայրերը, գյուղերը, գերում է բազմաթիվ պավլիկյանների և շրջապատում Թեֆրիկը, սակայն այն գրավել չի կարողանում, որովհետև Թեֆրիկը պաշտպանում էին «անթիվ և անհամար բարբարոսներ»։ Պավլիկյանները ոչ միայն կատաղի դիմադրություն են

ցույց տալիս, այլև հետապնդում են Բարսեղ Ա-ի բանակին և կրկին հանդես են գալիս բյուզանդական սահմանների վրա և ասպատակում են կայսրության տերիտորիան։ Բարսեղ Ա. պավլիկյանների դեմ է կենտրոնացնում «հռոմեական բոլոր զորքերը», որովհետև «բարբարոսների բանակը» խիստ անհանգստության մեջ էր պահում կայսրությունը։ Միայն 872 թվականին Բարսեղ Ա-ին հաջողվում է ծանր հարվածներ հասցնել պավլիկյաններին և դիրել նրանց առաջնորդ Խրիսոխիրին։

Բարսեղ Ա-ի, բյուզանդական ֆեոդալական ռազմա-ազնվական դասի ցասումն այնքան մեծ էր, որ երբ կայսրին ներկայացրին Խրիսոխիրի կտրված գլուխը, կայսրը հանդիսավոր կերպով տոնեց այդ «հաղթանակը», պահանջեց բերել նետ ու աղեղ և «հեռուից բաց թողեց 3 նետ այդ անիծյալ գլխի վրա։ Այսպիսի վախճան ունեցավ Խրիսոխիրի գործը, այդպես անհետացավ Թեֆրիկի երբեմնի ծաղկած հզորությունը»[1]։

Հայ եկեղեցու հայրերը, չնայած այն փոթորկալի վեճերին, որ մղում էին բյուզանդական եկեղեցու դեմ, ընդհանուր թշնամու վտանգի տակ համախմբվեցին և սկսեցին միասնական պայքար պավլիկյանների դեմ։ 9-րդ դ. 70-ական թվականներին Պավլիկյան շարժումը կամաց-կամաց թուլացավ և վերջնականապես ջախջախվեց։ Պավլիկյանները 9-րդ դ. 70-ական թվականներից հետո էլ մասնակի կերպով անհանգստացնում էին աշխարհիկ և հոգևոր ֆեոդալներին, բայց այլևս նրանք սպառնալի ուժ չէին հանդիսանում։

872 թվականի ծանր պարտությունից հետո Պավլիկյան շարժումը ապրում է իր վայրիջքի ժամանակաշրջանը և այն վեր է ածվում սոսկ աղանդի։ Ճիշտ է, պավլիկյանները դեռ մի քանի դար շարունակում են իրենց գոյությունը, բայց նրանք ոչ թե սոցիալական և դասային անարդարության դեմ պայքարող նախորդ շրջանի մարտիկներ էին, այլ սոսկ աղանդավորներ։ 872 թ. հետո Պավլիկյան շարժման հարուցների մի մասը անցավ Բալկանները, հատկապես Թրաքիա, Մակեդոնիա, Կիևռուս միանալով ընչազուրկ և իրավազուրկ մասսաների հետ պայքարի դրոշ պարզեց ֆեոդալական շահագործման դեմ։ Բալկաններում և Ռուսիայում պավլիկյանների ազդեցության տակ ծնունդ առավ բոգոմիլների աղանդավորական-սոցիալական շարժումը։

---

1 Տե՛ս Сборник документов по социально-экономической истории Византии, стр. 141—143.

Բնականաբար հարց է առաջանում. ինչո՞ւմն էր կայանում Պավլիկյան շարժման սոցիալ-դասակարգային իմաստն ու նշանակությունը։ Ինչո՞ւ նրա դեմ միացյալ ճակատ կազմեցին ու դաժան միջոցների դիմեցին և՛ բյուզանդացիները, և՛ հայ աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալները։

Այս հարցը դառնում է հասկանալի և հեշտ բացատրելի, եթե մենք նկատի ունենանք, որ Պավլիկյան շարժումը ամենից առաջ ժողովրդական, հակաֆեոդալական, սոցիալական շարժում էր, որը ուղղված էր ոչ միայն սեփական շահագործող դասերի, այլև օտար բռնակալության դեմ։

Պավլիկյան-դյուղացիական շարժման և ապստամբության մասին եղած վկայությունների բաղդատման հիման վրա հնարավոր է շարադրել պավլիկյանների և սրանց առաջնորդների կողմից մշակված և առաջ քաշված հետևյալ սոցիալական պահանջները.

1. Պավլիկյանները քարոզում էին, որ լինելության հիմքում ընկած է երկու՝ բարի և չարի սկզբունքը։ Նրանք, որպես դուալիստներ պնդում էին, որ «մեր և հռոմայեցիների միջև եղած միակ տարբերությունն այն է, որ մենք մեկ աստված ենք համարում երկնային հորը, որը այս աշխարհում իշխանություն չունի, այլ կունենա այն ապագայում, իսկ մյուս աստվածն է աշխարհի արարիչն, որին է պատկանում այս աշխարհի իշխանությունը»։ Հետևաբար, ուսուցանում էին պավլիկյանները, բարին և բարերարությունը դրսևորվում է այս աշխարհում և ոչ թե հանդերձյալ կյանքում, ուստի անհրաժեշտ է ստեղծել երջանկություն այս աշխարհում և ոչ թե հանդերձյալ կյանքում, ինչպես քարոզում են եկեղեցին և նրա վարդապետները։

2. Պավլիկյանները քարոզում էին, որ բոլոր մարդիկ, անկախ իրենց դիրքից, պաշտոնից, հասարակության մեջ գրաված տեղից, ծագումից, հավասար են, այդ իսկ պատճառով նրանք բարիքներից պետք է հավասարապես օգտվեն։

3. Նրանք ժխտում և մերժում էին պաշտոնական եկեղեցու ծիսակատարությունները, օրենքները, սովորույթները։ Քարոզում էին, որ մարդու հաճույքները կապված են ոչ թե երկնքի, այլ նյութական կյանքի հետ։

4. Պավլիկյանները ժխտում և մերժում էին Հին կտակարանի սկզբունքները, որովհետև նրա սկզբունքները հիմնված են չարության, նյութական անհավասարության, մարդու շահագործման վրա։

5. Նրանք մերժում էին Մարիամին, գտնում էին, որ Մարիա-

մին չպետք է պաշտել, որովհետև Քրիստոսը ծնվել է ոչ թե Մարիամից, այլ երկնքից։ Նրանք Քրիստոսին համարում էին անսկիզբ և անվերջ և բացառում էին պաշտոնական եկեղեցու այն սկզբունքը, որ Քրիստոսը պետք է նորից հարություն առնի։ Նրանք Քրիստոսի շարչարանքը համարում էին երևութական։ Ժխտում էին խաչի պաշտամունքը և քարոզում էին, որ խաչը ոչ այլ ինչ է, եթե փայտ։

6. Պավլիկյանները մերժում էին հաղորդման և մկրտության ծեսերը, խորհրդավոր ընթրիքը, պատարագը, զոհաբերությունը, խունկ ծխելը։

7. Պավլիկյանները մերժում և ժխտում էին սրբերի, սրբապատկերների պաշտամունքը, նրանց համարում էին նյութական անհավատարություն ստեղծող շարության աստծու ծառաները, նրանք ստեղծվել են ոչ թե աստծու, այլ մարդու ձեռքով։

8. Պավլիկյանները ոչ միայն մերժում էին սրբերի, սրբապատկերների երկրպագությունը, այլև բացասում էին եկեղեցիներում աստծու երկրպագության արարողությունը։ Նրանք պահանջում էին վերացնել եկեղեցիները, որովհետև հավատացյալը աստծու հետ կապվում է ոչ թե եկեղեցու, այլ անձամբ, իր հավատի միջոցով։ Նրանք եկեղեցին համարում էին հոգևոր դասին նյութական հսկայական շահ տալու միջոցներից մեկը։

9. Պավլիկյանները ժխտում ու մերժում էին ֆեոդալական եկեղեցու հիերարխիան։ Պահանջում էին եկեղեցու արմատական բարեկարգություն։ Նրանք գտնում էին, որ աստծու ծառաները չպետք է ոչ իրենց ապրելակերպով, ոչ արտաքինով ու հագուստով և գրված գիրքով տարբերվեն մյուսներից։ Նրանք քարոզում էին եղբայրություն, բոլորի հավասարություն աստծու առաջ։ Գտնում էին, որ պետք է բռնագրավվի եկեղեցու ունեցվածքը և այն բաժանվի համայնքի անդամների միջ՝ հավասար սկզբունքով։ Այս պահանջը պավլիկյանների գաղափարախոսության ամենաարմատական պահանջներից մեկն էր։

Պավլիկյանները ձգտում էին վերադառնալ վաղ քրիստոնեության շրջանը, որտեղ, ըստ ավանդության, առկա էր ընդհանուր հավասարություն։ Նրանք քարոզում էին, թե իրենց հակառակորդները շեղվել են Քրիստոսի ճշմարիտ պատվիրաններից։ Նրանք վաղ քրիստոնեության սկզբունքները քաղում էին Պողոս առաքյալի քարոզներից և այդ էր պատճառը, որ մեծ հարգանքով էին խոսում նրա մասին։

Ոչ միայն պավլիկյանները, այլև միջնադարյան աղանդավորական-սոցիալական շարժման բոլոր ներկայացուցիչները պահանջում

էին, ինչպես ցույց է տվել Ֆր. Էնգելսը, «վերականգնել այն հավասարությունը, որ գոյություն ուներ նախնական քրիստոնեական համայնքի անդամների միջև. և այդ հավասարությունն ընդհանուր կանոն ճանաչել նաև քաղաքացիական աշխարհի համար»[1]։

Պավլիկյանները հաճախակի իրենց կոչում էին համայնականներ և անկասկած է, որ նկատի ունեին միայն վաղ քրիստոնեական համայնքները։

10. Պավլիկյանները ցանկանում էին սահմանափակել կամ ոչնչացնել միջնադարյան ֆեոդալիզմի իդեոլոգիայի ներկայացուցիչների արտոնությունները, սեփականական ընդարձակ կալվածները ու անսահմանափակ իշխանությունը։ Պավլիկյանները տեսնում էին, որ եկեղեցական բարձրաստիճան պաշտոնյաները ունեին լայնատարած կալվածներ, որ նրանք ոչ միայն իրենց հպատակներին աղնվականների և իշխանների նման անխնա շահագործում էին, այլև ավելի անամոթաբար էին վարվում։ Կոպիտ բռնության հետ միասին նրանք գործադրում էին կրոնական բոլոր հնարքները, տանջանքների սարսափների հետ միասին շարժման մեջ էին դնում բանադրանքի երկյուղը, մեղքերի թողության մերժումը և խոստովանության բոլոր ինտրիգաները, որպեսզի իրենց հպատակներից կորզեն նրանց վերջին գոռշը և ավելացնեն եկեղեցու կալվածները։ Ահա այս արտոնությունների դեմ էր, որ պայքարում էին պավլիկյանները։

11. Պավլիկյանները մերժում էին եկեղեցիներին տրվելիք նվիրաբերությունները, հոգեցաուր բաժինները։ Նրանք դեմ էին, որ վանքերն ու եկեղեցիները այս ուղիով ընդարձակում էին իրենց տիրույթները։ Այս երևույթը պավլիկյանները համարում էին սուտ, խաբեություն։ Նրանք կոչ էին անում հոգևոր դասին հետևել իրենց օրինակին, հոգին և մարմինը ոչ թե վաճառել արծաթին, նյութական կյանքին, այլ լինել բարեկիրթ և առանց որևէ խարության օգտվել հավասար իրավունքներով։

12. Պավլիկյանները բռնի նյութական անհավասարության վրա հիմնված ընտանիքի փոխարեն առաջ էին քաշում աղատ սիրո և նյութական հավասարության վրա հիմնված ընտանիքի գաղափարը։

13. Պավլիկյանները բացառում և ժխտում էին հողի մասնավոր սեփականությունը։ Նրանց կարծիքով ինչպես բոլորը, այնպես էլ հոգևորականները, պետք է մտնեին համայնքների մեջ, աշխատեին և օգտվեին համայնքների բարիքներից հավասարապես։

---

[1] Ֆր. Էնգելս, Գյուղացիական պատերազմը Գերմանիայում, էջ 48։

14. Պավլիկյանները քարոզում էին կախյալ և ճորտացված գյուղացիների, սարուկների, ծառաների ազատություն, պահանջում էին վերացնել դասային բոլոր տարբերություններն ու արտոնությունները, ձգտում էին բոլորի և առանձնապես կանանց համար հաստատել ոչ միայն կրոնական, այլև քաղաքացիական իրավունքների հավասարություն։

Պավլիկյան շարժման սոցիալ-դասակարգային էության մասին կարելի է, անկասկած, կիրառել Ֆր. Էնգելսի այն դրույթը, թե «եթե դասակարգային այս պայքարն այն ժամանակ կրոնական կնիք էր կրում, եթե առանձին դասակարգերի շահերը, կարիքներն ու պահանջները կրոնական շղարշով էին քողարկված, դա ամենևին չի փոխում գործի էությունը և հետևությամբ բացատրվում է իր ժամանակի պայմաններով»[1]։

Սակայն պավլիկյանների շարժման քաղաքական գնահատականը սրանով չի սահմանափակվում։ Այս պայքարը ուղղված լինելով աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների քաղաքական տիրապետության դեմ, միաժամանակ պայքար էր, ուղղված օտար զավթիչների դեմ։

Պավլիկյան շարժումը, հանդիսանալով աշխատավոր, շահագործվող դասի քաղաքական պայքարը տիրող կարգերի, ֆեոդալական խիստ ու բիրտ շահագործման դեմ, չէր կարող հաղթանակի հասնել, ինչպես միջնադարյան գյուղացիական բոլոր ապստամբությունները. նա դատապարտված էր պարտության իր տարբերային, անկազմակերպ բնույթի պատճառով և նա պարտվեց։ Սակայն Պավլիկյան շարժման տրադիցիաները անցան հետագա դարերի գյուղացիական շարժումներին և նրանք լայն կերպով օգտագործեցին պավլիկյանների պայքարի ձևերն ու մեթոդները, նրանց գաղափարները շահագործող դասակարգի դեմ մղած իրենց պայքարում։

4. ՉՈՐՐՈՐԴ ՀԱՅՔԻ ԱՐՇԱՐԻ ԵՎ ԿԱՊԱՐԻ ՀԱՆՔԵՐՈՒՄ ԱՇԽԱՏՈՂ ՀԱՆՔԱՓՈՐՆԵՐԻ ԵՎ ՀՈՂԱՋՈՒՐԿ ԴՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ 774—775 ԹԹ. ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանում ծավալված Պավլիկյան գյուղացիական ապստամբությունը մեկուսացված ու եզակի երևույթ չէր։

Ամենայն հավանականությամբ Պավլիկյան գյուղացիական ապստամբության գաղափարական ազդեցության տակ Ց-րդ դարի

---

[1] Ֆր. Էնգելս, Գյուղացիական պատերազմը Գերմանիայում, էջ 45։

վերջերին Չորրորդ Հայքում սկսվում է արծաթի և կապարի հանքերում աշխատողների և շրջակայքի հողագործ գյուղացիների խիստ ուշագրավ և յուրահատուկ մի ապստամբություն։ Չորրորդ Հայքի այս ապստամբության մասին մեզ արժանահավատ վկայություն է թողել 8-րդ դարի ասորա-հակոբիկ մատենագիր Կեղծ-Դիոնեսիոս Թել-Մահրացին։

Արդեն պատմա-բանասիրական գրականության մեջ ապացուցված է, որ Կեղծ-Դիոնեսիոս Թել-Մահրացու «Ժամանակագրությունը» մեզ չի հասել։ Պրոֆ. պրոֆ. Ն. Վ. Պիգուլևսկայան, Լ. Մելիքսեթ-բեկը ցույց են տվել, որ Կեղծ-Դիոնեսիոս Թել-Մահրացուն վերագրած «Ժամանակագրությունը» կազմել է Զուկնինի վանքի վանականներից մեկը և այն էլ հունական տոմարի 1086, կամ մեր թվարկության 775 թ.»[1]

Այս «Ժամանակագրության» բնագիրը առաջին անգամ 1895 թ հրատարակել է ֆրանսիական արևելագետ Յա. Վ. Շաբոն[2]։

Այս ուշագրավ և խիստ հետաքրքրական ապստամբության մասին, որքան մեզ հայտնի է, առաջին անգամ ակնարկված է Հայաստանի ԽՍՀ Պետական համալսարանի դիտական «Տեղեկագրում»[3]։

Վերջերս Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, պրոֆ. Լ. Մելիքսեթ-բեկը ավելի հանգամանորեն անդրադարձավ 774—775 թթ. ապստամբության պատմությանը[4]։

Պրոֆ. Լ. Մելիքսեթ-բեկը 774—775 թթ. ապստամբության պատմությունը շարադրել է Կեղծ-Դիոնեսիոս Թել-Մահրացու «Ժամանակագրության» Շաբոի հրատարակության տեքստի հիման վրա՝ իր թարգմանությամբ։ Մենք այստեղ օգտվել ենք այդ թարգմանությունից։

«Ժամանակագրության» հեղինակը վկայում է, որ արաբներին արծաթով, ոսկով բավարարելու համար հարկատուները «խորը և մեծ փոսեր էին փորում կապար և արծաթ գտնելու համար»։ Այ-

---

[1] **Н. В. Пигулевская.** Византия и Иран на рубеже VI и VII вв. стр. 43—44. *հմմտ.* Լ. Մելիքսեթ-բեկ. *Չորրորդ Հայքի 774—775 թթ. գյուղացիական ապստամբության հարցի շուրջը (տե՛ս ԴԱ «Տեղեկագիր», 1948, № 2, էջ 54)։*

[2] *Տե՛ս* Chronique de Denys Tell-Mahre. Publ. et tred. par Chabot, Paris, 1895, *(տե՛ս նաև* Пигулевская Н. В., Византия и Иран... стр. 43—49, Մելիքսեթ-բեկ, *Չորրորդ Հայքի գյուղացիական ապստամբության հարցի շուրջը, էջ 51)։*

[3] *Տե՛ս ՀԽՍՀ Պետական համալսարանի «Տեղեկագիր», № 4, 1928, Երևան, էջ 88—89։*

[4] Լ. Մելիքսեթ-բեկ, *Չորրորդ Հայքի 774—775 թթ. գյուղացիական ապստամբության հարցի շուրջը (տե՛ս ԴԱ «Տեղեկագիր», հաս. գիտ., Երևան, 1948, № 2, էջ 45—86)։*

նուհետև նա հաղորդում է, որ աշխատանքը հանքերում տաժանակիր բնույթ ուներ, աշխատանքը կատարվում էր միայն ձեռքով և խիստ պրիմիտիվ գործիքներով։ Արաբները այս հանքերն էին քշում շրջակայքի աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների դեմ «հանցանք» գործած գյուղացիներին, ծառաներին, ռազմագերի ստրուկներին։

Հանքափորները հանքերում աշխատում էին կառավարության կողմից նշանակված հատուկ հսկիչների և կառավարիչների խիստ հսկողության տակ։ Աշխատանքում թերացողների համար սահմանված էին բարբարոսական պատժիչ միջոցներ։

«Ժամանակագրության» հեղինակը հանքերում աշխատողներին կոչում է «խեղճեր», «թշվառներ», «սովյալներ», «օրավարձով ապրողներ», որոնք ենթարկվում էին «բացահայտ թալանի»։

«Երբ խեղճերը տեսան, որ այս բացահայտ թալանը չի դադարում, որ [այս հարկահավաքները] չունեն ոչ ամոթ, ոչ երկյուղ,... որ բոլոր այս թշվառությունների համար նրանք հաշիվ չեն տալիս... ապստամբեցին»։

«Ժամանակագրության» հեղինակը թողել է վկայություն նաև ապստամբության տեղի և վայրի մասին։ Իսկ այն տեղը, որտեղ խռովություն առաջացավ, գտնվում էր Զորրորդ Հայքում, Տուտիս կոչվող վայրում։ Այս վայրում արտահանվում էին «կապար, արծաթ և այլ երկաթահանքեր»։

Հանքերում աշխատող բանվորների կացությունն այնքան ողբերգական էր, որ նրանք հաճախակի բողոքում էին, ասելով՝ մենք տալիս ենք մեր և մեր հարևանների համար պահանջվող հարկերը և նույնիսկ այն, որ չպետք է վճարենք։ Ախր ե՞րբ պետք է կշտանան մեր մասով։ «Մենք,— ասում են նրանք,— այլևս ոչինչ չենք տա, բանի որ չդիմենք որտեղից վերցնենք, որպեսզի տանք»։

Այս հողի վրա բորբոքվում է պայքարը հանքափորների և կուսակալի միջև։ Երբ կուսակալին հայտնում են, որ բանվորները հրաժարվում են աշխատելուց, նա «կրճատացրեց ատամները, բռունցքով խփեց և նմանվելով առյուծի՝ արյան ծարավ դղաց»։ Ապստամբությունն իր բնում խեղդելու համար, նա «խեղճերի» դեմ, իր տեղակալի առաջնորդությամբ, ուղարկում է «քաղաքի բոլոր ոճրագործներին և մարդասպաններին... հանցագործ և արյունածարավ երկրի մեծամեծներին և գարշելի ու անդութ», «նիզակներով և պարսատիկներով» զինված ռազմական ջոկատներ։

Սակայն ապստամբները հեշտ կերպով չեն հանձնվում. նրանք համախմբվում են, զինվում ու կատաղի դիմադրություն ցույց տալիս։ Ապստամբները,— շարունակում է «Ժամանակագրության» հե-

զինակը,— իրանց կողմից մեծ վնաս պատճառեցին բոլոր մարդասպաններին և գողերին... և նրանց հարազատներին այնպիսի չարիք հասցրեցին, որ լեզուն ի վիճակի չէ նկարագրելու։ Ապստամբները հակառակորդի կանոնավոր զինված ուժերի ճնշման տակ նահանջում են։ Իշխող դասերի ներկայացուցիչները, նրանց զինված ոհմակը դիմում են ամենադաժան միջոցների։

«Ժամանակագրության» հեղինակը բառեր չի գտնում նկարագրելու այն բոլոր չարագործությունները և պատժիչ միջոցները, որ գործադրում են կուսակալի տեղակալը և մեծամեծներից, գողերից, ավազակներից, մարդասպաններից ու անդուք մարդկանցից բաղկացած ոհմակը։

Իշխող դասերի զինված ջոկատները հարձակվում են «խեղճերի» վրա և «սկսում են նրանց կոտորել». կապարի հանքերում աշխատողները հակառակորդի սրից ազատվելու համար դիմում են փախուստի։ Ապստամբների մի մասը ընկնում է գենքը ձեռքին, մյուսները «քանի դեռ ձմեռ էր, ձյունը հասա շերտով ծածկել էր այս վայրը, հորերի բերանները ծածկված էին սառույցներով... թափվում էին այդ հորերի մեջ և նրանց մեծամասնությունը խեղդվում էր և կործանվում նրանց խորքում»։ Կատաղած թշնամին ոչ ոքի չէր խնայում, նա ոչ միայն սրի էր քաշում ապստամբներին, այլև «կողոպտում ու թալանում նրանց գույքը... նրանց տնտեսության բոլոր առարկաները, այրում բոլոր փայտեղենները, ջարդում կավե բոլոր ամանները, զավթում պղնձյա և երկաթյա բոլոր իրեղենները, փշրում ոսկորները, գինու ամանները, կարասները, կուժերը»։ Սակայն չարագործությունները այսքանով չսահմանափակվեցին։ Իշխող դասերի կատաղությունն այն աստիճանի էր հասել, որ նրանք «մերկացնում էին տղամարդկանց, կանանց և երեխաներին, նրանց թողնելով միրկ. առանց հագուստի և կոշիկների։ Նրանք նույնիսկ հանում էին «խեղճերի» վարտիկները, «մերկացնում էին նրանց սեռական օրգանները» և խոշտանգում էին անլուր տանջանքով։ Նրանք անամոթաբար տղամարդկանց ներկայությամբ «բռնաբարում էին կանանց և դուստրերին», այսպիսով բավարարում էին «իրենց մոլեգին և ագահ պահանջները»։

Ապստամբների դիակները «հորերից նույնիսկ դուրս չէին հանում, հողին հանձնելու համար, իսկ եթե որևէ մեկին հաջողվում էր հորերից դուրս բերել, ապա նրա «հագուստը հանում էին և թողնում միրկ. փոսի բերանի մոտ»։

«Իսկ ինչ վերաբերվում է այն աղետին, որ նրանք հասցրեցին այս երկրին,— ամփոփում է «Ժամանակագրության» հեղինակը,—

սրա մասին ավելի լավ է չխոսել նախ այն պատճառով, որ դուցե ոչ-ոք մեզ չհավատա, թե ինչպիսի նենգություն ցուցաբերեցին նրանք, որպեսզի նրանց մասին չասեն, թե քրիստոնյաները ստածուց չեն վախենում, քանի որ նրանց վարմունքը մոդերի վարմունքից վատթար եղավ»։

Ապստամբությունն արյան մեջ խեղդելուց, ապստամբներին ոչնչացնելուց հետո, իշխող դասերի ներկայացուցիչները «քշեցին կանանց, որոնք մարդասպանների պես շղթայված էին, հավաքեցին ամբողջ տավարը, ոչխարը և իրենց հետ տարան»։

«Ժամանակագրության» հեղինակը վկայում է, որ այս ապըստամբությունը ոչ միայն արծաթի և կապարի հանքերում աշխատող հանքափորների, այլև շրջակայքի հողազուրկ գյուղացիների ապըստամբություն էր։

Չորրորդ Հայքի Տուտիս վայրի այս ապստամբությունը ճնշելուց հետո ապստամբների հակառակորդներն անցնելով «բազմաթիվ գյուղեր կողոպտեցին գյուղացիներին և իրենց հետ տարան նրանց բնակիչներին»։ Նրանք ոչ միայն կողոպտում ու թալանում էին գյուղացիներին, այլև մարմնական դաժան պատիժների էին ենթարկում նրանց։ Սրանք «բռնում էին անմորուս երիտասարդներին, գեռահաս օրիորդներին, չէին խնայում նորապսակների անկողինը, մտնելով գյուղացիների տները խմում էին նրանց գինիները, ջարդում էին ամանները և գինիները թափում հողի վրա, իսկ եթե ամանը հողում էր թաղված և այն կոտրել հնարավոր չէր, նրանցից մեկը վերցնում էր նիզակը՝ տակը ծակում և գինին թափում հողի մեջ»։

Նույնը նրանք կատարում էին «մեղրի նկատմամբ. ուտում էին որքան կարող էին, իսկ մնացածը գետնի վրա էին թափում, նրանք ջարդում էին մեղվափեթակները, մեղուներին լցնում էին ջուրը, ուստի և բոլոր մեղուները կոտորվեցին»։

Դժբախտաբար այս ուշագրավ ապստամբության մասին մենք այլ տեղեկություններ չունենք։ Սակայն այս ընդարձակ վկայությունները, որ մենք հատվածաբար մեջ բերեցինք, խոսում են այն մասին, որ Հայաստանում տիրող դասերի դեմ զենք էին բարձրացրել ոչ միայն գյուղացիները, այլև հանքերում հարկադրաբար աշխատող հանքափորները։

Այս փաստերը պերճախոս ապացույց են այն բանի, որ 7—3-րդ դարերում Հայաստանը գտնվել էր դասակարգային պայքարի թատերաբեմ և այդ պայքարը ընդգրկել էր ոչ միայն գյուղերը, ավանները, այլև քաղաքները, հանքերը և այլ բնակավայրեր։

5. ԺՈՂՈՎՐԴԱ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԳՅՈՒՂԱՅԻԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 8—9-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

8-րդ դարի առաջին կեսում արաբական երբեմնի հզոր խալիֆաթն ապրում էր ներքին՝ սոցիալական գոտեմարտերի, տնտեսական և քաղաքական խորը դժվարությունների մի ժամանակաշրջան։ 747—750 թթ. խալիֆաթի ներսում ծայր առան ներքին դահակալական կռիվներ և խռովություններ։ Համառ, երկարատև ու արյունահեղ այս պայքարից հաղթանակով դուրս եկան Աբբասյանները։ Սրանց հաջողվեց 750 թ. սպանել Օմեյան դինաստիայի վերջին ներկայացուցիչ Մրվան 2-րդ խալիֆին, որից հետո իշխանությունն անցավ Աբբասյան դինաստիայի ներկայացուցիչների ու Իրաքի արաբական ավազակու ձեռքը։

Արդեն մեկ դարից ավելի խալիֆաթի սարկական լծի տակ հեծող ժողովուրդները և այդ թվում հայերը, ինչպես վկայում է Ղևոնդը, օգտվելով այն հանգամանքից, երբ «Յաճախեաց պատերազմ ի մեջ նոցա» և «տակաւին յերկարէր մարտ պատերազմին... խորհեցան ամենայն նախարարք աշխարհիս ընկենուլ զլուծ հնազանդութեանն և ապստամբել և ի բաց կալ ի հնազանդութենէն Իսմայելի»[1]։

Ժողովրդա-ազատագրական պայքարի կազմակերպչի և ղեկավարի դերում հանդես եկավ Գրիգոր Մամիկոնյանը։ Հայոց զորքի սպարապետ Աշոտ Բագրատունին և հայրենիքի դավաճան այլ նախարարներ դիմեցին բոլոր միջոցների՝ ապստամբությունն իր բնում խեղդելու համար։

Աշոտ Բագրատունին, հարում է Ղևոնդը, նախ աշխատեց համոզել ապստամբ նախարարներին, ասելով, թե նրանք չպետք է մասնակցեն այն «ապիրատութեանն», որ խորհել է Գրիգոր Մամիկոնյանը։ Մենք, ասում էր Աշոտ Բագրատունին, «նուազունք ենք զօրքս... ի մէջ բանութեանն Իսմայելի և ոչ կարեմք զդէմ ունել զօրաց նոցա...»։ Այնուհետև նա համոզում է ապստամբությանը հարող նախարարներին հետևել իր խորհրդին և չձեռնարկել «զբանդ զայդ», այսինքն՝ չապստամբել։

Դուք, շարունակում է Աշոտ Բագրատունին, պետք է տեսնեք վճարեք խալիֆաթի հարկերը և միայն այս դեպքում կարող եք պահպանել ձեր «զստացուածս... զայգիս, զանտառս և զանդաստանս...»։ Սակայն հայ հայրենասերները մերժում են սպարապետին և իրենց

---

[1] Ղևոնդ, էջ 120, 121։

հերթին սպառնում, որ եթե նա չմիանա իրենց, ապա «ոչ մնասցէ առ քեզ և ոչ մի ոք ի զօրաց քոց»։ Մենք, շարունակում են նախարարները, այլևս չենք կարող հանդուրժել այն տագնապը, որը պատել է «երկիրս Հայոց»։ Աշոտ Բագրատունին, ստիպված, առերես միանում է ապստամբներին և, ինչպես ասում է պատմիչը, «առնէր միաբանութիւն ընդ Գրիգորի և ընդ այլոց նախարարացն և դնէին դաշինս ուխտի առ միմեանս միջնորդութեամբ տէրունական նշանին աննենգ պահել զսէր միաբանութեանն»[1]։ Ստանալով հայոց սպարապետի համաձայնությունը, ապստամբ նախարարները «հանդերձ ամենայն ընտանեօք իւրեանց և ամենայն աղխիւբ» մեկնում են «յամուրս աշխարհի Տայոց» և ապստամբում։

Սակայն շուտով իրենց հայրենիքի ու ժողովրդի դավաճան նախարարները և Աշոտ Բագրատունին ոչ միայն լքում են ապստամբներին և խափանում «զմիաբանութիւն նոցա», այլև մեկնում են Բագրևանդ գավառի Հազբ գյուղը՝ նպատակ ունենալով «միաբանել ընդ որդիսն Իսմայելի»։ Այստեղ նրան հետապնդում է Գրիգոր Մամիկոնյանը, գերում և հրամայում կուրացնել նրան։

Հայ ժողովուրդը երեք տարի անհավասար դոտեմարտ է տալիս ոչ միայն արաբներին, այլև սեփական շահագործող դասերին։ Ղևոնդի մոտ պահպանված ընդարձակ վկայությունը հնարավորություն է տալիս ենթադրել, որ ժողովրդական ապստամբությունը շուտով դուրս է գալիս ազատագրական պայքարի շրջանակներից և ստանում հակաֆեոդալական, հակակղերական բնույթ։

Ամենայն հավանականությամբ 747—750 թթ. ապստամբությանն ակտիվ կերպով մասնակցում են նաև պավլիկյանները։ Ճիշտ է, ապստամբությանը մասնակից աշխատավոր զանգվածներին պատմիչը ուղղակի պավլիկյաններ չի կոչում, բայց նրա վկայությունից ակնհայտ է, որ այդ շարժմանը մասնակցել են բոլոր նրանք, որոնք չեն ճանաչել ո՛չ «զերկիրսն Աստուծոյ» և ոչ էլ «զսահ իշխանաց»։

«Եւ ամենայն ուղիմ յանցանաց,— եզրափակում է Ղևոնդը,— երբեալք խառնէին ի զունդ ապստամբուրեանն, որք ոչ ճանաչէին զերկիրսն Աստուծոյ ոչ զսահ իշխանաց և ոչ զպատիս ծերոց, այլ իբրև այլազգի և օտարացեալ՝ ասպատակ ափոեալ զերէին զեղբարս և զազգակիցս իւրեանց, և բազում աւարառուիւնս առնէին, խոշտանգանաւ և զանիւ տանջանս ածեալ ի վերայ եղբարց իւրեանց»[2]։

---

[1] Ղևոնդ, էջ 124։

[2] Նույն տեղում, էջ 123 (ընդգծումները մերն են—Ս. Հ.)։

Այս հատվածից ակնհայտ է, որ հայ ապստամբ ժողովուրդը ապաստակում էր ոչ միայն արաբական բնակավայրերը, այլև ոչընչացնում հարկահավաքներին ու կուսակալներին և սեփական շահագործող դասերին։ Այդ էր գլխավոր պատճառը, որ ապստամբների դեմ միացյալ ճակատ կազմեցին և՛ արաբները, և՛ հայ նախարարները։ Նրանք այլևս չէին կարող հանդուրժել, որ ազատագրական շարժումները ստանային դասակարգային պայքարի բնույթ։ Որ այս ապստամբությունն ուներ դասակարգային բնույթ, ապացուցվում է նաև նրանով, որ Աբբասյան դինաստիայի ներկայացուցիչները հատուկ հրովարտակով դիմեցին հայ նախարարներին՝ խոստանալով պահպանել նրանց իրավունքներն ու արտոնությունները՝ պայմանով, որ սրանք օգնեն խալիֆային՝ այդ ապստամբությունը ճնշելու։

Սակայն, երբ Աբբասյան դինաստիայի ներկայացուցիչները հաղթանակով դուրս եկան դահակալական կռիվներից, ոչ միայն չկատարեցին իրենց խոստումները, այլև վարեցին է՛լ ավելի դաժան վարչական ու հարկային քաղաքականություն։ Նրանք պահանջեցին վճարել ժողովրդական ապստամբության երեք տարիների չվճարված հարկերն ու տուրքերը։ Պահանջեցին պետական դանձարան մուծել նույնիսկ այդ տարիներին մեռած հարկատուների գլխահարկը։

Աբբասյան դինաստիայի հիմնադիր Աբուլ Աբբաս ալ-Սաֆահը (750—754 թթ.) Հայաստանի կառավարիչ նշանակեց իր եղբայր Աբու Ջաֆար ալ-Մանսուրին։ Աբու Ջաֆարը ոչ միայն դաժանաբար ոչնչացրեց ապստամբության առաջնորդներին, այլև տնտեսական և քաղաքական թշվառ դրությունից մեջ դրեց երկրի նյութական բարիքներն արտադրողներին։

Ալ-Մանսուրի հարկային քաղաքականությունը շարունակեցին նրա հաջորդներ՝ Եզիտ, Բաղար և Հասան ոստիկանները։ Սրանց օրոք հայ ժողովրդի դրությունը դառնում է ավելի ողբերգական։ Արաբական ոստիկան-կառավարիչները անցկացնում են ինչպես մարդկանց, այնպես էլ հարկատու օբյեկտների նոր հաշվառում, պահանջում են հարկեր մուծել արծաթ դրամով։ Հարկատու բնակիչներին հասցնում են այնպիսի վիճակի, որ «...Ջարաշար ադահութենէն Ջաֆարի (Ալ-Մանսուրի) այնչափ պակասեաց արծաթն, զի զելն և զէշ դրամի միոյ վաճառէին, զտղայն հինգ դրամի տային պահանջողացն»[1]։ Ղևոնդ պատմիչը Ալ-Մանսուրի հարկային քաղա-

---

[1] Ժամանակագրութիւն տեառն Միքայէլի Ասորւոյ պատրիարքի, Երուսաղէմ, 1871, էջ 363։

քականությունը համեմատում է մեծ աղետի հետ։ Հարկատուները,— վկայում է պատմիչը,— «...ոչ դառնային զկինս փրկանաց անձին իւրեանց...» իսկ հարկահավաքները «...չար կատանօք, գելարանօք և կախաղանօք և դառն տանջանօք կեղէին զկեանս մարդկան»։ Հարկերն ու տուրքերը այնքան ծանր էին, որ հարկատուներից ոմանք «զօղնալ թագչէին. և ոմանք ձիւնահեղձ և գետավէժ լինէին վասն անտանելի ապեմիցն»[1]։ Այս ծանր կացությունից միակ ելքը հայ ժողովուրդը տեսնում էր ազատագրական պայքարի մեջ։

774—775 թթ. արաբական տիրապետության դեմ ժողովրդա-ազատագրական պայքարի գրոշ են պարզում Շիրակի Կոմայրի գյուղի (այժմ Լենինական) բնակիչները. նրանք սպանում են արաբ հարկահավաքներին։ Շուտով Կոմայրիի ապստամբությունն իր արձագանքներն է գտնում Հայաստանի մյուս գյուղերում, շրջաններում, գավառներում։ Ապստամբ ժողովուրդը Մուշեղ Մամիկոնյանի գլխավորությամբ Բագավանի մոտ ջախջախում է արաբական 4 հազարանոց բանակը և շրջապատում Կարին քաղաքը։ Խալիֆայի ստիպված ապստամբների դեմ է ուղարկում շուրջ 30.000-անոց բանակ, բայց Արճեշի հերոսական ճակատամարտում ապստամբները ծանր պարտություն են մատնում արաբներին։ Արաբական կանոնավոր բանակի ճնշման տակ, ինչպես վկայում է Ղևոնդը, «յաշխարհաբնակ» «մերկք և առանց զինուց և անհմուտք պատերազմի» ռազմիկները նահանջում են։ Արաբները դաժանորեն ճնշում են ապստամբներին, պատերազմի դաշտում ընկնում են շուրջ 1500 «յոգամիկ» մարդ, իսկ «ոմանք առ վտանգի տարակուսանացն գետավէժ և ծովահեղձ լինէին»[2]։ Արճեշի ժողովրդական ապստամբությունն արյան մեջ խեղդելուց հետո, արաբական ռազմական ուժերը շարժվում էին դեպի Կարին, որտեղ կենտրոնացել էր հայ ապըստամբների մի մասը։

Արաբական բանակը շրջապատում է Կարինը, բայց ապստամբները հերոսաբար դիմադրում են։ Նրանք, վկայում է Ղևոնդը, գտնվում էին իրար, ասելով «...քաջութեամբ մեռցուք ի վերայ աշխարհիս մեր և ի վերայ ազգիս, և մի տեսցեն աչք մեր կոխան ոտից լեալ պղծալից արանց...»[3]։

775 թ. հայ ապստամբների սակավաթիվ, մոտ 5000-անոց ուժերը, Բագրևանդ գավառի Արծն գյուղի մոտ, հանդիպեցին արա-

---

[1] Ղևոնդ, էջ 135։

[2] Նույն տեղում, էջ 147։

[3] Նույն տեղում, էջ 149։

յական 30.000-անոց բանակին։ Հայ ռազմիկները ցուցաբերեցին չտեսնված հերոսություն. նրանք սկզբնական շրջանում պարտության մատնեցին արաբներին, սակայն ռազմի դաշտում հերոսի մահով զոհվեցին մոտ 3000 մարդ «ի նախարարաց և ի յռամկաց»։ Պատերազմի դաշտում ընկան նաև ապստամբության ղեկավարներ Մուշեղ, Սամվել Մամիկոնյանները, Սահակը և սպարապետ Սմբատ Բագրատունին[1]։

774—775 թթ. ապստամբությունը ճնշելուց հետո, ինչպես վկայում է Ղևոնդը, Հայաստանում «սատկապէս յաճախէին ողբք և աշխարանք», երկրին պատեց «խոր տխրութիւն», «կոծն և սուգն»։ Արաբների վարչական և հարկային դաժան քաղաքականությունը ոչ միայն իր դեմ հանեց հայ, այլև Անդրկովկասի եղբայրական ժողովուրդներին։ Անդրկովկասի շահագործվող ու հարստահարված դասերի ապստամբության գլուխը կանգնեց Բաբեկը կամ Բաբանը։ Բաբեկի գլխավորած գյուղացիական, հակաարաբական և հակաֆեոդալական շարժումը սկսվեց Ատրպատականում և Աղվանքում։ Այս շարժումը պատմության մեջ հայտնի է նաև Խուրամյանների կամ Քուրամյանների անվան տակ։

Արաբական մատենագիր Տաբարին վկայում է, որ Խուրամյանների շարժումը սկսվում է 808 թվականին այժմյան Թալիշի լեռնային մասում՝ Ղարադաղում, շարժման կենտրոնն էր լեռնային Ադրբեջանի Բաղ կամ Բաղդ ամրոց-բերդը։ Սկզբնական շրջանում շարժումը ղեկավարում էր մանր ազնվական՝ Ջավիդան, որի բանակում էր գտնվում շարժման ապագա ականավոր առաջնորդ Բաբեկը։

Բաբեկը մինչև ապստամբության առաջնորդի դերում հանդես գալը «մի փոքր հացի և մի կտոր հագուստի» համար դառնում է Բաղ գյուղի հովիվը։

Բաբեկը ծնվել է Բաղում, չքավոր գյուղացու ընտանիքում. նրա մայրը ծառայում էր Ադրբեջանի հարուստ ընտանիքներից մեկում[2]։

Ոչ միայն Բաբեկն էր չքավոր գյուղացի, այլև նրա հրամանատարների մի մասը ևս գյուղացիներ էին։ Հիշատակվում է, որ նրա աջքի ընկնող օգնական ու բանակի զորավար Թարխանը նույնպես չքավոր գյուղացի էր։

817 թ. անցնելով ապստամբության գլուխը, Բաբեկը գլխավորում է բոլոր «արհամարհվածների», «ավազակների», «ռազմիկների», «կատաղիների», «խոովարարների», «կեղծ ու սուտ դավանան-

---

[1] Ղևոնդ, էջ 150։

[2] Очерк по истории Азербайджана, стр. 57.

ին հետևողների» պայքարը, ինչպես սեփական, այնպես էլ օտար տարաբ նվաճողների դեմ։

Բաբեկի դրոշի տակ էին համախմբվել ոչ միայն գյուղացիները, այլև արաբական քաղաքականությունից դժգոհ հասարակական խավերը։ Այսպես, օրինակ, նրան էին միացել մանր ու միջին հողատերերը, բերդերի և ամրոցների տերերը։ Շատ կարճ ժամանակի ընթացքում նրա բանակի հեծելազորի թիվը հասնում է շուրջ 20.000 մարդու։ Այս թվի մեջ չի մտնում նրա «հոծ հետևակը»։

Սմբատ Արլաբասի օրոք, ասում է Վարդան պատմիչը, հանդես է գալիս «այր մի... Բար անուն... արկանէր դրաղումս ի սուր սուսերի յաղթէն Իսմայելի՝ դերելով զրաղումս... ի միում նուագի սատակէր երեսուն հազար ի պատերազմելն իւրում ընդ Իսմայելի...»[1]։

Բաբեկի գլխավորած շարժումը ոչ միայն հակաարաբական, այլև հակաֆեոդալական, հակակղերական բնույթ ուներ։ Բաբեկյանները պայքարում էին միաժամանակ լիկվիդացնել և վերացնել ֆեոդալական դասակարգի տերունական արտոնությունները և խոշոր հողատիրությունը, ձգտում էին հաստատել պրիմիտիվ հանրություն և հավասարություն։ Այս էր հիմնական պատճառը, որ բաբեկյանները ոչնչացնում էին ոչ միայն արաբ զավթիչներին, այլև սեփական հողատերերին, որոնք ոչ մի կերպ չէին ցանկանում հրաժարվել իրենց արտոնություններից և քաղաքական իշխանությունից։ Բաբեկի գլխավորած սոցիալական պայքարն իր արձագանքները գտավ նաև միջնադարյան Հայաստանում։ Շարժմանը ակտիվ կերպով մասնակցում են հայ և աղվանից իշխաններ՝ Սահլը, Վասակ Սյունեցին, Աբլասադը, Շակի և Փայտակարան քաղաքի տիրակալները, Սյունիքի և Աղվանքի ճնշված ու իրավազուրկ գյուղացիները։

Առանձնապես այս ապստամբության արձագանքները շատ ուժեղ էին Սյունիքում։ Բաբեկին է միանում Սյունյաց Վասակ իշխանաց-իշխանը, նպատակ ունենալով օգտագործել Բաբեկին և Սյունիքը ազատագրել արաբական գերիշխանությունից։ Այս քաղաքական ծրագիրը իրականություն դարձնելու համար Վասակը մեկնում է Ատրպատական, բանակցություն է սկսում Բաբեկի հետ և նրանից օգնական ուժեր ստանալով մտնում է իր երկիրը և այն մաքրում արաբներից։

Վասակին օգնելով Բաբեկը շատ լավ էր հասկանում, որ Սյունիքը գրավելով ստանալու էր ստրատեգիական մեծ նշանակություն

---

[1] Վարդան Բարձրբերդցի, էջ 108—109։

ունեցող երկրամաս՝ արաբների և իրեն թշնամաբար տրամադրված խոշոր հողատերերի դեմ մղվող պայքարում։

Այս դեպքերի առիթով Մ. Կաղանկատվացին գրել է «...Եւ Վասակ Սիմեաց տէր ածեալ զԲաբան ի պարսից՝ եհար զնոսա (արաբներին) և արար փախստական...»[1]։

821 թ. Սյունիքի իշխանաց-իշխան Վասակի մահից հետո, Բաբեկն ամուսնանում է նրա դստերի հետ և ինչպես վկայում են Մ. Կաղանկատվացին և Ստ. Օրբելյանը, «...առնէր ընդ ձեռամբ... զդաւառսն Վերին Վայկունիք, Բերդաձոր, Սիսական, Հարանդ, Ամարաս, Պաղկունք, Մխանք, և Տրի գաւառք»[2]։

Նա դաշինք է կնքում այս դավառների տերերի և Աղվանից իշխանների հետ, մի շարք լուրջ ու ծանր հարվածներ է հասցնում արաբներին։ Սակայն շատ շուտով, երբ Հայաստանի, Աղվանքի ֆեոդալները համոզվում են, որ Բաբեկի գլխավորած ապստամբները պայքարում են նաև սոցիալական և դույքային անարդարության և անհավասարության դեմ, դավաճանում են նրան և անցնում արաբների կողմը։

Ինչպես վկայում է Ստ. Օրբելյանը, նրա բանակը մտած իշխանները «անհնազանդ.եղան... հրամանի և օրինաց Բաբանայ...»։

Բաբեկի գլխավորած շարժումը, առանձնապես իր զարգացմանն է հասնում 9-րդ դ. 30-ական թվականներին։ Նա իր ոլորտի մեջ է առնում Հայաստանը, Վրաստանը, Աղվանից աշխարհը։ Բաբեկի գլխավորած դյուղացիական-ազատագրական շարժումը շուրջ 30 տարիների ընթացքում խարխլեց արաբական խալիֆաթի հիմքերը և ուղի հարթեց նրա անկման համար։ Բաբեկի շարժումը ծանր ու անբուժելի հարվածներ հասցրեց նաև սեփական շահագործող դասերին։

Այս հուժկու ապստամբությունը ճնշելու համար միացյալ ճակատ կազմեցին արաբական բռնակալներն ու տեղական իշխող դասերը, որոնք, ինչպես վկայում է Տաբարին, իրենց պատրաստակամությունը հայտնեցին պայքարելու Բաբեկի դեմ։ «Արաբական Օշին զորավարը նշանակում է 1.000.000 դրամ նվեր այն իշխաններին, ովքեր կբանտարկեն և իրեն կհանձնեն Բաբեկին»[3]։

Սմբատի որդի Սահլը, ասում է Վարդանը, «ըմբռնէ զԲաբան, և առնու յԱփշնէն պարգևս հազարիցս հազար կշիռ արծաթոյ, և այլ

---

[1] Մ. Կաղանկատվացի, էջ 375։

[2] Նույն տեղում, էջ 375—376, Ստ. Օրբելեան, էջ 158—159։

[3] Արաբական մատենագիրները Հայաստանի մասին, էջ 117—118։

ևս հարիւր հազար առնու. ի նմանէ, և զԲաբանայ կարեալ զոսս և զձեռս հանէ զնա ի փայտ»[1]։

Այս դաժան միջոցառումները նույնպես վկայում են Բաբեկի գլխավորած ժողովրդական շարժման լայն ծավալը։

Ապստամբությունը զենքի ուժով ճնշվեց միայն 837 թ.։ Բաբեկի ապստամբությունը ճնշելուց հետո, արաբական խալիֆաթին հաջողվեց ժամանակավորապես վերականգնել իր տիրապետությունը Անդրկովկասում։

Բաբեկի շարժման կողմնակիցների դեմ գործադրած խիստ դաժան միջոցները հասկանալի են դառնում, երբ նկատի ենք առնում շարժման ընդգրկած տարածության ամբողջ վտանգը, տիրող կարգերի համար։

Բաբեկը և նրա շարժման հարազները քարոզում էին գույքային հավասարության գաղափարը. առաջ էին քաշում մարդու քաղաքացիական իրավունքների ազատության պրոբլեմը, գտնում էին, որ մարդիկ պետք է հավասարապես օգտվեն բնության բոլոր բարիքներից։ Բայց այս «հավասարության» սկզբունքը դարձյալ քրիստոնեական վաղ համայնքներին հատուկ հավասարությունն էր, այդ էր պատճառը, որ նրանք հանդուրժում էին այլ վարդապետություններ ի գոյությունը և «պարտադիր չէին համարում անհավատների դեմ պայքարելը»։

Խուրամյանները ինչպես և մազդակյանները քարոզում էին վերացնել ֆեոդալական դասակարգի արտոնությունները, լիկվիդացնել մասնավոր հողատիրությունը և հաստատել պրիմիտիվ հանրություն և հավասարություն։ Բաբեկյանները ոչնչացնելով արաբական զավթիչներին, միաժամանակ ոչնչացնում էին տեղական խոշոր հողատերերին, որոնք պաշտպանում էին արաբներին և չէին ցանկանում հրաժարվել իրենց արտոնություններից։

Բաբեկի գլխավորած ժողովրդա-ազատագրական պայքարը ճնշելուց հետո Մութավաքիլ խալիֆը Հայաստանի կառավարիչ է նշանակում Աբուսեթին (Աբու-Սայիդին) և հանձնարարում նրան հավաքել ապստամբության տարիներին չվճարված հարկերը։ Սակայն հայերը դարձյալ ապստամբվեցին և թույլ չտվեցին նոր կառավարիչին մտնել Հայաստան։ Մինչև խալիֆաթը հեշտ կերպով չէր ցանկանում և չէր կարող հրաժարվել Հայաստանից։ 851 թ. խալիֆաթը Հայաստանի նոր կառավարիչ նշանակեց Յուսուֆ Իբն-Մուհամմեդին։ Յուսուֆը հսկայական զորական ուժով մտավ հայոց,

---

[1] Վարդան Բարձրաբերդցի, էջ 109։

ենթությամբ բանտարկեց իշխանաց-իշխան Բագրատունուն և որպես պատանդ ուղարկեց Սամարրա։ Ասպատակելով Խլաթը, Յուսուֆն անցավ Մշո դաշտը և արշավեց սասունցիների և խութեցիների վրա։ Սասունի և Խութի լեռնային «լի աշխատությամբ և սաստիկ տառապանօք» շահագործվող բնակչությունը զգալով, որ արաբները նույնպիսի դաժանությամբ պետք է վերաբերվեն իրենց հետ, ինչպես վարվեցին Մշո դաշտի բնակիչների հետ, գրոհ են կազմակերպում Մուշ քաղաքի արաբական կայազորի վրա։ Թովմա Արծրունին վառ գույներով է նկարագրում Սասունի և Խութի գյուղացիների հերոսամարտը։ Ապստամբ գյուղացիները, վկայում է պատմիչը, զինված նիզակներով, նետ-աղեղներով, գյուղատնտեսական գործիքներով Խութեցի Հովնանի և Դավթի առաջնորդությամբ «...հասին միաբան բազմութիւնն... եկեալ ի վերայ քաղաքին (Մուշ) պաշարեն զնա և զզօրսն (արաբների) մատնեն ի սատակումն սրոյ...»։ Ապստամբները միաժամանակ բանտերից ազատում են գերի հայերին, իսկ թշնամու թողած հարուստ ավարը «բաժանեն յինքեանս»[1]։ Սասունի և Խութի լեռնականների ապստամբությունն ամենայն հավանականությամբ ուներ նաև հակաֆեոդալական բնույթ։ Թովմա Արծրունին թողել է ուշագրավ տեղեկություն այն մասին, թե ինչպես են վերաբերվում ապստամբ գյուղացիները արաբների, սրբանց ոստիկան Յուսուֆի հետ, այլև այն մասին, որ լեռնականները խիստ ծանր ու դաժան աշխատանքով էին միայն հայթայթում իրենց օրվա պարենը և կարևոր պետքերը։ Նրանք, շարունակում է Թ. Արծրունին, իրենց մերկությունը ծածկելու համար կրում էին բրդյա կոպիտ հագուստներ, ոտներին կրում էին այծերի մորթիներից և մաղերից պատրաստված տրեխներ, և՛ ամառը և՛ ձմեռը բավարարվում էին միևնույն սննդով, հագնում նույն հագուստները[2]։ Հայ գյուղացիությանը այս վիճակում դրել էին ոչ միայն արարները, այլև սեփական շահագործող դասերը։

Սասունցիների և խութեցիների հաղթական ապստամբությունն իր արձագանքները գտավ ոչ միայն ամբողջ Հայաստանում, այլև Վրաստանում ու Աղվանքում։ Անդրկովկասի ժողովրդական այս ապստամբությունը ճնշելու համար Մութավաքիլը 852 թ. շուրջ 200.000-անոց բանակ ուղարկեց։

Խալիֆաթի ռազմատենչ կառավարիչները կարգադրում են Բուղային ոչնչացնել ժողովրդական այրուձին և բոլոր նրանց, ովքեր

---

[1] Թ. Արծրունի, էջ 119—120։

[2] Նույն տեղում, էջ 120—121։

ունակ են զենք կրելու։ Բուղան իր անցած ճանապարհով մեկ բանդում և ավերում է հայոց գավառները, քաղաքները, գյուղերը։ Նա, ասում է պատմիչը, «հրաման տուեալ ելանել յերկիրն Վասպուրական, ողողել, գերել, գերիել զաշխարհն, աւերել և բնաջինջ առնել և մաշել ի սուր սուսերի...»։ Բուղայի արշավանքի հետևանքով «զբազմամարդի գեօղս և աւանս» դառնում են անմարդաբնակ, որովհետև նա ոչ միայն սրի է քաշում ապստամբներին, այլև «զմնացեալսն վարել ի գերութիւն, զկանայս հանդերձ մանկտով...», իսկ «...և զշէնս և զաւանս և զաղաքաքս հրձիգ արարեալ՝ անտպատ կացուցանեն ի մարդոյ և յանասնոյ»[1]։ Այսպիսի դաժանությամբ է վերաբերվում Բուղան նաև վրացիների և աղվանների հետ։ Հայաստանում ժողովրդա-ազատագրական ապստամբությունը ճնշելուց հետո Բուղան «զբազմութիւն զօրացն իւրոց» մոնում է Պարտավ և այստեղից էլ տանում «աւար որոց ոչ գոյր թիւ»[2]։

Չնայած Բուղայի հրոսակախմբերին հաջողվում է ժամանակավորապես ճնշել Անդրկովկասում արաբների դեմ բռնկված ժողովրդա-ազատագրական պայքարը, սակայն ժողովրդական այս շարժումները այնքան էին թուլացրել, առանց այդ էլ ներքին սոցիալական հակասություններում ապրող խալիֆաթին, որ Անդրկովկասում արդեն ստեղծվել էին բարենպաստ պայմաններ վերջնականապես ազատագրվելու արաբական լուծը։ Ժողովրդա-ազատագրական այս պայքարի հետևանքով Անդրկովկասի եղբայրական ժողովուրդները ոչ միայն ծանր և անբուժելի հարվածներ հասցրին երբեմնի հզոր խալիֆաթին, այլև ստեղծեցին բարենպաստ պայմաններ երկրի արտադրողական ուժերի և այդ հիմքի վրա կենտրոնացած պետականություն ստեղծելու համար։ Հայտնի է, որ 850—855 թթ. ապստամբությունից քիչ հետո Աշոտ Բագրատունին հռչակվեց Հայաստանի թագավոր, Հայաստանում դարձյալ սիրեց խաղաղության մի երկար ժամանակաշրջան, որի պայմաններում աննախընթաց թափով զարգացան ֆեոդալական հարաբերությունները, քաղաքները և քաղաքային կյանքը։ Հայտնի է նաև այն, որ այս շուրջ 160 տարիների խաղաղությունը և նոր ակիզը առնող վերածնված քաղաքական կյանքը բեկանեցին և խորտակեցին ավելի կատաղի և բարբարոս սելջուկ-թյուրքական հորդաները։

---

[1] Թ. Ուռհայեցի, էջ 127—128։

[2] Նույն տեղում, էջ 177, 178։

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ*

Ա

Աբբաս — 412
Աբգար թագավոր — 336
Աբդլա խալիֆ — 167, 362, 363
Աբդլա (Աբդլա-Գանգ) — 362
Աբդուահման՝ Ապահունիքի կայսրիների իշխան — 373, 374
Աբեղյան Մ. — 56
Աբլասադ — 502
Աբլ Աբբաս — 195
Աբու-Աբբաս-Ահմեդ ալ Բալածորի —59, 187
Աբու-Աբբաս-էլ Սաֆֆահ — 361, 517
Աբու-Յուսուֆ-Յաղուբ — 359, 360, 370
Աբու-Ջաֆար-ալ-Մանսուր — 361, 367, 517
Աբոմելիք — 59
Աբուսայիթ Բահաթուր — 421
Աբուսաթ (Աբու-Սայիդ) — 522
Աբրահամ կաթողիկոս — 234
Աբրահամ խոստովանող — 252, 258, 261, 262, 295, 340, 354, 355
Աբրահամյան Ա. — 214, 223, 321, 324, 390
Ադաթանգեղոս — 55, 68, 87, 88, 107, 108, 125, 131, 132, 151, 165, 170, 174, 177, 193, 227, 231, 232, 234, 240—242, 252—254, 265, 293, 349, 350, 452, 453, 455, 474
Ադամ — 488
Ադոնց Ն. — 15, 16, 91—93, 95, 96, 113—115, 117—119, 125, 129, 132, 136, 137, 140, 141, 149, 150, 156—158, 170, 177, 207, 212, 264, 267, 269, 276, 278, 326—329, 352, 354, 422, 423, 433, 435, 444
Ադրիանոս կայսր — 337
Աթանադինես — 202
Աթանաս — 382
Աթանաս Աղեքսանդրացի — 254, 475
Աժդահակ — 78
Ալ-Մուհադասի — 69
Ալի-Զադե — 36
Ալա — 366
Ալի — 236, 329, 439
Ալիշան Ղևոնդ — 9, 10, 57, 177, 196, 318, 324, 381, 382, 385, 391, 392, 408, 409, 414, 421, 461, 465, 467
Ախմեդ-ալ-Յակուբ — 184
Ակինյան Ն. — 265
Ակսակով Կ. Ս. — 93, 94
Ահմեդ — 374
Ահմեդ-իբն-Խալիդ — 181
Ահմեդ-իբն-Վադիհ Իսպահանցի — 58
Աղան Արծրունի — 288—290
Աղբիանոս եպիսկոպոս — 134, 197
Աղբուղա՝ Իվանի Զաքարյանի որդին — 397, 406
Աղբուղա պարոն — 420
Աճառյան Հ. — 69, 129, 130, 230, 238, 239, 264, 267, 268, 326—328, 385, 398, 402, 403, 410, 411, 414, 422, 433, 434, 444, 452
Ամատունի Ս. — 411, 419
Ամատունիներ — 124, 137, 243
Ամիր Զաքարե — 407
Ամսաջան — 405
Անագովել — 381
Անահիտ—193

* Կազմել է Վ. Ա. Հարությունյանը

Անանիա — 412
Անանիա Շիրակացի — 57, 223, 403, 445
Անդովկ Սյունի — 106, 137
Անտոն — 240
Աշոտ — 324, 374, 375, 382, 413,
Աշոտ Սյունի՝ իշխան — 381, 415
Աշոտ՝ Սյունյաց իշխանաց իշխան — 375, 381, 393, 395, 415
Աշոտ Բագրատունի իշխան — 148, 183, 235, 329, 330, 438, 515, 516
Աշոտ Բագրատունի՝ իշխանաց իշխան — Աշոտ I — 188, 189, 412, 439, 460, 461, 524
Աշոտ Բագրատունի II — 182
Աշոտ Բագրատունի III — 405
Աշոտ՝ Դագիկ Ծառնիշահի հայրը — 397, 152, 154, 464
Աշոտ Արծրունի — 181, 236, 365, 366. 373
Աշոտ Մամիկոնյան — 196
Աշուշա բդեշխ — 142, 146,
Աշրաֆ — 412
Ապլղարիբ մարզպան — 420
Ապուհեշամ — 236
Ապուսկիճ Արծրունի — 181
Ապուսեթ ոստիկան — 365, 366
Ապպիանոս — 42, 222
Առանձաբ Ամատունի — 145
Առաստամ Գնունի — 274
Առան Մագիստրոս — 410, 412, 414, 451
Աստրնագիրպալ — 52
Աստվածակալ եպիսկոպոս — 202
Ասփև — 402
Ավաղ տիրապակ — 407
Ավալիանի Ս. — 31
Ավդալբեկյան Թ. — 423, 433, 435, 414, 450
Ավդիև Վ. Ի. — 211, 219, 220
Ավդուլա — 318
Ավետիքյան Դ. — 433, 434
Ատամ Գնունի — 131, 269
Ատրիկոս պատրիարք — 488
Ատրամիզդ մարզպան — 291, 346
Ատրամայիս — 101
Ատրամանեակ — 99, 101
Աբբա — 102
Արգամ — 121
Արենդս Ա. Կ. — 37
Արենս Բ. — 429
Արիստակես Լաստիվերտցի — 144, 149 182, 237, 244, 245, 317
Արիստակես եպիսկոպոս — 197
Արծրունիներ — 106, 129, 148
Արզուն — 406
Արշակ II — 56, 105, 107, 122, 124, 126, 133, 144, 152, 163, 175—177, 197, 202, 256, 348, 349, 481, 482
Արշակ III — 132, 135, 247
Արշավիր — 298
Արշավիր Կամսարական — 123, 131, 137, 146, 223
Արտակ Պալունի — 146
Արտաշես — 247
Արտաշես I — 92, 96, 114—116, 121 222, 224, 228, 233, 243, 244, 255 337
Արտաշես՝ պարսից թագավոր — 336
Արտաշիր՝ պարսից թագավոր — 102 137, 138
Արտավազդ — 56, 120, 121, 163, 255
Արտավազդ Մամիկոնյան — 134
Արտեն — 162
Ափշին ոստիկան — 372, 437, 440, 441 466

Բ

Բարգեն՝ Սյունիքի իշխան — 216, 415 437, 438
Բարեկ (կամ Բարան) — 515—522
Բարիկ՝ Սյունյաց իշխան — 106, 132, 237
Բագար ոստիկան — 517
Բագրատ՝ արիազնների թագավոր — 317
Բագրատ Վիսկեցի — 454, 465, 467
Բագրատունիներ — 129
Բագրատ Բագրատունի — 366, 523
Բագրատ Մագիստրոս — 449
Բազ — 101
Բալաձորի — տես Աբու Աբբաս-Ահմեդ ալ Բալաձորի
Բակուր՝ Աղձնյաց բդեշխ — 105, 271

Բահադին — 318
Բահաթրյան Ս. — 11—13, 19, 20, 212, 276, 277
Բայբուրդյան Ե. — 63, 66, 67
Բասամյանց Վ. — 9
Բարբարս Ջ. — 57
Բարթիկյան Հ. — 501
Բարպամբրա Նահապետ — 222
Բարշամ — 193
Բարսեղ Կեսարացի — 168—170, 254, 268, 455, 458, 459, 475, 477
Բարսեղ կայսր — 505, 506
Բարտոլդ Վ. Վ. — 33, 36, 40, 451,
Բել — 99
Բելյաև Ի. Դ. — 93, 94
Բերձենիշվիլի Ն. Ա. — 33, 328
Բզդոխայ — 102
Բշր՝ արաբական զորավար — 182
Բուագիլբեր — 369
Բուլենվիլ — 110
Բուզա — 181, 187, 235, 236, 436, 523, 524
Բուպակ՝ իշխանաց-իշխան — 238, 375
Բուրխան Ղազի — 331, 384
Բրուններ — 110

Գ

Գագիկ Արծրունի — 59, 61, 236, 241, 329, 364—366, 372
Գագիկ Բագրատունի — 317, 372, 412, 441, 447, 448
Գագիկ Շահնշահ — 318, 381, 397, 405, 452, 454, 464
Գաղիշո Խորխոռունի — 162
Գառնիկ — 243
Գարագաշյան Ա. Մ. — 13, 132, 276, 277, 352, 484
Գաֆուրով Բ. Գ. — 35
Գգիհան՝ Սյունյաց իշխան — 252
Գեղամ — 101, 243, 255
Գեշ՝ ղաղմաշի — 467
Գեղմարդ՝ ձեռնավոր — 418
Գեորգ իշխան — 382, 385
Գեորգ II կաթողիկոս—437
Գիգո — 94, 110
Գիրկև — 110
Գյուտ կաթողիկոս — 195, 244
Գյուտ Վահևունի — 146, 162
Գնել — 106, 122, 124, 145
Գնթունիներ — 123
Գոգի — 245
Գորգլևսկի Վ. Ս. — 35, 36
Գոֆել — 357
Գուշար—122
Գուրգեն—245
Գուրգեն Արծրունի—148, 181, 236, 436
Գուրգեն՝ Մոկաց իշխան Գրիգորի եղբայրը—441
Գվրեխիշվիլի Դ. Վ. — 33
Գրեկով Բ. Դ.—296, 297
Գրիգոր՝ Աշոտ իշխանի եղբայրը — 148, 182
Գրիգոր ազա — 414
Գրիգոր՝ Գրիգոր Պահլավունու որդին — 259
Գրիգոր եպիսկոպոս — 375, 381
Գրիգոր իշխան — 324
Գրիգոր կաթողիկոս — 394
Գրիգոր վարդապետ — 320
Գրիգոր տանուտեր — 449
Գրիգոր՝ Քարթլիի մամասախլիս — 142
Գրիգոր Լուսավորիչ — 127, 165, 166, 174, 192, 193, 195, 197, 199, 201—203, 207, 212. 219, 231, 232, 240, 241, 254
Գրիգոր Մամիկոնյան — 515
Գրիգոր Նարեկացի—434, 435
Գրիգոր Պահլավունի—239
Գրիգոր Սարկավագապետ—502
Գրիգոր Վկայասեր—259
Գրիգոր Տաթևացի—443

Դ

Դանիել Աղթամարցի — 465
Դավիթ—321, 374
Դավիթ Ալավկա որդի—47, 321
Դավիթ Խութեցի—523
Դավիթ Սահառունի—196
Դավիթ՝ Տաթևի վանահայր—388
Դավիթ՝ սեպուհ—149
Դավթյան Ա.—201, 456

Դատ իշխան—172
Դատաբեն—104, 311
Դարեհ I—77
Դեհկան զորավար—178
Դենշապուհ—203, 239, 291, 311, 129
Դերենիկ Արծրունի—154, 236
Դինավերի—338
Դիոկլետիանոս—169
Դիոնեսիոս Թել-Մահրացի—39, 511
Դյուրո—111
Դրուսպ—56, 123, 233

Ե

Եղանդուխտ—252
Եղիա՝ ոստիկան—167, 316, 138, 139, 517
Եղյան Կ., Եղով—194, 422
Եղնիկ Կողբացի—444, 446, 485
Եղր կաթողիկոս—199, 231, 439
Եղիազարյան Ս.—402, 403, 408, 411, 444, 445
Եղիշե—14, 55, 56, 88, 108, 138, 139, 145, 152, 156, 157, 159, 161, 162, 166, 171, 176, 178, 179, 203, 223, 226, 232, 233, 242, 243, 253—255, 258, 261, 262, 265, 270, 271, 273, 279, 280, 282, 292, 294, 295, 299, 300, 344—347, 386, 387, 423, 427, 429, 431, 434, 436, 444, 446, 452, 453, 463, 474, 482, 483
Եպիփան—240, 253, 298
Եսայի կաթողիկոս—439
Եսայ—225
Եվսեբիոս—134
Եվստաթիա Մցխեթացի—112
Երախնավ—123
Երեմյան Ս. Տ.—28—30, 211, 215, 259
Երվանդ Բագավոր — 243, 336
Եվրեմ—259

Զ

Զախոդեր Բ. Ն.—36, 38
Զամինյան Ա.—500
Զանդարան—162
Զաստիրը Հարարավոխա—252, 273
Զասուլիչ Վերա—75
Զարեհ—92, 96, 114, 116
Զարպհանալյան Գ.—289
Զաքարե ամիրսպասալար — 321, 376, 395, 442
Զաքարե—397
Զաքարե Հռետոր—427, 429
Զաքարե Շահնշահ—417
Զաքարյա կաթողիկոս—236
Զեռ—193

Է

Էլ-Մահդի խալիֆ—358
Էմին Մկրտիչ—103, 129, 136, 137, 149, 150, 156, 265
Էնգելս Ֆ.—25, 36, 41, 42, 64, 67, 58, 74, 81, 87, 96, 98, 100, 101, 111, 191, 194, 206, 207, 217, 218, 249, 335, 470, 471, 474, 486, 509, 510
Էնեսար—110
Էվերս—93

Թ

Թաթիկ—464
Թաթուլ իշխան—395
Թաթուլ Դիմաքսյան—146
Թալես—407, 419
Թարխան զորավար—519
Թեոդորոս կայսր—348,489, 504
Թեոդորոս Մոպսուեստացի (կամ Մոպսեստացի)—489, 490
Թեոդորոս Ռշտունի—185, 437
Թիեռ—110
Թոզբես—407, 419
Թոռնիկ Բագրատունի—181, 182
Թոմա Արծրունի—39, 58, 59, 61, 103, 144, 148, 149, 181, 235, 244, 247, 365—367, 373, 374, 387, 388, 436, 452, 453, 523, 524
Թովմա Սլավոնացի—504
Թորամանյան Թ.—405
Թորգոմ—131
Թումանյան Մ. Գ.—51

Ժ

Ժորդանիա Ֆ.—31

Ի

Իբն-ալ-Աթիր—59
Իբն-ալ-Ֆակիհ—58, 70, 184, 185
Իբն-Դոկ (կամ Իբն-Դոկն)—363, 439
Իբն-Խալդոն—60, 358
Իբն-Խորդադբե—340, 358
Իբն-Կոդաման—358
Իբն-Հաուկլ—358
Ինճիճյան Գ.—8, 9, 101, 129, 132, 135—137, 140, 149, 155, 156, 158, 352
Իսահակ—438
Իվանե—245
Իվանե Զաքարյան — 246, 376, 395, 397, 398, 401, 406, 442, 448, 461

Լ

Լալայան Ե.—63, 65—67
Լանկ Թեմուր—117
Լատիշև Վ. Վ.—239
Լեհման Հաուպտ—60
Լենին Վ. Ի.—219, 305—307, 463
Լենցման Յա. Ա.—218
Լեշկով Վ. Լ.—93, 94
Լեո—19—21, 97, 212, 257, 278, 279
Լեոնտի Մրովելի—109
Լեոնտովիչ Ֆ. Ի.—93
Լևոն III կայսր—466, 504
Լիպարիտ Օրբելյան—382
Լիպշից Ե.—504
Լյաշչենկո Պ. Յա.—211
Լյուդովիկոս XIV—369

Ռ

Ռաղբիկ Խորասան—394
Ռալաթյան Բ.—59, 188, 357, 368
Ռալաթյանց Գրիգոր—289
Ռախանաշվիլի Ա.—31
Ռաշուտ—383, 407
Ռաչատրյան Ա.—52
Ռաչիկ կաթողիկոս—452, 460
Ռաչիկյան Լ.—465, 477
Ռարքանդա խան—465
Ռեշան—105
Ռոճն—419
Ռոշակ—398, 401, 407
Ռոռ—101
Ռոսրով III (Հայոց թագավոր)—87, 101, 105, 107, 124, 134, 174, 177, 197, 234, 271, 312—314, 337
Ռոսրով I Անուշիրվան՝ պարսկական թագավոր—338—341, 343, 356
Ռոսրով II՝ Սասանյան թագավոր—235, 243
Ռոսրովանուշ՝ հայոց թագուհի — 407—409
Ռոբեն երեց—261, 262, 295, 354, 355
Ռոբեն Ռոբիսոնի—146
Ռոբեն վարդապետ Ստեփանե—265
Ռոբիսոնիներ—106, 129
Ռուանդզես—397
Ռուզեմա ոստիկան—186, 187, 235
Ռուֆլու Բուղա—406
Ռուշուշ—454
Ռուսան—406
Ռրիստենեն Ա.—180
Ռրիստոֆոր—505, 506

Ս

Սալե—363

Կ

Կակարաձե Ս.—32
Կամսար իշխան—123
Կամսարականներ—105, 106, 129, 137
Կավաղ I—338, 348
Կավելին—93, 94
Կատրանիդե՝ հայոց թագուհի—405, 412, 413
Կարաուլով Ն. Ա.—39, 69, 184, 185
Կարբեաս—505
Կարինյան Ա.—501
Կարստ Հ.—150
Կիաքսար—78, 87
Կիրակոս Գանձակեցի—58, 88, 103, 106, 166, 167, 184, 246, 259, 260, 316, 331, 363, 368, 376, 442, 443, 452—454
Կիրակոս Հռետոր—259
Կյուրոս Մեծ—78, 80, 82, 84, 86

1131—34

Կողմնա իշխան—123
Կոմիտաս եպիսկոպոս—234
Կոմիտաս կաթողիկոս—502
Կոստանդին Մեծ—169, 298, 319, 436, 449, 504
Կոստանյանց Կ.—57, 132, 136, 137, 161, 177, 195, 196, 209, 352
Կորյուն—199, 487—490
Կրամեր Ա.—357
Կրյուգեր Կ.—429
Կրոնիդես—240

Հ

Հարիր ոստիկան—59
Հարիր-իբն-Մասամ ոստիկան—188
Հազկերտ II—139, 145, 147, 161, 171, 173, 175, 203, 226, 232, 261, 262, 272, 291, 343—345, 350, 354, 446
Հազրպեկ—465
Հակոբ Մծբնեցի—69
Հակոբ—225
Հակոբ Եպիսկոպոս—173, 271, 399, 432
Հակոբյան Վ.—465
Համազասպ Արծրունի—181
Համազասպ Մամիկոնյան—137, 138, 145, 198
Համամ՝ իշխան—437
Համդալլահ Ղազվինի—33, 34
Համզա—405
Հայկ նահապետ — 99—101, 132, 136, 157, 160, 222, 226, 243
Հաշիմ՝ խալիֆ—361
Հասան՝ ոստիկան—517
Հասան՝ սեպուհ—148
Հասան՝ Գրիգորի որդի—375, 415
Հավիկ՝ ձեռնավոր—418
Հարմա—101
Հարությունյան Բ. — 27, 28
Հարությունյան Ս.—56
Հարուն-ալ-Ռաշիդ—358, 363
Հերակլ—39, 103
Հերթ՝ աշխարհակալ—361
Հերոդոտ—77, 87, 168, 338
Հմայակ Մամիկոնյան—198, 271
Հմայակ Դիմաքսյան—146
Հյուրշման Հ. — 158, 159, 269, 432—435, 444
Հովհան Դամասկոսցի—487
Հովհան Մամիկոնյան՝ պատմիչ—58, 166, 167, 194, 195, 199, 200, 234, 240, 241, 347, 432
Հովհան Մայրագոմեցի—355, 356, 439
Հովհան Մանդակունի—55, 56, 208, 225, 356
Հովհան Ոսկեբերան—208, 259, 260, 434
Հովհաննես—454
Հովհաննես՝ իշխան—382
Հովհաննես՝ պատրոն—414
Հովհաննես՝ վանահայր—461
Հովհաննես՝ Գագիկ Շահնշահի որդի—381
Հովհաննես Գարեգյան—196
Հովհաննես Գրասխանակերտցի—58, 61, 71, 103, 178, 182, 184, 186, 157, 200, 234, 235, 244, 274, 329, 364, 365, 369, 372, 396, 437—441, 466
Հովհաննես Եպիսկոպոս—229, 238, 381, 394, 400, 414
Հովհաննես Որոտնեցի—443
Հովհաննես Զմշիկի—183,433
Հովնան—131
Հովնան Խութեցի—523
Հովսեփ կաթողիկոս—187, 200, 205 244, 491
Հովսեփյան Գ.—196, 327, 368, 416 419, 461
Հրահատ—223, 325
Հրահատ Կամսարական—288
Հուլավու խան—316
Հուսիկ կաթողիկոս—198

Ձ

Ձագիկ—415

Ղ

Ղազան խան—36, 37
Ղազար Փարպեցի—14, 55—57, 59, 60, 68, 70, 78, 102, 106, 108, 109, 124, 127, 130—132, 137, 139, 144—147, 151—153, 157, 159, 161, 162, 171,

173, 175, 177, 198, 199, 208, 223, 225, 247, 251—254, 256, 258, 260—262, 265, 270, 271, 273, 274, 288—290, 293, 299, 300, 341—344, 354, 355, 452, 455, 474, 477
Ղայիբ—407, 419
Ղափանցյան Գ.—52, 53, 63, 64, 67, 125, 126
Ղաֆադարյան Կ.—63, 69, 395, 406, 467
Ղևոնդ երեց—39, 103, 166, 167, 184—186, 243, 244, 316, 357, 360—364, 368, 422, 438, 439, 515, 517—519
Ղլտճյան Ա.—224

Ճ

Ճնն-Բակուր—102

Մ

Մամգոն—102
Մաթեոս Ուռհայեցի—58, 71, 179, 181—183, 432, 433
Մալխասյանց Ստ.— 129, 130, 229, 230, 238, 239, 264, 267, 238, 277, 386, 398, 402, 403, 410, 422, 434, 441, 452
Մակլի—406
Մահմեդ—372
Մահան—382, 385
Մամիկոնյաններ—102, 129
Մայլ Ա.—129
Մանանդյան Հ.—23, 24, 27, 53, 80—85, 87, 92, 95, 96, 113, 115—118, 125, 126, 130, 132, 136, 143, 150, 154, 158, 159, 164, 165, 177, 212, 213, 229, 238, 239, 258, 259, 262, 263, 266, 269, 276, 279, 280—283, 289, 315, 326—329, 353, 402, 403, 408—413, 418, 432, 433, 435, 444, 445, 450
Մանավազ—101
Մանավազյան տոհմ—107, 134,
Մանաճիր Ռշտունի—173
Մանաճիր զորավար—271
Մանեճ—162
Մանու—367
Մանուկ՝ իշխան—172
Մաս Ն.—63, 129, 140, 142, 269, 395, 402, 403, 411, 412
Մաուիսոս կայսր—336
Մավերդի—360
Մար իշխան—172
Մարգպետական տոհմ—129
Մարեամ—60, 393
Մարկո Պոլո—57
Մարկվարտ Հ.—257
Մարքս Կ.—41, 42, 75, 76, 89, 111, 219, 220, 302—304, 306—308, 332—334, 340, 369, 370, 461—463, 479, 471
Մաքս Վեբեր—112
Մելիք-Թանգյան Ն.—202, 205, 287, 481, 492, 500
Մելիք—Բախշյան Ստ.—501
Մելիքսեթ-Բեկ Լ.—39, 511
Մեհենդակ Ռշտունի—137
Մեյեր Ա.—129, 130
Մեսրոպ եպիսկոպոս—154
Մեսրոպ Սաղատոց—174, 199, 486—488, 490, 492
Մերուժան Արծրունի—104, 349
Միքայել Փորթուգալ Փաշա—433, 434, 444, 445
Միքայել III կայսր—245, 505
Միքայել Ասորի—367, 368
Մխիթար Գոշ—9, 18—20, 27, 28, 35, 47, 57, 58, 71, 72, 223—226, 246, 279, 315, 318, 319, 321, 329, 330, 376, 377—380, 395, 396, 400, 414, 430, 447, 448, 465—467, 484
Մխիթար—400
Մխիթար տանուտեր—449
Մխիթարիչ տանուտեր—383, 407
Մխիթարյանց Ա.—56, 251, 324, 426, 484
Մոգեստ—168
Մովսես—288
Մովսես Խորենացի — 11, 55—57, 60, 99—103, 120—123, 125, 127, 131, 132, 137—139, 151, 155—161,163—165, 170, 178, 197—199, 202, 208, 222, 223, 226, 228, 229, 233, 242,

243, 247, 248, 253, 255—257, 265 266, 270, 271, 272, 279, 298, 299, 336, 337, 341, 343, 348—351, 423, 431, 455, 473, 478, 179—482, 488—490
Մովսես Կաղանկատվացի—23, 57, 163, 234, 248, 266, 267, 279, 280, 282, 361, 368, 401, 427, 521
Մուավիա խալիֆ—185
Մութավաքիլ խալիֆ—360, 522, 523
Մուհամեդ—167, 368
Մուհամեդ իբն-Մրվան—59, 186
Մուշեղ Արծրունի—181, 236
Մուշեղ Մամիկոնյան—108, 131, 175, 178—180, 199, 351—353
Մուշեղ Մամիկոնյան (8-րդ դար)—518, 519
Մուշեղ Վահևունի—148
Մուշկան Նխաղավուրտ—226
Մուսա—367
Մուսաբի—367
Մուսե—181, 366
Մուսթային խալիֆ—188
Մուսայելյան Հ.— 16—19, 242, 276, 277, 352, 357
Մրջյունիկ երեց—124, 197
Մրվան II խալիֆ—362, 515

Յ

Յազդ Սյունի—147
Յակուտ—70
Յաղուբ Ակկոյունլու սուլթան—384
Յակուբովսկի Ա. Յա—35
Յուղրաշյան Կ.—501
Յուշկով Ս. Վ.—297
Յուսիկ—202
Յուսուֆ սատիկան—182, 245, 246, 329, 365, 366, 369, 441, 522, 523

Ն

Նալբանդյան Հ.—358
Նեստոր—487, 490
Ներշապուհ—153, 202, 206, 225, 347, 401, 431
Ներսեհ պարսից արքա—102
Ներսեհ Կամսարական—223
Ներսես՝ Աղվանից կաթողիկոս—439
Ներսես՝ Շիրակի տեր — 106
Ներսես Լամբրոնացի—259
Ներսես Ճիճրակացի—351
Ներսես Տայեցի—197
Ներսես Շնորհալի—175, 179, 183, 194, 197, 198, 202, 206, 225, 242, 246, 257, 259, 288, 322, 349, 385, 401, 416, 427, 431, 478, 491
Նյոլկերն—143, 316, 338, 339
Նորայր Բյուզանդացի—352, 354
Նոր սատիկան—437

Շ

Շաբո Վ.—511
Շահանդուխտ—374, 380, 433
Շահխաթունյանց Հ.—161, 176, 177, 318, 324
Շահնազարյանց Կ.—390
Շամիրամ—247
Շամուել—198, 351
Շամպոնն—111
Շապուհ—102, 104, 106, 126, 132, 133, 166, 178, 337, 348, 350, 351, 401, 436, 482
Շապուհ իշխան—134
Շապուհ Բագրատունի—60, 154
Շարա—101, 122
Շարաշ—123
Շիրին խաթուն—407, 419
Շմավոն Անձևացի—131
Շուշանիկ—143

Ո

Որդունանց սուլթան—107, 134
Ոտուրտա—420
Որմիզդ—387, 446

Ու

Ուխտանես եպիսկոպոս—109
Ուման՝ զորավար—372
Ուռնայր—247

Չ

Չամչյան Մ.—7, 8, 500

Պ

Պակարոս—222
Պայլու խաթուն—407, 419
Պապ թագավոր—135, 163, 166, 169, 170, 197, 232, 348, 352, 353
Պատկանյան Ք.—433
Պետրոս Գետադարձ—182, 401, 420, 452
Պետրուշևսկի Ի. Պ.—38, 39, 327, 328, 330, 331, 384
Պերոզ—280, 316
Պիգուլևսկայա Ն. Վ.—39, 154, 189, 273, 339, 340, 429, 511
Պիոտրովսկի Բ. Բ.—51, 52—54, 63, 64, 67
Պլինիոս—168
Պոլ դը Լագարդ—165
Պողոս առաքյալ—255, 459, 508
Պողոս Սամոստացի—490
Պոմպեոս—473
Պրավոլևսկի—360
Պրոկոպիոս Կեսարացի—125, 436, 437

Ջ

Ջալալ—381
Ջալալյան Ս. — 324, 325, 381, 382, 418
Ջավախով Ի. Ա.—14, 15, 23, 24, 32, 90—92, 109, 142, 143, 150, 156, 239, 269, 276, 277, 279
Ջավիդա—519
Ջոն՝ Կորդուսաց իշխան—172
Ջոսվեյն—331
Ջվանշեր—238, 281, 388, 415

Ռ

Ռաշիդ-ադ-դին—36, 37, 331
Ռոստովցև Մ.—112, 113, 123

Ս

Սարարիս—86
Սաթենիկ—255
Սահակ իշխան—223, 245, 246, 373, 415, 437, 438
Սահակ Բագրատունի մարզպան — 132, 137, 153, 234, 252, 274, 519
Սահակ կաթողիկոս—56, 108, 137, 152, 196, 198—200, 202, 203, 206, 208, 288, 290, 351, 376, 426, 427, 431, 455, 456, 484, 485, 488—492
Սահլ իշխան—520, 521
Սամուել կաթողիկոս—142
Սամուել Անեցի—103, 368
Սամուել Վահևունի—148
Սամվել Մամիկոնյան—519
Սամվելյան Խ.—21, 22, 97, 113, 114, 118, 212, 214, 229, 238, 239, 258, 259, 261, 276, 279—283, 352
Սանեսան արքա—313
Սանասարյան Հ.—52
Սասան—102
Սասան ձեռնավոր—418
Սալին—110
Սատրիկ—318
Սարասար—123
Սարգիս՝ տանուտեր—449
Սարգիս Ջաքարյան—395
Սարգիս Տիլենց—448
Սարգիս Վահևունի—148
Սարգսյան Բ.—381, 500, 502
Սենեսս—39, 102, 103, 144, 148, 166, 176, 180, 184, 185, 199, 234, 355, 360, 361, 434, 436, 437
Սեդա—409
Սեղբեստրոս պապ—349
Սենեքերիմ—236
Սենեքերիմ՝ Սյունյաց թագավոր — 375, 382, 385
Սենոպ Սահմադին—407, 408, 417, 420
Սևադա—374, 380, 433
Սիթիխաթուն—406
Սիլվանսկի Ն. Պ.—95
Սիմոն կաթողիկոս—427
Սիմոն վանահայր—238
Սիոն կաթողիկոս—265
Սիսակ—102, 255
Սկունիներ—243
Սկավրոս—473
Սմբատ Աբլաբաս—520
Սմբատ Բագրատունի—187, 329, 330, 349, 375

Սմբատ Բագրատունի թագավոր — 178, 236, 366, 369, 372—374, 394, 396, 437, 440, 466
Սմբատ Բագրատունի սպարապետ—519
Սմբատ Գունդստաբլ — 47, 224, 319, 395—397, 414, 447, 448, 466
Սմբատ զորավար — 121, 222, 255
Սմբատ իշխան—236, 375, 432
Սմբատ՝ Սյունյաց իշխան—182, 235, 246, 373—375, 381, 415, 416
Սմբատ Օրբելյան—238, 382
Սմբատյանց Մ. — 389, 461,
Սոլովև Ս. Մ.—93, 94
Սողոմոն եպիսկոպոս—325, 389
Սոսի—405
Սուլեյման սուլթան—363
Սուլեյման Քիոնշերի կուսավարիչ—367
Սուլիման զորավար—103
Սուրեն՝ մարզպան—108, 428, 429, 432,
Սուրմակ կաթողիկոս—205
Սուփան (Գրիգոր Սուփան)՝ Սյունյաց իշխան—245, 317, 328, 330, 383—385, 415, 464
Սպանդարդ Կամսարական—105
Սպիրիդոն — 109
Ստեփանոս Տարոնեցի (Ասողիկ)—39, 61, 167, 205, 233, 236, 237, 336, 349, 356, 361—363, 447, 448
Ստեփանոս Օրբելյան—58, 60, 127, 134, 144, 147, 182—184, 195, 237, 238, 245, 246, 323—325, 328, 329, 368, 372, 374—376, 380—382, 334, 385, 388—395. 399, 401, 415, 416, 418, 432, 433, 438, 460, 468, 521
Ստեփանոս եպիսկոպոս—381, 420
Ստեփանոս ձեռնավոր—407, 117
Ստրաբոն—69, 82, 90, 91, 338—340
Սորոսվ Վ. Վ.—210, 211

Վ

Վախուշտի Բագրատիոն—31
Վահան Ամատունի—131
Վահան՝ Արծրունի—181, 236
Վահան Մամիկոնյան—88, 139, 152, 173, 199, 225, 252, 256, 260, 271, 273, 274, 288, 289, 299, 355
Վահագ—318
Վահրամ՝ սպարապետ—148
Վահրամ՝ պարոն—325
Վահրամ՝ իշխանաց իշխան Համզեի որդի—405
Վահրամ Տերունի—148
Վահրամ Քեթոռաբ—407
Վաղարշակ-Տրդատ (Տրդատ I)—121, 123, 132, 157, 159, 163, 233, 298, 350
Վաղարշակ՝ Արշակունյաց թագավոր—10
Վաղենտիանոս կայսր—348
Վաղինակ՝ Սյունյաց իշխան—105, 172
Վաչագան՝ Աղվանից թագավոր—23, 169, 266, 268, 280, 282, 457, 458, 459, 497
Վաչե Մամիկոնյան—104, 105, 124, 133, 134, 174, 177, 195, 197
Վասակ՝ իշխանաց իշխան—220, 221,
Վասակ Սյունի—108, 134, 146, 147, 162, 175, 226, 233, 238, 242, 255, 265, 270, 293, 342, 343, 346, 401
Վասակ՝ Սմբատի որդի—374, 375, 381
Վասակ՝ Գրիգոր Սուփանի եղբայր—415
Վասակ—245, 246
Վասակ՝ Սյունյաց թագավոր—395
Վասակ՝ Գրիգորի որդի—181
Վասակ Արծրունի—181
Վասակ Մամիկոնյան—88, 113, 137, 153, 175, 178, 252
Վասիլ I կայսր—189
Վարազ-Ներսեհ Վահևունի—148
Վարազշապուհ Պալունյանց—162
Վարազշապուհ մարզպան—251
Վարազտիրոց—103
Վարդ Մամիկոնյան—256
Վարդան—205
Վարդան Այգեկցի—320, 416, 417, 449
Վարդան Բարձրբերդցի—103, 197, 198, 205, 246, 316, 367, 520—522
Վարդան Մամիկոնյան—88, 122, 139, 145—147, 178, 253, 265, 270, 271, 345, 348, 481, 483
Վարդան Մամիկոնյան՝ Համազասպ Մամիկոնյանի որդի—198

Վարդան Մամիկոնյան՝ Վասակ Մամիկոնյանի եղբայր—139
Վարդան վարդապետ—320, 323
Վարդանյան Գ.—12, 13
Վինոգրադով Պ. Գ.—94
Վլիթ՝ խալիֆ—186
Վորան—369
Վռամ—108, 349
Վռամշապուհ—349
Վրթանես—107, 197, 202

Տ

Տարարի—142, 180, 316, 338—340, 519, 521
Տարսայիճ Օրբելյան — 402, 417, 418, 465
Տեր-Ավետիսյան Ս.—60
Տեր-Դավիթ—246, 375
Տեր-Մկրտչյան Գ.—154, 252, 445
Տեր-Միրոչյան Կ.—500
Տեր-Մովսիսյան Մ.—380, 418
Տեր-Պետրոս—382
Տեր-Սողոմոն—388
Տեր-Ստեփանոս—394
Տիգրան՝ Արմենների թագավորի որդի—82, 85, 88
Տիգրան կրտսեր—160, 233
Տիգրան Մեծ (II)—13, 96, 97, 111, 115, 116, 120, 137, 178, 212, 222, 229, 233, 473
Տիգրանուհի—160, 233
Տիրան—123, 124, 151, 163—165, 233, 251, 290, 479
Տիրիրաղ—82
Տիրիթ—122, 175
Տիրոց Բագրատունի—162
Տրայանոս—336, 337
Տրդատ III—87, 107, 127, 135, 151, 165, 166, 170, 174, 177, 192, 193, 195, 203, 231, 240, 241, 243, 252, 265, 271, 272, 293, 330, 347, 349, 377, 430
Տրդատ՝ քահանա—454

Փ

Փառանձեմ—124, 175, 197
Փավստոս Բուզանդ—14, 55, 59, 69, 70, 88, 102—108, 124—126, 131—135, 137, 144, 145, 151, 152, 166, 170, 172—179, 194, 197, 198, 202, 204, 207, 223, 226, 229, 231, 234, 242, 247, 250, 251, 253, 256, 263, 270, 272, 273, 290, 291, 298, 299, 312, 314, 341, 350, 351, 354, 427—429, 455, 479—482, 484
Փափազյան Հ. Գ.—328
Փափազյան Ի.—500
Փիլիպպե—374, 380, 393, 432
Փոկաս—166

Ք

Քեյսուլթան—57
Քոթիթ—448
Քուպղիդուխտ—238
Քսենոֆոն — 77—81, 83—88, 99, 115, 214, 338

Օ

Օմար խալիֆ—350, 370
Օմար II խալիֆ—166, 503
Օշին—521
Օրբելի Հ.—63, 71, 445
Օրոնտաս—79

Ֆ

Ֆիրդուսի—444
Ֆյուատել-դե-Կուլանժ—94

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ա

Արաստաշեն գյուղ—376
Աղարակ գյուղ—394, 401
Ադիաման—66
Ադրբեջան—30, 38, 519
Աղատ գյուղ—416
Աքենք—217, 218
Ալանաց գուռ—440
Ալավերդի—67, 69
Ակոռի գյուղ—274
Ահավանք—236
Աղավնակ գյուղ—390
Աղբակ գավառ—365
Աղբերիս գյուղ—238, 375
Աղթամար կղզի—69, 236
Ազիովիտ գավառ—120, 122 123, 156, 163, 164
Աղձնյաց նահանգ—70, 105, 107, 126, 130, 172, 187, 247, 352
Աղուրեծ գյուղ—374, 432
Աղվանք—123, 147, 188, 264, 266, 268, 358, 370, 374, 519, 521, 523
Աղջք ավան—199, 234
Ամարաս գավառ—521
Ամբերդ—376
Ամբրավարար գյուղ—375, 381
Ամյուկ—185
Ամոր գյուղ—198
Այրիվանք—401
Անապատ բերդ—238
Անապատ գյուղ—416
Անգեղ գավառ—106, 108, 127, 313, 352, 353
Անգլիա—311, 312,
Անդրկովկաս—30, 31, 40, 66, 359, 519, 522—524
Անի՝ բերդ—193, 233, 240
Անի քաղաք—70, 71, 318, 324, 376, 385, 397, 401, 409, 411, 412, 414, 420, 421, 448—451, 454, 465, 467
Անձևաց գավառ—106, 365
Անմեռ գյուղ—60
Աշնակ գյուղ—401, 420
Աշոցք գյուղ—417
Աշտարակ—406
Աշտիշատ—121, 152, 166, 195, 199, 240, 241, 427, 428, 456, 478
Ապահունիք—70, 373
Ապարան—123
Առան—123
Առաջավոր Ասիա—35, 38, 40, 63, 78
Առբերանի գավառ — 120—123, 156, 163, 164
Առնստ ավան—59
Ասորեստան—58, 69, 125, 222, 247, 261, 262, 336, 355
Ասորիք—337, 356, 473, 479
Ասրա Ներքին—390
Ավան գյուղ—406, 467
Ավարայրի դաշտ—108, 138, 178
Ավշ գյուղ—416
Ատրպատական—108, 188, 251, 351, 366, 372, 519
Արագած—101
Արածանի գետ—54, 60
Արարատ (Արարատ, Այրարատ)—52, 55—57, 59, 60, 70, 88, 99, 101, 121, 122, 124, 157, 158, 177, 194, 235, 242, 247, 251, 312, 337, 343, 376
Արղանա-Մադան—70

Արզանենի շրջան—429
Արծաթի գյուղ—260
Արծիվ գյուղ—388, 393
Արծն գյուղ—237, 518
Արծրունյանց աշխարհ—245
Արհնի գյուղ—233
Արճակ լիճ—59
Արճեշ—245, 518
Արմավիր—101, 473
Արմենիա, Արմինիա — 77—83, 85—87
Արշակավան—242, 256, 257, 481, 482
Արշարունիք—106, 132, 135, 196
Արուաստան—125
Արուճ գյուղ—406
Արուքս գյուղ—238, 388, 389
Արտագերս—175, 233, 343
Արտաշատ—158, 187, 193, 195, 200, 233, 235, 243, 244, 313
Արտեմիս—243
Արցախ գավառ—107, 351,
Արևելյան Արմենիա—81, 84
Արևելյան Հայաստան—128, 132, 234, 337, 490, 502
Արևիք գավառ—394
Արևմտյան Հայաստան—57, 128, 234, 337, 489, 490, 504
Արևմտյան Եվրոպա—110, 353

Բ

Բաբելոն—99, 367
Բագայսուիճ—193
Բագավան—518
Բագարան—243
Բալնայրի—409
Բագրևանդ—56, 196, 205, 317, 516, 518
Բազու գյուղ—234, 240
Բալկաններ—506
Բաղդատ—367
Բաղեշ—185
Բաղ (Բաղդ ամրոց)—519
Բաղք գավառ—70, 238, 388, 389, 519
Բասենի գավառ—197, 245
Բարձրաբուղ—233
Բեխ գյուղ—238, 388, 389
Բեհիստուն—77
Բերդ գյուղ—393, 460
Բերդաձոր գավառ—521
Բերդկաներիչ գյուղ—375, 382, 385, 388, 393
Բերկրի—185, 236, 245
Բզնունիք—101, 194
Բիայնիա—65
Բյուզանդիա—92, 183, 204, 289, 356, 359, 437, 439, 477, 505
Բյուրական—58, 244
Բողաշեն—60, 464
Բջնի—413
Բրեխ գյուղ—234, 240

Գ

Գանգրա — 475—477
Գառնի—233, 242, 243, 312, 316, 385, 393, 407, 447, 449
Գարդմանաձոր—107, 135
Գեղարքունի գավառ—58
Գեղարքունի շեն—102, 376
Գետիկ ձեռակերտ—246, 324
Գյումնիսա (Գյումրի)—85
Գներ գյուղ—393
Գոլովինո գյուղ—64
Գողթան շեն—121
Գողթան գավառ—199, 244, 489
Գոմաձոր—393
Գոմկունք գյուղ—124, 197
Գուգարք—70, 107, 125—127, 440
Գրվակ գյուղ—375, 381

Դ

Դամասկոս—186, 436, 437, 503
Դամդամուսա քաղաք—51, 52
Դարանաղի գավառ—193, 194, 240, 325, 343
Դարույնք—343
Դեղձանագետ գյուղ—60, 464
Դերջան գավառ—193, 489
Դիադին—123
Դիարբեքիր—70
Դիլիջան—64

Դսեղ—324, 382
Դվին—23, 69, 153, 154, 158, 185, 194, 200, 201, 203, 205, 235, 241, 273, 274, 279, 281, 282, 292, 312, 315, 328—330, 355, 363, 372, 376, 429, 439, 440, 456, 465, 497—500, 503

Ե

Եգիպտոս—112, 356
Եգեսիա—336
Եկեղյաց գավառ—193, 194, 197, 482
Եղեգիս—385
Եղվարդ—194
Եվրոպա—94, 206, 354
Երազդավորս—187
Երամայիս դաստակերտ—242
Երանջակ գավառ—390
Երանը—412, 413
Երզնկա—70
Երևան—63, 385, 393
Երիզավան—123, 245
Երկայնորդ—233
Երուսաղեմ—230
Երվանդակերտ—123, 243
Եփեսոս—490, 491

Զ

Զարևան—314
Զվարթնոց—58, 194

Թ

Թալին—324, 420
Թեոդոսուպոլիս—317
Թեֆրիկ—502, 505, 506
Թիլ ավան—193, 197, 198
Թոս գյուղ—390
Թորդան գյուղ—193, 197, 240
Թրակիա—166, 506

Ի

Իբերիա—156
Իսախան գյուղ—390
Իրաք—58, 515

Լ

Լենինական—64

Խ

Խախ գյուղ—198
Խաղոյաց գավառ—193, 252
Խաչեն—372, 448
Խլաթ—522, 523
Խոռխոռունիք—101
Խորանիստ—233
Խորասան—58
Խորենի գյուղ—233, 240
Խութ—523

Ծ

Ծաղկաձոր—324
Ծաղկոտն գավառ—479
Ծանար—440
Ծառանիստ—233
Ծղուկ գավառ—390
Ծնավտկոս գյուղ—196
Ծոփք—122, 125, 128, 194, 196, 197, 298, 352

Կ

Կանաչավոր գյուղ—382
Կապադովկիա—239, 502
Կավակերտ—187, 200, 235, 244
Կարին—185, 260, 316, 376, 440, 518
Կարճավան—394
Կարմիր Բլուր—52, 53, 64
Կարս—376
Կեղբ գյուղ—234, 240
Կեչուտ գավառ—58
Կիևյան պետություն—93, 296, 506
Կիլիկիա—8
Կիրովական—63
Կոգ գավառ—242, 256
Կոթ գյուղ—59, 60, 317, 328, 383, 464
Կողբ—107, 122, 135, 199, 244, 382, 439
Կողթ—352

Կ. Պոլիս—491
Կովկաս—65, 103, 440
Կովսական գավառ—238, 389, 415
Կորդուք—107, 135, 351
Կորդուխների երկիր—79
Կղարշք—440
Կղեսուր—123
Կուաշ—124, 240
Կուառս դաստակերտ—234, 240
Կոմայրի—518. տե՛ս Գյումնիա
Կուր (Քուռ)—123

Հ

Հաբանդ գավառ—433, 521
Հազր գյուղ—516
Հալալաշեն գյուղ—417
Հալիձոր—417, 465
Հաղարծին—380
Հաղպատ—417, 461
Հայկական լեռնաշխարհ—51, 66
Հայկական բարձրավանդակ—51, 52, 54, 60, 73, 79, 80, 92
Հաշտյանը գավառ—123, 135, 156, 163, 164, 245, 351
Հառիճ—324
Հարժիս—375, 382, 385, 394
Հարբ—101, 237, 317
Հացեկաց գյուղ—263
Հեզ գյուղ—196
Հեր գավառ—314
Հերեր—382
Հին Արևելք—210, 211, 214, 220, 221, 224
Հին Ուրմ (Քեշիշդաղ)—418
Հյուսիսային Հայաստան—53
Հնարակերտ—122, 123
Հնդկաստան—83
Հռոմոս—381, 382, 400, 412, 413, 417, 454, 464
Հռոմոց Մարդ—187, 200, 235, 244
Հովհաննավանք—395, 403, 405
Հունաստան—42, 212, 215, 218, 337, 504
Հռոմ—42, 111, 119, 212, 215, 217—219

Ձ

Ձագավան—318, 352, 418
Ձեռատիվան գյուղ—375, 415
Ձորագավառ—70, 107, 122, 135

Ղ

Ղարադաղի գավառ—390

Մ

Մազաղ գավառ—393
Մակեդոնիա—504, 506
Մահուաշտ գյուղ—244
Մաճ գյուղ—238
Մայրու գավառ—390
Մանազկերտ—134, 185, 317
Մանավազակերտ—197
Մանկանգոմ—237. տե՛ս Հարբ
Մաստարա գյուղ—405, 464
Մարաստան—87
Մարաց ավան—244
Մարենացոց վանք—60, 383, 385, 464
Մելիտինե—245
Մեծ Հայք—101
Մեղտի գյուղ—234, 240
Մերդին քաղաք—58
Մերձավոր Արևելք—30, 33, 36—38
Մղրաս—355
Միջագետք—39, 63, 336, 337, 356, 367, 473, 479
Միջին Ասիա—30, 33, 35, 36, 39, 40, 219
Միսիանա—69, 70
Մխանը գավառ—521
Մշտարախթին բերդ—415
Մոկք—128
Մուխանաթ Թափա—64
Մուշ—58, 288, 523
Մրեն գյուղ—318, 397, 406—408, 417, 420, 452, 454

Յ

Յուրականիսոս գյուղ—374, 432

Ն

Նախիյան երկիր—51, 52, 54
Նախճավան (Նախիջևան)—121, 185, 186, 188, 244, 318, 323
Նիգ գավառ—123
Նիկիա—201, 191
Նիբրուի երկիր—52
Նոշիրական—125, 126, 351
Ն. Նախիջևան—230
Ն. Բայազետ—52, 65—67
Նորաշինիկ գյուղ—375, 415
Նորավանք—238, 375, 376, 381, 394, 416, 417, 420, 465
Նորատուս—245
Նորիք գյուղ—390
Նվարսակ—139, 173
Նփրկերտ—502

Շ

Շահապիվան—124, 154, 175, 205, 225, 226, 280, 283—286, 295, 314, 400, 401, 486, 491, 492—496
Շափխանե գյուղ—390
Շափուլ—261, 355
Շարի՝ քաղաք—520
Շիրակ—20, 56, 101, 106, 123, 132, 135, 518
Շիրակավան—117, 383, 398, 401, 407, 417, 448
Շմքոի գյուղ—390
Շնգավիթ—63
Շնհեր—465
Շողագա գյուղ—59, 60, 393

Ո

Ոսկուն գյուղ—196
Որդկան գյուղ—134, 395

Ու

Ուղտու ակունք—121
Ուտիք—317, 352
Ուրարտու—65, 77, 78, 118

Չ

Չինաստան—102, 220
Չովա գյուղ—376, 381, 420
Չորրորդ Հայք—70, 237, 511, 512, 514

Պ

Պաղեստին—367
Պաղկունք գավառ—521
Պարսկաստան—34, 36, 77, 87, 92, 109, 119, 127, 137, 138, 142, 150, 154, 171, 180, 183, 204, 207, 258, 262, 336—342, 345, 348, 351, 356, 387, 422, 428, 477
Պարտավ—265, 428, 459, 524
Պելոպոնես—42
Պոնտոս—170, 239, 502

Ջ

Ջավախք—122
Ջեզիրե—367

Ռ

Ռշտունիք—69, 70, 133
Ռուսաստան—9, 23, 26, 94, 311, 312, 506

Ս

Սադաստան—387
Սալբորա—245
Սամարա—523
Սամոսատ—505
Սասուն—70, 523
Սավագ նահանգ—340
Սեբաստիա—477
Սիմ—123
Սինաբուի—52
Սիրիա—39, 367, 487
Սկյութական երկրներ—69
Սյունիք—60, 101, 102, 105, 106, 127, 128, 132, 134, 135, 182, 185, 188, 235, 245, 246, 288, 289, 329, 358, 366, 373, 376, 389, 399, 520, 521
Սուրբ Գևորգ գյուղ—390
Սպեր—70, 125, 489

Վ

Վաղարշապատ—63, 88, 151, 156, 158, 171, 177, 178, 192, 194, 223, 235, 242, 245, 355
Վայոց ձոր—70, 358, 372, 373, 376, 394, 448
Վան (Վասպուրական)—52, 60, 61, 63, 70, 148, 181, 182, 236, 245, 358, 365, 366, 373, 436, 524
Վանա գավառ—135, 196
Վարաժնունիք—70
Վարդենավան—473
Վարսեր գյուղ—393
Վերին Վայկունք—521
Վրաստան—9, 14, 19, 30—33, 90, 91, 142, 147, 153, 161, 188, 239, 264, 327, 358, 374, 521, 523

Տ

Տաթևի վանք—238, 323, 374, 375, 380—382, 385, 388—393, 399, 415, 416, 418, 432, 433, 460
Տաճկամարգ գյուղ—395
Տամալեկ գյուղ—460
Տայոց գավառ—128, 133, 134, 271, 350, 516
Տոշիր գավառ—70
Տատեոն ավան—56, 123, 233
Տարոն—56, 121, 124, 134, 152, 187, 194, 197, 199, 343, 374, 376, 442
Տեկոր գյուղ—395, 397, 401, 405, 407—409, 411—413
Տեղ գյուղ—374, 380, 433
Տիգրանակերտ—126, 160, 166, 233
Տիզբոն—106
Տղմակ գյուղ—196
Տմորիք—107, 351
Տոմբ գյուղ—234
Տուսխա քաղաք—51, 52
Տուտիս—512, 514
Տուրուբերան—70, 101
Տրի գավառ—521

Ց

Ցամաքաբերդ—393
Ցոլակերտ—242
Ցուրաբերդ—460
Ցուրագետ գյուղ—375, 382, 385

Փ

Փայտակարան նահանգ—57
Փայտակարան քաղաք—352, 437, 520
Փառիսոս—372, 448
Փարպի գյուղ—289, 406
Փշոց վանք—236
Փոքր Ասիա—35, 113, 126, 239, 487, 505
Փոքր Հայք—170, 475, 476, 502

Քաղաքներ

Քարթալինիա—109, 142
Քարքե—432
Քենեշիր—367
Քյուլ-Թափա—63
Քուշանաց աշխարհ—273

Օ

Օկոմի ավան—237
Օշական գյուղ—197, 242, 397, 407, 408, 417, 420

Ֆ

Ֆրանսիա—311, 312

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 5
Ներածություն 7

Գլուխ առաջին

Հայ ժողովրդի զբաղմունքը. երկրագործություն, այգեգործություն, տեխնիկական կուլտուրայի մշակույթ. անասնապահություն: Նրանց դերը Հայաստանի տնտեսական կյանքում 49

Գլուխ երկրորդ

Աշխատամիջոցները և երկրագործական գործիքները: Նրանց զարգացման տարբեր էտապները Հին ու միջնադարյան Հայաստանում . . . 62

Գլուխ երրորդ

Հին հայկական գյուղական համայնքը 73

Գլուխ չորրորդ

Ֆեոդալական հարաբերությունների սաղմնավորումն ու զարգացումը Հին Հայաստանում 110

Գլուխ հինգերորդ

Հոգևոր-ֆեոդալական, եկեղեցական և վանական հողատիրությունը . . 191

Գլուխ վեցերորդ

Շահագործվող դասերը. նրանց սոցիալ-տնտեսական դիրքը վաղ ֆեոդալիզմի դարաշրջանում.

1. *Սարակներ* 210
2. *Մառաներ, ազատիններ* 250
3. *Մշակներ* 257
4. *Կարճազատներ* 262
5. *Բոկատներ* 264
6. *«Անազատաբ» կամ «փաղչողք ի ժառանգութենէ»* . . . 264
7. *Վար և այգի չունեցող գյուղացիներ* 266
8. *Բուանիներ* 267

9. Ռամիկներ 268
10. Շինականները որպես համայնքի ազատ անդամներ . . . 276

Գլուխ յոթերորդ

Ֆեոդալական հողային ռենտաները հին և միջնադարյան Նայաստանում: Հարկերը և տուրքերը: Ֆեոդալական պարտավորությունները: Անմիջական նյութական բարիքներ արտադրողների շահագործման ձևերն ու մեթոդները

1. Աշխատանքային ռենտա կամ կորային աշխատանք . . . 302
2. Արդյունքներով ռենտա 332
3. Հոգևոր ֆեոդալներին, վանքերին ու եկեղեցիներին վճարված հարկեր, տուրքեր և ֆեոդալական պարհակներ 454
4. Դրամական հարկեր և տուրքեր 461

Գլուխ ութերորդ

Սոցիալական շարժումները և գյուղացիական ապստամբությունները Ֆեոդալական շահագործման դեմ շահագործվող դասերի մղած դասակարգային պայքարի ձևերն ու մեթոդները 469

1. Անհատական ընդդիմադրությունները, որպես դասակարգային պայքարի պասսիվ ձև 474
2. Մասսայական փախուստը որպես դասակարգային պայքարի ձև 479
3. Պավլիկյան գյուղացիական ապստամբությունը 500
4. Ջորբորդ Հայքի արծաթի և կապարի հանքերում աշխատող հանքափորների և հողազուրկ գյուղացիների 774—775 թթ. ապստամբությունը 510
5. Ժողովրդա-ազատագրական շարժումները և գյուղացիական ապստամբությունները 8—9-րդ դարերում 515

Անձնանունների ցանկ 525

Տեղանունների ցանկ 536

ՀԱԿՈԲՅԱՆ ՍՈՒՐԵՆ ԵՐՎԱՆԴԻ

Հայ գյուղացիության պատմություն

Խմբագիրներ՝ Վ. Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Վ. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Նկարչական ձևավորումը Հ. Կ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ
Տեխ. խմբագիր Լ. Ա. ԱՋԻՋԲԵԿՅԱՆ
Վերատուգող սրբագրիչ Ժ. Մ. ԱԴՈՆՑ

ՎՊ 01889: Պատվեր 1131: Հրատ. № 1344: Խշխ № 340: Տիրաժ 2000:

Հանձնված է արտադրության 17/VIII 1956 թ.:
Ստորագրված է տպագրության 7/III 1957 թ.:
Թուղթ 60×92 1/16, հրատ. 30,4 մամ., տպագր. 34 մամ.:
Գինը՝ 18 ռ. 25 կ. կազմը՝ 2 ռ.:

ՀՍՍՌ Կուլտուրայի մինիստրության հրատարակչությունների և պոլիգրաֆարդյունաբերության Գլխավոր վարչության Պոլիգրաֆկոմբինատ, Երևան, Տերյան 91:

ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Տողը (վերևից)	Տպված է	Պետք է լինի
5	8	մինչկապիտալիստական	ֆեոդալական
37	ծանոթ. 1.	период	перевод
39	» 1	պատմության շուրջը	հարցի շուրջը
229	19	''επαγλος	''επαυλος
237	20	դիւղք	դիւղք
268	5	կանոնագրքի	կանոնախմբի
275	6	միժամանակ	միաժամանակ
»	36	օրսդ:	օրսւ
279	17	հարմարվել	համարվել
358	16	էին	էր
361	7	ծալը	ծավալումը
417	21	յերորրորդ	յերրորդ
542	6	կուլտուրայի	կուլտուրաների

(En 034)

II 33578